Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՆՎԱՐԴ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ



ԳՈՐԳՈՂԵՐ

ԲԵՐԴԱՁՈՐ. 1988-1991

ԲԵՐԴԱՁՈՐ–ՂԱՐԱՂԾԼԱՂԻ ՔԱՐՏԵԶԸ



Հեղինակ՝ Ա. Մ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նվարդ Գևորգի Սողոմոնյան: Ծնվել է ԼՂՀ
Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղում: Ավարտել է Երեւանի
Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի
բանասիրական ֆակուլտետը:
1994-1995թթ. լույս են ընծայվել «1991. «Կոլցո»
գրքերի առաջին եւ երկրորդ մասերը, 2001-ին՝ «Հիշողության
դատը», 2008-ին՝ «Ղարաբաղ. մահվան գծից անդին»՝ երեք
գրքերի ռուսերեն թարգմանությունը:
Արժանացել է «Մենք ենք, մեր սարերը»
կառավարական հուշամեդալին, Եղիշեի անվան պետական
մրցանակին, 2008-ին՝ ԼՂՀ վաստակավոր
ժուռնալիստի կոչման:
ԼՂՀ եւ ՀՀ գրողների միության անդամ է:
1974-ից աշխատում է «Ազատ Արցախ»
թերթի խմբագրությունում:

11 69

ՆՎԱՐԴ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ԿԱՐԿԱՌՆԵՐ

Բերդաձոր. 1988-1991

Վավերագրական վեպ

Բերդաձորում վիթխարի քարաժայռեր կան՝
անմեկնելի խորհուրդներով:
Դրանք բարբառով կոչվում են կաշկառներ:
Մարդն այստեղ ծնվում, աչքն առնում է կարկառներին,
ապրում դրանց հանգույն եւ դառնում
նախաստեղծ իր հիմքին...

47.025

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

«Դիզակ պլյուս» հրատարակչություն
Ստեփանակերտ-2010

ՀԴ 325
ԳՄԴ 66.3 (2 Հ)
Ս 694

Քայլում եմ՝ Գեւորգ հայրս ինձ հետ է,
Քնար մայրս հետեւում է, որ ճանապարհը չկորցնենք

Սողոմոնյան Ն.
Ս 694 Կարկառներ: Բերդածոր 1988-1991 / Ն. Սողոմոնյան . - Ստեփանակերտ: Դիզակ պլյուս, 2010. - 416 էջ:

1988-ի ազգային-ազատագրական շարժումը ճնշելու համար Ադրբեջանը շրջափակեց Արցախը: Բերդածորի ենթաշրջանը հայտնվեց կրկնակի շրջափակման մեջ, եւ սկսվեց կյանքի ու մահվան օրհասական պայքար: 1991-ին Ադրբեջանը խորհրդային զինված ուժերի աջակցությամբ բռնի ուժով փորձեց լուծել հիմնախնդիրը՝ հայաթափելով երկրամասը:

Արցախյան գոյամարտի բերդածորյան հատվածում կատարված հերոսական եւ ողբերգական էջերի, քաղաքական լարված, բարդ ու հակասական իրադարձությունների մասին է Նվարդ Սողոմոնյանի վավերագրությունը: Դեպքերը, որոնք ներկայացնում են 1988-1991թթ. ժամանակաշրջանի Բերդածորը, շարադրված են իրական փաստերի հիման վրա:

ՀԴ 325
ԳՄԴ 66.3 (2 Հ)

ISBN 978-99941-2-434-3

© Սողոմոնյան Ն., 2010 թ.

Առէք կերէք.այս է իմ մարմինը: Եւ բաժակն առաւ, գոհացաւ, նորանց տուաւ եւ ասեց. Խմեցէք դորանից ամենքդ: Որովհետեւ այդ է իմ արիւնը նոր ուխտի, որ թափվում է շատերի համար ի թողութիւն մեղաց:

Աստվածաշունչ

ԺԱՄԱՆԱԿԸ ՓՈԽԵԼ Է ԻՐ ԸՆԹԱՑՔԸ
Արդար պահանջ, ոչ մի նահանջ

Հրապարակում վրաններ խփվեցին: Ազատության զգլխիչ բույրը խտղտացրել էր մարդկանց ռունգերը, միացման գաղափարը կոնկրետացել, մարմին էր առել, եւ ժողովուրդը ցնծության մեջ էր: Եթե հրապարակը լքեին, զինվորները կգրավեին, իսկ ամբոխին թվում էր, թե այս պահի համար կարեւորը միասնական լինելն ու իրենց պահանջը լսելի դարձնելն էր: Այս ու այնտեղ փոքրիկ խարույկներ վառեցին, գիշերը ցուրտ էր: Շրջակա ու հեռավոր գյուղերից գալիս են Ստեփանակերտ՝ ցուցարարների համար ուտելիք, մթերք են բերում, մասնակցում են հանրահավաքներին եւ տեղեկություններ տանում իրենց բնակավայրերը: Բազմահազարանոց ամբոխը շրջապատված է ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ներքին զորքերի ստորաբաժանումներով եւ ադրբեջանական միլիցիայի աշխատակիցներով: Սպառազինված են: Մարդիկ հասկանում էին՝ անօրինական որեւէ քայլ, արարք, գործողություն, հակախորհրդային որեւէ կարգախոս, եւ առիթը կօգտագործվեր ցույցը զենքի ուժով ցրելու համար: Ազգային-ազատագրական գաղափարները այնպես էին համակել մարդկանց, որ ամբոխը զարմանալիորեն վերածվել էր մեկ միասնական մարմնի՝ բորբոքված գաղութային լծի դեմ, հուսավառ ու բացառիկ կարգապահությամբ: Առաջին օրերին ցույցերին մասնակցում էին նաեւ ազերիները՝ իմանալու համար թե ինչ է կատարվում իրենց շուրջը:

Մեկը թփթփացրեց Արմոյի՝ քաղաքացիական պաշտպանության ծառայության վարորդի ուսը:

- Գարդաշ, էս ինչի՞ եք հավաքվել: Ի՞նչ եք ուզում:
- Աշխատավարձը ցածր է, պահանջում ենք բարձրացնել:
- Չէ, գարդաշ, սա ուրիշ բան է: Մեզ համար ի՞նչ նշանակություն ունի, թող Հայաստանի հետ լինենք: Բայց դա դժվար լինելու բան է: Մեզնից շատ փող են հավաքել, ասել են՝ ուղարկում ենք Կենտրոն:

Արմոն հեռաքաշ տվեց:

Հրապարակում ծովացած ամբոխին ընդհուպ մոտեցրին մի ջարդված մեքենա. Շուշիի կապի բաժանմունքի՝ ազգությամբ հայ պետինն

էր: Մի քանի ժամ անց լուր ստացվեց, որ Մարտակերտից Ստեփանակերտ եկող ավտոբուսը ադրբեջանական գյուղերի մոտով անցնելիս քարկոծվել էր, եւ վիրավորներ կային: Ամբոխի միջով մի խուլ քսփսոց անցավ, ապա ձայներ լսվեցին.

- Մենք էլ ջարդենք...

- Վրեժ լուծենք...

Ամբիոնից լսվեց ժողովրդական հեղինակավոր լիդերներից մեկի ձայնը.

- Սադրանք է, ժողովուրդ, չսխալվեք: Աշխարհին պիտի ցույց տանք, որ մենք հին ու քաղաքակիրթ ազգ ենք...

Ամբոխը հանդարտվեց: Հավատացին ճառախոսին. հարցը լուծվելու է խաղաղ ճանապարհով, Մոսկվան տեսնում է, թե ինչ է կատարվում Ղարաբաղում...

Հայաստանի հետ վերամիավորվելու պահանջով որոշումներ էին ընդունել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական պատգամավորների շրջանային խորհուրդներից չորսը՝ պահանջելով հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Ճառասացը ինքնաշեն բեմից կարդում է.

- Մարտակերտի շրջան՝ 100 տոկոս, Մարտունի՝ 100, Հադրութի եւ Ասկերանի շրջաններ՝ 100: Շուշի: Այսինքն՝ Բերդաձորի ժողովրդի կամքի արտահայտությունը չկա:

- Ո՞նց թե... - Ամբոխը ալիք տվեց:

- Նրանք ազերիների հետ ախպերացած են, բոլորը քիրվաներ ունեն,- ամբոխի միջից հեգնական ձայնեց մեկը:

- Այծե՛ր:

- Ոչխարնե՛ր:

Լսվեցին լուտանքի այլ խոսքեր եւս:

Արմոն ամոթից գլուխը կախեց՝ խրվեց ամբոխի մեջ, որ իրեն ոչ ոք չտեսնի, ու հազիվ էր տուն հասել, ետեւից մտան Առնոն, կոշկակար Սերժիկը, բժիշկ Դավթյան Սեյրանը: Եղբայրները գրեթե հասակակիցներ են. Արմոն երկու տարով էր փոքր Առնոյից:

Առնո.- Մեր ձորակի պատիվը փրկելու համար պիտի գնանք ու բերենք որոշումը:

Սերժիկ.- Գցել ենք - բռնել, Արմո, դու պիտի քո մեքենայով մեզ տանես:

Առնո.- Ինչ գնով ուզում է լինի, պիտի ստորագրել տանք:

Սեյրան.- Եկեք այստեղ որոշենք՝ եթե դեմ գնան, ինչ պիտի անենք:

Կոշկակար.- Տեռորի պիտի դիմենք:

Առնո (մտահոգ).- Իմ կարծիքով, դժվար թե ղեկավարները հոժար կամքով կնիքը դնեն:

Արմո.- Բերդաձորի պատիվն է շոշափվում...

Առնո.- Առճակատում լինելու է, գիտեմ, բայց պետք է խուսափենք...

Գիշեր է: Մութ: ՈւԱՋ-ը ճեղքում է ձյունը դեպի Բերդաձոր: Առաջին գյուղը:

Մեծ Շենի գյուղական խորհրդի նախագահի տանն են: Տանտիրուհին թեյ դրեց:

Խոսակցության սկիզբը Սերժիկին դուր չեկավ, եւ նա ձեռքը հացին չմեկնեց, իսկ թեյն արդեն սառել էր: Առնոն գիտեր, որ խոսակցությունը հեշտ հունով չէր ընթանալու, ձեռքը մեկնում էր սեղանին, քիչ-միչ ուտում եւ զրույցը առաջ տանում:

- Կողք կողքի ապրում ենք, հարեւաններ ենք, բարեկամներ ենք: Մոռացե՞լ ես, Առնո՛, ինչքան ես տուժել:

- Հիմա ժամանակները ուրիշ են: Հիմա ամբողջ ժողովուրդն է կանգնել: Ողջ ազգն է պահանջատեր...

- Կպատժեն: Ինչպես էն ժամանակ... Ա՛ ջահելներ, մեղք եք, էդ ի՞նչ բանի եք: Գլուխներդ պատին եք խփում, կջարդեք: Էդ գործը լինելու բան չէ:

- Էն ժամանակ քիչ էինք...

- Մեծ-մեծ ես խոսում, Առնո, ո՞վ է թիկունքիդ կանգնած:

- Հայաստանը: Ափյուռքը...

- Հեռու են: Ձեռքները չի հասնի:

- Սա համաժողովրդական հարց է: Հրապարակում կանգնած՝ մեզ են սպասում, հայր: Գործ չունես ինձ հետ, որդի, դու մի խառնվիր,- մանկաբույժ Սեյրանին սաստեց հայրը:

- Սահմանադրությունը թույլ է տալիս, որ մենք մեր կամքը արտահայտենք: Պատվիրակություն է գնացել Մոսկվա: Խոստացել են:- Շարունակում էր համոզել Առնոն:

- Դուք ձեր կամքը արտահայտեք: Մենք շրջապատված ենք, կտրված ենք Ստեփանակերտից: Դուք միացեք, հաշվեք՝ մենք միացած ու միացած ենք: Ինչ է, ընդամենը մի քանի կիլոմետր է էստեղից Հայաստան...

- Այլ տարբերակ չկա, որ եկել ենք՝ արձանագրությունը պիտի տանենք:- Առնոն մի թեթեւ խստացրեց տոնը:

- Կարող ենք ստիպել, այլ միջոցների դիմել, տես՝ չփոշմանես:- Կոշկակարը, որ մինչ այդ գրեթե լուռ էր, պայթեց:

Գյուղական խորհրդի նախագահը քմծիծաղ տվեց:
- Ժողովրդի կամքից դուրս եկողը փոշմանելու է:- Սպառնաց կոշկակարը ու վեր կացավ:- Գնացինք: Գիշերն անցնում է, գործերը մեզ են սպասում:
- Էդ դեպքում՝ ոչ մեկին՝ ոչ մի խոսք: Հաշվիր՝ քեզ չենք տեսել:- Մեղմ ասաց Առնոն:
- Վստահ եղեք: Բայց գնացեք նախագահի մոտ: Ինչ ասի՝ էն էլ կանեմ:
Առնոն հասկացավ, որ գյուղխորհրդի նախագահը տեղի է տալիս ու հոգու խորքում համաձայն է:

ՈւԱԶ-ը ձյունը մի կերպ ճեղքելով ու վերընթաց ճանապարհը հաղթահարելով, գիշերվա ժամը 12-ին մտավ եղցահող:
- Հերդ է՞ն ժամանակ մի կերպ գործերդ դասավորեց, քեզ փրկեց, տղա...- Առնոն հասկացավ, թե նախագահ Մայորը ինչ է ակնարկում:
- Հիմա ժամանակներն ուրիշ են:
- Իսկ եթե նույն ժամանակը դուրս եկա՞վ...
- Կյանք է, եթե անգամ ինչ-որ բան պատահի, ուրեմն, ճակատագիրս է:- Առնոն հանգիստ, սովորության համաձայն գլուխը թեթեւակի հակած, համոզիչ տեղեկություններ է տալիս:
- Կենտրոնից մեր հարցը խրախուսվում է: Ով չստորագրի՝ ազգի թշնամի է,- սպառնալիքների տեղը չէր, բայց կոշկակարը՝ տաքարյուն բնավորությամբ, այստեղ էլ պոռթկաց:- Սեւ խարանը ընդմիշտ կմնա չստորագրողի ճակատին: Ազգի ճակատագիրն է որոշվում...- Առնոն հայացքով սաստեց, կոշկակարը զսպվեց ու չշարունակեց սերտած «քաղաքական դասը»:
- Կնիքը ենթաշրջանի նախագահի՝ Գրիշա Սարգսյանի մոտ է: Օրենքն ինքն է, իրավունքն իրենն է...

Կեսգիշերին Հին Շենի դպրոցի տնօրեն Միքայել Մկրտչյանը տղաների առաջ դուռը բացեց:
Առնոն լուռ էր, չէր խոսում:
Սերժիկն ու Արմոն բացատրում են իրենց գալու նպատակը, իսկ հոր խիստ ու խոժոռ հայացքը կանգ առավ Առնոյի վրա:
- Ա խոխա, էն ժամանակ քեզ զոռով հանեցի նրանց ճանկերից,- հայրը ի նկատի ուներ պետանվտանգության կոմիտեն:- Հիմա նորի՞ց ես գլուխդ կածանի վրա դրել:

- Հիմա ուրիշ ժամանակներ են, էն չի կրկնվելու,- Առնոն կախեց գլուխը, մտավ իր սենյակը, հայրն էլ հետեւից:
- Առնո,- Միքայելը խոր ու հանդիմանությամբ նայեց տղային:- ՊԱԿ-ը ետեւիցդ մինչեւ Վլադիվաստոկ էր հասել, մոռացե՞լ ես:
- Հետդարձի ճանապարհ չկա...
- Կրակի հետ ես խաղում:
- Իսկ եթե կրակն իմ ներսո՞ւմ է...
- Գրքերը քո գլուխը կուտեն, կյանքից կտրված ես: Ախր դու ո՞վ ես, որ Ղարաբաղի հարց լուծես: Գիտե՞ս ում դեմ ես դուրս գալիս...
- Ես եւ իմ նմաններն են լուծելու հարցը: Դու մեզ թերագնահատում ես:
- Ո՞վ եք դուք,- արհամարհանքով նետեց հայրը, բայց գիտեր, որ տղան դաշնակցության անդամ է:
- Մե՞նք: Մենք կուսակցություն ունենք՝ հզոր եւ ուժեղ:
- Դուք արդեն մեկ անգամ չէ, որ պարտվել եք:
- Այս անգամ կհաղթենք:
- Ինչո՞վ:
- Հայաստանո՛վ: Սվյուռքո՛վ: Հիմա Հայաստանը էլ էն թույլ ու աղքատ երկիրը չէ:
- Կարծում ես քեզ կգնահատե՞ն...
- Ես փառք չեմ փնտրում, հայր: Իմ ազգի համար եմ անում...
- Ադրբեջանը Ղարաբաղից հեշտ չի հրաժարվի,- փորձեց քաղաքական բանավեճի մեջ մտնել հայրը:
- Կհարկադրենք հրաժարվել:
- Տես, տղաս, զգուշացնում եմ, նրանց ձեռքից էս անգամ չես պրծնի, քո դեմ ատամ ունեն... Քե՛զ հատկապես չեն խնայի:
- Ես նրանց ձեռքը չեմ ընկնի...
- Արյուն կլինի... Զոհեր կլինեն...
- Չեմ բացառում: Թող առաջինը ես լինեմ:- Տղան այդ ասելու ժամանակ չէր կարողանում հոր աչքերին ուղիղ նայել:
Հայրը հանկարծակի ու կտրուկ, մեծ շրջադարձով փոխեց զրույցի թեման, ինքն էլ հասկանալով, որ անհեթեթ բան է ասում.
- Չիմանի ձորում մեր բոստանները չորանում են, է՛դ մասին մտածիր:- Դա ցավը հոգու խորքում թաքցնելու ճիչ էր, որդուն վտանգավոր ճանապարհից ետ դարձնելու անկարողության արտահայտություն:

- Գործով ենք եկել:
- Նախ նստեք մի կտոր հաց կիսենք:- Սերժիկն ու Սեյրանը հասկա-

ցան, որ նախագահ Գրիշա Սարգսյանը տեղեկացված է, համոզելու հարկ չի լինելու:- Ամեն ինչ օրինավոր պետք է լինի: Վաղը ժողովրդին կհավաքեմ կարծիք իմանամ:

... Ու թթի օղիով լցված բաժակները դատարկվեցին:

Առավոտվա աղջամուղջին էր, երբ կոշկակարն ու բժիշկը դուրս եկան նախագահի տնից:

- Հե՞շտ համաձայնվեց:

- Համոզելու կարիք չկար: Արդեն գիտեր ինչն ինչոց է:

- Հարցրեց՝ ո՞ւմ հետ եք եկել:

- Ասացի, որ մենակ ենք:

Երբ մոտեցան Շուշիի մատույցներին, Արմոն շարժիչն անջատեց, հետո մեծ արագություն վերցրեց: Մառախուղի մեջ ազերիական «Մոսկվիչը» նկատել էր Ստեփանակերտի համարանիշը ու մինչեւ Մազե կամուրջը հետապնդեց:

Արդեն լուսանում էր, երբ մեքենան Ստեփանակերտ մտավ:

Գյուղական ակումբի բեմահարթակում նստած են նախագահ Գրիշա Սարգսյանը, Ստեփանակերտից եկած ներկայացուցիչները՝ Վլադիկ Կասյանն ու Հովիկ Սարգսյանը, ժողովին ներկայացել էին ձորակի երեք գյուղերի գյուղական խորհրդի նախագահները՝ իրենց կնիքներով: Ստեփանակերտի Լենինի անվան հրապարակում կատարվող իրադարձությունների մասին համառոտ տեղեկատվությունից հետո նախագահողը եզրակացրեց.

- Մենք, որպես Լեռնային Ղարաբաղի տարածքի մի հայ հատված, պետք է որոշենք մեր անելիքը: Ժողովուրդ, դուք եք ձեր ճակատագրի տերը: Որոշեք... Ձեր ստորագրությունները կարեւոր են Հայաստանին վերամիավորվելու հարցում:

Մի պահ լռություն տիրեց, հետո վեհերոտ մի ձայն լսվեց դահլիճից:

- Իսկ եթե չմիացանք՝ հետո ո՞նց պիտի ապրենք...

Տեղից մի ուրիշ ձայն լրացրեց.

- Նավում նստել ենք, նավավարի հետ կռիվ ենք տալիս...

- Ընկեր Գրիշա, եթե դու մեր երեխաների պատասխանատվությունը քեզ վրա ես վերցնո՞ւմ...- Արհմիության կոմիտեի նախագահը միշտ տոկոր էր ստվերում մնալ:

Գրիշային էլ հեշտ չէր թակարդ գցելը.

- Իսկ ինչու ե՞ս: Դուք պիտի որոշեք: Ժողովուրդը ինքը պիտի իր կամքը արտահայտի...

- Պատվիրակություն է գնացել Մոսկվա, ասում են...- Գրիշայի խոսքն ընդհատեց ֆերմայի վարիչը:

- Սրա վերջը կռիվ է լինելու, արյան հոտ է փչում...

Դահլիճից մի երիտասարդ ձայն կանխեց շարունակությունը.

- Ղարաբաղի ժողովրդից ետ չպիտի մնանք: Եթե մեր ձայնը չտանք՝ մեր երեխաները մեզ չեն ների...

- Դու ի՞նչ ես տեսել, կաթնակեր: Ժողովուրդ, մոռացե՞լ եք 18 թվականը...

- Սերունդները մեզ չեն ների,- վերջին նստարանից խրոխտ մի ձայն լսվեց:

Գրիշան ոչ միայն հայացքով, այլեւ ներզգացողությամբ հպվեց կողքին նստած փեսայի զսպված վրդովմունքին ու ղեկավարության երկար տարիների ընթացքում ձեռք բերած ճկուն ու ճարպիկ դիվանագիտությամբ սկսեց զգույշ կողմնորոշվել.

- Ընկերներ,- բռան մեջ հազալով, զգուշորեն սկսեց նա,- մարզի ղեկավարները, որ Ստեփանակերտում նստած են, մեզնից վեր կանգնածները, որ նաեւ մեզնից խելոք են, որոշել են...,- նորից մի հայացք ձգեց Կասյանին, որ աներոջը չէր նայում ու ասաց,- ուրեմն, մենք էլ պիտի ենթարկվենք,- ասաց, բայց հոգու խորքում կասկածում էր՝ հո չե՞ն շտապում, գուցե դեռ ժամանակը չէ...

- Բա որ ճանապարհը կտրե՞ն... Իմ տեսածը...

Կասյան Վլադիկը բեմից ընդհատեց ծերունուն.

- Էս գործը սկսողները կբացեն, Իսա դայի:

- Կոնկրետ խոսիր, ո՞նց...

- Բանակը գալու է՝ կանգնի, խորհրդային բանակը,- նախագահողին օգնության հասավ մինչ այդ լուռ նստած Հովիկը:

- Մեր շրջկենտրոնը Շուշին է, մատակարարումը էնտեղից է...- Լսվեց դահլիճից:

- Հերի՞ք է, Ղարաբաղի ժողովրդից հետ չպիտի մնանք,- լսվեց վրդովված մի ձայն,- վաղը գործի պիտի գնանք, իսկ մենք նստած երկու ժամ է՝ ջուր ենք ծեծում... Առաջարկում եմ վերջացնել:

Գրիշան անուշադրության մատնեց ռեպլիկը՝ ժողովրդին պարզաբանելով ու հնարավորություն տալով մինչեւ վերջ արտահայտվելու:

- Մեր տնտեսական պաշարներով մի տարի մենք կարող ենք մեզ պահել,- հպարտությամբ թվարկեց,- 1820 գլուխ խոշոր եղջերավոր եւ 3500 ոչխար, չհաշված խոզերը, մեղվաընտանիք՝ 350...

- Հերիք է, կեսգիշերն անցել է... Քվեարկության դիր,- դահլիճից գոռաց անհամբեր մեկը:

- Էս գործի վերջը արյուն է լինելու, մի՛ վռազեք,- մահակի վրա հենվելով, տեղից բարձրացավ մեկը, որի ձայնը խլացավ դահլիճին տիրած ոգեւորության եւ խանդավառ ձայների մեջ.

- Քվեարկում ենք...

- Վերջ...

- Քվեարկում ենք...

- Միաձայն:

«Ի՞նչ է լինելու վաղը»,- այս հարցը շարունակում էր մտատանջել Գրիշա Սարգսյանին: Նա առավել հստակ, քան ժողովականներից որեւէ մեկը, պատկերացնում էր առաջիկա դժվարությունները: Ժողովուրդն իր կամքն արտահայտեց: Փաստորեն ենթաշրջանը դուրս բերվեց Շուշիի վարչական ենթակայությունից: Գյուղը այսուհետ ինչպես պիտի ապրի: Հաղորդակցությունը Ստեփանակերտի եւ Գորիսի հետ կկտրվի: Ինքն այլեւս չի գնալու Շուշի հաշվետվություն տալու. վաղը Շուշին ու Ադրբեջանը արդեն լսած են լինելու լուրը...

Ադրբեջանից անջատվել են, միացումն էլ չի պատկերացնում, թե ինչ ձեւով է լինելու, դա ավելի շատ անորոշ, բայց խիստ ցանկալի երազանք է: Ճիշտ է, Կասյանն ասաց, որ տնտեսական, սոցիալական, մշակութային ոլորտներով ինտեգրվելու են Հայաստանի հետ, բայց ինչպե՞ս պատկերացնելն է դժվար: Գրիշան հասկացավ, որ վերջ Բերդաձորի հանգիստ ու խաղաղ կյանքին: Իսկ թե անհանգիստը ինչպես է լինելու՝ չէր էլ կարող պատկերացնել: Միայն տարտամ, անհանգիստ զգացողություններ էին գրգռում ուղեղը: Ժողովրդի խանդավառ ու ոգեւորված մասը երիտասարդներն են, միջին խավը երկու մտայնության կրողներ են, մեկը՝ սառը, հաշվենկատ, դատող, սրանք քիչ մաս էին կազմում, մյուսը, որ մեծամասնություն էին, կույր, անհեռատես, քաղաքականությունից հեռու, սա այն շերտն է, որ հեշտ անցում է կատարում մի դիրքից մյուսը, մի խրամատից մյուսը, մի թեւից մյուսը առանց ներքին ալեկոծումների, առանց հոգեկան ալեբախման: Սրանք հեշտ են ապրում, առանց խելքներին զոռ տալու: Իսկ եթե, Աստված չարասցե, որեւէ որոշում սխալ դուրս եկավ, սրանք պատասխանատվություն չկրողներն են, ոչ միայն առաջին հրաժարվողները, այլեւ առաջին քար նետողները, մեղավոր ու քավության նոխազ փնտրողները, առաջնորդ խաչ հանողները... Պատրաստ են քարկոծել, կախաղան հանել՝ ասելով. սա նա՛ է, որ մեզ սխալ ճանապարհով տարավ: Վաթսունն անց տարեցների մեջ, բացառությամբ մեկ-երկուսի, խանդավառություն չկար, նրանք հիշում են... գայլի աչքերը: Նրանք չէին կարող դեմ գնալ. ամեն ընտանիք իր ջահելը ուներ՝ եթե ոչ գյուղում, ապա Ստեփանակերտում կամ Հայաստանում: Համենայնդեպս, նրանք իրենց կյանքը լավ-վատ ապրել են ու իրենց մասին չէին մտածում, այլ՝ երիտասարդների:

Կրքերից շիկացած, արտասովոր մի օր ապրեց Բերդաձորը: Հետո պիտի վերածվեր խուփը պինդ դրած քլթքլթացող կաթսայի: Ժամանակը փոխել է իր ընթացքը: Ժամանակը նոր, մի այլ հունի մեջ է դրել ձորակի կյանքը: Սա զգում են բոլորը, իսկ թե այդ ընթացքը, հունը յուրաքանչյուրի համար ինչ հաճույքներ, ինչ անակնկալներ ու անախորժություններ, կյանքի ինչ շրջադարձներ, ոլորաններ ու ստոր կրքի խառնարաններ է սարքելու, դա ոչ ոք չէր կարող պատկերացնել:

Գիշերը որպես ժամանակավոր պահի անդորրության ծածկոց իջավ ու իր մեջ առավ Բերդաձոր գավառի, որ նախկինում 450 քառ.կմ տարածություն էր գրավում, մի փոքրիկ գյուղախումբը:

Գյուղի աչքին գիշերը քուն չեկավ... եվ անհանգստություն կար, թե հետո ինչ է լինելու, եւ ոգեւորություն պայծառ հեռանկարներից, իսկ երբ Համզասարի ետեւից արեւը բարձրացավ, մարդիկ անքուն ու խոնջացած մարմինները քարշ տալով աշխատանքի դուրս եկան:

Հաջորդ օրը Կասյան Վլադիկն ու Սարգսյան Հովիկը ստորագրած ու կնքված թղթերը բերում են քաղաք: Դեպի Քարինտակ թեքվող եւ Շուշիի ճանապարհների հատման կետում Հովիկը կանգնեցրեց մեքենան: Կասյանը ծոցում փաստաթղթերը թաքցրեց, ձորերով ու անտառներով երկու ժամ հետո մտավ մարզխորհրդի շենքից ներս:

1985 թվականին ԽՍՀՄ նախագահ Գորբաչովի հռչակած Վերակառուցման կուրսը առիթ դարձավ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության համար տասնամյակներով մեկ քնած, մեկ արթնացած իղձը բարձրաձայնելու՝ պատմական արդարությունը վերականգնելու հույսով: «Հրապարակայնություն» եւ «Ժողովրդավարություն» կարգախոսները Ղարաբաղում ընկալեցին այնպիսի հավատով ու այնպիսի ուժով տրվեցին նոր գաղափարներին (ինչպես 70 տարի առաջ՝ բոլշեւիզմին), որ ոչ մի ուժ նրանց այլեւս չէր կարող կանգնեցնել: Ժողովուրդը լցվեց Ստեփանակերտի Լենինի անունը կրող հրապարակը: Ժողովուրդը լցվեց եւ ԼՂԻՄ կուսակցության, կառավարության եւ «Խորհրդային Ղարաբաղ» պաշտոնաթերթի խմբագրության շենքերը շուրջանակի պատվեցին ԽՍՀՄ ներքին զորքերի խիտ շղթայով: Հանրահավաքներ, ցույցեր: Շուրջօրյա, անընդհատ, անդադրում: Դասախոս Գրիգորի Աֆանասյանը խմբից-խումբ էր անց-

նում, ծոցագրպանից հանում Լենինի բրոշյուրը ժողովուրդների ազգայինինքնորոշման մասին, բարձր թափահարում ուշադրություն գրավելու համար, ապա բառերը, մտքերը հատ-հատ ընդգծելով կարդում: Ժողովուրդը լսում էր՝ զարմանում, ուրեմն էսպիսի-էսպիսի բաներ էլ ունի առաջնորդը գրած, իրենք չեն իմացել, ու լցված իրենց պահանջի խորին արդարացիությամբ ու ներքին համոզվածությամբ, որ հեղեղատի ծեծված, քշված գլաքարի ամրությունն ունի, ժողովուրդը գոչում, վանկարկում է.

- Լե-նի՛ն:

- Պար-տի-ա՛:

- Գոր-բա-չո՛վ:

Թնդյունից թվում է, խմբագրության հին, ճռճռացող շենքը ուր-որ է, կփլվի: 60 հազարանոց քաղաքը դատարկվել ու լցվել էր հրապարակը ծեր, երեխա, կին, տղամարդ, հարսերը նույնիսկ ծծկեր երեխաների հետ: Շրջաններից, գյուղերից գալիս էին հա գալիս՝ հացով, մորթած ոչխարներով, պանիրով ու թթու դրածներով. լսել էին, որ մարդիկ վախենում են հրապարակը թողնեն, զինվորները լցվեն ու գրավեն այն վայրը, որտեղից իրենք իրենց ձայնը կարողանում են հասցնել Մոսկվա, Կրեմլ, նույնիսկ աշխարհին: Խորհրդային գրաքննության փշալարերը թուլացել էին, եւ «Ռոյթեր», «Բի-Բի-Սի», «Ազատություն» եւ այլ ռադիոկայաններից այդ օրերին պարբերաբար զանգում էին խմբագրություն՝ թարմ տեղեկություն ստանալու. ինչ են պահանջում ցուցարարները, ինչքան մարդ է մասնակցում ցույցին, ինչ կարգախոսներ կան: «Իսկ հակախորհրդայի՞ն»,- հարցնում էին: «Ի՞նչ եք ասում: Ոչ: Ոչ: Մենք խորհրդային կարգերի, կոմունիստական վարչակարգի կողմնակիցներ ենք: Մենք Ադրբեջանի,- հեռախոսը վերցրած լրագրողի ձայնը 22նջոցի վերածվեց,- գաղութային լծի դեմ ենք»: 24 ժամից հետո դրսի աշխարհից այլեւս ոչ մի զանգ չինչեց: ՊԱԿ-ը գործում էր:

Մարդկանց ծովացած շրջանը լայնացել, ընդգրկել էր մերձ փողոցները: Քաղաքի պատերին այդ օրերին մի հայտարարություն էր փակցվել. «Մարդիկ, բոլորդ դուրս եկեք՝ հրապարակ, հանգիստ եղեք ձեր տների, ունեցվածքի համար»,- լուրեր էին պտտվում, թե քրեական աշխարհի մարդիկ էին հայտարարությունը կպցրել: Այդ ամիսներին մի գազան չտրորվեց, մի ծառի ճյուղ չջարդվեց, ոստիկանության ներքին գործերում ոչ մի գողության եւ կարգազանցության դեպք չարձանագրվեց:

Ցուցարարներից մեկը՝ ճաղատ գլխով, աչքերը խոշոր, հայացքը կախ, ուղիղ չէր նայում մարդկանց աչքերին, եւ մշուշոտ, որպիսին ունենում են մարիխուանայի երկրպագուները, խմբից խումբ էր անցնում. «Հնարավոր չէ Ղարաբաղի հարցը խաղաղ ճանապարհով լուծել: Հարկավոր է զինվել, զենք ձեռք բերել»: Սա ո՞վ է, հո պրովոկատո՞ր չէ կամ խելագար: Ի՞նչ զենք, ի՞նչ բան, Մոսկվան հարցը կլուծի: Ցուցարարների տարօրինակ ու զարմացած հայացքների տակ մարդը շարունակում է իր քարոզը: «Ուշադրություն մի դարձրեք, 15 տարի բանտ է նստել հենց էդ զենքի համար»,- ցուցարարներից մեկը ճանաչեց ու իր խմբով հեռու քաշվեց: Մարդը շարունակեց խմբից խումբ գնալ:

- Համամիտ եմ, պետք է զինվել, բայց ինչպե՞ս, որտեղի՞ց...-Առնոն մոտեցավ:

Մարդն առանց աչքերը բարձրացնելու խույս տվեց ու սուզվեց ամբոխի մեջ:

Որտեղից որտեղ, մի քանի տախտակ ճարվեց, մի քանի որպեռում տախտակամած սարքեցին: Մի կնոջ հրելով ու բթելով բարձրացրին սարքած բեմ: Կինը սկզբում զարմացած չորս կողմը նայեց, ապա տեսնելով ցուցարարների իրեն հառված պայծառ հայացքները, փորձեց ծգվել, բայց կոնքերից դուրս պրծած չաղ-չաղ մսերը թույլ չտվեցին ընդունել իր ցանկացած ձեւը, ձեռքը առաջ մեկնեց դեպի Լենինի հուշարձանը: Ամբոխի մեջ մեկը փոքկացրեց՝ տեսնելով կնոջ ու առաջնորդի մեկնած ձեռքերը եւ արժանացավ կողքին կանգնածների սաստող հայացքներին:

- Ընկեր Լենին, մատաղ լինեմ քեզ, մեր հույսը դու ես,- ձայնը դարձավ կերկերուն:- Ընկեր Լենին, մենք խորթ մոր ձեռքին ենք, մեզ վերադարձրու մեր իսկական մորը, ընկեր Լենին:

- Մեկը փեշից քաշեց.

- Ամենամեծ մեղավորի երեսին խոսեցիր, իջիր, հերիք է:- Կինը անօգնական չորս կողմը նայեց, հետո նրա գնդլիկ մարմինը կորավ բազմության մեջ:

Ցուցարարները հուզված հրապարակում վառում են կուսակցական տոմսերը: Առնոն լուսանկարում է: Նկատում է, որ մեկը հետեւում է իրեն ու մխրճվում է ամբոխի մեջ:

Ագրարդի տեխնիկական անվտանգության գծով տեսուչ Վլադիմիր Գալստյանը ընդհարվեց նրան ու կանգնեց: Կուրծքը հպարտ-հպարտ դուրս էր ցցել, աչքերը շողում էին: Առնոյի աչքը ընկավ բաճկոնի օձիքին կպցրած փոքրիկ կրծքանշանին՝ Լենինի՝ բուշեւիկների առաջնորդի լուսանկարով:

Հեգնական հայացքը նկատելով՝ Վլադիկը ձեռքը տարավ դեպի կրծքանշանը.

- Սրանով ենք հաղթելու:
Առնոն քթի տակ քամահրական ժպտաց.
- Իսկ եթե՞...
- Ատամներովս կփշրեմ, կաղամ, փոշի կդարձնեմ, եթե ...- Ու աչքերը հավատի ներքին լույսից ճառագած դարձան դեպի առաջնորդի արծանը, որը ձեռքը պարզել էր դեպի պայծառ ապագան:
Առնոն նկատեց ու դարձավ դեպի համագյուղացիների խումբը: Սլացիկ բոյով, սիրունատես մի աղջիկ խմբից անջատվեց, հասկացավ, որ պիտի հետեւի եղբորը: Տարիների տարբերությունը չէր խանգարում, որ աղջիկն առանց բացատրությունների հասկանար նրան, ու միշտ հասկացել է: Երբ դեռ դպրոցում էր սովորում, սիրտը ճնշվում էր, երբ հայրը հանդիմանում էր: Շատ բան չէր հասկանում, բայց նեղվում էր, երբ եղբայրը քաշվում էր իր սենյակը ու երկար փակվում այնտեղ: Հայրն ամբողջ էությամբ կոմունիստ էր, որդին՝ դաշնակցական: Ու տնեցիները միշտ մի տեսակ վախով էին նայում հոր ու որդու հայացքների ներքին, երբեմն էլ ջրի երես դուրս եկող հակամարտությանը:
Դպրոցում Միքայել Մկրտչյանի դրվածքը խիստ էր, տանը՝ նույնպես: Յուրաքանչյուրը, կինը եւ ութ երեխաները գիտեին իրենց անելիքը, իրենց պարտականությունները: Այնուամենայնիվ, հոր սրտում օրեցօր խորանում էր վախը որդու հայացքների հանդեպ, որ կարող էին ստվեր գցել իր պաշտոնի, իր հեղինակության վրա: Մի առիթով ուսուցիչներից մեկը դպրոցի տնօրենի երեսով է տվել. «Մկրտչյան, նախ դաշնակ տղայիդ դաստիարակիր...»: Առնոն հոր ներկայությամբ չէր կարող նրան պատասխանել. մատյանը վերցրել է ու մտել դասարան:
Մկրտչյանների ընտանիքը հյուրընկալ էր: Գյուղում ինչպես ամեն մի տուն, այս տունն էլ իր ազերի քիրվան ուներ, որի առաջ դուռը միշտ բաց էր:
...Սեղանը լիքն էր, քիրվան ուտում էր, հետը եկած հյուրերից մեկը ուտելիքին ձեռք չէր մեկնում, իսկ Միքայելը պնդում էր՝ կեր հա կեր: Քիրվան ստիպված էր բացատրել. «Երդում ունի տված, հայի հաց չի կտրում»: Առնոն սեղանի շուրջ նստած չէր, բայց լսեց: Բելան, որ դպրոցահասակ աղջնակ էր, տեսավ եղբոր զայրույթից վառվող աչքերը, լսեց ատամների արանքից կրճտացրած բառերը՝ «շնից ծնվածին մի տես է՞, շան բառերին մի մտիկ տվեք է՞...», ու եղբոր թեւից քաշեց պատշգամբ, դեպի պարտեզը տարավ՝ բլբլացնելով օրվա դասերից ու դպրոցից, միայն թե եղբոր զայրույթը մեղմի: Հետո իրիկունը թեյի սեղանի շուրջ, տղան անդրադարձավ կատարվածին.
- Լսեցիր, չէ՞, քո սեղանին նստած թուրքը ինչ ասաց, իսկ դու ...

Միքայելը գլուխը կախ, առանց աչքերը բարձրացնելու, պատասխանեց.
- Հյուր էր:- Հայրը կարծես թե իրեն որդու առաջ մեղավոր էր զգում...
Հյուրասենյակում գրապահարանի ապակու տակ Առնոն դրել էր Անդրանիկ զորավարի նկարը, Մասիսները՝ Արարատյան դաշտի ֆոնի վրա, Ծիծեռնակաբերդի լուսանկարները, իսկ պատին կպցրել էր Կրամսկոյի «Անծանոթուհին»: Մի ուրիշ առիթով մինչեւ հյուրերի տեղավորվելը Միքայելը հասցրել էր Անդրանիկի նկարը շրջել:
- Հայի խորհրդանիշն է, հայր, ինչո՞ւ շրջեցիր: Դու որ գնաս նրանց տուն, նրանք մոլլայի նկարը կշրջե՞ն...- Որդին տակտով արտահայտեց ներքին վրդովմունքը:
Բելան, որ լսում էր խոսակցությունը, օրագիրը ձեռքին վազեց ու փաթաթվեց եղբորը.
- Մի տես, տես ինչ գնահատականներ եմ բերել:
Մոր Արփենիկի մահից հետո քույրուեղբոր հարաբերությունները դարձան էլ ավելի գորովալից:
1987 թվականն էր, Շարժումը դեռ չէր սկսվել: Հին Շենից Ստեփանակերտ բերող մեքենայից իջան Շուշիի մատուցներում, քրոջը կանգնեցրեց ճանապարհի եզրին, ինքը գնաց դեպի քաղաքի հնամյա պարիսպները: Անցավ կես ժամ, անցավ մեկ ժամ, Առնոն չկա: Ազերիները նկատել են անծանոթուհուն, հասկացել, որ հայ է:
- Էս հարսը, ոնց որ տնից խռովել է, չի իմանում՝ ուր գնա:
- Բաջի, արի մեր տուն տանեմ...
- Գյոզալ գըզ, քեզ նմանին ո՞նց են թողել մենակ էս ճամփին...
Երբ եղբայրը երեւաց, ազերիները մի կողմ քաշվեցին, իսկ աղջկա զայրույթը, որ աչքերից թափվում էր, ու պատրաստ էր պայթելու, Առնոն այնքան էր իր գործով տարված, որ չնկատեց.
- Հաջողվեց: Պատկերացնո՞ւմ ես, մինչեւ բանտը պարիսպները չափագրել ու լուսանկարել եմ:
Քույրը մեղմացավ, էլ ձայն չհանեց. նոր հասկացավ, թե եղբայրը ինչու էր կոծ վերցրել: Թելի ծայրից քար էր կապել՝ շպրտել ներքեւ, այս ձեւով հաշվել էր պարիսպների բարձրությունը՝ տարբեր տեղերում: Բելան չէր հասկանում, շատ անգամ զարմանում էր նրա գործողությունների վրա, բայց եղբայրը նրա համար հեղինակություն էր, եւ ինքը սովորություն չուներ քննարկելու, հակաճառելու, հարցեր տալու:

Հրապարակը թնդում էր հազարավորների վանկարկումից.
- Լե-նի՛ն: Պար-տի-ա՛: Գոր-բա-չո՛վ:

- Լե-նի՛ն: Պար-տի-ա՛: Գոր-բա-չո՛վ:

Առնոն քրոջ ձեռքից քաշեց, մտան մի շքամուտքից, բարձրացան վերջին հարկ ու ծեծեցին դուռը: Տան մեջ մնացած մեն-միայնակ ծեր կինը (բոլորը հրապարակում էին) բացեց ու ներս թողեց: Որպեսզի զինվորները չնկատեն, թաքնվեց քրոջ հետեւում ու սկսեց լուսանկարել: Հետո իջան ու խառնվեցին մարդկանց հոծ խմբերին:

Ամբոխի մեջ կոշկակար Սերժիկը նկատեց Առնոյին.

- Ճամփորդական պարագաներով ես:

- Շուշի եմ գնում: Վաղը դաս ունեմ:

- Վտանգավոր է,- զգուշացրեց մորաքրոջ տղան:

- Գիտեմ, բայց բոլորի համար է վտանգավոր, հատկապես Շուշիի հազարավոր հայերի համար:

- Քո հարցն ուրիշ է: Գործդ քրքրելու են: - Սերժիկը ակնարկեց Առնոյի«քաղաքական անբարեհուսությունը»:

- Ես անելիք ունեմ: Արդեն բջիջը ստեղծել ենք, գործում է: Մտավորականը իրավունք չունի հեռու կանգնել: Հետո... Գիտե՞ս... իմ ժամը հնչել է:

Առնոն գիտեր, որ մորաքրոջ տղան ատում է ազերիներին: Գրիգորյանների մեծ գերդաստանը 1918 թվականի ջարդից ցրվեց, միայն Տոնին հետ դարձավ ու խերխանում նորից տուն դրեց: Երբ ամեն ինչ խաղաղվեց, Լաչինից մի ազերի եկավ, Տոնին ճանաչեց իրենց պղնձե կաթսան, կավե կուժը, կարպետը, բայց ձայն չհանեց, սուսուփուս վճարեց, գնեց: Թուրքը ոխակալ է, վրեժխնդրությունը նրանց արյան մեջ է, եւ նրանք ավելի իրատես են, կոնկրետ, գիտեն, որ սա իրենց դիմաց կանգնածը հայ է, թշնամի է: Թուրքը կեղծավոր ու շողոքորթ է, կարող է ձեւացնել, թե ընդունում է գաղափարախոսությունը, իսկ հայը անկեղծ է. անմնացորդ տրվեց բոլշեւիզմի հաշիշին ու ժողովուրդների բարեկամության լենինյան քարոզչությանը: Սերժիկը, ինչպես եւ իր նման հազար-հազարներ, որ Բաքվում աշխատանք գտել ու կառուցում էին ինտերնացիոնալ քաղաքը, ազերիների հետ ազիզ ու սրտակից բարեկամություն էին անում: Կոշկակարի արհեստանոցը ծովի մոտ էր, խաղողի մեծ այգի ուներ, լի ու բոլ ապրուստ ուներ: Մի անգամ ծովափին, ռեստորանում նստած լսեց կողքի սեղանի խոսակցությունը, որ տաք ու բարձր էր. «Վերցնելու ժամանակը եկել է...»: Սերժիկը ջոկեց, որ քեֆ անողները իրավապահ մարմիններից են, հասկացավ, որ խոսքը Բաքվում գլուխ բարձրացրած հայի մասին է: Հասկացավ, թե ինչպես էին ժամանակ առ ժամանակ գործ ստեղծում: Թույլ են տալիս, որ կուտակեն, ու հենց մի քիչ հարստանում էին, գլխներին տալիս՝ թալանում, բաց էին թողնում: Այս դեպքը առիթ դարձավ, որ կոշկակարը փասատիուսեն հավաքի ու իր երկիրը դառնա:

Ծննդավայրը՝ Խերխանը, որպես բնակավայր այլեւս չկար: Գյուղը լքվել ու արոտավայր էր դարձել: 1988-ի փետրվարի 13-ի, 14-ի, 15-ի ցուցարարների ձայնից հոգին պիտի ցնծար ու հրապարակ պիտի գնար: Հետո պիտի հայկական դրոշը բռներ ու իր նման հազար-հազար ցուցարարների առջեւից քայլեր՝ հպարտ, ինքնավստահ:

Փետրվարի 20-ի պատմական որոշումից անցել են օրեր, Միացումը չկար ու չկար: Կենտրոնը լուռ էր, չէր արձագանքում: Ցուցարարները հենց հրապարակում որոշում են ներկայացուցիչներ ուղարկել Մոսկվա: Ընտրությունը կանգ է առնում կոշկակար Սերժիկի եւ խոհարար Արաքսյայի վրա:

1988-ի փետրվարին Մոսկվայից եկան Դեմիչեւը, Ռազումովսկին, Յաշինը, Ադրբեջանի կենտկոմի քարտուղար Բաղիրովը, մտան մարզկոմի շենքը եւ դուրս չեն գալիս: Ժողովուրդը հուսահատությունից անձրեւի ու ծյան տակ ցեխոտ հրապարակում չոքեց: Ժամերով ծնկաչոք մնացին, իբր լսելի դարձնելու իրենց պահանջը: Մութն արդեն իջել էր, եւ ամբոխը չէր բարձրանում: Հուսահատությունից այս ու այն կողմից հեծկլտոցի ձայներ լսվեցին: Առնոն շրջեց դեմքը, նվաստացուցիչ էր, ու հեռու քաշվեց հրապարակից:

- Մեզ միայն զենքը կարող է փրկել,- Սերժիկի ականջին շշնջաց:- Հարցի քաղաքական լուծմանը սպասելը ուտոպիա է:

Կոշկակարը առաջին միտքը ընկալեց, երկրորդը ուղեղով սահեց անցավ:

... Իսկ լուսադեմին ամբոխը ոտքի ելավ, բարձրացավ: Նրանց հոգում շատ մեծ փոփոխություններ էին կատարվել, եւ նրանք այլեւս մի քանի ժամ առաջվա մարդիկ չէին: Նվաստացումի զգացումից զատ Առնոն նաեւ ամաչում էր ամբոխի հավաքական միամտությունից: Ինքը տեսել, իր սեփական մաշկի վրա զգացել էր խորհրդային իշխանության երկաթե կրունկը: Ամբոխը բարձրացավ, եւ ֆիզիկայի ուսուցիչը նրանց աչքերի մեջ կրակ տեսավ, զայրույթ ու մի այնպիսի համառություն, որ անհնարին էր կոտրել: Ժողովուրդը ըմբռնեց, որ ինքը պահանջատեր է, եւ հանուն այդ պահանջի պիտի պայքարի մինչեւ վերջ: Իսկ թե որտեղ է վերջը, ոչ ոք չգիտեր...

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ

Ստեփանակերտում ապրող բերդածորցիները, այդ թվում եղցահոդցիները, ամեն օր հրապարակ են գալիս: Պետրոսյան Ալվարդը ցույցից տուն եկավ երեխաներին քնեցրեց, նստեց գրասեղանի առաջ ու բացեց օրագիրը, որ սկսել էր երկու տարի առաջ, կարոտից ու սպասումից. Ռոման արտագնա աշխատանքի էր գնացել, ինքը չորս երեխաների հետ մնացել էր քաղաքում.

«Վերակառուցումը ազատ խոսքի իրավունք է տվել մեզ: Դուրս ենք եկել ցույցի ու չենք վախենում: Երանի իրականանա մեր երազանքը Ղարաբաղը Հայաստանի կազմի մեջ... Մոսկվայից, կենտկոմից ղեկավարներ էին եկել: Գիշերը մնացինք հրապարակում: Պահանջում ենք լսել մեզ: Միայն երկրորդ օրվա երեկոյան դուրս եկան տրիբուն: Ռազումովսկին ելույթը սկսեց մի քսծիծաղ ու արհամարհական արտահայտություն դեմքին, որը կամաց-կամաց չքվեց: Բաղիրովը սուլթանի գազազած հայացքով էր նայում մեզ՝ անքուն, տառապած, տանջված, բայց կողքահաստ դարաբաղցիներիս: Ժողովրդի կողմից ելույթ ունեցողները իբր բացեցին նրանց աչքերը, նրանք էլ ասացին, թե, իբր ոչինչ չգիտեին, խոստացան տեղեկություն տանել Կրեմլ, խոստացան հարցը վերանայել, սակայն նրանց «փախչելուց» հետո, Բաքվի հեռուստատեսությամբ հաղորդեցին, թե Մոսկվան հարցը չի քննարկելու:

Փետրվար, 1988թ.

Ցույցը վերածվեց գործադուլի: Աշխատում են միայն հացի գործարանը, մթերայինները: Շրջաններից գալիս են ու գալիս: Հրապարակում վրաններ են սարքվում՝ անձրևից ու ցրտից պաշտպանվելու համար: Լուրեր են պտտվում, թե եթե հրապարակը դատարկվի, զորքը գրավելու է:

ԼՂ կուսմարզկոմի նորընտիր քարտուղար Հենրիխ Պողոսյանը դուրս եկավ ցուցարարների առաջ եւ խնդրեց գնալ տները, դառնալ նորմալ կյանքի եւ աշխատանքի, ասաց, որ ինքը խոսել է ընկեր Գորբաչովի հետ, որ Հունիսյան պլենումում մի բան կորոշեն, ժողովուրդն ասաց, որ իրենց պահանջը մարզկոմի առաջին քարտուղար ընտրելը չէ, այլ Հայաստանի հետ վերամիավորվելը: Ոչ ոք մեզ չի ուզում հասկանալ: Արցախը մայրական գիրկն է ուզում վերադառնալ: Մենք մեր լեզուն, մշակույթը, սովորություններն ենք ուզում, մեր պատմությունը, հայ ժողովրդի պատմությունն ենք ուզում սովորել:

Մի քանի անգամ հաղորդեցին, թե ընկեր Գորբաչովը Բաքվի հեռուստատեսությամբ դիմելու է հայերին ու ադրբեջանցիներին: Բայց դիմումը կարդաց Ռազումովսկին, որ դեռ Բաքվում էր գտնվում: Մի տեսակ ոնց որ չհավատանք, որ դա Գորբաչովն է դիմել, չնայած այնտեղ հուսադրող ինչ-որ բան կար. ասենք, որ ոչ ոք չի արգելում ազգերին իրենց պահանջը ներկայացնել, բայց օրենքով ու դեմոկրատական ձեւով: Կամ, որ հունիսյան պլենումի հիմնական հարցերից մեկը ազգամիջյան հարաբերություններն են լինելու: Տեսնենք, գուցե մի լույս բացվի...

Սամայի հետ խոսեցի: Գյուղում խաղաղություն է»:

Հրապարակում որոշվեց Երկրի Ղեկավարին ժեստ անել՝ ծննդյան օրվա առթիվ շնորհավորել եւ դադարեցնել գործադուլը: «Մենք էլ սովորենք դիվանագետ լինել»,- ամբոխի մեջ ձայն տարածվեց, ցուցարարները համոզվեցին:

Կարդացին հեռագրի տեքստը:

Առնոն ձեռքերով քաշեց երեսի ժպիտը ու մի քսծիծաղ կախվեց դեմքին: Հայրապետյան Կամոն հեռվից նկատեց իր ուսուցչին եւ ամբոխը ճեղքելով մոտեցավ.

- Ընկեր Մկրտչյան, վերջը ի՞նչ է լինելու:

- Հիշո՞ւմ ես Խրիմյան Հայրիկի խոսքը:

- Հիշում եմ. երկաթե շերեփ պիտի ունենանք... - Կամոն պատմության թունդ սիրահար է: Առնոն նրան ծանոթացնում է ընկերոջ հետ.

- Սլավիկը Հայաստանից է, պատմական գիտությունների թեկնածու է:

- Գործադուլը պիտի շարունակեինք այնքան, մինչեւ մեր ձայնը աշխարհին լսելի դարձնեինք:

- Բայց դա ծայրահեղ միջոց է, ընկեր Մկրտչյան:

- Էս անգամ էլ տանուլ տվեցինք: Մենք մեր տունը խնդրանքներով, հեռագրերով, նամակներով քանդում ենք: Կախաղանի ենք արժանի...

- Էլի տաքացա՞ր... - Շատ հանգիստ ասաց Մանուչարյան Սլավիկը:

- Մենք նույնիսկ էն ժամանակ, որ ուսանող էինք, նման սխալներ թույլ չէինք տալիս:

- Դուք ուսանող էիք, բայց գիտակից էիք, էս զանգվածը դեռ բնազդով է գործում:

- Ափսո՞ս էս մարտունակ զանգվածը, շարժիչ ուժ չկա, առաջնորդող միտք չկա...

- Լավ, Առնո, ամեն ինչ սրտիդ մոտ մի ընդունիր, ադրբեջանցին մի լավ խոսք ունի՝ «եղածը եղած է, գնացածը՝ գնացած»: Սոված մեռանք, գնանք մի կտոր հաց ուտենք:

Հրապարակում լռություն տիրեց: Ցուրտ քամին այս ու այն կողմ է քաշքշում հավաքարարների ավելուց հետո հրապարակում մնացած թղթի կտորները: Քանդած վրանների, ծողերի հետքերը վերքի նման մնացել էին ողորկ ասֆալտի վրա:

ժողովուրդը ցրվել էր , մի մասը ոգեւորված, որ էս անգամ ճակատները պատին չխփեցին, մի փոքրաքանակ մասը՝ վրդովված, գերակշիռ մասը՝ տրիբունից առաջնորդները ինչ ասում են, իրենք համաձայն են:

Տղաները հասել էին Ուզբեկստան փողոցը, որտեղ աներոջ տունն էր: Կինը Ալվարդը արդեն հաց էր դնում սեղանին, իսկ Առնոյի մտքերը հրապարակի իրադարձություններից դեռ չէին անջատվում:

- Մեր էսքան չարչարանքը ծորը լցրին... Խաբվեցինք...

- Իրար հետ կապ կպահենք, Գորիսին մոտիկ ես լինելու,- Սլավիկը նկատի ուներ Առնոյի գյուղ գնալու որոշումը:

Առնոն ու Կամոն ուղեկցեցին ու հետ դարձան: Ալվարդը սեղանը հավաքել ու անցել էր փոքրիկների ննջարանը: Առնոն մի քարտեզ փռեց սեղանին.

- Նայիր, սա Մեծ Հայքի քարտեզն է: Հետո ձեռքը դրեց մի կետի, որը համապատասխանում է այժմյան Ղազախի շրջանին:

- Կարդա՝ ի՞նչ է գրած:

- Խաղխաղ,- Կամոն կարդաց, բայց բառը ուղեղին ոչինչ չհուշեց:

- Սա հայոց հին պատմական Խաղխաղ քաղաքն է: Երբ պետականությունը կորցրինք, մեր երկիրը բզկտեցին: Արցախը իր անկախությունը մինչեւ 18-րդ դար պահեց:

- Հիմա գաղութ ենք,-իր գիտելիքները փորձեց ցույց տալ նախկին աշակերտը:

- Պիտի հայանանք: Մեր եկեղեցիները պիտի վերականգնենք: Գավառակի հոգեւոր գահանիստը մեր գյուղում պիտի լինի...

- Ուսուցիչ, երբ մեզ էքսկուրսիայի էիր տարել, մաքրել ենք Թումասեռի տարածքի եկեղեցին...

- Ամեն պատմական ժամանակաշրջան իր պատմական դեմքն է տվել: Թումա հայրապետը Դավիթ Բեկի զորքում կռվել է, մեր գյուղի բարձունքներում դիրք է բռնել...

- Մեզ ցույց ես տվել հետքերը...

- Մեր ծորակում էլ մեծ կռիվներ են եղել... Ղարաբաղը միշտ ճակատագրեր է որոշել: Մենք՝ ղարաբաղցիներս, որպես կռվող, կարծես թե առանձին էթնիկական խումբ ենք...

- Իսկ բերդածորցինե՞րը...

- Լսիր Կամո, 1828-ի ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Յուղուտանց Պետին ռուսական բանակի եւ ծորակի զինվորների համար փայտից վառոդ էր պատրաստում: Պապս՝ Դալամա Սահակը դաշնակների սուրհանդակն էր, տրեխի մեջ նամակ է տարել Անդրանիկին: Ղոնաղանց Սահակը իր զինակիցների հետ կռվել է Նուրի փաշայի դեմ,

մինչեւ բնակիչները գաղթել են... 1918-ին լավ կռվողներ են եղել Ճոռունց Սանուչարը, Ոսկանանց Եղիշը...

Հակոբ Մելքումովը Թուրքմենստանում բանակի հեծյալ բրիգադի հրամանատարներից է եղել, հետապնդել ու սպանել է բասմաչիի դիմակի տակ թաքնված Էնվեր Փաշային՝ սուլթանական Թուրքիայի նախկին ռազմական նախարարին, երիտթուրքերի պարագլուխներից մեկին, որ եղեռնի կազմակերպիչներից էր, նպատակ ուներ Միջին Ասիայում ստեղծել իսլամական պետություն: Մի փաստ էլ ասեմ, դժվար կհավատաս. անձի պաշտամունքի տարիներին՝ 1937-ին, Մելքումովը ձերբակալվել է եւ դատապարտվել 20 տարվա ազատազրկման արտառոց մեղադրանքով, իբր համագործակցել է Էնվեր փաշայի հետ: Մեր թիկունքը, մեր ուժը մեր լեռներն են եղել: Մենք միշտ լավ կռվել ենք, բայց դիվանագիտության մեջ տանուլ ենք տվել: Կամո, իսկ գիտե՞ս որ Ավարայրում Ղարաբաղի գունդ, այրուձի է կռվել:

- Ախպոր պես՝ մի փչիր: Չեմ հավատում: Գրած ցույց տուր:

- Հավատում ես, աչքերիդ փայլը քեզ մատնում է: Ժամանակը գա՝ կտանեմ Մատենադարան, ցույց կտամ: Հայկական հողի ամեն մի հատված ունի իր բնորոշ գիծը. հայտնի են Սասունի պարը, Շիրակի երգն ու բանաստեղծությունը, Արցախի զորավարներ տալը, քաջ կռվելը...

- Գրքե՞ր ես տալու տանեմ կարդամ:

- Եթե գինվոր ես ուզում դառնալ սրանք կարդա,- գրադարակից հանեց Անդրանիկի ու Գեւորգ Չաուշի մասին գրքերը:

- Եթե մարդ ես ուզում դառնալ...

- Ես մարդ չե՞մ,- վիրավորվեց աշակերտը:

- Մարդ ես, բայց ես ավելի խոր իմաստ ի նկատի ունեի: Աշխարհայացքդ պիտի լայնացնես, որ կարողանաս ազգիդ ծառայես, հասկացա՞ր,- ու Նժդեհի «Բաց նամակ հայ մտավորականությանը» բրոշյուրը դրեց գրքերի վրա:

Հիշեցին դպրոցից մի դեպք: Կամոյին հանեցին դասից, 10-րդում էր սովորում, զրուցեցին դեսից դենից, փորձելով վստահության մեջ մտնել, բայց աշակերտը հասկացել էր, թե ովքեր են եւ ինչի համար են հարցաքննում:

- Դասին ինչի՞ց եք խոսում:

- Նյուտոնից, Ֆարադեյից...

- Իսկ ազատ դրպեների՞ն...

- Ազատ դրպե չենք ունենում:

- Դասերից դուրս Հայաստանի մասին Մկրտչյանը ի՞նչ է պատմում...

- Ավիամոդելներ ենք պատրաստում:- Մինչդեռ ուսուցիչը Կամոյին վստահել ու պատմել էր, թե իրենք՝ ուսանողները ինչպես են եռագույնը Գորիսի շրջկոմի շենքի վրա բարձրացրել, Կամոն գիտեր նաեւ, որ նրա կուսակցական մականունը Քուրա էր:

Կեսգիշերն անց էր, աները մտավ նայեց Մեծ Հայքի քարտեզին, ջոկած գրքերին.

- Երեխատեր ես, Առնո:

Կամոն հասկացավ, որ սա նրա առաջին հանդիմանությունը չէ:

- Չեմ ասե՞լ գործ չունես,- ու կարծես զգալով, որ մի քիչ կոպիտ ստացվեց, փորձեց մեղմել,- մանկության ընկերներ ենք, հարեւաններ ենք, մի անգամ մեր խնձորը քաղել է՝ ծեծել եմ: - Տղաները ծիծաղեցին, բայց աներոջ դեմքին ժպիտի նշույլ անգամ չկար:

1988 թվականի մայիսի 26-ին ժամը 11.00-ին Լենինի հրապարակում, որ հետո պիտի կոչվեր Վերածննդի, հավաքվել էին ցուցարարները՝ Հայաստանի դրոշով, պաստառներով ու կարգախոսներով. «Լենինպարտիա-Գորբաչով», «Ստալին-Բերիա-Լիգաչով»,- վերջիններս իբր «պերեստրոյկայի» թշնամիներն էին: Ցուցարարները շարժվեցին դեպի մարզային դատախազության շենքը. պահանջում են հեռացնել Բայրամովին, որ գլխավոր դատախազի տեղակալն էր, ապա երթը շարունակվում է քաղաքի գլխավոր փողոցներով, գոչում են.

-Հա-յեր, միա-ցեք,

Մեր Արցախը փրկեցեք:

Ժամը 13.00-ին հանրահավաք է: Ելույթ է ունենում մանկագիր Գուրգեն Գաբրիելյանը, ապա առաջարկում իր գրած քայլերգը: Դասախոսներ Համլետ Գրիգորյանը եւ Արզիկ Մխիթարյանը խոսեցին Մոսկվայում կենտկոմի ղեկավարության հետ ունեցած հանդիպումների արդյունքների մասին: Մովսես Յախշունցը կոչ արեց դիմել Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին: Դասախոս Գրիգորի Աֆանասյանը առաջարկեց հրապարակում կանգնեցնել Անդրանիկի արձանը: Քաղկոմի քարտուղար Զավեն Մովսիսյանը կոչ արեց գնալ աշխատանքի, որին ցուցարարները միահամուռ դեմ դուրս եկան. մինչեւ Մոսկվան պատասխան չտա մարզկոմից ուղարկած հեռագիր - դիմումին, դուրս չենք գալու աշխատանքի: Ճառաբեմ բարձրացավ դերասանուհի Ժանետա Գալստյանը, խոսեց ժողովրդի սրտից ու մտքից: Մոսկվայի Լոմոնոսովի համալսարանից մի ասպիրանտ հրապարակեց հայրենակիցների ուղերձը, որով հայտնում են իրենց համերաշխությունը Ղարաբաղի հայությանը: Ամբոխից սեւազգեստ, դողդոջուն քայլվածքով մի կին բարձրացավ տրիբուն, եւ նրա խոսքը աղոթք էր, աղաչանք առ Աստված, որ չարը խափանի, ժողովրդի ձայնը լսի, ճշմարտությունը հաղթանակի: 40 հազար ցուցարարների անունից ընդունվեց դիմում ընկեր Գորբաչովին, որ Վերակառուցումը թշնամիներ ունի, որ արցախցիները վերակառուցման գաղափարների նվիրյալներ են, սպասում են, որ իրենց խնդրանք-պահանջին արդարացի լուծում տան: Ոմն ամբոխը ճեղքելով մոտեցավ բարձրախոսին՝ իր եւ իր համախոհների անունից գրված դիմումի տեքստը ներկայացրեց՝ առաջարկելով, որ որոշ մտքեր ու գաղափարներ միացնեն: Առնոն ճանաչեց նրան. նա էր, որ զենքի էր կոչում, որ խուսափեց իրենից: Դիմումը ուղղված էր Գորբաչովին եւ ԱՄՆ նախագահ Ռեյգանին, որ այդ օրերին ժամանել էր Մոսկվա:

Կապիտալիստական երկրի նախագահի անունից խորհրդային ժողովուրդը մի տեսակ եղավ, ցնցվեց, ալեկոծվեց եւ պահանջեցին անմիջապես հեռանալ ճառաբեմից: Մարդը գլուխը հակած, հայացքը՝ կախ, առանց ամբոխին նայելու, առանց հուզմունքի ու հանկարծակիի գալու հանդարտ իջավ ու կորավ ամբոխի ծովի մեջ:

- Մա՛ - նո՛ւ - չա՛- ռո՛վ:

- Մա՛ - նո՛ւ- չա՛ - ռո՛վ:

Բարձրահասակ, մի քիչ շեկին խփող, խիտ, ալիքաձեւ, տեղ-տեղ արդեն սպիտակած մազերով, խած, ավելի շատ կանաչին խփող աչքերով, հմայիչ արտաքինով մարդը՝ շինանյութերի կոմբինատի տնօրենը մոտեցավ բարձրախոսին: Ծովացած ամբոխը վայրկյանում մեկ մարդու պես լռեց: Խոսում էր ռուսերենով, առանց գրառումների, վարժ, հանգիստ, ազդեցիկ, հռետորական արվեստով: Կես ժամ ամբոխը լսում էր նրան որպես անկասկածելի, բացառիկ հեղինակության: Ճառախոսը ներկայացրեց Շարժման պատմությունը, այն բաժանելով փուլերի՝ 1921-1923, 1929, 1937, 1945 -1950, 1965-1967, 1975-1977, 1988: Համոզիչ փաստեր բերեց Ադրբեջանի եւ Ղարաբաղում նշանակված դրածոների հայակործան քաղաքականության մասին:

- Պանիսլամիզմը, թաքնված կոմունիստաան գաղափարախոսության հետեւում կատարել է իր սեւ գործը: Հայ Ղարաբաղին սպասվում է Նախիջեւանի ճակատագիրը: Պայքարը պետք է շարունակել մինչեւ հաղթական ավարտ: Կեցցե հայ Ղարաբաղը...

Ամբոխը որոտաց.

-Կեցցե... Կեցցե...

- Արդար պահանջ,

Ոչ մի նահանջ:

- Ուռռա... Ուռռա...

- Կեցցե հայ Ղարաբաղը մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի կազմում:

-Կեցցե ... Կեցցե...

«Կեցցե»-ների եւ «ուռռա»-ների որոտից օդը շիկացավ, եւ Առնո Մկրտչանը, որ ընդհանրապես հեռու էր ճառերից, պլակատային-հռետորական կարգախոսներից, համակրանքով լցվեց դեպի ճառախոսը, ոգեւորության մի ալիք, որ պատրաստ էր գործողության վերածվելու, առավել նրան իր մեջ: Հուզմունքով նայեց «ուռռաներից» որոտացող ամբոխին՝ միասնական, միաբան, որին լիդերները մեկ ուղղությամբ տանում են դեպի հաղթանակ:

Ցուցարարները շարժվեցին դեպի հեռուստաստուդիայի շենքը, որպեսզի բազմաց ձայնով արգելեն Բաքվից ու Մոսկվայից եկած լրագրողների հերքական սադրիչ, ապատեղեկատվական հաղորդումը:

Առնոն լուսանկարեց, ապարատը թաքցրեց բաճկոնի տակ, մխրճվեց բազմության մեջ: Քաղաքացիական հագուստով մեկը հետեւից ականջի տակ շշնջաց.

- Հետեւիր ինձ: Հանգիստ:- Երբ հեռու էին քաշվել ցուցարարներից, զինվորականները, որ հետեւում էին, մոտեցան ու փաստաթուղթ պահանջեցին: Ցույց տվեց անձնագիրը:

- Հետեւեք մեզ:- Տարան ներքին գործերի վարչության մեկուսարան:

Ամբոխը հրապարակից շարժվեց դեպի ներքին գործերի շենքը եւ երկօրյա բողոքից հետո կալանվածը ազատ արձակվեց:

Առնո Մկրտչյանի անունը «ծայրահեղականների» ցուցակի մեջ էր՝ ոչ թե որպես սկիզբ, այլ՝ շարունակություն...

ՊԱԿ-ը դեռ ուժեղ գործում էր, եւ ամեն տեղ, ամեն խմբավորման մեջ ուներ իր գործակալները:

Մայիսի 30-ին պայմանավորված ժամին՝ 11.00-ին, երթը սկսվեց: Խումբը քաղաքի գլխավոր պողոտայով շարժվում է դեպի Հաղթանակի հրապարակ (վայրը անվանակոչվել է մի ցույցի ժամանակ): Ցուցարարները գոչում են.

- Ով հայ է՝ մի-՝ ա՝ - նա՝:

- Ով հայ է՝ մի՝ - ա՝ - նա՝:

Շարքերը գնալով ստվարանում են, իսկ սկսված անձրեւը՝ հորդանում: Փողոցներով անձրեւի հեղեղներ են հոսում, տղամարդիկ, կանայք, բարձր դասարանների աշակերտներ քայլում են՝ մինչեւ ծնկները թրջված, ոմանք հովանոցով, մեծ մասը՝ գլխաբաց, բայց ոչ մեկը շարքից դուրս չի գալիս, առավել՝ նորանոր մարդիկ միանում են շարքերին: Անձրեւի շիթերը... ամբոխը... հեղեղը... ժողովրդական բողոքը հորդացած գլորվում է դեպի ...

Անձրեւի շիթերը հոսում են, իսկ ամբոխը գոռում է.

- Հա-յե՛ր, միացե՛ք,

Մեր Արցախը փրկեցեք:

- Արդար պահանջ,

Ոչ մի նահանջ:

Առնոն քայլում էր ցուցարարների հետ՝ մինչեւ հագուստի վերջին թելը թրջված: Ժողովրդի արդար պահանջին ի պատասխան երկինքը կարծես սառը ցնցուղ է թափում չորսամսյա պայքարից ու սպասումներից լարված, պրկված նյարդերով մարդկանց հույզերին: Օտար դիտողը կմտածի, որ մարդիկ խենթացել են, կորցրել բանականությունը, կարծես ինքնախոշտանգման են գնում, եւ բնության տարերքը եւս հակառակվել էր արդարացի պայքարի ելած ժողովրդի երթին, բայց եւ ի զորու չլինելով ընդհատելու այն: Տա Աստված, որ այդ մեծ կամքն ու պայքարը չսասանվեն մինչեւ հաղթական վախճան,- մտածեց ֆիզիկայի ուսուցիչը:

Երկուսուկես ժամ տեւած երթը ավարտվեց փոքրիկ հանրահավաքով, իսկ անձրեւը դեռ շարունակվում էր նախկին թափով: Ժողովուրդը զարմացած ու զայրացած է կենտրոնական «Պրավդա» թերթի բռնած դիրքորոշումից: Այն «Պրավդա»-ն, որին իրենք տասնամյակներ շարունակ բաժանորդագրվել են, հավատացել են, կարդացել են, ճշմարտացի ու ճշմարտախոս են կարծել: Ամիսներ շարունակ Ղարաբաղից գիտնականներ, պատմաբաններ թղթակցություններ են ուղարկում, լուսաբանում պատմական փաստերն ու իրողությունները Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ, բայց դրանք լռության են մատնում, իսկ ահա վերջին համարում տպագրել են մի իբր շուշեցի «պատմաբանի» էռնեստ Մնացականյանի ապազգային զառանցանքը, ապատեղեկատվությունը: Ստեփանակերտի մանկավարժականի համակուրսեցիները նրան ճանաչում են եւ գիտեն որպես զազրախոսի, անառողջ վարքի տեր երիտասարդի:

- Վառե՛լ:

- «Պրավդան» վառել:

Ժողովրդի հուսախաբությունը «ելքը» գտավ...

Ուղիղ մեկ շաբաթ է, ինչ ժողովուրդը նորից դիմել է գործադուլի, ոչ միայն Ստեփանակերտում, այլեւ շրջկենտրոններում: Չեն աշխատում գործարաններն ու ֆաբրիկաները, տրանսպորտը, խանութները՝ բացի մթերայինից, դադարեցված են ուսումնական պարապմունքները մանկավարժական ինստիտուտում, ուսումնարաններում, դպրոցներում: Հայաստանից ինքնաթիռներով ստացված օգնությունը բարոյական խթան էր ցուցարարների համար:

Սովորաբար ցույցից հետո, խմբերով հավաքվում ու երկար քննարկում են օրվա իրադարձությունները, մտորում, եզրակացություններ անում դրանց շուրջ: Առնոն մոտեցավ համագյուղացիների խմբին.

- Գործադուլներով, ցույցերով երկիր պահել չի լինի: Գյուղ պիտի գնանք, պաշտպանենք մեր հողը, մեր ծեր ծնողներին:

- Ճիշտ է ասում, ով գնա՝ ես մեր տան բանալին տալիս եմ:

- Մենք բոլորս էլ տուն ունենք,- բանալին տվողի վրա հարձակվեցին համագյուղացիները:

- Բերդաձորը օրինակ կհանդիսանա Ղարաբաղի մնացած գյուղերի համար,- վրա բերեց Առնոն:

Ութ ընտանիք՝ կին ու երեխաներով որոշեցին վերադառնալ իրենց ծննդավայրը՝ Հին Շեն: Գյուղ վերադարձան Առստամյան Սպարտակը, Ասրյան Այոշան, Մինասյան Վլադիկը, Էյլազյան Լեւոնը, Պետրոսյան Եդիկը, Ավանեսյան Դերենիկը, Ավանեսյան Այոշան, Սարգսյան Պավելը, Ֆարսյաններ Սեւակ եւ Դավիթ եղբայրները, եւ գյուղը սկսեց լիաթոք շնչել:

Մորաքույրը՝ Էմման թեյ դրեց սեղանին, ու գորովալից հայացքը կանգ առավ քրոջ տղայի վրա:

- Ռազմական խորհուրդ է ստեղծվել, երեկ առաջին նիստն էր,- ասաց Սերժիկը,- քեզ կծանոթացնեմ նախագահի ու անդամների հետ: Առնո, ինչո՞ւ ես ժպտում:

- Ե՞ս: Ժպտո՞ւմ եմ:

- Այո: Ժպտում ես:

- Չէ, մտածում էի, որ էս անգամ հաղթելու ենք:

- Եթե ցույցերով, հանրահավաքներով ու գործադուլներով բան դուրս չեկավ, ի՞նչ ենք անելու, հետո ի՞նչ է լինելու... - Կոշկակարը ինքնիրեն բարձրաձայն մտորում էր:

- Ես գյուղ եմ գնալու: Իմ ժամը հնչել է...

- Սա բոլորի ժամն է,- ասաց կոշկակարը:

- Չէ, իմը ուրիշ է, իմ ժամը շատ վաղուց խփել ու սպասում էր էս օրվան...

- Բա կինդ ու երեխանե՞րդ... - Էմման թարմացրեց թեյը:

- Կռիվ է, մորաքույր:

- Քեզ համար միշտ կռիվ է...

- Հա, մորաքույր, ինձ համար սա շարունակություն է...

- Էս հարցը, իմ կարծիքով, շուտ լուծվողներից չէ, մեր ջան,- մտքերը բարձրաձայնեց Սերժիկը:

- Երկիր ենք ստեղծելու: Մեր երկիրն ենք ունենալու: Լավ ենք ապրելու, մորքուր:

Էմման գրկեց, համբուրեց քրոջ որդուն ու դուրս եկավ: Առնոն զգաց նրա խուլ հառաչանքը, որ վաղամեռիկ քրոջ՝ Արփենիկի համար էր...

- Քո գետնահարկը շատ հարմար է զենք սարքելու համար, պարզապես պիտի հաստոցներ տեղադրվեն:

- Ռազմական խորհուրդը ամեն ինչ մտածել, հաշվարկել է:

- Խառատի գործիքներ են պետք: Կարո՞ղ ես օգնել:

- Էլեկտրատեխնիկական գործարանից կվերցնեմ, հաջորդ գալուդ պատրաստ կլինի:

Եղցահողցի Պետրոսյան Ալվարդը նստեց գրասեղանի մոտ լրացնելու օրագիրը.

«Թեկուզ գրելու շատ բան կար, բայց ձեռքս չէր բռնում: Մեր հարցը դեռ կախված է օդի մեջ: Ժողովուրդը չգիտեր՝ գործի գնալն է լավ, թե՞ չգնալը: «Կռունկը» թեկուզ ցրված է, բայց հորդորում է գործի գնալ: Կարդում ենք «Պրավդան», «Իզվեստիան», շատ անգամ իրարամերժ նյութեր են հրապարակում, մեզ գցում մտատանջությունների մեջ: Սումգայիթի, Աղդամի դեպքերից հետո Ստեփանակերտում գիշերները հերթապահում են: Ռոման նորից գնաց Ռուսաստան: Սիրտս ճմլվում է, նորից նույն սպասումները, կարոտը, նշանված ժամանակի երջանիկ օրերի հիշողությունը:

23 ապրիլի, 1988թ.

Ապրիլի 24-ին Ղարաբաղում առաջին անգամ նշվեց հայոց եղեռնի օրը: Վերջապես կամաց-կամաց ծանոթանում ենք հայ ժողովրդի պատմությանը: Ամբողջ քաղաքը դուրս էր եկել սգալու 1915 թվականի եւ Սումգայիթի ցեղասպանությունը:

24 ապրիլի, 1988թ.

Երկար ընդմիջումից հետո նորից գրում եմ: Պարետային ժամը մեզ համար նոր փորձանք բերեց: Այնքան անմեղ մարդ ծեծվեց, որ սարսափելի է մտածել, որ դա կատարվում է խորհրդային Միությունում, խորհրդային քաղաքացիների նկատմամբ: Արայիկին այնքան են ծեծել, որ դեռ հիվանդանոցում պառկած է: Լկտի ծեւով մտնում են տները, տեղական գրանցում չունեցող անձանց կալանում, ծեծում:

... Բողոքները տեղ հասան, Բաքվից եկած պարետին հանեցին, Թիֆլիսից բերած մեկին նշանակեցին: Դրությունը կարծես մի քիչ խաղաղվել է, սակայն ոչ աշխատանքի են գնում, ոչ էլ դպրոցներն են աշխատում: Թե մինչեւ երբ այսպես կշարունակվի..

Երեւանում դրությունը ավելի վատ է. հակասովետական աններելի արտահայտություններ են արվում: Կախել են եռագույն դրոշը, ինչ որ անկախության մասին են խոսում: Հեռուստատեսությամբ հուզված ու մտահոգված ելույթ ունեցան Վիկտոր Համբարձումյանը, Սիլվա Կապուտիկյանը, Զորի Բալայանը:

22 օգոստոսի, 1989թ.

Ուղիղ 6 ամիս է՝ տետրս չեմ բացում: Մայիսի 3-ից գործադուլները վերսկսվել են: Դրությունը վատթարանում է, ժողովրդի մեջ հավատ չի մնում: Զինվորները հետապնդել են Ռոմայի մեքենային, մի հայաստանցու այնքան ծեծել, որ ընկել է հիվանդանոց: Իսկ Ռոմային ու Օլեգին 30 օրվա կալանք են նշանակել:

26 օգոստոսի, 1989թ.

Գյուղում դրությունը լարվել է: Ավտոբուսը ուղեկցությամբ է աշխատում: Զահելները որոշել են գյուղ գնալ, որ ծեր ծնողները մենակ չլինեն: Էս անտեր ճանապարհներով երթեւեկելը այնքան է վտանգավոր դարձել, որ մինչեւ տուն են հասնում՝ սպասողի մազերը սպիտակում են:

Էհ, ինչեր ասես, որ չեն կատարվել անցած ամիսներին, վեպեր կարելի է գրել...

Այժմ ես եղցահողում եմ, ուսուցչուհի եմ, աշխատում եմ երազածս մասնագիտությամբ:

Ստեփանակերտի հետ կապող միակ երակը ավտոբուսն է, երբեմն էլ՝ Երեւանից եկող ուղղաթիռները:

Գյուղում կյանքը «հետաքրքիր» է անցնում, ամենօրյա միջադեպերը չեն թողնում «ձանձրանալ»:

Մի ամիս առաջ ցնցող դեպք պատահեց: Ազերիները վառեցին Բիգիրգյանի խոտի դեզերը՝ 1200 կիպ, խոզերի ֆերմայում 2 հղի մարուն դնդակահարեցին: Շուշիի մոտ ջարդեցին մեքենաները, քշեցին անապատը, ծեծեցին մարդկանց: Քարով տվել հայրիկի գլուխը պատռել են:

Զահելները գիշերը հերթապահում են, Հայաստանից եկածներին էլ ժողովուրդը պահում է:

20 սեպտեմբերի, 1989թ.

Իրադրությունը նորից սրվել է: Մարտակերտում մեքենաներ են ջարդել: Մի քանի օր է ուղեկցող չեն տալիս: Դեպի ո՞ւր ենք գնում, ինքներս էլ չգիտենք: Ի՞նչ է լինելու վերջը... Ժողովրդի համբերության բաժակը դառնությամբ լցվում է, Աստված մի արասցե՝ պայթի... սարսափելի կլինի... Դժվար է, երբ հարեւանդ արնախում, միջնադարյան խավարամիտ ցեղ է»:

ԱՐՄԱՏԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԲԵԿԱՆԵԼԻ Է
«Սալամ, մուալիմ»

Հոգեբանության դասաժամը Գորիսի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի բաժնի երկրորդ կուրսում վերջացել էր, եւ ուսանողը մոտեցավ դասախոսին.

- Դասախոսության ժամանակ դուք լրիվ չարտահայտվեցիք, բայց ես զգացի, որ ձեզ մտահոգում է հայ ազգի ճակատագիրը,- ասաց Առնոն:

Գրիգոր Դանիելյանը ուսանողին հրավիրեց տուն: Ծանոթացան: Դանիելյանի պապն էլ բերդածորցի է, 1918-ի գաղթածներից:

- Մենք խումբ ունենք:

- Քանի՞ հոգի եք:

- 10: Բայց մի էդքան էլ Ղափանի խմբում է: Կոչվում ենք «Ազգային-ազատագրական խմբակցություն»:

- Ի՞նչ նպատակ եք հետապնդում:

- Ժողովրդի գիտակցությանը հասցնել, որ Հայաստանը հողեր է կորցրել, որ մենք հողային, տարածքային պահանջատեր ենք,- հստակ ձեւակերպեց ուսանողը, եւ դասախոսը գոհ ժպտաց:

- Այո, դարերի ընթացքում մաս-մաս եղած, վերջին հարվածն էլ բոլշեւիզմը հասցրեց, հոշոտեցին Հայաստանը, Ղարաբաղը, Նախիջեւանը, Զավախքը... Խորհրդային ռեժիմը դուրս մղեց հողային պահանջատիրության հարցերը:

- Քարոզվող ինտերնացիոնալիզմը մարդկանց ուղեղները մթագնել է...

- Հիշողությունից զուրկ սերունդ՝ մանկուրտներ ենք դաստիարակում... Բոլշեւիկները խեղդում են պահանջները, իբր բարեկամ ենք, եղբայր ենք...

- Այդ ամենը մենք պարզաբանում, հասցնում ենք ժողովրդի գիտակցությանը:

- Ինչպե՞ս:

- Թռուցիկներով: - Երկու ղարաբաղցիներն արդեն իրար վստահում են:

- Խմբերը պիտի շատացնել: Շարժումը պիտի ընդգրկի ժողովրդական լայն զանգվածներ, եւ այդ քանակական գերակշռությունը արդյունք կտա:

- Խումբը որ մեծանա, կոչելու ենք Գարեգին Նժդեհի անունով:

- Գյուղ գնում-գալի՞ս ես:

- Այո: Գնում եմ: Ղարաբաղի հայերի իրավունքները ոտնահարվում, արժանապատվությունը կոխկրտվում է: Նրանք՝ իշխողները, շատ են

լկտիացել:- Առնոն ծոցագրպանից հանեց, մի օրինակ թռուցիկ դրեց սեղանին:

Դասախոսը կարդաց. «Ժողովուրդ, տարիներ շարունակ խորհրդային քարոզչական մեքենան ձեր գիտակցության մեջ է մտցրել, որ հայ ժողովուրդը պահանջ չունի: Դա կեղծ է: Մեր օրինական տարածքները պետք է վերադարձնեն...» եւ այլն, եւ այլն: Թռուցիկներից մեկի վրա պատկերված է քարտեզ, որտեղ Ղարաբաղը միացված է Հայաստանին:

- Որտե՞ղ եք տպագրում:

- Տպարանում մարդ ունենք:

- Զգույշ կցրեք:

- Մերոնցից պահակներ ենք դնում: Գործողությունը կատարելու ենք դիշերը, ժամը 12-ից հետո: Փակցնելու ենք տների, հիմնարկների պատերին, շենքերի շքամուտքերին:

-Խորհուրդ կտամ դրան հաջորդած 1-2 օրը սենյակում փակված մնալ:

Երրորդ օրը Առնոն մտավ ու դասախոսին ալեկոծված գտավ. լսել էր, որ քաղաքում ձերբակալություններ են եղել:

- Ամեն ինչ բարեհաջող է անցել, շները,- ի նկատի ուներ ՊԱԿ-ը,- իրար են խառնվել, հանրակացարանում խուզարկություններ են եղել, հարցուփորձ, հարցաքննություն, տղաներից մի քանիսին տարան կասկածանքի հիման վրա, բայց ոչինչ հաստատել չեն կարողացել ու բաց են թողել:

Տղան պատմեց, թե ինչպես հաջողացրել է թռուցիկներից մեկը խոթել ռեկտորի աշխատասենյակի գրասեղանի դարակը: Բացել-կարդացել է, եւ գործընկերները ստիպված են եղել... շտապօգնություն կանչել: Դասախոսը կատակով մատ թափ տվեց, ու երկուսով ծիծաղեցին:

Ձմեռային ուսանողական արձակուրդները վերջանալուց Առնոն անմիջապես այցելեց դասախոսին:

- Արծվաշենում էլ ենք խումբ հավաքել: Ղարաբաղում, ճիշտ է, խումբ դեռ չունենք, բայց ունենք համախոհներ, որոնց հետ արդեն պլաններ էլ ենք մշակում: Որոշել ենք դիվերսիոն խմբեր էլ ստեղծել...

- Օգուտ չեն տա: Դրանք կարճատեւ բռնկումներ կլինեն, ավելի շատ իշխանություններին կգրգռեն ու ընդհանուր գործին, Շարժմանը վնաս կբերեն:

- Բայց թռուցիկները, քարոզը, սրանք պայքարի պասիվ ձեւեր են...

- Ակտիվ պայքարի ժամանակը դեռ չի եկել... Խորհրդային ռեժիմը երկաթե զսպաշապիկ է, պայքարի նման ձեւերի համար սողանցք չի թողնում:

- Այնուամենայնիվ ես գտնում եմ, որ նման խմբեր անհրաժեշտ է ստեղծել,- համառեց ուսանողը:

- Դրանով միայն ուշադրություն կգրավեք, ուրիշ ոչինչ: Էլ չեմ խոսում այն մասին, որ տեռորը վանում է ժողովրդին, որ ում բռնեցին կկորցնեն...

- Զոհեր կլինեն, բայց մենք մեր նպատակին կհասնենք:

- Նպատակին չեք հասնի: Անտեղի զոհերն էլ ում են պետք: Այդ հարցում՝ երիտասարդ ես ու տաքարյուն, կյանքն էլ շատ էժան ես գնահատում:

- Կյանքս էդ մեծ նպատակին կտամ...- Ուսանողը սա ասաց այնպիսի ներշնչվածությամբ ու ներքին համոզվածությամբ, որ դասախոսը մի պահ կարկամեց: Հետո մոտեցավ պահարանին, ղարաբաղյան թթի օղու շիշը բացեց.

- Մի-մի բաժակ...- Հիացմունքով նայում էր տղային ու մտածում. գաղափարին նվիրված, աննկուն հոգի է աճում:

- Ղարաբաղի տարածքի հարցը դնելը դեռ չի հասունացել,- ասաց ու տղային տվեց կարդալու 1975 թվականի ԼՂԻՄ կուսմարզկոմի բյուրոյի հայտնի նիստի սղագրությունը: - Վճռական պահին իշխանության մեջ իրենցը համարվող ներկայացուցիչը ետ է քաշվել: Անցյալի սխալները պետք է հաշվի առնել, չկրկնել: Գաղափարը պետք է հասունանա, եւ հասունացած պահի՛ն հարցը առաջ քաշվի, որ արդյունք լինի: 1970 - 1975-ին ստորագրություններ հավաքեցինք, հարցը բարձրացվեց, Մոսկվան բարձրացած ալիքը փշրեց, հարցը ձախողվեց, նախաձեռնողներին էլ՝ պատժեցին: Այսքան պատմածից հետեւություն արեցի՞ր...

Առնոն լուռ լսում, մտքերը ծանում-ընկալում էր:...

- Դիվերսիոն խմբեր ստեղծելու ժամանակը չի: Զբաղվեք բացատրական աշխատանքով, գաղափարը հասունացնելով, գրականություն տարածելով՝ բանավոր կամ թռուցիկներով, զբաղվեք պատմության ծալքերը փորփրելով, բացելով, դրանք տարածելով...

Սեղանի վրա դրած ձվով երշիկը վայելում ու զրուցում էին:

-Շատ ու շատ պիտի զգույշ լինեք: Տասն անգամ չափեք մեկ կտրեք: Նրանց աքցանի մեջ ընկնողը գլխովին կկորչի:

- Ինձ արդեն տարել են, մի քանի օր մութ մեկուսախցում պահել: Ուզել են հաստատել, որ Հայաստանից Ղարաբաղ թռուցիկներ ու գրականություն եմ տարել տարածել: Ծեծել են,- ուսանողը բացվեց մինչեւ վերջ,- տեսել են բան չի դուրս գալիս, փորձել են գայթակղել, իրենց կողմը քաշել...

- Ուրեմն, դու առավել զգույշ պիտի լինես... Առնո, ովքե՞ր են ընկերները:

- Ավելի լավ է՝ չիմանաս: Քեզ չեմ կարող վտանգի ենթարկել, մանավանդ որ դու էլ կաս նրանց ցուցակներում: Ոչ դու իմացիր իմ ընկերներին, ոչ նրանք՝ քեզ: Պահպանենք գաղտնիությունը:

- Ինչո՞ւ չէիր երեւում:- Հարցրեց դասախոսը:

- Երեւան էի գնացել: Արխիվներն էի քրքրում, Բերդաձորի, Արցախի մասին ահագին նյութեր եմ հավաքել... Այնուամենայնիվ, ամենաճիշտ կուսակցությունը Դաշնակցությունն է... Ղարաբաղը թուրքերից պիտի ազատագրել...

- Բայց ոչ տեռորով, տեռորի ճանապարհը ճիշտ չէ, ես չեմ ընդունում: Այս պայքարը վերջ չունի, Առնո:

- Էնքան պիտի պայքարենք, որ հաղթենք...

- Կոմունիստական հեքիաթներին ժողովուրդը հավատում է, նրանց մոտ էդ մշուշը պիտի ցրվի...

Ուսանողը ցույց չի տալիս համաձայն է, համաձայն չէ լուռ լսում է, բայց ապրիլի 24-ի ուսանողական ցույցից հետո համոզվեց, որ դասախոսը ճիշտ է:

... Երթը սկսվել էր Գորիսի կենտրոնական հրապարակից, շարժվում էր դեպի ինստիտուտի շենքը: Բազմաքանակ ուսանողներ էին ներգրավվել, իսկ ժողովուրդը չէր միանում ցույցին, հեռու կանգնած թամաշի էին դուրս եկել: Մի մասը պատուհաններից էին զարմացած նայում, իսկ ուսանողները գոչում էին.

- Հո-ղե-րը...

- Հո-ղե-րը...

- Կեցցե ժողովրդի կամքը:

- Կորչի բռնությունը:

Ամբոխի միջից կոմունիստները ծիծաղում ու ծաղրում-ծանակում էին.

- Հիմարնե՞ր...

Ցուցարարները ուշադրություն չէին դարձնում, շարունակում էին ցույցը:

Գրիգոր Դանիելյանը ինչպես միշտ նման դեպքերից հետո սպասում էր ուսանողին, որը շատ չուշացավ:

-Ես ատում եմ այս կարգերը,- Առնոն նկատի ուներ խորհրդային վարչակարգը: - Սրանք երես տվին թուրքերին...

- Թուրքերը շատ օգտվեցին խորհրդային կարգերի փտվածքից...

- Կգա ժամանակ Բերդաձորը հեղափոխական ազգային շարժման կենտրոն կդառնա:- Ուսանողն ասում էր հավատացած, իսկ դասախոսին հիացնում էին նրա երազանքները:- Հայ ժողովուրդը կհասնի իր նպատակին՝ միացյալ Հայաստան... Ուսանողը հոգու գենետիկ ուժով տեսնում էր պայքարի, իր երազանքի մոտեցող ալիքը... Նրանց զրույցից մինչեւ արցախյան ազգային ազատագրական Շարժումը, ժողովրդական զանգվածների հզոր արթնացումն ու վերածնունդը մնացել էր ընդամենը մեկ տասնամյակ, որ պատմության ընթացքի մեջ մեկ ակնթարթ էլ չէ...

- Ես կարող է չլինեմ, Առնո, բայց էդ պայքարը, որ դուք եք սկսել, հաջողություն է ունենալու: Հավատում եմ ձեր գործի հաղթանակին:

Դանիելյանը հրապուրվել էր Առնոյի երազանքներով, որ իրեն շատ-շատ հեռու էին թվում, ու մի թախիծ էր իջել ուսանողի կրկնակի ու մի քիչ էլ ավելի տարիքն ունեցող դասախոսի հոգում: Եվ ո՞վ է կարողացել վերծանել ճակատագրի խաղերը, քմայքները, առեղծվածները: Դասախոսը պիտի ապրեր մինչեւ խոր ծերություն, ականատեսը լիներ ազգային ազատագրական հուժկու պայքարին, Հայաստանի անկախացման, Արցախի հայոց երկրորդ հանրապետության հռչակման, պետականության ստեղծման ու ամրապնդման գործընթացին: Իսկ ուսանողը...

1972-1974 թվականներն էին:

Գորիսի մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Քրիստափոր Պետրոսյանը հրավիրված ծնողին աթոռ առաջարկեց: Գործը լուրջ էր:

- Համակրելի երիտասարդ է,- ռեկտորի առաջին խոսքից հայրը հպարտություն զգաց՝ չկռահելով, թե խոսքը դեպի ուր է թեքվելու:

- Պետանվտանգության մարմինները հետաքրքրվում են քո տղայով:

- Ինչո՞ւ:

- Ղարաբաղի հարցով Զանգեզուրի ժողովրդին ոտքի է կանգնեցրել:

- Ես 40 տարի նրան եւ ուրիշներին լենինյան բարեկամության գաղափարներ եմ քարոզել:

- Այո, բայց... Տաղանդավոր տղա է, արտակարգ ընդունակություններ ունի, կարողանում է գրավել լսարանը, բազմությանը իրեն լսել տալ, բայց մի քիչ,- մտածեց-մտածեց ու բառը գտավ,- լրջություն է

պակաս: Նրա պատճառով մեզ անհանգստացնում են:- Ռեկտորը խոսում էր անթաքույց համակրանքով եւ զգում էր, որ հայրը լիովին անտեղյակ է տղայի «ծռված» մտքերին ու գործունեությանը:

- Գիտուն տղա է, մեծ ապագա ունի, բայց ... այստեղ ազգայնական խորտումներ կան, ինքը ղեկավարն է... - Նորից զգալով հոր անտեղյակությունը՝ Պետրոսյանը մանր-մանր հասկացնել է տալիս:

- Դասերից բացակայում է: Ավելի շատ Երեւանում է լինում, ճիշտ է, հասցնում է, բայց...

- Ինչո՞ւ: Ի՞նչ գործ ունի Երեւանում,- Միքայել Մկրտչյանը զարմացած էր:

- Մատենադարանում ու գրադարաններում արխիվներն է քրքրում: Կնգիր գիտի, թե Ադրբեջանի տարածքում ինչքան հայկական եկեղեցիներ ու վանքեր կան՝ կանգուն թե ավերված:

- Հաստա՞տ:

- Զրուցիր հետը՝ շատ բան կիմանաս: Մինչեւ Հայաստանի կենտկոմի քարտուղարին էլ է հասել... - Խոսքը Գորիսի վերջին ուսանողական հուզումների մասին էր: - Եթե Մոսկվա էլ հասավ...

- Ես նվիրված կոմունիստ եմ: Լենինյան գաղափարների քարոզիչ...

Ռեկտորը զգաց հոր անհանգստությունը.

- Գորիսում գիտական կենտրոն կա, կօգնեմ, կդասավորեմ, միայն թե...

- Ես նրան Բերդաձոր կտանեմ: Իմ ձեռքի տակ ... Կհետեւեմ... Ես նրան դաստիարակել եմ որպես խորհրդային երկրի քաղաքացի, լենինյան ...

- Այո, բայց... - Պետրոսյանը խոր ընկղմվեց բազկաթոռի մեջ:

- Ես նրան կվերադաստիարակեմ:

- Վախենամ՝ ուշ է: - Քրիստափորի քմծիծաղը բարեհոգի էր:

- Եթե մեզ մոտ սովորեր՝ նման գաղափարներով չէր վարակվի: Շփվել է գրողների հետ, աչքաբաց տղա է՝ նրանց ազդեցության տակ է մտել:

- Ուսանողության աչքն է, ցավալի է, որ ...

- Սխալ է, որ ձեր ուսանողները ձեզ չեն լսում:

- Ձեր մեղքն էլ քիչ չէ: - Պետրոսյանը կարողացավ բարձր մնալ իր պաշտոնական դիրքից ու տեղի տալ հայրական սրտի ջրի երես ելնող ներքին ալեկոծումներին:

- Կտանեմ մեր գյուղը, դպրոցում իմ ձեռքի տակ կաշխատի, կհեռանա...

- Վախենամ՝ չկարողանաք արմատախիլ անել, շատ խորն է տար-

ված,- ռեկտորը ներքին համակրանքով, տակտով կամաց կամաց տեղեկացնում էր:

- Ջահել է, խելքի կբերեմ...

- Վերջին քննություններն է, կհանձնի, ուղեգիրը Ղարաբաղ կտամ:

Քաղաքի ծայրի մի խուլ ճաշարանում հայրը չզսպված զայրույթով բացեց գրույցը.

- Կյանքդ ինչո՞ւ ես վտանգի տակ դնում:

- Քանի՞ տղա ունես,- հոր համար որդու ընթրստությունը անապատելի էր, եւ հանկարծակի գալով երկուսի համար էլ հայտնի թիվը ասաց.

- Հինգ:

- Հաշվիր չորսն է:

- Ես քեզ տարբերել եմ... - Հայրը որդու անհնազանդության առաջ տեղի տվեց, կարծես թե խեղճացավ:

- Գիտեմ, բայց դա նշանակություն չունի: Ես արդեն ընտրել եմ իմ ճանապարհը: Ես ուրիշ աշխարհի եմ ծառայում...

Հայրը ցնցվեց.

- Աշխարհի ժողովուրդները բարեկամ են, ես սկզբունքով պիտի առաջնորդվես:

- Բարեկամաբար քո ձեռքից հողերդ առել են...

- Ազգերի մեջ թշնամանք չպիտի լինի...

- Ղարաբաղը հայկական հող է, Ադրբեջանը գավթել է...- Որդին խաղաքարտերը միանգամից բացեց: Պատմության ուսուցիչ Միքայել Սկրտչյանը չորս կողմը նայեց՝ հո լսող չեղա՞վ:

- Ես արդեն ընտրել եմ իմ ճանապարհը,- կրկնեց տղան:

- Ի՞նչ ճանապարհ է, բացատրիր,- խուլ ձայնով եւ պարտվողական երանգով հարցրեց հայրը:

- Ազատ, անկախ, միացյալ Հայաստան:

- Վերջ տուր,- հոր ձայնը դարձավ տագնապախառով ու խիստ,- ուտոպիա է:

- Ես տեսնում եմ՝ իրականություն կդառնա:

Հայրը զգաց, որ որդին հեռանում է իրենից ու փակեց վտանգավոր զրույցը: Գորիսի խուլ մի անկյունում, աղքատիկ ճաշարանում, որ ընտրել էր մի կտոր հացի ու գրույցի համար, հայրը իրեն մենակ, ճնշված, լքված ու անօգնական զգաց, բայց ցույց չտվեց, մեջքը շտկեց, հայացքը ուղղեց՝ խիստ ու թեթեւակի խոժոռադեմ մի դիմակ սարքելով, ու վճարեց մոտեցած մատուցողուհուն:

Հայրուորդի հայտնվել էին իրարամերժ խրամատներում...

Էլի Միքայել եւ Արփենիկ Սկրտչյանների ընտանիքում ծնվեցին ութ երեխաները, Բերդաձորն արդեն միջնատարածք էր, մի կողմում՝ Լաչին, մյուս կողմում՝ ազերիաբնակ Շուշին, եւ Սահակը, որի համար իր Գլխի սահմանը մինչեւ Քուռ գետն էր, մինչեւ որտեղ կտրում-հասնում էր իր հայացքը Քումենքարի բարձունքից, այս Սահակը, որ 1918-ին Անդրանիկ Զորավարին նամակ էր տարել, որին հարեւան քոչվորները Գայամա մականունն էին տվել, ապրում էր: Ճիշտ է, ոտքերում առույգություն դեռ կար, բայց արդեն ավելի շատ այն աշխարհի հետ էր, ուր պիտի գնար, եւ այն աշխարհի հետ, որի մեջ իսկապես ապրել է որպես ոլացող ձի, ապրել է եւ նրա անունից հարեւան վրանաբնակները սարսափել են: Սահակը վաղուց չէր ապրում, այն ժամանակներից, երբ ձորակում սկսեցին քիրվայություն անել քոչվոր ցեղի հետ, այն ժամանակից, որ սկսեց չհասկանալ իրենից սերվածին, ուսյալ որդուն Միքայելին, որ իր հրացանը տարավ Շուշի, տարավ հանձնեց թշնամուն:

Հանդ գնալուց թոռանը՝ Առնոյին էլ հետն էր տանում, աչքն առնում էր Վիշապաքարի ցցվածքին հսկայական Կարկառին, բայց դրանից բայլքը չէր զորեղանում. երեք տարուց հետո հարյուր տարին կլրանար: Միասին շրջում էին կարկառներում, հասնում էին մինչեւ ակունքը, որտեղից սկիզբ էր առնում գետը, որ Կարկառ է կոչվում, ու տղայի հայացքի ու մտքի մեջ պիտի ներծծվեին քարաժայռերի ու ծմակի, կծոխուրի թփերի ու գայլածաղիկների գույները ու պապից լսած պատմությունները՝ շատ ու շատ հնուց եկած: Որ ջրերը ամեհի, որ քառասուն օր, քառասուն գիշեր այս ու այն կողմ էին քշվում ոչնչացնելով երկրի երեսին կենդանի ամեն շունչ, որ հուժկու ալիքները լեռներից փշրել-ջարդել-քշել էին հսկա քարաժայռեր, եւ երբ երկնքի բաց պատուհանները փակվել են, եւ անձրեւը դադարել է, ջրերը հետ են քաշվել, Նոյը իջել է Արարատ լեռան վրա, երեք որդիներին՝ Սեմին, Քամին եւ Հաբեթին ուղարկել տեղանքը շրջելու եւ բնակության վայր ընտրելու: Ընդառաջելով Սեմին, որ եղբայրներից ավելի երազկոտ էր, Նոյը նրան այս քարքարոտ երկիրը տվեց, որի սահմանները հասնում էին մինչեւ Քուռ եւ էլի շատ հեռու:

Երբ Սկրտչյանների ընտանիքում ծնվեցին ութ երեխաները, Բերդաձորը միջնատարածք էր թաթար-ազերիական լծի տակ: Փոքրիկ Սկրտչյանները եւ կարկառների ու թավ անտառների այս ձորակում ծնվող երեխաները ժառանգել-պահպանում են իրենց նախնիների արտաքինը՝ շիկավուն, խարտյաշ մազեր, խաժ ու պարզ աչքեր եւ հոգեկերտվածքի ինչ-ինչ գծեր:

Հին Շենի հեռավորությունը Շուշիից 38 կմ է, Ստեփանակերտից 50,

բարձրությունը ծովի մակերեւույթից՝ 1500: Զբաղեցրած տարածքը՝ 3301հա: Կան սրբատեղիներ, տապանաքարեր, եկեղեցի՝ 15-րդ դարից, հին գյուղատեղիների ավերակներ, ժայռափոր բնակավայրեր: 1950-1960-ական թվականներին բնակչության քանակը 500-ից ավելի էր, 120-130 ծխով, դպրոցը միջնակարգ, աշակերտների քանակը՝ 250: Դպրոցը, որ հիմնադրվել է 1903-ին, միջնակարգ էր, որտեղ գալիս եւ սովորում էին ծորակի եղցահող, Մեծ Շեն, Լիսագոր գյուղերի ութամյանոցից եւ Լաչին քաղաքի ութամյա հայկական դպրոցից: Իսկ Կանաչ Թալայում ու Տաս Վերստում տարրական դպրոցներ էին: 1950-1960թթ. Հին Շենում դասարանները եղել են զույգ, յուրաքանչյուրում 25-30 աշակերտ: 1992-ին գյուղը թողնելուց առաջ ազերիները վառել են գյուղական սովետի արխիվը եւ երբ հինշենցիները վերադարձան, նախագահը մոխիրների միջից մի կիսայրված թուղթ է բարձրացնում, որտեղ նշված էր հունձ անող կանանց թիվը մինչեւ Մեծ Հայրենական պատերազմը: Թիվը պատկառելի էր՝ 134: Զբաղվել են հողագործությամբ, անասնապահությամբ, խոզաբուծությամբ, բանջարաբուծությամբ: Պետությանը հանձնել են 120-150տ բանջարեղեն: Անհատական թույլատրվում էր պահել մի կով, մի հորթ, 5 մանր եղջերավոր: Ադրբեջանական գյուղերում անհատական սեկտորը զարգացած էր. հիսունով, հարյուրով խոշոր եղջերավորներ էին պահում: Ադրբեջանի վարած քաղաքականությունը այնպիսին էր, որ ընտանիքները աղքատանային, հայկական գյուղերը քայքայվեին: Հայերն էլ իրենց օրինապահությամբ նպաստել են գյուղերի քայքայմանը: Շրջակայքը անտառապատ է: Գյուղին կից 150 հա վարելահող ունեն, Կուրոպատկինոյում Մեծ Շենի հետ միասին՝ 400հա: Արոտավայրերը հասնում են մինչեւ Քիրս, Քարինտակ գյուղը, Լիսագոր, մինչեւ Լաչինի շրջանի Մուսուլմանլար գյուղը, որը նախկինում կոչվել է Հին Շեն: Ի դեպ, գյուղի բնակիչները հայերի հետ առեւտուր անելիս ասել են, որ իրենք կրոնափոխ եղած հայեր են, եւ ազգամիջյան ընդհարումների ժամանակ իրենց ծագումը թույլ չի տվել հայերին վնաս տալու: Ենթաշրջանի բոլոր գյուղերն էլ զբաղվել են մեղվաբուծությամբ, պետությանը հանձնում էին 450-460կգ մեղր եւ Բաքուն, Բերդաձորի մեղրը յուրահատուկ համի ու մաքրության համար հասցնում էր մինչեւ Մոսկվա, Կրեմլ: Բերդաձորի գյուղերը միասին ունեին 450 մեղվափեթակ: Ամեն մի ընտանիք էլ իր հնարավորության սահմաններում փեթակներ էր պահում:

Հին Շենի հարեւանությամբ՝ 8-9կմ հեռավորության վրա եղել է հին հայկական գյուղ, որ զբաղվել է միայն մեղվաբուծությամբ եւ կոչվել է Մեղրաձոր, ազերիները եկել բնակվել՝ աղավաղված կոչել են Մղդարա:

Միքայել Մկրտչյանը դպրոցում Ադրբեջանի եւ ՍՍԿԿ պատմություն էր դասավանդում, որդին՝ Առնո Մկրտչյանը ֆիզիկա: Երիտասարդ ուսուցիչը դասի վերջին 5-10 րոպեները հատկացնում էր հայոց պատմությանը, Արցախի պատմությանը եւ Բերդաձորի պատմություններին: Դպրոցին կից կար հանրակացարան, որտեղ տեղավորված էին հարեւան գյուղերից եկած երեխաները, որտեղ Առնոն նաեւ ննջարանավար էր, այսինքն՝ դասերից դուրս զբաղվում էր նրանց դաստիարակությամբ:

Երեկոյան ուսուցիչը մտավ ննջասենյակ, որտեղ 10 երեխաներ էին տեղավորված, ու սկսեց ստուգել դասերը:

- Ինքնցիայի օրենքը:

Կարոն կանգնեց ու անգիր ասաց:

Զոբանյան Շիրակը սերտել էր Նյուտոնի օրենքները եւ արժանացավ ուսուցչի գովասանքին: Հարցերը բարդանում են, պատասխանում են Վիլենն ու Վարուժանը: Հետո ծայր առավ զրույցը: Ուսուցիչը պատմեց, թե ինչպես Գորիսում ցույցի ժամանակ ուսանողները տարել են Լենինի մեծադիր նկարը, որի տակ Առնոն գրել էր. «Սա այն սեւ ագռավն է, որ Ղարաբաղը բաժանել է մայր Հայաստանից»: Ղարաբաղի մասին առաջը երեխաների մի ականջով մտավ, մյուս ականջով դուրս եկավ, բայց Վիլենի հիշողության մեջ համեմատությունը մնաց. ո՞նց թե Լենինը՝ ագռա՞վ... Ուսուցիչն էս ինչեր է ասում, բայց քանի որ շատ էին սիրում ու հեղինակություն էր՝ չվիճարկեցին:

- Ուսուցիչ, խոստացել ես պատմել Վիշապաքարի հեքիաթը:

- Լավ,- ժպտաց ուսուցիչը,- սկսեմ: Կանաչ Թալա գյուղում մի ցեղախումբ էր բնակվում՝ կոչվում էր Զոնգունց կամ Թաղունց: Գերդաստանում մի հսկա, անտաշ, կողքահաստ մարդ էր ապրում, անունը՝ Զոնգի: Նրան նաեւ Օշափ էին ասում, այսինքն՝ դեւ: Նա շատ նման էր Տորք Անգեղին: Գերդաստանի նահապետը մահանում է, եւ որդիները իրար մեջ պիտի բաժանեին հարստությունը: Զոնգիին հասնում է 2 կով, 5 ոչխար, եւ խռոված հսկան բաժինը վերցրած՝ գնում է Շուշի քաղաքը, ծախում, մի մեծ մահակ առնում...

- Մահակը ինչքա՞ն կլիներ: - Հարցրեց Սեւակը:

- Դա ի՞նչ կարեւոր է, մի ընդհատիր,- բարկացավ Վիլենը, որի խաժ աչքերը փայլում էին:

- Երկու մետրանոց էր: Ոտքի չափը 60 համարի էր: Գոմեշի կաշի է առնում, տրեխ կարել տալիս, յափնջին ուսերին գցում ու բարձրանում քերծը: Քերծը բարձրանալու միայն մի հնարավորություն կար. հսկան կանգնում է հարավային ուղղությամբ, ճակատին՝ դեմառդեմ վերեւում՝

մի ճեղք է երեւում, ճեղքի մոտ՝ թուփ կա աճած, որից այն կողմ՝ մի մարդատք կածանը տանում է դեպի բարձունքը: Բարձրանալը ինչքան դժվար է, հազարապատիկ դժվար է իջնելը:

- Դու բարձրացե՞լ ես, ուսուցիչ:

- Բարձրացել եմ: Կիրակի օրը, եթե ուզում եք՝ կգնանք: Հիմա լսեք: Վիշապաքարի ստորոտով անցնում է Մեծ մետաքսի ճանապարհը: Զոնգին խառված աշխարհից, քույրերից ու եղբայրներից, կանգնում է բարձունքին, եւ երբ Չինաստանից եկող եւ դեպի Բաղդադ գնացող ուղտերի քարավանը գալիս է, մահակը շպրտում է, առեւտրականները թողնում-փախչում են: Իջնում է գորգեր, կարպետներ, ուտելիք, ինչ իրեն պետք է, վերցնում-բարձրանում իր վրան-կացարանը: Շահը ոսկի ու արծաթ է խոստանում նրան, ով կվերացնի հսկային: Զոնգին, աշխարհից խառով, ոչ մեկի հետ չէր շփվում: Շահը կաշառում է քրոջ տղային, որը գալիս՝ կանգնում է քերծի տակ, կանչում քեռուն, որ իջնի՝ քրոջ թխած բաղարջը վերցնի: Զոնգին պարանը կախում է քերծից, տղան բարձրանում է: Զոնգին ձեռքերը գլխատակին դրած կարոտած լսում էր քրոջ որդու զրույցը եւ դանդաղ ծամում բաղարջը:

- Էս ի՞նչ է, քեռի:- Ձահել տղան ձեռքը մեկնում է մահակին:

- Դրանով եմ ապրուստս հոգում...

Տղան ծանր մահակը բարձրացնում ու զարկում է ոտքերին: Հսկան գոռում է, եւ նրա ձայնից ձորը դղրդում է:

- Օգնիր ինձ, հասնեմ ժայռի պռնկին, արի, ես քեզ ոչինչ չեմ անի,- աղաչում-պաղատում է ոտքերը ջարդված Զոնգին, իսկ տղան իր կատարածից սարսափահար՝ ետ-ետ փախչում ու իջնում է: Հսկան մի կերպ հասնում է քարափի պռնկին ու իրեն ցած գցում:

- Ուսուցիչ, հեքիա՞թ է, թե՞ եղել է,- Վիլենի խած ու ակնապիշ աչքերը տխուր վերջաբանից ջրակալվել էին:

- Եղելություն է: Հսկան թաղված է Փոքր Խերխան գյուղում: Գերեզմանի վրա հսկայական ընկուզենի է աճել: Վաղը ձեզ կտանեմ Վերին Խութ, այնտեղից երեւում է գերեզմանը, կտեսնեք: Երեխաներ, Վիշապաքարը նշանավոր է ոչ միայն ժայռեղեն պարիսպներով, այլեւ իր պաշտպանական, ազդանշանային համակարգով: Այն դիտակայանի դեր է կատարել: Իր անառիկ դիրքի շնորհիվ Օշափենքարը դարեր շարունակ համարվել է Ղարաբաղի մելիքության ազատագրական պայքարի առաջնակարգ ամրոցներից մեկը: Այն միաժամանակ հանդիսացել է Քարագլուխ-Օշափենքար-Ճամբերախաչ-Թումասեռ-Քարավազի կամուրջ ազդանշանային համակարգի միջանկյալ օղակ: Բերդի ուղեկալը հսկողության տակ էր պահում Արաքսից հյուսիս ընկած տափա-

լանքով կատարվող անցուդարձը, վտանգի դեպքում հատուկ ազդանշանների տագնապ էր բարձրացնում լեռներում: Այստեղով են անցել հայրենադարձական, առեւտրական կարեւոր երթուղիները՝ Նախիջեւան-Սիսիան-Շուշի-Պարտավ եւ Խուդափերինի կամրջով՝ Թավրիզ-Շուշի-Պարտավ: Երեխաներ, իմացեք, որ Բերդաձորի վրայով էր անցնում Անդրկովկասի ամենահին խճուղային ճանապարհներից մեկը, որը կապում էր Հնդկաստանը եւ Իրանը՝ Թիֆլիսի, Բաքվի եւ մյուս կողմից Երեւանի հետ: Իսկ հիմա քնեք, ուշ է:

Հաջորդ օրը մտավ դասարան, տեսավ կավիճն ու սրբիչը ուսուցչի սեղանին անփույթ ընկած: Շպրտած պարագաները փռվեցին դասարանով մեկ: Կարենն ու ուսուցչի փոքր քույր Անուշը դասարանի գերապատիվները, ամոթից կարմրած համարձակվեցին վեր կենալ ու հավաքել: Ուսուցիչը խստապահանջ էր, վայ նրան, ով Նյուտոնի, Արքիմեդի, Պասկալի օրենքները սերտած չլիներ: Երեխաները եւ վախենում, եւ սիրում էին նրան:

- Նյութի խտության բանաձեւը,- ուսուցչի հայացքից Անահիտը չվոթվեց, կարմրեց, կմկմաց: Ուսուցիչն աչքունքով ցույց տվեց պատից կախած պլակատը, որի վրա մանրակերտ ձեռագրով, կարծես տպագիր, բանաձեւերն էին գրված: Աշակերտուհին նայեց, հիշեց, կրկնեց, ու էլ երբեք չէր մոռանա:

Կարենը ձեռքը նստարանի տակ պահած աչքի պոչով նայեց ժամացույցին, դասագիրքը փակեց ու դրեց պայուսակի մեջ: Ինքներորդցիները հետեւեցին նրան: Դասի վերջին բոպեները հատկապես վատ ու միայակ սովորողների համար ուրախության պահեր էին: Ուսուցիչը ժպտաց, հասկացավ, որ դասին 10-15 բոպե է մնացել.

- Զեյթունի ու Սասունի մասին արդեն պատմել եմ, հիմա լսեք Մուսա լեռան հերոսամարտի մասին... Գերադասեցին կռվել ու մեռնել... Ու փրկվեցին...

Զանգը հնչել էր, բայց ոչ մեկը տեղից չէր շարժվում: Քանի որ վերջին ժամն էր, ուսուցիչն ավարտեց պատմությունը, հետո անցան ֆիզիկայի կաբինետ, որը հարուստ կահավորված էր եւ որտեղ հնարավոր էր ամեն փորձ անել: Հանեց ու կախեց Հայաստանի ու Ադրբեջանի քարտեզները: Պատմեց Ղարաբաղի պատմությունը՝ 1917-1923 թվականներին ու բռնակցվելը Ադրբեջանին:

Մի քանի օր անց ՊԱԿ-ի երկու աշխատող մտան դպրոցի տնօրենի աշխատասենյակը: Զրույցի կեսից Միքայել Մկրտչյանը բարձրացրեց ձայնը.

- Այստեղ ղեկավարը ես եմ, հակախորհրդային որեւէ քարոզի հա-

մար ինքս եմ պատասխանատու: Եվ մի մոռացեք, որ 40 տարվա կոմունիստ ու պրոպագանդիստ եմ եւ Ադրբեջանի պատմություն եմ դասավանդում: Այնպես որ, այլեւս ձեզ այստեղ չտեսնեմ:

Նույնիսկ հակառակորդները պատկառում էին Միքայելից, եւ անվտանգության մարմնի ներկայացուցիչները տեղի տվեցին.

- Ամուսնացրեք, ընկեր Մկրտչյան, գուցե խելքը գլուխը հավաքի...

- Իհարկե, իհարկե, լավ խորհուրդ է կամուսնացնեմ:

Երեկոյան սեղանի շուրջ համբերահատ ձեռքը սեղանին զարկեց.

- Վերջ տուր ազգայնական գաղափարներիդ:

Հայրը գիտեր, որ ամեն մի քարոզ ու արգելման փորձ անօգուտ է: Որդին հացը կիսատ թողեց ու լուռ անցավ իր սենյակը: Խորթ մայրը թեյի բաժակը ետեւից տարավ:

Ֆիզիկայի գործնական պարապմունքները արտակարգ հետաքրքիր էին անցնում: Ստենդ էին սարքել ու կախել կաբինետում. մի կողմում հետաքրքրաշարժ հարցերն էին, մյուսում՝ պատասխանները, բայց խառնաշփոթ ու շեղած: Էլեկտրական հոսանքի լարերով այնպես էին միացված, որ հարցը ընտրելու դեպքում լամպը վառվում էր ճիշտ պատասխանի վրա ու մնում աշակերտի հիշողության մեջ: Նաեւ ինքնաշեն գործիքներ, շոգեմեքենայի մոդել էին պատրաստում:

- Հրթիռ ենք պատրաստելու,- եւ ուսուցիչը գծագիրը միացրեց գրատախտակին:- Իսկ որպեսզի պատրաստեք ինքնաթիռի մոդել, հարկավոր է ունենաք գծագիր կարդալու ունակություն, գործիքներին գերազանց տիրապետում, համբերություն:

Կարենը, Անուշը, Յուրան, Հովիկը ուրախությունից վեր թռան:

Քիմիական նյութեր, ստվարաթղթեր, մետաղներ, լարեր, մանրաթիթեղներ փռվեցին սեղանին, ու մի ամբողջ ամիս երեխաները աշխատում էին, իսկ գյուղը հետաքրքրությամբ սպասում էր: Այդ տարիներին հիրականացվող կրթական բարեփոխումները, որով պահանջվում էր հեռուղականորեն զարգացնել երեխաների աշխատանքային ունակությունները, դպրոցում նախասիրած մասնագիտությունից ունակություններ ձեռք բերելը, աշխատանքային-մասնագիտական հակումները դրսեւորելու համար լավագույն արհեստանոցներ ու լաբորատորիաներ ստեղծելը, ոգեւորել էին ուսուցչին, եւ նա մեծ ուշադրություն էր դարձնում աշակերտների ստեղծագործաբար մտածելու եւ գործելու կարողունակության զարգացմանը:

Դպրոցի բակում մեծ բազմություն էր հավաքվել: Ուսուցչի «մեկնարկ» խոսքի վրա՝ հրթիռը ծուխ արձակելով օդ բարձրացավ: Հիացա-

կան ճիչեր, բացականչություններ,-փորձարկումը հաջող անցավ, իսկ նրանք, ովքեր չէին տեսել, խնդրեցին ու մեկ շաբաթ հետո փորձարկումը կրկնվեց:

Այն տարիներին գյուղական դպրոցի ուսուցիչներին բանակ չէին զորակոչում, բայց որպես «քաղաքական անբարեհույս», տղան հայտնվեց Չելյաբինսկի տանկային զորամասում, եւ երբ տանկիստի համազգեստով լուսանկարը քույրը տարավ դասարան, այն ձեռքից ձեռք անցավ. ուսուցիչն իրենց համար իդեալական, անհասանելի կերպար էր, որին հետագայում էլ պիտի ձգտեին նմանվել:

Արմոն գործուղվել էր Բերդաձոր՝ հինգ տարվա պայմանագրային ժամկետով, եւ հանքային ջրերի օժանդակ տնտեսության մասնաճյուղում վարորդ էր աշխատում: Տղան դպրոցում լավ էր սովորում, բայց ուշքն ու միտքը վարորդության, տեխնիկայի, էլեկտրականության, քանդել ու սարքելու կողմն էր: Չկարողացավ կոտրել մոր սիրտը, որ երազում էր չորրորդ երեխային էլ բարձրագույնավարտ տեսնել: Շուշիի մանկավարժական տեխնիկումի ֆիզկուլտուրայի բաժինը ավարտեց՝ հետագայում բարձրագույն ուսումնական հաստատությունում հեռակայելու մտադրությամբ: Չհամարձակվեց դուրս գալ հոր խոսքից՝ «որ բոլորը քաղաք գնան, էս գյուղը ո՞վ պիտի պահի», եւ 5 տարի մատյանը վերցրած դասարան էր մտնում-դուրս գալիս: Սիրահարվեց իր աշակերտուհուն ու մի անգամ տանը հացի սեղանի շուրջ ավագ եղբորն ասաց.

- Հերթդ տուր՝ ամուսնանում եմ:

Տնեցիները կարծում են՝ կատակ է անում:

Ի տարբերություն եղբոր սառը, կշռադատված, մի տեսակ՝ ծանր, ամեն ինչին չափած-ձեւած պահվածքին ու վերաբերմունքին, Արմոն թեթեւ էր մոտենում ամեն ինչին, բայց ոչ թեթեւամիտ: Կյանքում արված քայլերը ճիշտ էին, չէր սայթաքում, բայց սիրտը խոր հիասթափությունների, դառնությունների ու տվայտանքների չէր ենթարկում: Թե՝ ընտանեկան հարաբերություններում, թե՝ շրջապատում կարողանում էր ճկուն ու թեթեւասահ մանեւրել, հասնել իր նպատակին, առանց շատ մեծ ջանքեր գործադրելու: Խառնվածքով զգայուն է, մարդամոտ, մեծի հետ մեծ, փոքրի հետ փոքր, պատրաստ հացի վերջին պատառը կիսելու անծանոթի հետ՝ առանց վաղվա օրվա մտատանջության: Լավություն արա՝ ջուրը գցիր, Աստված լավությունը կհատուցի,- այս փիլիսոփայությամբ էր ապրում: Ավանդապաշտ էր, բայց՝ առանց տանջալից ալեկոծումների ու առանց ասկետիկ խստության: Հաջողության աստղը

կարծես միշտ ուղեկցում է նրան: Արտաքինով երկու եղբայրներն էլ հորն են քաշել՝ բարձրահասակ, թիկնեղ, արտակարգ հմայքով, ու դիմագծերով էլ իրար նման են: Մեկին ճանաչողը իսկույն կարող է կողմնորոշվել, որ եղբայրներ են: Սկզբունքների մեջ երեք Մկրտչյանները էլ անկոտրում են, աննահանջ, հազվադեպ բռնկվող, բայց զայրույթի պահին՝ ահեղ: Երեքն էլ տարբեր ձեւերով, բայց օժտված են ենթարկեցնելու մեծ շնորհքով: Գաղափարական ոլորտներով, հետաքրքրությունների մեծ շնորհքով: Գաղափարական ոլորտներով, հետաքրքրությունների գրեթե հակադիր են, հայրը՝ երդվյալ կոմունիստ, Առնոն՝ դաշնակ, Արմոն՝ թվացյալ անարխիստ, բայց ամենատարբեր ուղղություններից ու տեսանկյուններից գալիս ու վերջնակետում դավանանքով միահյուսվում, դառնում էին մեկ ամբողջություն՝ նվիրում օջախին, ընտանիքին, ծննդավայրին, հայրենիքին: Հանգամանքների բերումով ինչպես գյուղում շատ-շատերի, այնպես էլ Միքայել Մկրտչյանի ութ զավակներից ոչ մեկը ծննվադայրում արմատ չի ձգել: Միքայելն ապրում էր երկրորդ կնոջ՝ իրենից 20 տարով ջահել Էլլադայի հետ: Զավակներն ընտանիքներով հայրական տուն էին գալիս միայն առիթից առիթ, տոնական ու գերեզմանատեսի օրերին, այն էլ՝ շատ կարճ ժամանակով: Հետո, երբ ժամանակները փոխվեցին, առաջինը Առնոն գյուղ՝ եկավ, մի քանի ամիս հետո Արմոն գործուղվեց, Արտաշեսը եկավ, մեկ տարի անց Առնոն Հայաստանից Արթուրին էլ բերել տվեց, եւ հայրը չգիտեր, չորս տղաներին շուրջը տեսնելով ուրախանա՞, թե՞... Չէր արտահայտվում, բայց ներքուստ այնքան էլ գոհ չէր որդիների որոշումներից. հեռատես մարդ էր, հասկանում էր, որ էդ խմորը շատ ջուր է վերցնելու, որ առջեւում փոթորիկներ են լինելու, որ տղաները վտանգի բերան են եկել:

Արմոն գործից տուն եկավ ու իջավ առաջին հարկ.

- Էլի գրում ես, եղբայրս:

Արմոն տեղյակ էր, որ դեռ ուսանողական տարիներից Առնոն Մատենադարանում, օրերով, ամիսներով ուսումնասիրում, նյութեր էր հավաքում Բերդաձորի պատմության մասին, որպեսզի գիրք գրի:

- «Հայ Դատ» հանդեսին հոդված եմ գրել: Արդեն պատրաստ է: Տամ՝ կարդա: «...Բերդաձորի գյուղերում մարդիկ չեն էլ կարող հիշել, թե որերորդ պապի- ապուպապի-պապի պորտն է այստեղ կտրվել, իրենք հարզար, երկու, երեք հազարերորդ ճյուղն են, թե՝ ավելի վաղ... Բայց արմատի հիշողությունը անբեկանելի է... Բերդաձորցին ապրելով ապառաժների մեջ սեղմված ձորահովիտներում, ոչ միայն քարից հաց է քաղել, այլեւ սիրել գիր եւ գրականություն, գեղեցկության նկամամբ սերը նա մարմնավորել է ծաղկանախշ գորգերում, կարպետներում ու ճարտարապետական կառույցներում: Բերդաձորը հայտնի է եղել արհեստներով՝ բրուտագործություն, դարբնություն, սայլագործություն, հյուսնություն: Տարածում է ստացել աշուղությունը, լարախաղացությունը, որոնք տոհմիկ բնույթ ունեին: Ձորակը հարուստ է կրահանքերով եւ ավազահանքերով: Սա մի գարմանալի արգավանդ ու բերրի հատված է, ուր դաշտերը երբեք չեն խանձվում արեւից, աղբյուրները երբեք չեն չորանում: Բերդաձորցին հյուրասեր է, վիրավորվում է, եթե՝ իր հարկի տակ մտնողը հրաժարվում է հյուրասիրությունից: Նույնիսկ թոնրից մինչեւ տուն նոր թխած հաց տանող կանայք պատահածին առաջարկում են հաց վերցնել կամ հաց կտրել:

Թեկուզ աստիճանաբար սեղմվելով, մաղվելով Բերդաձորը պահպանել է իր էթնիկական մաքրությունը, բարքառը, հոգեբանական գծերը, սովորություններն ու ավանդույթները: Այս փոքրիկ հողակտորը տեսել է Մաշտոցին, Դավիթ Բեկին, Մխիթար Սպարապետին, Անդրանիկին... Ապաստանած ժայռերի գագաթներին արծվաբների հարեւանությամբ կառուցած բերդերին, կռվել ու հաղթել է, հաղթել ու հարատեւել է: «Ղարաղշլաղցիները հայտնի են իբրեւ շատ քաջ եւ արիասիրտ մարդիկ, տեղը եկավ՝ կռիվ էլ կսկսեն, անուն ունեն շրջակա՝ թուրք ազգաբնակչության մեջ եւ հենց այդ անունին հենած այդպես ցիրուցան տնակներ են շինել եւ ապրում են»,- գրել է պատմաբան Լեոն:

Բերդաձորի պատմական տարածքը ընդգրկում է ներկայիս Շուշիի, Լաչինի, Հադրութի, Ղուբաթլուի որոշակի հատվածներ: Որպես Արցախի հարավ-արեւմտյան գավառ, Բերդաձորը հսկայական ռազմավարական նշանակություն ունի, եւ դա հասկանալի է եղել եւ հասկանալի է օտար զավթիչներին: Բերդաձորը իրար կապելով Հայաստանի երկու աշխարհները՝ Արցախն ու Սյունիքը, միջնաբերդի դեր է կատարում երկուսի համար էլ: Այստեղով էր անցնում Վայոց ձոր-Սյունիք-Պարսկաստան ճանապարհը: 18-րդ դարի գավառից մնացել է այսօրվա խիստ կտրտված ու անմատչելի լեռնային մասը, որտեղ գոյատեւում են հայության փշրանքները...

Բերդաձորը, ինչպես եւ Արցախի շատ ու շատ գյուղեր, տասնամյակների ընթացքում քայքայվեցին բռնատիրական ժամանակների մեղքով: Մեծ Խերխան, Փոքր Խերխան, Դաշտահող, Ձորանգյուղ, Թեւանատուն բնակավայրերն այլեւս գյուղեր չեն: Արտագաղթ եւ հայաթափություն: Սկզբում «կուլակաթափություն», որ հանգեցրեց միլիոնավոր ազնիվ երկրագործների աքսորի, հետո կոլեկտիվացում, որ գյուղացուն դարձրեց օրավարձու բանվոր, հետո գյուղերի խոշորացման կուրս, որը բերեց թույլ տնտեսությունների ոչնչացում: Շուշիի շրջանի

ղեկավարությունը ամեն ինչ անում է, որ հայը լքի իր օջախը: Բավական է ասել, որ 1960թ. համեմատությամբ 6 գյուղերի բնակչությունը կրճատվել է 3 անգամ: 1960 թվականին Մեծ Շենում 500 մարդ է ապրել, այժմ՝ 180: Գյուղերը դատարկվում են, նախկին բնակիչները հայրենի օջախները հիշում են աշնանը, երբ հասնում է ընկույզի բերքի հավաքման ժամանակը: 1960թ. Հին Շեն գյուղում 850 մարդ էր ապրում, միջնակարգում՝ 450 աշակերտ: Մեզ հայտնի խորշակի ու հայաքանդ քաղաքականության հետեւանքով՝ այժմ գյուղն ունի 450 բնակիչ, 40 աշակերտ:

Բերդաձորի պայմաններում այսօր կոլխոզն ու սովխոզը անախրոնիզմ է: Ստեղծված իրավիճակից դուրս գալու միայն մի ելք կա. հողը, արտադրության միջոցները, անասունները անժամկետ վարձակալությամբ տալ գյուղացուն՝ գյուղերն ամրապնդելու, սոցիալ-տնտեսական զարգացման իրական հիմքեր ստեղծելու եւ բնակչության բարձր աճ ապահովելու համար:

Վերակառուցման ոգին ծնեց արցախյան շարժման այս անպարագիծ ընդգրկումը, որը մեզ արթնացրեց լեթարգիական քնից, կանխեց հայ ժողովրդի արցախյան հատվածի վրա կախված նախիջեւանյան ճակատագիրը...

Երեկ բարձրացել էի լեռները. իմ աչքերի առջեւ հզոր ու անընդգրկելի ներկայանում է Սարի-պապ լեռը՝ կոշտ, պարզ ու բարի, ինչպես ծորակը: Սարի պապը իմ մեջ ապրել է որպես ներշնչանք, որպես հարատեւություն, խորհրդանիշ: Ես նրան միշտ նայել եմ պատկառանքով, ինչպես սովորաբար նայում են մեծերին, մեծություններին ընդհանրապես:

Մտածում եմ, որ բերդաձորցու համար հայրենիքը սկսվում է Շահնաքարից: Սովորական ժայռ է՝ Ղարաբաղի բյուրավոր ժայռերի նման մուղդաձիգ կտրվածքով, սեւին տվող արծվաբներով, ճաք տված կողերով:

Քամին վայրի դաղձի բույր է բերում լեռներից: Բերդաձո՜ր... Հաց ու մրգի, անարատ օդի եւ գլգլան աղբյուրների ոսկե ծորակ, որ ապրել է վերելքի ու անկման, ավերումների ու վերակառուցումների տարիներ, ու պիտի շարունակվի հնամյա ու վաղնջական ծորակի տարեգրությունը՝ նրան բերելով նոր ճանաչում, փառք ու պատիվ:

Տարածքի վրա իշխում է Քիրս սրբազան լեռը, որ կանգնել է հպարտ ու արքայավայել...»:

Առնոն հողվածը մի կողմ դրեց : Արմոն անփութորեն բացեց սեղանի վրա դրված գիրքը, կարդաց մակագրությունը. «Ամդային. կանցնեն

օրեր, մոռացումի ավերումից փրկված բեկորներ կտեսնես ուսանողական կյանքից, դեպքեր ու դեմքեր անցած-գնացած, եւ այդ դեմքերի շարքում գուցեեւ նշմարես տողերիս հեղինակին՝ մի խելագար ռոմանտիկի, գունավոր երազներով սփոփվող, Մասիսի ցավով տառապող, Մեծ Սեր տենչացող՝ ահեղ ու անճար, մի բռունցքված բողոք

Առնո Արցախցի»:

Արմոն գիտեր եղբոր եւ ուսանողական ընկերուհու սիրո պատմությունը, հիշում է աղջկա հուսահատ զանգը Գորիսից՝ ինձ ամուսնացնում են: Հիշեց իր պատանեկան պոռթկումը՝ գնանք փախցնենք... Թվագրությունից՝ 18. 06. 1975թ., հասկացավ, որ գիրքը մակագրել ու թե ինչ պատճառով՝ չի ուղարկել:

- Առնո, արի շախմատ խաղանք:

Առնոն հավաքեց սեղանին փռված թղթերը, քարտեզները, թաքցրեց պատի գաղտնախորշում եւ դեմքին մի լայն ժպիտ խաղացնելով՝ բացեց խաղատախտակը:

... Առնոն դեռ դպրոցական տարիքից սիրում էր շախմատ խաղալ, Արմոն նման բաների սեր չուներ, իրենը սարերն էին, անտառը որսով լի, բայց եղբոր խաթրից դուրս չէր գալիս, խաղի էր նստում ու իրեն միշտ չարաճճի խարդախություններ էր թույլ տալիս: Առնոն հասկանալի է, նկատում էր եւ միշտ չէ, որ լռում էր:

- Փոխել ես ձիու տեղը:

- Չեմ փոխել:

- Փոխել ես:

- Իմ արեւ, չեմ փոխել,- սուտ երդվում է եղբայրը, ու չեն նկատում, որ վեճի ընթացքում բարձրացրել են ձայները:

- Ես քեզ հետ էլ չեմ խաղալու, վերջ:- Առնոն ասաց ու վերկացավ:

Արմոն, որ կռվազան էր, շախմատի տախտակը շրջեց, ու շրխկոցի վրա կից սենյակում ոտնաձայն լսելով ու հասկանալով, որ հորը համբերությունից հանել են, բացում է պատուհանը, ցատկում պարտեզ: Քանի որ իրեն մեղավոր չի զգում, Առնոն մնում է կանգնած, եւ դպրոցի ու բազմանդամ ընտանիքի գործերից հոգնած հոր, որ «ռազբորկի» ոչ ժամանակ, ոչ տրամադրություն ուներ, պատիժը՝ մի ապտակ, կրում է:

Եղբայրները շախմատը մի կողմ դրեցին, նստեցին սրահում ու տրվեցին հուշերի... Հիշեցին պապին՝ Խենք (Դալամա), Սահակին, որ ապրել է 97 տարի, եւ Անուշ տատի զնգացող սուրմաները:

Երբ փոքր էին, երկուսով գնում էին Ձիբրախաչ, ուր Միքայելը պահում էր մեղվափեթակները, եւ ուր բացի ծմռան ցուրտ ամիսներին ան-

տառի փայտից սարքած մի փոքրիկ հոլիկում մնում էր պապը: Սահակը փայտ էր կտրում, բարձում էշին, Առնոն ու Արմոն հերթով տանում էին: Արմոն փայտը գյուղ հասցրեց, հետդարձի ճամփին նստեց՝ շունչ քաշելու: Շատ էր հոգնած, մի քանի անգամ գնացել-եկել էր, ու քաղցը ինձնք եկավ վրան: Երբ ուշ հոլիկ հասավ, պապի ապտակը կերավ: Ինքը մոռացավ, իսկ երբ բանակ գնաց, Սահակը հիշում ու լաց էր լինում՝ ծեռքս կոտրվի, քյորփա էրեխուս ինչի խփեցի: Սահակ պապը պատմում էր հայ-թուրքական կռիվների ու ջարդի մասին, Առնոն ուշիմ լսում էր, իսկ Արմոյի ականջը՝ անտառի սվսվոցի ու աղվեսագայլերի հեծկլտոցի վրա էր: Սրտաճմլիկ մի պատմություն դաջվել էր եղբայրների հիշողության մեջ: Սահակը 1918-ի փախեփախի ժամանակ իրեն հանձնած բերդաձորցի մի ընտանիքի՝ մոր ու երեք երեխաների պիտի անցկացներ Զաբուղը: Հագարա գետը կտրել ու հենց ափ պետք է հասնեին, թուրքի «Մոսին»-ը ճարճատեց, ու ջուրը կարմրեց երեխաների՝ ջրի տակն անցնող մարմիններից: Առնոն լսում ու հարցեր չէր տալիս, գիտեր, պապը չի շարունակի, ամեն անգամ այս պատմությունը հիշելիս՝ իրեն կորցնում ու բայաթի էր ձգում՝ վա՜յ... դա՜-դե՜... վա՜յ... վա՜յ ... Առնոն ու Արմոն փաթաթվում էին Սահակի ոտքերին, կոշտ քաթանե շալվարին, եւ քունը վրա էր հասնում: Ի՜նչ երանություն էր...

Շախմատի քարերը մնացել էին շարված տախտակի վրա, եւ երկու եղբայրները նստել սրահում եւ հուշերի մեջ տարուբերվում էին: Գիշերն առաջացել էր, աղվեսագայլերը կլանչելուց հոգնած լռել էին, խորթ մայրը ուսուցչուհի էլադան, որ մի առանձին խանդաղատանքով ու ակնածանքով էր վերաբերվում Առնոյին, սրահում թողած թեյի անլվա սպասքը՝ անցել էր ամուսնու սենյակը, չէր ուզում իր մտնել-դուրս գալով եղբայրներին անհանգստացնել: Միքայելի խիստ ու խոժոռ, պատկառազդու բնույթից զավակներն ավելի էին ժառանգել, քան մոր Արփենիկի հեզ ու խոնարհ, հարմարվող ու մարդամոտ բնավորությունից, եւ էլլադան իրեն միշտ մի տեսակ քաշված էր պահում խորթ տղաների ու աղջիկների ներկայությամբ: Եղբայրներից նախավերջինը՝ Արտաշեսը, որ Առնոյի պահանջով էր գյուղ եկել, նույնպես գնացել էր քնելու: Առնոն 35 տարեկան էր, Արմոն՝ 33, Արտաշը՝ 19-20:

Արմոն լռությունը խախտեց.

- Առնո, մամայի համար չհասցրի վերարկու առնել...

Արփենիկը 4-5 տարեկան Արմոյի հետ եղցահող՝ հերանց տուն էր գնում, ոտքով հաղթահարում էին ճանապարհի վերուվարումները, Արմոն հիշում է ճանապարհի ցեխը, որի միջից զոռով էր քաշում-հանում ռետինե կոշիկները, եւ այն պահերը, երբ մայրը դժվար վերելքներին

չալակում էր իրեն: Հիշում է մոր հնամաշ ու տեղ-տեղ ծորված վերարկուն (հայրը դպրոցի տնօրենն էր, բայց ընտանիքը մեծ էր, չէր հասցնում) ու որ ասաց. մա, որ մեծանամ աշխատեմ՝ քեզ համար վերարկու եմ առնելու: Մայրն ասաց՝ «ջանիդ մատաղ լինեմ»: Հիշողությունից Արմոյի սիրտը մրմռաց ու ռունգերից բարձրացած կսկիծի ծխից աչքերը կրակալվեցին. ամուսնացավ, աշխատանքի անցավ, բայց դժվար էին ապրում, չհասցրեց խոստացած նվերը առնել:

Սրահից, որտեղ նստել էին եղբայրները, չքնաղ տեսարան էր բացվում: Միքայելը նոր տունը հետաքրքիր տեղ էր սարքել, դպրոցին էլ էր մոտիկ, նաեւ ծորի բերանին էր, ու տան դիմաց՝ սրահից ու պատուհաններից երեւում էր Թումասեռի անտառապատ լանջը՝ հսկա կաղնիներով ու բոխիներով, հոնի ու զկեռի ծառերով, վայրի տանձենիներով ու խոլի խնձորենիներով, եւ աշնանը լուսնի լույսի տակ թվում է, թե լանջին դեղնակարմիր հրդեհ է բռնկվել, իսկ ծորի միջից սկսվում են ընկուզենիները, տեղ-տեղ արմատները բաց, կորացած ու խրված ծորի փոսի խիճավազ-տիղմի մեջ: Ընկույզը թափվում էր ծորի մեջ, բարձրությունից խիճ ու քարին քսվելուց կեղեւահան էր լինում: Անտառի մոտ ծորը իրենց այգու շարունակությունն էր, ուր սահելով իջնում էին ու հավաքած ընկույզը համեմատում, թե ով է ավելի շատ հավաքել, որ արժանանա Արփենիկի «ջանիդ մատաղ լինեմ» գորովանքին ու հոր խստադեմ հայացքին ու զսպված վերաբերմունքին, որ երեխաները հանկարծ չզգան հոգու խորքում խոր անթեղած սերը եւ որ հանկարծ նրես չառնեն:

Տան այգու միջից երեւում է Թինդիլանց տափի մի հատվածը միայն: Տափում դեռեւս մնում են ավերված գետնափոր խրճիթների հետքերը, որտեղ բնակվում էին Թինդիլանք մեծ գերդաստանով, յոթ եղբայրներով: Տափը, որ վերջանում է, սկսվում է ծորը, աղբյուրը, որ բխում է ժայռից, որ խենթ Սահակը նկատել է, քերծը մի քիչ քանդելով՝ գուռ սարքել, ու անունը մնացել է Խենթի աղբյուր: Սահակը եւ եղբայրները մեղու էին պահում, կոթերի՝ կողովների մեջ, որ հյուսում էին մատղաշ տխիլի ճիպոտներից: Կոթի երկարությունը՝ մեկ մետր կամ 80 սմ էր, լայնությունը՝ 25-30 սմ: Կողովները պահում էին ծածկի՝ սրահի տակ, եւ մեղուները մեղրահաց էին սարքում: Շրջանաձեւ կտրում, մեղրահացերը հանում էին, եւ դա ամենաարդար մեղրն էր:

Կեսգիշերն անց էր, ու լիալուսնի լույսի տակ նշմարվում էր Թումասեռի լեռնակների թրաձեւ երկարած գագաթնագիծը, երբ եղբայրները գնացին քնելու:

1989 թվականին հունիսի 19-ին Անդրանիկ Հարությունյանը համախոհներով Գորիսից Կոռնիձորով փորձում է մտնել Բերդաձոր: Առաջին փորձը ձախողվում է: Երկրորդ փորձը՝3 օր հետո էր: Երեւանից գանգել եւ տեղեկացրել էին, որ ջոկատ է գալիս: Առաջապահ երկու հոգի, Գորիսից ու տեղանքին ծանոթ, կարողանում են անվտանգ, անփորձանք հասնել Հին Շեն, հայտնել, որ խմբին թողել են անտառի մեջ, ադրբեջանական Հունանավ (Օնանավ) գյուղի մոտ:

- Ուղղությունը պիտի փոխել: Ձեր եկած ճանապարհով ջոկատը չի կարող ապահով տեղ հասնել: Դուք երկու հոգով եք եկել, հեշտ անցել եք,- սովխոզի տնօրեն Գրիշա Սարգսյանը կանչում է մեխանիզատոր Եփրեմին, ուղարկում տեղանքը հետախուզելու:

Շիգեցեք տափում Գրիշան Առնոյի, հաշվապահ Գառնիկի ու իր տեղակալ Շամոյի, գյուղի տարեցներից՝ Մուխանի, Իսայի, Պավլուշայի, Մեծ Շենից Սաֆարյան Էդիկի հետ, դիմավորում են ջոկատին: Շամոն մասնագիտության բերումով մտքում անմիջապես հաշվեց 7 հոգի, լավ թիվ է՝ մտածեց: Մեկի ուսին կարաբին կար, հասկացավ, որ դա խմբի ղեկավարն է, մյուսները զինված էին որսորդական հրացաններով: Առաջապահի ուսին «Մոսին» հրացան կար, հետո անունը իմացան, Աշոտն էր.

- Մենք հաց ենք բերել:- Ըստ պայմանավորվածության, Անդրանիկն ասում է ողջույնի առաջին խոսքը՝ ազդածածկաբառը: Նրբահասակ էր, բարձր՝ ոչ հաղթանդամ: Դեմքի ազնվականական դալկության վրա աչքերն արտակարգ արտահայտիչ ու փայլուն էին, հայացքը՝ մաքուր, ուժ ու հավատ էր ներշնչում:

Ծանոթանում են.

- Անդրանիկ:
- Զոհրապ:
- Գնել:
- Զարգանդ:
- ...
- ...

Եկած խմբին բաժանեցին տներին, ըստ ազգանունների: Անդրանիկը հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ է նշանակվում Մեծ Շենի դպրոցում:

Երեւան, Օպերայի հրապարակ:

- Դա - րա - բաղ:- Գոչում են ցուցարարները:

Կարմիր պաստառների վրա սումգայիթյան ցեղասպանությունը դատապարտող եւ այլ կարգախոսներ են: Հայաստանի սահմանամերձ շրջաններում անհանգիստ վիճակ է: «Ղարաբաղ» կոմիտեից մեկը ցուցակագրում է, թե ովքեր են ցանկանում մեկնել Գորիս, Իջեւան, Մեղրի, Եղեգնաձոր, Արցախ...

- Սրանք ցույց են անում, «Ղարաբաղ» են գոռում, ազերին իր սեւ գործը անում է,- ասաց «Հայէլեկտրո» գործարանի բանվոր Յարամակյան Սարգիսը՝ Սաքոն, որ ընկերների՝ Խեչոյի ու Հովիկի հետ ամեն օր ցույցի է գալիս:

- Ցույցերով հող վերադարձնե՞լ կլինի...
- Էն էլ էն հարուստ ու բերրի հողերը:- Արձագանքեց Խեչոն:
- Դու ի՞նչ գիտես, Ղարաբաղում չես եղել,- ասաց Հովիկը:
- Չենք եղել, կլինենք: Ասում են՝ Անդրանիկ անունով մեկը ընկերներին վերցրել-գնացել է:

Մի քանի օր հետո ով ինչ ուներ՝ դանակ-մանակ, ծխախոտ, վերցրեցին ու Յարամակյան Սարգիսն ու Հովհաննիսյան Խաչատուրը ծորակին օգնություն բերող ուղղաթիռից իջան Հին Շենի Վերին Խութի «օդանավակայանում»: Տղաների մտքներովն չէր էլ անցնում, որ այնպես կկապվեն այս հողուջրին, որ ջոկատները հերթով կգան ու կգնան, իրենք մշտապես կմնան:

Առնոն սեղանի վրա՝ փռել էր Բերդաձորի քարտեզը: Անդրանիկ Հարությունյանը թեքվել եւ ուշադիր լսում էր:

Բերդաձոր գավառի հարավային սահմանը տարածվում էր մինչեւ Զինգիանակապ գետը, որ Հակարիի ձախակողմյան ամենամեծ վտակն է, որից այն կողմ տարածվում է Պարզկանք գավառը, արեւմտյան կողմից սահմանակից է Սյունիքին (Հակարի-Աղավնո գետով), հյուսիսային եւ հյուսիս-արեւմտյան կողմից՝ Հարճլանք գավառին, սահման ունենալով Հակարիի Հազարագետ վտակը, արեւելյան կողմից սահմանակցվում է ներկայիս Ղարաբաղյան լեռնաշղթային (Դիզափայտ եւ Քիրս լեռներով), եւ այս սահմանների մեջ Բերդաձորի տարածքը կազմում էր մոտավորապես 450 քառ. կմ: Հիմա Բերդաձորի ենթաշրջանի տարածքը այս փոքրիկ կտորն է: Սա Հին Շենն է: 6-7կմ հեռավորության վրա գտնվում է Մեծ Շենը, որ տարիներ առաջ եղել է ծորակի կենտրոնը: Այստեղ շրջակա գյուղերից գալիս էին միջնակարգ դպրոցում սովորելու: Սա Եղցահողն է: Դիրքը բարձրլեռնային է, նախկինում 100-120 ընտանիք էր ապրում, 250 բնակիչով: Վարելահողեր քիչ ունի, հիմնական զբաղմունքը՝ անասնապահություն, ոչխարաբուծություն, մեղվաբուծություն: Եղցահողից 10կմ հեռավորության վրա Կանաչ Թալան է, որ

100 բնակիչ ուներ: Վարելահող չունի, տարածքը զբաղեցնում են խոտհարքերն ու անտառները, հիմնական զբաղմունքը անասնապահությունն է: Ադրբեջանի հայահալած քաղաքականության հետեւանքով ենթաշրջանի գյուղերը քայքայվել են, սկզբում հեռագնա աշխատանք, հետո ընտանիքով տեղափոխվում են Բաքու, Երեւան, Ռուսաստան: Կանաչ Թալայում այժմ ապրում է ընդամենը չորս ընտանիք: Տասը Վերստ գյուղը գտնվում է Լաչին-Շուշի հենց խճուղու վրա, 50-60-ականներին 60-70 բնակիչ ուներ: Այստեղ արդեն երեխա չի ծնվում: Ամբողջ ծորակի բնակչությունը հինգ գյուղերը՝ Հին Շեն, Մեծ Շեն, Եղցահող, Տասվերստ, Կանաչ Թալա, միավորված են մեկ սովխոզի մեջ եւ ունեն 600-650 բնակչություն: Այս փոքրիկ գյուղախումբը շրջափակված է ադրբեջանական 21 գյուղերով, որոնք խորհրդայնացումից առաջ եղել են հայկական. Հունանավ-Օնանավ, Աղվանո-Աղանուս կամ Յղրոնես, Մալիխալաֆ, Մեղրաձոր-Մղդարա, Սաֆիյան, Խաչգյադուկ, Տըկըհաներ, Հին Շեն-Մուսուլմանլար, Լիսագոր, Սեյիդտար (Խրմանլար)...

Ձորակի Մեյդան, Վարդոտ կոչվող տարածքներում հայտնաբերվել են շատ հին բնակատեղիներ, հնադարյան կարասներ 150-200 լիտր տարողությամբ, եղել է կղմինդրի գործարան, որտեղ պատրաստվել են կավե ամանեղեն, կավե խողովակներ, որոնցով ջուրը Համձասարի հարավային ստորոտի Շլորունց աղբյուրից 3 կմ հեռավորության վրա տարել են Եղցուն Գլուխ Մեյդան բնակավայրը:

-Գյուղախմբի պաշտպանությունը խիստ կազմակերպված բնույթ պետք է կրի, քանի որ կարող է այնպիսի իրավիճակ ստեղծվել, որ ոչ Հայաստանից, ոչ Ստեփանակերտից չկարողանան օգնության գալ: Հույսներս մեզ վրա պիտի դնենք:

- Հասկանալի է:- Այսպես սկսվեց Անդրանիկի եւ Առնոյի ծանոթությունը, եւ երկուսն էլ հասկացան, որ իրենք են պատասխանատու լինելու ձորակի պաշտպանության համար, եւ որ երկուսի համագործակցությունից կախված է լինելու Բերդաձորի ճակատագիրը:

Անդրանիկի ջոկատը իր հետ բերել էր եռագույն դրոշը, որի մասին գյուղում պատկերացում չունեին:

- Տղերք, հենց մութն ընկնի՝ եկեք, կարեւոր գործ կա,- ասաց Առնոն:

Սահակյան Արմիկը, Հակոբյան Ջավենը, Խաչատրյան Էդիկը, Ասրյան Արկադին, Վիտալիկը, Կարենը, Վանյան, Նորիկը, Սամվելը, Լեւոնը, էլի տղաներ հավաքվում են շտաբում: Առնոն բացատրում է Հայաստանի առաջին հանրապետության դրոշի ստեղծման պատմությունը: Հետո 11-12 տարեկան ուշիմ ու գաղտնապահ մի տղա՝ Մոսին մթության մեջ

ոտաբոբիկորեն եւ անաղմուկ դրոշն ամրացնում է: Ամբողջ գիշեր չքնեցին, ոգեւորված էին, տրամադրությունները՝ հեղափոխական. մեծ գործ են անում, մեծ գործի վրա են:

Մարդիկ առավոտյան արթնացան ու տեսան շտաբի առաջ գտնվող հսկա ընկուզենու գագաթին ու սովխոզի գրասենյակի դիմաց 8-9 մետր բարձրության երկաթե ծողի վրա ծածանվում է եռագույնը, իսկ տղաները իրր անտեղյակ նստել էին թմբի վրա:

Սիլոսի ու սենաժի ժամանակներն էին, եւ Շուշիի ավտոբազայից մեքենաներ են գալիս խոտը հավաքելու:

- Մենք էս դրոշի տակ չենք աշխատելու,- գործադուլ արեցին ազերի վարորդները: Գյուղի ղեկավարության համար տհաճ կացություն ստեղծվեց, քանի որ տնտեսական ինտեգրումը դեռ Շուշիի հետ էր:

- Ա խոխեբ, բանտ եք գնալու, գնացեք իջեցրեք,- պահանջեցին կոմունիստները:

Առնոյին կանչեցին գրասենյակ: Համոզվեց իջեցնել տալ, քանի որ չի ուզում դեպքերից առաջ անցնել...

Կեսօրին Առնոն Սաքոյի հետ գնաց շրջագայության, ուզում էր տեղանքին ծանոթացնել: Սաքոն զմայլված, անբառ վայելում էր արթնացող սարերի ու անտառների խոյանքը: Առնոն ինչ-որ բան էր ուզում բացատրել, բայց նա՝ ձեռքի շարժումով ընդհատեց եւ քաղաքաբնակի յտեսությամբ ու ագահությամբ կլանում էր լեռների ու ձորերի անձեռակերտ հրաշքը: Առնոն մի քիչ հեռացավ, գրպանից թուղթ՝ ու գրիչ հանեց ու նշումներ էր անում: Սաքոն սարից վազելով իջավ, պառկեց կակաչներից կարմրած դաշտում, տաքացած հողին, կակաչների ու հողի բույրից հարբած, երանության մեջ ընկավ՝ մոռացած եւ հակամարտությունն, եւ շարժում:

- Սաքո՜... Սաքո՜...

Սաքոն կարծես երազի մեջ՝ եւ լսում էր, եւ չէր լսում:

Մեկ էլ Առնոն կանգնեց գլխավերեւը, ու երկուսը լուռ՝ հազվագյուտ երանության ու զմայլանքի պահեր ապրեցին:

- Առնո, մինչեւ չհաղթենք, ես էս ձորակից չեմ գնալու:

Կոշկակար Սերժիկը ներս հրավիրեց գյուղից եկած քրոջ տղային, ու իջան գետնահարկ:

- Բերդաձորը ռազմավարական նշանակություն ունի:- Ծանոթանալուց հետո ասաց Առնոն:- Իսկ դու եղե՞լ ես Բերդաձորում:

- Չեմ եղել,- անհարմար զգալով ասաց Սահակյան Վրույրը, որ ներ-

կայացնում էր «Ամարաս» բարեգործական կազմակերպության քաղաքային վարչությունը:

- Ուրեմն, տես:- Ու քարտեզը փռեց սեղանին:

- Բերդածորը միջնատարածք է: Աշխարհագրական դիրքը մի կողմից խիստ բարենպաստ է անառիկ, մտնելը դժվար, մյուս կողմից խոցելի, քանի որ շրջապատված է: Շուշին ցանկացած պահի կարող է փակել Ստեփանակերտի հետ կապող միակ ճանապարհը, Լաչինն էլ մյուս կողմից, ու մենք կհայտնվենք պաշարման մեջ:

- Սա ի՞նչ քարտեզ է:

- Ես եմ գծել: Շրջել եմ Լաչինի բոլոր բնակավայրերով: Այնտեղ ամբողջովին մահմեդականացված գյուղեր կան, որոնք հայերեն չգիտեն, բայց հիշում են իրենց հայկական ծագումը, պատմում են, որ իրենց նախապապը, նախատատը հայեր են եղել, հիշում են նրանց հայկական անունները: Նրանք պահպանել են ավանդույթները, օրինակ, գերեզմանի, տապանաքարի ձևերը:- Հանեց ու մի ուրիշ քարտեզ փռեց: - Սա Բերդածորի գավառի պատմական հուշարձանների քարտեզն է, շրջել եմ՝ չափագրել վանքերն ու եկեղեցիները:

- Հո շա՞տ չեմ հեռանում օրվա խնդիրներից,- Առնոն զգաց, որ տարվել է ծորակի պատմությամբ:

- Ոչ: Ոչ: Ի՞նչ եք ասում: Հաճույքով լսում եմ: Ինձ համար շատ հետաքրքիր է, մանավանդ որ կրթությունս ռուսական է, եւ քիչ բան գիտեմ հայոց պատմությունից:

-Արցախի պատմությունը նույնիսկ հայկական դպրոցներում չեն անցել: Լսի՛ր, Վրույր, Բերդածորը նման չէ հայկական գյուղերին՝ տները մի տեսակ սեղմված, իրար կպած, այն փռված է բարձր բլուրների վրա իրարից հեռու թաղերով՝ հպարտ ու ինքնավստահ: Բնակիչները լեռների նման պարզ ու քաջ են, որի շնորհիվ պահպանել են իրենց գոյությունը ապահով պահելով Գորիս-Շուշի խճուղին: Ես գրառումներ ունեմ 1905-1906թթ. սեպտեմբերից-փետրվար ազերիների հարձակումների ու Բերդածորի պաշտպանության մասին: Չորս անգամ հարձակվել են ու պարտվել մեծ զոհեր տալով: Հայերը առաջ գնալով մտել ու ավերել են Քյարահուզ եւ Հունանավ գյուղերը: Չորակը չկարողացան ներս խուժել, բայց Շուշի - Զարսլու ճանապարհին գաղտագողի շատ հայ սպանեցին: Մինչեւ հիմա հարեւան ադրբեջանական գյուղերը հիշում են այդ պատմությունները, մի տեսակ վախով ու պատկառանքով են նայում մեր բարձունքներին, բայց խորհրդային 70 տարիները մեզ խեղճացրել են. շրջկենտրոնը Շուշին էր, ղեկավարությունը, ոստիկանությունը, օրենքը իրենցն էր, գնալով քչացանք՝ ուժը պակասեց, հոգեբանությամբ երկչոտ դարձանք: Ազերին թալանում, անասուն է տանում, մերոնք՝ ասում են՝ ոչինչ: Մի տեսակ ստրկամիտ ու հնազանդ են դարձել:

- Պայքարի հանելը, հավանաբար, դժվար է լինելու,- ասաց Վրույրը:

- Միանգամից հնարավոր չէ կոտրել վախի հոգեբանությունը, միտքը հեղաշրջել, բայց այդ ուղղությամբ աշխատում ենք: Հայաստանից եկած տղաների ներկայությունը բավականին մեծ հույս է ներշնչել եւ ոգեւորված են:

Համոզիչ խոսք ունի, խոր վերլուծական միտք, գիտելիքների անսպառ պաշար, մտածեց Վրույրը: Նրան զարմացրեց զրուցակցի իմացությունը, տեղյակությունը ոչ միայն պատմական փաստերի եւ իրադարձությունների, այլեւ ցանկացած բնագավառից, ցանկացած թեմայի շուրջ: Խոսում է փաստերով ու ապացույցներով, խոր տրամաբանված:

- Շատ տարվեցինք անցյալով: Գանք այսօրվա խնդիրներին:- Ասաց Առնոն:

- Ղարաբաղի հարցը առանց զինված պայքարի չի լուծվի,- ասաց Վրույրը:

- Ես վաղուց եմ այդ մտքին:

Զրուցակիցը չհասկացավ, թե դա ինչ վաղուց է, հարցնելու ժամանակ էլ չկար, կարեւորն այն էր, որ նրանց կարծիքները քաղաքական-գաղափարական հարցերում մոտենում էին իրար ու ստեղծում շփման ու փոխըմբռնման եզրեր:

Առնոն նորից անդրադարձավ քարտեզին.

- Նայիր, եթե հարձակվեն, իսկ դա անխուսափելի է լինելու, Ստեփանակերտից չեն կարողանալու օգնության հասնել, ուրեմն մենք պետք է ամուր պաշտպանություն ստեղծենք: Իսկ դրա համար պետք է ստեղծել կառույց, որ հստակ գործի եւ իր վրա վերցնի ծորակի տնտեսական, քաղաքական, ռազմական գործառույթները: 1918 թվականին նման մի բան եղել է, կոչվել է Բերդածորի ինքնապաշտպանության խորհուրդ, բայց շատ կարճ կյանք է ունեցել: Ունեցել է բջիջ, որ կազմված է եղել յոթ հոգուց:

- Առնո, դու արդեն պատկերացնում ես, թե գործը ոնց կազմակերպես: «Ամարասի» մասնաճյուղեր էլ կարելի է ստեղծել գյուղերում: Բարեգործական գործունեություն կծավալվի, թե ինչ, ոնց՝ ժամանակը կույց կտա:

Վերջում, երբ սկսեցին խոսել զենք հայթայթելու մասին, զրուցակիցները ջանում էին ինչքան հնարավոր է քիչ անուններ եւ քիչ տեղեկություններ տալ. դա էր պահանջում ընդհատակյա ինների չգրված օրեն-

քը: Երբ Առնոն ու Վրույրը իրար ձեռք սեղմեցին, կոշկակարը հասկացավ, որ առաջին հանդիպումից երկուսի միջեւ ծնվել է համակրանք եւ վստահություն:

Մայիսի 2-ն էր, եւ ինչպես միշտ, գնացել են Արփենիկի գերեզմանին տեսության: Միքայելը մռայլ տրամադրության մեջ էր, եւ գուցե մենության էր ձգտում, երբ Առնոյին հանձնարարեց Էլլադայի հետ իջնեն բանջարանոցները՝ գործ կար անելու: Առնոն նման աշխատանքների հետ գլուխ չուներ, բայց չէր էլ կարող հորը մերժել:

Աշխատանքները վերջացրած, իջան ձորը աղբյուրից ջուր խմելու: Նույն կածանով ազերին իջնում է՝ իբր երգելով, բայց արանքում հայհոյանքներ է տալիս հայերի հասցեին, բացահայտ դավագրգռում է: Կանգնեց աղբյուրի գլխավերեւը.

- Սալա՜մ, մուալիմ...

Առնոն չպատասխանեց: Առանց գլուխը բարձրացնելու ջրի հետ կուլ տվեց ծաղրը: Իրար ճանաչում են, հարեւան Աղանուս գյուղի Քերիմն է: Առնոն լավ գիտեր թուրքի բնույթը՝ կեղծավոր ու հաճոյամոլ, հայհոյեց, բայց եւ բարեւեց, որ սողանցք թողնի բարեկամության համար, ով գիտի, դեպքերն ինչպես շուռ կգան...

Ուսուցիչը ձորն ի վեր բարձրանում էր, եւ ամեն քայլի հետ «սալամ, մուալիմը» հոգին քրքրում է, որ ծաղրը եւ հայհոյանքը անպատասխան թողեց: Եթե Էլլադան իր հետ չլիներ...

Առնոյի համար հեշտ չէր այդ նվաստացումը կուլ տալը: Ուրեմն՝ ազերին արդեն ձորակում իրեն տեր ու տիրակալ էր զգում: Ավելի՛ն: Խորթ մայրը զգում էր տղայի հոգու փոթորիկը ու մինչեւ տուն ոչ մի բառ չփոխանակեցին: Երեկոյան կամացուկ ծեծեց տղայի սենյակի դուռը, սուրճի բաժակը դրեց սեղանին ու լուռ դուրս եկավ: Իսկ երբ առավոտյան թեյ տարավ, տեսավ հարդարված մահճակալը, հասկացավ, որ չի քնել. սենյակում թափթփված էլեկտրական լարեր, լամպեր, տարբեր գործիքներ, իսկ տղայի դեմքին անքնության ոչ մի հետք չկար: Առնոն խաղաղվել էր, աչքերն էլ արտակարգ գոհունակ փայլ էին ստացել: Մայրը ոչինչ չհարցրեց. Առնոն չէր սիրում, որ իր գործերին խառնվում էին:

Առաջին ամիսներին, երբ Էլլադան ոտք էր դրել այդ ընտանիքը, Առնոյի սենյակից գրքերը տեղափոխել ու դասավորել էր իր ճաշակով: Տղան մի տեսակ էր դարձել, մայրացուն էլ չէր համարձակվում պատճառը հարցնել:

- Առնոյին ի՞նչ է պատահել, Նորիկ, գուցե իմանաս:- Հարցրել է տան փոքրին՝ Առնոյի դպրոցական եղբորը:

- Գրքերին ձեռք ես տվել:- Բարեհաճ ու ժպիտով բացատրել է տղան:

Էլլադան միջադեպը սուսուփուս հարթեց:

Իսկ Միքայելը կին բերեց, երբ դեռ Արփենիկի տարին չէր լրացել, ինչպես սովորաբար ընդունված է սպասել, մինչեւ... Պինդ, ամրակազմ, ուժեղ տղամարդ էր, տնտեսություն ուներ, տանը՝ դպրոցական երեխա եւ 16 տարեկան տղա կային, այսինքն, ինքն էլ հետները՝ երեք... տղամարդ: Ինքնիշխան, ուժեղ ու վճռական, նա չէր կարող որեւէ մեկից, թեկուզ իր հարազատներից կարծիք հարցնել կամ հասարակական կարծիքի հետ հաշվի նստել, նա իր բարոյականությամբ ու իր ազնիվ ատաղձով շատ բարձր էր հասարակական կարծիք կոչվածից ու կրողներից, ու տարիքն առած, շեկ մազերով ուսուցչուհու դիմադրության թույլ փորձերը, թե կարելի է սպասել, մինչեւ ժամանակը ինչ-որ չափով ցավը մեղմի, անուշադրության մատնվեցին: Տունը կնոջ ձեռքի կարիք էր զգում, որպեսզի շարունակվեր Մկրտչյանների կարգուկանոնը: Իսկ աղջիկները մինչեւ վերջ այդպես էլ հոգեբանորեն չկարողացան հաշտվել ոչ թե այդ կնոջ, այլ երեւույթի հետ, իհարկե, ներքուստ, բայց արտաքուստ բարձրաձայն եւ առերես չէին կարող ոչ քննարկել կատարվածը, ոչ նույնիսկ վերաբերմունք ցույց տալ, տուն բերված կինն էլ մտքի եւ հոգու այն բարձրությունն ուներ, որ հասկացավ ու իր հոգու խորքում խեղդում էր կանացի ինքնասիրության ու հպարտության ինչ-ինչ դրսեւորումներ: Խորթ մոր համար դժվար հաղթահարելիին դպրոցականի արցունքներն էին, որ բռնացնում էր լացելիս՝ դասերից հետո մի անկյունում կուչ եկած... Չհասկանալն էր դնում, դերասանություն անում, ցրում տղայի տրամադրությունը ու վերջում՝ ցածր, կիսաձայն, շշնջոցով, ներքին խռովքով ու տագնապով հարցնում՝ ես տնից գնա՞մ, Նորիկ, ու տղան միայն բացասաբար շարժում էր գլուխը: Տան տղամարդիկ՝ Նորիկը, Արտաշը եւ ընտանիքավորված երեք որդիները իրողության հետ ավելի հաշտ էին, գուցե տղամարդկային բնազդով, որ հավելվում էր ստացած դաստիարակությանը, բայց ավելի շատ երեւի ցեղի Մկրտչյանների ուժեղ եւ ազնիվ արյան պարտադրանքով: Չամուսնացած, տարիքն առաջացած կնոջ համար հեշտ չէր հարմարվել այդ մեծ ընտանիքին, որի յուրաքանչյուր անդամ՝ մեծից մինչեւ փոքր ինքնուրույն, իրարից խիստ տարբեր, սկզբնական շրջանում իր համար անհասկանալի աշխարհներ էին: Երբեմն էլ մտքով անցկացնում էր, որ սխալվել է՝ իր ազատ կյանքը կապելով ծանր բնավորությամբ այդ մարդու հետ, որի չափից դուրս խստությանը երբեմն չէր դիմանում: Մի անգամ հերթական կոշտ ու կոպիտ վերաբերմունքից ազդված՝ համարձակվեց ըմբոստանալ, կբաժանվեմ՝ ասաց, արժանանալով Միքայելի

խիստ հանդիմանությանը. «Կարծում ես այդքան հե՞շտ...»: Կինը հարմարվեց տան դրվածքին, հաստատված կարգուկանոնին: Հարգեց եւ գնահատեց նրանց Մկրտչյաններին, բոլորին անխտիր: Եվ ամենաշատը գնահատեց նրան, ում չէր տեսել, ում չէր ճանաչում, այն անծանոթ կնոջը, ում տեղը եկել-զբաղեցրել էր: Իսկ Միքայելին ճանաչում էր, նույն շրջանի մանկավարժներ էին: Պարթեւահասակ, առնական, գեղեցիկ, գյուղական ուսուցչին ոչ միշտ հատուկ արտակարգ կիրթ հոգով, բազմակողմանի զարգացած մտավորականին չնկատել հնարավոր չէր: Մանկավարժական խորհրդի նիստերում զարմանում էր նրա ելույթներից ու հանպատրաստից զեկուցումներից: Ընտանիքում Միքայելը իր անձնական օրինակով, խստությամբ, իր գործունեությամբ զավակներին սովորեցրել է ինչպես ապրել, աշխատասեր լինել, ազնիվ, օջախին, երկրին նվիրված: Արփենիկը սպիտակամաշկ, շեկ, գանգուր մազերով գեղեցկուհի էր, նրբասիրտ, հոգեկան բացառիկ հարստությամբ օժտված, արտակարգ բարի ու համեստ, ռոմանտիկ խառնվածքով: Գրադարանավարուհի էր աշխատում, գիրք ու բանաստեղծություն էր սիրում, եւ երեխաներին էլ սիրել էր տալիս: Արփենիկի մասին Էլլադան լսել է հարեւաններից, բարեկամներից, գյուղացիներից, իսկ ընտանիքում դա եղել է սուրբ ու փակ թեմա, ամեն մեկը յուրովի ու լուռ կրել է այդ մեծ կորուստը, ցավը: Առնոն ծնողների երկու խառնվածքների լավագույն խտացումն էր, տան աչքը...

Էլլադան չհարցրեց, թե ինչու գիշերը անքուն է մնացել, բայց իմացավ մի քանի օր հետո, երբ...

Շիգեցեք տափում ազերիների վրաններն էին խփված, ամեն ընտանիքում 8-10 երեխա, որ Հին Շենի միջնակարգն էին հաճախում: Երեխաները այնքան էին շատացել, որ արդեն առանձին դպրոց ունենալու պահանջ էր ներկայացված: Առնոն դասերից հետո վերցրեց տասներորդցի աշակերտներից մեկին Զորիկին եւ մութն ընկնելուն պես գնացին անտառ: Վարշաբանց կոչվող տափում, ծառերը հատած բացատում, երեսանց մի առու քաշեցին եւ վառոդ շաղ տվեցին:

- Այստեղ սպասում ես, հենց որ լուսարձակիչ լապտերի լույսը մեր պատշգամբից ուղղեմ առվի վրա, վառում ես ու շուտ հեռանում,- հանձնարարեց Զորիկին:

Մթության մեջ վառոդը վառվում է, կրակը շարժվում է, լուսարձակիչն էլ մթության մեջ պայծառացնում է կրակը: Այս գեղեցիկ տեսարանը Շիգեցեք թաղից լավ երեւում է:

Առավոտյան ազերիները բեռները բարձած ճանապարհ են ընկնում: Նախագահը ձեւականորեն կտրում է դեմները.

Ի՞նչ է պատահել: Ձեզ ո՞վ է նեղացրել...

Ոչ ոք: Հայաստանից լազերային զենք եք ստացել, տեսել ենք, վերջը կոիվ է լինելու:

Էսօր ոչխարս են գողացել, վաղը կինս կգողանան, գնում ենք,- վրա բերեց մեկ ուրիշը:

Նախագահը գիտեր նրանց սովորությունը. իրենք գողեր են, բայց եթե հայը իրենցից ապրանք է գողանում, լքում են բնակավայրը...

Ենոք Հովսեփյանը մտավ Շուշիի ավտոբազա, իր ամենօրյա աշխատանքի տեղը:

- Սալամ: - Մեքենայից իջավ ու բարեւեց:

Ոչ ոք բարեւը չառավ: Զարմացավ, չիմացավ անելիքը, նստեց մայրին, ծխախոտ կպցրեց: Ավտոբազայի վարորդներից մի քանիսը մոտեցան:

- Ստեփանակերտի հրապարակում հավաքված էն ի՞նչ եք ուզում:

- Չգիտեմ, ես գյուղից եմ գալիս, - խուսանավեց Ենոքը:

- Ղարաբաղը մերն է, իզուր եք հայասըզություն անում: Դուք եկվորներ եք: - Ազերին դավագրգռում է, զրույցի քաշում:

- Ես անգրագետ մարդ եմ, գործ չունեմ պատմության հետ:

- Դուք ինչ պատմություն ունեք որ... - Ձեռք չեն քաշում:

Ձեռքը տարավ, թե որտեղից ածուխի մի կտոր վերցրեց տվեց ազերիի ձեռքը:

- Գրիր՝ Շուշի:

Ազերին չհասկանալով, թե խոսքը դեպի ուր է տանում, գրեց:

- Դե հիմա՝ կողքին ռուսերեն գրիր՝ Շուշի:

Ազերին նույն տառերով գրեց:

Ածուխը ձեռքից վերցրեց, կողքին հայերեն ընդծված, մեծ-մեծ տառերով գրեց՝ Շուշի:

- Սա մե՛ր պատմությունն է, նա ձեր պատմությունն է,- ասաց հպարտ-հպարտ:

- Դուք աղվաններ եք,-բանավեճը շարունակում է գործընկերը:

Ենոքը բառը առաջին անգամն էր լսում ու լավ չհասկանալով՝ խոսքը հետ տվեց.

- Մոնղոլը դուք եք: Թե մոնղոլ էլ ենք, մեր սեփական տառերն ունենք:

- Սա դաշնակ է,- ասաց խմբից մեկը:

- Դաշնակը դու ես,- Ենոքի համբերությունը սպառվել էր, ձեռքը տարավ դեպի կողքին դրած մետաղածողը:

Ավտոբազայի տնօրեն Փահման Սադըխովը, որ Ստեփանակերտում հայերի հետ շատ էր աշխատել, նկատելով, որ վեճի վերջը ուրիշ բան է ստացվելու, մոտեցավ .

- Մեքենադ քշիր, դուրս եք, եւ խորհուրդ կտամ վաղվանից էլ գործի չգաս: Ախմախ, չե՞ս տեսնում շուրջդ ինչ է կատարվում:

Ենոքը նստեց մեքենան, եւ չսպասելով, որ դռները բացեն, քշեց ուղիղ եւ դարպասը պոկելով անցավ: Եկավ ուղիղ Ստեփանակերտ, հրապարակ, տեսնելու թե շուրջը ինչ է կատարվում: Ամբոխի մեջ դես ու դեն շրջելով, նկատեց Կամոյին, մոտեցավ:

- Դաշնակը ո՞վ է:

Կամոն զարմացավ հարցի վրա, բայց նրան հասկանալի ձեւով բացատրեց.

- Դաշնակը ծառայել է հայ ազգին, որ հայի ազգանունը միշտ մնա:

Հաջորդ օրը Ենոքը իր սեփական «Նիվա» մեքենայով եկավ գյուղ, ներկայացավ Առնոյին:

- Էսօրվանից ես էլ եմ դաշնակ,- ու երկուսով լիաթոք ծիծաղեցին:

Փետրվարի 19-ին ընդունած որոշումից հետո Բերդաձորի հաղորդակցության եւ տրանսպորտային կապը դրսի աշխարհի հետ դժվարացավ: Շուշիից անջատեցին էլեկտրական հոսանքը: Մի ամիս գյուղը անցկացրեց մթության մեջ, մինչեւ Առնոն Հայաստանից էլեկտրական շարժիչ բերել տվեց, եւ լույս ունեցան: Պետրոսյան Բենիկը մի ռադիոընդունիչ ուներ, դրեցին խանութի շենքի առաջին հարկում գտնվող գրասենյակի առջեւ, խանութի տակ գտնվող մի փոքրիկ մարզադահլիճում, ուր երեկոյան հավ-ճիվ, անասուն տեղավորելուց հետո հավաքվում-լսում էին «Ամերիկայի ձայն» ռադիոկայանը՝ իմանալու համար, թե իրենցից այդքան մոտ գտնվող մարզկենտրոնում եւ առհասարակ Ղարաբաղի տարածքում ինչ է կատարվում:

Իսկ ազերիները գալիս Քումենքարից, Սուրանից խփում էին, ու փամփուշտները հասնում-ընկնում էին մինչեւ դպրոցի բակը: Թե որտեղից էր Առնոն տագնապ հնչեցնող սարք գտել, գյուղի մեջ մի հին դարբնոցում տեղավորել, տղաները չիմացան, միայն երբ ազերիները գալիս բարձունքներից կրակում էին, Զավենը, որ դարբնոցի հարեւանությամբ էր ապրում, վազում՝ միացնում է սարքը: Այնպիսի մի զիլ ձայն էր արձագանքվում ձորում, որ կրակողները վախեցած փախչում էին:

Երբ Կարեն Բարսեղյանը մատյանը վերցրեց 10-րդ դասարան մտնելու, Առնոն հետեւեց նրան: Կանչեցին նաեւ ինքներորդցիներին:

- Գնդակը վախկոտին է գտնում, չէ՞, Հակոբյան: - Զորիկը, շիկավուն մազերով, կարմրավուն երեսը նկատվելուց էլ ավելի շիկնած, ոտքի թռավ.

- Ճիշտ այդպես, ուսուցի՛չ:

- Մահն ոչ իմացյալ՝ մահ է, մահն իմացյալ՝ անմահություն: Ով որ չգիտե, թե ինչ է մահը, շարունակիր, Զորիկ:- Տղան էլ ավելի կաս-կարմիր կտրեց՝ աչքերը առաստաղին հառեց՝ իբր ուզում է հիշել տողերը ու ոչինչ չհիշեց:

- «Ով որ չգիտե, թե ինչ է մահը՝ վախենում է մահից, իսկ ով գիտե մահը, նրանից չի վախենում: Իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք,- վերկացավ ու անգիր ասաց դասարանի գերազանցիկ աշակերտուհին: Մահը գերադասեցեք, քան թե վախկոտ կյանքը»:

- Դուք պետք է ե՛ւ լավ սովորեք, ե՛ւ դասերից հետո օգնեք մեզ, ձեր ծնողներին, գյուղին: Դժվար ժամանակներ են գալու: Դուք պետք է պատրաստ լինեք...

- Պատրաստ կլինենք, ուսուցի՛չ,- Զորիկի պատրաստակամ ոտքի թռչելու վրա՝ դասարանը փոթկաց, ուսուցիչները եւս ժպտացին: Դասարանում երեք սերունդ էին, ու երեքն էլ իրար հասկացան՝ Առնոն, իր նախկին աշակերտը՝ իրեն փոխարինած ֆիզիկայի ուսուցիչ Կարեն Բարսեղյանը, Զորիկն ու տղաները: Մինչեւ դասարան մտնելը Առնոն հավաքել էր նաեւ ուսուցիչներին ու ասել, որ ինչպես գյուղի բոլոր տղամարդիկ, այդ թվում եւ ուսուցիչները, պետք է մասնակցեն գյուղի պաշտպանությանը, բայց, իհարկե, դրանից ուսումնակրթական գործընթացը չպիտի տուժի:

Օրեցօր ազերիները ավելի ու ավելի լկտի են դառնում, գալիս ընդհուպ մոտենում էին գյուղին, հասնում անտառի ծայրը, որ տներից ընդամենը մի քանի մետրի վրա է գտնվում, ու կրակում: Պահակակետերի շրջանագիծը, որ անմիջականորեն միայն բնակավայրն էր ընդգրկում, Առնոն որոշեց ընդլայնել:

Հավաքվել են շտաբում: Առնոն փռեց գյուղի տարածքի քարտեզը, որի վրա նշված են պահակակետերը.

- Թումասեռ, Շիգեցեք, ֆերմաները, Գերեզմանոտ, Զորավոր ծառ,Պահակաքար կամ Զարդինքար, Քումենքար, Սուրան, Մեծ հայրենականի հուշարձան կամ Խութ, Վերին Խութի տափարակ, որտեղ «օդանավակայանն» է եւ որը գտնվում է Գայլի Բերանի հարեւանությամբ, նույն հարթության վրա,- սրանք ամենահարմար դիրքերն են: -

1915-20-ական թվականներին ես մեր պապերը գյուղը պաշտպանել են հենց այս դիրքերից:- Բացատրում է Առնոն:-1915-ին Սուրանում պաշտպանական մեծ կռիվներ են եղել, թուրքերի հարձակումը հետ է մղվել: Մեր օրվա խնդիրը պաշտպանությունն է...

- Առնո, Լեւոնի 5 տղաները Ստեփանակերտում իրենց քեֆին, իսկ մենք, պատահում է, 24 ժամ եւ ավելի պոստ ենք կանգնում, փոխարինող չկա- ասաց հաշվապահի օգնական էդիկը:

- Պարտադրելը սխալ է, քանի որ սրանք կամավորական ջոկատներ են: Զոռով չի լինի, իրենք-իրենք կամավոր պիտի գան: Մենք մեզ այնպես պիտի պահենք, որ ուզենան գալ: Ուրիշ բան էլ կա, ավելի լավ է քիչ լինենք, բայց կազմակերպված, համախմբված, կես խոսքից իրար հասկացող, քան...

- Բայց մինչեւ ե՞րբ պիտի 10 հոգի մի որսորդականով կանգնենք:- Հարցրեց Արմիկը:

- Մարդիկ մտածում են: Զենք ունենալու ենք: Զենք էլ կլինի, հայկական կանոնավոր ազգային բանակ էլ կլինի, հեռու չէ էդ օրը: Հայ զինվորը իր երդումն է ունենալու, իր հատուկ համազգեստը: Հայաստանը անկախություն է ձեռք բերելու...

- Ումի՞ց, Մոսկվայից անկա՞խ...

- Այո: Ազատ ու անկախ պետություն ենք ստեղծելու: Եվ էդ պետությունը պիտի լինի հարուստ եւ ուժեղ:

- Ի՞... Էս քարերի մեջ՝ ի՞նչ հարստություն...

- Ինտելեկտը ամենամեծ հարստությունն է, մենք հին ու քաղաքակիրթ ազգ ենք, բայց մեր մտավոր ներուժը ուրիշներն են օգտագործել...

- Սփյուռքը կօգնի՞ մեզ:

- Իհարկե, կօգնի: Ռուսաստանն էլ կօգնի: Պատմությունը ցույց է տվել, որ նա էս տարածքում շահեր ունի, չի թողնի որ Ղարաբաղը թուրքի ոտքի տակ ոչնչանա...

- Դե ասա, մահմեդական աշխարհի ու Ռուսաստանի միջեւ էլեկտրական ապահովիչ ենք էլի, մեկ էլ տեսար՝ վառվեցինք...

- Չվառվելու համար ուժեղ պիտի լինենք: Տկարը մեղավոր է, որ տկար է:

- Առնո, ուզում եմ քո գինվորը լինել,- էդիկի վերջին արտահայտությունը եւ անսպասելի էր, եւ միաժամանակ բխում էր զրույցի ներքին տրամաբանությունից ու գաղափարական զարգացումներից:

- Բայց դու արդեն գինվոր ես, առաջիններից մեկը գյուղ եկար ու պահակության ես կանգնում:

- Ճիշտ է, կանգնում եմ,- իրենը պնդեց տարիքով 40-ին մոտ մարդը,- բայց դա քիչ է, ուզում եմ անդամագրվել ջոկատում:

- Պայմանները դժվար են, սննդի մատակարարումը առայժմ բավարար չէ, կարող է օրերով ստիպված լինես դժվարություններ քաշել: Հետո էլ ամենակարեւորը՝ սպանվել կա, վիրավորվել կա: Անձդ պիտի մոռանաս, իսկ դու պատրա՞ստ ես...

- Պատրաստ եմ:

- Իսկ ծնողնե՞րդ,- Առնոն գիտեր, որ որոշ ընտանիքներում այդ հարցի առթիվ տարաձայնություններ են ծագել:

- Ծնողս գործ չունի, ես հայրենիքիս եմ ծառայում:

- Դրանով դու հենց քո ընտանիքին, քեզ, քո ծնողին, քո օջախին ես ծառայում:

Պահակակետերում հիմնականում կանգնում էին երիտասարդները եւ մինչեւ 35-40 տարեկանները: Զենք բռնելու ընդունակ տղամարդկանց քանակը քիչ էր, տարածքը՝ մեծ: Գյուղացիների մի մասն էլ հասվեհաս վտանգին անտեղյակ, անտարբեր, ավելորդ էին համարում ու խուսափում էին պահակություն անելուց: Առնոն մի օր կանչեց վստահելի մի քանի տղաների, բացատրեց մտածած փոքրիկ խորամանկությունը:

...Գյուղը կալմեջ անող՝ դեմ-դիմաց գտնվող Աշուղեն եւ Սոփուն կալերից, գիշերը ժամը 11-ին, երբ դեռ մարդիկ քնած չեն լինում, տղաները սկսում են կրակել օդի մեջ:

- Տեսեք, հա՜, փամփուշտը խնայելով...- Հրահանգել էր Առնոն:

Զավենն ու էդիկը, նախնական պայմանավորվածության համաձայն, սկսում են վազել գյուղի փողոցներով ու գոռալ.

- Բռնեցե՞ք, թուրքը, թուրքը փախավ... Բռնեցե՞ք...

Շտաբից հայաստանցի տղաները անտեղյակ պամանավորվածությանը, հրացանները վերցրած դուրս են վազում... թուրքին բռնելու: Մարդիկ տներից դուրս են թափվում, որը ձեռքին՝ դանակ, որը՝ եղանով, որը՝ բահով, կանայք՝ ում ձեռքը ինչ ընկել էր՝ թոնրի ծհանով, ծողերով ու մահակներով... Ու բոլորը վազում են: Վազող ամբոխին «առաջնորդում են» Զավենն ու էդիկը: Գյուղից դուրս, խաղողի այգիների մոտ տղաները կանգնում են, ամբոխն էլ՝ հետները:

- Տեսա՞ք, ոնց փախավ ձեռքներիցս, ա՜յ թե հասնեինք...

- Ափսո՞ս... Մի երկու քայլ շուտ հասնեինք... - ընկերոջը լրացնում է Էդիկը:

- Հետ դառեք, ժողովուրդ, առաջ գնալը իմաստ չունի:

Սահակյան Աշոտը, միջին տարիքի տղամարդ, որ ամբոխի հետ վազում էր Նոր Հաճնի կարաբինը բռնած, ձեռքը ձգանին, բայց չէր կրակում, քանի դեռ չէր տեսել թշնամուն, հետճանապարհին բարկացած ու բորբոքված ասաց.

- Շան թուլեք, որ թշնամուն չեք տեսել, որ թուրք բռնել չգիտեք, ինչի եք հավայի ղալմաղալ գցել, փամփուշտներ ծախսել, ափսոս է, չէ՞...

Ճիշտ է, մի քանի փամփուշտ ծախսվեց, բայց Առնոյի սիրտը հպարտությամբ լցվեց տեսնելով, թե համագյուղացիներն ինչպես են վտանգին դեմ-հանդիման գնում:

Իսկ ամբողջ գիշեր գյուղը չքնեց, այս ու այնտեղ ժողովված քննարկում են, պատմում, ուռճացնում, դրվագներ ավելացնում, պատկերացնում, պարծենում... Իսկ հետագայում, երբ քեֆը տեղն էր լինում, Առնոն հիշեցնում էր դեպքը, ու տղաները լիաթոք ծիծաղում էին:

Ստեփանակերտում Սերժիկը բազմոցը մի կողմ քաշեց, հատակի վրա բացած անցքով ելարանով իջան ցած.

- Երեկ պարետատնից եկան խուզարկեցին: Ոչ մի բան չգտան:

- Ուրեմն կասկածներ ունեն, զգույշ եղիր:

Սերժիկը ձեռքը թափ տվեց:

- Տղաները լավ գործ են անում:

Նախորդ այցի ժամանակ Առնոն այստեղ տեսել է Սարգսյան Աշոտին, Ղուլյան Աշոտին (հետագայում Բեկոր), Գրիգորյան Սեւակին:

- Ձորակում դրությունը ինչպե՞ս է:

- Լարված: Փամփուշտների մեծ կարիք ունենք:

- Մի արկղ 30 նռնակով ուղարկել եմ, տե՞ղ է հասել: Ցորնի պարկերի մեջ էի դրել:

- Արդեն բաժանված է:

- 350...- Սերժիկը հաշվեց փամփուշտները եւ փակեց արկղերը:

- Քիչ է: Աշխարհագրական դիրքը հաշվի առեք, մենք շրջափակման մեջ ենք: Կռիվը որ սկսեցին, թիկունք չունենք:

- Լավ, 500, մորաքրոջ տղա,- զիջեց Սերժիկը, ապա ավելացրեց 20 հատ հրթիռային փամփուշտ, պայթուցիկ խողովակներ (ջահեր) 5 հատ:

- Վառում ես ու շարտում չի հանգչում:

Առնոյի աչքերը փայլեցին:

- Է՞լ ինչ ունես:

Սերժիկը ամոնալի փաթեթներ տվեց.

- Սրանով կարող ես ճանապարհ կամ կամուրջ պայթեցնել: Ձեր բաժինը միշտ կրկնակի ենք տալիս: Բայց դուք ուրիշ աղբյուր էլ ունեք,- նկատի ուներ Գորիսի ճանապարհը: Առնոն խոսքը ականջի հետեւ գցեց եւ իր գոհունակությունը հայտնեց:

1989 թվականն էր, եւ անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակի տակ կալանքի են ենթարկվում Հարությունյան Անդրանիկը, Պետրոսյան Հրաչիկը:

Գալստյան ժաննան Յողոնեսի ու Մուսուլմանլարի արանքում դաշտի մեջ դուրս է գալիս նրանց դեմը.

- Մեր տղաներին ո՞ւր եք տանում:

- Լաչին,- չոր կտրեցին:

- Ինչո՞ւ ձեր տանկերի վրա քաղաքացիական հագուստով մարդիկ կան,- գոռաց ժաննան:

- Ուղեկցում են:

- Ձեզ ուղեկից պետք չէ: Դուք պարզապես ծառայում եք էդ սրիկաներին: - Քաղաքացիական հագուստով մարդիկ ազերիներ էին:- Ես կհայտնեմ ձեր պետին...

Գեղեցիկ արտաքինը , հագուստի ոճը սեւ կաշվե կիսաշրջազգեստ, կաշվե բաճկոնակ, երկարաճիտ կոշիկներ, անկախ ու անվախ, համարձակ պահվածքը ծայրահեղ իրադրությունների մեջ միշտ փրկում էին եւ կնոջը, եւ իրադրությունը:

ժաննան մեքենայով սլանում է քաղաք, ուր մարզային ներքին գործերի վարչության շենքի առաջ ժողովուրդը ցույց էր անում պահանջելով ազատ արձակել կալանվածներին:

Ամբոխը փորձում է մոտենալ շենքին, շդթա կապած զինվորները երկուական քայլերով հետ-հետ են քշում: Մութ էր, ու մարդիկ ամբոխի մեջ վառվող ջահեր էին բռնել ձեռքներին: Ամբոխի միջից այրված խանձակոթեր են շպրտում զինվորների վրա, որոնք խփելու պատրաստ պահում էին դագանակները: Պահը ծայրահեղ լարված ու պայթյունավտանգ էր:

Եվս մի քիչ, եւ ամբոխը կդառնար անկառավարելի: Ինչպես փրկել դրությունը,- ժաննան վայրկենապես գտավ ելքը: Քաղաքի հայտնի խելապակաս Զազոն, բարի ու անվնաս մի աղջնակ, աթոռի մի ոտնակ պոկել դագանակի ձեւով կախել էր կողքից ու միամիտ-միամիտ քայլում էր զինվորների ու ամբոխի միջեւ բացված միջանցքով:

- Տիկին կոմսուհի... Տիկին կոմսուհի...

- Հինչ ա՞...- հանպատրաստից ստեղծված խաղի մեջ մտավ աղջնակը:

- Հրամայեք, թող ձեր զինվորները երկու քայլ հետ գնան, խաղաղ բնակչությանը չահաբեկեն:

Ամբոխը հռհռում է: Զինվորները վահանակները բարձրացրել, ծածկել են դեմքները, որ ծիծաղները չնկատվեն:

- Ասում եմ է՛, չեն լսում,- ծուռումուռ քայլում ու միամիտ-միամիտ ժպտում է Զագոն:

Երկու կողմի գրգռվածությունը տեղի տվեց: Ժաննան մտածեց մտնել «Ամարաս» բարեգործական, գուցե տղաները ինչ-որ տեղեկություն իմանային: Բայց այստեղ մարդ չկար, եւ նա նորից քայլում է դեպի ոստիկանության մարզային վարչության շենքը:

Ամայություն է: Փողոցում մարդ չկա, գիշերվա ժամը 12-ն է: Մի շաբաթ է մտավ փողոցի ծայրից: Առջեւից գնացող ԲՏՐ-ը կանգնեց, հետեւից եկող տանկը եւս:

- Չե՞ք ասի, թե որտեղ է ոստիկանության քաղաքային բաժինը: - Կանչեց ԲՏՐ-ի կամրջակի վրա կանգնած սպան:

- Ոչ միայն կասեմ, այլեւ կտանեմ ձեզ: Վերցրեք ինձ,- կինը մատը կծեց, հասկացավ, որ այստեղ ինչ-որ բան կա: Նրա մաքուր ռուսերենը միշտ մոգական ազդեցություն է թողնում, վստահություն է ներշնչում: Սպան ձեռքը մեկնում է, Ժաննան հայտնվում է կամրջակին:

- Էս որտեղի՞ց, տղաներ:

- Լաչինից:

- Թույլ կտա՞ք երգել...

- Իհարկե, - ուրախացան զինվորները:

Ներքին մի յոթերորդ զգայարանով Ժաննան կասկածեց, որ զրահամեքենայի մեջ տղաներն են, ու երգում է բարձր, շատ բարձր.

- Տղաներ... Մենք ձեզ հետ ենք... Իմացած եղեք, որ ոչինչ չեն հայտնաբերել, ապացույցներ չունեն...Պիտի ասեք, որ պարզապես վախից փախել եք անտառ...

Ոստիկանության քաղաքային բաժնի շենքի առաջ Ժաննան ցատկում է կամրջակից ամբոխի ապշած հայացքի տակ: Զրահապատի ներսում տղաները ոգեւորված են: Նրանց իջեցնում ու տանում են խցերը:

Ռուս սպան, որի հետ դաշտում խոսել էր, աչքերը զարմանքից լայնացած նայում է Ժաննային.

- Դուք քիչ առաջ Բերդաձորում էիք, ինձ հետ խոսեցիք, ես չհասկացա՝ երկնքի՞ց իջաք...

- Ես այնտեղ չեմ եղել, ինձ երազում եք տեսել...

- Մի՞թե...

Մեկը կնոջը քաշեց ամբոխի մեջ.

- Պետք չէ աչքերին շատ երեւալ:

Երեք օրից հետո ապացույցներ չունենալով տղաներին ազատ են արձակում:

Աշնան սկիզբ էր, արեւը դեռ տաք, Ալվարդը բակում բուրդ էր լվանում, երբ Առնոն բակի դուռը բացեց: Զահել կինը չկարողացավ թաքցնել եւ զարմանքը, եւ ուրախությունը: Ձեռքերը սրբեց ու վերկացավ, արեւի տակ փռած շորից ընկույզ ու տխիլ լցրեց սկուտեղի վրա ու ներս մտան: Երկար ժամանակով ամուսինը բացակայել էր, եւ կարոտն ու սպասումը շատ էին լցված կնոջ հոգում, բայց ինքն էլ չիմացավ, թե ինչու գորգի ծայրը բարձրացրեց՝ ցույց տալով պատի բորբոսը:

- Ե՞րբ ես տան մասին մտածելու: Էս գետնահարկում մինչեւ ե՞րբ պիտի ապրենք,- գետնահարկը Ալվարդի հոր տունն էր:

- Իմ տունը Բերդաձորում է լինելու, Ալվարդ: Հետո էլ, դրա ժամանակը չէ, հյուրեր ունենք, Հայաստանից ու Բերդաձորից են:

Անդրանիկը, Գեւորգը, Սաքոն ու Խեչոն, Սեյրանը տուն մտան: Մոռացած կարոտ ու սպասում կինը իրար խառնվեց: Մինչ տղաները զրուցում էին, Ալվարդը տան եղած չեղածից սեղան սարքեց, քաշված ու ամաչելով, որ պայմանները այդ են, ապրուստը այդ է: Աները՝ Վաղոն ներս մտավ, թթի օդու շիշը ձեռքին, ընդհատեց տղաների զրույցը.

- Հերիք է, հացի ժամանակ է:

Տանտիրոջ հյուրասիրության ավանդական կենացից հետո Անդրանիկը բաժակը ձեռքն առավ, խմեց գործի, նպատակի կենացը, որին իրենք կոչված են, խմեց Ղարաբաղի, Հայաստանի, Միացումի կենացները, որ նոր ժամանակներ են եկել, որ կյանքը փոխվելու է, որ լավ են ապրելու...

- Երեխեքս էլ տուն կունենան... - Ներս ու դուրս անող, սեղանի շուրջ պակաս-պռատը լրացնող զոքանչն իրեն թույլ տվեց ակնարկել ցավոտ հարցը:

- Տունը լինելու բան է, մայրիկ: Մենք թագավորություն ենք ստեղծում, թագավոր ենք ունենալու, աղջիկդ էլ թագուհի է լինելու...- ասաց Դավթյան Սեյրանը:- Ալվարդ, գալո՞ւ ես, չէ՞, գյուղ:

- Իհարկե, գալու է,- ասաց Առնոն:

- Չգիտեմ, ես քաղաքի կյանքին եմ սովոր, ինձ համար դժվար կլինի: Երեխաներն էլ շատ են փոքր...

- Իմ կինն էլ է քաղաքի կյանքին սովոր, բայց երեխաները վերցրել նկել է,- ասաց Հարությունյան Գագոն:

- Կգամ: Որտեղ՝ Առնոն, էնտեղ էլ՝ ես:

Երեխաների կենացի վրա Առնոն բաժակ բարձրացրեց.

- Յոթ աղջիկ եմ ունենալու, հետո յոթ տղա: Կկոչեմ հայոց հին ու նոր աստվածների անուններով:

- Հա, գիտեմ, հենց միայն էդ անունների համար տունդ կլցնես, իսկ թե հետո ... - Ալվարդը խեթեց ու անմիջապես լեզուն ատամների տակ քաշեց:

Երբ դուրս էին գալիս, կինը մոտեցավ ամուսնուն.

- 22-ին գալու ես, չէ՞: - Հոկտեմբերի 22-ը Աստղիկի ծննդյան օրն է:

- Որ կարողանամ, Ալվարդ: - Առնոն կնոջ կիտած հոնքերը անուշադրության մատնեց:

Մի շաբաթ հետո Արտաշը, Մարինեն, Սլավիկը, Անուշավանը ներս լցվեցին:

- Իսկ Առնո՞ն ... - Հարցրեց կինը:

- Նորից Գորիս է գնացել, գենքի հետեւից: Զանգել է ասել, որ նույն օրը, ծնված ժամին հիշել ու խմել է Աստղիկի կենացը...

- Լավ է, որ գոնե հիշել է:

Հյուր եկածները ժամանակ չտվեցին, որ կինը տխրի, ուրախությամբ լցրին սենյակը, Ալվարդն էլ առաստիուս ենթարկվեց:

ԿԱՐԿԱՌՆԵՐ

Շահը փառավոր հաղթանակների տանելով եկել-կանգնել է լեռնոտ տարածքի ամենաբարձր գագաթին՝ նայել անդունդներով, կիրճերով ու ձորերով կտրտված տեղանքին, նկատել է անդունդների վրա կախված ժայռափոր անձավները, որտեղից ծուխ էր ելնում, զարմանքից քար է կտրել ու մտածմունքի մեջ է ընկել:

Ձորը մտնելը հեշտ է, բայց այնտեղից թե ինչպես պիտի դուրս գա,- չարը մտորում է, դառն ափսոսանքով մի հայացք է ձգում ձորին ու բարձրաձայն ասում է.

- Բու գալա գոյ օլսուն: (Այսինքն՝ ձորը թող մնա) (Գալան նշանակում է մնացող ձոր՝ դարա):

Շահը քաշվել-գնացել, վրան է խփել Մուղանի դաշտում, ու ձորը մնացել է չասպատակված:

Մեծ Շենից վերեւ՝ բարձունքը հիմա էլ կոչվում է Շահնաքար (Շահեն բար), իսկ ձորակը օտարները կոչել են Գալադարասի (Կալադարասի): Այս եղելությունը թե ավանդությունը ֆիզիկայի ուսուցիչ Առնո Մկրտչյանը ճանապարհին պատմել է աշակերտներին, երբ նրանց էքսկուրսիա է տարել լեռները: Ուսուցիչը պարանը ամրացրել ու կախել է բարձունքից, իջել ձորը, մտել անձավները, տեսել թոնրի հետքերը, որտեղ նախնիները կրակ են վառել, տեսել քարայրի հատակին խփած երկաթը, որի մեջ անցք է արված, որից հավանաբար պարան ամրացրել ու նյութուտ են արել նախնիները: Վիլենի, Կամոյի, Ձորիկի, Ձավենի, Էդիկի հիշողության մեջ բառառբառ դաջվել են ուսուցչի պատմածները:

Շահնաքարից 500մ ցած՝ նույն լեռան վրա հին, շատ հին մատուռ կա, Պանդալեոն բժշկի մատուռը, որը ժողովրդը անվանել է Պարին Պիժ: Սուրբ վայր է, ուխտատեղի, եւ ըստ ավանդության, հիվանդություններ է բուժում, շնորհքներ է տալիս: Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսը, որ Արցախի առաջին եպիսկոպոսն է եղել, Պանդալեոնի (քրիստոնեության համար Նիկոմեդիայում նահատակված առաջին քարոզիչներից մեկն է) նշխարները բերել է Արցախ, տարածել նահանգում: Այստեղ կա նաեւ եկեղեցի, որը կառուցվել է 17-րդ դարում: Ուսուցիչը պատմել է մեկ այլ ավանդություն եւս, որ կապված է Հայոց արեւելից կողմանց երկրում քրիստոնեության տարածման հետ. համաձարակ էր սկսվել, ու մարդիկ մահանում էին: Ելքը գտնվում է. մատուռ են կառուցում, աղոթում Աստծուն, մատուռի անունը մնում է բարի բժիշկ, այսինքն Պարին Պիժ:

Երեւանի օպերայի հրապարակում ցուցարարների մեջ են նաեւ հազարավոր հայաստանաբնակ բերդաձորցիներ, որոնք տարիներ առաջ լքել են ձորակը, Եղցահողը՝ Ստեփանակերտ, Հին Շենի մեծ մասը Բաքու, Մեծ Շենը՝ Հայաստան՝ Երեւան, Հրազդան, Բյուրեղավան, Արզնի... Կարապի լճի մոտ ոտի վրա մի կտոր հաց են ուտում:

- Երեկ զանգել եմ տուն, դրությունը վատ է... Ազերիներն ակտիվացել են...

- Դու որ էստեղ պիրաշկի ուտես, էնտեղ դրությունը վատ կլինի, էլի...

- Բա դո՞ւ ինչ ես ուտում, քա՞ռ...

- Ես որոշել եմ՝ գնալու եմ:

- Ի՞նչ ես կռիվս տալիս: Գուցե ես քեզնից շուտ եմ տեղ հասնելու...

- Ճառ ասելով, ցույցերով հարց չի լուծվի: Մենք էստեղ օպերայի շենքը շրջապատած՝ պահում ենք, մեր ծնողները էնտեղ ահ ու սարսափի մեջ են...

- Էստեղ շենքը պահող շատ կա, տղե՛րք, գնանք մեր գյուղերը...

- Բա աշխատա՞նք...

- Հողը կա, ֆերմաները կան, ջուր կքաշենք, գազ կքաշենք, դե, կգնանք, տեղում կորոշենք մեր անելիքը:

- Ընտանիքներով պիտի գնանք, ինչքան շատ, էնքան՝ լավ:

- Ասելով չի է՞, գո՛րծ, գո՛րծ...- Սաֆարյան Էդիկը հանեց ծոցատետրը եւ առաջին համարի տակ գրեց իր անուն, ազգանունը:

Ցուցակագրվում են. Հարությունյան Գեղամ, Հարությունյան Գագիկ, Գրիգորյան Հայասեր, Նասիբյան Հրաչիկ, Գրիգորյան Անուշավան, Բաբայան Սերգեյ, Բաբայան Կարեն, Մանգասարյան Արվիդ, Սաֆարյան Թաքուլ, Գրիգորյան Սլավիկ, Զաքարյան Վալերի, Շաքարյան Գագիկ, Հարությունյան Ռոմա... Ցուցակագրելու ժամանակ վերջին պահին երեք հոգի իրենց խոսքից ետ կանգնեցին:

Սա 1989-ի աշնանը ձորակի առաջին համալրումն էր: Երկրորդ շարժը դեպի Բերդաձոր 1990-ի սկզբին եղավ: Բարսեղյաններ Լենբերտ եւ Ալբերտ, Հովսեփյան Միքայել... Նոր հաճնից վերադառնում են նախկին կանաչքալացիներ Օլեգ եւ Զորիկ եղբայրները, եւս 5-6 ընտանիք: «Արմգազ»-ի պետ Թաքարյանն էլ իր խոսքի տերը եղավ, խորհրդային զորքերի ուղեկցությամբ տեխնիկան եւ երկաթեղենը ձորակ հասցրեց, իսկ երբ ճանապարհները փակվեցին, օդային ուղիով էր խողովակները ուղարկում. ուղղաթիռները վայրէջք էին կատարում Հին Շենի Ծովեն հարթում, Մեծ Շենի Բեշգունց Կալի տափարակում:

Երեւանից գյուղ եկած Շաքարյան Գագոն Մեծ Շենում բացեց ոսկերչական կետ, 15 աշխատատեղով: Այստեղ թանկարժեք քարեր էին

հղկում-սարքում: Վալերին ու Սվետան Երեւանից գերմանական հաստոցներ բերել տվեցին եւ երկու գյուղերում գործվածքեղենի արտադրամասեր բացեցին: Հին Շենում եւ Մեծ Շենում կարի արտադրամաս բացեցին, 20 բնակիչ աշխատանք ստացան: Հաջողությամբ լուծվում էր զբաղվածության խնդիրը: 1989-ին տովխոզը բաժանվեց կոլտնտեսությունների, նախագահներ նշանակվեցին Հին Շենում՝ Սարգսյան Գրիշան, Մեծ Շենում Սաֆարյան Էդիկը, Եղցահողում Հովակիմյան Հենրիխը: Արյուն ներարկվեց հոգեւարքի մեջ գտնվող գյուղերին: Կյանքն աշխուժացավ, ոգեւորությունը տիրեց մարդկանց սրտերին: Հույս ու հավատ ներշնչվեց ապագայի հանդեպ: Գյուղի ուսուցիչն ու բանաստեղծը՝ Մովսես Յախշունցը բանաստեղծական մի նոր շնչառությամբ տողեր ձոնեց.

Եվ ծաղկի, մեղվի երգը նախաստեղծ,
Այնպես է հնչում ջինջ մթնոլորտում,
Որ թվում է, թե մեղուների հետ
Ծառերը նույնպես թռչում են օդում...

1989 թվականի հունիս ամիսը իր վերջին օրերն էր գլորում պատմության գիրկը, ու Մեծ Շենի Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձանի տարածքում գտնվող մի հարկանի շինության մեջ ձորակի բոլոր գյուղերից հավաքված ակտիվիստների մտքով չէր էլ անցնում, որ հյուսվում է Բերդաձորի պատմության հազարամյա շղթայի մի օղակը՝ հերոսական ու ողբերգական անդրադարձումներով, ու ոչ ոք չէր պատկերացնում, որ ընդառաջ էր գնում իր ճակատագրին, որ գրված էր վերուստ, պայքար, գերություն, պատերազմ, նահատակություն, հիացում ու ոգեւորություն, հիասթափություն ու լքում...

Երբ մութն ընկել էր ու գիշերի անդորրը միայն ծղրիդների ձայնն էր խախտում, Եղցահողի դպրոցի երիտասարդ տնօրեն Վիլեն Սիմոնյանը վարորդ Ռոմայի ու Հրաչիկի հետ գնացին Մեծ Շեն, մտան հուշարձանի ճաղաշարից ներս. Առնոն էր զանգել իր նախկին սանին ու հրահանգել, որ խիստ գաղտնիություն պահպանելով ու վստահելի մարդկանց հետ ներկայանա պայմանավորված վայրը:

Նստել էին փայտե նստարանին, ու յուրաքանչյուրը զգում էր պահի կարեւորությունը, զգացվում էր նաեւ հավաքվածների ոգեւորությունը. իրենք պատասխանատու գործի են կոչված ու իրենց է վստահված մեծ գաղափարի իրականացման գործը ու երկրի բախտը:

Խորհրդակցությունը բացում է Սաֆարյան Թաքուլը, առաջադրում օրակարգը Բերդաձորի ենթաշրջանի պաշտպանության կազմակերպում: Նախագահողը առաջին խոսքը տալիս է Առնոյին:

- Պատերազմի վտանգը միշտ կախված է եղել Արցախ աշխարհի վրա, բայց երկիրը շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, բնական պաշտպանական կառույցների եւ բնությանը համապատասխան մարդկային կերտվածքի, մինչեւ 18-րդ դարը, հանձին Ղարաբաղի մելիքների, պահպանել է իր անկախությունը: Գուցե հեռվից եմ սկսում, բայց...- Նկատելով հավաքվածների ուշադիր հայացքները, շարունակեց:- Ղարաբաղի ժողովուրդը դարերի ընթացքում շատ արհավիրքներ է տեսել, բայց կուլ չի գնացել: Բերդաձորը եւս ենթարկվել է օտար նվաժողների ավերիչ արշավանքներին, սրի են քաշվել, բռնությամբ դուրս են քշվել իրենց հողից, բայց երբեք չեն համակերպվել օտարի լծին: Բերդաձորցին միշտ էլ զենքով է պաշտպանել իր օջախի պատիվը: Նորից ու նորից վերականգնվել են ավերված բնակավայրերը:

Մինչեւ հիմա ծորակում պաշտպանության գործը կրել է տարերային բնույթ, բայց այսօր հավաքվել ենք այստեղ ստեղծելու մի կառույց, որը կազմակերպված ձեւով կիրականացնի պաշտպանության գործը: Այս մասին նախօրոք տարբեր առիթներով ձեզ հետ զրույցներ ունեցել ենք, ի մի ենք բերել բոլորի կարծիքները: Այսպես, առաջարկում եմ ստեղծել Բերդաձորի ինքնապաշտպանության խորհուրդ 7 հոգուց կազմված:

Վիլենը Ռոմայի հետ շշուկով խորհրդակցեց, հետո ձեռք բարձրացրեց.

- Պետրոսյան Հրաչիկ:

Քանի որ թեկնածուի առաջադրումը ուղեկցվում էր համառոտ երաշխավորությամբ, Վիլենը ներկայացրեց.

- Երիտասարդ է, եռանդով լի, որսկան է՝ լավ հրացան բռնել գիտի, վստահելի է, բերնից խոսք չի թռցնի, ընկերական է...

- Եվ որ շատ կարեւոր է, ուտող խմող տղա է,- տեղից կատակով լրացրեց մեկը:

Թաքուլը կարդաց խորհրդի կազմը. Մկրտչյան Առնո, Հարությունյան Անդրանիկ, Սաֆարյան Թաքուլ, Դավթյան Սեյրան, Առստամյան Գագիկ, Պետրոսյան Հրաչիկ, Գրիգորյան Սլավիկ:

Նախագահի ընտրության հարցը երկար ու բուռն քննարկվեց երեք թեկնածուի շուրջ՝ Անդրանիկ, Առնո, Թաքուլ: Վերջնական ընտրությունը կանգ առավ Անդրանիկի վրա: Տեղակալ կամ շտաբի պետ ընտրվեց Մկրտչյան Առնոն:

Առնոն եւ ելույթներ էր ունենում, եւ արձանագրում էր խորհրդակցությունը: Առաջարկ եղավ որպես պարզապես կազմակերպության անդամ ընդունել նախագահներին, գյուղական խորհրդի նախագահներին, շարժման ակտիվիստներին: Հետագայում խորհրդի անդամների թիվը ավելացվում է. Ստեփանակերտից անդամ ընտրեցին Գալստյան Մանվային ու Սահակյան Վրույրին:

Բայց խորհրդի գաղտնի նիստերին հետագայում հրավիրվում էին սահմանափակ թվով մարդիկ, ընդամենը 4-5 հոգի:

Պահը հանդիսավոր է. Բերդաձորի ինքնապաշտպանության խորհուրդը հայտարարվեց ենթաշրջանի միակ եւ բարձրագույն իշխանությունը: Անդրանիկն անցավ իր պարտականություններին:

- Թշնամին ջանք չի խնայելու հայաթափելու Բերդաձորը,- ելույթ է ունենում նախագահը,- որպեսզի Լաչինի սահմանը հասցնի մինչեւ Ստեփանակերտի քաղաքադուռը: Հետեւանքը կլինի 72կմ երկարությամբ ադրբեջանաբնակ տարածք, եւ հասկանալի է, թե հետո ինչ կլինի: Բերդաձորը պետք է դառնա մի փոքրիկ, բուֆերային հանրապետություն եւ տնօրինի իր ճակատագիրը: Սա մի սահմանային գոտի է Հայաստանի ու Արցախի միջեւ, որ ամեն գնով պետք է հայ պահենք:

ԲԻՄ-ը,- Անդրանիկը հապավեց կառույցի անվանումը,- գուցե թե անվանվում է դիկտատուրայի, բայց Բերդաձորը այլ կերպ գոյություն պահպանել չի կարող՝ առջեւում Լաչինն է, ետեւում Շուշին: Տարածքը հայտարարում եմ ամեն տեսակ քաղաքական եւ գաղափարախոսական պայքարից դուրս: Նախ հայրենիք պիտի ստեղծենք: Ձորակում ապրող ամեն մի դրսից եկած յուրաքանչյուր ոք, յուրաքանչյուր խմբավորում պիտի մոռանա իր կուսակցականությունը: Առանց այդ էլ այստեղ դժվարություններ շատ կան, մանավանդ որ կոմունիստները, տարբեր մասնակցությունների մեծ ու փոքր պաշտոն վարածները՝ թմրած կոմունիստական գաղափարախոսության հաշիշով, հեշտ չեն հարմարվում նոր գաղափարներին, պայքարի ձեւերին:

Խորհուրդը քննարկեց եւ ընդունեց Առնոյի ու Անդրանիկի նախօրոք գրած-պատրաստած կանոնադրությունն ու ծրագիրը: Իսկ երբ Առնոն պարտականից հանեց եւ ի ցույց դրեց ԲԻՄ-ի զինանշանը, հավաքվածները չկարողացան իրենց հիացմունքը զսպել: Այն ձեռքից ձեռք անցավ: Հավերժության նշանի վրա, որ նրանց ծանոթ է եկեղեցիների ու վանքերի զարդաքանդակներից, բարձրացրած սուր է, որը ծառայում է որպես ինքնապաշտպանություն բառի ի տառի ուղղաձիգ էլեմենտը: Հայոց առաջին հանրապետության դրոշի երեք գույներով գրվել է հապավումը ԲԻՄ: Զինանշանը պարզ էր, հասարակ, արտահայտիչ ու խորհրդանշա-

կան: Այն ընդունվեց բացառիկ ոգեւորությամբ եւ միաձայն:

- Այ թե ծեռագիր ունի, ոնց որ տպագիր...- Գոչեց մեկը:

Անդրանիկ Հարությունյանը ծեռքի հատու շարժումով վերջացնել տվեց զինանշանի շուրջ հիացական բացականչություններին եւ անցան լուրջ խոսակցության, որի արդյունքում ԲԻԽ-ը Բերդաձորում հայտարարեց ռազմական դրություն:

Հաջորդ օրը Գրիգորյան Արտաշեսը եղբոր՝ Արմենի լքված տան դուռը բացեց, եւ Անդրանիկ Հարությունյանը, Գրիշա Սարգսյանը, Գառնիկ Առստամյանը, Հրաչիկ Պետրոսյանը ներս մտան: Տունը պիտի ծառայեր որպես ԲԻԽ-ի շտաբ: Ութ ամիս անց, երբ սկսվեցին անձնագրային ռեժիմի ստուգումները, քանի որ ռազմավարական առումներով Մեծ Շենը հարմար չէր, ստուգողները անմիջապես այս գյուղն էին մտնում, շտաբը տեղափոխվեց Հին Շեն, չնայած տեղափոխումից հետո էլ հատուկ ջոկատները Լաչինի կողմից էին անմիջապես մտնում Հին Շեն: Այստեղ որպես շտաբ ընտրվեց Կասյան Վլադիկի հայրական տունը:

Կառույցը ստեղծելուց մի քանի ամիս հետո, թեկուզ ուշացումով, հավաքվեցին երդման արարողության: Առնոն մոտեցավ փոքրիկ, ինքնաշեն, չիրկիզվող պահարանին, հանեց եռագույն դրոշը, ամրացրեց սեղանին: Հետո հանեց 30սմ-ոց, հնաոճ մի սուր, մի խաչ, երկուսն էլ գունավոր, մանր քարերով զարդարված (իր անձնական իրերն էին), դասավորեց: Առնոն, որ թե՛ ծորակի, թե՛ ԲԻԽ-ի գաղափարական կողմն էր ապահովում, ելույթը սկսեց այսպես.

- Մեծն Գարեգին Նժդեհի ոգին է թեւածում մեր սարերում: Ոգեկոչենք նրա գաղափարները, դիպչենք նրա հերոսական կերպարի քղանցքներին, ուժ առնենք, որ պաշտպանենք մեր երկիրը: Հայրենիքների գոյությունը պայմանավորված է նրանց համար ամեն վայրկյան մեռնելու պատրաստ ուխտվածների գոյությամբ: Նրանք, ովքեր ծառայում են հայրենասիրությունից դրդված, միայն նրանք են ավելացնում իրենց զենքի ու ցեղի փառքը: Դու դատապարտված ես, եւ հանուն քո երկրի ու ժողովրդի պաշտպանության, միշտ պիտի պատրաստ լինես ընդունելու մահը: Վանիր քեզնից մահվան սարսափը, եւ դու կապրես ու կապրեցնես քո ցեղը: Մենք պայքարում ենք ազգային ազատ ինքնորոշման մեծ իրավունքի համար: Ազատ ապրելու իրավունքի համար:

- Երդվո՞ւմ եք,- հարցը տալիս է յուրաքանչյուրին:

- Երդվում եմ հավատարիմ մնալ ԲԻԽ-ի ծրագրին ու կանոնադրությանը,- խորհրդի անդամները մեկ-մեկ մոտենում ու երդվում են Սրի ու Խաչի առաջ:

1988-ի փետրվարյան պատմական որոշումից հետո Բերդաձորը հայտնվեց շրջափակման մեջ: Եթե Արցախի մյուս շրջանները իրար հետ ինչ-որ ձեւով կապ ունեին, Բերդաձորի շրջափակումը կրկնակի-եռակի էր: 1988-ի սեպտեմբերին Շուշին հայաթափելուց հետո Ադրբեջանի եւ Շուշիի ղեկավարությունը տենդագին նախապատրաստվում էր ենթաշրջանի հայաթափմանը: Հենց սկզբից ստեղծվեց պաշարման վիճակ: Կտրեցին կապի բոլոր միջոցները հեռախոս, ռադիո, փոստ, ավտոբուսային երթուղիներ: Խափանեցին բոլոր տեսակի սննդի, վառելիքաքսայուղային, արդյունաբերական ապրանքների մատակարարումները: Վերջնագիր ներկայացրին ենթաշրջանին սպառնալով մի լոր սումգայիթով: Սկսվեցին ամենօրյա գիշերային հարձակումները: Մեծ չափերի հասավ անասնագողությունը: Նախագահի հարեւան գյուղի ազերիից 700 ռուբլով գնած ձին գողացան:

Ձորակը չէր ընկճվում:

Անասնակերը վերջացել էր: Ստածեցին՝ անհատական անասուններ հավաքել, տանել Ստեփանակերտ, հանձնել մսամթերման կետին, որ մի քիչ փող-մող բերեն, իրենց կարիքները հոգան: Շարասյուն են կազմում, յոթ բեռնատար՝ 20 բերդաձորցիներով, 5-7 ավտոմատավոր խորհրդային զինվորներն էլ որպես ուղեկցող-պաշտպան, բարձած խոշոր եղջերավոր անասուններով անցնում են Թթու ջրից, հասնում Շուշիի մատույցներին, որտեղ պահակակետ է դրված: Մեկ էլ երկու հապարանոց ամբոխը շրջապատեց շարասյունը:

Ազերին քարով խփեց, ջարդեց մեքենայի ապակին: Հաջորդ քարի հարվածը, եւ արյունը ծորաց Բարսեղյան էդիկի գլխից:

- Ինչո՞ւ չեք միջամտում,- զինվորի վրա գոռաց Արկադի Ասրյանը, որ հենց առաջին բեռնատարի վարորդն էր:

- Հրաման չկա, ես ինչ կարող եմ անել:

Թե որտեղից հայտնվեցին Շուշիի ապօրինածին, անօրեն գործող հեռուստաստուդիայի լրագրողն ու օպերատորը, ու սկսվեց հաղորդումը ուղիղ եթերով: Պարզ է, կադրից դուրս են թողնում գազանաբարո գործողությունները:

Լրագրողի առաջին խոսքը.

- Դուք մասնակից եք գողությանը եւ պատասխան պիտի տաք:

Ուղեկցող ռուս զինվորները հարցի խիստ տոնից եւ հանդիմանությունից անակնկալի են գալիս եւ արդարանալու փորձ են անում.

- Անասունները սեփական են: Փաստաթուղթ կա:

- Կեղծ է:

Տոնը ոչ մի առարկություն չէր ընդունում: Զինվորներին իջեցնում ու մի կողմ են քաշում: Հեռուստալրագրողը հեռուստախցիկն ուղղում է բեռնատարի մեջ նստած բրիգադավար Նասիբյան Զալալին:

- Իջի՛ր,- հրամայում են ազերիները:

- Չեմ իջնում: - Նրանց լեզվով հնչում է հայի պատասխանը, եւ Զալալը փորձում է անկախ ու համարձակ կեցվածք ընդունել:

Ամբոխից անհամբեր մի ձեռք մեկնվում ու կառչում է օձիքից պատրաստ բարձրանալու դեպի կոկորդը: Լրագրողը հենց կադրի մեջ աչքունքով սաստում է՝ իբր չե՞ս տեսնում, որ հաղորդումն ուղիղ եթեր է արձակվում: Ձեռքը հետ է քաշվում:

- Քեզ ասում եմ՝ իջի՛ր:

Ազերիի խոսքն ընդունում է ավելի գայրացկոտ ու սպառնալի երանգներ: Գործողությունների չդիմելու եւ ինքնատիրապետումն ու ինքնավերահսկողությունը չկորցնելու ճիգերն ակնհայտ երեւում են կադրում: Մի քանի վայրկյան եւս, եւ Զալալը կադրից անհետանում է:

Ստեփանակերտում, որ այդ պահին դիտում են հեռուստահաղորդումը, անհանգստանում են: Էկրանի վրա նորից հայտնվում է Զալալը... արդեն խեղճացած, ծեծված, ազերիներից դաս ստացած: Փորձում է իրեն հավաքել, բայց չի ստացվում: Հեռուստադիտողները Զալալին տեսնելով ազատ շունչ են քաշում՝ ուրեմն կենդանի է:

- Ի՞նչ նպատակով եւ ի՞նչ մտադրությամբ եք դիմել Ամերիկայի Միացյալ Նահանգների սենատին:

Սենատն այդ օրերին էր ընդունել այն բանաձեւը, որով Խորհրդային Միության կենտրոնական իշխանություններից պահանջում էր արդար լուծում տալ Արցախի հարցին: Զալալը շվարեց: Չէր կարդացել: Մտածեց՝ միգուցե Արցախի հիմնախնդրի վերաբերյալ դրական ինչ-որ որոշում է եղել, ինքը չգիտի: Մտածում է՝ էս ինչ որոշում պիտի հանած լինեն ամերիկացիները, որ թուրքը հարցը էսքան կատաղած է տալիս: Իրենք թերթի երե՞ս են տեսնում, որ կարդան-իմանան: Շաբաթներով Բերդաձորի ենթաշրջանը փոստ չի մտնում: Ռադիո չկա, հեռուստատեսություն չկա: Ով գիտե, գուցե ինչ-որ բան է եղել, լուրը դեռ իրենց չի հասել: Գուցե Ղարաբաղը Ադրբեջանից անջատել են, միացրել են Հայաստանին, իրենք տեղյակ չեն: Եվ հայի մտքերն իրար են խառնվում:

- Ծովից-ծով Հայաստանն եք ուզում վերականգնել, հա՞:

Զալալի մտածումները ընդհատվեցին: Փորձեց Ղարաբաղից ու Բերդաձորից վերանալ, «ծովից-ծովը» հասկանալ, չկարողացավ: Իրենք, որ ուզում են Հայաստանին միանալ, հազարից-հազար պարզ է, բայց

Բերդաձորում ծով չկա, Գորիսում էլ չկա, էս ի՞նչ ծովի մասին է հարցնում,- մարդը գերադասեց լռել, որպեսզի սխալմունքների մեջ չընկնի:

Լրագրողի աչքերը ակնապիծերում ոլորվում են, դեմքը մեկ երկարում ու մեկ լայնանում է, կոստյումի տակից կապույտ փողկապը ավելի է ընդգծում հայացքի դաժանությունը: «Հաստատ «Միացումը» եղել է, իսկ Բերդաձորում իրենք դեռ խաբար չեն,- մտածեց Զալալը,- թե չէ էս չան որդին ինչո՞ւ է էսքան կատաղել»,- կայծակնային անցավ մտքով: Հայացքն ընկավ մերթ մի կողմ կանգնած ռուս զինվորներին, մերթ մեքենաների մեջ նստած համագյուղացիներին, մերթ անասուններին, որոնց ազերիներն արդեն քաշքշում էին, որ մեքենաներից իջեցնեն: «Բա որ Հայաստանին միացրած չլինեն, բա ո՞ր ...- գյուղացու միամիտ մտքերը նորից իրար խառնվեցին:- Հիմա ամբողջ Ղարաբաղը իրեն է նայում, ծանոթ, անծանոթ, բարեկամ իր պատասխանին են սպասում, կարծես թե դրանից քաղաքական ինչ-որ լուծում է կախված»:

Օպերատորը հեռուստաօբյեկտիվը նորից հեռացրեց դեմքից: Անցավ 10 վայրկյան, 20 վայրկյան...Ստեփանակերտում հեռուստադիտողներն անհանգստացած նորից ձգվում են, քանի որ գիտեն բերդաձորցիներին «մշակման» են ենթարկում: Վերջապես կադր: Գյուղացու հայացքը դարձել է մշուշոտ, դեմքին գույն չկա: Նորից էին ծեծել:

-Ի՞նչ նպատակով եւ ի՞նչ մտադրությամբ...- Լրագրողը հիշեցրեց նարցը:

-Ի՞նչ սենատ, ի՞նչ Ամերիկա, ի՞նչ բան, մենք ինտերնացիոնալ ժողովուրդ ենք, էս կովերը, էս խոզերը մեր անհատական անասուններն են, սենատի հետ կապ չունեն: Տանում ենք հանձնելու:

Մարդը հայացքը հառել է ներքեւ, եւ օպերատորը իզուր էր տարբեր դիրքերից ջարչարվում-փորձում բռնել աչքերի արտահայտությունը:

- Ո՞ւմ եք հանձնելու:

Ամբոխը աչքերն արյունակալած սպասում է պատասխանի: Ստեփանակերտում շունչները պահած սպասում են, թե տեսնեն հիմա ինչ պատասխան է տալու:

Օպերատորը մասնագիտական բարեխղճությամբ հաղորդումը աշխուժացնում է կադրի մեջ ընդգրկելով պատկերներ Շուշիի շրջակայքի լուսապատկերներից:

Խուժանը լափու է տալիս. մի թեւն արդեն շրջապատել է բեռնատարները, բացում են թափքը: Լսվում է կովերի բառաչը, ամբոխի հայհոյոցը: Մի ազերի բարձրացավ ու հրեց անասուններին: Մի կով գլորվեց ձորը, առջեւի ոտքերով կառչեց ձորի պռնկին ու բարձր-բարձր բառաչեց: Այս ամբողջը սեւեռակվում էր կադրի մեջ:

- Ով որ փող տա՝ նրան ենք հանձնելու: Ինձ համար ի՞նչ տարբերություն,- վերջապես պատասխանեց բերդածորցին:

Ձայնը իրենը չէր: Կարծես ինչ-որ դատարկ տեղից է դուրս գալիս եւ իմաստազրկված դնգդնգում ուղեղում: Ասաց ու վազեց դեպի ծորը, կովը դեռ կախված էր ծորի պռնկից ու բառաչում էր:

Այստեղ կադրն ընդհատվեց:

Այն, ինչ որ հետո կատարվեց, հասկանալի է, կադրից դուրս էր: Ազերիի մահակն իջավ ճակատին: Ձալալը ձեռքը տարավ, արյան թացությունը զգաց: Աչքերը մթնվեցին: Ամբողջն իրար խառնվեց՝ Շուշին, Բերդածորը, Արցախը, եւ գյուղացին ուշակորույս փռվեց գետնին:

Մեքենաները, անասունները քշեցին Շուշիի մսի մթերման կոմբինատ, որ քաղաքից դուրս էր: Երկու ժամ էր անցել, եւ Ստեփանակերտից երկու ԲՏՐ եկան:

- Հայերը թող մեքենաներից դուրս գան,- ռուսերեն հրամանի վրա դուրս են գալիս Ձալալը կողոսկրերը ջարդած, մյուսները արյունաթաթախ, մեկի ոտքը, մեկի՝ գլուխը... Մեքենաների կեսը ծորում է, կեսը՝ ջարդուփշուր:

1989 թվականի նոյեմբերի 24-ն էր:

Ստեփանակերտում մարզկոմի շենքի առաջ, որտեղ նստած էր Վոլսկու հատուկ կառավարման կոմիտեն, 20-30 բերդածորցիներ՝ մազակալած երեսներով, խոժոռ, գլխիկոր հավաքվում, առավոտից մինչեւ ուշ երեկո սպասում են, որ իշխանությունը պատասխան տա, մի որոշում կայացնի, որ Շուշին իրենց անասունը հետ տա, վնասը հատուցի: Հատուկ կառավարման կոմիտեն, ներքին գործերի մարզային վարչության պետ Ուսենկոն պայմանավորվում են Շուշիի ղեկավարության հետ, եւ բերդածորցիները մի շաբաթից հետո գնում են անասունները բերելու:

Ոլորաններով բարձրանում է 5 ավտոմեքենա, յուրաքանչյուրի մեջ վարորդի մոտ նստած է մեկ զինվոր՝ ավտոմատով: Շուշիի քաղաքադռան մոտ «ԿրԱՁ» մեքենան փակել էր ճանապարհը: Շարասյունը կանգնեց: Առաջին մեքենան վարում էր Մկրտչյան Արմոն: Ազերիները նախօրոք լավ պատրաստվել էին. անմիջապես կտրում են ռետինե խողովակները, որով վառելիք է մատակարարվում շարժիչին: Մեքենաները այլեւս չէին կարող տեղից շարժվել: Քարով խփում են Արմոյի գլխին: Մեկ անգամ, երկու անգամ, երեք անգամ... Վարորդը նստատեղի փոքրիկ բարձիկով փորձում է պաշտպանել գլուխը եւ գոռում է կողքին նստած զինվորի վրա.

- Կրակի՛ր, գոնե օդում կրակիր:

- Դուրս եմ գալիս խցիկից, որ ձեզ պաշտպանեմ,- զինվորը խաբեց ու դուրս պրծավ:

Քարի հարվածը կպավ Արմոյի աչքին: Ձեռքը տարավ աչքին ու կռագավ: Ազերին, որ կանգնած էր ոտնակին, առիթից օգտվեց ու դանակով հարվածեց մեջքին, կողքերին:

- Քեզ ի՞նչ եմ արել, անխիղճ, անաստված:

- Հայ ես, դրա համար:

Դանակի հաջորդ հարվածները:

- Չի էլ սատկում է՞, դեռ կենդանի է:

Քարապարանուկ մեքենաների վրա: Որը մտնում է նստարանի տակ, որի իրեն գցում է ծորը, որ փրկվի: Երբ ամեն ինչ վերջացած էր, Շուշիի պարետատնից երկու ԲՏՐ- են գալիս: Կատաղած ամբոխը չի ուզում նետ քաշվել, պահանջում է հայերին իրենց ձեռքը տալ: Ովքեր փախել էին ծորը, բարձրանում ու մի կերպ խցկվում են զինվորական «Ուրալ» մեքենան: Ամբոխը զինվորներին ուշադրություն չդարձնելով՝ դատարկ մեքենաները գլորում է ծորը:

Արմոն, որ իր փրկությունը տեսել էր դուռը բացելու եւ իրեն դուրս գցելու մեջ, գլորվելով ու չոքեչոք հասել էր վերջին մեքենային, ուր զինվորներն էին: Ստեփանակերտի մարզային հիվանդանոցում 10 օր պառկեց. ծանր վիրավորում, թոքը վնասվել էր, թաղանթը ծակվել էր:

Ընդհատակյա գործող շտաբից այցելության է գալիս Սերժ Սարգսյանը զինակիցների հետ:

Ցուցարարները հավաքվում են հրապարակում: Պատվիրակությունն է մտնում, ներկայացնում բերդածորցիների բողոքը: Պահանջում են միջոցներ ձեռնարկել, որպեսզի ազերիները վերջ տան իրենց լկտի գործողություններին: Հեռագրեր են ձեւակերպում՝ Մոսկվա՝ Կենտկոմին, Գերագույն խորհրդին, Գորբաչովին, Լուկյանովին... Հեռագրի մեջ նշում են, որ ամբոխի մեջ էին եւ ամբոխին գրգռում, հրահրում, գործողությունների էին մղում Շուշիի ղեկավարները՝ շրջխորհրդի նախագահ Պոզալովը, ագրոարդի պետ Թահիրը, շրջանային ներքին գործերի պետ Սամեդովը: Վերջում էլ ինչպես սովորաբար ավելացնում են, որ մենք խաղաղ պահանջատեր ենք, մենք ուզում ենք, որ խաղաղ ճանապարհով արդարությունը վերականգնվի: Պատվիրակությունը Վոլսկու մոտից դուրս եկավ, հայտարարեց, որ հատուկ կառավարման կոմիտեն էլ է հեռագրել Մոսկվա, որ միջամտեն մեքենաները եւ անասունները հետ տան: Իսկ կոմիտեի անդամ Նեֆյոդովն ասել է, թե հավանական է Մոսկ-

վան որոշի նոր մեքենաներ տան Բերդաձորին, անասունների վնաս էլ փողով կհաշվեն-կտան:

- Սուտ է, ես չեմ հավատում, որ փոխհատուցում կստանանք,- ժողովրդի միջից ձայնեց մի բերդաձորցի՝ ոստիկանության ավագ սերժանտ Տիտան Պետրոսյանը:

- Բերդաձորից Բեռլին եմ հասել, ոտքիս մեջ դեռ երեք բեկոր կա, էսքան ինձ անգոր զգացած չկամ: Մահը չէր սարսափելի, մի օր ծնվել ենք, մի օր էլ կմեռնենք, բա որ էն զինված գազանների մեջ մահ գտնեի՞...

- Մեր տանը մեր ձեռքերը կապված են, ժողովուրդ,- գոչեց մեկը:

- Սուտ է, ամեն ինչ սուտ է, ի՞նչ բանակցություններ, ի՞նչ հեռագիր, ի՞նչ բողոք... Մենք էլ նրանցից պիտի գողանանք,- գոչեց մեկը ու թաքնվեց, որ չերեւար՝ ասողն ով է:

- Գողանա՞նք, ո՞նց թե... Բա խորհրդային իշխանությո՞ւնը... Բա վերեւներում մեր մասին ի՞նչ կարծիք կկազմեն... Բա անջատո՞ւմը... Բա որ միացումը խանգարվի՞... - Առաքելը իրար հետեւից արագ-արագ ու կցկտուր շարեց մտքերը:

- Առաքել, էսօրվանից մենք արդեն անջատ ու անկախ ենք, գնացինք ժողովուրդ, իզուր էլ դռներդուռ ենք ընկել,- հայտարարեց մեկը:

ԲԻԽ-ի ընդլայնված նիստում, ուր ներկա էին բոլոր գյուղերից ներկայացուցիչներ, ակտիվիստներ, հարգանք վայելող ծերեր, դրված էր օրախնդիր հարց՝ ինքնապաշտպանություն:

- Հույսներս մեզ վրա պիտի դնենք: Խորհրդային իշխանությունը երկակի խաղ է խաղում, երկու կողմին բարեկամ է ձեւանում, բայց վերջնական հաշվով՝ մենք մենակ ենք:

- Պատերազմ կարող է սկսվել,- Առնոյի խոսքը շարունակեց Սաֆարյան Թաթուլը,- շրջափակվելու ենք, պարենային պաշարներ պետք է ստեղծենք:

- Ագերին ասում է՝ հողն առանց արյունի չեն զիջում, իսկ էդ հողը մերն է, եւ պետք է պատրաստ լինենք արյան գնով պաշտպանելու,- լրացրեց Առնոն:- Ակն ընդ ական, ուրիշ ճանապարհ չկա:

- Կոտորած է լինելու, ա խոխեք, ջահել եք, չեք հասկանում: Տաք գլուխներ եք, չեք իմանում կռիվն ինչ զուլումա,- ընդդիմացավ մեծ հայրենականի մի մասնակից:

- Հը, վիզներս դնենք սրի տա՞կ,- գոչեց Ասրյան Արկադին:

- Էն գլուխը մեռնի՝ ով չի ուզում միանա Հայաստանի հետ, բայց... խաղաղ ճանապարհով: Մեղք եք, բանտ եք գնալու,- խոսողը համեմատաբար ջահել էր 50 -ին մոտ ու ակնարկեց 1965-ի դեպքերը, ապա ավելացրեց,- Արկադի, ով-ով, դու լավ գիտես ...

Արկադին կախեց գլուխը. Բաղդասար պապը 1918-ի կոտորածի ժամանակ գյուղը լքելուց հետո մի համագյուղացու հետ գիշերով մտնում է Հին Շեն հորերի մեջ թաղած ցորենը հանելու, որ երեք երեխաները սովից չմեռնեն: Ազերիները, որ գյուղում տիրություն անելիս են եղել, բռնում տանում են՝ Հունանավ գյուղում վառում:

-Եթե նույնիսկ կռիվ էլ սկսվի, ութ կիլոմետրն ինչ է, , 40 որպես կդիմադրենք, մինչեւ Գորիսից օգնությունը կհասնի,- Առնոն փորձում էր կոտրել ջարդի, կոտորածի հիշողության դիմադրությունը, որն արդեն գլուխ էր բարձրացնում:

- Ի՞նչ ինքնապաշտպանություն: Ժամանակավոր լարվածություն է, կանցնի: Էսքան տարի կողք-կողքի, հարեւանությամբ ապրել ենք,- դարձյալ կարծիք հայտնեց տարեցներից մեկը:

- 1918-ին հարեւանությամբ չէի՞ք ապրում, Ալեքսան քեռի,- խեթեց Առնոն,- ով-ով, գոնե դու գիտես ինչ է եղել...

- Գիտեմ, գայլի աչքերը տեսել ենք, հենց դրա համար էլ ...

- Մեր հայացքը դեպի Հայաստան պետք է լինի,- Առնոն էր:

Առնոն գիտեր, որ իր համար դժվարին ժամանակներ են գալու, պայքարը երեք ճակատով է տարվելու՝ արտաքին թշնամի, ներքին տարաձայնություններ, խորհրդային զորանոցային իշխանություն: Տարեցները մինչեւ վերջ կարծրացած մնացին իրենց համոզմունքների մեջ, որ չան ոտքը չպիտի կոխել:

- Հարկավոր է լուրջ նախապատրաստվել ձորակի պաշտպանությանը,- խորհրդակցությունը պաշտոնապես բացեց Անդրանիկ Հարությունյանը,- այլապես կզոջանք մեր անփութության համար: Ինքնապաշտպանությունը անհրաժեշտություն է, պետք է ջոկատները շարունակել, ամրապնդել:

- Ջոկատները ավելացնում ենք, վերջ,- վիճաբանություն չհանդուրժող տոնով ասաց ԲԻԽ-ի նախագահը,- կամավորության սկզբունքով: Անդրամագրվում են տղամարդիկ, ովքեր ընդունակ են պոստ կանգնելու: Ձորակի գյուղերն առանձին-առանձին պետք է ունենան իրենց պաշտպանական գիծը, իրենց հրամանատարները, որոնց բոլորը պարտավոր են ենթարկվել:

Առնոն իրենցից մեկն էր, իրենց աչքի առաջ մեծացած տղան, կարող էր հակառակվել, հակաճառել, վիճել, բայց երբ Անդրանիկն էր խոսում, լռված կասկածանքով էին նայում, բայց չէին համարձակվում խոսքը հետ տալ, կամ միգուցե իմաստ չէին տեսնում վեճի մեջ մտնելու:

Մեծ Շենում ճշտում են պահակակետերի տեղերը՝ Պարին Պիժից ներքեւ, Հինգիստհողում՝ ֆերմաների մոտ, Սխտորեն հարթում դպրոցից ներքեւ, Խառատ կոչվող տեղամասում, Մեծ Հայրենականի հուշարձանի մոտ գյուղ մտնող ճանապարհի վրա: Բունիաթյան Խորենը էջմիածինցի 23 տարեկան մի երիտասարդ, նախկին շտաբում, որտեղ այժմ դրսից Ստեփանակերտից ու Հայաստանից եկած տղաներն էին տեղավորվել, վառարանը վառել ու ճաշ էր եփում:

1989 թվականի աշունն էր, հոկտեմբերի 10:

- Հարա՛յ, հասե՛ք,- ծորի միջից ձայն եկավ, ու շերեփը ձեռքին սառավ:

Երեւանցի Նորիկը (Քարին Տակ գյուղի ճակատամարտում զոհվել է), որ Մեծ Շենի շտաբի պետն էր, Վարուժանը, Արվիդը, Խորենը ավտոմատներով դեպի ծորը վազեցին: Առատ աշնանային խոտ կար, տավարածը նախիրը գյուղամերձ տարածքից իջեցրել էր արածացնելու, ազերիները անասնապահին կապկպել-գցել էին գետնին, ծորի միջով անասունները քշել դեպի Լաչին:

Գյուղից կապվել են Հին Շենի ու Եղցահողի հետ, տղաները օգնության են հասնում: Մի 10 հոգի իջան ծորը, որ առաջկտրուկ անեն, մի մասը մեքենայի ճանապարհով հասան այն թմբին, որի մոտով անցնում է Կուբաթլուի ճանապարհը: Մի քանի անասուն խփված-գցած էր, նախիրը չէր երեւում: Լաչինից Կուբաթլու գնացող ավտոբուսը նկատելով զինված տղաներին կանգնեց:

Տղաները կատաղած ուզում էին մոտենալ, Անդրանիկն ու Առնոն չթողեցին.

- Վտանգավոր է, մենք ավելի մեծ կորուստներ կկրենք, հետո էլ խաղաղ բնակիչներ են:

Ավտոբուսը վախեցած եկած ճանապարհով հետ դառավ եւ չանցած 20-25 րոպե, Լաչինի կողմից 2 ԲՏՐ եկան ու կրակ բացեցին տղաների վրա: Ստիպված էին նահանջել: Ազերիները տարել էին 30 գլուխ խոշոր եղջերավոր: Տղաները անտրամադիր հետ դարձան ու բորբոքված խոսում են:

- Նրանք վնաս են տալիս, մենք միայն պաշտպանվում ենք:

- Իրենց արածին իրենց նման պիտի պատասխանենք:

Առնոն ու Անդրանիկը որոշեցին պահակակետերը ավելացնել, հսկողությունն էլ ուժեղացնել:

Մեծ Շենի շտաբում տղաները ընդամենը 4 ավտոմատ ունեին, մնացածը որսորդական հրացաններ եւ Նոր Հաճնի ինքնաշեն կարաբիններ էին, որոնք մեկ անգամ կրակելուց մի 5 րոպե չարչարվում են մինչեւ պարկուճները հանեն:

- Ինձ ավտոմատ տվեք, իսկական ավտոմատ,- ասաց Խորենը:

- Պիտի յոլա գնանք, պիտի դիմանանք, ուրիշ հնար չունենք,- ասաց Անդրանիկը:

- Ընդամենը 20 հատ «Կալաշնիկովի» փամփուշտ եք տալիս, էն էլ ամեն կրակած փամփուշտի համար հաշիվ եք պահանջում,- բողոքը շարունակեց Խորենը:

- Դու գիտես, չէ՞, ինչ արժե մեկ փամփուշտը:

Խորենը, իհարկե, գիտեր, չպատասխանեց, լուռ շարունակեց եփել ճաշը: Մանր-մունր կտրտեց կանաչին ու լցրեց սուսի մեջ: Միսը նախագահ Սաֆարյանն էր ուղարկել: Խորենը փորձ ուներ, եւ խոհարարություն անում, եւ պահակության էր կանգնում: Տղաները տրամադրություն չունեին, բայց սուսը հավեսով կերան: Գիշեր էր, պիտի գնային պահակակետերը:

Շտաբը դատարկվեց մինչեւ հաջորդ լուսաբաց:

10-15 օր ծորակում հանգստություն էր տիրում, այնուամենայնիվ տղաները կատարված դեպքից հետո դարձան ավելի զգոն եւ ժամանակին պահակակետ էին գնում: Հսկում էին երեկոյան ժամը 7-ից մինչեւ լուսադեմի 7-ը: Պահակակետը ծորաբերանին էր: Գյուղացիները հայաստանցի տղաներին ասել են, որ հոկտեմբերին Ղարաբաղում եղանակը սովորաբար մեղմ ու տաք է լինում, իսկ այդ տարի ցուրտը շուտ վրա հասավ: Նախորդ գիշերը ձյուն դրեց ու մնաց:

- Էս էլ մեր բախտից եղավ,- քրթմնջաց Խորենը:

- Գիշերվա մեջ շրջակայքը, մինչեւ Տեղ գյուղը մեքենաների անցուդարձը երեւում էին: Երեք լուսարձակներ լուսավորում էին ֆերմայի տափարակը եւ ծորի կողմը որտեղից վտանգ էր սպասվում: Կրակ վառելը խստիվ արգելված էր, քանի որ կարող էին թիրախ դառնալ:

- Կրակոցների ձայնը մինչեւ Տեղ ու Կոռնիձոր գյուղերը հասնում է, չէ՞, Վարուժ, հենց լսեն՝ իրենք էլ Լաչինի վրա կհարձակվեն...

- Չլինի՞ վախենում ես:

- Ե՞ս... Չէ մի... - Ձգվեց Խորենը ու դանակները վերցրած գնացին դեպի հենապատը: Գիշերը կարծելու եւ վարժվելու համար դանակախփոցի էին խաղում: Նորիկի ուժեղ եւ դիպուկ հարվածներից Խորենի կապույտ աչքերում հրճվանքը փայլփլեց:

- Մրցում ենք, ով տանուլ տվեց, ֆերմայի շուրջ 10 պտույտ է անելու:

Ավելի լավ, կտաքանանք,- Խորենը գիտեր, որ պտույտներ գործողը ինքն է լինելու, քանի որ Վաղոն ու Ռուբոն էլ էին դանակին լավ տիրապետում:

- Տղա ջան, փոխանակ նախանձես, հրճվում ես:
- Ինչո՞ւ պիտի նախանձեմ, Նորիկ, նեղ տեղն ընկնեմ՝ ինձ կփրկես:
- Խորեն տղա, լավ կլինի հույսդ միշտ քեզ վրա դնես:
Հետո տղաներն անցան դագանակներով խաղին:
- Է՛յ, Դարաբաղի փեսա,- Ռուբոն աղջիկ էր աչքադրել Վարազաբույնից,- բռնիր,- Նորիկը շպրտեց դագանակը, հետո ճարպիկ ոստյունով շուռ եկավ դեպի Խորենն ու Վարուժը.
- Դե, տղա եք՝ դիմադրեք:
Գիշերը խորանալու հետ աստղերի փայլը ավելանում էր: Մի ասուպ առկայծեց՝ երկնքում ծիր գծելով շեշտակի մարեց:
- Թռչող ափսե իջներ էս թմբին, մոտենայինք՝ տեսնեինք զենք, գնդացիր, ավտոմատ,- երազեց Խորենը:
- Ռումբ չէիր ուզի՞,- խեթեց Նորիկը, որ բնույթով իրատես ու պրագմատիկ էր:
- Ինչու չէի ուզի, հրթիռ էլ կուզեմ...,- շարունակեց երազել Խորենը:
- Նորիկ, ախր էն տարածությունը շատ է՝ խանգարում,- նկատի ուներ Լաչինը:
- Դեռ դրա ժամանակը չի եկել,- ու որպեսզի Խորենը չշարունակի անօգուտ զրույցը, կարճ կապեց.
- Քեզ չվերաբերող հարցերով խելքիդ զոռ մի տուր:
Երկու ժամը մեկ տղաները մտնում են ֆերմա, որտեղ կրակ կար, տաքանում ու հետ էին գալիս:
- Ռուբո, երգիր:
Ռուբոյին շատ խնդրել պետք չէր լինում, սկսում է երգել.

Փիթի բորան մութ գիշերին,
Պըտրտում էր ֆետային,
Փամփուշտները խաչ կապած,
Հրացաններ ուսերին:
Ա՜խ, ֆետայիներ, ջան ֆետայիներ,
Ձեր մայրերը ձեզ ղուրպան,
Մշո Սուլթան, Սուրբ Կարապետ
Ձեզի լինի օգնական:
Թողիր դաշտը, արոր ու մաճ,
Իմ մինուճար, ազիզ լաճ,
Մի քիչ խաղա մոսինի հետ,
Որ էլ չտանք քյուրտին խարճ:

Տղաները ունկնդրում են՝ ականջները ծորի ձայներին...

Մեծ Շենի ջոկատի հրամանատար Հարությունյան Գագիկը շատ խիստ, թվացյալ՝ դաժան, բայց գիտակցված կարգապահություն էր հաստատել: Խոսքն օրենքի ուժ ուներ, լսում ու ենթարկվում էին: Մթնշաղի հետ տղաները բարձրանում են պոստ, լուսադեմին իջնում գյուղ, գիշերը հսկում են, ցերեկը գյուղացիներին օգնում՝ ցանկացած աշխատանքում, խոտ հնձել-հավաքել, բանջարանոց մշակել...
Խումբը բարձրացավ դիրքերը: Լաչինի կողմից, դիրքերում, լուսարձակիչ փամփուշտներ են կրակում օդում:
- Շան որդիները բոլ-բոլ փամփուշտ ունեն, մեզ մի փամփուշտի համար դատի կտան,- քրթմնջաց Գրիգորին, որին կարճ Գոգի էին ասում:
- Մեկ է՝ ոչխար ազգ է,- ասաց Խորենը:
Երեք-երեք, չորս-չորս՝ 200 մետր հեռավորությամբ հսկում են դիրքերը: Մի կենտ կրակոց լսվեց:
- Ըհը, նապաստակի միս ենք ուտելու:
Քիչ անց երեւաց որսկան Մայորը խփած որսի հետ:
Տղաներից երկուսը գնացին ստուգելու դիրքերը՝ հո քնով չե՞ն անցել: Գիշերահավի ձայն հանեցին, նույն ձայնով պայմանավորված ազդանշանով պատասխանեցին: Մոտեցան.
- Ի՞նչ կա-չկա:
- Ամեն ինչ հանգիստ է:
Հակառակորդի դիրքերում եւս հսկողությունն ուժեղ է. երեւում է, որ քնով չեն անցել: Կեսգիշերն անց էր, երբ այնտեղից կրակոց բաց թողվեց, ապա շատ բարձր աղրբեջաներեն մի ձայն լսվեց.
- Է՜ հե՜յ, էրմանի, գաչ, գյալիրիք (փախե՛ք, գալիս ենք):
- Գյալին (եկեք),- գոռացին ի պատասխան:
- Մենք 7 միլիոն ենք:
- Խիտ խոտը հեշտ է հնձվում:
- Սպասում ենք՝ ռուսը գնա, որ գանք:
- Մենք էլ ենք դրան սպասում: Հենց հեռացան՝ Լաչինը քարհատակ կանենք:
- Ստեփանակերտում ամենալավ տունը իմը կլինի, նոր տարում էնտեղ թեյ եմ խմելու...
- Չի իմացի՝ ով որտեղ թեյ կխմի, դուք մինչեւ Ստեփանակերտ հասնիք, մենք Շուշիում ենք լինելու...
Լեզվակռվին երկու կողմից հետեւեցին յոթ հարկանի հայհոյանքները:
- Երանի կռիվ չլինի,- հոգոց հանեց տարեց մի մարդ, որ տղաների հետ եկել էր պահակության:

Սարերին լռություն իջավ: Հոգնած գիշերի մեջ միայն գիշերահավի ձայնն էր լսվում...

1990 թվականի հոկտեմբերի 22-ին Նոր Հաճնի ադամանդի գործարանից համալրում էր եկել, 25 հոգանոց խումբ, ու տղաները տեղավորվելով էին զբաղված, երբ որսորդական հրացանի կրակոցներ լսվեցին:

- Էս մեր տղաներն են,- անհանգստացավ Նորիկը, մեքենան գործի գցեց ու իջան ձորը:

Ազերիները մոտեցել եւ ֆերմայից 70 մետր հեռավորության վրա ավտոմատից կրակում էին: Գնդակները վզվզալով խփվում էին տներին: Գյուղը խուճապ ընկավ: Կես ժամ տեւած փոխհրաձգությունից հետո, ամեն ինչ խաղաղվեց:

Ֆերմայում կրակի շուրջ տղաները հավաքվել ու չէին ուզում ցրվել. տրամադրությունները բարձր էր, այս անգամ չկարողացան անասունները տանել:

Առնոն գործով Ստեփանակերտ էր եկել, գնաց ընտանիքին տեսության: Ներս մտավ ու մեղավոր-մեղավոր կանգնեց դռան մեջ:

- Տուն չես գալիս:

- Գործի եմ:- Ամուսնու դիմադրությունը թույլ է, քանի որ իրեն մեղավոր էր զգում կնոջ առաջ:

- Գործիդ անունը:

- Հազար անգամ պիտի ասե՞մ: Դու շատ լավ գիտես...

- Արդեն շորերդ էլ չես բերում՝ լվանամ,- խռովկան երեխայի նման Ալվարդը հոնքերը կիտեց:

- Ժամանակ չկա, որ բերեմ: Ամեն ինչ կարգին է...

- Ի՞նչն է կարգին... Դո՞ւ, գո՞ծդ, թե՞ ես... Սկզբում օրերով չէիր գալիս, հետո շաբաթներով, հիմա ամիսներով չես երեւում,- կնոջ աչքերը լցվեցին:

- Իսկ ինձ թվում է՝ քեզ ընդամենը մի ակնթարթ չեմ տեսել:

- Սիրուն-սիրուն խոսքերով ինձ չես խաբի, վերջ: Երեխաներին էլ ես աչքաթող արել: Ինձ չեն ենթարկվում...

- Հետները զբաղվիր, հեքիաթ պատմիր, խելոք կնստեն:

- Բա լվացքը ո՞վ անի...,- լեզվակռվի անցավ կինը:- Երեխաներին կվերցնեմ, կբաժանվեմ:

- Իսկ որ առանց երեխաների՞ բաժանվես...

- Կարծում ես կատա՞կ եմ անում, Առնո, լուրջ եմ մտադրվել:

- Գուցե վերջ տանք էս խոսակցությանը: Ես քեզ բացատրել եմ, չէ՞, սա մեծ գործ է...

- Ինձ էլ տար քո էդ գործին...

- Երեխաները փոքր են, մի քիչ մեծանան, կտանեմ: Քիչ է մնացել: Ամեն ինչ կարգի է ընկնելու:

- Մեկ է, ամեն ինչ վերջանա էլ, դու մի գործ գտնելու ես քեզ գցես մեջը...

- Ալվարդ, քեզ քանի անգամ եմ ասել, որ անձնականից բացի ինձ համար գոյություն ունի մեկ ուրիշ, ավելի բարձր...

- Հա, գիտեմ,- հեգնանքով կանխեց կինը,- ազգի համար, հայրենիքի համար, իսկ երեխանե՞րդ... Օրեր են լինում, տանը ուտելու բան չի լինում: Հերիք է քաղաքականությունից ու ազգից խոսես, ուրիշները ազգ չունե՞ն... Հենց միայն դո՞ւ...

- Ուրիշներն էլ ունեն, դու չես տեսնում...

- Էլ դիմանալու ուժ չունեմ,- կինը լաց եղավ:

- Ալվարդ, կարճ ժամանակով եմ եկել, արի իրար հասկանանք,- Առնոն խեղճացած մոտ քաշվեց, շոյեց կնոջ շեկ մազերը:

- Վախենում եմ քեզ համար,- կինը սրբեց աչքերը:

Աները ներս մտավ մի արկղ դրեց տան անկյունում:

- Հա՞, երկաթ-մերկաթ կլինի, զենք ես սարքում:

- Հա, զենք եմ սարքում:

- Վտանգավոր չի՞, Առնո:

- Վտանգավոր է, բայց որ ամենքս մի կողմ քաշվենք, ինչ կլինի... Օրերով քերծերում, անտառներում ենք ապրում...

- Հա գիտեմ, ձեր բարձը քարը պիտի լինի, դոշակը՝ սարը,- նորից հեգնանքի անցավ կինը:

- Լավ, վեր կաց, պայուսակը բացիր, երեխաների համար խաղալիքներ, ալբոմներ ու մատիտներ եմ բերել: Անահիտս նկարիչ պիտի դառնա, թող նկարի:

Երեխաները մանկապարտեզից եկան ու հոր գիրկը լցվեցին:

- Հիմա ձեզ համար փոքրիկ աթոռներ կսարքեմ, երեք արջուկի հեքիաթի նման: Ալվարդ, մուրճս, մեխ, տախտակ...

Կես ժամ հետո աթոռակները պատրաստ էին, շրջեց սիրուն-սիրուն մնռագրով հատ-հատ նախշեց երեխաների անունները՝ Անահիտ, Արմենիկ, Աստղիկ:

- Բա մյուս աղջկա համա՞ր...- Հաշտ-համերաշխ՝ կոկետության անցավ Ալվարդը:

- Մյուսը Արամազդ է լինելու: Ինչքա՞ն մնաց...

- Դեռ շատ կա,- կինը կոնկրետ ժամանակ չնշեց:- Լսել եմ, որ ճանապարհները վտանգավոր են, քարկոծում են:

- Մի անհանգստանա: Ինձ բան չի լինելու: Գիտես, չէ՞, որ եկեղեցում եմ ծնվել:

- Ի՞նչ եկեղեցի, չես պատմել:

- Խորհրդային տարիներին եղցահողի եկեղեցին բաժանել էին երկու մասի, մի մասը դարձրել ուսուցչի տուն: Հայրս այն ժամանակ դպրոցում տնօրեն էր աշխատում...

Երկուսով տրվեցին քաղցր զրույցի բացառիկ պահին:

Ազգամիջյան հակամարտությունը օրեցօր ավելի սուր բնույթ էր ստանում: Ճանապարհներին սկսվել էին քարե պատերազմները: Տեղաշարժը կատարվում էր հավաքական խմբերով եւ զինվորների ուղեկցությամբ:

Ստեփանակերտ-Հին Շեն ավտոբուսը հենց հասել էր Լիսագորին, խաժամուժը դեմը կտրեց: Ավտոբուսը ընթացքը դանդաղեցրեց: Չորս կողմից քարեր էին թռչում, ապակիները ջարդվեցին, կանայք ու երեխաները լացուկոծ դրեցին:

- Գոնե օդում կրակեք՝ փախչեն,- Առնոն գոռաց ուղեկցող զինվորների վրա:

- Չենք կարող, հրաման չունենք:

Հինգ տարեկան Մասիսը Բելայի գրկում ճվճվաց: Ապակու մանր կտորները լցվել էին երեխայի աչքերը: մայրը իրեն չկորցրեց, անմիջապես սկսեց լիզելով հանել մակերեսին գտնվող ապակու փշրանքները: Հետո Ստեփանակերտի հիվանդանոցում երեխայի ուռած, կարմրած, արդեն թարախակալող աչքերի կոպերից մանր փշրանքներ հանելիս բժիշկը պիտի զարմանար ու հիանար մայրական բնազդի վրա:

Քարերի տարափը չէր թուլանում: Առնոն ձեռքը մեկնեց, զինվորը զգալով, որ խլելու է ավտոմատը, դուրս եկավ, կրակեց օդում: Ամբոխը տեղի տվեց, հետ քաշվեց: Ջարդված ավտոբուսը հենց հասավ Տասը Վերստ, դիմացի ոլորանից մի փակ բեռնատար դուրս եկավ: Առնոն, Սերոն, մյուս տղամարդիկ իջան եւ ակն ընդ ական: Քարեր են թռչում դեպի բեռնատարը: Հայ վարորդը մի քար վերցրեց ու խփեց դիմահար ապակուն: Տասը Վերստից մի քանի մեծահասակ կանայք աղմուկ-աղաղակով տղամարդկանց դեմը կտրեցին.

- Վե՛րջ տվեք: Ձեր դիրքը ապահով է, մենք ճանապարհի վրա ենք: Գիշերը գալու են մեզ վառեն-կոտորեն,- կանայք քարակոիվը թափեցին:

Պատերազմն արդեն սկսված էր, ու քչերն էին միայն դա հասկանում:

Կասյանների դատարկ հայրական տանը, որ ծառայում էր որպես շտաբ, մահճակալ էր դրված, եւ Առնոն արդեն տուն չէր գնում, գիշեր ու ցերեկ մնում էր այստեղ: Պատին փակցված են ամենատարբեր ժամանակաշրջանների քարտեզներ «Մեծ Հայքը՝ մ.թ.ա. 2-1-ին դարերում», «Արեւելյան Հայաստանը ըստ Բաքումի պայմանագրի (4. 6. 1918թ.)», իր ձեռքով գծած Բերդաձորի երկու քարտեզները տարբեր մասշտաբներով, տարբեր նշանակության, տարբեր ժամանակաշրջանների նախախորհրդային եւ խորհրդային, որտեղ սեւացրած փոքրիկ շրջանագծերով նշանակված են դատարկված հայկական գյուղերը՝ Փափախչի, Կաշտահող, Քրազեկ, Սեծ Խերխան, Փոքր Խերխան, Շորեն Թալա, Չորան Գյունե, Հինգիզվեղ (Գերեզմանահող), Թեւանատուն, Թումասեռ, Իլանանց, Բռղավար: Պայմանական նշաններով նշված են բերդերը, ամրոցները, եկեղեցիները, լեռնագագաթները, ճանապարհներ, գետեր ու գետակներ:

Առնոն պատից պոկեց «Արցախի Բերդաձոր գավառը» քարտեզը, փռեց սեղանին ու բացատրություններ էր տալիս: Խեչոն անկյունում մահճակալին նստած, հրացանն էր մաքրում, գործ չուներ նախկին գավառների պատմության ու աշխարհագրության հետ: Ասել են՝ պիտի գնաս սահմանը պահես, եկել է: Սա հայի հող է, ազերին ուզում է գրավել՝ ինքը չպիտի թողնի, իր հողի, իր սահմանի վրա կանգնած է. թշնամին գա, կխփի՝ կսպանի: Իսկ Սաքոն կլանված լսում էր Առնոյի բացատրությունները.

- Ոնց որ ձեռք կպած չլինի, էս ո՞նց ես գծել, Առնո,- Սաքոյի խաժ աչքերը հիացմունքից փայլում էին: - Վերջում ինձ կտա՞ս,- խնդրեց:

- Վերջո՞ւմ... Կտամ ու կգրեմ՝ հիշատակ...

- Հրամանատարից՝ ֆիդայի Սաքոյին,- խոսակցությանը խառնվեց Խեչոն:

Արմոն ներս մտավ: Առնոն եղբոր կողմը չնայեց, բայց զգաց ներքին պնկոծությունը:

- Մինչեւ ե՞րբ պիտի առանց զենքի պոստ կանգնեմ:

Առնոն հարցը ականջի հետեւ գցեց: Արմոն կրկնեց հարցը:

- Քիչ է, չի հերիքում:

- Հենց միայն ինձ չի հերիքում, հա՞:

Նաեւ՝ քեզ:

- Տուր, Առնո, տղան պոստ է կանգնում,- միջամտեց Սաքոն:

- Դրա իրավունքը դեռ չի վաստակել,- փորձեց խոսակցությունը փոխել:

- Կյանքիս կեսը տվել եմ, ուրեմն, դեռ արժանի չե՞մ,- ու ծգեց բլուզը՝ բացելով ազերիի դանակի հետքերը:

Արտաշը մահճակալին նստած՝ ավագ եղբայրների վեճի վրա քթի տակ ծիծաղում է. ինքը ավտոմատ ունի, բայց իմանալով Արմոյի բնավորությունը, որ զոռով կվերցնի, գաղտնի է պահել:

Առնոն մահճակալի տակից ծգեց արկղը ու մի կարաբին հանեց:

- Սա՞ է,- հեգնեց «որսկանը»: 11 տարեկանից տնից թաքուն վերցնում էր հոր որսորդական հրացանը ու երբեք դատարկ տուն չէր գալիս: Մայրը տապակած կաքավները դնում էր սեղանին, հայրը դպրոցից գալիս, հացի էր նստում, բայց սեղանից վեր կենալուց հետո տղային կանչում ու ապտակ էր տալիս. «Շան որդի, մեկ էլ չտեսնեմ, բա որ հանկարծ մա՞րդ սպանես»: Երեխաները բնավորությամբ մեկը-մեկից խիստ տարբեր լինելով, բոլորն էլ հորից ժառանգել էին կամք, համառություն, ինքնուրույն ու կշռադատված քայլեր կատարելու հատկանիշ, որը իրեն զգացնել էր տալիս, հենց որ հատում էին պատանեկության սահմանը:

- Սա՞ է,- կրկնեց Արմոն ձեռքին շուռումուռ տալով ինքնաշեն կարաբինը:- Բայց սա շեղ է խփելու,- տղան ուշադիր զննելուց հետո՝ գտավ թերությունը:

- Առայժմ ուրիշը չկա:

Արմոն գիտեր, որ հակառակվելը անիմաստ է, վերցրեց ու դուրս եկավ:

Մի քանի օր անց, երբ մտավ շտաբ, քայլվածքից ու տրամադրությունից Առնոն կռահեց, որ հրացանը սարքել է: Ձեռքն առավ կարաբինը, շուռումուռ տվեց.

- Բայց հիանալի է... Հիանալի ես սարքել: Այսուհետ քեզ զենքերդ կտամ՝ կսարքես:

- Կսարքեմ:- Ուրախությամբ համաձայնեց եղբայրը:

Մի քանի օրից հետո Արմոն գնացել էր Ստեփանակերտ ծորակի համար այլուր բերելու: Առնոն Արտաշին ուղարկել եւ տնից սարքած կարաբինը բերել էր տվել:

Արմոն կատաղությունից պայթելով մտավ շտաբ.

- Առնո, զենքս:

- Տվել եմ ուրիշի:

- Ո՞ւմ:

- Նրան, ով ամեն օր պոստ է կանգնում:- Առնոն կարաբինը ուղարկել էր եղցահող, Հրաչիկի տղաներին:

- Ես չարչարվեմ, սարքեմ, դո՛ւ ...

- Բարի, էլի կտամ՝ կհավաքես, կպահես քեզ: - Հետո կատակի տվեց:- Զենքը ինչի՞դ է, դու այլուր կրող ես:

- Կամ զենքս տուր, կամ ոչ մի հանձնարարությունդ չեմ կատարելու - եղբոր կատակից վիրավորված պայթեց Արմոն:- Նույնիսկ պոստ չեմ կանգնելու:

- Քեզնով չի՞ կկանգնես: Չկանգնես՝ կկրակեմ,- Առնոն ասաց շատ հանգիստ, անվրդով եւ լուրջ:

Անդրանիկ Հարությունյանը եղբայրների վեճին չէր միջամտում:

- Առնո, Արմոն էն տղան չի, որ զենք չունենա, արդարամիտ չես,- Սաթոյի միջամտելը արժանացավ Առնոյի խիստ հայացքին:

- Մուսալեռցի, իսկ դու ունե՞ս քո անձնական գաղտնարանը: - Առնոն դիմեց Սաքոյին, եւ շտաբում գտնվողները հասկացան, որ խոսակցությունն ավարտված է:

- Ոչ:

- Ամեն ֆիդայի պիտի ունենա իր գաղտնարանը:

Հաջորդ օրը Սաքոն Առնոյին տարավ Դալամա Սահակի տուն, ուր ինքը ապրում էր.

- Դե, գտիր իմ գաղտնարանը:

- Կգտնեմ:

- Չես գտնի: Գրազ գանք:

- Ինչո՞վ:

- Եթե չգտնես, ավտոմատ ես տալու:

Առնոն փնտրում ու հանձնվում է.

- Պարտվեցի, Սաքո, զենքը ստացար:

Արմոն շտաբից դուրս էր եկել ներքուստ վրդովված եւ հաստատ որոշումով, որ մինչեւ իր սեփական զենքը չունենա, ոչ մի հանձնարարություն չի կատարելու:

Որոշ ժամանակ անց, երբ ազերիները վառել էին անասնապահական ֆերման, հեռուստատեսությունից եկել էին նկարահանման: Առնոն հանձնարարեց Արմոյին, որ նրանց տանի ֆերմա:

- Հիմա էլ չե՞ս զենք տալիս, ախր դիրքերին շատ ենք մոտենալու, վտանգավոր է:

Առնոն ափերից դուրս եկավ.

- Ինձ ժողովրդի մոտ խայտառա՞կ ես անում... Սերժիկ, նստիր մեքենան:

Արմոն ատամները ջղայնությունից կրճտացրեց, բայց մեքենայի բանալիները չտվեց, նստեց ղեկի մոտ ու կատարեց հանձնարարությունը:

Երեկոյան, տանը ոչինչ չասաց, բայց հացի սեղանին չմոտեցավ:

-Հասկացիր, չի հերիքում: Քեզ ո՞նց տամ ուրիշներին թողնեմ,- արդարացավ Առնոն:

Առնոն զանգեց եղբահող.

-Վիլեն, գործ կա, եկեք:

Ոպրոցի տնօրենը Ռոմային կանչեց, գնացին:

Հին Շենի շտաբը լիքն էր, Վիլենը հասկացավ, որ աշխարհազորայիններ են, նոր են եկել, սովորականի պես Առնոն ոգեւորված պատմում է.

- ...Սա պատմական Հայաստանի, սա Խորհրդային Հայաստանի քարտեզն է, ինչպես տեսնում եք, Լաչինի տարածքը բռնակցված է Ադրբեջանին: Ցույցերով, լաց լինելով ոչնչի չենք հասնի: Ադրբեջանը մեզ պատերազմի մեջ է քաշում: Զենքով պիտի ճեղքենք Լաչինի միջանցքը եւ միանանք Հայաստանին,- Առնոյի ոգեւորությունը հասավ գագաթնակետին:

- Ես ի՞նչ է խոսում,- Ռոման բոթեց Վիլենին:

- Սուս,- սաստեց Վիլենը, որ ուշադիր սկսեց լսել իր նախկին ուսուցչին:

- Թուրքը վախկոտ է, նա գոռի բնավորություն ունի, դեմ դիմաց կռվում միշտ պարտվում է, բայց արծիվ է կտրում, երբ հայը անզեն է կամ ձեռքերը կապված: Ասեմ նաեւ թշնամուն թերագնահատելը սխալ կլինի: Մենք միշտ զգոն պիտի լինենք եւ զենքին մոտիկ:

- Հայը պետք է զենքը միշտ բարձի տակ պահի,- Զորավար Անդրանիկի խոսքը բարձրաձայնեց աշխարհազորայիններից մեկը:

- Այո: Պատմությունը ցույց է տվել, որ խնդրելով ոչնչի չես հասնի: Ծովից ծով Հայաստան ենք ունեցել, տեսեք,- Առնոն ցուցափայտով քարտեզի վրա ցույց է տալիս:

Ռոման նորից կռացավ Վիլենի ականջին.

- Իմ արեւ, Առնոն ցնորվել է... Մի տեսակ է խոսում, ոնց որ ուշքը...

Վիլենը նստարանի վրա ընկերոջից հեռու քաշվեց, որ իրեն չխանգարի լսելու Ուսուցչին հրամանատարին:

- Մեր նախնիները ներում չունեն, որ կորցրել ենք մեր երկիրը: Վաղն էլ մեր սերունդները չեն ների մեզ, որ Արցախը կորցնենք,- Առնոն խոսում էր համոզված, եւ աշխարհազորայինների աչքերում ապշանք ու զարմանք կար: Զրույցը վերջացրեց, անցավ հրահանգներին.

- Վիլեն, Վարդենի գյուղի տղաներն են, տեղավորվելու են եղբահողում:

Ծանոթացան Օնիկ, Սամվել, Իշխան, Զավեն... Թվով 12 հոգի: Վերոյալոծան գյուղ, մտան շտաբ, ուր Հրաչիկի ջոկատի տղաները սպասում էին. Գրիգորյան Նորիկը, Նասիբյան Էդոն, Գրիգորյան Կարենը, Հովսեփյան Գեղամը, Հակոբյան Արտիկը, Հարությունյան Կարոն, Երեմյան Սենիկը, Պետրոսյան Վաչիկը, Եդիգարյան Էդոն, Սիմոնյան Վախթանգը, Թաիրյան Ժիրայրը, Նվերը, բարձր դասարանցիներ Արտակը եւ Վոգոն: Շտաբի համար ընտրել էին գյուղի ծայրին մի լքված տուն մեկուսակաի, երկու սենյակով: Մեկը որպես ննջարան էր ծառայում, մյուսը խորհրդակցությունների համար էր: Եկածներին բաժանեցին գյուղի տներին, իսկ մինչ այդ Հրաչիկը նորից քննարկել ու վերջնականապես գտել էր պահակակետերի հարցը: Որոշեցին պաշտպանական երեք կետերը ստեղծել գյուղի շրջակա երեք բարձունքների վրա հետեւյալ կազմավորմամբ: Թիվ 1 պահակակետից երեւում է Բերդաձորի տարածքը մինչեւ Լաչին, մինչեւ Լիսագոր: Այստեղից հսկվում են մայրուղուց գյուղ մտնող հիմնական ճանապարհը եւ Լաչինից գյուղ կածանը, որով գալիս մարդն ու ձին են անցնում: 2-րդ պահակակետը դրվեց գերեզմանոցի բարձունքին, որպեսզի Կանաչ Թալայի, Լիսագորի հարձակումներից պաշտպանվեն: Թիվ 3-ից Կալ կոչվող տեղամասում պիտի հսկվին ազերիներով բնակեցված Խրմանլարից եկող խճուղին, Սեիդտարով դուրս եկող շարժումը:

Սկզբում պոստ էին կանգնում լավագույն դեպքում որսորդական հրացաններով, կացնով, եղանով, դանակով ու քրով: Կանգնում էին սահմանագծելու համար: Առնոն հրահանգել էր, որ հավայի փամփուշտ կրակեն, նախ փամփուշտի պակասություն կար, երկրորդ ժողովուրդը խուճապի կմատնվի: Ժամանակ անց ստացան Հաճնի կարաբիններ, բայց անհաջող: Մի անգամ որ կրակում էին, պարկուճը ձողով խփելով, մի կերպ հանում էին, եւ ժամանակ էր կորչում:

Զենքի թաքստոցները եւ գյուղի ներսում էին, բակերում, բանջարանոցներում, ասբեստե խողովակների մեջ, տանիքներում, եւ գյուղից դուրս 200-300 կմ հեռավորությամբ անտառի մեջ, ծառերի տակ փորած փոսերում, ճյուղերով ու խաշամով քողարկած: Ստեփանակերտից ոստիկանության եկած առաջին ջոկատում կային 10-12 հոգի, մեծ մասը տասնոնոներ: Առնոն ընդունել էր, ցուցակագրել, ուղարկել եղբահող: Շտաբում Հրաչիկը ընդունեց:

- Նորայր Դանիելյան, Մարտակերտից,- ծանոթացան:
- Ալիկ Սարգսյան, Կոծողոտից:
- Դավիթ Իշխանյան, Աշանից:
- Հայկ Աղաբեկյան, Վաղուհասից:

- Մասիս Սուլեյմանյան, Մարտունուց:
- Ֆելիքս Գաբրիելյան, Ստեփանակերտից:
- Արմեն Մելքումյան, Մաճկալաշենից:
- Տեղանքը պիտի ուսումնասիրենք,- ասաց Դանիելյան Նորայրը, եւ անմիջապես բարձրացան դիրքերը:

Հարությունյան Կարոյի հետ մթության մեջ առաջանում են, հասնում մինչեւ Բիգիրգյան տեղամասը, հետո թեքվում դեպի ձախ՝ բարձրանում Հեմնին թումբը, որտեղից երեւում են Խրմանլարի լույսերը: Հաջորդ օրը ցերեկով Նորայրը նորից առաջարկեց, ու ոտքի տակ տվեցին շրջակայքը: Պետք է գալու՝ ասաց: Այդ օրը ազերիները եկան մոտեցան, Հախունց խութից եւ Կարմիր քարի բարձունքից ավտոմատներով կրակեցին: Պատասխան կրակոցներից հետո ամեն ինչ հանդարտվեց: Երեկոյան, շտաբում, ինչպես միշտ, քննարկեցին օրվա դեպքը եւ որոշեցին ազերաբնակ Կանաչ Թալայի եւ Եղցահողի մեջտեղում, լքված նախկին հայկական Դաշտահող բնակավայրում, որտեղ ֆերմաներն են, լրացուցիչ չորրորդ պահակակետն էլ դնել:

1989-ի աշունն էր, հոկտեմբերի 5-ը, եւ նշվում էր Ուսուցչի օրը: Գեղամը գնում է Մեծ Խերխան տեղամաս, ծին բերելու: Հազիվ էր ծիու գլուխը շրջել դեպի գյուղ, երբ դարան մտած ազերիները սկսեցին կրակել: Գեղամը ձին չափ գցեց: Կրակոցների վրա գյուղը հարայ-հրոց ընկավ: Տղաները միայն գիշերն էին պոստ կանգնում, եւ ազերիները օգտվել էին դրանից: Ում ձեռքին ինչ կար՝ հրացան, կացին, եղան, բոլորը վազում են դեպի Մեծ Խերխան: Տեղի ունեցավ փոխհրաձգություն, որը կարճ տեւեց, նորից ամեն ինչ հանդարտվեց:

Հաջորդ օրը Պետրոսյան Հրաչիկը, սովորության համաձայն, մենակ գնում է հետախուզության: Իրիկնանում էր: Տրակտորով բարձրացել-հասել էր Խրմանլար գյուղի բարձունքը՝ Բիգիրգյան տեղամասը: 20 մետր մնացած մինչեւ տրակտորը հասնի իրենց, 5-6 ազերիներ սկսում են ավտոմատներով կրակել: Հավանաբար, նրանք էլ էին հետախուզության դուրս եկել: Հրաչիկը տրակտորից ցատկում է, անցնում թմբի հետեւը, բայց իրենից անբաժան ավտոմատը հասցրել էր ճանկել: Փոխհրաձգության ժամանակ գնդակը դիպչում է ձախ ձեռքի բազկին: Հրաչիկը կրակելով նահանջում է եւ օդի մեջ բաց թողնում երկու կարմիր լուսարձակիչ փամփուշտ, որը արտակարգ պատահար ազդարարող ծածկանշանն էր: Երբ տղաները զինված բարձրացան, ազերիներն արդեն փախել էին:

Գրեթե երկու օրը մեկ ազերիները հարձակումներ էին գործում:

Տղաներին եղցահող ուղարկելուց մեկ շաբաթ հետո Առնոն եկավ այստեղ:

- Հը՞, ինչպե՞ս եք տեղավորվել,- հարցրեց ընդառաջ եկած տղաներին:

- Շատ լավ: Տեղանքն արդեն ինչ-որ չափով ուսումնասիրել եմ,- Նորայրի խաժ աչքերը ոգեւորությունից փայլում էին:

- Հրաչիկը հիանալի մարդ է,- վրա բերեց Դավիթը:

- Էս ծորակում նա իմ աջ թեւն է,- գովեստի մեջ ժլատ Առնոյի այս խոսքերով ամեն ինչ ասված էր:

Առնոն տղաներին վերցրեց, ու բարձրացան դիրքերը:

Թիվ 1 պահակակետից հիասքանչ տեսարան էր բացվում. բոլորեքյան լեռներ, ժայռեր՝ կտրտված ձորերով, իսկ գյուղի տները քարափի վրա հետաքրքիր կիսալուսնաձեւ դասավորվածությամբ, մեկհարկանի, կոկիկ բակերով ու աղքատիկ բանջարանոցներով: Քարափը, որի վրա գյուղն է, ավազախիճի բաղադրություն ունի եւ բացառիկ դարաբաղյան գյուղերից է, ուր բացարձակ ցեխ չի լինում, անձրեւները հոսում են ձորերը, ավազախիճն էլ ջուրը չի պահում, մնում է չոր-չոր: Երկու ձոր գրկած՝ պահում են կիսաշրջանաձեւ քարափը, որի վրա թառած տները հեքիաթի խրճիթների տպավորություն են թողնում: Ձորի մեջ ընկուզենու եւ տխիլի դարավոր անտառներ են փռված:

Եղցահողի հեռավորությունը Ստեփանակերտից 49 կմ է, Շուշիից 17, բարձրությունը ծովի մակարդակից՝ 1500 մ: Գյուղի շրջակայքում կան հին բնակատեղիներ, հին գերեզմանոցներ, դամբարանադաշտեր:

Անունը երկու բացատրություն ունի,- լռությունը խախտեց Առնոն,- Կիրանցու հող, այստեղ, որտեղ մենք կանգնած ենք, եկեղեցի է եղել, քարերն էլ ցրված են տարածքում: Բարձունքը հենց կոչվում է Եղցուն հուր: Մի այլ բացատրություն էլ կա՝ եղծված, հերքված հող: Նայեք, գյուղի տարածքում բուսականությունը շատ աղքատիկ է, ծառը դժվար է աճում: Բերդաձորի մասին տեղեկությունները գալիս են 5-րդ դարից,- տղաներին չէր զարմացնում Առնոյի գիտելիքների հանրագիտարանային պաշարը:

Երկու-երեք թռուցիկ հանդիպումը բավական է եղել, որ մտերմանային ու համախոհ լինեին, Նորայրի անկեղծ ու պոռթկուն խառնվածքը հատկապես սիրելի էր հրամանատարին: Տղաները մի քանի հարյուր մետր առաջ գնացին ու զարմանալի քարակույտեր տեսան:

Սրանք կարկառներ են, բարբառով կոչվում են «կաշկառներ»,

սրանցից կան նաեւ Մեծ Խերխանի տարածքում: Նայեք, այստեղից երեւում է անտառապատ լեռնաշղթան, որը կոչվում է Չալեն, ամենաբարձր գագաթին կաշկառ կա: Այդ քարակույտերից կան նաեւ Հին Շենի տարածքում՝ Կիրահողում եւ Արզումանենց տափում: Կաշկառների վերեւից քարերը այնպիսի վարպետությամբ են շարված, որ գոյացել են քառակուսի անցքեր: Անցքից ներքեւ աստիճաններ են փորված, որով մարդ մի քանի մետր կարող է իջնել ներքեւ, որտեղից ստորգետնյա անցուղիները ծռվում են տարբեր ուղղություններով: Կաշկառների անցքերով մարդիկ իջել են իրենց ապրելու տները:

Տղաները լսում ու զարմանքով դիտում էին քարերը. դրանք եւ անտաշ ժայռաբեկորներ էին, եւ հարթ սալաքարեր կային, այն էլ հսկայական, տոննանոց, նույնիսկ ժամանակակից տեխնիկայով դրանք հնարավոր չէ բարձրացնել լեռների գագաթը:

Առնոն այնքան պատկերավոր էր պատմում, ու շրջակայքը այնքան կախարդական ազդեցություն էր թողել, որ տղաները խառնել էին հեքիաթի ու եղելության զգացողության սահմանները: Տղաները նույնիսկ մոռացել էին այն առաքելությունը, որի համար եկել էին եւ ըմբոշխնում էին պահի գեղեցկությունը, լեռների խաղաղությունը եւ Ուսուցչի խոսքը:

- Դպրոցում էինք սովորում, ընկերոջս հետ գնացել էինք հոր մոտ՝ հորթերը պահելու,- շարունակում է պատմել Առնոն:- Բախշյան Սարգիսը իր պապերից լսել է, թե հնում, շատ հնում ցեղերը սահմանները նշել են այդ կարկառների՝ քարակույտերի միջոցով: Մի այլ կարծիք էլ գոյություն ունի, թե իբր, դրանք բնական գոյացումներ են, որ նույնն ջրհեղեղը լեռներից քշել-քաշքշել-պոկել է, ու երբ ջրերը հանդարտվել ու իջել են, բարձունքներում մնացել են հսկայական քարակույտերը:

Իսկ Սահակ պապի պատմածներից Առնոն հիշեց, թե դրանք նախամարդու բնակատեղիներ են եղել, թե դրանց տակ վիշապներ են բնակվում, ու հովիվները երեխաներին զգուշացնում էին հոտը, նախիրը հեռու պահել կարկառներից:

- Նայեք,- տղաները հեռվում տեսան մի երկարավուն բարձր քարափ,- դա Ղարակապն է, հիմա ավելի հեռուն նայեք,- ցույց տվեց Զանգեզուրի սարերը,- տեսեք՝ ինչքան նման են իրար, ոնց որ իրար շարունակություն լինեն, կտրտվածությունը Նոյյան ջրհեղեղից է առաջացել, մինչ այդ եղել է մեկ ամբողջություն:

Տղաները ոչ դպրոցում, ոչ ինստիտուտում, ոչ էլ գրքերում նման պատմություններ ոչ լսել էին, ոչ կարդացել: Առնոն Ղարակապի բացատրությունը եւս տվեց: Ղարա՝ պարսկերեն եւ մոնղոլերեն նշանակում է մեծ, Մեծ Կապ, նույն ձեւով՝ Ղարա-ղշլաղ՝ մեծ գյուղախումբ, Ղարա-բաղ՝ մեծ այգի, ճիշտը, ստույգը, գիտականը սա է, իսկ ժողովրդական ստուգաբանությամբ Սեւ Կապ է կոչվում, քանի որ վեր խոյացող երկու ժայռերի միջեւ գտնվող ձորում շատ սպանություններ են եղել: 1918-ին էր: Եղցահողցի Բախշյան Հաբին Շուշիից նավթ առել, անցնում էր Ղարակապով: Երկու հոգի, քոչվոր վայրի ցեղից, հետապնդում են: Մեկը գոչում է.

- Նավթը դիր, գնա: Դու մեզ պետք չես:

- Նավթը դնողը չեմ, գնացե՛ք ձեր գործին:

Կրակում են: Գնդակը դիպչում է գոտիի արծաթին: Հաբին մեռած է մնում: Թուրքը մոտենում է, որ նավթը վերցնի, կրակում է, մեկը սպանվում է, մյուսը փախչում: Երկու օր հետո փախածը հետ է գալիս, ընկերոջը թալանում, շորերը տանում: Առնոն պատմեց նաեւ, որ ինքը երեխա ժամանակ Ղարակապում վայրի այծեր է տեսել, որոնց եղջյուրները 80-100 սմ-ի են հասնում, քաշը 60-80 կգ-ից ավել է լինում: Դրանք շատ զգույշ կենդանիներ են ու դժվար որսալի, հայտնվում են, ու ակնթարթային անհետանում քարերի մեջ ու քարերի էլ գույնն ունեն:

- Ղարակապով է անցնում Պարսկաստան-Շուշի-Գանձակ-Շամախի-Թիֆլիս-Դերպենտ առեւտրական մեծ ճանապարհը,- ապա Առնոն պատմեց Ղոնաղանց Սահակի եւ Սաֆարի եղբայրների մասին, Քյառա Բախշիի մասին, որի ականջը թուրքերը կտրել են, հետո սկսել է վրեժ լուծել ու նրա ահից գյուղին մոտ չեն եկել:

- 1918-ին գյուղը բռնագաղթեց, նորից հետ եկան: Շրջանի ղեկավարությունը, քանի որ ազերիների ձեռքին էր, հայկական գյուղերը դատարկելու քաղաքականություն էր վարում:- Նրանք բնազդով քաղաքագետ ու հեռատես են: Թուրքը բարբարոս, բայց արթուն քաղաքական բնազդով օժտված ազգ է,- Նժդեհի խոսքն է: Նրանց պետական այրերը ազգայնամոլ են ու ազգային շահը միշտ բարձր են դասում, մեր ղեկավարները կոսմոպոլիտ (աշխարհաքաղաքացի), կարճ ազգային հիշողությամբ, ազգի համար կարճամիտ, կաշառակեր են ու միայն իրենց գրպանի համար են հոգում, այլապես այդքան արագ հայկական գյուղերը չէին դատարկվի: Նույնիսկ թույլ դիմադրություն չկար: Ժողովուրդների բարեկամության գաղափարը միայն մեզ՝ հայերիս համար է,- Առնոն ցույց տվեց մոտիկ տափարակում երեւացող պատերի մնացորդները:- Մեծ Խերխանն է, մայրս այնտեղից է, վերջին 20 ընտանիքը 1960-ականներին արդեն ստիպված լքել է գյուղը: Նայեք, եղցահող բարձրացող խճուղու աջ ափին Փոքր Խերխանն է, ավելի շուտ է դատարկվել:

Զրույցը հեռուներից կամաց-կամաց վերադարձավ այն ժամանակները, որի մեջ ապրում են: Եղցահողը ավելի, քան ձորակի երեք գյուղերը, գտնվում է պաշարման մեջ: Վերին Լաչին գյուղից բարձրանում Կարմիր քարից որսորդական հրացանով կրակում, գնդակներն ընկնում էին գյուղի տանիքներին: Խրմանլարցիներն էլ Հախունց Խուբից, շատ մոտիկ տարածությունից էին կրակում: Կանաչ Թալայի ազերիներն էլ գալիս Դաշտահողից էին կրակում:

Եթե Շարժումը չսկսվեր, գյուղը կհայաթափվեր: 1988-ին այստեղ 28 ընտանիք կար, միայն երեք երիտասարդ: Երբ տղաները քաղաքից եկան, գյուղը վերածնունդ ապրեց: Ընտանիքների թիվը հասավ 41-ի: Ստեփանակերտից տարբեր ժամանակներում վերադարձել էին Պետրոսյան Հրաչիկ, Բենիկ, Ռուդիկ, Վաչիկ եղբայրները իրենց ընտանիքներով, Ռոմա, Յաշա, Վովա Նասիբյան եղբայրները, Սաշա եւ Սլավիկ Հովակիմյանները, Հակոբյան Արամայիսը, Սարգսյան Վիտալին, Սարգսյան Հենրիխը, Հարությունյան Կամոն, Բոգիյան Բորիսը, Զաքարյան Ռոման, Նասիբյան Հրաչիկը, Աբրահամյան Ռեւիկը... Այդինյան Կարենը կարի արտադրամաս էր բացել, որտեղ 15 հոգի էին աշխատում:

- Էս հողի վրա հայը պիտի ապրի, որտեղացի ուզում է լինի,- ասաց Առնոն, ու իջան գյուղ, շտաբ, Հրաչիկի հետ որոշելու առաջիկա անելիքները. ազերին ոտքը առաջ էր դրել, պետք է խփել...

1989-ի աշունն էր: Ազերիները ոչխարը տանում էին սարը ու չգիտեին, որ վերջին անգամ... Կեսգիշերն անց էր, գերեզմանոցի պահակակետում հսկում էին Հրաչիկն ու Կարենը: Մայրուղուց ոչխարների մայունը եւ շների հաչոցը գիշերվա խաղաղության ու անդորրի մեջ լսելի էին:

- Գնացինք,- վեր կացավ Հրաչիկը:

Կածանով իջնում են դեպի մայրուղին: Որսորդական հրացաններով են եւ ինքնաշեն նռնակներով: Հոտը մակաղել, հովիվները հանգստանում էին: Տասը Վերստի կողմից երկու ԿամԱԶ են գալիս թափքերը դատարկ:

- Առաջին մեքենան բաց ես թողնում, նռնակը շպրտում երկրորդի թափքի մեջ,- ասաց Հրաչիկը:

Կարենը պատրույգը վառեց ու շպրտեց: Նռնակը ուղիղ թափքի մեջ՝ պայթեց: Տղաները գիտեին, որ ոչ մեքենային, ոչ հոտին վնաս չի լինելու, պարզապես ուզում էին ցույց տալ, որ կան, որ իրենք էլ կարող են ինչ որ բան անել:

Մեքենան սլացավ հոտի միջով, իսկ տղաները հետ դառան:

Հաջորդ օրը Բաքվի հեռուստատեսությամբ «Խաբարլար» («Լուրեր») հաղորդվում է, թե «հայ ավազակախմբերը հարձակվել են սար բարձրացող հովիվների ու հոտի վրա, կոտորել են 300-ից ավել ոչխարներ»:

- Սրանց սուտը միշտ շատ է լինում ու ճշմարտության տեղ էլ անցնում է,- ասում է Հրաչիկը: Տղաները ծիծաղում են. իրականում ընդամենը մի քանի ոչխար էր սատկել, այն էլ ընկել էր նրանց մեքենայի տակ:

Այդինյան Կարենն ու Յաշան հսկում են գերեզմանոցի պահակակետում: Արտոն ու Գենոն էլ իրենց պոստը թողել-եկել էին, որ ժամանակ անցկացնեն: Գիշերվա ժամը 11-ն անց էր: Շուրջն էլ ամեն ինչ խաղաղ էր. Անհանգստության ոչ մի նշան չկար: 1989 թվականն էր, դեռ խրամատներ ու բլինդաժներ չէին փորել: Առնոն մի զինվորական վրան էր տվել, խփել էին, հիմա մեջը նստած իրենց թղթախաղի էին տվել:

Տղաները ազարտի մեջ էին, մեկ էլ Հրաչիկը կանգնեց վրանի շեմին: Սովորության համաձայն կեսգիշերին դուրս էր եկել ստուգելու պաշտպանական գիծը ու տեսել, որ պահակակետում մարդ չկա: Խաղաթղթերը ձեռքներին մնացին սառած: Արտոն ու Գենոն վրանից դուրս պրծան, բայց միեւնույն է իրենցը իրենց էր հասել, գիտեին, թե հաջորդ օրը շտաբում իրենց գլխին ինչ օյին է գալու: Հրաչիկի խոսքը ծանր էր, հանդիմանությունը՝ խիստ, ու բոլորը, եւ տղաները, եւ գյուղացիները պատկառում էին նրանից:

Կարենն ու Նորիկը կանգնած են պահակակետում: Քնել չկա, հարեւան պահակակետ «հյուր» գնալ չկա: Խաղաղ գիշեր է: Մեկ էլ մի շլդիկ թիերի տակից դուրս պրծավ ու շշկռված կանգնեց լուսարձակի լույսի տակ: Կարենը ձգանը քաշեց, նապաստակը օդ թռավ ու թրմփաց գետնին:

Գիշերվա ժամը 4-ն էր: Քնած տեղը Հրաչիկը կրակոցի ձայն է լսում ու բարձրանում պահակակետ:

- Էն ի՞նչ կրակոց էր:

- Նապաստակ եմ խփել,-պարծեցավ Կարենը, կարծելով թե լավ բան է արել, արժանանալու է հրամանատարի գովասանքին:

- Որպես պատիժ՝ մի շաբաթ ամեն օր գիշերը պահակության կկանգնես, որ մյուս անգամ փամփուշտ չշռայլես: Փամփուշտները մենք ավելի կարեւոր գործի համար ենք ձեռք բերել: - Ասաց Հրաչիկը, իսկ նապաստակի համով միսը բաժին հասավ Հայաստանից եկած տղանե-

րին: Կարենը համն էլ չառավ, եւ անտրտունջ, անբողոք յոթ գիշեր հերթապահության կանգնեց:

Տարեցները երեք ժամով էին պահակություն անում, ջահելները ավելի շատ էին կանգնում: Շուրան ու Մուշեղը հրաժարվեցին կանգնել, պատճառաբանելով թե ցերեկով շատ են աշխատել, հոգնած են: Այնպես ստացվեց, որ Կարենն ու Նորիկը մթնշաղից ժամը 7-ից մինչեւ լուսադեմ պիտի կանգնեին: Տղաները մտածում են ի՞նչ անեն, որ տարեց մարդիկ էլ պահակությանը ակտիվ մասնակցեն, ելքը գտնում են: Հենց գիշերը կիավում է, կածանով իջնում են գյուղից ներքեւ, կրակում դեպի գյուղ, հետո արագ բարձրանում են պահակակետ, լուսարձակը պտտեցնում տագնապը ուժեղացնելու համար, ու սպասում:

Ժողովրդի մեջ խուճապ է ընկնում, իսկ Հրաչիկը անմիջապես ջոկում է, թե ինչ է կատարվել ու բարձրանում է պահակակետ.

- Ո՞ւր է հրացանս,- հարցրեց սպառնալից:

- Ի՞նչ հրացան,- միամիտ ու չքմեղ ձեւացավ Կարենը,- մոտս իմ հրացանն է:

- Հարիֆ, խելքդ էլ հազիվ էդքան լինի: Շուտ, հանիր հրացանս:

Տղան հրացանը հանեց ու տվեց: Կարենը առիթից օգտվելով, որ Հրաչիկը տանը չի եղել, վերցրել է նրա 12 տրամաչափի հրացանը, որը իրար հետեւից 5 փամփուշտ է կրակում: Կրակոցի վրա Հրաչիկը հասկացել է, որ իր հրացանն է:

- Էս անգամ լավ պրծա,- ասաց Կարենը, երբ հրամանատարը հեռացել էր:

- Էդ դու՛ լավ պրծար, բա քո՞լրդ...- խեթեց Նորիկը:

Հրացանը Հրաչիկի կինը Գյուլչորան էր եղբորը տվել...

- Իսկ էն փամփշտակալը ի՞նչ եղավ:- Թալինի ջոկատը եղցահողում էր, Կարենը Ներսիսյան Ալֆրեդի համար փամփշտակալ պիտի կարեր, ու Ուստա Փիսոյի նման ժամանակ չէր գտնում կարելու, էսօր-էգուց էր անում.

- Վաղը երեկոյան ժամը 10-ին իմ ներկայությամբ փամփշտակալը պատրաստ, քո ձեռքով կապում ես Ալֆրեդի մեջքին,- հանգիստ ասաց Հրաչիկը:

- Բայց դա անհնարին է, ես ոնց հասցնեմ,- իրար անցավ փեսան, բայց գիտեր, որ անհնարինը հնարավոր պիտի դարձնի: Հրաչիկը խոսքը երկրորդ անգամ չէր կրկնում: Նշանակված ժամին փամփշտակալը պատրաստ էր:

Հուլիսյան օր էր, արեւը կծում էր, Կարենը եւ Նորիկը պահակակետում են: Տղաները պառկում են խոտերի մեջ զովանալու: Գյուղ իջնելուց հետո են նկատում, որ մի նռնակը չկա. հավանաբար ընկել էր, ու տղաները չէին նկատել: Հետ դառան, երկու ժամից ավելի փնտրեցին, մինչեւ որ գտան: Գիտեին, որ կորած նռնակի համար Հրաչիկին պատասխան պիտի տան: Պատիժը պատիժ, հասկացողի համար Հրաչիկի մի խեթ հայացքն էլ բավական էր...

- Բա անունս էն ցուցակից ինչի՞ ես հանել,- Կարենի հարցը անպատասխան մնաց:

Շրջափակման հետեւանքով գյուղի խանութը ապրանք չէր ստանում, եւ ծխախոտի մեծ պակասություն կար: Ստեփանակերտի սպառկոոպից ծխախոտ ուղարկեցին: Գյուղում ընտանիք կար, տանը ծխող չկար. բայց առնում էին, ուղարկում քաղաքում ապրող իրենց բարեկամներին: Ցիծաղելի էր, բայց Հրաչիկը մտել էր խանութ ու սկսել ծխախոտ վաճառել:

- Դու փողերը վերցրու,- ասել է վաճառողուհուն, վերջում ցուցակը դրել դեմը.

- Եկած ծխախոտը առաջիկայում ծախում ես այ էս ցուցակով...

Առնոն եւ Անդրանիկը Երեւանի դաշնակցական բյուրոյի ներկայացուցիչների հետ մտան եղցահողի դպրոցի ուսուցչանոց: Նախօրոք Վիլենը Առնոյի հետ գնացել էր Երեւան, այնտեղից գրականություն էին բերել, տղաները ծանոթացել էին կազմակերպության պատմությանը, ծրագրին, կանոնադրությանը, անվանի դաշնակցականների կյանքին ու գործունեությանը:

Դասերը վերջացել էին, տնօրենը ուսուցիչներին տուն էր ուղարկել: Կարեւոր իրադարձություն էր սպասվում: Ջոկատի տղաները հրամանատարի հետ ընդունվում էին դաշնակցության շարքերը:

Առնոն սեղանի վրա դրեց եռագույն դրոշը եւ դաշնակցության դրոշը:

Առնոն իր խոսքում նորից շեշտեց դաշնակցության քաղաքական նպատակները.

Կերտել ազատ, անկախ եւ միացյալ Հայաստան:

Հայաստանը պիտի լինի ժողովրդավարական եւ ընկերական անկախ հանրապետություն:

Միացյալ Հայաստանի սահմանների մեջ պիտի մտնեն Սեւրի դաշնագրով սահմանված հայկական հողերը, ինչպես նաեւ Նախիջեւանի, Վլադիքավկազի եւ Ղարաբաղի շրջանները:

Անկախ Հայաստանի հողի վրա պիտի համախմբվի հայությունը իր տարագիր զանգվածներով:

Թուրքիայի կողմից հայ ազգի դեմ գործադրված եւ ցարդ անպատիժ մնացած ցեղասպանության ոճիրը պետք է դատապարտվի եւ դարմանվի բռնագրավված հողերի վերադարձով եւ վնասների արդար հատուցումով հայ ազգին:

Առաջինը սեղանին մոտեցավ Սիմոնյան Վիլենը: Փռված դրոշի վրա դրված են ծրագիրը եւ կանոնադրությունը, սրանց վրա ատրճանակ, Վիլենը ձեռքը դրեց ատրճանակին, կնքահայրը Առնոն աջ ձեռքը դրեց նախկին սանի, այժմ զինվորյալի ձեռքին , որ դրված էր զենքի վրա. Վիլենը ոգեւորված, խաժ աչքերը ներքին հոգեւոր լույսից պայծառացած, անգիր ասաց երդման տեքստը.

- Երդվում եմ պատվիս ու հայրենիքիս վրա, միշտ հավատարիմ մնալ Հայ Հեղափոխական Դաշնակցության ծրագրին, կանոնագրին ու որոշումներին եւ իմ բոլոր ուժերովս, իսկ եթե հարկ լինի նաեւ կյանքիս գնով ծառայել Հայաստանի եւ հայության ազատագրության դատին:

Մինչեւ երդման արարողությունը սկսելը Հրաչիկը մոտեցել էր Առնոյին, խնդրել.

- Չի լինի՞, որ ես միայն ասեմ՝ կյանքիս գնով կծառայեմ հայության գործին:

Ջոկատի հրամանատարը մոտեցավ սեղանին, ձեռքը դրեց ատրճանակին, մի վայրկյան կանգնեց, մեկ ատրճանակին նայեց, մեկ Առնոյի աչքերին մոռացած, թե ինչ պիտի ասի: Վերջինս երդման տեքստը դրեց Հրաչիկի դեմը ու շշնջաց.

- Կարդա:

Հրաչիկից հետո երդվեցին ջոկատի տղաները՝ Ռոման, Կարոն, Կարենը, մնացածները:

Հրաչիկը հասկացել ու տղաներին բացատրել էր, որ դաշնակցությունը հզոր կուսակցություն է, որ հիմնականում նրանք են ծորակին, զենք մատակարարում, եւ բոլորի սրտում մի մեծ ուրախություն կար. կուսակցության միջոցով զենք են ստանալու, պաշտպանելու են ծորակը: Իսկ ծրագրի ու նպատակների մեջ խորանալու ժամանակ չկար. լավ ըմբռնում էին միայն այն նախադասությունը, որտեղ շոշափվում էր Դարաբաղի անունը:

1989-ի դժվար աշունը կարծես թե չէր վերջանում:

Հոկտեմբերի վերջին օրերն են: Լաչին-Եղցահող ճանապարհահատվածի վրա անհայտ հանգամանքներում սպանվում է մի ազերի անասնապան, որ իջել էր տաքսուց: Հասկանալի է, որ ծորակը լցվում է զինվորներով ու օմոնականներով: Այդ օրը Առստամյան Գառնիկը գտնվում էր Եղցահողում, կոլտնտեսության հաշվապահությունն էլ էր ինքն անում. գործերը վերջացրել, տուն պիտի գնար, հիմա գյուղամիջում կանգնել. չի իմանում ինչ անի: Թունդ հայհոյեց իրադրությունը ապատրաստնացնողներին հատուկ շեշտելով, հայ լինի թե թուրք: Հովհաննիսյան Սաքոն, ածդահա մի ֆիդայի, «հայ» բառի վրա քայլ արեց, բայց Հրաչիկը արմունկից պինդ սեղմեց, այսինքն գործ չունես:

Շուռ տված հայ,- մոլտաց Սաքոն քթի տակ:

Հրաչիկը փոքկացրեց:

Շան որդիներ, չեն թողնում հանգիստ աշխատենք: Ո՞ւմ է պետք իրադարձություններից առաջ ընկնելը: Հրեն, մեզնից խելոքները վերանում նստած են. էլի, հարցը կորոշեն,- անորոշ հասցեով իր կռիվն էր տալիս ինքնակում Գառնիկը մտածելով, թե հիմա ոնց պիտի Եղցահողից տարով հասնի Հին Շեն: Մեքենատերերից ում մոտեցավ, հրաժարվեցին տանել: Ո՞նց տանեին, գիտեին դեպք է պատահել, ճանապարհները լցված են զինվորներով: Բայց ինքը ստիպված է գնալ. զանգել է գյուղ, Պրեռան ասել է դրությունը վատ է, հարձակում է սպասվում: Գառնիկը ինքը վախկոտ մարդ չէ, բայց դե, զահլա չունի գնա ճանկերն ընկնի: Ով անում է, թող ինքն էլ պատասխան տա: Ինքը գործ չունի: Գառնիկը ներքնամբ խաղաղասեր մարդ է: Մտքում շարունակում է կռիվ տալ. էդ ինչ հայը չի ուզի, որ միանան Հայաստանին, բայց շրջապատված են, զենքապարհ չունեն, ստիպված են խաղաղ գոյակցել, հետո էլ գյուղում ինչի՞ ընդունակ հազիվ 50 տղամարդ կլինի, նրանցով ի՞նչ կարող ես անել. Ինքը ինքնապաշտպանությանը, զենք ունենալուն դեմ չէ, բայց ոնց է պետք շան ոտը կոխել, շանը քսի-քսի անել, գրգռել, ավելի լավ է սպասել մինչեւ թշնամին գա դեմդ կանգնի... Ինքը որսորդ է, դիպուկ կրակող, ձեռքը պինդ զենք բռնել գիտի, գրանցածից բացի, չգրանցած որսորդական հրացան էլ է պահում. բայց խաղաղասեր մարդ է, եւ գյուղի ջահելները գիտեին նրա խաղաղասիրական նկրտումները: Ինքն էլ է ջահել, 30 տարեկան է, բայց էդ տաքգլուխներից տարբերվում է իր պինդությամբ: Մի օր շտաբում ջահելները իրար աչքով են անում ու գրույց բացում, թե՝ ով կարող է թուրք սպանել, ու բոլորը նայում են Գառնիկին:

Օրինակ, ես կարող եմ,- խաղի մեջ մտավ հաշվապահը,- բայց չեմ սպանի: Գուցե անմեղ մարդ է՝ ինչո՞ւ սպանեմ:

Իսկ եթե դիմացդ մարդասպա՞ն է.

- Կսպանեմ, եթե ապացուցված է...

- Իսկ եթե թուրք ազգայնական է՞, որ մեր դեմ հանում է իր ժողովրդին,- ձեռք չեն քաշում ջահելները:

- Կսպանեմ, միայն թե համոզված լինեմ, որ ազգայնական է:

- Գիշերը մնա, առավոտը շուտ կգնաս,- մտածումներից փորձեց փրկել Հրաչիկը, բայց վրա հասնող մութը ստիպեց կողմնորոշվել. գանգեց Մեծ Շեն, տղաներից մեկին ասաց, որ իջնեն Տասը Վերստ, դիմավորեն, իսկ մինչեւ այդ գյուղը ընդամենը 3-4 կմ է: Գառնիկը ճամփա ընկավ, ընտրեց ամենակարճ ոտքի ճանապարհը, անտառի միջով ու դաշտով: Արահետը անցնում էր ազերիների ֆերմայի մոտով, 20-22 տարեկան մի հովիվ դուրս եկավ դեմը: Կանգնեց, զրուցեցին, իրար ճանաչում էին, եղցահողի նախկին անասնապահներից էր, որ հազար անգամ Գառնիկից աշխատավարձ էր ստացել: Ճանապարհը շարունակեց ինքնավստահ, առանց վախի զգացման, եւ նրա մտքով չէր էլ կարող անցնել, որ այդ կարճ ճանապարհը եւ այդ հանդիպումը իր համար հետո ճակատագրական պիտի դառնային, պիտի փոխեին կյանքի հունը: Կյանքը ամեն պահը ընտրություն է, եւ ամենափոքր, աննշան թվացող դեպքը կարող է շուռ տալ իրադարձությունների ընթացքը, փլել բարեկեցության թվացյալ կայուն պատվանդանը, որ ամբողջ նախորդ տարիների ընթացքում մասնիկ առ մասնիկ կառուցել ես:

Մութն արդեն խորացել էր, երբ հաշվապահը անվտանգ գյուղ հասավ, մտավ տուն ու հանգիստ շունչ քաշեց. կինն ու երեխաները կարող են իրենց ապահով զգալ:

Մի քանի օր էր անցել, եւ նոյեմբերի 3-ն էր, երբ Հին Շեն գյուղը լցվեց զինվորներով. անձնագրային ռեժիմի ստուգում էր:

Գառնիկը կանգնել է կոլտնտեսության գրասենյակի առաջ՝ կլոր, կարմրաթուշ, լիքը-լիքը դեմքին իր սովորական խաղաղ ժպիտը: Ինչպես միշտ, այդ օրն էլ մտածումներում խաղաղ է, ոչ մի վատ բան մտքով չի անցնում, կյանքն ու ապրելը նրա համար պարզ ու հստակ է, ինչպես թվերի հետ գործողությունները՝ երկուսին գումարած երկու՝ հավասար է չորսի: Այլ գումար հնարավոր չէ ստանալ:

Հաշվապահը, ձեռքերը գրպանը դրած, դիտում է ստուգողներին եւ նրանց մեջ ճանաչում Շուշի քաղաքի բանկը հսկող պահակախմբի ոստիկաններին, որոնց հետ ինքը նախկինում շփվել է: Շատ է պատահել, երբ ուշացած է շրջկենտրոն հասել, հիմնարկի դուռը հենց այդ պահին փակած է տեսել, հսկիչների գրպանները մի-մի ռուբլի է խոթել, ներս են

թողել, գործերը վերջացրել-հետ է դարձել: Գառնիկը, նրանց հետ աշխատելով, նրանց հոգեբանությանը լավ ծանոթ էր, եւ քիչ դեպքեր չեն եղել, որ կարողացել է գործերը մանր-մունր «մաղարիչով» հանգիստ դասավորել: Նրա համար նույնիսկ ազերիների հետ ավելի հեշտ էր, քան Ստեփանակերտի հայ չինովնիկների ու պաշտոնյաների, որոնց հետ շատ դժվար էր գործարքի մեջ մտնել. եւ «ճանապարհն» էր կեռումնռ, դժվարհաղթահարելի, եւ թանկ էր նստում...

Մի դեպք եւս հիշեց. 1988-ի դեկտեմբերի 7-ին՝ երկրաշարժի օրը բացեց հաշվապահական մատյանը. արհմիության ֆոնդում 6000 ռուբլուց ավելի փող կար. Սարգսյան Գրիշայի հանձնարարությամբ գնաց Շուշի, մտավ բանկ, կառավարչի աշխատասենյակը, հետեւից ամուր փակեց դուռը, գրպանից հանեց երեք կարմիրտասանոց, խոթեց գրակալի տակ: Կառավարչի աչքերը պսպղացին, մակագրեց ու ստորագրեց հաշիվը փոխանցել Ստեփանակերտի կենտրոնական բանկ: «Ըհը, նոր անունն էլ մոռացնել տվի»,- մտքում ինքն իրենով հիացած՝ Գառնիկն իջավ առաջին հարկ, աղջիկների սեղաններին թղթերի տակ մի-մի մանեթ խոթեց, գործարքը արագ ավարտել տվեց եւ հետ գյուղ եկավ:

Հաջորդ օրը Շուշիի ղեկավարությունը իմացավ կատարվածի մասին, մեծ աղմուկ բարձրացրեց, սովխոզի տնօրենին ու արհկոմին կանչեց, սպառնալիքներ տվեց, բայց արդեն ուշ էր: Սա շրջկենտրոնի հետ ենթաշրջանի կատարած վերջին բանկային գործողությունն էր:

Գառնիկը կանգնել, ժամանակները մի տեսակ շփոթած՝ դիտում էր, թե ինչպես են խուզարկում տները:

- Ի՞նչ եք եկել գլխներիդ հավաքել, դեսուդեն եք վազվզում, մի-մի մանեթ տամ՝ գնացեք...

Թե որ սատանան բոթեց, որ խոսի, այն էլ այդպիսի ինքնավստահ տոնով, առանց ձեռքերը գրպանից հանելու,- հետագայում թուրքական բանտի մահապարտ Առստամյան Գառնիկը գողգոթայի երկար ճանապարհին մտածում էր, մտածում ու պատասխանը չէր գտնում...

Գառնիկը դիմել էր ոստիկաններին, բայց նա չէր ճանաչում Շուշիի նոր նշանակված ներքին գործերի ոստիկանության պետին, որ կանգնած հրահանգներ էր տալիս, ու «մի-մի մանեթ» ասելու վրա մենթի հոտառությամբ հասկացավ, որ իրենց փնտրած հաշվապահը հենց սա է, որ կա: Աչքով արեց ռուս սպային, որը երկու զինվորների հետ մոտեցավ, ու հանկարծակի հանգիստ, շատ հանգիստ կանգնած Գառնիկի ձեռքերը ոլորեց մեջքին:

Ի՞նչ եք անում, սխալմունք է, շփոթել եք...,- հանկարծակիի եկած կնոջից հաշվապահը:

- Շուշիում կիմանաս...

Բարձրահասակ, հաղթանդամ, ոչ մի դիմադրություն ցույց չտվող մարդուն քաշքշելով ու բոթելով խոթեցին ԲՏՐ-ի մեջ:

- Էդ ո՞ւր եք տանում,- Գրետան ծղրտալով վազեց-նստեց ճամփի մեջտեղը: Կանայք հետեւեցին նրան: Չինովորները կանանց քաշքշելով ճանապարհ բացեցին:

Նույն օրը, նույն ժամանակ եղցահողում էլ Հրաչիկին էին կալանել:

Շուշիի ներքին գործերի շրջանային բաժնի մեկուսարանում պետի աշխատասենյակում ուժեղ ապտակեցին կալանավորին.

- Դե հանի՛ր, տո՛ւր մի-մի մանեթը...

Նորից ապտակում են:

- Ինչպե՞ս ես համարձակվել վիրավորել իմ ոստիկաններին... Մարդասպա՛ն: Սրիկա՛: Ավազա՛կ: Դու գիտե՞ս, որ մեղադրվում ես անասնապահի սպանության մեջ:

- Ի՞նչ անասնապահ, ի՞նչ սպանություն...

- Բա ինչո՞ւ ես ուղիղ ճանապարհը թողած, անտառի միջով տուն գնացել:

Գառնիկն ամեն ինչ հասկացավ:

- Մեքենա չի եղել:

- Բա հրացանը ինչի՞ համար էիր վերցրել:

- Ագնիվ խոսք, երդվում եմ, ձեռքիս մահակ է եղել շներից պաշտպանվելու համար:

- Շո՞ւն... Շունը ո՞վ է, քյոփօղլի, մե՞նք ենք շունը,- պետը կարծում է, թե «մի-մի մանեթի» շարունակությունն է...

Հարվածներ են տեղում:

- Յոլդաշ նաչալնիկ, Ռամիզը անտառով գնալիս ինձ պատահել է, տեսել է, նրան հարցրեք, ձեռքիս մահակ է եղել: Նա ճշմարտությունը կասի,- գոռում է կալանավորը ու մտքով չի էլ անցնում, որ հենց ազգի հովիվ Ռամիզն է վկայություն տվել, որ ձեռքին հրացան է եղել: Այդ մասին նա շատ ամիսներ հետո կիմանար, կկարդար իր գործերի մեջ: Բաքվի բանտում, երբ մեղադրվում էր Սալաթին Ասկերովայի սպանության մեջ:

Ստեփանակերտում ցույցեր ու հանրահավաքներ են կազմակերպվում՝ ի պաշտպանություն անօրեն կալանված բերդաձորցիների, հայրը՝ Մեծ Հայրենականի վետերան, մեդալները կրծքին կախած, մտնում է Վոլսկու մոտ, եւ Հատուկ կառավարման կոմիտեի միջամտությամբ Հրաչիկն ու Գառնիկը ազատվում են:

Խիստ ձմեռ էր, եւ ձյունը կես մետր բարձրությամբ ծածկել էր անուսուցալանջը: Քումենքարի եւ Սուրանի պահակակետերը իջեցրել էին լուծ, գյուղին մոտիկ: Գյուղի տարածքը հսկվում էր Խութից, Գայլաբլից, Վերին Խութից, Շիգեցեք տափից: Ազերիները Յողոնեսից ու Իրիյանից պարբերաբար բարձրանում էին Քումենքար, կարաբինից կրակում ու սպառնալիքներ տալիս: Գնդակները հասնում էին պատշգամբներին: Երեխաները հարմարվել, էլ չէին վախենում:

- Է՛հե՛յ, երեք օր ձեզ ժամանակ: Հողը մերն է՝ պիտի թողնեք, հեռանաք:- Կանչեցին վերեւից:

- Թե տղամարդ եք, իջեք՝ խոսենք:- Եվ լսվում են փոխադարձ կրակոցներ:

Տղաները պոստ էին կանգնում մի քանի որսորդական հրացաններով, որը փոխանցվում էր ձեռքից ձեռք: Շատերը գնում էին դանակներով ու մահակներով: Դիրք կար, որի համար տալիս էին ընդամենը երկուական փամփուշտ, քանի որ այդտեղից վտանգ քիչ էր սպասվում: Ամեն անգամ պահակակետ ճանապարհելիս, Առնոն հաշվում-տալիս էր փամփուշտները, հետո էլ պարտադիր զգուշացնում.

- Տղերք, ձեր ցավը տանեմ, խնայեք:

- Գոնե երկու հատ փորձենք, Առնո, ախր ուզում եմ կրակեմ-տվրնեմ: Նրանք միշտ կրակում են,- Սամվելը նկատի ուներ հարեւաններին:

- Նախ՝ նրանք վախից են կրակում, երկրորդ, ուներ՝ կրակում են: Դժվար է ճարվում, պիտի կրակեք միայն էն դեպքում, եթե հարձակվել են, եթե մոտ են, եթե համոզված ես, որ դատարկ չի հնչելու:

Շտաբում Առնոն ու Անդրանիկը խոսում են զենք ձեռք բերելու, ինքնապաշտպանության եւ այլ խնդիրների մասին, երբ տղաները լցվեցին շտաբ. իրիկունները աշխատանքից հետո գալիս էին զրուցելու, գիշերը կարծելու, Առնոյի ու Անդրանիկի խոսքը լսելու:

Սեղանի գլխավերեւում կպցրած է եռագույն դրոշը, պատին՝ Անդրանիկի ու Սուվորովի նկարները:

- Ի՞նչ ես մտածում,- հարցրեց Կամոն:

- Պեպոյի ասած՝ փիքր եմ անում ու չեմ հասկանում, թե ով էր մեղավոր,- ու վեր կացավ եկավ սեղանի մոտ, սկսեց պատմել 1921-ի կովբոյերոյի որոշման մասին ու եզրահանգեց՝ մեր դիվանագիտությունը թույլ է: Հետո պատմեց Սուվորովի մասին.

- Տատը հայուհի է եղել, Անահիտ Մանուկյան, հզոր զորավար էր, հայի արյուն կար երակներում:

- Խի՞ մեր Գեւորգ Չաուշը նրանից պակա՞ս տղա էր,- Կամոն ավելի

շատ ուզեց ասել, որ ուսուցչի տված գրքերը կարդացել է:

- Գեւորգ Չաուշի ժամանակները ուրիշ էին: Նրա հաջողությունը ժամանակավոր էր: Ազգային ազատագրական պայքարի լիակատար ու վերջնական հաջողությունը պայմանավորված է կանոնավոր բանակով: Միայն ու միայն: Մասնատված խմբերով պաշտպանությունը դատապարտված է: Զինված ու մարզված ժողովուրդն է միայն, որ կարող է ընդմիշտ ապահովել իր ազատությունը:

- Այսինքն, մենք դատապարտվա՞ծ ենք,- նման հարցերը Կամոն էր տալիս, իբր պատմությունից հասկանում էր:

- Մեր հարցը ուրիշ է, մենք Գորիսին շատ մոտ ենք, օգնության կհասնեն, Ազատի, Կամոյի, Գետաշենի վիճակը ավելի լուրջ է: Հայդուկային շարժումը միշտ տապալվում է: Գետաշենը մի օր ընկնելու է,- հետո զգալով, որ խոսակցությունը կարող է ծանր տպավորություն թողնել, փոխեց զրույցի հունը:

- Մեր պապերը ծնվել են էս հողում, մենք ապրել ու պիտի ապրենք էս հողում: Ուրիշի վրա հույս չպիտի դնենք: Մեր ուժը մեր մեջ պիտի փնտրենք:

- Մենք մեր հողը պիտի պաշտպանենք մեր երեխաների համար,- ասաց Շամոն ու չնկատելու տվեց ընկերների ժպիտը. Շամոն 30 տարեկան էր ու դեռ չէր ամուսնացել:

- Ապրե՛ս, Շմավոն,- ֆիզիկայի ուսուցչի գովեստից նախկին սանի, այժմ գինակցի, սեւ-ածուխ աչքերը փայլեցին, ու նրա ժպիտը փոխանցվեց բոլորին:

- Տեսնես մեզնից հետո եկողները մեզնով կհպարտանա՞ն,- հարցրեց տղան:

- Համոզված եմ, կհպարտանան, բայց վայ էն սերնդին, որ հպարտանալու գործեր չի թողնի...

10-15 օր էր Քումենքարի պահակակետ հսկող խումբ չէին ուղարկում:

- Անդո, երկու օր է չեն խփում, լռությունը քեզ տարօրինակ չի թվո՞ւմ:

- Եթե գրաված լինեն, գործը բարդանալու է: Հետ վերցնելը դժվար է լինելու:

- Դիրքային մեծ առավելություն է, եթե...- Առնոն կտրուկ շարժում արեց:

- Իսկ զենքի քանակությունը տե՞ղն է,- հարցրեց Սահակյան Վրույրը:

- Էս անգամ 2 հրացանի կորուստ ենք ունեցել,- Առնոն հիշելուց նոր ոգեվորվեց:

Յուրաքանչյուր ընտանիք իր որսորդական հրացանն ուներ, որ սուզման ժամանակ թաքցնում էր, իսկ տագնապ հնչեցնելու դեպքում 10-15 րոպեում զենքը պիտի հանած ու պատրաստ լիներ: Նախորդ սուզման ժամանակ սրատես մի զինվոր նկատել էր ցանկապատի մեջ քողարկած ու ծայրով հողի մեջ խրված հրացանը, որից հետո ամբողջ գյուղի ցանկապատերը քանդել- ցաքուցրիվ էին արել:

- Ազգի թշնամի, դավաճան, հանցագործ,- փրփրել էր Առնոն,- դու գնդակահարության ես արժանի, բայց չենք անում, քանի որ պոստ կանգնողները քիչ են:

- Դե լավ է, կպատահի, էլի,- փորձել էր հանգստացնել Գառնիկը, որ կարծես իրեն էլ էր մեղավոր զգում:

- Ոնց թե... Կպատահի, հա՞, - ու Գառնիկին էլ էր շան հետ կապել,- պիտեք, չէ՞, ինչ դժվարությամբ է ձեռք բերվում: Մեծ Շենից էդ օրը ոչ մի բան չտարան, էնպես կատարյալ էին թաքցրել...- Անդրանիկը չնայած հասկացավ, որ Առնոն թասիբի էր կոչում համագյուղացիներին, ասաց.

- Էլի մեկ հրացան տարել են:

Առնոն չլսելու տվեց ու միտքը շարունակեց.

- Նրանք մեզնից քանակով քիչ են, բայց ավելի համարձակ, մենք պասնոդաղկոտ ենք: Եղցահողում էլ գործերը ավելի լավ են գնում, Հրայիկը գործը լավ է կազմակերպում:

- Իսկ Ծաղկածորում վիճակը ո՞նց է, - հարցրեց Վրույրը:

- Էնտեղ մի պոստը մենք ենք պահում: Գյուղում ծերեր են, 9 ընտանիք, միջին տարիքը 50-ից բարձր: Բայց վերջերս 5-6 ջահել են եկել, եւ պահակությունը մի քիչ կարգի է ընկել:

Դեկտեմբերյան 20 աստիճան սառնամանիք էր: Խումբը բարձրանում է՝ առջեւից Առնոն, որ մազ առ մազ գիտեր տեղանքը, յուրաքանչյուր քարուքուշ, կածան, հետեւից՝ Գավառի Ալավերդի գյուղից եկած Մանասարյան Վարազդատը, հետո Վրույրը, Առստամյան Գառնիկը: Առնոյի ձեռքին մի կարաբին կար, կոթը կտրած, գողական զենք: Խումբը բարձրանում էր որսորդական հրացաններով, գրպաններում ինքնաշեն նռնակներ, փամփուշտներ: Ժամը 11-ն անց էր, բարձրանում են լուռ, նույնիսկ շունչները պահած, վերելքը դժվար էր, քանի որ լանջի թեքության աստիճանը մեծ էր, իսկ արահետն էլ դժվարությամբ էր ջոկվում: Վրույրը մի քանի անգամ խրվեց փոսում՝ թաղվելով ձյունի մեջ, Վարազդատը ձեռքը տվեց՝ քաշեց հանեց: Մինչեւ բարձունքը մնացել էր

50 մետր: Խումբը կանգնում է ականջ դնում. ոնց որ մարդու շունչ չկա: Չորսն էլ լուռ, հոտոտում են օդը:

- Ծխախոտի հոտ չկա: Քամին մարդահոտ էլ չի բերում,-Առնոն լարել էր բոլոր զգայարանները:

25 մետր ելս հաղթահարվեց: Նորից կանգ առան: Նորից առաջացան: Գագաթին շատ մոտիկ, մի քանի մետրի վրա՝ շղթա կազմեցին ու զենքերը պատրաստ, միանգամից խուժեցին գագաթ:

Լիալուսին էր: Ձյունի ծերմակությունը, սարերի կտրտվածությունը, ձյուն հագած ծառերը, գիշերվա լռությունը,- տեսարանից ապշած կանգնել ու անձայն, յուրաքանչյուրը իր ներսում ըմբոշխնում էր գեղեցկությունը: Կես ժամ մնացին Քումենքարում: Ներքեւում պարզ երեւում էր Յըղոնեսը, որտեղ շարժում չկար, ու տղաները հետեւություն արեցին, որ դրսից մարդ չի մտել: Շների հաչոցն էլ հանգիստ էր, քանի որ եթե գյուղում օմօնականներ լիներին շնահաչոցն այլ ձեւով կլիներ: Գառնիկը որսկան էր, եւ նրա «մասնագիտական» հետեւությունները կողմնորոշիչ էին: Հետո որսկանը բարձրացավ երկու մետրանոց քարի վրա եւ սրատես աչքերով դիտեց շրջակայքը: Տղաները 100 մետր տարածությամբ չորս կողմի վրա գնացին, մարդու ոտնահետքեր կային, բայց հին էին, ու նորից ետ հավաքվեցին գագաթին:

- Խրամատ փորել ու դիրք բռնել հնարավոր չէ,- բարձրաձայն մտորեց Առնոն,- շատ է ցուրտ: Կրակ վառել-տաքանալ էլ հնարավոր չէ: Պարզապես 2-3 օրը մեկ կգանք, կստուգենք:

- Նրանց համար էլ պայմանները նույնն են, դժվար թե բարձրանան՝ պոստ դնեն,- ասաց Վարազդատը:

Խումբը եկած արահետով հետ դառավ: Վայրէջքն ավելի դժվար էր, սայթաքելու, գլորվելու վտանգը մեծ:

- Հը՞, ո՞նց էր,- հարցրեց Առնոն, երբ մտել էին շտաբ, ծյունակոլոր հագուստները հանել ու շրջապատել տաք վառարանը:

- Հրաշալի՜,- Վրույրի աչքերը արտակարգ փայլ ունեին:- Բայց...! Բայց...- տղան սկսեց կմկմալ,- երկու փամփուշտս չկա:

- Դու ենթակա ես գնդակահարության,- Առնոն սա ասաց լուրջ, ձայնի տոնը՝ սառը, մետաղյա, այնպես, որ Վրույրը ցնցվեց. այդ հերոսական դժվարին վերելքից հետո՝ երկու փամփուշտի համար նման հանդիմանություն չէր սպասում: Առնոն շարունակեց նույն տոնով.

- Անդրանիկ Զորավարը երկու փամփուշտի համար գնդակահարում էր զինվորին...

Տղան շոկի մեջ ընկավ՝ որտեղ կլինի կորցրած: Հիշեց՝ վերելքի ժամանակ ընկավ փոսի մեջ:

Առնոն արդեն անցել էր մարտական առաջադրանքի արդյունքների քննարկմանը ու չէր նկատել, որ Վրույրը դուրս էր եկել: 40 րոպե հետո տղան ներս մտավ փամփուշտը ափի մեջ.

Առնո, մյուսը չգտա,- մեղավոր-մեղավոր ասաց:

Առնոն զարմանքից մի պահ քար կտրեց. տղայի վարմունքը կեսգիշերին, այս ցաքցքան ցրտին անսպասելի էր, հետո աչքերը պայծառացան, լույսով լցվեցին: Իրար նայեցին, հասկացան, ու երկուսն էլ գոհ էին:

Շտաբում մնացել էին Առնոն, Անդրանիկը, Գառնիկը, Վրույրը, Ժանոն:

Երեւանից 6-7 հատ ավտոմատ էին ստացել: Զենք ստանալը միշտ ուրախությամբ. յուրաքանչյուր գյուղի հրամանատար փաստերով ապացուցում էր, որ իրենք վտանգին ավելի մոտիկ են, հետեւաբար, զենք ավել պիտի ստանան:

Եղցահողը երեք հարեւան գյուղերից էլ է կտրված, երկու հատը Երանից,- տեսնելով Գառնիկի դժգոհ հայացքը Առնոն ավելացրեց: - Էլի կգա ստանալու:

Որսորդական հրացան ինչքա՞ն ունեք,- հարցրեց Վրույրը:

80 հատ:

Էն գնդացիրը ինչպե՞ս է գործում,- Վրույրը ի նկատի ուներ ձեռքի «Մակսիմարով» տիպի, 1930 թվականի թողարկման, վաղուց գործածությունից հանված թանգարանային նմուշը:

Մի ժապավեն 67 փամփուշտ, խփում է ու արգելակվում: Բայց ես «ելուն» գտել եմ:

Այսինքն:

Սրանով գլխին տալիս եմ,- Առնոն ցույց տվեց մի մուրճիկ,- խելոքանում է, դադարը ընդամենը մի քանի վարկյան է տեւում:

Փամփուշտի անծեռնմխելի պաշարին ծե՞ռք եք տվել:

Այո: Երկու անգամ ուժեղ հրաձգություն էր, նույնարժեք պատասխան են ստացել:

Կլրացնենք,- խոստացավ Վրույրը,- յուրաքանչյուր հրացանին 60-ական փամփուշտ չպիտի լինի:

Մեր որսկանները «հիվանդ» մարդիկ են,- Առնոն կատակի անցավ,- դրանց հախից դժվար եմ գալիս:

Գալիս ես, էն էլ ոնց ես գալիս,- Գառնիկը հասկացավ, որ Առնոն լարվել, նախեւառաջ, իր բոստանն է գցում: Որսի համար փամփուշտ օգտագործողը ծորակում խիստ պատժի էր արժանանում:

- Երկրապահները քիչ են, Վրույր: Պատահում է տղաները օրերով չեն քնում: Հերթափոխ չկա: Թեկուզ 20-25 օրով տղաներ ուղարկեիք...

- Կապահովենք: Ստեփանակերտի մանկավարժականում հիանալի տղաներ ունենք, գոհ կմնաս: «Չուգուն» Կամոյի տղաներն են՝ Դանիելյան Նորայրը, Իշխանյան Դավիթը...

Մեկը կամաց, շատ կամաց ծեծեց շտաբի դուռը: Ժաննան վեր թռավ ու մուշտակը վայր ընկավ ուսերից:

- Վա՛յ Վարսիկ տատ, չեմ ասե՞լ չանհանգստանաս...

Տատը մենակ էր ապրում, ու տունը շատ մոտ էր շտաբին: Փոքրամարմին, իսկեւիսկ քաղցր թթի չամիչ, սիրասուն տատը մինչեւ Ժաննան տուն չէր մտնում, չէր քնում:

Հանգիստ ու թեթեւ շնչառությունից Վրույրը հասկացավ, որ Անդրանիկը քնով է անցել:

- Առնո՞...

- Հը:

- Չե՞ս քնել:

- Չեմ քնել:

- Առնո, իսկապե՞ս Անդրանիկը երկու փամփուշտի համար զինվոր էր գնդակահարում...

- Քնի՛ր:

- Չէ, ասա, դու դա որեւէ տեղ կարդացե՞լ ես, թե՞...հնարեցիր:

Սենյակում մութ էր, բայց Վրույրը կարծես տեսնում էր ծորակի հրամանատարի լայնահուն, ժպտուն դեմքը:

Իսկ քիչ անց Սուրանի լեռներից իջած սառը քամին ունկնդրում էր տղաների հանգիստ ու թեթեւ շնչառությունը:

«Ամարաս» բարեգործական ընկերությունում, որ տեղավորված էր Ստեփանակերտի քաղաքային խորհրդի շենքի առաջին հարկում, Սահակյան Վրույրն էր, Աղաջանյան Մարինեն, Առստամյան Գայանեն, Դանիելյան Աղավնին...

- Աղջիկներ, ձեզ համար՝ հաճելի անակնկալ, հյուրեր ենք ունենալու,- Վրույրը չի ասում, թե ովքեր են գալու:

Ստեղծվում են Բերդաձորի տղաները Առնոն, Անդրանիկը, Վարազդատը, Հարությունյան Գագիկը: Առնոյի արտաքինը տպավորվում է դեմքից բարություն ու լույս է կաթում: Սյուսներն էլ բարձրահասակ ու տպավորիչ են: Անդրանիկը մի քիչ մեջքից կորացած, մի քիչ հյուծված, աչքերը խաժ ու թախծոտ: Բերդաձորի տղաների հանբավը Ստեփանակերտ էր հասել, իսկ Անդրանիկին ազատելու համար քաղաքի ցույցերին աղջիկներն էլ էին մասնակցել, դիտել էին Բաքվից հեռուստահաղորդումը, երբ ցույց են տվել կալանավորին ու կատաղած ասել.

- Այ սրան տեսեք, էն Անդրանիկը Ղարաբաղ չի հասել, բայց էս քյոփեքլին հասել է: Կտեսնենք, թե քանի գլուխ ունի ուսերին...»: Անդրանիկի մեջքին ջաղված սապոգի հարվածների խոր հետքերը երկար ժամանակ որպես սպիներ մնացին:

- Անդո, պիտի գնաս Երեւան, բուժվես,- ասաց Վրույրը:

- Մինչեւ չգնամ ժողովրդիս տեսնեմ, չեմ կարող:

- Սու՞րճ, թե՞ թեյ,- Մարինեն զարմացած տնտղում էր տղաներին. միթե սրանք են Բերդաձորի հերոսները, որոնց մասին լսել են: Առնոն նստել է համե՞ստ, համեստ ու չի խոսում:

Աղջիկներ, բոլորիդ հրավիրում ենք Բերդաձոր Սուրբ Ծննդին:- Ասաց Անդրանիկը:- Էնպիսի մի տոնախմբություն ենք կազմակերպելու, չտեսնված...

Հին Շեն:

Հին տարվա վերջին ժամերը: Ակումբը տոնական զարդարված է: Եկել են նաեւ հարեւան գյուղերից: Երեկոն վարում են Ժաննա Գալստյանը, Անդրանիկ Հարությունյանը, Առնո Մկրտչյանը:

Անդրանիկն ու Մարինեն պարում են երկար, շատ երկար, ու ոչ մեկը չի ուզում առաջինը լքել պարահրապարակը: Աղավնին նստել էր մի քիչ թախծոտ, եւ կարծես ընդհանուր ուրախությունը իրենից շատ հեռու էր:

- Կանայք, լսեք ինչ եմ ասում,- Անդրանիկը բաժակը բարձրացրեց,- էս տարի գյուղում ով երեխա բերի մի կարաբին եմ նվեր տալու:

Կարաբինը ինձ, Անդրանիկ ջան:

- Խոստանում եմ, Գրետա ջան, էս գինին ու աղջիկները՝ վկա:

Էդ առանց ինձ ո՞նց ես խոսք տալիս, ախչի,- Առստամյան Գառնիկի խոսքի վրա սեղանի շուրջ ծիծաղը թնդաց:

Գինին տաքացնում է, ուրախությունը շամպայնի բաժակներից փրփուրի պես թափվում է... Անդրանիկը մոտեցավ միկրոֆոնին: Քար լռություն տիրեց.

Կուզեմ հիմի փչե զուռնեն, հարբած ըլիմ մինչեւ էգուց,
Ամեն մարդու ընկեր ըլիմ, ու բաց ըլիմ մինչեւ էգուց:
Փայտոն նստած անցնեմ քուչով, պատուհանից վրես նայես,
Էշխդ անքուն սիրտս ընկնի, ու լաց ըլիմ մինչեւ էգուց:
Երթամ ուրիշ գոզալների գիրկը դնեմ գլուխս տաք,
Էդ քո անուշ, ազիզ տեսքով հարբած ըլիմ մինչեւ էգուց:

Արտասանում էր բացառիկ արտիստիկ, ու Մարինեն չհասկացավ՝ Չարենցի տողերի՞ց, թե՞ գինուց սիրտը նվաղեց ու ոտքերի տակի հողը կորցրեց: 26 տարեկան աղջիկը նման զգացում առաջին անգամ էր ապրում... Ու հետո, շատ հետո պիտի ինքն իր համար վերծաներ, հասկանար անսպասելի, հանկարծահաս սիրտը խուժած երջանկության զգացումը ու այդ օրերի հուշը կրեր մինչեւ վերջ, մինչեւ վերջին օրեր...

Անդրանիկի սիրած բանաստեղծը եղիշե Չարենցն էր, ապա անցավ «Խմբապետ Շավարշին», ու որոտընդոստ ծափերը ստիպեցին նորից անցնել «Տաղարան»-ին:

Ժաննան սիրուն ճահճագույն կոմբինիզոն էր հագել: Մազափնջերը հանգուցած փայլփլուն ժապավեններով, հավաքած կախել էր ծախ կողմից, ու նրա հռետորական ձայնը հնայել էր դահլիճը.

- Պատիվ ունեմ այսօր գտնվելու այստեղ եւ հաղորդելու ձեզ ողջույններ ու բարեմաղթանքներ Ստեփանակերտից ու Երեւանից, եւ ասել, որ ողջ հայության հայացքը այսօր ուղղված է Բերդաձորին...:

Փոքրիկները արտասանում են: Այնուհետեւ հնչում է մարտական երգը.

Արյունոտ դրոշ վեհ Դաշնակցության ծածանեց ընդդեմ
բռնակալության...

Հույսով լեցվեցավ սիրտը հայության, երկյուղը պատեց կայսեր
Օսմանյան:

Մեծ մարդասպանը սաստիկ զայրացավ, հայեր ջնջելու հրաման
տվավ,

Քանդել Հայաստան, ջնջել հայ անուն, որ չխանգարվի յուր
ազատություն:

Ժաննան շուրջպարի է քաշում տարիքով կանանց, որոնք ամաչկոտ, մի կողմ քաշված հանդիսատեսի դերում էին: Դեռատի մայրերի գրկում ծծկեր երեխաները քնով էին անցել, բայց ոչ ոք չէր թողնում ակումբը:

Ուս-ուսի պարում են Անդրանիկը, Գառնիկը, Գագոն, Սլավիկը, Անուշավանը, Ժաննան, Մարինեն, Աղավնին:

Չմեռ պապը մանուկներին նվերներ է բաժանում, Անդրանիկը ընտանիքներին օգնություն:

- Մեր իղձերի իրականացման եւ միացման տարի լինի,- ելույթ է ունենում Առնո Մկրտչյանը:- Եղել է ժամանակ, որ ձորակում խուճապային տրամադրությունն է իշխել, մարդիկ ճամպրուկային տրամադրությամբ են եղել, պատրաստ լքելու պապենական հողը, իսկ այժմ պատ-

կելի բոլորովին այլ է: Ստեղծված է ինքնապաշտպանության կուռ համակարգ, մշակված է պաշտպանության եւ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, պատրաստ ենք պատասխան տալու նրան, ով կամենդգնի որպես թշնամի ոտք դնելու մեր ձորակը:

Երեխաները ձեռքները պարզում ու գոչում են.

Մի-ա-ցում:

Հա-յաս-տան:

Անուշավանը հաղթահասակ տղամարդ, հպարտ-հպարտ, առանց մրմնջոցի

Հանգցնելու, պարի հրապարակ է մտնում իր երկու փոքր որդիների հետ, որոնք զինվորական հարմարեցված հագուստներով էին: Ոգեւորությունը հասնում է գագաթնակետին, Առնոն լուսանկարում է... Վրույթ լուռ նստած է, եւ աղջիկները նրա ճակատին ծաղկեշղթա էին ոլորել:

Համընդհանուր ուրախության մեջ ոչ ոք չէր նկատել Առնոյի ու մի քանի տղաների դուրս գալը: Ժամը 12.00-ից մի քանի վայրկյան է պակասում:

Ժողովուրդ, լռություն: Սպասեք: Մի րոպե միայն, լռեք...- Անդրանիկը լռեցրեց:- Ձեզ համար անակնկալ, ժողովուրդ, լսեք...

Առնոյի ինքնաշեն հրանոթի համազարկը դեպի ադրբեջանական կողմնակ գյուղը դղրդացրեց ձորակը:

Բաժակների զնգոց, ցնծություն:

Ժաննան մոտեցավ աղջիկների սեղանին: Գայանեն հանեց ակնոցը ու սրբեց արցունքը, կինը աչքունքով սաստեց աղջկան: Համընդհանուր ուրախության մեջ ոչ ոք չէր նկատում Ժաննայի ու Գայանեի խոր բարկացած տխրությունը. Շահումյանում ուղղաթիռը վայրէջքի ժամանակ վթարի է ենթարկվել ու մարդկային մեծ զոհեր կան: Հետո Անդրանիկն ու Առնոն պիտի իմանային ու հիստերիայի մեջ ընկնեին, որ չեն հասցրել, իսկ իրենք ամբողջ գիշեր պարել ու քեֆ էին արել: Իսկ Ժաննան պիտի արդարանար՝ ասելով, որ իրեն իրավունք չի վերապահել խանգարել ձորակի ժողովրդի հազվադեպ ուրախությունը:

Հանդարտ տվողները ձյունոտ, ձյունաթաթախ մտնում են ակումբ: Դրկախառնություն, ուրախ ճիչեր: Մարինեն երեխաների ձեռքից բռնում ու պարահրապարակ է տանում: Գինուց, շատ պարելուց, թե՞ սիրտը մտած տարօրինակ զգացումից Մարինեի աչքերը մշուշվել էին, այտերը կարմրել.

Հոգնել եմ, դուրս գանք թարմ օդ:

Անդրանիկը աղջիկներին դուրս էր տարել, Մարինեն կարաբինը հագնում եւ կրակում է առաջին անգամ:

- Վերջ, ավելին շռայլություն կլինի,- Բիխի նախագահը հետ է վերցնում կարաբինը:

Երեխաները դուրս են եկել ակումբից եւ լուսնի լույսի տակ Սուրբ Ծնունդի ձյունաառատ լանջով սահնակներով սահում են:

Ստեփանակերտի հեռուստատեսությունից եկած օպերատոր շեկ Գագոն, որ նկարահանելու էր եկել , դիտողություն արեց.

- Մարինե, թեթեւ ես հագել, սա Բերդաձորն է...

- Ջերմությունն այստեղ շատ է, Գագո,- աղջկա երկիմաստ խոսքը սահեց-անցավ թարթիչներին նստած ձյան փաթիլի պես:

- Տղաներ, գիտե՞ք, որ Կրկժանի ազերիները նեղում են Ստեփանակերտին,- Անուշավանի, որին կրճատ Նուշիկ էին ասում, միտքը նույնիսկ գինուց չէր անջատվել ամենօրյա «քաղաքական անցուդարձի» զրույցներից:

- Տղերք, չգնա՞նք դրանց դաս տանք,- կատակեց Անդոն:

- Մարինե, ուրախություն-ուրախություն այ էն ժամանակ է լինելու, որ հաղթենք: Ծովեն հարթում մեծ քեֆ եմ սարքելու ...

- Դա ե՞րբ է լինելու, Առնո,- անձկությամբ հարցրեց Մարինեն:

- Կլինի: Էդ օրվա կենացը:- Շամպայնի բաժակները լցրին, իրար զարկեցին:

- Ես գնացի, աղջիկները պարի են հրավիրում...

Բերդաձորի ժուժկալ հրամանատարը տրվեց ուրախության հազվագյուտ պահի:

Սուրբ Ծննդյան տոնին ամբողջ գիշեր չէին քնել ու հոգնածություն էլ չէին զգում: Մարինեն, Գայանեն ու Աղավնին մաքրում են շտաբը, հավաքում թափթփված խոհանոցը:

- Աղջիկներ, չե՞ք զգում , որ մեր ներկայությունը այստեղ անհրաժեշտ է:- Սուրբ Ծննդի գիշերը, հրանոթի գիշերային համազարկը, կարաբինով կրակելը, Բերդաձորը ձյունի ու խաղաղության մեջ, տղաների մասին լսած պատմությունները, գյուղացի մարդիկ համեստ, աժդահա, շիկավուն ու պայծառ հայացքներով, կանայք անմիջական, անկեղծ ու մարդամոտ,- այս ամենը ուժեղ տպավորվել էին Մարինեի հոգում, ու նրան թվում էր, թե հեքիաթային մի աշխարհ է ընկել: Այդ օրը կյանքը նրա համար ստացավ նոր գունավորում, իմաստավորվեց Բերդաձորով, խաղաղ ու երջանիկ պահերով, ու մտքովն իսկ չէր անցնում, որ այս ամենը հիշողություն ու լուսանկար են դառնալու, իսկ ամիսները իր ապրած տարիներից լիարյունն ու երջանկահամը, որ հիշելիս՝ երազի ու իրականության սահմանները իրար պիտի խառներ...

Աղջիկներ, հարկավոր է մտածել, տղաները չոր օրապահիկի վրա են: Աղջիկները դասավորել ու տեսել էին պահածոները,- նրանց տաք կերակուր է պետք:-

Մարինեն, իբր, աղջիկներին է դիմում, բայց ներքուստ գիտեր, որ մնալու է Բերդաձորում:

Որ գաք, ճիշտ կլինի,- արձագանքեց ուրբաթախոս Գայանեն, որ մանուկի հետ ավելի շուտ էր եկել:

Հարաբը պիտի այնպես կահավորվեր, որ ավելի շատ տան նման լինեիր: Քանի որ սկսվել էին անձնագրային ռեժիմի ստուգումները: Մարինեն տղաների սպիտակ փաթաթաններից սիրուն վարագույր սարքեց ու կախեց: Ստուգման ժամանակ Անդրանիկի ու Առնոյի գրքերը խոթում էր պահարանները, գրասեղանը մեջտեղ քաշում, որի վրա սպիտակ սավանի մի կտոր որպես սփռոց էր ծառայում, մեջտեղը դնում ծաղկամանը սարերից քաղած կծոխուրի ծաղկած փնջերով, ու սենյակը արդարակարգ, գեղեցիկ տեսք էր ստանում: Առնոյի մահճակալի վերեւից կախում է ընտանեկան մի քանի լուսանկարներ: Փոքրիկ պատշգամբը ծառայում էր որպես խոհանոց:

Առնոն ու Ժաննան ներս մտան.

Ինչտ է, տղաների փաթաթաններից ես օգտագործել, բայց լավ է ասացվել:

Տան տեսք է ստացել, ոչ մի կասկած չի լինի,- աղջկան գովեց Առնոն:

Պետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մեջ, որ Բերդաձոր եկել ու կազմել էր Վարանդ Փափազյանը, մտնում էր նաեւ մանկապարտեզ բացելը: Շենքի համար ընտրվեց երկհարկանի դատարկ, լքված մի տուն: Վարիչը Մարինեն պիտի լիներ, ու աղջիկը սկսեց զբաղվել դրանով:

Գրիգորյան միայն ԲԻԽ-ի անդամները հավաքվել էին շտաբում քննարկելու համահայկական առաջին համագումարին ուղղված զեկուցը, որ պատրաստել էր Առնոն: Կարդացին դիմում-ուղերձը.

«Բերդաձորում ծանր կացություն է ստեղծվել: Ժողովուրդը դիմագրավելու եւ գոյատեւելու համար լարել է բոլոր ուժերը: Սկսվել է անհավասար պայքար: Մայր Հայաստանի, հատկապես նժդեհյան Զանգեզուրի նյութական ու բարոյահոգեբանական օժանդակությունը անգնահատելի է: Ուղղաթիռային կապ է ստեղծվել Գորիսի ու Երեւանի միջեւ, որը դարձավ Բերդաձորի «կյանքի ճանապարհը», որով ստանում ենք կենսարար ավիշ ու արյուն:

Բերդաձորի հերոսական ժողովրդի կողմից ողջունելով համագումարի պատգամավորներին, կկամենայինք, որ ձեր ուշադրության կենտրոնում պահեք Արցախի հիմնախնդիրը: Կորցնելով Բերդաձորը ստեղծվում է 80 կմ-ոց անդունդ մայր հայրենիքի եւ Արցախի միջեւ: Այսօր մենք մեր պարտքն ենք համարում Բերդաձորի ժողովրդի ձայնը հասցնել ձեզ, հարգելի պատգամավորներ, մենք պատրաստ ենք հանուն մեր հողի, պատվի եւ արժանապատվության զոհաբերել մեր կյանքը: Ձորակում հայտարարել ենք մեռնելը դավաճանություն է: Մենք առաջնորդվում ենք մեր մտքի, խղճի ուժով ու բանականությամբ: Մենք պատերազմ չենք ցանկանում: Մենք չենք ուզում ոչ մի կաթիլ արյուն թափել: Սակայն պատրաստ ենք ջարդել այն ձեռքը, որ կբարձրանա մեր հողի, օջախի, ազատության վրա:

Մենք հանգույցն ենք մայր Հայաստանի եւ Արցախի, եւ վստահ եղեք, որ այդ հանգույցը երբեք չի քանդվի: Բերդաձորի ինքնապաշտպանության խորհուրդը հույսով եւ հավատով դիմում է ձեզ, որ կհասկանաք մեզ եւ մեր հիմնախնդիրը, ու հանդիսավոր ելույթներից հետո չեք մոռանա Արցախը: Հակառակ դեպքում՝ մենք դատապարտված ենք կործանման, իսկ գալիք սերունդները ձեզ չեն ների: Հայոց Աստվածները ձեզ զորավիգ: Ուժ, ողջախոհություն եւ միասնություն: Վստահ ենք, որ Զանգեզուրի սրբացած հողում, որի վերջին Սպարապետը եղավ Գարեգին Նժդեհը, անցկացվող համաժողովը կնպաստի հայ ժողովրդի առաջընթացին, միավորմանը, հզորացմանը:

Մենք ուժեղ ենք, երբ միասին ենք»:

Բերդաձորի Ինքնապաշտպանության Խորհրդի եւ ձորակի հայ համայնքի կողմից

Նախագահ՝ Հարությունյան Անդրանիկ
Տեղակալ՝ Սկրտչյան Առնո

- Սկզբի մասը, ոնց՝ որ մի տեսակ երկար է ստացվել, կարող է կարդալիս ձանձրանան, գուցե կրճատենք,- կարծիք հայտնեց հաշվապահ Գառնիկը:

- Դե, եթե մենք կրակի մեջ ենք, իսկ իրենք մեր մասին կարդալուց ձանձրանալու են... Ոչ մի բառ չկրճատել,- ասաց Հրաչիկը:

Անդրանիկը ուղերձը ծրարեց, որ ուղարկի:

Նույն օրը Սաֆարյան Թաքուլն էլ կարդաց «Գրական թերթին» գրած իր թղթակցությունը, որն ընդունվեց գոհունակությամբ:

«Չհայտարարված պատերազմ: Արդեն երկու տարի է, ինչ վերեւնեղում ամեն ջանք թափում են, որ Արցախ աշխարհի «խաղատախտակին» հավերժական շախի վիճակ ստեղծեն, եւ դա նրանց հաջողվել է... Վերջին 6 ամսում ադրբեջանցիների ուշադրությունը սեւեռվեց Բերդաձոր հատվածի վրա: Մենք Ղազախով այլեւս ճանապարհ չունենք, եւ մոսկվի դատարկումը Ադրբեջանի ժողովրդական ճակատի նպատակն է: Հաչինը Հայաստան տանող ճանապարհն է փակել, Շուշին Լիսագորն ու Զարիսլուն: Փակել են ու ասել՝ դե, էդպես մնա, ոտքդ ոչ առաջ դիր, ոչ հետ, ոչ էլ աջ ու ձախ: Բերդաձորցին ուշադիր լսել է նրանց ու լուսինցի քուրդ քիրվային մի ավելորդ անգամ հիշեցրել Գորիսի աշխարհագրական դիրքի ու մոտիկության մասին: Իսկ Շուշիից նկածին հարցրել է՝ հիշո՞ւմ ես, չէ, որ Ստեփանակերտը մոտիկ է: Եթե փորձես գնալ շլնքիցդ կբռնեն ու կասեն պետք չէ: Այսպես թե այնպես ալխարհի հետ Բերդաձորի միակ ռեալ կապն այսօր մնում է ուղղաթիռային, որով ամիսը 1-2 անգամ մթերք է բերվում Հայաստանից, հիմնականում զենք հայտնաբերելու նպատակով ծակծկված պարկերով ալյուր:

- Էստեղ թուրք միլիցիոներն ու խաշնարածը նույն քարի հետեւից կրակում են գյուղի վրա, իսկ էնտեղ հայ միլիցիոները խորոված՝ շիշ ուռած ալյուրի պարկե՞րն է ծակծկոտում,- թեւաթափ բողոքում է բերդաձորցին:- Չի կարելի... Տո, գիտե՞ս ինչ կա, ջահել ջան, եթե վաղը մեր սունը քանդող լինի, ապա ոչ թուրքն է քանդելու, ոչ էլ «սաֆոնովնեն», այլ մեջ նստած «չի կարելին»:

Վերջապես սա ի՞նչ բան է, էս ինչ ժողովուրդ ենք: Տարիների ընթացքում ապուպապից մնացած հրացանները թուրք ու քուրդ քիրվաների հետ փոխանակեցինք էծ ու ոչխարով, հետո էծի միսը կամ քաղաք փախած մեր էրեխեքին ուղարկեցինք, կամ էլ ծախելով, մի քանի օժիտ-ություն փալաս առանք: Չէ, մենք մարտիկ չենք, մենք օժիտ դզողներ ենք: Գիտա մեր քիրվաների ձեռքում գտնվող մեր ու իրենց պապերի ու չգիտեմ, որ ջհանդամներից ճարած նրանց ավտոմատների ու կարաբինների դեմ կացնով ենք գիշերները հերթապահում: Թե մինչեւ ե՞րբ... Հատախազությունից եկած ռուս քննիչները պատմում են, որ Շուշիում Ալիեւեցին քանդում են, դեմներն առնել չի լինում, որսորդական հրացաններն ուսներին աջ ու ձախ ման են գալիս, զինվորները ում մոտենում են հանում որսորդմիության անդամության ու զենք ունենալու իրավունքի տոմսն աչքներն են կոխում: Որսորդական հրացանները գնվաքելու մասին մարզի զինվորական պարետի հրամանը նրանց չի վերաբերել: Քննիչն ասում է՝ մինչեւ զինվորը հարկ եղած պահին կրակելու իրավունք չստանա՝ դրությունն այս տարածքում չի նորմալանա:

Ստեփանակերտի զինվորն այդ իրավունքը ունի, նա ցանկացած պահի կարող է կրակել, բայց... հայի վրա:

- Դարդս ես չեմ է՞,- շարունակում է բերդածորցին, դու ինձ լավ հասկացիր. դարդս էնա, որ եթե Բերդածորը կորցրինք աշխարհի ու հայության առաջ բեղից ընկած բրինձ ենք դառնալու: Հազար տարի էլ որ անցնի՝ մեզ՝ ոչ հասկանալ կլինի, ոչ ներել: Ու դեռ, մեկն էլ ես, բողոքում ենք, թե թուրքն ինչու է կրակում, ռուս զինվորը ինչու է չտեսնելու տալիս: Տո, շատ էլ լավ են անում, ադաթա, նստած եգան գլխին կթրքին...

1989-ի սկզբին Մեծ Շեն վերադարձած երիտասարդներից ստեղծվեց մի ջոկատ, սկզբից՝ Էդուարդ Սաֆարյանի, այնուհետեւ Գագիկ Հարությունյանի գլխավորությամբ: Ջորակի գյուղերը գազիֆիկացվեցին շնորհիվ Գեորգի Թաքարյանի: Մեծ Շենի դպրոցը դարձավ միջնակարգ եւ կոչվեց Ջորավար Անդրանիկի անունով: Երեւանի ոսկերչական գործարանի տնօրեն Էմիլ Գրիգորյանի եւ մեծշենցի Գագիկ Շաքարյանի մեկ տարի տեւած չարչարանքները պսակվեցին հաջողությամբ՝ Մեծ Շենում բացվեց կիսաքանկարժեք քարերի մշակման մասնաճյուղ: Գյուղում ուղղակի «զավոդ» են ասում: Սակայն մեկ շաբաթ հետո, երբ Լիսագորում իմացան, եթե մինչ այդ միայն գիշերներն էին հոսանքն անջատում, ապա այս անգամ ցերեկն էլ անջատեցին ու հավաքելով Մեծ Շենի ցանկացած հեռախոսահամար ծաղրեցին մեր զավոդը: Բայց երբ տեսան, որ Բերդածորի ինքնապաշտպանության խորհուրդը դրա հոգսն էլ է քաշել «Հայէլեկտրո» գործարանից յուրաքանչյուր գյուղի համար մեկական շարժական էլեկտրակայան էր բերել տվել, եւ գյուղերը առաջվա պես լուսավորվում են, ծաղրական քրքիջը սառել է դեմքներին, դարձել են աղու տանձ կծած, ու սկսել են ավելի խոշոր քարեր ժողովել ճանապարհի եզրին՝ Բերդածորի ավտոբուսը քարկոծելու համար: Տարեմուտին Մեծ Շենում բացվեց շուրջօրյա հեռագրատուն՝ Գորիսի հետ օդային կապով: Երբ բերդածորցին հայտնվում է Ստեփանակերտում նրան զարմացած հարցնում են՝ էս ո՞նց ես եկել: Նոր տարվա նախօրեին նա ոչ միայն կարողացավ Ստեփանակերտ հասնել, այլեւ քաղաքի մանկապարտեզների համար 15 եղեւնի էլ նվեր տարավ:

Միանգամայն հասկանալի է, որ հավերժական շախի վիճակում ապրելը անհնար է: Սակայն, երբ խոզեր են մորթում, երբ Մեծ Շենի գյուղամիջում սեղանները շարած գազի մուտքն ես նշում ու մի կարմիր «սալյուտ» ես արձակում, ու 5 րոպե հետո Գորիսի շրջանի Տեղ գյուղից զանգում են, թե ինչ է պատահել, ապրելը Բերդածորում դառնում է հնարավոր ու նպատակային: Գյուղերն անասուններով լցվել են: Տարվա էս օրերին ամեն տուն 10-20 այծ ու ոչխար էր ծախում, կով ու հորթ

էր հանձնում պետությանը: Իսկ հիմա ո՞ւմ ծախես: Եթե չծախես ինչո՞վ պտահես, անասնակեր չկա: Դե, պետությանը հանձնելն էլ, իմացած կլինեք, մի ամիս առաջ մեր անհատական անասունները տանում էինք Ստեփանակերտ, Շուշիի մոտ նաբիները, մոտ 3 հազար հոգի , ճանապարհը փակեցին անասունները տարան, մեքենաները հրկիզեցին ու Ու վարորդին էլ՝ Մկրտչյան Արմոյին երեք տեղից դանակահարեցին: Հանձավ, որովհետեւ ֆիդայու թոռ է: Էսքան անասուն մորթե՞լ կլինի, որ սենք ենք մորթում մեր էս մի թիքա գյուղում, ոչ առնող կա, ոչ ծրի ուզող: Բա մսի պես ապրանք լինի, ու մի ուղղաթիռ չլինի՞, որ կանոնավոր կերպով գա ու տանի Հայաստանի խանութները լցնի:

Շնորհակալ ենք, Հայաստանից օգնում են: Բայց հասկանալ է պետք մի բան, որ եթե այնտեղ կա մի կոլեկտիվ ուր գոնե մի երիտասարդ արդսվսցի է դեռ աշխատում, նշանակում է այդ կոլեկտիվը Արցախը գերությունից ազատելու գործում ոչինչ չի արել: Մեզ հավաքովի տնակներ են պետք, տանենք Լաչինի կողքին՝ Կոռնիձորի դիմաց շարենք, որ էս ցանկելները գնան ազատ ապրեն. թե չէ սահմանից 5-6 կմ հետ ենք քաշվել, բառել էս սարի գլխին որ ի՞նչ... Այն էլ ասեմ, որ բերդածորցին շատ բարի ու անհիշաչար է... Նույնիսկ իր ճամփան փակող լաչինցու նկատմամբ: Երբ «ժամանակ» ծրագրից հետո՝ գյուղերում հավաքվում են, որ իրենց լսածը իրար պատմելով հասկանան, կարծիք հայտնողներ են լինում, որ վատ չէր լինի եթե հայկական հեռուստատեսությամբ ժամանակ առ ժամանակ քրդերեն պատմական բնույթի հաղորդում եթեր տրվեր՝ Բերդածորցին այսպես է ապրում: 1990, հունվար»:

Առնոն հաճախ էր մտնում կոլխոզի խառատի արհեստանոց ու ժամերով այնտեղից դուրս չէր գալիս: Շամոն մի օր մտավ, տեսավ Առնոն գրպանիր երկաթե հաստոցի վրա փռած խառատ Մինասյան Վլադիկի հետ ինչ-որ բան են սարքում:

Էս հո թնդանոթի նման է,- ասաց Շամոն՝ երկար-բարակ դիտելուց ու տնտղելուց հետո:

Երկու շաբաթից թնդանոթը պատրաստ էր ու տանում են փորձարկելու՝ Շամոյի ատամը սարսափելի ցավում էր, պիտի գնար քաղաք, բայց նրան հաճույք վայելելու առիթը՝ ոնց բաց թողներ: Աշնանային պարզ, արեւոտ օր էր, եւ Առնոն, Շամոն, Թայիրյան Վլադիկը, սիսիանցի զինագործ մի տղա Սամվել անունով, որ արհեստանոցում օգնում էր, Արմիկի «Բելառուս»-ով՝ թնդանոթը տանում-հասցնում են Մեյդան կոչվող վայրը: Տղաները մի տեսակ՝ թերահավատությամբ են նայում ինք-

նաշեն զենքին, իսկ Առնոյի մոտ միայն մեծ ոգեւորություն կար:

Դետոնատորը դրեց ու պատրաստվեց քողը ձգել: Տղաներին պատվիրել էր մտնել թփերի հետեւը: Առնոն թնդանոթի փողը նախապես ուղղել էր դեպի Հունանավ գյուղը, քաշեց քողը, եւ այնպիսի մի դղրդոց բռնեց ծորակը, որ տղաների ականջները բռնվեցին:

- Ով էս հողի վրա գա՝ սրանով հերը կանիծենք,- Առնոյի խանդավառությանը չափ չկար: Արկը շպրտվել էր 5-6 կմ-ի վրա ու պայթել:

Տղաների հետ դառնալը ոնց որ մարտի դաշտից հաղթանակով տուն դառնային: Օրերը սովորական ընթացք ունեին. Առնոն հանձնարարություններ էր տալիս, հերթապահության ժամանակացույցը ճշտում, տղաներից ոմանց ուղարկում կոլտնտեսության աշխատանքներին օգնելու, ինքը սուսուփուս, գլուխը կախ շտաբից դուրս գալիս ու դարձյալ ժամերով չէր երեւում: Խիստ զբաղվածության պատճառով տուն գրեթե չէր գնում: Եվ ինչպես միշտ, այս անգամ էլ հայրը կանգնեց շտաբի շեմին խիստ ու խոժոռ հայացքով:

- Տեղը գիտենք, գնանք,- Շամոն ու Արմիկը ուղեկցեցին իրենց ուսուցչին:

Արհեստանոցում սեղանին մի նոր գծագիր էր փռված, որից տղաները բան չհասկացան:

- Առնո, սա ի՞նչ պիտի լինի:

- «Շանթ»:

- Էդ տեսակ զենքի անուն լսած չկանք,- ասաց Արմիկը:

Առնոն քթի տակ ժպտաց.

- Անունը կարեւոր չի, մենակ թե զենք լինի ու պայթի:

Հոր լուռ հանդիմանությանը պատասխանեց մեղավոր ժպիտով եւ ձեռքերի համեստ ու զուսպ շարժումով ցույց տվեց իր զբաղվածությունը: Տղաներին արդեն չէր զարմացնում երկուսի անբառ զրույցը: Երբ Միքայելը դուրս էր գալիս, որդին ուղեկցեց մինչեւ դուռը.

- Գալու եմ: Ժամանակ կգտնեմ կմտնեմ:

Երբ զենքը պատրաստ էր, տղաները տեսան, որ սա ականանետի նմանություն ունի: Նախկին խմբով, Արտաշն ու Ենոքն էլ հետները, տարան փորձարկման: Անցան Շիգեցեք տափը, հասան Ծլլան աղբյուրին: Չիները հեռու կապեցին, շալակեցին բեռները, շարունակեցին ճանապարհը: Ամենածանր բեռը, ինչպես միշտ, շալակեց Առնոն: Արդեն գտնվում էին Լիսագորից 300-400 մետր հեռավորության վրա:

«Շանթ»-ը պիտի կրակեն ուսին դրած:

- Վտանգավոր է, Առնո, պապը ամեն անգամ գաթա չի ուտի,- զգուշացրեց Շամոն, բայց հրամանատարը ուշադրություն չդարձրեց:

Մատերքում մի քիչ ցածրում ու պինդ թխկի ծառ կար: Բնի վրա, որտեղով ճյուղերը բաժանվում են, ականանետը տեղավորեց, ամուր փաթաթեց հաստ ճյուղերին, բարակ թելից հյուսած պարանը կապեց, 5 մետր հեռացավ ու ձգեց:

Պայթյուն տեղի չունեցավ:

Ինչ ուզում եք ասեք, կարաբինս դրա հետ չեմ փոխի,- ասաց Ենոքը արժանանալով ընկերների խեթ հայացքին:

Դետոնատորը թաց է,- եզրակացրեց Առնոն:

Ենոքը այդ օրն էր նկատել, որ Առնոյի ձեռքի միջնամատը բարակած ու գուսացած էր:

Ո՞նց է պատահել,- չզսպեց հետաքրքրությունը:

Դատարկ բան է, վաղուց է պատահել, լաբորատորիայում փորձի ժամանակ:

Դասդ տայիր, էլի, ինչ գործ ունեիր...

Շամոն բռնեց Ենոքի կողը, այսինքն՝ լռիր, հասկացնելով, որ առանց այն էլ Առնոյի ունքամիջից աղու է կաթում:

Այդ օրը տխուր վերադարձան:

Առնոն երկու օր չէր երեւում, հետո եկավ ու թե.

Տղերք, էնպիսի զենք է ստացվել, էնպիսի զենք, գնացինք...

Այս անգամ փորձարկման վայրը ընտրվել էր Բաղունց խութը: Մնացած ամեն ինչը կատարվեց նույն ձեւով:

Կրակ դուրս ժայթքեց: Ծուխը բռնեց օդը: Չորակը դղրդաց:

Հզոր զենք է,- Սաքոն ու Խեչոն համբուրեցին մետաղը:

Երկրորդ արկը փորձարկելը շռայլություն է,- ասաց Առնոն: Հինգ տարի մնում էր:

Էդ դո՞ւ ես սարքել,- արմանք-զարմանք կտրած Ենոքի հարցին Առնոն պատասխանեց միայն գոհ ու լայն ժպիտով: Առնոն զենքի սիրահարը էր, հենց որ ստանում էին, հատկապես նոր տեսակի, աչքերը փայլում էին: Տղաները զարմանում էին, որ նա ամեն տեսակ զենքից գլուխ է հանում, իսկ ազատ ժամերին ատրճանակ էր սարքում-հավաքում:

«Շանթ»-ը հետագայում օգտագործվել է Կանաչ Թալային հակահարված տալու ժամանակ եւ մեծ խուճապ է առաջացրել:

Հետդարձի ճանապարհին Շամոն աշխատում էր քայլել հրամանատարի կողքով, իսկ ոգեւորությունից մարմինը ավելի էր թեքվում, լնգլնգում, ընդգծում կաղությունը: Առնոն նրա աչքերի պեծպեծին տալը նկատում ու չնկատելուն է տալիս: Հայը պիտի սիրի զենքը ու արդեն փոխում են: Շմավոն Ասրյանի մտքով չէր էլ անցնում, որ ընդամենը երկու տարի հետո պիտի սկսվեր իսկական պատերազմը՝ ռումբերով,

տանկերով, հրանոթներով, մարդկային զոհերով ընկերոջ, հարազատի, արյունակցի, ինքը ամրացագիր ունենալով պիտի կանգներ Ստեփանակերտի զինկոմիսարիատի աշխատակցի առաջ պնդելով, որ իրեն էլ զինվոր վերցնեն: «Նրա համար էլ անելու շատ գործ կա»,- ասել էր զինկոմը եւ անունը գրել ցուցակում: Պատերազմի հետ , պատերազմից հետո պիտի վերջանար նաեւ Շամոյի ամուրի կյանքը: Սայրը Հայաստանից հետ չեկավ, տան ներսում լռությունը դրսի խաղաղության հետ կարծես ճնշում էր նրան, եւ միջնորդ բարեկամուհուն տվեց իր համաձայնությունը ընդունելու քաղաքի աղջկան: Երկու եւ մի քիչ էլ ավելի տարի պիտի անցներ, քաղաքացի կինը գյուղապետի աշխատասենյակում պատահաբար, հենց այնպես նստած երկու ոստիկանի պիտի ասեր «էդ մեր Շամոյի գնդացրի համա՞ր եք եկել...»: Ու գյուղապետ Գրիշա Սարգսյանը ինչքան էլ փորձեր կոծկել միջադեպը, ոստիկաններն արդեն տան միջանցքում կանացի խալաթը պիտի քաշեին ու կախարանից վերցնեին ականանետը:

- Սա ի՞նչ է,- զարմանքից բխել է անհեթեթ հարցը:

- Ինչ տեսնում եք,- առանց շփոթվելու պատասխանել է Շամոն:

- Ինչու չես հանձնել:

- Խի՞ պատերազմը վերջացել ա, որ բերեմ հանձնեմ:

- Մի տարի առաջ է զինադադար կնքվել, այ աշխարհի անցուդարձից բեյխաբար:

- Ձեզ համար է վերջացել, հլա ո՞ւր եք...

Ոստիկանները իրար նայեցին, այսինքն սա ոնց որ ... Ու փորձում են խոսք քաշել.

- Էլի զենք ունե՞ս...

- Հա՛յ-հարա՛յ, ծեր իմացածներից չեմ, ազերին իմ թաքցրած զենքը չի գտել...

Հետո ոստիկանները մահճակալի ծածկոցի ծայրը բարձրացրել, ձեռքի գնդացիրը քաշել-հանել են:

- Հը՞... էդ ի՞նչ է... Ո՞վ է դրել,- իբր զարմացած է, ու անմեղ տեսք է ընդունել Շամոն:

- Ի՞նչ ես քեզ էշի տեղ դնում, մահճակալին քնում ես, չես իմանո՞ւմ տակը ինչ կա,- հետո ոստիկանները պիտի զինաթափվեին նրա շիտակության դեմ:

...Պատերազմը Շամոյի համար չէր վերջացել ու չպիտի վերջանար: Այն մտել էր նրա արյան ու ավիշի, հիշողության մեջ որպես ներկա, որպես միակ լիարժեք եւ լիարյուն ապրված կյանքի հատված: Կին ու երեխաներ պիտի ունենար, աշխատանքի գնար, իր հաշվապահությունն

աներ, բայց միեւնույն է, նրան թվում էր, թե մեկ էլ տեսար ամեն ինչ նորից խառնվեց... Ու նրա խաղաղ օրերում պատերազմը ավելի շատ կար

Իսկ մինչ այդ պատերազմը յոթ սարի հետեւում էր, ու տղաները թեթեւաշեն ականանետի հաջող փորձարկումից գոհ-գոհ գյուղ էին դառնում...

Ստեփանակերտում, Մարինեենց տանը Անդրանիկը թուղթ ու գրիչ խնդրեց: Առնոն երեւան պիտի գնար, եւ Անդրանիկը հոդված պիտի ուղարկեր արձակագիր Ալվարդ Պետրոսյանին «Գրական թերթ»-ի համար: Որպեսզի չխանգարի, աղջիկը երբեմն հուշիկ մտնում է թղթի մի կտոր դնում դեմը, ասենք թե, վրան գրած սուրճ կուզե՞ս: Անդրանիկը կտրվում, առանց գլուխը բարձրացնելու գլխով է անում: Մարինեն տեսել է, որ Անդրանիկը ամբողջովին ծորակի կյանքով է ապրում. Բերդաձորում գործարաններ բացվեն, Հայաստանում ինչքան բերդաձորցիներ կան, պիտի գան, ապրելը այնքան բարեկեցիկ դառնա, որ մարդիկ լքեն գյուղը...

Մարինե,- աղջիկը ներս մտավ,- կարդամ՝ լսիր:

Ներիր, բայց դու ավելի լավ կարող էիր գրել,- ուշադիր լսելուց հետո ասաց աղջիկը:

Դու էլ իբր բա՞ն ես հասկանում...

Մի քիչ շտապողականություն կա: Ճիշտն ասած, դպրոցական շարադրության է նման,- աղջիկը ավելի շատ նրա հոգու հետ էր խաղում:

Առնոն այդ պահին ներս մտավ, կարդաց, հավանեց ու դրեց պայուսակի մեջ:

Միեւնույն է, ինքը դրանից ավելի լավ կարող էր գրել:- Աղջկա շարադրությունը տեղի չէր տալիս:

Ա՛յ քեզ դարաբաղցու համառ կող...- Անդրանիկը չնկատեց, թե ինչպես Մարինեն հոդվածի սեւագրության թղթերը աննկատ վերցրեց ու խորեց իր գրքերի տակ, որպեսզի, երբ տարիներն անցնեն, երբ խաղաղության ու պատերազմի թոհուբոհում իրենց անմահությունը կնքեն այդ արտակարգ, արտասովոր, ուժեղ տղամարդիկ եւ նրանց շատ ընկերներ, ինքը իր մենությունը լցնի այդ դեղնած թղթերի հին բույրով, թղթեր, որոնց բառն ու տառը անգիր արած, պիտի բացի, նորից ու նորից կարդա, ու սիրտը տակնուվրա լինի ակնթարթը չբռնելու ու հավերժություն չդարձնելու ցավից, ափսոսանքի զգացումից, որ միայն հուշը մնաց իրեն... Եթե իմանար որ ակնթարթը կանգ էր առել...

Իսկ Անդրանիկ Հարությունյանի թղթակցությունը հետեւյալն էր.

«Ասացեք, դուք երբեւէ եղե՞լ եք Արցախում: Եթե ոչ, ապա դուք շատ բախտավոր եք, որովհետեւ մեկ անգամ լինելով այստեղ, դուք մեկընդմիշտ կապվում եք այս երկրին, այս տարօրինակ մարդկանց, այս լեռներին: Աշխարհի ուրիշ ոչ մի անկյունում դուք չեք հանդիպի այսքան կատարելության, որպիսին այստեղ է: Արցախը իմ մանկության երազների այն ճերմակազգեստ աղջիկն է, որ օդի պես թեթեւ գնաց եւ խառնվեց արեւի լույսին, որը ինձ համար դարձավ հավերժական կարոտ, ու ես նրան հիմա փնտրում եմ ամենուր: Ես գիտեմ, մի օր Նա կգա, եւ կարոտից ծռվացած երկու սիրտ կգրկախառնվեն, եւ այդ օրը կլինի աշխարհում ամենաերջանիկը: Ես հավատում եմ:

Ավտոբուսի պատուհանից տեսնում եմ Շուշին է, առջեւից եւ հետեւից ուղեկցող տանկերն են ու զինվորական շարասյունը. մենք մեզ զգում ենք ինչպես ուրիշ մոլորակում: Մենք գնում ենք Բերդաձոր: Գնում ենք այս կողմերում լեգենդ դարձած Դալամա Սահակի, Ոսկանանց Եղիշի ու Դաչաղ Սահակի երկիրը: Մի կողմում Շուշին է արքայական բազմած, իսկ մյուս կողմից անդնդախոր ձորերն են, ասես հեքիաթի մեջ եմ: Բերդաձորը նման է աշխարհից խռոված, մոլորակի հոգսերից ձանձրացած մի մարդու, որը գլուխն առել ու կուչ է եկել իր ափերի մեջ: ... Մոռացված նախնիների երկիր... Ինչեր չի տեսել իր անցած փառահեղ պատմության ընթացքում, բայց այսօրվա պես խեղճացած, այսօրվա պես ավերակ երբեք չի եղել: 70 տարիների ընթացքում կամաց-կամաց հոգեվարքի է հասել՝ ամեն րոպե հոգին տալու սպասումով:

Բերդաձորը մինչ խորհրդայնացումը ունեցել է 28 հայկական շեն, այսօր մնացել է հինգը, որից մեկը արդեն թուրքացած, մյուսը Ծաղկաձորը (Տասը Վերստ), մի քանի տուն ծերունիներով, առայժմ ծանր շնչող, գյուղ, որը գտնվում է Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհին, գյուղ, որը այդ ճանապարհին միակն է, որ հայկական է մնացել: Հիմա Նոր Հաճնից տեղացի մի քանի ջահել եկել են, բայց դա սփոփանք չէ, դա վերք չի բուժի: Պետք է գան կանանցով ու երեխաներով: Սպասում ենք, բայց չկան, շեն գալիս:

Հաջորդ գյուղը Եղցահողն է, որը գտնվում է ճանապարհից աջ: Սա սահմանապահ գյուղ է: Ղարաբաղյան շարժումից հետո 15 ընտանիք է վերադարձել: Գյուղում հիմա նեղվածք է, ազատ տուն չկա, բայց ոչ ոք չի բողոքում, ոչ ոք չի դժգոհում: Դեռ լավ օրեր են գալու, Եղցահողցին դրան հավատում է: Եկած ջահելները մեկը մեկից լավ, մեկը մեկից նվիրված:

Ճանապարհից ձախ, մի բարձր լեռան վրա է գտնվում Մեծ Շենը, որը իր դիրքով մի քիչ նման է Շուշիին: Այս գյուղը պարզապես հրաշքով վերակենդանացավ. այստեղ 14 ընտանիք, ջահելներ իրենց կանանցով ու երեխաներով երեւանից վերադարձել են: Սիրունիկ ու հրաշալի երեխաներով: Ճիշտ է մեկը ետ գնաց, այսինքն փախավ, փոխդրի հետ առայժմ ժամանակ չկա զբաղվելու, բայց հետո հասանելի լինելու է այդ ժամանակը... Ես հիշում եմ գրողների միության սրճարանը, երբ Սաֆարյան Թաքուլը հուզված եւ ոգեւորված պատմում էր վերադարձողների մասին: Նրա պատմելու հուզախառն տոնը ինձ մի պահ տարավ Վան, ու ես մի պահ ապրեցի, պատկերացրի իմ վերադարձը դեպի երգիր ...

Եվ վերջին գյուղը, որը Հին Շենն է, ամենամեծն է Բերդաձորի այս չորս հայկական գյուղերի մեջ եւ ամենաբարեկեցիկը: Ճիշտ է, մի քանի ընտանիք են միայն վերադարձել այստեղ, բայց շատերն են պատրաստ Ստեփանակերտից տեղափոխվելու, եթե պայմաններ ստեղծենք եւ աշխատանքով ապահովենք: Հին Շենը նույնպես սահմանային գյուղ է, այսինքն այս ձորակում բոլորն են սահմանապահ: Այսպես, այս հսկայական տարածքը ծածկված է փարթամ անտառներով ու մարգագետիններով: Երկիրը հարուստ է, անասնապահության համար ունի բոլոր պայմանները: Այստեղի բանջարեղենի եւ հատիկ լոբու համը ուրիշ ոչ մի տեղ չես գտնի: Անտառները հարուստ են ընկույզով, մոշով եւ հոնով, կրականձ եւ խնձոր: Գարնանը այս չորս գյուղերը նման են առամանդի, եւ եթե երբեւէ եղել է դրախտը, ապա անպայման եղել է այստեղ:

Բերդաձորը կտրված է Հայաստանից եւ Արցախից, այստեղով է անցնում մայր հայրենիք տանող ամենակարճ ճանապարհը: Մեր դիմաց Լաչինն է իր գյուղերով, հետեւում Շուշին: 82 հազար ազերիներով շրջապատված ծովի մեջ մոտավորապես 1000 բերդաձորցիներ արդեն երրորդ տարին է կպած պոկ չեն գալիս իրենց քերծերից: Այստեղ առողջ ու պինդ ժողովուրդ է ապրում, եւ ոչ ոք չի լքելու իր երկիրը: Այստեղ ֆիդայիների թոռներն են, եւ արյունը չի փոխվել: Երբ 1989-ի հունիսի 23-ին առավոտյան ժամը 6 անց 30-ին մենք ոտք դրինք այս սուրբ հողը, հենց այդ օրն էլ բերդաձորցիները զգացին Հայաստանը: Այդ նույն թվականին հիմնադրվեց ԲԻԽ-ը: Ահա այդ խորհրդի առաջին կազմը. Մկրտչյան Առնո, Սաֆարյան Թաքուլ, Դավթյան Սեյրան, Սարգսյան Գառնիկ, Պետրոսյան Հրաչիկ, Հարությունյան Անդրանիկ, Գրիգորյան Սլավիկ:

Ձորակը կամաց-կամաց սկսեց ապրել նոր կյանքով: ԲԻԽ-ը կազմվեց աշխարհիկ մարդկանցից, մեկը գրող, մյուսը՝ ժուռնալիստ, ման-

կավարժ, բժիշկ եւ հաշվապահ, ինչպես նաեւ մեխանիզատոր: Ոչ մի պրոֆեսիոնալ զինվորական չունենք: Ստեղծվեց ուղղաթիռային ուղիղ կապ: Բերդածորը նման է մի փոքր բուֆերային հանրապետության, որը ինքն է ինքնուրույն տնօրինում իր ճակատագիրը: Հայաստանից որպես հյուր ընդունել ենք երեք կարեւոր անձերի՝ Իգոր Մուրադյանին, Հայկոդպի վարչության երկու աշխատակիցներին՝ Մաթեւոսյանին ու Արայիկին:

Բերդածորը հանդիսանալով սահմանային գոտի Հայաստանի եւ Արցախի միջեւ ոչ միայն դիմակայել է թուրքերին, ազերիներին, այլեւ մի քանի անգամ, իսկ վերջերս ամեն շաբաթ, խորհրդային բանակի բռնություններին: Այսօր Ադրբեջանը իր երկու էմիսարների Սաֆոնովի եւ Պոլյանիչկոյի գլխավորությամբ Արցախում գտնվում են մի առաքելությամբ. հոգեբանական ճնշում գործադրելով Արցախի հիմնահարցը մեջտեղից վերացնել: Նրանք սպառնում են մեզ, մեղադրում են չկատարված հանցանքների մեջ: Մի խոսքով ոչ մի ջանք չեն խնայում Բերդածորը հայաթափ անելու համար: Նրանց նպատակն է լաչինյան պատը հեռացնել մինչեւ Ստեփանակերտ մինչեւ Մազե կամուրջ, այդ դեպքում կունենան 72կմ ազերաբնակ տարածք: Եվ Ղարաբաղի հարցը կլուծվի մեկընդմիշտ: Ահա թե որն է բանակի առաքելությունը: Իսկ վերջերս, երբ մի ծանոթ փոխգնդապետ, որը մի քանի անգամ սիրով մասնակցել է ալան-թալանին, բացահայտ ասաց. սրանց այստեղից հանելու մի ճանապարհ կա քշել Մագադան: Իսկ ես ուզում եմ ասել. ոչ, սրիկա, այդպիսի ճանապարհ չկա: Այստեղից դուրս գալու միակ ճանապարհը մահն է: Դու դեռ չես ճանաչում , թե ով է հայը: Ինչպես երեւում է այդ խոգի մռութին դեռ լավ չենք հասցրել: Շատ անգամ ենք տեսել, թե նա ինչպես է հայհոյում զինվորներին, որոնք դժկամությամբ են կատարում իր հրամանները:

Ճիշտ է Առնո Մկրտչյանը, հազար անգամ եւ երիցս ճիշտ է, որ ասում է՝ թուրքը կռվելուց չէ վտանգավոր, թուրքը լռելուց է վտանգավոր, որովհետեւ չգիտես, թե ինչ նոր դավեր է նյութելու քո դեմ... Մոսկվայի միջոցով: Մի քանի շանորդիներ կասկածելի ազգությամբ աշխատում են իրագործել այն, ինչ երկու տարում չհաջողվեց անել ազերիներին: Երբ Թաքուլը Մոսկվա էր մեկնում, մեքենայի պատուհանից երեւաց նրա տխուր ու մի քիչ էլ ծերացած դեմքը: Ինձ թվաց, թե նա այդ պահին մտածում է, թե այլեւս չի տեսնելու այս հողը, եւ սիրտս թաքուն ճմլվեց: Այստեղ բոլորն են այդպես հրաժեշտ տալիս, եւ բոլորն էլ վերադառնում են կարոտած, ասես հազար տարի չեն եղել Բերդածորում: Անցյալ տարի, երբ նախագահ Սաֆարյան էդիկը կառուցեց նոր ֆերմա, մարդիկ քսծիծաղ էին տալիս, մտքներում ասելով, թե ում համար է կառուցում: Բայց, երբ գյուղերում քաշվեց բնական գազ, հետո էլ բացվեց ոսկերչական գործարանի մասնաճյուղ, երբ մի քանի անգամ Բերդածոր եկավ Մխիթարյան Յուրան Նոր Հաճնի «Սապվիր» գործարանի տնօրենը, երբ որոշվեց, որ մեզ համար, այն էլ Տասը Վերստում, պետք է բացվի ադամանդի քարերի վերամշակման արտադրամաս, սկսեցին հավատալ, իսկ Անուշավան Գրիգորյանի եւ Իգոր Մուրադյանի ջանքերով, երբ որոշվեց ունենալ նաեւ սրճարան, դա ավելի զարմացրեց մարդկանց: Քիչ չէ Մուրադ Մուրադյանի օգնությունը , եւ ընդհանրապես Հայկոդպը այստեղ շատ բան արեց. այս տարի նրանց անմիջական օգնությամբ կբացվի նաեւ պահածոների արտադրամաս: Բերդածորցին սկսեց լիցքավորվել Հայաստանով: Հիմա էլ որոշել ենք կառուցել տներ, հիմնել նոր գյուղ: Համոզված եմ, որ դրան էլ կհասնենք: Ժամանակը շատ քիչ է, իսկ մենք ցավալիորեն շատ ուշ հասկացանք 1988-ի ապրիլին Իգոր Մուրադյանի այն կոչը, թե Արցախը պետք է թիզ-թիզ ազատագրենք տնտեսական ինտեգրացիայի ճանապարհով. թե չէ ինչքան էլ Գրիգորյան Սլավիկը, ինչպես դարաբաղցիներն են ասում՝ իրեն ճրագտի դպրոց վերաբացի-վերակառուցի, դատարկ բան է, եթե աշակերտ չկա այդ դպրոցում: Այսօր արդեն մոտ մեկ տասնյակ ընտանիքներ պատրաստ են տեղափոխվելու: Դրանցից առաջինն արդեն վաղը կժամանի, Սվետան իր ամուսնու եւ երեխաների հետ երեւանը թողած կգա, որովհետեւ հավատացին մեզ, համոզվեցին, որ մենք կհաղթենք: Ահա թե ինչքան կարեւոր է հավատը: Այսօր Երեւանի օդանավակայանում այնպես հարազատորեն են ընդունում բերդածորցուն, ինչպես ոչ մի մեկին: Ականջդ կանչի, Սերգեյ, ասում է, որ Բերդածոր եմ լսում անկախ ինձնից ոտքերս տանում են նրա մոտ: Ի՜նչ հերոսությամբ տղաները յոթ ամիս շարունակ վայրէջք էին կատարում ծորակի լեռներում: Ինչպե՞ս մոռանաս Շիրակի չարչարանքը, երբ իր պատկառելի տարիքին անհավատալի 20-ամյա տղայի նման ամբողջ օրը վազվզում է սրա-նրա համար լուծներ տեղափոխում: Չէ, ճիշտն ասած, երբ Շարժումը սկսվեց, բոլորիս համար անսպասելի հանկարծ բացահայտվեց երեւանցու կերպարը: Նրանք արեցին եւ անում են անհնարինը: Երեւանցու ուսերին է ամբողջ ծանրությունը: Ասացի եւ հանկարծ միտս եկան շուկայի գները. չէ, երեւանցիները հերոսական ժողովուրդ են:

Բերդածորի անունը տալիս աչքիս առաջ է փոքրամարմին ու սմքած 90 ամյա Վարսիկ տատը: Ինձ համար նա Բերդածորի խորհրդանիշն է: Նա, որ այնքան բարի է ու այնքան մայր: Նա, որ համբուրում է ինձ, շոյում ուսս, նա, որ իր մայրական չորացած մատներով ակոսում է արդեն

սպիտակած իմ մազերը: Բերդաձորը ինձ համար Առնոն է. Խենթ Սահակի թոռը: Մարդ, որ կարող է իր ընտանիքի, իր երեխաների հաշվին ուրիշների համար նվիրաբերել կյանքը: Նրա բարի ու անսահման հավատով լի աչքերն են միշտ իմ մեջ ամրացնում հավատը:

Բերդաձորը ինձ համար Սլավիկն է, Ոսկանանց Եղիշի թոռը, առանց որի իմ մեջ մի հատիկ օրն էլ դատարկվում է ու դառնում անիմաստ: Նա է, որ դպրոցում հայկական դպրոցում, առաջինը սկսեց դասավանդել Ցեղակրոն, չնայած դրա կարիքը թերեւս ամենաքիչը մեր երեխաներն են զգում: Բերդաձորը Սեյրանն է, բժիշկ՝ որի մասին անգամ Ստեփանակերտում ափսոսանքով են խոսում: Թաթուլն է, որ բարեկեցիկ կյանքը թողել, եկել ու այստեղ հոր հետ, իր հրաշալի երեք աղջիկների հետ լցրել է այն դատարկությունը, որը միայն ինքը կարող է լցնել: Սաֆարյան Էդիկն է, որ գիշեր-ցերեկ նոր բան կառուցելու, ստեղծելու տենդով է այրվում: Հրաչն է, որի վախը միայն մեռնելուց հետո կտեսնեն. Ղաչաղ Սահակի թոռ Վիլենն է, որ հրաշալի մարդ է ու անշահախնդիր երազող: Գագիկն ու Սերգեյն են...

Բերդաձորը, դա նրա հրաշալի մարդիկ են: Թող ներեն ինձ, եթե անուններ մոռացա հիշատակել, բոլորն են արժանի: Ջորակն այսօր, ինչպես երբեք, համախմբված է ու համերաշխ անկախ իր մանրմունր կենցաղային վեճերից, եւ այսօր նրա վերակենդանացումը կախված է բոլորից, թե Հայաստանից, եւ թե Ղարաբաղից: Որպեսզի նախագահ Հենրիկը լավատես լինի իր գյուղի վաղվա օրվա համար, նա պետք է տեսնի, շոշափի, գործնականում համոզվի, որ տները կկառուցվեն, որ գյուղը կունենա աշխատատեղ, որ եկած ջահելներին կկարողանա ապահովել աշխատանքով: Այսօր Երեւանում կան մարդիկ, որոնք ոչինչ չեն խնայում հանուն Բերդաձորի հարության, մենք էլ հավատում ենք նրանց եւ չենք կարող չհավատալ Ալվարդ Պետրոսյանի եւ Լորենց Առուշանյանի նվիրվածությանը, չենք կարող չհավատալ Երեւանի օդաչուներին, Գորիսի տղաներին: Մենք վաղուց ապրում ենք մեկս մյուսով: Ստեփանակերտը նույնպես պետք է անի հնարավոր ամեն ինչ, եւ անում է:

Այստեղ մարդիկ տեսան Արցախի հոգեւոր առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանին եւ վերափոխվեցին, շփվեցին Ժաննա Գալստյանի հետ, եւ համարձակություն ձեռք բերին: Բերդաձորը աղուհացով ժողովուրդ ունի, նրանք չեն մոռանա ոչ մեկի արածը: Մենք մեր աչքփակությամբ, թուրքը իր աչքաբացությամբ է հասցրել այս վիճակին, մեր արթնացումը եղավ շատ ուշ, բայց ոչ ուշացած: Ենթաշրջանի գոյությունը արդեն երաշխիք է հայ ժողովրդի հարատեւության:

Մենք եւ մեր նախնիները պահպանվել ենք մի հանգամանքի շնորհիվ՝ չան հետ ընկերություն արա, բայց փայտը ձեռքիցդ մի գցի: Մենք վաղուց ենք համոզվել, որ հայ ժողովրդի գոյատեւման գաղտնիքը զենքի մեջ է, եւ մինչեւ մենք չդառնանք ուժ, ոչ ոք մեզ հետ հաշվի չի նստելու: Երենեկ նրան, ով չի խաբվի այս հարաբերական խաղաղությանը: Երանի՜ երենեկ նրան, ով իր ծոցում ունի իր ամենամտերիմ բարեկամին՝ զենքը: Ամեն անգամ, երբ քարկոծում կամ կրակում են մեր ավտոբուսի կամ մեքենաների վրա, ես համոզվում եմ, իմ վանեցի պապի Գրիգորի՝ ճշմարտության մեջ, որ աշխարհը փուլ կգա մեր գլխին, եթե զենք չունենանք:

Վերադարձեք Բերդաձոր: Այստեղ անցյալ տարի երկու նորածին երեխա ծնվեց, մեկը Նաստ, մյուսը Արամազդ: Երկուսն էլ հայ հին աստվածների անունով կոչվեցին, եւ այդ երկու ծնունդով Բերդաձորը հանդես եկավ աշխարհին իր գոյության փաստը, եւ այն երեք տղաների նահատակվելու իմաստը, որ նրանք անհիշատակ չեն մնա այս երկնքի տակ:

Մուշեղ, Արշակ, Անդրանիկ, դուք հավերժ մեզ հետ եք, եւ դուք միշտ պիտի լինեք յուրաքանչյուր նորածնի հետ:

Մենք խաղաղ օրեր քիչ ենք տեսել: Մեր շուրջը եղել է գարմանալի ուժերություն Հայաստանի մամուլի եւ հեռուստատեսության կողմից: Մենք մեզ չենք գովազդել, մեր ծանր վիճակը կարգավորել ենք ինքնուրույն: Կարելի է, դա շատ լավ է ու կարեւոր: Բայց վերջին հաշվով չի կարելի ժողովրդին զրկել ինքնաճանաչման իրավունքից: Ես կրկնած չեմ լինի եթե ասեմ Բերդաձորը արցախյան հաղթանակի անկյունաքարն է: Մենք այսօր պետք է մի բան գիտակցենք, որ Հայաստանում գոյություն ունեցող այս հիվանդ վիճակը ոչ մի բանով չպետք է ազդի Ղարաբաղի վրա, թե չէ այսօր այստեղ այնպիսի կարծիք է ստեղծվում, որ մենք այլեւս պետք չենք Հայաստանին: Արցախը Հայաստանի աղն ու հացն է, եւ առանց աղ ու հացի մենք ինքնակամ մեզ կդատապարտենք սովի եւ թերհասպանության:

Այս հոդվածը գրելիս ես շատ էի կամենում երախտիքի իմ խոսքը ասելու Արցախի եւ Հայաստանի այն բոլոր կազմակերպություններին, որոնք անշահախնդիր ու անմնացորդ օգնել են մեր պրոբլեմները լուծելու, բայց բոլորին առանձին-առանձին շեշտել հնարավոր չէ: Ուզում եմ մեն մի հատիկ բացառություն անել. «Հայ Դատը» լրջորեն զբաղվել ու զբաղվում է այս գողտրիկ հողակտորով: Այս մասին չշեշտելը սխալ կլինի: Իմ երախտիքն եմ հայտնում Իգոր Մուրադյանին, որի շնորհիվ մի քանի արտադրություն է բացվել մեզ մոտ, եւ որը որ-

պես օգնություն մի քանի հարյուր հազար փող է փոխանցել մեր գյուղերի վերականգնման համար:

Բերդածորը, որն այսօր գտնվում է պայքարի առաջին գծում, պետք է ապրի եւ ամրացվի: Նա առաջինն է կրակը իր վրա վերցնում, եւ եթե քանդվի այս պատը, բերդն այլեւս ոչինչ անել չի կարողանալու:

Յուրաքանչյուր առավոտ մեզ բերում է մի նոր անակնկալ եւ, ճիշտն ասած մենք չենք կարող ասել, թե ինչ կտա մեզ վաղվա օրը, բայց այս անորոշության մեջ անգամ մենք ունենք մեր հստակ ծրագիրը. պետք է կառուցենք ու վերաշինենք, պետք է շատանանք, այլապես հորդանեորին անհնար կլինի կանգնեցնել: Մեզ, թերեւս ավելի լուրջ բան է պետք, ունենալ հայկական կանոնավոր բանակ, որը կռվել գիտենար: Սարդարապատով մենք մեզ կպաշտպանենք միայն մի փոքր հատվածի վրա: Բայց չէ՞որ այսօր մենք արթնանում ենք խոր թմբիրից: Այսօր մենք պահանջատեր ենք: Մենք ուզում ենք վերակառուցել մեր ավերակ տունը: Իսկ յուրաքանչյուր ժողովուրդ պարտավոր է ինքը կառուցել իր սեփական տունը: Այդ տունը կառուցելու եւ մինչեւ Վան տանիքը կանգնեցնելու առաջին եւ ամենակարեւոր քարը ինձ համար Բերդածորն է: Եվ եթե ես չտեսնեմ իմ հաղթանակած ժողովրդին, հոգ չէ: Բերդածորը ճակատագիր է, եւ իմ Վահագն տղան պետք է սպասի այնքան, մինչեւ Լաչինի ճեղքը բացվի, եւ Հայաստանը մեկընդմիշտ իր մեջ առնի Արցախը:

Ով չի եղել Արցախում, նշանակում է կյանքում ոչինչ չի տեսել: Աշխարհի ոչ մի անկյունում դուք չեք հանդիպի նման կատարելության: Արցախը իմ մանկության երազների այն ճերմակագեստ աղջիկն է, որ օդի պես թեթեւ գնաց ու խառնվեց արեւի լույսին: Որն ինձ համար դարձավ հավերժական կարոտ, ու ես նրան փնտրում եմ ամենուր, ես գիտեմ նա մի օր կգա, այդ օրը աշխարհում կլինի ամենաերջանիկը: Ես հավատում եմ...

Անդրանիկ Հարությունյան
Բերդածորի ինքնապաշտպանության խորհրդի նախագահ»

ԱՆՉՆԱԳՐԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ
Թումասարի պաշտպանությունը

1990 թվականի հունվարի 15-ին Մոսկվան Ղարաբաղում մտցրեց արտակարգ դրություն: Հունվարի 20-ից հետո Վոլսկին իր կառավարման թիմով հեռացավ մարզից: Սկսվեցին Ադրբեջանի էմիսարներ Վիկտոր Պոլյանիչկոյի եւ արտակարգ դրության պատասխանատու գեներալ Սաֆոնովի տխրահռչակ ժամանակները: Նրանց նպատակն էր «կարգուկանոն» հաստատել, Ղարաբաղը ենթարկեցնել... Բաքվի իշխանությանը: Հայաստանում սկսվել էին Անկախության տրամադրությունները ու ձգտումները, իսկ Ադրբեջանը կուսակցական ղեկավար Այազ Մութալիբովի ղեկավարությամբ հավատարմություն էր խաղում Մոսկվայի հետ՝ քաղաքական «պտուղներ» շահելու ակնկալությամբ: «Արտակարգ դրության» մասին Գորբաչովի հրամանագրի մեջ ասված է, թե «Զգալիորեն ակտիվացել են ազգայնական եւ անջատողական զանազան միավորումների գործողությունները, որոնք սադրիչ աշխատանք են կատարում, հակամարտության մեջ ներքաշելով բնակչության ավելի ու ավելի լայն խավերի: Նրանք կատարում են հանդուգն հանցավոր արարքներ, ականապատում են ճանապարհներն ու կամուրջները, գնդակոծում բնակավայրերը, պատանդներ են վերցնում»: Սա հիմք է ծառայում, որպեսզի երեք օր հետո արտակարգ դրության շրջանի պարետ, գեներալ-մայոր Կոսոլապովը արձակի թիվ 1 հրամանը, որով արգելվում են ժողովների, հանրահավաքների, ցույցերի, փողոցային երթերի անցկացումը, հասարակական եւ ոչ ֆորմալ նոր կազմակերպությունների ստեղծումը: Դադարեցվում է ինքնապաշտպանության պահակակետերի, կամավոր ժողովրդական դրուժինաների գործունեությունը: Տեղական գրանցում չունեցող բոլոր քաղաքացիներին առաջարկվում է մինչեւ 1990թ. հունվարի 21-ի ժամը 18.00-ն թողնել արտակարգ դրության շրջանի տարածքը: Գործուղման եկած կամ արտակարգ դրության շրջան ոտք դրած անձը պետք է գրանցվի պարետատանը: Մտցվում է փաստաթղթերի ստուգում, զենքի կասկածի դեպքում քաղաքացիների անձնական զննում, իրերի զննում: Արտակարգ դրության ռեժիմը խախտող անձինք կարող են ենթարկվել մինչեւ 30 օր վարչական կալանքի: Այդ անձանց կարելի է վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկել օրենքի համաձայն: Իսկ 7 օր հետո, հունվարի 25-ին Ստեփանակերտում պարետ, գեներալ-մայոր Սաֆոնովը մամուլում հանդես է գալիս բացահայտ սպառնալիքներով. հիշեցնում է, որ «տարածաշրջանում իրադրության նորմալացման դեմ

ուղղված բոլոր գործողությունները վճռականորեն կխափանվեն ընդհուպ մինչեւ հատուկ միջոցների կիրառում, իսկ այն դեպքերում, երբ քաղաքացիների կամ զինծառայողների կյանքին վտանգ սպառնա, որպես ծայրահեղ միջոց կիրառվելու են հատուկ միջոցներ եւ զենք»:

Շտաբում Անդրանիկը, Առնոն, Սաքոն կետ առ կետ քննարկում են «Խորհրդային Ղարաբաղ» թերթում տպագրված հրամանագիրն ու հրամանը.

- Առնո, ուշադրություն դարձրու հրամանագրի մեջ գրված է «հաշվի առնելով Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության դիմումը...»:

- Է լ ի՞նչ էիր սպասում...

- Դե մի էս տողերը կարդա. «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունից պահանջել ամենավճռական քայլեր ձեռնարկել այդ հանրապետության տարածքից այնպիսի հրահրիչ գործողությունները խափանելու նպատակով, որոնք ազգամիջյան կրքեր եւ ազգային թշնամանք են բորբոքում երկու ժողովուրդների միջեւ...»:

- Սա մեզ համար ձեռնաշղթա է, Անդո: Մինչեւ հիմա որոշումներում հավասարակշռությունը պահվում էր, հիմա կշեռքի մի նժարը սեղմվում է, մահակի մի ծայրով էլ մեջքներիս են խփելու...

Կարդալուց, մարսելուց, վերջացնելուց հետո Առնոն ասաց.

- Լավ, գնացինք Մեծ Շեն:

Շտաբի պետը երբեմն-երբեմն շրջայցի էր դուրս գալիս, ստուգում էր զենքի թաքստոցները: Մտան դպրոց, եւ երբ ուսուցչանոցում մարդ չմնաց, մտան գրադարան: Առնոն հատակից մի քանի տախտակ պոկեց ու իջավ նկուղ: Սաքոն ուզում էր ետեւից մտնել, չթողեց.

- Գործ չունես, սարդերի բույն է:

Զենքերը լրիվ հանեց.

- Տեղը խոնավ է, պետք է փոխել: Նախ տանենք շտաբ, մաքրենք, յուղենք, հետո կտեղավորենք:

Շուշիի պարետատնից եկող շարասյան ճանապարհին առաջին բնակավայրը Մեծ Շենն է: Այստեղից անմիջապես իմաց են տալիս ծորակի մյուս գյուղերին, որ անձնագրային ռեժիմի ստուգում է: Տղաներն իսկույն պիտի թողնեին բոլոր գործերը, ցրվեին ու մտնեին իրենց «դռների» մեջ:

Հենց որ անձնագրային ռեժիմի ստուգման հեռախոսազանգը եղավ, Անդրանիկը ճանապարհը թեքում մտնում է Եփրեմենց տուն, արագ

թրաշում մագակալած երեսը, որ խիստ սազում էր նրան, հագնում Ռոլլայի տված տրակտորիստի յուղոտ ու նավթոտ շորերը:

- Մարինե, իջիր, գնում ենք:- Կանչեց ավտոբուսի վարորդ Մանվելը:

Անդրանիկն արդեն կերպարանափոխված կանգնել էր Վարսիկ տատիկենց տան առաջ: Մարինեն չի ճանաչում, հետո հանկարծ նայում են իրար աչքերի մեջ ու այնպիսի մի ծիծաղ է բարձրանում, որ ստուգման վախը, որ պատել էր աղջկան, չքանում է. համոզված է, որ Անդրանիկը չի բռնվելու:

Ավտոբուսը Հին Շենից Մեծ Շեն է հասցնում հայոց լեզվի եւ գրականության ուսուցչին, որ արագ շորափոխվում մտնում է ուսուցչանոց, դասամատյանը վերցնում է, նստում գրասեղանի առաջ ու իբր լրացնում է: Մարինեն արդեն գրադարանում գրքերն է դասավորում, երբ ուսուցիչները Սլավիկ Գրիգորյանը եւ Սաֆարյան Թաթուլը ստուգող խմբի հետ մտան:

- Սա մեր գրադարանավարուհին է:

Ուսուցչանոցում զինվորները մեկ առ մեկ տնտղում են բոլորին: Կյումրեցի Գագոն չէր հասցրել թրաշվել, ձեռքն ընկած գիրքը, որ ռուսերեն էր, քաշեց ու իբր կարդում է: Ռուս սպան մոտեցավ մեկ գրքին էր նայում, մեկ աչքերը կախ Գագոյին, որ ռուսերեն մի բառ չգիտեր: Նայեց-նայեց, քմծիծաղեց ու հեռացավ: Հետո, նրանց գնալուց հետո ուսուցչանոցում մի ծիծաղ բարձրացավ ուրախությունից, որ լավ արծուն, եւ Գագոյի խոսքից, թե «չեմ պատկերացրել երբեւէ դեմս ռուսաց լեզվի գիրք կդնեմ... ու կկարդամ»: Այս անգամ «ստուգումը» խիստ քաղաքակիրթ էր:

- Անդրանիկ, մի երգ,- խնդրեցին ուսուցիչները:

Բարով եկար, սիրուն կռունկ,
Ինչ լուր բերիր հայրենիքես,
Խոսիր ինձ հետ ազատորեն,
Կյանքս կնվիրեմ ես քեզ:
Ազատ տեսա՞ր մեր լեռները,
Հաղորդեցի՞ր դու իմ սերը,
Այն լեռներուն պաշտպանողը,
Արծվի, կորյունի ճտերը:
Տեսա՞ր մեր փոքրիկ բուրաստան,
Վարդ, մեխակ, շուշաններ շա՞տ կան,
Եդեմական դրախտավայր,
Այն կոչվում է Մայր Հայաստան:

Անդրանիկը հրաշալի ձայն ուներ եւ արտակարգ երգում էր: Աղջիկը

նրա «երգացանկը» գրի էր առել տետրում, անգիր արել ու երգելու ժամանակ նրան ձայնակցում էր:

Եվ վտանգը կար, եւ սարսափը կար, բայց Հայաստանից եկած տղաների ներկայությունը, Առնոյի ոգին, լույսն ու հավատը չեզոքացնում էին վախի ամեն մի նշույլ, դարձնում էին համարձակ: Իսկ Մարիներին երջանկության այնպիսի մի զգացում էր համակել, որ կարծես հարբած լիներ, ու չէր զգում օրերի, ամիսների, ժամանակի թռիչքը...

Օրն ավարտվեց առանց միջադեպերի:

Գերեզմանուտի տարածքի մոտ ֆերմայի կողմից կրակոցներ լսվեցին: Շտաբում հասկացան, որ ազերիները հարձակվել են ֆերմայի վրա, որտեղ հերթապահում էին Հակոբյան Զավենը, Բարսեղյան Գագիկը: Առնոն անմիջապես տղաներին Սահակյան Արմենին, Արմիկին, Արտաշին, հայաստանցի Աշոտին, Թայիրյան Վլադիկին վերցրեց եւ Արկադիի մեքենայով բարձրացան: Նրանց հետ էր նաեւ 15 տարեկան Զորիկը, որին Առնոն զենք դեռ չէր վստահում, եւ նա դանակով էր զինված: Մի քանի օր առաջ «Շմայսեր» էր առաջարկել, տղան մեծամտորեն մերժել էր.

- Դա զենք չէ:

Առնոյի հակաճառություններին ուշադրություն չդարձնելով մեքենան բարձրացավ նաեւ Իգոր Մուրադյանը, որն այդ օրերին Բերդաձորում էր:

Պահակակետում տղաները հարձակումը հետ էին մղել, եւ Առնոն մեքենան շրջել տվեց դեպի Զորավոր ծառի կողմը: Զորիկը տափարակում շարժում նկատեց, առաջ գնաց: Ազերիները ձիերն ու կովերի նախիրը թողել ու վախից փախել էին: Տղան բարձրաձայն հաշվեց կովերը, եւ թե քանի զենք կարելի է դրանցով առնել: Անասուններն անծանոթ ճամփից հա թեքվում էին, Աշոտը վազվզում ջանք չէր խնայում հետ բերելու: Այդ դեպքից հետո մականունը կպավ՝ «Կով Աշոտ»: Իսկ երեկոյան շտաբում, Առնոն Զորիկի գործողությունից գոհ, նրան մեկնեց ԱԿՄ ինքնաձիգ.

- Վերցրու, Զորիկ, դու արժանի ես:

Տղաները զարմանում էին, Առնոն հոգնել չգիտեր, նրա համար գիշեր-ցերեկ գոյություն չուներ, հանգիստ ու ազատ որպես չուներ: Օրերով կարող էր չքնել ու սիրում էր մուգ թեյ խմել, որ հոգնածությունը փարատի: Հասցնում էր կազմակերպել բոլոր աշխատանքները՝ սկսած

կենցաղայինից մինչեւ տնտեսական, ռազմական, գաղափարական: Այլ գլանում, նույնիսկ ժամանակ էր գտնում դպրոցի հրապարակում տարեց բնակիչներից, տղամարդկանցից ու կանանցից ցանկացողներին եւ կրակել էր սովորեցնում, եւ թե մարտի ժամանակ ինչպես պիտի տոգմամքերք հասցնեն, վիրավորներին մարտի դաշտից հանեն: Արտաքին թշնամիների դեմ պայքարում էին, բայց չէր մոռացվում նաեւ գյուղի սոցիալ-տնտեսական զարգացումը: Խողովակներով ջուրը հասցվեց Շորեն տափից մի 50 մետր վերեւ: Հրամանատարին զինակիցները հասկանում էին կես խոսքից: Հեղինակություն էր բոլորի համար: Կարգապահության հարցերում խիստ ու դաժան էր, իսկ սրտով պզայուն, հոգատար: Բարեհոգի հումոր ուներ: Երբ քմծիծաղ էր տալիս, տղաները հասկանում էին, որ ծիծաղաշարժ դեպք կամ անեկդոտ է պատմելու:

Մի օր Սուրանի անտառածածկ արահետով բարձրանում էին պոստերը, գնում էին Շամոն, Վլադիկը, Վրույրը: Պատահականորեն երեքն էլ կաղ, երեքն էլ գնում էին իրար հետեւից, երեքն էլ շարքի առջեւից: Առնոն նկատեց Սաքոյի եւ Խեչոյի խնդմնդալը, որ փորձում էին թաքցնել, ինքն էլ ծիծաղը մի կերպ թաքցնելով ասաց.

- Իմ «կայծակ» խումբը ... Պատերազմում սրանց նմաններն են հարգում:

Բայց իսկական «կայծակ» խումբ ուներ, կազմված 8-10 հոգուց, որոնք տագնապի դեպքում եւ ամենաժվար իրադրության մեջ պետք է օգնության հասնեին: Սիրում էր մեկ-մեկ ծիծաղաշարժ իրադրություններ սարքել, լարվածությունը թուլացնել:

Գնացել էին Շորեն Գլուխը քեֆ անելու, մի 20 հոգի կային, Անդրանիկը, Սաքոն, Խեչոն, Ժանոան, Մարինեն, Կով Աշոտը, Վարազդատը, Ամուշավանը, Սլավիկը... Կերած-խմած, բայց ոչ հարբած, բարձրանում են մեքենայի թափքը:

- Ով ճանապարհին կարգը խանգարի, մեքենայից իջեցնելու եմ:

Երբ գյուղ հասան, մեքենայի մեջ միայն ինքն էր ու վարորդը: Քեֆ անողները ծիծաղելով, կատակելով ոտքով հասնում են գյուղ, իսկ օրը բոլորի հիշողության մեջ մնում է որպես պայծառ հուշ:

Մի ուրիշ դեպք: Հայաստանից եկած տղաներից մեկը մի քիչ պոռոտախոս, Լեւոնին ասում է.

- Ձիդ տուր, քշեմ:

- Քեզ ասում եմ՝ չեմ տալիս, չես կարող:

- Տուր: Թամբը շալակած գալու է,- ասում է Առնոն:

Ամբողջ գյուղը թամաշայի էր դուրս եկել: Տղան հենց նստեց, ձին

չափ ընկավ, կապերը կտրվեցին, տղան թամբի հետ ընկավ ու շալակած ետ եկավ...

Տղան կաս կարմիր էր կտրել, իսկ ամբողջ գյուղը՝ հա՜, հա՜, հա՜, հի՜, հի՜, հի՜...

Առնոն կանչեց Լեւոնին, որ «Գազ 53-ի» վարորդն էր, որպեսզի Արմիկին, Սեւակին, Դավիթին ու Զարմիկին պոստ տանի:

Խառատ տեղամասից պարզ, ոնց որ ափիդ մեջ երեւում է Կանաչ Թալան, նույնիսկ թփերը կարելի է հաշվել: Առնոն ու Ժաննան բարձրից դիտում էին, թե հակառակորդի ճամբարում ինչ տեղաշարժեր կան, ինչ տեխնիկա է մտնում-դուրս գալիս: Երբ պահակակետ բարձրացան, ցերեկ էր: Կեսգիշերն անց էր, երբ երկուսով գնացին ստուգելու դիրքերը, որոնք իրարից շատ հեռու էին: Երբ հետ եկան, տեսան Լեւոնը պահակակետում որսորդական հրացանը կողքին, տաք բաճկոնի մեջ փաթաթված մուշ-մուշ քնած էր 20 տարեկանի խոր քնով: Շրջելուց ու երկրորդ գալուց Առնոն արթնացրեց.

- Սա քո տեղը չէ, մտիր մեքենայի խցիկը:

Մի պահակակետում տղաները նարդի էին խաղում: Առնոն դիրքի մեջ կեղծ նռնակ շպրտեց:

- Ես ծեր... - Վարազդատը չքաշվելով կնոջ ներկայությունից հայհոյեց:

- Եվ դո՞ւք պիտի էս ժողովրդին պահեք...- Առնոյի հանգիստ տոնից տղաները առավել ազդվեցին, գիտեին, որ այն շարունակություն է ունենալու, հարցը քննվելու է ԲԻՀ-ի նիստում:

Պահակակետերում Հայաստանից եկածները եւ տեղացիները խառն էին կանգնում, իսկ Առնոյի ստուգումները լինում էին անակնկալ ու տարբեր ժամերի:

Կանաչ Թալայում շարժում նկատվեց: Մեքենաներ էին մտնում դուրս գալիս:

- Հատուկ նշանակության ջոկատայինների համալրում է կատարվում, ուրեմն հարձակում է նախապատրաստվում,- եզրակացրեց Առնոն, ապա 8 հոգու պահակակետում թողնելով՝ 10 մարդ վերցրեց հետը.

- Ծաղկածորի դրությունը լուրջ է, գնացինք...

Մեքենայի մեջ Լեւոնը շատ ցածր ադրբեջաներեն երաժշտություն էր միացրել:

- Ծաղկեց Ղարաբաղը, էդ ի՞նչ երաժշտություն ես լսում,- ու անջատել տվեց:

Խութի մոտով անցնելիս, ֆիդայիները պառկել էին թափքի մեջ, Ժաննան իջավ, ռուս սպային մի կողմ քաշեց: Լեւոնը մի քիչ մեքենան սառչ տվեց ու կանգնեց: Պահակախմբի մոտով բարեհաջող անցան:

Մինչեւ լուսադեմ ժամերը խաղաղ անցան:

Ստեփանակերտից «Գազ 53-ով» Բերդաձոր են գալիս, թափքի մեջ թողարկված փամփուշտներ, նաեւ 3 տակառ բենզին, վառելիք: Մազե կամրջի մոտ պարեկող զինվորները կանգնեցրին: Առնոն անմիջապես կոնյակի շիշը հանեց.

- Յուրասիրվեք, խնդրեմ, հայկական կոնյակ...

Առանց ստուգելու մեքենան անցնում է: Շուշիի քաղաքադռան մոտ նորից կանգնեցնում են: Առնոն այս անգամ մի բլոկ ծխախոտ է տալիս:

Առնոն ու Ժաննան նման արգելքները հաղթահարում էին ներքին ու արտաքին մի այնպիսի հանգստությամբ ու համարձակությամբ, որ ստուգողները ենթարկվում էին:

Օրվա վերջում Լեւոնը իջնում է շտաբ.

- Եկեք բաղնիք տանեմ:

Գնում են տեսնում Ռոզան դույլերը վառարանի վրա դրած, եփրեմն էլ տանում է ներքնահարկ ցույց տալիս պղնձե մեծ թասը: Իսկ նրանք կարծել էին, թե իսկական բաղնիք են գնում: ԲԻՀ-ի նախագահն ու տեղակալը հերթով մտնում, իրար վրա ջուր են լցնում:

- Օխա՜յ, շոգեբաղնիքը սրա մոտ դալաք կանի,- իր գոհունակությունն է հայտնում Առնոն, եւ երկուսով ծիծաղում են:

Շիգեցեք տեղամասում Լեւոնը պահակության է կանգնած: Սուլիկոն մերենան քշում անցնում է, Լեւոնը օդում կրակում է՝ չի կանգնեցնում: Ռեավոտյան կոլտնտեսության գրասենյակի առաջ պատահում են իրար:

- Դու ո՞վ ես, որ ես անցնելիս կրակում ես,- հոխորտաց Սուլիկոն:

- Շատ էլ լավ եմ անում: Պոստով անցնող մեքենան պետք է կանգնի: Գուցե թշնամո՞ւ մեքենա է: Եթե ուզեի, կարող էի մեքենայիդ դողը մի կրակոցով ծակել:

- Չէիր կարող:

- Դե, ես անեմ, դու տես:

Գրասենյակի բակում խմբված մարդկանց համար անսպասելի Լեւոնը վազում է տուն, վերցնում որսորդական հրացանը եւ իրենց բակից

150մ հեռավորությունից կրակում ուղիղ Սուլիկոյի ոտքին: Տղան նոր էր վերադարձել բանակից, որտեղ հայտնի է եղել որպես դիպուկ նշանառու: Առնոն կատաղած մարդ ուղարկեց, ու Լեւոնը արդեն խեղճացած կանգնել էր հրամանատարի առջեւ:

- Գիտե՞ս քո տեղը որտեղ է:

- Չգիտեմ:

- Կիմանաս: Երեք օր կմնաս ու խելքդ գլուխդ հավաքած դուրս կգաս:

Լեւոնը չէր սպասում, որ Առնոն իրեն պատժախուց կգցի, բայց սուսուփուս ենթարկվեց:

Հաց տանելը արգելված էր, բայց Գառնիկի չորս տարեկան տղան Օնիկը կոտլետը հացի մեջ դրած տանում ու պատի բարակ ճեղքից մեկնում է «կալանավորին»:

Լեւոնը կարծում է, թե կրել է իր պատիժը, բայց Առնոն դեռ շարունակում էր ... Ամեն օր ուղարկում է պահակության առանց հրացանի, որպեսզի բլինդաժում վառարանը վառի, թեյ տաքացնի, հերթափոխի կենցաղային հարցերին հետեւի: Լեւոնի համար, որ 20 տարեկան էր, դա շատ խիստ պատիժ էր: Տղան ազդվել, խեղճացել էր, եւ կատարված փոփոխությունը չէր կարող վրիպել հրամանատարի աչքից, այնուամենայնիվ զենքը դեռ չէր վերադարձրել:

Մի քանի օր էլ անցավ: Շտաբում հավաքված էին, մեկը մտավ, թե Քումենքարի վրա ազերի է կանգնած դիտում է գյուղը: Լեւոնը վազում է շտաբ, մի կարաբին վերցնում.

- Ես խփեմ՝ դուք տեսեք:

Տրաքոց: Մի սեւ արծիվ օդի մեջ 5 մետր բարձրացավ ու թեւատարած ընկավ: 500-600 մետր հեռավորությունից գնդակը կպել էր ուղիղ նշանակետին: Լեւոնը հետ քայլ արեց, կանգնեց հրամանատարի առաջ ու պարզեց կարաբինը.

- Վերցրու:

- Քոնն է,- Առնոն ձեռքով հրեց զենքը:

Հրամանատարի ու զինվորի վստահությունը վերականգնվեց:

Արմոն մտավ շտաբ: Լսել էր, թե զինվորական հանդերձանք են ստացել: Կանգնեց եղբոր առաջ, խնդրեց:

- Ավելի կարիքավորները կան...

- Անկեղծ չես, որ երդբայրդ չլինեի կտայիր:

Առնոն կախեց գլուխը. եղբայրը ճիշտ էր գուշակել:

- Էդ էլ զենք չտալը չլինի,- ասաց ու խռոված դուրս եկավ:

Սեւ Հայրենականի հուշարձանի մոտ պարետատան պահակակետն էր մեկ ԲՄՊ-ով, մի քանի զինվորով ու մեկ սպայով: Եվ գյուղի բնակիչները, եւ ֆիդայիները կապի մեջ էին մտել, հյուրասիրում էին, քաշում իրենց կողմը: Զինվորները համակրում էին այդ հասարակ, սիրալիր ասրդկանց ու զարմանում էին, որ քաղաքապետությունները նրանց ներկայացնում էին որպես «գրոհային», «ծայրահեղական», «սադրիչ», «ազգային թշնամանք հրահրող»:

Սպան ծեծում է Վարսիկենց դուռը: Բացում է ժաննան.

- Զգույշ եղեք, վաղը ստուգման են գալու:

- Թող գան: Մենք զենք չունենք:

- Դե, բոլոր դեպքերում ես հենց այնպես եմ ասում,- զինվորները կարիք չէին, տեսնում էին ֆիդայիների շարժը, զինվածությունը, բայց տեսնելու էին տալիս:

Այդ օրը մի քանի ժամից հետո ուղղաթիռը վայրէջք պիտի կատարեր «պանավակայանում»: Ժաննան դուրս եկավ... նախապատրաստություն: Ամբողջ գյուղի կանայք եւ երեխաները լցվեցին խութ, ուրախ են, որ «պարենամթերք» է գալու: Ամեն ինչ ծրագրված էր: Ինչ որ բան ձայնագրելու դեպքում , կանայք պիտի ժխոր ու աղմուկ բարձրացնեին, դեմ ու դեն փախչեին, որպեսզի տղաները կարողանային զենքը փախցնել:

Ուղղաթիռը վայրէջք կատարեց: Առնոն ընդունում է նարինջով լիքը «ուսոր» արկղերը: Զինվորներից մեկը մոտենում է ժաննային, իբր հիվանդ է խնդրում.

- Սպան հատուկ բաժնից է, զգույշ,- կինը ժպտում է, ծխախոտը կրակնում ու աչքով է անում, այսինքն՝ հասկացա:

Ժաննան ջոկում է մի թեթեւ արկղ, նարինջ ու մի քանի շիշ խմիչք, կանգնում է զինվորներին ու սպային: Վերջինս զեկուցում է պարետատուն, թե կասկածելի ոչինչ չկար: Մեքենաները բեռնված բարեհաջող թողնում են գյուղ:

Երեկոյան սպան թեյի էր հրավիրված Եփրեմենց տուն: Ժաննան հարսի անգամ զգուշացրել էր, որ Եփրեմը չխմի, այլ խմացնի, որպեսզի նրան խոսեցնի պարետության ներկայացուցչին: Բայց մի քանի բաժակից հետո Եփրեմը իրեն կորցրած՝ սկսում է տակից- գլխից բլբլացնել.

- Էն կռվի ժամանակ, 41-ին ավտոմատը հեշտ քանդվում հավաքվում էր, հիմա էս մեկը մի տեսակ է, դժվարանում եմ...

Ժաննան տեսնելով, որ զրույցը վտանգավոր բնույթ է կրում, ձայնը բարձրացնում է, որ սպայի ուշադրությունը շեղի: Կինը Ռոզան հայհոյում է.

Հողեմ էդ դատարկ գլուխդ, էլի քեզ կորցրի՞ր...

- Ի՞նչ է ասում,- հարցնում է սպան:

- Չի ուզում որ ամուսինը խմի,- «թարգմանում է» Ժաննան:

Զրույցի վերջում հայտնի դարձավ, որ հաջորդ օրը անձնագրային ռեժիմի ստուգում է լինելու, այն էլ սովորականից ավելի խիստ: Առնոն Հայաստանի տղաներին գյուղից հանեց, տեղավորեց անձավներում: Բացառված չէր, որ անտառն էլ կարող էին սանրել:

Առավոտյան իր դաժանությամբ հայտնի «Դոն» դիվիզիայի մի զորամաս մտավ գյուղ: Սաքոյի ու Խեչոյի անձնագրերում գրանցման ժամկետը լրացել էր: Երկուսին տարան ԲՏՐ-ի մեջ, հետո հանեցին ու տանկի մեջ մտցրին:

- Քրիստոնյա ժողովուրդ են... Ես ի՞նչ եք անում:- Համսկրանքով արտահայտվեց տանկի նշանառուն:

- Մենք հրաման կատարողներ ենք, մեր ի՛նչ գործն է.- ընկերոջ համակրանքի վրա սառը ջուր մաղեց տանկի անձնակազմի հրամանատարը:

Գնդապետը դաժան տիպ էր, աչքերը կապույտ, դեմքը՝ մուգ-շոկոլադե գույն: Հաստատ սլավոնի ու թաթարի խառնուրդ է,- մտածեց Ժաննան: Ստուգողները իրենք էլ այդ օրը լարված էին, կարծես թե սպասում էին, թե հայերը կդիմադրեն: Դժվար «հանձնվող» տիպ է, մտածեց կինը, այնուամենայնիվ ատիպված էր մոտենալ.

- Շատ ինքնատիպ շնորհավորեցիք մեր կանանց, գնդապետ, բռավո,- այդ օրը մարտի 8-ն էր: - Բոլորին վախեցրիք. ձեր փառասիրությունը բավարարվա՞ծ է,- մաքուր ռուսերենով ասված խոսքը եւ կնոջ տեսքը ազդում են:

- Չէի՞ք ցանկանա մեր սովորության համաձայն մի կտոր հաց կտրել:

- Ես չեմ խմում,- կոշտ շարտեց գնդապետը:

- Բայց ես ձեզ խմելու չհրավիրեցի: Ղարաբաղում ընդունված չէ կինը խմելու հրավիրի: Դուք հայկական գյուղ եք մտել եւ...,- Ժաննան բազմանշանակ նայում է Գառնիկի մորը, որը իսկույն հասկանում է, որ պիտի տուն գնա սեղան գցի:

- Շարունակեք ստուգումները,- տեղի չտվող տոնով հրամայեց գնդապետը:

Մի զինվոր մոտեցավ՝ կոնատակին մի զույգ սապոգ ու նարդու տախտակը: Ժաննան շատ հանգիստ, ինքնավստահ մոտեցավ ու դուրս քաշեց.

- Սա զե՞նք է, հա՞, գնդապետ:

Գնդապետը փայտիկները խաղացնում է ձեռքին, դեմքին մի ժպիտ, որ կինը չի կարողանում վերծանել:

Դա զինվորական կոշիկ է:

Սա չգիտեմ զինվորական ինչ է, բայց գյուղում սա՝ հագնում, ֆերմայում ջրի ու թրիքի մեջ աշխատում են,- Ժաննան կոշիկն ու նարդին պարում է կանանց կողմը: Գնդապետը չի կարողանում որոշել անելիքը:

Բայցեւայնպես գուցե գնանք մի կտոր հաց ուտելու: Ձեր ուժն ու զորությունը տեսանք: Դուք հաղթած կողմ եք: - Խոսքերի մեջ կծու սարկազմ կար, այնքան խոր թաքնված, որ գնդապետը չէր կողմնորոշվում, բայց չէր էլ կարողանում իրենից կտրել-շպրտել կնոջ հմայիչ ազդեցությունը եւ իրենից անկախ սկսվել էր ներքին ենթարկվածությունը...

Կարող եք ձեր անձնական պահակախումբն էլ վերցնել,- Ժաննան պրկեց գիտեր, որ ինքը դրության տերն է լինելու:

Երեք զինվոր լրիվ սպառազինված հետեւում են նրանց, կանգնում պուսի մոտ:

Հրամայեք ավտոմատները մի կողմ դնեն ու մոտենան սեղանին: Բայց իր տանը թիկունքից չի կրակում, հանգիստ եղեք: Իսկ դուք, գնդապետ, ինչո՞ւ եք մի տեսակ ծգված...

Ես Աֆղանստանում ծառայել եմ, ոչնչից չեմ վախենում:

Բայց սա Աֆղանստան չէ,- երկիմաստ վրա բերեց Ժաննան:

Պանդաղ ուտում ու գնում են իրար: Գնդապետը զինվորներին հրամայեց թողնել սենյակը: Զրույցն արդեն թեքվում էր դեպի քաղաքականություն:

Մեր պահանջը օրինավոր է, եւ օրինականության սահմաններում նոր գործում:

Իսկ պատանդնե՞րը, սպանությունն՞երը, որ երկու կողմից էլ կան:

Մենք պաշտպանվող կողմն ենք:

Գորբաչովի քաղաքականությունը երկիրը կործանման է տանում... Պետն բռնապետությունը կփրկի... Ձեզ՝ ղարաբաղցիներիդ պիտի գնդակները լցնել ու քշել Սիբիր:

Դուք շփոթում եք ժամանակները, գնդապետ, 1937-ից շատ-շատ նոր հեռացել:

Ավելի շատ խոսում են, ու սեղանին ձեռք չտված մնում են խաշած հավն, կարտոֆիլը, գինին:

Մենք ապրելու ենք մեր հողի վրա, գնդապետ:

Իսկ եթե մենք գնանք, ինչ եք անելու: Դուք շրջապատված եք:

Նրանց ուժը դուք եք...

- Նրանք էլ մեզ նույնն են ասում: Ես թքած ունեմ ձեր ու նրանց կարծիքի վրա: Ես հրաման եմ կատարում: Կգնանք, եւ դուք կփոշմանեք:

- Մեր ազատությունը սկսվելու է հենց ձեր գնալու օրից: Դուք մեզ շատ եք խանգարում:

- Չես վախենո՞ւմ ազատ խոսելուց...

- Դատելով ձեր զրույցից, Աֆղանստանում ծառայած բարձրաստիճան սպայից երեւի չպիտի վախենամ. կարծում եմ տղամարդու հետ գործ ունեմ: Բացի այդ շատ, շատ...

- Ի՞նչ... մա՞հ...

- Այո: Դա ի՞նչ է հայրենիք կորցնելու համեմատ...

- Միակ փրկությունը երկիրը ձեզ նման ծայրահեղականներից ազատելն է, ռազմական դիկտատուրան է... Չիլին զինվորականությունը կարգի բերեց: Գորբաչովը դավաճան է...

- Երազում ես «սեւ գնդապետ» դառնա՞լ:

- Իսկ ինչո՞վ վատ կլինի: Երկիրը կկարգավորենք, հետո կտանք քաղաքացիական իշխանությանը...

- Դուք չկարծեք, թե մենք հիացած ենք Գորբաչովի պոռնիկ քաղաքականությամբ: Նրա ժողովրդավարությունը սուտ է... Գնացեք ձեր երկիրը կարգավորեք, մենք մեր հարցը կլուծենք..

- Մենք որ գնանք...

- Ղարսը չենք մոռացել: Այս անգամ հույսներս մեզ վրա ենք դնելու:

- Ղա՞րս... Ի՞նչ Ղարս...

- Արեւմտյան Հայաստան լսած կլինեք, ռուսական զորքը հետ է քաշվել, թուրքերը մտել հայերին մորթոտել են:

- Ես շատերին եմ հանդիպել, նրանք ձեզ նման չեն խոսում:

- Եթե չեն էլ խոսում, ինձ նման մտածում են: Մենք գաղութի մեջ գաղութ ենք, ուրիշի կռիվը ձեր վրա մի վերցրեք: Մեջտեղից դուրս եկեք, տեսնենք ինչ ենք անում:

- Դա միայն քո ցանկությունն է, շատերը չեն ուզում, որ մենք գնանք:

- Ժամանակը գա, կհասկանան:

Գնդապետի մի քիչ փոխված անվստահ հայացքից ժաննան զգում էր, որ իր խոսքերը հասնում են նրա մտքին ու հոգուն:

- Դուք զինվորական սպա եք, ձեր ուսադիրի պատիվը ինչպե՞ս է թույլ տալիս, որ գաք ու մենթի պատժողի դեր կատարեք,- ժաննան հոգեբանական գրոհի անցավ: - Խոսում եմ ինչպես տղամարդը-տղամարդու հետ: Այս գյուղից մարդ չեք տանելու:

Գնդապետի նայվածքը, աչքերը նորից սառը, ապակե փայլ ստացան, իսկ մուգ - շոկոլադե գույնը սարսուռ է առաջացնում: Տնից դուրս

Լին եկել, գնդապետը շրջվեց գնաց մտավ տանկի մեջ: Վերջ, ուրեմն իր սենքերը իզուր էին: Ժաննան վերջին ճիգը արեց, ձայնը բարձրացրեց ու գոռաց՝ պարտադրող ու հրամայական տոնով.

- Գնդապե՛տ...

Զրահամեքենան շարժվեց, կինը ոտքով հետեւում է: Տանկը գյուղից դուրս է գալիս, հասնում գերեզմանոցին ու թմբի վրա կանգնում: Ժաննան նույնպես կանգնեց. մի՞թե փոշմանել է...

- Ազատ եք: Գնացեք ձեր ժաննայի մոտ,- ասաց գնդապետը առանց հետ նայելու...

Տանկը սողաց առաջ:

Այսպես վերջացավ 1990-ի մարտի 8-ի տոնական օրը: Ստուգողները հավաքել-տարել էին մթերքի պահեստը, որ պահվում էր նեղ օրի շրջափակման համար, եւ գյուղամիջում խռնված մարդկանց զրույցի թեման դա էր:

- Էնքան կարագը, մթերքը ինչո՞ւ ես պահել, բաժանեիր,- շպրտեցին Սենոյի երեսին:

- Ձեր ի՞նչ գործն է, -գոռաց ժաննան, որի նյարդերն արդեն տեղի էին տալիս:

- Շատ էլ լավ եղավ, որ տարան,- հնչեց մի ձայն:

- Բայց մեզ համար ուղարկածը ինչո՞ւ էիր պահել,- կրկնեցին:

- Դա ընդհանուր քննարկման թեմա չէ: Ես պատասխան եմ տալու նրանց, ում առաջ ինձ պատասխանատու եմ զգում,- հանգիստ ասաց Սենոն:

- Ասում են կարագը հոտած է եղել,- քչփչաց տղամարդու բամբասկոտ մի ձայն, որ հասավ ժաննային:

- Երախտամոռներ, անշնորհակալներ,- գոռաց,- լավ չի, գնացեք լավ կապեք գլխներիդ՝ եկեք գյուղամիջում նստեք բամբասեք:

- Կանանց նման գլուխ գլխի հավաքվել, բրնձի ու յուղի հարցերով էլ զբաղվում, - նորից ամբոխի վրա գոռաց ժաննան:

Ես հայաստանցի դուլդուրները որ եկած չլինեն... - Ամբոխի միջից հնչեց մի ձայն:

Սաքոն թափով շրջվեց դեպի ձայնը, բայց առանց նայելու զգաց Սենոյի հայացքը: Գիտեր, կարող է չի հանդիմանելու, բայց հոգին նեղվելու է, ժամերով չի խոսելու: Ու Սաքոն հասկանալու է, որ պատասխանը իր տաքարյունությունն է, որ իրեն չի գսպել: Սաքոյին անհասկանալի էր Սենոյի ներողամտությունը դեպի համագյուղացիները, բայց գյուանանատարի հետ չէր կարող հաշվի չնստել: Սաքոն բազմաթիվ ուղիներով փորձել է վերլուծել իր ու Սենոյի հարաբերությունը, Սենո-

յի եւ դիմազուրկ, ազգային գաղափարներից հեռու այդ ամբոխի հարաբերությունները, փորձել է, բայց չի կարողացել արդարացնել մարտական ընկերոջ, հրամանատարի անվերապահ, անշահախնդիր, անփոխադարձ սերը դեպի այդ անշնորհակալ անբոխը:

Երեկոյան շտաբում եւս Ժաննայի հանդիմանությունը Առնոն ընդունեց նույն հանգստությամբ:

- Ժամանակները փոխվել են, իսկ դու արտակարգ փափուկ ես պահում քեզ:

- Մարդիկ են, էլի, չեն հասկանում: Հետո հասկանալու են:

- Հետո ե՞րբ... - Ժաննան օրվա լարվածությունից չէր կարողանում հանգստանալ:

- Ձրերը կպարզվեն, հետո կհասկանան...

- Հետաքրքիր մարդ ես, նրանք քեզ անարդարացի մեղադրում էին, դու ո՞նց ես դիմանում, ես պայթում եմ:

- Մեղավոր չեն, որ էդպես են մտածում:

- Առնո, քո Քրիստոսի համբերությունը ինձ հունից հանում է...

- Դրանք երկրորդական բաներ են, չարժե ուշադրություն դարձնել:

Ժաննան եւս նկատել էր Առնոյի մի առանձին սերը դեպի ծորակի մարդիկ:

- Կփոխվեն, ինչ կյանք են տեսել, ինչ օրեր են քաշել աշխարհից կտրված ես հեռու ծորակում: Ազերիներից սովորածն էլ էդ շահամոլությունը կլինի,- արդարացնում է Առնոն:- Կտեսնես, փոխվելու են, լավ են ապրելու, հայավարի են ապրելու...

- Կարծո՞ւմ ես չգիտեմ, որ նախանցյալ օրը Մեծ Շենում... Գայանեն պատմել է...

- Դատարկ բան է:

- Բայց նա քո հեղինակության հետ է խաղում...

- Հիմա դրա ժամանակը չէ: Ներքին գժտությունները թուլացնում, ջլատում են մեր ուժերը:

- Քո բարությունը ի չարն են գործադրում...

- Չարին չարությամբ չպիտի պատասխանել:

- Չգիտեմ, ես այդպես չեմ մտածում: Քո գաղափարները ես հարցի շուրջ ուրիշ են:

- Այո, Ժաննա: Ուրիշ են: Ձենք վերցնել ու լինել անխնա ու անգիջում թշնամու դեմ: Իսկ նա, ով երեկ իմ երեսին ինձ թուլական անվանեց, նա իմ զինակիցն է, զինվորյալ ու պայքարի մարտիկ, նվիրված նույն նպատակին, ինչ-որ ես...

Ես քեզ նախանձում եմ, Առնո, բայց մեկ է չեմ կարողանում հասկանալ քո վերաբերմունքը:

Չի կարելի նրանց կատեգորիկ դատել, փորձիր հասկանալ, դու էլ լեռնգիստ կընդունես այս ամենը:

Այդ օրերից շատ ջրեր պիտի հոսեին, շատ տարիներ պիտի անցնեին որ եւ Ժաննան, եւ գյուղացիները հասկանային Առնոյի մեծ սիրտը, մեծ ներողամտությունը...

Բայց դու տուժելու ես, այ քեզ ասում եմ...

Միայն թե գործը չտուժի, ազգը չտուժի:

Առնո, ախր դու խեղճ չես, նրանց մոտ ինչո՞ւ ես խեղճանում, ինչու ես ձեռք չէր քաշում, ապա ձայնը իջեցնելով ասաց.

Գուցե կնոջդ ու երեխաներիդ քաղաքից բերե՞ս, հը՞...

Առնոն խոսքը անուշադրության մատնեց ու շտաբից միասին դուրս եկան:

Ո՞ւր...

Պոստերը... Նոր տղաներ են եկել...

Գնո՞ւմ ես հայ զինվորի նպատակները քարոզելո՞ւ:

Առնոն գիտեր Ժաննայի բռնկուն բնավորությունը եւ ներողամտորեն ժպտաց վերջին խոսքերի վրա:

Կինը մի քանի քայլ արեց. նստեց ճամփեզրի քարին շունչ առնելու ու ձեռքերով սեղմեց քունքերը: Խփոց կա: Կոպերը կամաց-կամաց ուռում են, ներգանգային ճնշումը բարձրանում է, ուր որ է սրտխառնոց թարվի: Հարկավոր է շուտ տուն մտնել- սրսկվել: Երբ Սաքոն ու Խնչոն հասան նրան, դեմքը անճանաչելի փոխվել, գունատվել ու ծերացել էր: Արկացավ, խոր տնքաց ու մտավ տղաների թեւերը:

Պիշերը, Սեմյոն Բաբայանին գրած նամակը, որ Գրիշա Սարգսյանի տրամ էր, Ստեփանակերտ գնալու ճանապարհին, զինվորները խուզարկում են գտնում, հանձնում ազերիներին: Բաքվի հեռուստատեսությամբ հաղորդվում է, որ Ժաննա Գալստյանի գլխի համար նշանակվում է 1 միլիոն մանեթ:

Ինքդաձորի համար ահավոր ծանր ժամանակներ էին սկսվել: Ժողովրդի կամքը մի տեսակ կոտրվել էր, ոգին թուլացել: Արդեն գյուղի մեջ տարաձայնություններ կային:

Ֆիդայիները որ չլինեին, խաղաղ ու հանգիստ կապրեինք:

Ռուսը միացել է ազերիին, ազերին ուժեղ է՝ չպիտի գրգռենք:

Մենք ինչքան էստեղ ենք, հանգիստ կացեք, ծորակը մեր դիակի վրայով կմտնեն,- փորձեց հանգստացնել Սաքոն:

- Եկաք, կռիվ գցեցիք,- Սաքոյի երեսով տվեցին:
- Կռիվ է, բա ի՞նչ է, հո չամիչ բաժանել չէ՞:
Գյուղացիները լռեցին, բայց միեւնույն է, ներքուստ անհանգիստ էին ու հավասարակշռությունը, հավատը ճեղքեր էին տալիս:

Գիշեր է, ու սովորականի պես տղաները հավաքված են շտաբում:
- Սեւակ, զենքդ տեղո՞ւմ է:
- Բա ո՞նց, Առնո, տեղում է:
- Իսկ ինձ հասած տեղեկության համաձայն ստուգման ժամանակ գտել ու տարել են:
- Ո՞նց, ի՞մ ավտոմա՞տը...
- Այո, քո ավտոմատը...
- Երդվում եմ...
- Ինչո՞վ...
- Պատվովս... Զենքս անվնաս է:
- Ապացույց:
- Հիմա՞: Գիշերո՞վ,- զարմացավ երիտասարդը:
- Հենց հիմա: Գիշերով:- Առնոն չէր կատակում, խոսում էր գլուխը կախ, խոժոռված, առանց նայելու:
- Հեռու է, թաքցրել եմ Ջորավոր ծառի տակ: Գուցե մնա վաղը... փորձում էր համոզել Սեւակը:
- Չգիտեմ, զենքդ...- Հրամանատարն անդրդվելի էր, կասկածանքն ավելի էր ուժեղացել:
- Լավ, կբերեմ:- Ու վատ թաքցրած խռովքով տղան դուրս եկավ:
Կես ժամ հետո ծին կապեց շտաբի առջեւ գտնվող թթենու ծառից, ներս մտավ ու լուռ կանգնեց: Հրամանատարը փայլեց, ժպիտը թաքցնելու համար ձեռքը տարավ բեղերը շոյեց ու ասաց.
- Գոհ եմ:
- Բայց դու պիտի իմանայիր, որ ես ստելու սովորություն չունեմ,- Սեւակի խռովքը չէր անցնում:
- Բայց ես չէի կարող լսածս չստուգել ու չհամոզվել,- մեղմացավ Առնոն:
Բերդածորը ներքին մեծ լարվածությամբ սպասում էր:
...1990-ի գարնանը Ադրբեջանում ստեղծվեցին հատուկ նշանակության ոստիկանության ջոկատներ՝ օմոն, որոնք բացառապես տեղակայվել էին Լեռնային Ղարաբաղում եւ նրան հարող շրջաններում: Վերջիններս խորհրդային բանակի զորամիավորումների, ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության զորքերի հետ հերթապահում էին անցակետերում, շրջայց կատարում, զենք էին որոնում: Ստուգումների ժամանակ նրանք զորքերին հրահրում էին կոպտությունների, խժդժությունների, ահաբեկչության:

Անհանգստությունը մեծ չափերի էր հասել: Ազերիներն այնքան էին վստահացել, որ ոչխարների հոտը, կովերի նախիրը քշում էին հայկական գյուղերի արոտավայրերը: Ճանապարհներին դարանակալում, սպանում կամ պատանդ էին վերցնում: Կատարվում էր «մարդորսություն»: Գյուղերը իրենք էլ ստիպված պատասխան քայլ էին անում, պատանդ էին վերցնում, որպեսզի փոխանակեն: Մարդկային կյանքի քամնելի սուղվածառք էր կատարվում: Ազերիները պատանդների դիմաց ահռելի գումարներ էին պահանջում, պարետության սպաները եւ քննչական խմբի աշխատակիցները որպես միջնորդ էին ծառայում օգտվելով ստեղծված կողմերի հակամարտությունից:
Լուրը, որ Քարինտակ գյուղի բնակիչներից ազերիները պատանդ են վերցրել, հասավ Բերդածոր: Փոխանակելու համար համապատասխան քայլ պետք է արվեր, որտեղից որ հնարավոր լինի: Մինչ տղաները կմտածեին համարժեք քայլ կատարելու մասին, Հին Շենի գյուղամիջի տարածքից ազերիները ոչխարի հոտը քշում են, հովիվներին՝ Պապլուշային ու Արտավազդին էլ ծեծում, ջարդուխուրդ անում: Մի քանի օր հետո, երբ հովիվները ոչխարների հոտը արածեցնում էին Ջիբոսնաչում, ավտոմատով զինված երկու ազերի անտառից դուրս եկան գյուղից, պատանդ վերցնում հովիվներին, որոնցից մեկը տարեց էր, մյուսը 15 տարեկան: Մուշեղը ճանաչում է մեկին.
- Բա ես քո հորը գիտե՞ս ինչքան լավություն եմ արել, կարտոֆիլի ինչպես սերմ եմ տվել... Ինձ ո՞ւր ես տանում:
Ազերիները մեղք են գալիս, հովիվներին բաց են թողնում՝ հոտը քշում: Տղաները գիշերային հերթապահությունից իջնում են գյուղ:
Տեսա՞ք, տեսա՞ք ինչ արիք, դուլդուրներ (խառնակիչներ), մինչեւ մեր գալը խաղաղ ապրում էինք,- Սանթուրը չդիմացավ եւ արտահայտեց գյուղացիների մի խավի կարծիքը:
Քո երկու ոչխարի փոխարեն ես հարյուրը կբերեմ,- Սաքոյի կատաղությունը եւ գյուղացիների, եւ ոչխարի հոտը քշած ազերիների վրա էր: Մեկին տասը պատասխան պիտի ստանան: Իսկ դուլդուր ասելու համար դու հետո կստանաս,- սպառնալից շպրտեց հովվին:
Երեկոյան շտաբում քննարկում են կատարվածը:
Սրանք քանի՞ գլուխ ունեն, որ մեր հանդից ոչխար փախցնեն:
Լկտիացել են, աչքները հոնքից շատ է բարձրացել...

- Տեղն է մեզ...

- Պետք չէ թշնամություն գցել. կարեւորն էն է, որ հովիվները ողջ-առողջ եկել են,- փորձեց ջահելների զայրույթը մեղմել տարեցներից մեկը:

Որոշվեց պատասխան գործողության դիմել:

- Սա խիստ գաղտնի գործողություն պետք է լինի, ինչքան քիչ լինենք էնքան լավ:- Նորիկն ու Անուշավանը վիրավորվեցին, որ Սաքոն իրենց թույլ չտվեց մասնակցել: Երկու հոգի նախօրոք գնում են հետախուզության Հունանավ եւ Յողոնես գյուղերի շրջակայքը:

Սաքոն, Խաչիկը, Ստեփանը, գյումրեցի Գագոն (Սեւ մականունով), Բախշյան Վարդանը, Էդիկը լուսադեմին շարժվեցին դեպի Հունանավ: Խումբը դարանակալեց հակառակ կողմի արոտավայրին շատ մոտիկ: Երկու կողմերից հովիվները սովորաբար հսկիչների հետ էին դաշտ դուրս գալիս, բայց այդ օրը տղաների բախտից հոտը եկավ առանց հսկիչ խմբի: Քանի որ գործողությունը նրանց հողում պիտի կատարվեր, տղաները պիտի գործեին շատ զգույշ ու անաղմուկ: Սովորականի պես հովիվները թիկն տվեցին ու հսկում էին հոտը: Նորհաճնեցի Գագոն սողեսող սկսեց մոտենալ: Ոչխարի հոտը վտանգ զգաց ու իրար խառնվեց: Հովիվները զգաստացան, հետ շրջվեցին, փախան ու թաքնվեցին բլրի հետեւում:

- Հետապնդելը վտանգավոր է եւ անիմաստ,- Սաքոն հրահանգեց հոտը քշել գյուղ:

Մինչեւ հայկական տարածք 2-3 կիլոմետրը պիտի հաղթահարեին: Ճողոպրած հովիվները կանգնել են Սպիտակ Գյուղե բարձունքին ու հարայ են տվել.

- Հասե՞ք, հայերը եկան, մեզ կոտորեցին:

Կրակոցների վրա ազերիներն արդեն ոտքի էին ելել:

Տղաները հասան Թումասար, գոմերի մոտ դիրքավորվեցին: Էդիկին օգնություն կանչելու համար ուղարկեցին գյուղ:

- Փամփուշտ շատ կբերեք,- հետեւից կանչեց Սաքոն:

...Իրանի տիրակալ Շահ Աբասը իր «ղոշունով» գալիս կանգնում է Կարմիր քարի հարթակում, բարձրանում է ժայռը, այնտեղից նայում անդունդին, ու դողը բռնում է: Իր մոտ է կանչում բանակի զորապետներից մեկին, կարգադրում հետախուզել շրջակայքը, ելք գտնել գյուղ մտնելու համար: Գյուղացիները նկատում են, որ առաջապահի մի զորամաս մտնում է ոչ թե հյուսիսից, այլ հյուսիս-արեւելքից եւ անտառով իջնում է Դնգլբազին ձորը: Կարող էին ոչնչացնել, բայց չարեցին: Սպասելով, որ այնտեղից դուրս գան, իսկ իրենք միակ ճանապարհով իջան Վարար ջրի նեղ ձորը, որտեղ հարմար էր թշնամուն ոչնչացնել: Զորքը սարդում են, միայն զորապետին Ալիմալիին կենդանի բռնում են: Նրան նամակ են գրել տալիս, որ անհնար է մտնել ձորը եւ կենդանի դուրս գալ: Գրելուց հետո զորապետին ենթարկում են մահապատժի: Ալիմալիի նամակը ստանալով Շահը հետ է քաշվում «անիծված» ձորից: Լույսը բացվելուն պես գյուղացիները նայում են բարձունքին, տեսնում, որ զորքը հետ է քաշվել: Բերդաձորցիները վայրը, որտեղ հաշվեհարդար էր տեսել զորապետի հետ, դարձնում են սրբավայր: Զույգ կաղնիների ոտքի, Ալիմալիի գերեզմանի վրա քարեր են կուտակում, որ մինչեւ այսօր էլ կան: Իսկ կայծակը մի քանի անգամ խփել է կաղնիներին, բները ոչնչացել, փտել են, բայց մարդիկ նրանց ձեռք չեն տվել, ծառերը նորից շիվեր են արձակել:

Այդ օրը 1990 թվականի հոկտեմբերի 21-ն էր, կիրակի, եւ զույգ կաղնիների տակ ճռանեն հարթում գյուղացիները մատաղի էին հավաքվել. Մեծ Շենի հաշվապահ, յոթ երեխատեր Առուշանյան Լեւոնը մատաղ էր խոստացել Ալիմալի սրբավայրին: Նրա տունը վառվել էր, Սարգսյան Գրիշան շատ կարճ ժամանակում վերականգնել է:

- Թող տեսնեն, որ գյուղում հայը տուն է սարքում,- ասել է նախապատիը:

Աշնանային ջերմությունից անտառը մեղկացել ու իր հմայքներն էր ցուցադրում: Ոչխարը մորթել, կանայք իրենց գործերին էին, տղամարդիկ իրենց: Ոչ ոք աղոթել չգիտեր, միայն Աստծո անունն են տալիս ու տրիում հեթանոսական հաճույքների:

- Սրբավայրի անունը պիտի փոխենք, ի՞նչ Ալիմալի, օտարածին անուն է,- առաջարկեց Անդրանիկը:

- Չէ, չէ, ի՞նչ փոխել, սուրբը կպատժի մեզ...- ասաց տարեցներից մեկը:

Այս սրբավայրում թող միայն հաղթանակի տոնախմբություններ լինեն. եւ մի օր էլ Արցախի վերամիավորվելը տոնենք: Միացումի կենացը Առնոն կանգնեց: Բոլորը կանգնեցին, ու զնգացին գինով լի բաժակները:

- Սա պատմական վայր է: Կարմիր քարի ճակատին, ժայռի վրա հարկավոր է փորագրել, որ Շահ Աբասը 1604 թվականին իր զորքով եկել,- առաջարկում է Անդրանիկը, ու խոսքը կիսատ է մնում բաժակխփոցի ու ոչխարի մսով խաշլամա բերելու հետ կապված ուրախ կանչերի մեջ:

Կերուխումը շարունակվում է: Ավանդական կենացների շարքի մեջ մոռացության է մատնվում Անդրանիկի անունը, ու չեն նկատում, որ դեմքը գնալով մռայլվում է: Արմոն նկատեց, վեր կացավ, սիրուն-սիրուն բառերով սկսեց բաժակաճառ ասել կարեւորել ֆիդայիների գործը, բայց արդեն ուշ էր: Անդրանիկը վեր կացավ ու հեռու քաշվեց քեֆ անողներից:

- Եկած օգնությունը ճիշտ չի բաժանվում,- խոսակցություն բացեց Պետրոսյան Պավլուշան:

- Երեւանում մնայիր սուրծդ խմեիր,- հեգնեց Հովհաննիսյան Մարտինը:- Եկել, մեզ հետ ապրում ես, լավ ես արել, բայց ուղեղդ շատ մի չարչարիր...

- Որ մի բաժակ պակաս խմեիր, օգնությունը ճիշտ կլիներ բաշխված,- խեթեց Արմոն:

Հնչում է երաժշտությունը: Կին ու տղամարդ պարում են:

Մատաղի թունդ պահին, կրակոցների ձայն է լսվում: Թումասեռի մոտերքից ծուխ է բարձրանում:

- Գուցե գայլ է մտել ոչխարների մեջ, հովիվները կրակում են,- փորձեց բացատրել մեկը, բայց նույն պահին հրաձգության ձայնը ուժեղանում է:

Տղամարդիկ լցվում են մեքենաների մեջ ու մեկնում դեպի դեպքի վայրը:

Օգնության են շտապում: Առջեւից վազում է Սեւակը՝ ոտաբոբիկ, չէր հասցրել կոշիկները հագնել, մատաղի տեղից մի մեծ դանակ ձեռքին...

Նույն պահին Հին Շենում Բարսեղյան Կարենի տանը եւս ուրախություն կար. նորածին երեխայի կնունքն էին անում: Անդրանիկի գալուց հետո գյուղում ծնված առաջին տղա երեխան էր: Շտաբի «Նիվա»-ով Առնոն ծննդկանին ուղարկել էր Մեծ Շենի հիվանդանոց, Կարենը անտեղյակ մտել էր շտաբ:

- Անունը Արամազդ ես դնում...- ասաց Անդրանիկը:

- Ի՞նչ...- Տղայի ունկերին անունը տարօրինակ ու խորթ թվաց:

- Հայոց հին աստվածների անունները լսած չկա՞ս, դե իմացիր՝ Անահիտ, Աստղիկ, Միհր, Վահագն, Նանե, Տիր, Վանատուր... Արամազդը հայոց գերագույն աստվածն է, երկնքի ու երկրի արարողը, մարդկանց արիություն ու բարեգործություն պարգեւողը: Արամա՞զդ, մի տես ոնց է հնչում, վերջիվերջո պիտի հայանանք, չէ՞:

- Շատ սիրուն անուններ են: Իմ առաջնեկի անունն էլ Անդրանիկն է դրել, Նարե՞...- Հպարտացավ Սիմոնյան Վիլենը:

- Տառադարձությամբ, բայց էլի ոչինչ,- գոհ ժպտաց Անդրանիկը:

Երեխան հո միայն ի՞մը չէ,- երկար ու բարակ բացատրություններից հետո էլ դեռ երկմտում էր Կարենը,- թողեք խորհրդակցեմ հարսի ու մայրներիս հետ:

Երեխան միայն ձերը չէ, Կարեն, շտաբի երեխան է,- զրույցին խառնվեց մինչ այդ լուռ նստած Առնոն:

Ինչ եմ ասում, թող ձեր խոսքը լինի,- իր ուսուցչի ու հրամանատարի խոսքը որոշիչ եղավ:

Արամազդի կնունքն էր, երբ կրակոցներ լսվեցին, հավաքվածները վազեցին դեպի Թումասեռ:

Աշնանային այդ օրը Վլադիկենց բակում տանձ-խնձոր-սալորից մեղր են քաշում: Հարեւանը Շմավոնը, բաժակը պահեց ծորակի տակ, ... սառեցրեց ու միանգամից դատարկեց.

Պահ, պահ, պահ, ինչ արադ է, մաքուր բյահրըբար,- ասաց, մի բաժակ էլ լցրեց ու խմեց.

Օջախդ շեն մնա, Վլադիկ, դուռդ հարեւաններիդ առաջ միշտ բաց... - Հետո անցան տուն, սեղան նստեցին ու բաժակ-բաժակի հնչեցին...

Շամոյի հերթական բաժակաճառի վրա կրակոցներ լսվեցին:

Վեր կաց, Շամո...- Մինչ Շամոն կսթափվեր, Վլադիկը կարաբինը ... վազում էր:

Հասնելով ընկերոջ իրարանցումը, Շամոն վազեց-վերցրեց 32 տրամաչափի չախմախով հրացանը ու անտառի միջով, կարճ ճանապարհով վազում են: Վլադիկի ոտքը ծնկից ներքեւ անդամահատված ու զոհաբերված էր, Շամոն էլ վեց տարեկանում ծառից ընկել ու կաղ էր: Վազում էին, ո նց էին վազում ...

Պրոնի կարաբինը մի քանի անգամ կրակեց ու լռվեց արժանանալով ոչխարոջ տասը հարկանի հայհոյանքներին: Ագերինները փորձում են ... սարնիվեր: Նրանց կողմից, սարի գագաթից աշխատում է ... բայց չի մոտենում: Տղաները հասկանում են, որ Լաչինի պարեսանոցից օգնություն է եկել, բայց միեւնույն է, ագարտի մեջ կռվում են: ... մոտից մեկը հեռադիտակով նայում է: Հովսեփյան Վլադիկը դիտակ նշանառու է, կրակեց դեպի հեռադիտակով մարդը, հետո պիտի խոստանային, որ գնդակը իրենց բախտից կպել է ոչ թե Լաչինի ռուս պարեսանոցի, այլ ավտոմատին, եւ կոթ պոկվել է: Աշնանային տերեւաթափն ... կատարվել էր, եւ հայերի շարժումները, դիրքային փոփոխությունները նկատվում էին օդից ու թշնամու դիրքերից:

ՊՊՏՐ-ը նեղում է, Զորիկին ուղարկում են, որ գյուղից ականանետը

բերի, թաքստոցի տեղը գիտեր: Երբ ականատեսը հասցրին բարձունք, պարզվեց, որ այն առանց ականների է: Տղաները աշխատում են ավտոմատներով ու կարաբիններով: Մի դեղին գույնի ուղղաթիռ իջավ Լճալար տեղամասում, միջից ավտոմատավորներ դուրս եկան ու կրակում են: Ուղղաթիռը նորից օդ բարձրացավ, շրջվեց ու հետ դառավ: Արմոն նկատեց, որ ազերիները թփուտների հետեւից իրենց վիրավորներին քաշում են տանում դեպի ուղղաթիռը:

Առնոն հեռակապի մեջ գոռաց.

- Փամփուշտները վերջանում են:

Արմոյի ավտոմատի պահունակում 2-3 փամփուշտ էր մնացել:

Սաքոն ու Նորիաձնցի Գագոն ծառի հաստ բնի ետեւից կրակում ու թաքնվում էին: Սաքոն ծախլիկ էր, էդ նեղ պահին Գագոն նկատեց ու ծիծաղը եկավ: Մի գնդակ զզալով սանրեց-խանձեց տղայի մազերը: Գագոն իրեն չկորցրեց.

- Սափրիչ էլ են շան որդիները...

Սաքոն Բախշյան Վարդանին, որ ուսանող էր ու գերազանց սովորող, խնայել-ուղարկել էր առաջին գծից հեռու, բայց վերջինս հասկանալով նրա միտքը, նորից եկել ու կռվում էր Սաքոյի կողքին:

Երբ ուղղաթիռը հասավ տղաների ուղիղ գլխավերեւը, Արմոն ավտոմատի կրակահերթ տվեց, եւ նրան թվում էր, թե հիմա ուղղաթիռը կընկնի: Դիրքը փոխեց, նորից ու նորից կրակեց, բայց հեչ, ուղղաթիռի վեջն էլ չէր...

- Թու, ես քո կինո ստեղծողի...

Շամոյի ծիծաղը պրծավ Արմոյի հայհոյանքի վրա, որ կինոյում տեսել է, թե ինչպես են ավտոմատով կրակում, եւ ուղղաթիռը վայր ընկնում:

- Արմո, էդ դեմքիդ ի՞նչ արյուն է,- նկատեց Շամոն:

Արմոն սրբեց երեսը.

- Ոչինչ, քերծվածք է,- ու շարունակեց կրակել:

Շամոն ու Վլադիկը 2 մետր տրամագծով հսկայական կաղնու բնի հետեւում կրակում ու թաքնվում էին: ԲՄՊ-ից նկատում, փողն ուղղում են ծառին: Արկերը խրվում են բնի մեջ ու տղաներին չեն վնասում:

Մարինեն, Գրետան, Սիդան, Կարինեն 5կմ ոտքով ցինկե ծանր արկղը սարնիվեր քարշ տալով փամփուշտ էին բերում տղաներին: Սլավիկը նկատեց ու վազեց դեպի նրանց: Տղաների ուրախությունը ոնց որ անապատում ջուր հայտնաբերվեր:

Ոչխարատափի բարձունքում ազերիների մի ստվար խումբ երեւաց ու տղաները հասկացան, որ հակառակ կողմը համալրում է ստացել

Լեռնասարի դիրքերում հայերի թիվը հասնում էր 35-ի, որոնք իրարից 50-60մ վրա էին դիրք բռնել: Առնոն հրամայել էր, որ պահակակետերը լրկին, քանի որ կարող էր գյուղի վրա էլ հարձակում լինել: Ուժերը անհավասար էին:

Խեչոն, Պետոն, Սուրենը, Գառնիկը, Ալյոշան, Մանվելը, Սամվելը ոչնչացված կրակում են: Ազերիներին օգնության հասած երկու «ՄՄՍ»-ները գնդակաձեւ եղան, դիմադրողները միջից դուրս եկան, վազեցին:

Կաղնու հաստ բնի հետեւում հայտնվեցին Սաքոն ու Վլադիկը, պուճուր գժտված ու իրարից խռով էին: Ազերիները սեղմելով եկել, կիսաշրջապատել էին բարձունքը:

Դու ծախը պահիր, ես աջը.- գոռաց Վլադիկը:

Սուրիվը գնալով թեժանում էր:

Ես կծածկեմ, դու հետ գնա,- գոռաց Սաքոն:

Դու պիտի դուրս գաս, դու երեխատեր ես,- գոռաց Վլադիկը:

Էստեղ էլ ե՞ս հետս վիճում, տո,- գոռաց Սաքոն,- հետ գնա քեզ ասում եմ:- Այդ պահին Արմենը գլորվելով մտավ կաղնու հետեւը: Ինչ-որ աշխատում է ծառի վրա: Ճյուղերը գնդակներից հատվում ու թափվում են տղաների վրա: Կաղնու հաստ բունը պահում է կռվողներին: Սաքոն բռնում է Վլադիկի մեջքից ու կատաղած հետ է շարտում.

Պիտի հետ քաշվեք, լակոտներ...

Արմենն ու Վլադիկը ետ են քաշվում, բայց չեն հեռանում, պահում են Սաքոյի ծախ թեւը, որ չշրջապատվի: Սաքոյի մոտ պահունակում վերջին փամփուշտներն են մնացել: Գոռում է.

Արմեն, գնա, շուտ, փամփուշտ հասցրու...

Վլադիկի մոտ դեռ կարաբինի 50 փամփուշտ կար: Ուղղաթիռը պտույտ գործեց հենց նրանց գլխավերեւում: Վլադիկը կարաբինի խողովակ ուղղեց ու լսեց Սլավիկի գոռոցը.

Ներքին զորքերինն է, բանակը մեր դեմ մի հանիր...

Վլադիկը լսեց Արմոյի ծայնը.

Զգույշ, ծախում ազերիներ են երեւացել:

Վլադիկը շրջվում եւ նրա դիպուկ կրակից թմբի վրա բարձրացած ազերիին ընկնում է:

Էդիկն ու Գագոն պահում են «Խենթ Սահակի» խութի թեւը: Վլադիկը թարձրացավ նրանց օգնության:

Կավրուշան ու ազերին դեմ-դիմաց դուրս եկան:

Կցի՛ր զենքդ,- երկուսն էլ միաժամանակ գոռացին, երկուսն էլ դուրս են, երկուսի հրացանների փողերը սարսափից վերուվար էին

անում: Երկու կրակոց լսվեց: Ազերին փռվեց: Գավրուշայի գույնը ճեփ-ճերմակ դարձավ ու մնաց սառած. Սաքոն նկատեց, քաշեց-գցեց գետնին ու չմոռացավ գոռալ.

- Շուտ, միգիր ու խմիր, որ վախդ անցնի:

- Ես մարդ եմ սպանել,- դողդողում էր Գավրուշան,- ի՞նչ է լինելու ինձ հետ: Ես տեսա... հրացանի փողը... պիտի կրակեր... ես չիմացա ինչպես կրակեցի,- տղան շոկի մեջ էր:

- Լուռ մնա, տո, պապանձվիր, մենակ ես ու դու իմանանք...

Թոհուբոհի մեջ, ծխի փոշում, սյուների ու մշուշի մեջ Առնոն հեռվից մի ակնթարթ միայն նկատել էր երկուսին: Հետո, կռվից հետո, շտաբում ամբողջ գիշեր պիտի տառապեր, ամբողջ գիշեր հոգին պիտի ծվատեր պատկերը. քիրվան Քումենսարի կածանով իջնում էր ճերմակ խոյի կապից բռնած, կարմիր ժապավենը փռփռում էր պոզին, Մկրտչյանների տանը հարսանիք էր, հայրը պարելով դեմն էր դուրս եկել... ժանգան իզուր էր փորձում հանգստացնել նրան: Հենց նա իրենց քիրվան պիտի սպանվե՞ր, հորը ի՞նչ պատասխան է տալու...

Առավոտյան Միքայելը մտավ շտաբ: Սաքոն Առնոյի վիճակը թեթևացնելու համար առաջ գնաց ու կռվազան տոնով ասաց.

- Մեզ վրա եկավ՝ սպանեցինք: Թշնամի էր...

- Նա թշնամի չէր,- ասաց Միքայելը:

- Ով կգա մեզ վրա՝ թշնամի է: Չսպանենք՝ մեզ կսպանեն...

Առնոն լուռ էր, հայրը դուրս եկավ շտաբից, ու երկուսի հոգին էլ ցավում էր...

Սքնշաղն իջնում էր սարերին, եւ ազերիներն ու Լաչինից օգնության եկած խորհրդային զորքերը հասկացան, որ երբ կռվում են իրենց հողում ու իրենց հողի համար զիջում չի լինում, ու հետ քաշվեցին:

Տղաները ամբողջ գիշեր մինչեւ առավոտ երկու կիլոմետր երկարությամբ դիրք բռնած մնացին սարերում:

Սաքոն, Խեչոն, Շամոն, Վլադիկը, հայաստանցի Ստյոպան պահում էին ֆերմայի մոտ դիրքը: Վլադիկը Սաքոյից ներողություն խնդրեց, հասկացել էր, որ վեճի մեջ մեղավորը ինքն է եղել: Գյուղից զենքի ընդունակ տղամարդիկ կամավոր բարձրացան օգնելու տղաներին: Դիրքավորվածներից երբեմն-երբեմն իջնում էին գյուղ տաքանալու, եւ մի աժամանակ տեղեկություն տանելու, քանի որ գյուղն էլ չէր քնել. սպասում էին պատասխան հարվածի, ու երբ առաջին խաղաղ պահերն անցան, զարմացան: Հետո պիտի հասկանային, որ ուժը վախ, հարգանք ու հեղինակություն է ծնում: Ամբողջ գիշեր երկու-երկու, խումբ-խումբ քննարկում, վերլուծում էին կատարվածը, վեր հանում սխալները, թերությունները, որ բնական էին, քանի որ առաջին լուրջ ընդհարումն էր: Ու տղաները չգիտեին զայրանայի՞ն, թե՞ ծիծաղեին. շտաբում երկու հատ ականանետ կար մեխանիկական ու էլեկտրական, շփոթությունից թողել էին մեկի ականանետը, մյուսի արկը: Կռվի հաջորդ օրը հրամանատարը կենտրոնացրեց զենքերը. խաղաղ բնակիչներից, ովքեր չէին կարող առաջին գիծ հասնել, զենքը վերցնում են:

Առավոտյան տղաների համար գյուղից հացուպանիր, ջուր բերեցին: Պահակակետերը, որ մինչ այդ կռվի վայրից 300-500 մետր ցածր էին, տեղադրվեցին վերեւում՝ Թումասեռից մինչեւ Սուրան 4-5կմ երկարությամբ: Մի պոստը որոշվեց դնել Քումենքարի հետեւում: Քարը 4-5 մետր բարձրություն ուներ: Շամոն մտավ քարի հետեւը.

Տղերք, ի՞նչ դիրք է, ի՞նչ դիրք, լրիվ ապահով կլինենք,- հիացած բղավեցին:

1918-ին էլ էս նույն տեղում պահակակետ է եղել,- եւ Առնոն պատմեց պապից լսած պատմությունը. Յազանց Թյունին Հարությունը պիտի էր կանգնել «Մոսին» հրացանով, որ հզոր զենք է, 4-5կմ-ի վրա դիպուկ նշանառությամբ կրակում է: Թուրքերը հարձակվում են, Թյունին մի քանի հոգով դիմադրում է, հետո տեսնելով, որ փամփուշտը վերջանում է, կանգնում է Քումենքարի վրա, դեպի գյուղ կանչում.

Ասեղը վերջացել է...

Ու մինչ «ասեղ» կհասցնեին, թուրքերը հասկանում են, որ փամփուշտը վերջացել է, մոտենում են ու սպանում Թյունիին:

Քումենքարը հարմար դիրք է պաշտպանվելու համար:

Եվ նահանջելու համար,- կատակեց Շամոն, իր վրա ընդունելով Վլադիկի խիստ հայացքը:

Քումենքարից ոնց որ ափիդ մեջ երեւում է Յղդոնեսը, մի քիչ հեռու Տաղիծորը, Տեղ գյուղը, Լաչինը:

Այրբեջանի հեռուստաալիքները քար լռություն պահպանեցին կրած պարտության շուրջ: Իսկ եվրոպական ու ամերիկյան ռադիոալիքները հաղորդեցին, որ լեռներում թաքնված հայ ֆիդայիները կռվել են կանոնավոր բանակի դեմ ու հաղթանակ տարել:

Տղաների ոգեւորությունը շատ էր: Առաջին մեծ ընդհարումն էր, առաջին հաղթանակը, եւ գյուղի բնակիչներից մի անտարբեր մաս սկսեց ակտիվ մասնակցություն բերել պաշտպանությանը: Մի փոքրաթիվ մասը դեռ շարունակում էր կասկածով ու թերահավատությամբ նայել հասկացվող դեպքերին:

Տղաները զենք բռնել ու կռվել էին սովորում...

Ավար բերած ոչխարներից մի սեւ խոյ մորթեցին, բայց ժողովուրդը չի մոտենում:

- Մերը չի, հարամ է...

- Նրանք որ տանում են իրե՞նցն է,- վրդովվեց Սաքոն, որ արդեն մոռացել էր իրեն կացրած «դուլդուր» ածականը ու իր սպառնալիքը:

Լաչինից ու Շուշիից հայտնում են Ստեփանակերտի պարետատանը, որ ենթաշրջանում արտակարգ իրավիճակ է ստեղծվել: Դեպքերից 24 ժամ անց 2 ՈՒԱՉ մոտենում են Թումասեռի դիրքերին ու հեռու կանգնում: Դիրքապահները կարծում են նոր հարձակում է եւ պատրաստվում են կռվի բռնվելու, բայց շտաբից հայտնում են, որ պարետատնից են, եկել են բանակցությունների: Տղաները արագ թաքցնում են զենքերը ու թողնում, որ մեքենաները իջնեն գյուղ:

Բանակցությունները վարում են Առնոն, Անդրանիկ Հարությունյանը, Դավթյան Սուրենն էլ հետներն է:

Առնոն գինվորական հագուստով էր, ատրճանակը գոտին խրած, բայց չի երեւում: Ժողճակատի հրամանատարի մեկնած ձեռքը մնաց օդում, բայց սկսեց հոխորտալ.

- Շատ եք ձեռքներիդ ազատություն տվել: Ճանապարհներն էլ փակել եք...

- Ձեզնից ենք սովորել: Ինչ անեք պատասխան եք ստանալու:

- Տեսեք չփոշմանեք:

- Զորքը մեջտեղը չլիներ հետներդ կխոսեինք Լաչինի մեջ:

- Եթե չօգնեք Թավաքյուլին սպանողին գտնենք, շատ մարդ կտուժի,- Սուրենին դիմեց Լաչինի պարետը:

- Կհետաքրքրվենք, կգտնենք կասենք: Զահել են, տաքարյուն են: Դե, նրանց էլ ասա իրենց հանգիստ պահեն,- Սուրենը փորձում էր բորբոքվող վեճը շրջել, պարետն էլ հասկացավ, որ իր ջանքերը ապարդյուն են, ոչինչ չի իմանալու եւ իզուր ջուր ծեծել կլինի:

Ազերիները արդեն հասկանում էին, որ սա էլ էն նախկին Բերդաձորը չէ: Գիտեին, որ վնաս տալու դեպքում Առնոն կայծակնային պատասխան է տալու, ու արդեն վախ էին զգում:

- Մարդ եք սպանել, պատասխան եք տալու,- շարունակում է ժողճակատի հրամանատարը:

- Մենք ընդամենը պաշտպանվել ենք: Մենք մեր հողի սահմաններից դուրս չենք եկել:

- Ուզում եք, որ ձորակը արյան բաղնիքի՞ վերածվի...

- Մենք միայն պաշտպանվում ենք:

- Զինված բանդա կա գյուղում:

- Գյուղում միայն խաղաղ բնակիչներ են եւ որսորդական հրացաններ:

Լաչինի ռուս պարետը հանում ցույց է տալիս միջից կես արված ավտոմատը.

- Ի՞նչ է, հիմարի տե՞ղ եք դնում մեզ, որսորդականո՞վ եք սա արել... Ինչխտներդ բերել է, որ չեմ սպանվել...

- Փառք Աստծո, ողջ-առողջ եք,- կատակեց Անդրանիկը:

- Դուք մարգված նշանառու ունեք...

- Մենք սովորական բնակիչներ ենք, ուսուցիչ, հողագործ, անասնապահ,- զրույցին խառնվեց Սուրենը:

Պարետը հանում ու կարդում է ցուցակը, որի մեջ գրված է ոչխարների, կովերի, ձիերի թիվը, բայց ավելացրած:

- Կամ տվեք, կամ վերջը վատ է լինելու:

Բանագնացները մերժված հետ են դառնում:

ԼՂ մարզխորհրդի շենքում նախագահ Սեմյոն Բաբայանի մոտ են հարակից կանչվածները: Նստած է նաեւ Զորի Բալայանը:

Պարետությունը խառնված է գործին, ոչխարները պիտի հետ տաք:

Իրենք հե՞տ են տալիս, որ մենք հետ տանք,- ընդդիմանում են Հարությունյան Անդրանիկն ու Արմոն:

- Այլ տարբերակ չկա, դուք պետք է գնաք բանակցությունների:

Պարետը առաջարկում է Բերդաձոր գնալ Շուշիով:

- Մենք էլ էն ոչխարները չենք, որ տանեք հանձնելու,- ասաց Արմոն, ու դուրս եկան:

Հին Շենի ակումբում տեղի ունեցած միացյալ ժողովը որոշում է ոչխարները հետ տալ, չնայած Առնոն ու Անդրանիկը մինչեւ վերջ դեմ էին:

Վերսկսված բանակցությունները տեղի են ունենում այն վայրում, որտեղ մարտն է տեղի ունեցել:

Ոչխարատափից ազերիները զինվորների ուղեկցությամբ առաջ են գալիս, պատվիրակության կազմում Յեղոնեսի սովխոզի տնօրեն Սուրենն էլյազովն է, դպրոցի տնօրեն Աղալարը, աղսախկալներ: Հայերի կողմից Սարգսյան Գրիշան, Ասրյան Արկադին, ֆիդայիներ: Երկու կողմերն էլ նախնական պայմանավորվածությամբ ոչ մի զենք չեն կրում: Պրիչան մեկնում է ձեռքը: Ազերիները շրջվում են.

Մեր մեջ ամեն ինչ վերջացած է:

Ինչո՞ւ:

Դուք մարդ եք սպանել:

- Մենք միայն պաշտպանվել ենք:
- Արյուն է թափվել, էս թշնամությունը...
- Մենք չենք սպանել, հիվանդ մարդ էր, երեւի... - փորձում է արդարանալ Սուխանը:
Մուհառռամը կատաղեց, գլխարկը գետնով տվեց.
- Ուրանո՞ւմ էլ եք, հա՞... Դե, կտեսնեք... Դա ձեզ վրա թանկ է նստելու:
- Ոնց որ դուք, էնպես էլ մենք...
Երկու կողմից էլ հասկացան, որ ստեղծված անդունդը այլեւս ոչնչով չի լցվելու:
Ազերիները հաշվում են ոչխարները:
- 500 ոչխար է եղել,- ստում է Սուլեյմանը:
- 300 ոչխար,- թիվը ստույգ ասացին հայերը:
- Բայց 15 գլուխ ոչխար ու մի մեծ այծ պակասում է...
Հայը լեզուն կծեց, որ չասի մորթված ոչխարների ստույգ թիվը:

Դեպքից մեկ շաբաթ անց Գերեզմանոցի տարածքից 100 գլուխ խոշոր եղջերավոր, 2 ձի, 2 պատանդ Բարսեղյան Սերգեյին ու Պետրոսյան Պավլուշային քշում-անցկացնում են Հագարագետը: Գրիշան, Արկադին, մի քանի ֆիդայի գնում են Յեղոնես բանակցությունների: Սուսուլմանլար գյուղից դպրոցի տնօրենը մտնում-հանում է ատրճանակը.
- Տղայիս դուք եք տարել...
Յեղոնեսի սովխոզի տնօրենը կտրում է դեմը.
- Չես սպանելու, եթե տղայիդ կյանքը թանկ է քեզ համար, եկել եմ բանակցությունների: 17 տարեկան ազերի պատանին փոխանակվում է Սերգիի ու Պավլուշայի, 100 գլուխ խոշոր եղջերավորների հետ:

Վլադիկը ոտքի պատճառով պահակության չէր կանգնում, եւ տղաները մինչեւ Թումա սարի պաշտպանությունը երեսով էին տալիս:
- Ճիշտ է, ես պահակություն չեմ անում, բայց հենց որ կրակոցի ձայն լսեմ, առաջինը ես կվազեմ,- տղաները բնականաբար նրա խոսքին չեն հավատում, ոմանք էլ ավելին, «վազել» բառի վրա չարախնդում են:
- Ինչո՞ւ քո զենքը կարաբին է,- լեզվակռիվը շարունակվում է:
- Գիտեն, ում ինչ են տալիս: Դիպուկ խփում եմ, ռիսկս էլ հերիքում է...
- Հա՞, էդ հետո կերեւա...
Վեճի վրա Առնոն մտնում է:
- Ես զենքի ծախված չեմ: Կբերեմ՝ կհանձնեմ, ուրիշը կվերցնեմ,

գրենա՞ք,- վրդովմունքին հետեւեց թունդ հայհոյանքը:- Ես հիմա կգամ,- ասվեր կացավ:
Դաց, դուրս չգաս,- սաստեց Առնոն, բայց տղան չլսեց: Մի քանի րոպեից եկավ.
Առ,- կարաբինը մեկնեց Առնոյին,- ով զենքի կռիվ է տալիս, նրան տուր:
Բոլորդ դուրս եկեք, գնացեք ձեր գործին, իսկ դու՝ մնա:
Մնացին երկուսով՝ հրամանատարն ու զինվորը:
Ստրինդ ասա, վախենում ես հա՞ կռվից,- Առնոն ձայնը բարձրացրեց.- զենքդ հանձնում ես:
Դու շատ լավ գիտես, որ ես չեմ վախենում:
Զենքը ես եմ քեզ տվել, զենքի համար ինձ պիտի պատասխան տաս, ոչ թե կողմնակի մարդկանց լսես...
Հոնդիմանությունը ազդում է, Վլադիկը կախում է գլուխը:
Ես գիտեմ՝ ում ինչ եմ տալիս, ում որտեղ եմ ուղարկում, ումից ինչ եմ պահանջում:-Հրամանատարի հանձնարարությամբ Վլադիկը ցերեկը հետախուզում էր գյուղի շրջակայքը եւ զեկուցում:
Չէ՞ որ դու իմ հետախույզն ես,- Առնոն ավելի ու ավելի էր վրդովվում եւ ձեռքը զարկեց սեղանին:
Ինչ անում ես, քո ազգի, քո հողի, քո հարազատության համար ես անում: Չպիտի գնայիր զենքդ բերեիր:
Վլադիկը ծպտուն չի հանում:
Կանացի բամբասանքներին չպիտի ականջ կախեիր, իմացա՞ր: Դե, հիմա՝ երեք օր պատժախուց:
Առնո...
Վերջ: Երեք օրից հետո կգաս զենքդ ստանալու: Իսկ հիմա դուրս գա:
Վլադիկը երեք օր անց է կացնում «պատժախցում», այսինքն, թաղակապ եկեղեցու ներսում, հետո դուրս է գալիս ու ստանում կարաբինը.
Հոկտեմբերի 21-ի մարտից հետո շտաբում, բոլորի ներկայությամբ Առնոն թփթփացրեց Վլադիկի մեջքին.
Ապրես, միշտ այդպես... մեր հողը ոտք դնողը միշտ այսպիսի պատասխան պիտի ստանա... Ինչ դիմում, ինչ բողոք, սուտ բաներ են: Լսիր, զենք,- միայն սա է փրկելու մեզ:
Որ էդպես է, ինչո՞ւ ես մեր կապը քաշած պահում, ինչո՞ւ չես թողնում մի կարգին մեզ ցույց տանք,- ասաց Վլադիկը:
Մենք դեռ պիտի պաշտպանվենք, կռվելո՛վ պաշտպանվենք...

Շնավոնը գնում է անտառ փայտի, հասնում է Բաղուց խութին: Թփերի տակ մի քանի չոր, մի քիչ հաստ ճյուղեր նկատեց, կռացավ վերցնելու, կոշիկի ծայրը խրվեց հողի մեջ: Ոտքի տակ դատարկ տարածություն զգաց: Ուշադիր նայեց, ոնց որ անցք լինի: Ձեռքով հողը մի քիչ հետ տարավ ու բացվեց անձավի մուտքը: «Սա նա է, Առնոյի պատմածը»: Հետ եկավ ու միասին գնացին:

- Սա 1918-ի կռիվներին զենքերի տեղն է եղել, հիշում եմ, պապս պատմել է: Լավ թաքստոց կլինի: Պիտի որ ուրիշ անձավներ էլ լինեն:

Փնտրեց ու 500 մետր հեռավորության վրա մի անձավ ևս հայտնաբերեց: Գիշերը Առնոն Արմիկի «Բելառուս» տրակտորով Սավելի ու Վլադիկի հետ զենքերը տարավ ու թաքցրեց:

Մութուլույսին Հեղուշը վեր էր կացել խմոր շաղախել, առավոտ կանուխ նստել թոնրի մոտ ֆիդայիների համար հաց թխելու, հերթը իրենն էր: Հարեւանուհին եկել օգնում էր, ծհանը ձեռքին ծակում էր հացերը, շեկ-կարմրավունները հանում, փռում:

- Եղիշ, մի յոթ գունդ է մնացել, դիր խոնչայի վրա բեր,- թոնրից ձայնեց կինը:

- Առանց էն էլ ուշացել եմ, տավարը պահելու հերթս է, չեմ կարող,- ասաց ու աճապարանքով դուրս եկավ: Ձիու կապը բռնեց 30-35 խոշոր եղջերավորները քշեց հանդ:

Հեղուշը յոթ գունդն էլ թխեց, թեժ հացը փռեց սալաքարերին փռված խսիրին, թոնրից դուրս եկավ աչքն առավ սարին՝ Հախունց թմբին:

- Փախա՞վ, ձին փախավ...- հարայ տվեց Հեղուշը: Սիրտը ոնց որ տեղահան եղավ, բերանը հասավ: Գեղանն ու Մեսրուպը ձի նստեցին, քշեցին: Հեղուշը իրեն գցեց Վալոդի բեռնատարի մեջ: Հախունց խութում արդեն փոխհրաձգություն էր սկսվել: Հրաչիկն ու տղաները ազերիներին հետապնդեցին մինչեւ Լաչինի շրջանի Ձերթի գյուղը: Սովորաբար նախրապանի հետ երկու հոգի զինված միշտ ուղեկցում էին, բայց Հախունց խութը կապած էր գյուղին, մարդկանց հենց աչքի դեմն է, օրն էլ խաղաղ էր, կարծես թե ոչ մի վտանգ չէր սպառնում, եւ Եղիշը մենակ էր նախիրը հանդ քշել:

Ծատրյան Եղիշը երեսնիվայր ընկած էր հողին, դեմքին մի միամիտ միամիտ ժպիտ, ու հողի վրա տաք-տաք լճացել էր քունքից ծորացած արյունը: Գնդակը արձակված էր ատրճանակից, շատ մոտիկից: Երեւում էր Եղիշը չի հավատացել, որ կսպանեն, ժպտացել ու անմեղ-անմեղ ժպիտը դեմքին ընկել էր հողին: Իսկ նախիրը չեն հասցրել քշել:

1990-ի նոյեմբերի 18-ն էր, եւ Եղիշի դագաղի շուրջ, դեռ ձեռքերը հագոտ, ալյուրոտ, կսկիծից, ցավից թպրտում էր կինը, ու մարմինը վիճվում է սգից ...

Ձորակում հին, շատ հին ու անխախտ ավանդույթ կար. վտանգի, դժբախտության պահին մեկ մարդու նման բոլոր գյուղերի բնակիչները նավաքվում էին: Ձորակի աշխարհագրական դիրքը, գլխներին մշտապես կախված վտանգը, անպաշտպան լինելը ժամանակների հոլովույթի մեջ դաստիարակել - արմատացրել էին այդ սովորույթը, վտանգին միասնաբար ընդառաջ գնալու բնազդը: Տխրությունն էլ էին ժողովրդի անում, ուրախությունն էլ: Գյուղախումբը մեղվափեթակ է հիշեցնում, ինչ ընտանիք:

Սգատան բակում ամբողջ ձորակն էր: Վազգեն Սարգսյանը ուղղաթիռով իջել էր Հին Շենում ու Առնոյի հետ եկել ցավակցելու ընտանիքին:

- Ժողովուրդ, դուք մենակ չեք,- սրտապնդող խոսք ասաց Վազգեն Սարգսյանը,- ձեր թիկունքում ամբողջ հայությունն է կանգնած, չընկճվեք: Մեր վաշտերը պատրաստ սպասում են, եթե հարկ եղավ Գորիսից օգնության կհասնեն...

Դագաղի դեմ-դիմաց գլխահակ կանգնել էին Սաքոն, Բախշիյան Վարդանը, հաճնեցի Գագոն ու Կոստյան, Մուրադյան Ստեփանը, Մանասարյան Նորիկը, Հարությունյան Անուշավանը (վերջին երկուսը զոհվել են Քարինտակի հունվարի 26-ի ճակատամարտում), էլի 12-15 ֆիդայի:

Առնոն հենց մտավ, կանանց սուգը սաստկացավ: Գնաց-կանգնեց դիակի գլխավերեւը: Հրաչիկը մոտեցավ.

- Սպանողը Կանաչ Թալայի ազերիներից է,- շշնջաց:

Առնոն ձեռքը հպեց դագաղին ու դուրս եկավ, հետեւից տղաներն էլ մեկ-մեկ թողեցին սգատունը:

Առստամյան Նապոլեոնը հետեւեց տղաներին.

- Գործ չունեք, նրանք մեզնից ուժեղ են,- ասաց ու դուրս եկավ: Կես ժամ չանցած տեղը տեղ չտվեց, որպես մեծահասակ, որպես վաստակաշատ մանկավարժ մտածեց, որ պարտավոր է ջահելներին խելքի բերել: Մոտեցավ դռանը. տաքացած ու բարձր-բարձր խոսում էին: Հենց մտավ լռեցին:

- Տղերք, արյունը արյունով չեն լվանա, գործ չունեք,- նորից խնդրեց:

Հրաչիկը կոշտ բնավորություն ուներ, կոշտ էլ պատասխանեց.

- Ինչ-որ անելու ենք իրենցից ենք սովորել: Որ մինչեւ Հախունց տա-

փը եկել են, վաղն էլ տունդ են մտնելու, քեզ տանդ մեջ սպանեն: Գնա գործիդ, Նապոլեոն:

- Կառավարություն կա, իշխանություն կա, օրենք կա... - փորձեց համոզել:

- Տեսնում ենք, թե ինչ կա եւ ինչպես կա...

Ծեր ուսուցիչը զգաց իր ավելորդ լինելը ու դռան մեջ լսեց Առնոյի բառերը.

- Եղիշի արյունը հողի վրա դեռ չչորացած՝ վրեժը պիտի առնենք:

Նապոլեոնը մտավ տուն, ծեր Վարսենիկը հարցական նայեց որդու աչքերին:

- Հրաչիկը գլխներիս օյին է բերելու,- գլուխն օրորեց որդին:

- Առանց Հրաչիկի մենք անտեր-անտիրական ենք, բալա ջան:

Այդ օրը արեւը ոչ թե մայր մտավ, այլ գլորվեց Շիշսարի հետեւը:

... Հին Շենի շտաբում Բերդաձորի ինքնապաշտպանության խորհրդի ընդլայնված նիստն էր, բոլոր գյուղերից եկել էին, թվով 30-35 հոգի, ժանեան եւ տղաները Սաքոն, հաճնեցի Գագոն (արմատներով Հադրութից), Ստյոպան, Վալերին, Մուրադյան Ստեփանը, չարբախցի Խաչիկը, Հարությունյան Անուշավանը, Նորիկը, Վարդանը, երեւանցի Հրաչը, Արմոն, Առստամյան Գառնիկը, Էդիկը, Ենոքը, Ռուբոն, Խորենը...

- Մենք ինքներս պիտի մեզ պաշտպաննենք,- ասաց Առնոն:- Ազերին օրը ցերեկով հայ է սպանում: Մեր ձեռքի եւ զենքի ուժը ցույց տանք, այլապես ...

- Պիտի արմատից կտրենք, ջնջենք, էնպես քանդենք էդ ավազակների բույնը, որ էլ ուշքի չգան,- տաքացած գոչեց Սաքոն:

Միաձայն որոշվեց. վրեժ առնել:

Շտաբում Առնոն ներկայացնում է մշակած ծրագիրը: Սեղանին փռել է իր ձեռքով գծած տեղանքի քարտեզը:

- Էս կետը Կանաչ Թալան է: Հրաչը իր ջոկատով ձախ կողմից պիտի շրջանցի, հայտնվի թիկունքում ու սպասի ազդանշանին,- բոլորը ուշադիր լսում են:

- Աջ կողմից Մեծ Շենի Գագոն իր տղաներով գյուղը կիսալուսնաձեւ շրջանցում է ու հարվածում: Դեպի Լիսագոր միջանցք ենք թողնում, որ բնակիչները դուրս գան:

- Բայց ըստ երեկվա հետախուզության տվյալների՝ գյուղում բնակիչ չկա, միայն օմոնականներ են,- հիշեցրեց Սաքոն:

- Այնուամենայնիվ, միջանցք թողնում ենք: Ճակատից, Եղցահողից, կարճ ճանապարհով մտնում եմ գյուղ: Հետո կասեմ ով է ինձ հետ գալու: 6-7 հոգի վերեւից Դեղինհողից, տեղանքը բարձր է ու հարմար,

ուշադրությունը շեղելու նպատակով պիտի կրակեն գյուղի վրա: Մի փոքր խումբ, 5 հոգի, Մեծ Շենի դպրոցի ճանապարհի վրա հսկում են, որ Շուշիի եւ Լաչինի կողմից օգնության չգան: Սաքո, դուք 11 հոգով սոսնձվելու եք ձորը ձորով բարձրանաք, մտնեք գյուղ: Եղցահողի բարձունքից մի քանի հոգով պիտի հսկեն, հարկ եղած դեպքում առաջանան ու հարձակվեն, որ գյուղ մտնողներին կալմեջ չանեն:

- Առաջին հերթին գյուղ մտնող ճանապարհների սյուների լուսարձակները պիտի ջարդենք,- ասաց Գագոն, որ Աֆղանստանի կռվի փորձ ուներ:

- Մի շտապիր, դրան էլ կհասնենք: Այսպես ուրեմն, Սաքո, ձորով բարձրանում ես, հասնում սյուներին ու մթության մեջ տալիս ես ազդանշանը՝ կանաչ լուսարձակիչ փամփուշտ ես կրակում: Վերեւից աշխատելու է իմ խումբը գնդացրով:

- Գյուղի մեջ իրարից 10 մետր հեռավորություն պահենք, որ նախ կազմակերպված առաջ գնանք, նաեւ իրարից տեղեկություն ունենանք,- առաջարկեց Սաքոն:

- Տղաներ, Աստված չանի, ինչ-որ բան պատահելու դեպքում, գիտե՞ք, չէ, մարտական ընկերոջ պարտքը: - Բոլորը հասկացան, որ ընկերոջ դիակը մարտադաշտից հանելու մասին է խոսքը:- Լիսագորից, Լաչինից պատահական մեքենաներ կարող է հայտնվեն, կանգնեցնում եք, բայց չեք սպանում: Խուսափեք արյունից:

- Բայց իրենք սպանել են...

- Մենք էս անգամ զգուշացնում ենք: Գյուղի մեջ եւս զոհ չպիտի լինի,- Առնոն վերջին հրահանգները տվեց:

- Գիտե՞ք, չէ, նշանաբանը.

Ով սպանվի՝ դավաճան է,
Բերդաձորի հողում տեղ չունի:

Առնոն այս խոսքերը ճակատագրական պահերից առաջ միշտ կրկնում ու տղաներին կրկնել է տալիս, իսկ մարտից առաջ եռագույն դրոշը միշտ փաթաթում էր մեջքին:

Գիշերվա ժամը 11-ն էր:

Տղաները հասան առաջին տներին: Հաղթահասակ Սաքոն եւ Մուրադյան Ստյոպան նետում են նռնակները: Բենզինով շշերը պայթում են: Առաջ են գնում: Մի տան գոմից տախտակի ճռռոց եկավ: Ուրեմն մարդ կա՝ թաքնված: Ապարանցի Պավլիկը պատի տակով զգույշ, կռացած մոտենում է, հասնում դռանը, ցատկում ու ավտոմատի կրակահերթ է տալիս:

Լռություն: Ներսից ծայն չի լսվում: Պավլիկը ոտքով հրում է դուռը ու կողքի ցատկում: Հետո արտիստիկ ձեռքերը թուլացած կախում է ու թե.

- Եղբորս սպանեցի:

Գոմի ներսը չէր երեւում, տղաները կարկամած մի պահ կանգնեցին՝ էս ինչ է ասում, հետո մոտեցան գոմին ու մի ծիծաղ ընկավ՝ էշի փռված դիակը տեսնելով: Այդ օրից անունը մնաց «եղբայրասպան» Պավլիկ:

Չոբանյան Շիրակը, Ալեքսեյը, էլի մի քանի հոգի Տասը Վերստից բարձրացել ու միացել էին Առնոյի ջոկատին: Առնոն աշխատում էր «Դեկտյարով» գնդացիրով, տարել էր նաեւ իր սարքած «Շանթ» ականանետը, որը միայն ինքն էր կարողանում օգտագործել: Մարտը եւ ղեկավարում էր, եւ կռվում՝ արագ անցնելով մի գենքից մյուսը: Տղաներին միշտ զարմացրել է նրա տիրապետելը բոլոր տեսակի զենքերին:

Օմոնը՝ ընդամենը 5-10 րոպե դիմադրում է ու հետ քաշվում: Սեւակը տեսավ, թե ինչպես թոհուբոհի մեջ Առնոն քաշեց հանեց եռագույնը, կապեց մի ծողի վրա ու տնկեց մի բարձր շենքի տանիքի:

- Քեզ մի «Կալաշնիկով» եմ տալու, Սեւակ,- գոռաց Առնոն:

- Չեմ հավատում,- կանչեց Սեւակը, որի զենքը «Շմայսերն» էր, որ մեկ ծուռ էր խփում, մեկ կծում ու արգելակվում էր:

Տղաները վառում են տները: Նոր կառուցվածներ շատ կային: Ադրբեջանի կառավարությունը Արցախի ժողովրդագրական կազմը փոխելու ուղղությամբ մեծ աշխատանք էր կատարում, մարզը վերաբնակեցնում մեսխեթցի թուրքերով:

Գյուղում՝ խաղաղ բնակիչ չկար: Կարոն, Նորիկը, Կարենը, Օլեգը, Շիրակը, Լեւոնը, Ստյոպան, Սաշիկը գյուղը գրեթե սանրել-անցել էին, երբ Մեծ Շենի ճանապարհի վրա գտնվող խմբի կողմից օդ խփվեցին կարմիր լուսարձակիչ փամփուշտներ, որ նշանակում էր, թե պարետատան գորամասից գալիս են: Տղաներն այնքան էին տաքացած ու ոգեւորված, որ դժվարությամբ հավաքվեցին: Նման դեպքերում գիտեին պարտադիր պայմանը. վերջում հետքերը սրբել, որ մաքուր գործ դուրս գա: Արագ-արագ, հապշտապ հավաքեցին պարկուճները, ցրվեցին նախօրոք պայմանավորված ուղղությամբ:

Առնոն տղաների հետ անմիջապես հասավ Մեծ Շեն: Ոչ մի շարասյուն էլ չկար: Ստեփանակերտից ու Գորիսից պահանջել էին դադարեցնել: Առնոն Մեծ Շենի հեռախոսակետում ընկալուչի մեջ բարկացած խոսում էր.

- Հրամանը չեմ ընդունում: Էդտեղից հրամայելը հեշտ է...

Սաքոն չհասկացավ, թե հրամանատարը ում հետ խոսեց ու փրփրած հետուառաջ էր քայլում: Վայրկյան անց հաջորդ զանգը եղավ, եւ հեռախոսավարուհի Նվարդը ընկալուչը մեկնեց Սաքոյին:

- Բանակը Գորիսին վերջնագիր է ներկայացրել, դադարեցրեք, հակառակ դեպքում՝ խփելու են ...

- Մենք Բերդաձորում հարձակումից չենք վախենում, դուք Գորիսում վախենո՞ւմ եք,- հոխորտաց Սաքոն:

Տղաները այնքան էին տարվել, որ առաջարկում են հարձակվել Լիսագոր ու Հունանավ գյուղերի վրա, բայց Առնոն կտրականապես դեմ դուրս եկավ. երկու հայկական քաղաքներից սպառնացել էին, որ չդադարեցնելու դեպքում հետեւանքների ամբողջ պատասխանատվությունը ընկնելու էր իր վրա: Առնոն ձորակի մեծահասակների ու կոմունիստների կուժն ու կուլան իր գլխին կոտրելը կանտեսեր, եթե մարզկոմուտորոնի իր ղեկավարներից հրաման չստանար...

Ջոկատները հետ է քաշում Տասը Վերստ, որպեսզի գյուղը պաշտպանի սպասվող պատասխան հարձակումից: Գյուղական խորհուրդը հրամայվում՝ պատճառաբանելով, որ տղաների ներկայությունը կլրգռի հարեւան ազերիներին.

- Ձեր մնալը վտանգավոր է: Որ գան էլ՝ մեզ ձեռք չեն տալու, էսքան ոստիի հարեւաններ ենք, հաշտ ու խաղաղ ապրել ենք: Արյունը մեզնից հեռու տարեք:

Առնոն տղաների հետ բարձրանում է Շլորուտ (Սալորենիների) խուլը, որտեղից Կանաչ Թալան պահում է հայացքի տակ, եւ նկատում է, որ լուսադեմին օմոնը նորից հետ է դառնում գյուղ:

Շիրակը ընկերների հետ քաշվում է մոտիկ անտառը: Մի հարյուր մետր հազիվ խորացել էին, լսում են կրակոցներ ու վայնասուն: Հետ են դառնում՝ տեսնում Տասը Վերստի տները հրդեհի մեջ, բնակիչները դեռ ոչ մեկն փախած: Շիրակը դեռ չի իմանում, որ իր 100 տարեկան տատը Կանաչը չի կարողացել փախչել ու վառվել է տան մեջ: Շիրակը հրդեհի լոցերի տակ մարդ է նկատում, քաշում է ավտոմատի ծգանը՝ կրակում: Հաջորդ օրը տղաները իմանում են, որ վիրավորվել է Շուշիի շրջկոմի առաջին քարտուղար Գյոզալովը, որն անձամբ ղեկավարում էր ավիագակախումբը: Հաջորդ օրը շտաբում Առնոն կատաղությունից թափահարում էր ձեռքերը.

- Էլ ոչ մեկին չեմ լսելու: Կանեմ ինչ հարմար կգտնեմ: Եթե մնայինք գյուղում, չէին վառի: Գյուղացիները դեռ չեն հասկացել, որ կամ թուրքը կամ՝ շունը. մահակը ցած դրիր՝ կծելու է: Էս դեպքը մեզ դաս պիտի լինի:

Կանաչ Թալայից հետո ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերը, որ մինչ այդ

մտնում-դուրս էին գալիս, պահակակետ են դնում ծորակի բոլոր գյուղերում ու պինդ նստում:

Բաքվի ու Մոսկվայի հեռուստատեսությամբ հաղորդեցին, որ հայ «ծայրահեղականները» հարձակվել են ազերի խաղաղ բնակիչների վրա, վառել են գյուղ: Բաքվից հնչեցրին Առնո Սկրտչյանի եւ Անդրանիկ Հարությունյանի անունները, հայտարարվեց, որ Հին Շենը դարձել է «դաշնակ-ղուլդուրների եւ գրոհայինների որջ»:

Հայաստանից եկած տղաները Սաքոն, Ստյոպան, Խեչոն, Գագոն եւ մյուսները քաշվեցին անտառները եւ միառժամանակ գյուղ չէին իջնում: Պոստերում պահակություն էին անում՝ արեւի ու անձրեւի տակ, ծառերի տակ կամ անձավներում քնում էին: Գյուղից նրանց համար տղաները հաց էին տանում: Անդրանիկը գտնելով, որ մնալը վտանգավոր է, Առնոյին առաջարկեց որոշ ժամանակով անցնել Հայաստան:

- Չեմ կարող, մեկ օրով էլ դուրս չեմ գա, մանավանդ այս պահին: Գյուղացիների մեջ խուճապ կընկնի:

25 օրում Տասը Վերստի վառած տները վերականգնեցին:

Մի քանի օր Առնոն չէր երեւում, ու Անդրանիկն ու Ժաննան միայն գիտեին, որ գենքի է գնացել: Սեւակին կանչեցին շտաբ, հեռախոսի մոտ.

- Ֆարսյան, Դալամա Սահակի ծառը գիտես, չէ՞:

- Գիտեմ, շեֆ, էն հսկա ուռենին:

- Ծառի շուրջ խոտը հարեք, պատրաստեք, վաղը գալու եմ տանեմ: Գառնիկին ասեք մի գառ էլ բերի...

Սեւակը հասկացավ. ուրեմն ոտքով, Հունանավ ադրբեջանական գյուղը վերեւով շրջանցելով հասնելու են Խենք Սահակի ծառի տակ: Իսկ թե գառը ում, ինչի համար է, չհասկացան:

- Որ Առնոն գա, դու կմնաս, Նորիկը ձիով կգա մեզ իմաց կանի,- ճանապարհեց Սեւակի քեռին Գառնիկը:

Սեւակն ու Նորիկը մեկ ժամ հետո հասան ծառին, բայց ձիերը հեռու կապեցին: Մի ամբողջ օր մնացին անտառում, ու ոչ մի ձայն:

Գիշերվա կեսին Առնոն նորից զանգում է շտաբ:

- Խոտը հավաքե՞լ եք:

- Այո:

- Խրձե՞ր եք կապել:

- Այո:

- Դե ուրեմն, սպասեք, գալու եմ:

- Գուցե «խոտը» շատ է, մի քանի ձի տարեք,- ասաց Գառնիկը:

Մութը-մութին գյուղից դուրս են գալիս Սեւակը, Նորիկը, Շամոն, Գագոն, Վալերին, բոլորն էլ զինված կարաբիններով ու «Շմայսերով». չի իմացվի ինչ կպատահի:

Տեղ հասան: Ժամեր անցան, լռություն է: Սեւակն ու Նորիկը երկու բարձր ծառ բարձրացան շրջապատը դիտելու, ճանապարհը հետաքրքրվելու: Ամեն ինչ հանգիստ է:

Հանկարծ ձայն լսվեց, հետո երեւաց ուղղաթիռը, գույնը կանաչ, թեւի տակ՝ կարմիր աստղ: Եկավ ու պտույտներ գործեց ուղիղ տղաների գլխավերեւում:

- Ծախված գործ է, բանակի ուղղաթիռն է,- կարծիք հայտնեց Գագոն:

Ուղղաթիռը հենց սկսեց վայրէջքը, տղաները փախան՝ ամեն մեկը մի ուղղությամբ, միայն թե փրկվեն:

Շամոն իրեն գցեց անտառի մեջ ու կորավ: Վազում է, ոնց է վազում: Սեւ եւ ճաքածիող կոչվող ձորը: Ցատկում է թփերի վրայով, գիհու մասնիկ ճյուղերը կպչում են փեշից, կոխկրտելով վազում է, արագ ընթացքի մեջ չկարողանալով պահել հավասարակշռությունը գլորվելով հասնում է ձորի հատակը: Վեր է կենում, նորից վազում: Լսում է սրտի արագ խփոցները, բայց ուշադրություն չի դարձնում: Ինչքան հնարավոր է հեռու է փախչում, միայն թե նրանց ձեռքը չընկնի: Բարձրանում է Սլդան, որտեղ արդեն անվտանգ է, բայց էլի կանգ չի առնում, մեկ էլ անտառի միջից մի ծանոթ ձայն կանչում է.

- Շամո՜... Վալերի՜...

Շամոն կանգ առավ. էս հո տղերքն են, ու անտառի կածանով, ուղիղ հանապարհով հետ է դառնում դեպի Լծավար:

Այդ նույն նրանց փախչելու պահին Սեւակն ու Նորիկը արագ-արագ վերախոտի տերեւներ են շաղ տվել մի հսկա կաղնու չորս կողմը, որ իբր ձիերը իրենց հետքը չգտնեն ու բարձրացել էին ծառը:

Ուղղաթիռը պտտվում ու վայրէջք է կատարում թմբի վրա, բացանում, բայց հանդյունը չի կտրվում: Ծառի հեռավորությունը բացատից 80 մետր է, ու տղաները տեսան, թե ինչպես ուղղաթիռի միջից կանաչ գույնի քողարկման զինվորական շորերով 4-5 հոգի, այն էլ զինված, դուրս եկան ու գնացին դեպի ծառին կապած ձիերը:

- Նորիկ, փախչենք Հունանավի ուղղությամբ, որ կարծեն թե ազերիներ ենք,- իջնում են, վազելուց հետ մի հայացք են ձգում ու տեսնում Առնոն զինվորական շորերով՝ ձիու կապը բռնած:

Սեւակի աչքը ընկավ Առնոյի ուսին գցած «Կալաշնիկով»-ին:

- Էդ բերե՞լ ես, - ջահել էր ու անհամբեր:

- Դրա ժամանակը չի,- սաստեց Առնոն: - Արագ, արագ...

Ռուս օդաչուն շտապեցնում էր: 15-20 արկղ էին իջեցրել, շատ ծանր, այնքան որ 3-4 հոգով մի կերպ էին գետնից բարձրացնում:

Մեկ կիլոմետրի վրա Հունանավն էր, Առնոն վայրէջքի համար ընտրել էր սահմանային տարածք, որ կասկածի տեղիք չտան. իբր ներքին գործերի դեսանտ է իջնում:

Ձիերը բեռնեցին ու շարժվեցին դեպի գյուղ: Ջորավոր ծառի տակ շունչ քաշեցին, արդեն ապահով էին: Գյուղերի հրամանատարներն էլ եկել էին դիմավորելու: Տղաներն ինչքան փորձում էին իմանալ, թե ոնց է հաջողացրել զինվորական ուղղաթիռով գենք բերել, Առնոն չպատմեց, գաղտնիք մնաց:

- է՜...հե՜...հե՜...հե՜յ...- Միջնավար կոչվող տեղանքում Առնոն կանգնեց ու կրակեց օդի մեջ: - Թող լեռները լսեն: Մեզ էլ պարտություն չկա... Էս լեզվով պիտի խոսենք նրանց հետ... - Հրամանատարը ոգեւորված էր, ու դեմքից, աչքերից, լայն ճակատից լույս էր ճառագում:

Շտաբում հենց բացեցին առաջին արկղը, Սեւակը վրա պրծավ ու մի «Կալաշնիկով» ճանկեց:

- Ցած դիր,- դիտմամբ ձայնը խստացնելով հրամայեց Առնոն, բայց տղայի հոգու հետ խաղում էր:

- Չէ, Առնո, իմն է... խոստացել ես... Որ վերցրել եմ սպանես էլ ցած չեմ դնելու,- ջահել, ավյունով լցված աչքերի մեջ եւ խնդրանք կար, եւ գինվորի հաստատակամություն, դարաբաղցու կողքահաստություն:

- Քոնն է, Սեւակ:

- Առնո, էսքանով քանի՞ գյուղ կվեցնենք:

- Սրանցով Քուռ ու Արաքսն էլ կարող ենք անցնել, Սեւակ, կտեսնես անցնելու ենք: Էս կռիվը մեր կռիվն է, էս անգամ հաղթելու ենք...

- Սրանք գործարանային նռնակներ են, շատ ավելի կատարելագործված, քան մեր ունեցածը,- հանում, տեղավորում ու բացատրություններ էր տալիս հրամանատարը:

- Սրանց մեջ «Ալազանի» երկու տիպի հրթիռներ են,- ասաց ու արկղերը չբացեց,- կայանքը բայց չկա, հետո է լինելու:

- Լիսագորը, Իրիչանը, Հունանավը,- սրանք մեզ համար արդեն մանր բաներ են, մենք ավելի մեծ գործերի ենք պատրաստվում,- Առնոն դասավորում ու խոսում էր:

Մի արկղի մեջ մետաղե սաղավարտներ ու բաճկոններ, ժամանակակից հեռադիտակներ կային:

- Սրանք ... Սրանք ինչի՞ համար են,- Սեւակը հիացմունքից չէր էլ իմանում, թե ինչ է հարցնում:

Մեծ գործերի համար,- կրկնեց,- Ադրբեջանը մեզ կռվի մեջ է քաշում... Էս անգամ պատասխան պիտի ստանան... Տասնապատիկ... Պատշտպանվելը թույլի, ծույլի, հիվանդի գործ է... Մենք պիտի ուժեղանանք, որ մեզ հետ հաշվի նստեն...

Առնո, քո արյունը սրանց արյունից չէ,- Սաքոն նկատի ուներ բերդակորցիներին:

Ցեղիս արյունն է,- հպարտությամբ պատասխանեց հրամանատարը:

Երեկոյան շտաբից Առնոն Սաքոյի ու Խեչոյի հետ իջան հայրական տուն, պայուսակները դրեցին գոմում: Թեյ խմեցին ու իջան առաջին հարկ: Մտան գոմ եւ կովի մսուրների տակը երկար ժամանակ փորում էին: Հայրը անհանգիստ գնում-գալիս էր, էլլադան, որ սովորություն ուներ ավելորդ հետաքրքրասիրություն ցուցաբերելու, հանգստացած էր ամուսնուն.

Գործ չունես: Նրանք իրենց գործը գիտեն:

Փոսի մեջ տեղավորեցին փամփուշտներ, մի ծեռքի գնդացիր, ավտոմատներ, բողարկեցին ու դուրս եկան:

Սնքողջ գիշեր Բերդաձորը չքնեց:

Խրմանլարի ձիերը գալիս էին մինչեւ եղցահողի տարածք, արածում: Ստեփանն ու Գագոն, որպես գողացած անասունների պատասխանատու, քշում են բերում: Ձիերը շատ էին պետք, եւ զենք տեղափոխելու, եւ հետո պահակակետերը գնալու համար: Առնոն տղաներին կանչում է գյուղ. հանձնարարում գնալ եղցահող, ձիերը բերել: Ձիերը մի կերպ տալիս բեռնատարները: Մի կատաղած ձի ցատկեց մեքենայից:

Դուք գնացեք, ձեր գործը չի: Ես կբերեմ,- գոչեց Շամոն, ցատկեց ձիու մեջքին, բռնեց բաշից (ձին սանձ չուներ) եւ թե ոնց են սլացել...մեքենայի առջեւից:

Հենց որ մայրուղուց թեքվեցին դեպի Մեծ Շեն, արդեն վտանգը հեռու էր:

Հինգ հատ ձին Հին Շենում է: Մի կատաղած սեւ ձի Սեւակը վերցրեց:

Շամո, մեկը քեզ,- Առնոյի «վարձատրությունն» էր տղայի հանդուգն արարքին:

Ես ձի ունեմ:

Ոչինչ, տար պահիր: Հետո կտեսնենք ինչ ենք անելու:

Բարսեղյան Սերգին ձի չուներ, մեկը տվեցին: Խեղճ մարդը չվայելեց: Մի քանի օր անց Թումասարում Սերգին ու Պավլուշան կեսօրվա ժամին կերան, թիկն տվեցին արեւի տակ: Հանկարծ կրակոց լսվեց ու

չորս ազերի շրջապատեցին: Գնդակը կպել է Սերգիի ոտքին: Երկուսի կոշիկները հանել տվեցին, ոտաբոբիկ ծեծելով քշեցին: Զաբուղով գետն անցնելիս Սերգին դժվարանում էր, ընկնում-բարձրանում էր: Ազերին բարձրացրեց կարաբինը, որ կրակի, ընկերը կանխեց.

- Դա մեզ շատ է պետք գալու...

Հենց գետի մեջտեղը հասան, ազերիներից մեկը մի ողորկ քար վերցրեց ու շրա՜խկ՝ Պավլուշայի մեջքին:

Լաչինում քրդուհին թեյ դրեց ծերունիների առջև.

- Չե՞ք ամաչում, սրանք էլ ինսան են, ես ի՞նչ եք արել,- մարդ եւ կին տաք ջրով, արաղով մաքրում են վերքերը, ցավ հանգստացնող դեղ տալիս: Սերգեյի ջերմությունը 3 օր չի իջնում: Քրդի տանը խնամում են պատանդներին:

Վեց օրից հետո տանում են փոխանակության: Հենց որ բարձունքից գյուղը երեւում է, Սերգիի արցունքները ուրախությունից թափվում են: Ազերին կարաբինի կոթով հարվածում է մեջքին.

- Էդ ի՞նչ աղվեսալաց է...

Եղիշի սպանությունից, Կանաչ Թալայից հետո արտակարգ դրության պարետը Եղցահողի թիվ 1 պահակակետի տեղում պահակություն է սահմանում, իբր գյուղը պաշտպանելու նպատակով:

- Մեր ձեռքերը կապեցին,- ասաց Հրաչիկը:

Պարետության զինվորները նախեւառաջ հետախուզում էին, տեղեկություններ հաղորդում շարժի, գենք-զինամթերքի, անցուդարձի մասին: Անձնագրային ռեժիմի ստուգումները դառնում են հաճախակի: Հանկարծ շրջապատում են ու մտնում:

Նոյեմբերի վերջին օրերից մեկն էր: Շուշիի ազգությամբ ռուս պարետը մտադրվում է եւ փորձում է տեսնել, թե գյուղում ինչ քանակությամբ զենք կա, ինչպիսին է զինվածությունը, ֆիդայիների պաշտպանական ռեակցիան:

... Լույսերը վառած բարձրանում է մայրուղուց գյուղ թեքվող ճանապարհով:

Տղաները մեքենան նկատել եւ դիտում էին ընթացքը: ՈւԱԶ-ը մի քիչ առաջանում է, լույսերը հանգցնում ու կանգնում: Նորից առաջանում է, նորից ... Տղաները բարձունքից պահանջում են կանգնել: Ոչ մի ձայն: Հաղորդում են շտաբ՝ Հրաչիկին: Հրաչիկը կարծելով, թե ազերիի մեքենա է, տղաներին հրահանգում է իջնել, մեքենան շրջանցել եւ կտրել փախուստի ճանապարհը, ապա ինքը ընդառաջ է գնում, 100 մետր մնացած ռուսերեն հարցնում է.

Ո՞վ եք:

Ոչ մի պատասխան:

Հարցը կրկնում է ադրբեջաներեն: Դարձյալ ձայն- ծպտուն չկա: Կոշիկը վախի զգացում չուներ, մականունը «Անվախ» էին դրել: Մի լոնի համազարկ է տալիս մեքենայի վրա: Դարձյալ ոչ մի ձայն: Տղաները տեսան, թե ինչպես երեք հոգի մեքենայից դուրս եկան ու ճողոպրելին մթության մեջ: Ջոկատի հրամանատարը մոտենում է, տեսնելով մարդնայի մեջ մարդ չկա, ընթացքի է գցում ու գլորում ձորը:

Չանցած կես ժամ Տասը Վերստից զանգում ու ներկայանում է ինքը Հրաչիի պարետը, եւ ասում, որ կորցրել է իր զինվորներին: Մեկ ժամ անց գալիս է, տղաների հետ փնտրում ու գտնում են խճուղու եզրին մոտ Խերխան լքված գյուղի անձավներից մի քիչ վերեւ գտնվող թելերի մեջ: Հենց որ լուսանում է, պարետը մտնում է գյուղ, կոլխոզի նախագահ Հովակիմյան Հենրիխի մոտ, պարզելու, թե ովքեր են նրան կրակողները: Տղաները անտեղյակ են ձեւանում, իբր ազերիներն են կրակել, պարետն էլ ո՞նց ասեր, որ ինքն է եղել մեքենայի մեջ: Տղաները տրակտորով մեքենան ձորից հանում են, հյուրընկալորեն ու սրտանց վերաբերմունք ցույց տալիս սարքում: Որպես «երախտագիտության» ժեստ, պարետը ուժեղացնում է հսկողությունը: Իսկ տղաները պահակակետի ավագ սպայի հետ կապի մեջ էին մտել, հյուրասիրում, խոսք էին քաշում, թե որ օրն է ստուգում լինելու, եւ զենքերը ուզում էին թաքցնել: Հայաստանից եկած ջոկատի տղաներին գյուղում հանում են:

Լարվածությունը ձորակում մեծանում է:

Առնոն գրեթե ամեն շաբաթ լինում է Եղցահողում:

Սուրանը բարձունք է, որտեղ պահակակետ կա, բայց այստեղից ոչխարները կարող են հեշտությամբ մտնել գյուղ: Բարձունքից 1,5 կմ հեռավորակ կողմի վրա ներքեւ անտառապատ լանջ է, անտառի հենց հարեւանությամբ ադրբեջանական Յշղոնես գյուղը, նախկին հայկական Աղվանոն: Անտառի միջով հնարավոր էր աննկատ հասնել Սուրան, որեւէ պահակակետ գրավել եւ անմիջապես դուրս գալ գյուղի վրա: Շտաբում Առնոն գծագիրը փռեց սեղանի վրա եւ տղաներին բացատրեց պաշտպանական երկրորդ գիծ ստեղծելու անհրաժեշտության մասին:

Տղե՛րք, բլինդաժ պիտի սարքենք: Տեղանքը շատ քարքարոտ է, թիակիկական մեծ ուժ է հարկավոր լինելու գործադրել, բայց ամենաարտարար տեղն է, պաշտպանության երկրորդ գծի համար տեսադաշտը սահմանված է: Տեսեք, նշված են գնդացրորդների եւ ականանետակիր-

ների տեղերը առանձին-առանձին: Բլինդաժի չափերը այնպես է հաշ-
վարկած, որ ազատ տեղաշարժվելու հնարավորություն լինի: Վերեւը
ծածկվելու է երկտակ գերաններով, ունենալու է հաստ հողածածկույթ:
Նախ նույնիսկ օդից չի նկատվելու, նկատվելու դեպքում էլ պայթեցնե-
լը անհնարին է: Տեղանքից 50 մետր ներքեւ գտնվող ծառաշարքը
հեռվից դիտողին թույլ չի տա նկատելու կառույցը: Նայեք, բլինդաժի
մուտքից խրամատը հասնում է մինչեւ ծառերի տակ:

Ինչպես միշտ տղաները ուշադիր լսում են: Առնոյի խոսքը առարկու-
թյան կամ քննարկման համար, ինչպես միշտ, սողանցք չթողեց:

- Հենց վաղը սկսում ենք: Կգաք բլունգներով ու երկաթե լինգերով:

Ցերեկով Լեւոնը, Սամվելը, մի քանի ջահել տղաներ Առնոյի հանձ-
նարարությամբ անտառից գերաններ են կտրում, քարշ տալով իջեց-
նում ներքեւ, բլինդաժի վերեւի մասը ծածկելու համար:

1990-ի նոյեմբեր ամիսն էր, ամսաթիվը 21: Ցրտերն արդեն ընկել
էին: Պոստում տղաները վազվզում, մեջք-մեջքի էին տալիս, որ
չսառչեն:

Խաչատրյան Էդիկը կեսօրից հետո ժամը 4-5-ին հրացանը հանձ-
նեց Պետրոսյան Վարդգեսին եւ տուն եկավ: Եղբոր հետ հացի նստե-
ցին, հետո Էդիկը գնաց գործի, իսկ Սամվելը պոստ բարձրացավ:

Թումասեռի պարտությունից հետո ազերիները կատաղած էին, ֆի-
դայիները հաղթանակով ոգեւորված, գյուղացիները վաղվա օրվա հա-
վատով լցված: Այդ օրը ուղղաթիռը ջոկատ էր իջեցրել, որը գլխավո-
րում էր Խաչատրյան Սամվելը, 25-30 հոգի կլինեին: Առնոն ու Սաքոն
տարան պահակակետ, բացատրեցին տեղանքը:

- Այստեղից պաշտպանելու եք գյուղը...

- Իսկ եթե ազերին կրակի՞:

- Հասկանալի է, պատասխանում եք:

Հերթափոխ եղավ, եւ տղաները իջան գյուղ հանգստանալու: Հազիվ
մեկ ժամ էր անցել, ժաննան անհանգստացած մտավ շտաբ.

- Տղերք, կրակոցներ են լսվում:

Առնոն Սաքոյին, Խեչոյին, Գագոյին, Արմոյին վերցրեց ու բարձրա-
ցավ դիրքերը: Նոր եկած տղաներից մեկը թփերի հետեւից խշշոց է լսել
մարդ կարծելով կրակահերթ է տվել: Էշ էր արածելիս եղել: Ազերիները
կարծելով, թե հայերը հարձակվել են, իրենք էլ զինված, բեռնատա-
մեքենաներով, ձիերով շարժվել են միանգամից երեք պահակակետերի
ուղղությամբ: Առնոյի փորձառու խումբը գնաց դեպի դիմադրությա-
թույլ թեւը, Սաքոն՝ դեպի Քումենքարի աջ կողմը, կարծելով, թե նորեկ-
ները լքել են պահակակետը, քանի որ այստեղից կրակոց չէր լսվում:

Սասունում եւ մութի մեջ նկատում է փոսի մեջ պահկված տղաներին,
որոնք վախից նույնիսկ չէին արձագանքել Սաքոյի կանչին:

Ես ձեր...- Սաքոն կատաղությունից բարձրացրեց ավտոմատը, հե-
տեւից խեչոն բռնեց:

Զաքարյան Վաղինակն ու Սամվելը կրակոցների ձայնի ուղղու-
թյամբ գնում են օգնության: Թփերի, մոշուտի հետեւում պահված գն-
դակիրը հինգ մետր հեռավորությունից ճարճատեց:

Սկսված փոխհրաձգությունը տեւեց ժամից ավելի: Ազերիները հետ
քաշվեցին, բայց զգացին, որ հայերի պաշտպանությունը թուլացել է:

Չորս ժամը մեկ հերթը փոխվում է: Երբ Սամվելը չիջավ, մայրը ան-
հանգստացավ: Էդիկը Արմիկի մեքենայով բարձրանում է Սուրան:
Միշերվա ժամը 11-ն անց է: Լապտերով փնտրում են քար ու թուփ: Պա-
հակակետից 30 մետր հեռավորության վրա բերանքսիվայր, մարմինը
մի տեղից գնդակածեծ, ընկած էր Սամվելը: Վաղինակը մեջքի վրա էր
գնդից մինչեւ գոտկատեղը գնդակներով խաչ սարքած: Դեմքն այլանդակել
էին: Հավանաբար, ճանաչել են, որ Հայաստանից եկած ֆիդայի է:

Գյուղի վրա գերեզմանային լռություն իջավ:

Սուրանում, նույն վայրում, որտեղ դարասկզբին ազգամիջյան
սրիվների ժամանակ հոր պապն էր զոհվել, սպանված ընկած էր նաեւ
տղան...

Ավագ եղբայրը գյուղ իջավ, նռնակները գրպանը դրեց, Առնոն հե-
տեւից գրկեց, ու Էդիկը հեկեկոցով փուլ եկավ հրամանատարի ուսին:

Գյուղը սգում էր: Գյուղը հիշեց, թե ինչպես 1918-ին Յազանց Թյու-
ղի դեպի գյուղ գոռացել է «ասեղը վերջացել է...»: Կարծես պատմու-
թյունը կրկնվում է: Միթե ճակատագրերն էլ են կրկնվում: Ու թպրտում է
գյուղը կատարվածի եւ հուշի, առասպելի եւ իրականության, ճակա-
տագրի գրված գրերի եւ անզոր ու հզոր դիմադրության միջեւ:

Լեռվի պատճառը կարծես թե էշի վրա կրակելն էր, բայց դա միայն
սոփեր էր:

Գյուղը սարսափի մեջ ընկավ.

Մենք քիչ ենք, իրենք՝ շատ...

Շրջապատված ենք...

Թշնամություն մի գցեք, կողք-կողքի պիտի ապրենք...

Մի հողի, մի ջրի ժողովուրդ ենք...

Որ նրանց չգրգռեք, մեզ վնաս չեն տա...

Դուք չգիտեք թուրքը ինչ բան է: Նայեք ու դաս առեք: Բոլորիս վեր-

ջը դա է լ ինելու, եթե թուլանանք, եթե չպատասխանենք: Կռիվ է, ամեն ինչ էլ լինելու է, մենք պիտի պատրաստ լինենք,- Առնոն շատ լավ գիտեր թե ինչ է բարոյալքումը, վախը: Գիտեր, որ չպիտի թույլ տա, որ հուսահատությունը պատի ժողովրդին: Գիտեր, որ հայր դեմ դիմաց կռվից չի վախենում, բայց սարսափում է, երբ թիկունքից են հարվածում, երբ ձեռքերը կապված են՝ թշնամունը արձակված:

Տղամարդիկ, սովորության համաձայն, բակում նստարաններին նստած ծխախոտի ծխի հետ բաց են թողնում դառը, տանջալից մտքերը: Կանանցից ոչ ոք չէր լքում սգատունը: Տարիքով կանայք սգում էին, իրարից սգի մեջ ձայն խնդրելով, իսկ պահ առ պահ կանանց ամբողջ խմբի հեկեկոցը լցվում էր ծորը... Սգում էին հերթով իրար մոտ, կողքկողքի դրված Սամվելիկի ու Վաղինակի համար, նրանց հեռացած, կյանքից ոչինչ չտեսած ջահել կյանքի համար:

- Մորդ աչքերը քոռանան, բալա ջան,- ծղրտում էր դարաբաղցի մայրը, թպրտալով, երկինքը պատռելով գլխավերեւից- գլխավերեւ անցնելով, երկինք հասնելով ու ցած իջնելով: Մեջքը փոքրթող, ծոցը լցված կրակը ո՞ւր տանի, տղաներին ու՞մ պահ տա... Մայրը երկու ջահելի համար հավասար սգում ու արցունք էր թափում:

Ուղղաթիռի հոնդոց լսվեց, ու տղամարդկանց հայացքները դեպի երկինք դարձան: Վերին խութից «օդանավակայանից» իջնում է խումբը, եւ առջեւից ծանր-ծանր քայլ է գցում Վազգեն Սարգսյանը:

Կանայք հասկացան, որ եկել են... Վաղինակի հետեւից: Իրար քաշվեցին, տեղ բաց արին, ու նման դեպքերում կանանց հեկեկոցն ու սուգը մի նոր ուժով է երկինք բարձրանում: Կանայք տեսան տղամարդու արցունքները: Կանայք լսեցին շատ ցածր, գրեթե անլսելի, մեկուսի միայն իր համար ասված խոսքերը.

- Ժողովուրդ, հերոս ժողովուրդ... կդիմանա՞ք մինչեւ վերջ, թե՞...

Ժողովուրդը, կանայք, տղամարդիկ, կիսվեցին, կեսը բարձրացավ խութ հրաժեշտ տալու: Հուշարձանի մոտ ելույթ ունեցավ Վազգեն Սարգսյանը.

- Հաղթանակն առանց կորստի չի լինում... Պի՛նդ կացեք, ժողովուրդ...

Ապա Վազգեն Սարգսյանը մոտեցավ Անդրանիկին ու Առնոյին.

- Վաղինակի արյունոտ շորերը այս բարձունքի վրա, հուշարձանի մոտ կթաղեք:

Ուղղաթիռը օդ բարձրացավ: Երկու օր առաջ եկած տղաներից մի մեծ խումբ խցկվել էր ուղղաթիռ:

- Վախկոտներ...- Սաքոն հայհոյեց:

Նորից փոխարինելու եկավ Նոր Հաճնի ջոկատը Թաթլյան Հարութի ղեկավարությամբ, որը նոր էր գնացել:

Բերդաձորը իր չորս գյուղերով ընդառաջ էր գնում ճակատագրին...

Շտաբում իրենց ամենօրյա, սովորական գործին են, գենքերը քանդում, մաքրում, հավաքում են, Սաքոյի եւ Խեչոյի մշտական ներկայությունից բացի, գյուղացիներից գալիս նստում են, մի բանով օգնում են, կամ պարզապես տղաների զրույցն են լսում:

- Մենք միշտ թույլ ենք գտնվել դրա համար ջարդել են: Իրենք կին, երեխա, ծեր չեն խնայել, ոչնչացրել են, իսկ հայը թշնամու կնոջ ու երեխայի վրա ձեռք չի բարձրացրել,- Առնոն պատմում է, թե ինչպես եղցահողցի Ղոնաղանց Սահակը շրջակա թուրքական գյուղերի ահուսարսափն է եղել, որ Զարսլուից մի թուրք հայերին միշտ նեղել է: Սահակը հետեւում է նրան, դարանակալում է, որ ոչնչացնի: Թուրքը անցնում էր ձիակով, իր գերադաստանի հետ: Սահակը տեսնելով կանանց ու երեխաներին, սիրտը խղճմտանք է մտնում, թողնում-հեռանում է, հետո զրույց է ուղարկում, թե դու էսինչ օրը, էսինչ տեղը քո գերդաստանով, կանանցով ու երեխաներով, էսինչ ժամին անցնում էիր: Նշում էր նույնիսկ կանանցից մեկի գիշերը վրանից դուրս գալը ու... ներս մտնելը: Գրում է, որ խնայել է, բայց թե երկրորդ անգամ էլ պատահի՝ խնայող չի լինելու: Թուրքը ոչխարներ, նվերներ է ուղարկում հային, ներողություն է խնդրում եւ խոստանում այլեւս ոչ մի հայի վնաս չտալ եւ իր խոստումը պահում է: Դեպքը պատահել է ընդամենը 80-90 տարի առաջ: Իսկ 1600 տարի առաջ պարսից Շապուհ արքան ասպատակում է հայոց երկիրը, բոլոր չափահաս տղամարդկանց փղերին ոտնակոխ անել է տալիս, կանանց, այդ թվում հայոց թագուհի Փառանձեմին անարգում, ցից է հանում: Հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը գերի է վերցնում Շապուհի կանանոցը եւ անվնաս հետ է վերադարձնում. Շապուհը գավաթի վրա նկարել է տալիս Մուշեղի պատկերը ձերունկ ձիու վրա եւ ուրախությունների ժամանակ գավաթը բարձրացնելով ասում է. ճերմակաձին թող գինի խմի:

- Տեսեք, քանի դար հետո Բերդաձորում մեկ ուրիշ հայ կրկնել է նույն պատմությունը, նույն մեծահոգությունը: Որպես երախտագիտություն ընդամենը ճերմակաձին թող գինի խմի:

Չի բառի վրա, ենոքը, որ հանդից հոգնած եկել ննջել էր, վեր թռավ.

Ի՞նչ ձի, Առնո, ո՞ւմ ձին...

- Դու քնիր, քո ձիու մասին չէ խոսքը: - Սաքոն ու Խեչոն ծիծաղից ոռնացել էին:

-Մենք պիտի փոխենք պատմության ընթացքը: Մեզ կոտորել են 1898-ին, 1908-ին, 1915-ին, 1918-ին, 1920-ին...

- Բա 1988-ի Սումգայի՞թը,- ռեպլիկ տվեց Սեւակը:

- Այս անգամ միջազգային հանրությունը մեր կողմը կլինի,- վերջին մտքին, որ ասաց, ինքն էլ չէր հավատում, ասաց ու անմիջապես հիշեց Նժդեհյան տողերը. «Միջազգային բարոյակա՞նը: Բայց երբվանի՞ց է, որ գոյություն ունի դա»:

- Թուրքը վախկոտ է: Արյունից վախենում է: Ով վախեցավ կռիվը տանուլ կտա: Սրանց աչքը պիտի վախեցնենք: Այս անգամ հայը կամ պիտի հաղթի, կամ պիտի չլինի: Տղամարդը ծնվել է կռվելու, իր օջախը, իր կինն ու երեխաներին պաշտպանելու համար:

Առնոն դաստիարակվել է գրքերով, կարդացել է Նժդեհին եւ շատ լավ գիտեր, թե վիատությունը, ահն ու սարսափը ինչ չարիքներ կարող են բերել: Տեսել է, թե ինչպես Շարժման հենց սկզբից քրեական ու վարչական տույժի գործեր ստեղծելով, պատժելով, սպանելով նպատակ էին հետապնդում ոգեթափ անել, Շարժման ոգին կոտրել, եւ պատահական չէր, որ բանտից բաց էին թողնում «հանձնարարականներով» կգնաս... կպատմես... ազգուտակդ կվերցնես՝ Ղարաբաղից դուրս կգաս... Ռազմավարությունը այլ բան չէ, եթե ոչ ահավարություն, հաղթանակը օրինաչափորեն թեքվում է նրա կողմը, ում հաջողվում է ավելի երկար ժամանակ մահվան սարսափի տակ պահել իր հակառակորդին՝ ճգնելով խորտակել նրա դիմադրական ոգին: Նժդեհի խոսքն է: Առնոն շատ լավ է հասկանում, որ ամենազորավոր զենքը ոգին է, եւ թե՛ իր անձնական օրինակով, թե՛ քարոզներով, թե՛ հայոց պատմության հաղթական դրվագներին անդրադառնալով, միշտ ձգտում էր ոգեղեն մթնոլորտ ստեղծել:

- Բա բանա՞կը... Բանակը մեզ խանգարում է,- ասաց Սեւակը:

- Բանակի հետ գործ չունենք: Վաղ թե ուշ պիտի հեռանան, հենց հեռանան, մենք սրանց ցույց կտանք...

Վերին Խութի պոստից հեռակապով հայտնեցին, թե Եղցահողից ներքեւ, դեպի Լաչին ճանապարհի վրա անհանգիստ է, մեքենաներ են գնում-գալիս: Առնոն մի քանի տղաների վերցրեց ու արագ իջավ մայրուղի:

- Բեռնատարը հետ շրջեք դեպի գյուղ ու սպասեք:- Ենոքը մինչեւ բեռանը կբացեր կամ կհետեւեր Առնոյին, նա արդեն առաջ էր գնացել՝ «Շանքը» ուսին դրած: Ուժեղ կրակոց, ծուխ, փոշի: Ազերիները նստեցին մեքենան ու փախան: Ինքը արագ հետ վազեց, նստեց մեքենան:

Երբ հասան շտաբ, գիշերվա ժամը 12-ը նոր էր խփել:

Գնա՝ ձիդ վերցրու արի,- ասաց Ենոքին:

Անտառի միջով գնում են դեպի Լիսագոր: Առջեւից գնում է Առնոն: Աչքերը փակ գիտեր ամեն կածան, ամեն ծառ ու թուփ: Անտառից դուրս գալուն, հասան բարձունքին: Թուղթ ու մատիտ հանեց ու ինչ-որ գծեր էր քաշում, ինչ-որ նշաններ անում: Ենոքը նայում էր, բայց արված ծրագրերից խելքը բան չէր կտրում, հարցներ էլ, գիտեր, որ չի պատասխանելու: Առնոն չէր սիրում, որ ավելորդ հարցեր են տալիս, խառնվում են իր գործերին: Երբ հետ էին դառնում կեսգիշերից ահագին անցել էր:

Ենոք, սա մեր վերջին կռիվն է լինելու, հաղթելու ենք...

Ե՞րբ:

Հաղթելու ենք: Ես չտեսնեմ էլ, իմ երեխաները կտեսնեն,- ապա չմոռացավ ավելորդ անգամ զգուշացնել,- գիտե՞ս, չէ, հարցնողներին ի՞նչ ես ասելու:

Գիտեմ:

Առնոն գիշերները, շատ անգամ մենակ, ժամերով անհետանում էր: Գոլորշել չուներ, ոտքով կամ ձիով գնում-հասնում էր մինչեւ Լաչին, Գորիս, մինչեւ Շուշի ու Ստեփանակերտ, տեղանքը մանրակրկիտ ուսումնասիրում, նշումներ անում: Հարցնողներին պատասխանում է, թե հանդիպման գյուղում կամ Ստեփանակերտում է եղել:

1990 թվականի ձմռանը առատ ձյուն էր տեղացել: Եղցահողի Կալին պրեսակակետից տղաները նկատում, զանգում են Հրաչիկին, թե Բիսիրգյան տեղամասի անասնապահական ֆերմայի խոտի դեզերը ոնց որ վառվում են, կրակ է բարձրանում: Քանի որ ամբողջ ձորակում կատարվող գործողությունները վերահսկվում էր շտաբի պետի Առնոյի կողմից, Եղցահողի ջոկատի հրամանատարը զանգում-տեղեկացնում է:

Գալիս եմ,- եղավ պատասխանը:

Մարդիկ հրացանները վերցրած վազեցին, բայց ազերիները վառել ու վախել էին: Ֆերմայում կրակած-սատկացրած ընկած էին տասնյակ խոզեր: Ազերիները վառել էին խոտի դեզերը ձմեռվա ամբողջ պաշարը: Որոշեցին պատասխանը տալ:

Հենց գիշերը խորացավ, մութը թանձրացավ, Ենոքի մեքենայով Առնոն, Հրաչիկը, Վիլենը, Զավրիկը, Սաքոն ու Խեչոն շարժվում են դեպի Լաչին տանող ճանապարհի վրա կառուցված ճաշարան-տաղավարը: Վանոն խմբին հեռու կանգնեցրեց, ինքը առաջ գնաց՝ նռնականետը ուսին դրած: Խփեց: Տաղավարը ցրիվ եկավ, փայտի կտորները օդ բարձրացան, կրակի լեզվակները ճեղքեցին մութը: Տղաներն արագ հետ

քաշվեցին: Եղցահողի տակ գտնվող խորտկարանի մոտ սպասող «Բելառուս» տրակտորով Հրաչիկն ու Վիլենը բարձրացան գյուղ, Առնոն իր տղաների հետ բեռնատարով հետ դառան Հին Շեն:

Հարեւան գյուղերի ազերիները այնքան էին լկտիացել, որ նախիրը բերում արածացնում էին հայկական գյուղերի արոտավայրերում: Հրաչիկը տղաների հետ դարանակալել էին: Հովիվը հենց տեսավ մոտեցող զինված տղաներին, թողեց ու փախավ: Տղաները նախիրը քշեցին գյուղ:

Այդ օրը ուղղաթիռ պիտի գար ու հյուրասիրության համար մի ցուլ պիտի մորթեին: Գյուղի մսագործը ֆիզիկայի ու մաթեմատիկայի ուսուցիչ Առստամյան Նապոլեոնն էր: Հրաչիկը հետեւից մարդ ուղարկեց, չէր ուզում գալ, բայց հրամանատարի խոսքից ո՞նց դուրս գար: Ստիպված եղավ գալ՝ ոնց որ ոչխարին սպանդանոց տանեին: Տղաներն արդեն ցուլի ոտքերը կապել էին: Նապոլեոնը բարձրացրեց սուրը, աչքերը երկնքին հառեց.

- Տեր Աստված, դու քո բարձրությունից ամեն ինչ տեսնում ես, ես հանցագործ չեմ, Հրաչիկն է ստիպում,- ասաց ու շրախկ՝ սուրը իջեցրեց:

Տղաները մի ամբողջ ամիս նմանակում ու ծիծաղում էին:

- Իմ տունը հարամ ապրանք չպիտի մտնի,- ասացին շատերը ու մսից հրաժարվեցին:

- Նրանց տարածը հալալ է, մեր բերածը՝ հարա՞մ,- փորձում էր համոզել Հրաչիկը: -Մենք միայն նրանց պատասխանն ենք տալիս: -Ուստիպում է միսը վերցնել, որպեսզի հետո իրար «չծախեն»:

Նախիրի հետ մի քանի այծ էլ էին քշել-բերել: Կարենը գոռով մի այծ է տանում՝ խառնում իր քեռու՝ Մուշեղի այծերի հոտին: Մի քանի օր հետո Մուշեղը այծը բերում է շտաբի բակ.

- Տունս հարամ ապրանք է մտել, կաթը եռացել-թափվել է, վերցրեք, ինչ ուզում եք արեք, ինձ պետք չէ,- թոնթորաց ու գնաց:

-Կնոջդ անփութությունը մեր վզի՞ն փաթաթեցիր, ուշադիր լիներ՝ չեռար,- ետեւից կոպիտ շարտեց Հրաչիկը, իսկ տղաներն արդեն ծիծաղից թուլացել էին:

Հարձակումները օր-օրի շատանում էին:

Ստեփանակերտից ավտոբուսը գյուղ է գալիս: Լիսագորի մոտ քարկոծում են, հրացաններից կրակում: Ավտոբուսը կանգնեց: Ջինվորները,

որ ուղեկցում էին, չկրակեցին: Հրաչիկը կատաղած իջավ ու առաջացավ: Ազերիները զարմացան, բայց իրենք էլ ընդառաջ եկան:

- Կռիվ ունեք, ազնվորեն արեք: Տղամարդու պես՝ իրար հետ կռվենք: Ավտոբուսում կանայք ու երեխաներ են...

- Եթե կարող եք՝ դուք էլ արեք,- լկտի պատասխանեց մեկը:

- Պատասխանը ստանալու եք, լավ հիշեք:

- Եթե կարողանաք՝ կտաք,- արհամարհանքով նետեց ազերին: Հրաչիկը անպատասխան թողեց ու գոռաց հայ վարորդի վրա.

- Քշիր մեքենան:

Ավտոբուսը հասավ Տաքը Վերստ գյուղը, որտեղ կանգնած էր Լիսագորի ավտոբուսը: Հրաչիկը մեքենան կանգնեցնել տվեց ու դուրս եկավ: Խաղաղության կոչով դիմեց ազերի վարորդին.

- Մենք էլ, դուք էլ անցնում ենք նույն ճանապարհով: Եկեք հանգիստ անցնենք, իրար վնաս չտանք:

- Իբր կարող եք՝ վնաս չե՞ք տալիս,- լկտի պատասխանեց վարորդը:

Հենց հասան եղցահող, Հրաչիկը տղաներին հավաքեց.

- Թույլին միշտ հարվածում են: Անպատասխան չպիտի մնան...

Տղաները ծանոթ էին Հրաչիկի կտրուկ որոշումներ ընդունելու բնավորությանը: Նախօրոք ուժեղացրեց պահակակետերի պաշտպանությունը, ինքը էջմիածնից եկած տղաներին վերցրած իջավ: Դարանակալում են մայրուղու վրա: Գիտեին, որ լկտի պատասխան տվող երկրորդ մեքենայի վարորդը, որ Լիսագորից Լաչին է գնում, երեկոյան կողմ հետ է դառնալու:

Տղաները թաքնվեցին մայրուղուց 20 մ հեռավորության վրա՝ թփերի մեջտեղում: Վարորդը նկատեց ու կանգնեցրեց մեքենան: Տղաները կրակում են: Նպատակը՝ ահաբեկելն ու պատասխան տալն էր, ոչ թե վնաս տալը: Մեքենան փախավ:

Նման դեպքերից հետո անձնագրային ռեժիմի ստուգումները շատանում եւ ավելի ու ավելի կոպիտ բնույթ էին ստանում:

1990 թվականի աշունն էր, նոյեմբերը կիսվել էր: Թիվ 1 պահակակետից տեսան, որ Ղուրուջուղի կողմում անտառները հրդեհված են: Սակայն մի լանջը ազերիներինն էր, մյուսը՝ եղցահողինը:

- Եթե չգնանք հանգցնելու, կկարծեն թե վախենում ենք,- գյուղացիների տաք ու իրարամերժ խոսակցությունը եզրափակեց Հրաչիկը:

Տղաների մի մասը գնացին հսկելու ճանապարհը, որով ազերիները կարող էին հարձակվել, իսկ գյուղի տղամարդիկ գնացին կրակը

հանգցնելու: Ազերիները հեռվից նայում էին, թե ոնց են կրակը հանգցնում, բայց չմոտեցան:

- Այ թե մի մոտենային...- ափսոսանքով ասաց Հրաչիկը:

Հրաչիկը միշտ գաղտնի գնում էր Հին Շենից զենք ստանալու ու այնտեղից վերադառնում էր ոգեւորված: Տեսել էր Առնոյի սարքած հրանոթը ու նույնի նմանությամբ փորձում էր ինչ-որ բան սարքել: Ինքը ցույց էր տալիս, խառատի գործը կատարում էր զոլաքարցի Զավենը: Վերցնում են հաստ պատերով խողովակ, հետեւի մասը փակում են ու մի անցք են թողնում: Միջնադարյան հրանոթի օրինակով մի կողմից լցնում են վառոդը, տոփանում: Երբ հրանոթը պատրաստ էր, բարձում են տրակտորը, տանում գյուղից դուրս Բլասանց տափը:

- Բոլորդ հեռացեք, չի իմացվի ինչ կլինի,- Հրաչիկի հրահանգով տղաները 100 մետր հեռանում են: Ինքը պատրույգը վառում է ու վազում դեպի տղաները:

Սարը դղրդաց: Փորձարկումը հաջող էր անցել: Երբ մոտեցան, տեսան, որ հրանոթը անվնաս է մնացել:

Դղրդյունը բռնել էր ողջ ձորակը, եւ հարեւան գյուղերին սարսափ էր տիրել:

- Հայերը հզոր զենք են ստացել,- հաղորդեցին Շուշի: Հաջորդ օրը Շուշիի արտակարգ դրության պարետը մտնում է գյուղ՝ խուզարկության: Հրաչիկը գիտեր, որ նման դեպքերում գալու են ստուգեն, հրանոթը տարել է ֆերմա, որը գյուղից 3կմ հեռավորության վրա է գտնվում: թաքցրել էր սիլոսի փոսում եւ վրան խոտ լցրել: Պարետը տղամարդկանց հավաքեց դպրոցի բակում հարցաքննության, իսկ խումբը խուզարկում էր տները, բակերը, խոտի դեզերը:

- Ուժեղ դղրդոց է լսվել,- ասաց պարետը:

- Ի՞նչ դղրդոց, ի՞նչ բան... ձեզ խաբել են. ընկեր պետ:

- Նոր զենք եք ստացել, խոստովանեք, այլապես...

- Ո՞ւր է թե ստանայի՞նք... -չքմեղացան տղամարդիկ:

Ստուգողների ուշադրությունը շեղելու համար մի ձեւ էլ էին մտածել՝ միշտ մի ոչ պիտանի զենք այնպես էին թաքցնում, որ սրանք մի զենք գտնելով բավարարվեն, հայտարարեն, թե հայերը գրոհայիններ են՝ զենք ունեն:

Տաք աշնանային օր էր: Կոլխոզի անասունները նոր դուրս եկած կանաչ խոտը կուշտ արածեցին: Հովիվներ Երեմյան Արտեմն ու Բախշյան Ալյոշը հաճելի ջերմությունը եւ վայելում էին, եւ նախիրը Դաշտակոյտ տարածքում արածացնում: Մինչեւ մութը վրա հասնելը նախիրը քշեցին ֆերմա, կապեցին:

Շուրջը խաղաղ ու հանգիստ էր:

- Մի ժամով իջնում ենք գյուղ՝ բաղնիք անելու,- ասացին ֆիդայիները:

Սեկ էլ դուռը բացվեց՝ 7-8 հոգի ներս լցվեցին: Ալյոշան հետ էլ չի նայում, կարծում է՝ Արտեմն է ներս ու դուրս անում: Կացնի ուժեղ հարվածից ծեռքը կախվում է, իսկ Արտեմը օդում բռնել էր ազերիի ավտոմատը: Արտեմի գլխին հարվածներ են տալիս ու ասում.

- Բաց թող, քեզ սպանելու չենք եկել: Անասունն ենք տանում:

Դռան մոտ Արտեմը նորից դիմադրում է, ոտքերը դռան շեմին դեմ տալիս, որ չտանեն: Իսկ Ալյոշը ոչ կարող էր, ոչ էլ իմաստ ուներ դիմադրելը:

Ազերիները վիճում են: Մեկն ասում է սրանց բաց թողնենք, տավարը քշենք, մյուսը թե՝ չէ, աղմուկ են բարձրացնելու: Նախիրը եւ հովիվները քշում-հասնում են Ծակ Քարի գլուխը:

- Մեծ մարդիկ են, տանենք ինչ անենք, էստեղից բաց թողնենք գնան, մեկ է, արդեն ուշ է չեն կարող մեզ վնաս տալ:

- Սպանենք՝ գլորենք ձորը,- ազերիի դաժան ձայնից Ալյոշի սիրտը ոտքերի տակ ընկավ:

- Իրենք էլ Լաչին-Շուշի ճանապարհը կփակեն, գործ չունենք...

- Իսկ եթե մեզ արդեն հետեւում են ու հասնե՞ն...

Կսպանենք սրանց էլ, եկողներին էլ,- նույն դաժան ձայնն էր:

Ազերիների խոսակցությունից Ալյոշը ջոկեց, որ մի ամբողջ շաբաթ հետեւել են, թե նախիրը որտեղ են արածացնում, հերթը ինչպես է փոխվում, պատմեցին, թե ինչպես մի հերթափոխի ժամանակ երկու տավարածները ավտոմատները կախել են ծառից խորոված արել, իրենք ալյանելու մտադրություն չեն ունեցել, դրա համար չեն մոտեցել: Կրանց միայն միս էր պետք:

Ինչ որ ազերիները քշում են նախիրը, Լիսագորից էլեկտրական լույսերը անջատում են, որ ապահովեն գողերի վերադարձը: Կեսօրն անց էլ մառախուղը պատում է դաշտ ու անտառ ստեղծելով լրացուցիչ բարենպաստ պայմաններ գողության համար: Մի խոսքով Ալյոշը հասկացավ, որ ամեն ինչ կատարվել է նախօրոք ծրագրված ձեւով:

Երբ հերթափոխը բարձրացավ օժանդակ 4-րդ պահակակետը, տեսան՝ մի քանի անասուն ցաքուցրիվ, մնան՝ ֆերմա տեսան կատարվածը, ապա տեղեկացրին՝ շտաբ Հրաչիկին, Հրաչիկն էլ Հին Շեն հասցին:

Եղցահողի ջոկատի հրամանատարի հրահանգով մի քանի հոգի կարաբինով ու ավտոմատներով մնում են ֆերմայում, որպեսզի կապը գյուղի հետ պահպանվի, իրենք երկու խմբի բաժանված՝ մեկը շարժվում է դեպի Կանաչ Թալա, մյուսը՝ որի մեջ Հրաչիկն է, Կարոն, Կարենը, Նորիկը, գնում են դեպի ազերական Շռլան գյուղը: Նույն պահին Առնոն տագնապի ազդանշան էր հնչեցրել: Հին Շեն գյուղի յուրաքանչյուր թաղ ուներ իր խմբապետը: Չորս խմբապետներն ազդանշան ստանալով ուժեղացնում են պաշտպանական կետերի հսկողությունը: Առնոն ինքն է ընտրում տղաներին Ստեփանին, Սաքոյին, Խեչոյին, Արմիկին, Սեւակին, Լեւոնին, Գագոյին, Զառուց Մանվելին, Ենոքին, Կարենին, Մեծ Շենի ջոկատից Հարությունյան Գագոյին:

- Կռվելու ենք, տղերք,- ասաց Առնոն, մտավ փոստի բաժանմունք, միացնել տվեց Լիսագորը: - Եթե մինչեւ 15 րոպեն եղցահողցի երկու անասնապահներին անասուններով հետ չվերադարձնեք, պատասխանը ստանալու եք:

- Հիմա կպարզենք,-եղավ պատասխանը:

Առնոն նույն պահին կապվում է Ստեփանակերտի ղեկավարության հետ, հայտնում, որ վերջնագիր է ներկայացրել:

15 րոպեն անցնում է, ոչ մի պատասխան: Խումբը բարձրանում է Խառատ սարը: Այստեղից Կանաչ Թալան պահում են կրակի տակ:

- Գյուղի մեջ մի խփեք, այլ՝ չորս կողմը: - Առնոն խմբի հետ մի տարրեց մարդու էլ էր տարել: Տղաներին եւ Կանաչ Թալայի միջեւ տարածությունը օդով 500 մետր է, ու գիշերվա մեջ ձայները հստակ հասնում են իրար:

- Է՜ հե՜յ... անասունը տարել եք, հետ տվեք,- գոռում է Սերգեյը:

- Մենք չենք տարել է՜, մենք չենք տարել... - գոռում են ազերիները:

-Է՜ հե՜ հե՜յ... հետքերը բերում են ձեր գյուղը: Էդտեղով են տարել...

- Մեզ ինչ: Մենք չենք տարել:

Տղաները կրակում են վախեցնելու նպատակով:

- Դուք դեռ չգիտեք՝ ձեզ ինչ է սպասվում,- որպես սպառնալիք հնչեց ադրբեջանցու մի ձայն, ու կարաբինից արձակված գնդակը ընկավ տղաների կողքին:

Առնոյի հրամանով 5 րոպե գյուղը պահում են կրակի տակ:

Լռություն:

- Զանգել ենք Շուշի, մի քանի րոպեից պատասխան կտանք:

Կես ժամ անց Կանաչ Թալայից գոռում են.

- Ձեր մարդիկ ողջ են: Հետ են տալու:

Եվ պարետատնից, եւ ազերիները հասկացել էին պահի լրջությունը:

Տղաները հետ դարձան Մեծ Շեն: Ռուս սպան, որ եկել էր բանակցելու, դանաչեց Սաքոյին.

Դու դեռ այստե՞ղ ես:

Այստեղ էլ կմնամ, մինչեւ ...- պատասխանեց Սաքոն:

Ապրես, մուժիկ,- սպան իբր գովեստով թփթփացրեց տղայի ուսին:

Այս պահին Հրաչիկի խումբը հասել էր մի բարձունքի: Կրակում են գյուղի մեջ ու կանչում են.

Ալյո՜շ... հե՜...հե՜...հե՜... Ալյոշ...

Արտե՜մ... հե՜...հե՜...հե՜... Արտեմ...

Նորից ու նորից կանչում եւ համակ լսողություն դառած սպասում են:

Սուս, տղերք, ականջիս ձեն հասավ,- ասաց Կարոն:

Երկու բարձր քարաժայռերի արանքից վախվորած մի ձայն արձագանքեց.

Էստեղ եմ:

Կանչելով, անտառի մեջ ակնակիր մութի միջով առաջանում են:

Օ՞ֆ, ձեռք չտաք ինձ, ցավում է ... - Ալյոշան ուսը փշրած, ձեռքը կոխ, դեմքը ծեծից արյունոտ, նստել էր կածանի վրա:

- Անիծվածները քացով ու ավտոմատի կոթով էնքան են տվել... -Հովվի ձայնը հազիվ է դուրս գալիս:

Մի քիչ հեռու, ժայռի տակ ընկած էր մյուս հովիվը: Արտեմը քանի որ դիմադրել էր, սոսկալի ծեծ էր կերել, եւ արյունաշաղախ ընկած էր գետնին, քայլել չէր կարողանում:

Այս դեպքից հետո մի առ ժամանակ լարված ու տագնապալից օրեր էին, եւ գյուղացիները վախենում էին անասունը հանդ տանել: Ինքը կուչիկն էր օրերով տանում, հսկում, մինչեւ մարդիկ ուշքի գային, նրանց հավաքեին: Ազերիները Հրաչիկի անունից վախ էին զգում:

Հայերից քշած նախիրը հետ չտվեցին, եւ ԲԻՀ-ի խորհրդում որոշում են հարձակվել Հունանավի վրա:

Հարձակվելու ենք, որ իմանան ով ենք,- գրասենյակում Գրիշային ելույթություն հայտնեց Առնոն:

Ո՞նց թե,- նախագահը ոտ ու ձեռ ընկավ: -Բա որ Լաչինն էլ մեզ վրա հարձակվի՞... Ես համաձայն չեմ:

Համաձայն ես համաձայն չես, որոշել ենք, գնալու ենք,- ասաց ու դուրս եկավ:

Գրիշան գրասենյակ կանչեց Միքայելին:
- Կանչիր էդ գժին:
Առնոն գալիս է:
- Այ գիժ շան որդի, էդ ի՞նչ եք որոշել:
Առնոն կրկնեց:
- Դաշնակ շան տղա, եթե փորձես, ինքս զանգելու եմ Շուշի, հայտնեմ,- տոնը խիստ էր, անհողդողդ, որդին լավ էր ճանաչում հորը, եւ մտադրությունից ետ կանգնեց:

1990 թվականի նոյեմբերի 24-ն էր: Ավտոբուսը Բերդաձորից գնում էր Ստեփանակերտ: Տասը Վերստում զինվորները ստուգում են, իսկ Շուշիի մատույցներում 50-60 օմօնական շրջապատում են, խուզարկությունը սկսվում է: Ստեփանակերտից եկած Դանիելյան Արարատի պարկի մեջ թաքցրած ատոմատը հայտնաբերվում է: Իգոր Մուրադյանը գլխարկը իջեցրել էր աչքերին ու զարմանալի հանգստությամբ ապասում էր: Անձնագիրը ստուգեցին ու առաջ անցան: Կողքին նստած Նապոլեոնը աչքի պոչով նայեց ու կարդաց ուրիշ անուն-ազգանուն: Ավտոբուսը քշում են Շուշի: Տղամարդկանց եւ կանանց ու երեխաներին առանձնացնում են: Խուզարկում են մեկ առ մեկ, մանրամասնությամբ, տղամարդկանց՝ մի քանի տղամարդիկ, կանանց՝ մի քանի կին:
-Կանանց ու երեխաներին բաց կթողնենք, տղամարդկանց կգնդակահարենք,- ասաց մի օմօնական:
Կանայք վայնասուն բարձրացրին:
- Չեննե՛ր դ, դանջը դ...- գոռաց մեկը, եւ կանայք սկսվեցին:
Ավտոբուսի նստատեղերը մեկ առ մեկ պոկեցին: Դանակը քաշում են կարտոֆիլի, խնձորի ու սերկեւիլի պարկերը պատռում ու թափում գետնին, իբր զենք էին փնտրում: Դեղորայքի մի փոքրիկ արկղիկ եւ 3 շրջանակ մեղր անմիջապես անհետացրին: Ում աչքը ինչ տեսնում էր, թալանում էին:
- Եղցահողից ո՞վ կա, թող առաջ գա,- հրամայեց մեկը ռուսերեն:
7-8 հոգի Եղցահողից էին, բայց հասկանալի է, ոչ մեկը տեղից չշարժվեց:
- Հին Շենից ո՞վ կա, թող դուրս գա:
12 տղամարդ եւ 9 կին կային, ոչ ոք ձայն չհանեց:
- Պարետի մեքենայի վրա 32 գնդակ եք արձակել,-գոռաց ավագ սպան,- բա ո՞վ է արել: Դե նստեք մեքենաները:

Ասրդիկ նստեցին ու կպան իրար, կարծում են, թե տանում են սպանելու: Ռուս ավագ սպան կանգնեց ավտոբուսի ոտնակին:
Իջեցրեք գլուխները դ,- ասաց սպան, ապա գոռում էր երկու կողմից սարսափած շրջապատած ամբոխի վրա, որ արդեն քարեր էին շպրտում.
Ճանապարհ տվեք... Ճանապարհ տվեք...
Պարետատան զինվորական մեքենան ուղեկցում է:
Երբ Ստեփանակերտում իջան, Նապոլեոն Պետրոսյանը եւ կանայք, որ դաղման էին գնում, մի պահ շփոթված կանգնեցին. վախից մոռացել էին, թե ինչ նպատակով էին քաղաք եկել:
Ուղիղ մեկ ամիս Բերդաձորի ճանապարհը փակ էր, եւ ոչ մի երթեւեկություն չկար:

ՀԱՅՐԵՆԻՔՆ ԱՅՆ Է, ՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ՊԻՏԻ ՏԱՍ, ՆՈՒՅՆԻՍԿ՝ ԿՅԱՆՔԴ
Ներքին հակամարտություններ

Հայաստանից եկած ջոկատին շտաբում Առնոն ընդունեց:

- Գնում եք, սափրվում գալիս:

Տղաներն իրար երեսի նայեցին:

- Սա հրաման է, չենթարկվողները նույն ուղղաթիռով հետ են ուղարկվելու: Դուք «շինարարներ» եք, եկել եք տուն սարքելու:

Նորեկների հետ սովորականի պես անցկացրեց առաջին քաղաքապմունքը: Բերդաձորի մասին պատմական ակնարկից հետո անցավ Լաչինի միջանցքին: Սա նախկին Աղահեջք գավառն է, որ Դավիթ Բեկի իշխանությունը վերացնելուց հետո պարսիկները գուտ ռազմավարական նպատակով բռնի կերպով տեղահանել են Բարգուշատ գետաբերանից սկսած, Օխչի եւ Հագարո գետերի երկարությամբ բնակված հայերին, տեղը վերաբնակեցրել Իրանից տեղահանված քրդեր, եւ ցեղապետի անունով էլ կոչվել է Հաջի Սամլու: Այսպես Սյունիքը բաժանել են երկու մասի: Ապա պատմեց Անդրանիկի զանգեզուրյան գործունեության, բերդաձորցիների ինքնապաշտպանական մարտերի մասին, գերազանց իմանալով եւ բաց թողնելով այն հատվածը, թե ինչպես Բերդաձորում 10 օր դիմադրեցին թուրքական զորքերին, որ պայմանավորվածության համաձայն խարույկներ էին վառել, բայց Գորիսից օգնություն չեկավ, եւ գյուղերը 4 հազար բնակիչով բռնագաղթեցին: Ինչու տղաների միտքը պղտորել, ինքը համոզված է, որ հիմա այլ ժամանակներ են, որ Հայաստանը հիմա ուժեղ է, պատմությունը չի կրկնվի: Ասաց, որ այս անգամ պայքարից հաղթանակով են դուրս գալու: Քարտեզի վրա ցույց տվեց Զաբուղի ձորը՝ Հագարո գետի հովտի հյուսիսային մասում, որտեղ Զանգեզուրի եւ Ղարաբաղի տարածքները մոտենում են իրար, բաժանող տարածությունը հասնում է 5-6 կիլոմետրի, եւ որ Հայաստանից անմիջապես օգնություն է գալու:

- Բոլշեւիկյան ճնշումը ժամանակավոր է, արհեստական ստեղծված միություն է, որ փլուզվելու է,- քաղաքապմունքի այս մասը տղաները գրեթե չընդունեցին. խորհրդային հզոր երկիրը ինչպես կարող է փլուզվել, բայց Առնոն այնքան հետաքրքիր է խոսում, որ պարզապես կլանված լսում են: -Եղբայրություն չի կարող լինել, քանի որ կա չլուծված հայկական հարց, հայկական պահանջատիրություն: Հայրենիքը գիտե՞ք ինչ բան է,- ինքը հարցը տվեց, ինքն էլ պատասխանեց:- Հայրենիքն այն է, որ դու ամեն ինչ պիտի տաս, նույնիսկ կյանքդ, բայց ոչինչ չպիտի պահանջես: Դա է հայրենիքը:

Ոչ մի կուսակցականություն չպիտի քայքայի մեր շարքերը: Դու նույն զինվոր ես, դու սահմանապահ ես, պաշտպանում ես քո հողը: Քո կուսակցությունը քո հայրենիքն է՝ ամեն ինչից բարձր: Թայֆայաբանություն չպիտի լինի, անհամերաշխությունը մեր առաջին թշնամին է:

Ռեռախոսի զնգոցը վերջակետեց հրամանատարի քարոզը:

Հարաբերական հանգիստ է: Երեւի ինչ որ բան են մտմտում,- Գորիսին պատասխանեց Առնոն:

Երեկոյան ժամը 8-ին Առնոն ու Անդրանիկը տղաներին Գալուստ, Պետրոս, Անդո, Հրաչ, Վաղարշակ, Վալտեր..., մեծ մասը Թալինից ու Գյուլիկից, վերցրին բարձրացան դիրքերը: Առնոն ցույց տվեց ազերիների գյուղերը:

Կրակել միայն այն դեպքում, երբ դիմացդ թշնամի լինի, դիրքում սատ զգոն եղեք, շրջակայքում խորհրդային զինվորներն են,- զգուշացրեց Առնոն:

Մի քանի օր հետո Առնոն անցկացրեց երկրորդ քաղաքապմունքը, որը նվիրված էր զինվորի, ֆիդայու մարտական կերտվածքին, ինչպիսին պիտի լինի, ինչպես պիտի պաշտպանվի:

Չգտեցեք առաջինը նկատել-տեսնել թշնամուն, պահը բաց թողեվիր, ուրեմն վրիպեցիր կսպանվես: Կռվում նաեւ պիտի կարողանաս կյանքդ պաշտպանել, որ հաղթես:- Հետո Առնոն բացեց մի բրոշյուր, կոլոգաց կարմիր մատիտով գծած տողերը, ավելացնելով ես չեմ սասում, Անդրանիկ զորավարն է ասում. ֆիդային պետք է լինի գաղտնապահ, կարգապահ, ճշմարտախոս, պահակության ժամանակ լինի զգոն եւ արթուն, չպետք է լուցկի վառի, բարձրաձայն խոսի, պետք է վարմփուշտը չոր պահի,- ապա Զորավարի «Մարտական հրահանգները» տվեց տղաներին, որ կարդան, ուսումնասիրեն:

Մի ծերունի տնավարի, վստահ դուռը բացեց.

Առնո, մի դուրս եկ՝ բան եմ հարցնում:

Ներս արի, Մխիթար քեռի, մեր տղաներն են,- ժպտաց Առնոն:

Առնո, սրա վերջը ի՞նչ է լինելու,- հարցը ձեւական հնչեց, եւ հրամանատարը հասկացավ, որ գալու նպատակը այդ հարցը չէր:

Առնո, գուցե մի քանի փամփուշտ տաս որսորդականի համար:

Առնոն մի քանի փամփուշտ զիջեց ծերունուն, ապա այդ օրվա քաղաքությունը բավարար համարեց ու փակեց քաղաքապմունքը: Երբ սանդիսներով էին մնացել, Անդրանիկը, որ պառկած էր մահճակալին, կանչեց ընկերոջ կոշիկի պոկված ծայրը.

Եղված կոշիկով գեներալ կլինի՞: Էդպե՞ս ես կանգնելու զորքիդ առաջ:

-Թող հայ ժողովուրդը կոշիկը ծակ մի գեներալ էլ ունենա,-կիսակատակին կատակով պատասխանեց Առնոն:

- Առնո,- Անդրանիկը զրույցը թեքեց քաղաքականության հունը,- պատմությունը կարծես կրկնվում է, Հայաստանում, իշխանության մեջ մի տեսակ անտարբերություն կա Ղարաբաղի հարցի նկատմամբ: Դե դու էլ գիտես, որ 1918-ին Ղարաբաղից նամակներով, խնդրագրերով դիմում էին Անդրանիկին, որ մտնի Ղարաբաղ, բայց Անդրանիկը եւ Հայաստանի իշխանությունները անգլիացիների հետ հարաբերությունները չփչացնելու համար, ետ կանգնեցին:

-Իշխանություններին միանշանակ մեղադրելը ճիշտ չի լինի: Երկիրը թույլ էր, ծվատված, մի կողմից էս թաթարներ կոչվածը, մյուս կողմից թուրքական զորամասերը, գաղթականությունը Արեւմտյան Հայաստանից...: Իսկ թույլին սպանում են, Սեւակ, լավ լսիր, մենք պիտի կռվենք: Գայլի հետ գայլավարի պիտի վարվենք, ոչ թե եղնիկավարի: Պիտի մեր տարածքները ազատագրենք: Սա մեր ներկա, անցյալ եւ ապագա կյանքն է, նպատակն է- հետո դառավ դեպի Անդրանիկը:- Ինչ իշխանություն էլ որ գա, դաշնակ թե Հայոց համազգային շարժում, ժողովրդավարություն լինի թե բռնատիրություն, մեզ պատին են սեղմելու, մեր ճակատներին գնդակն է լինելու, բայց ...

- Սեւակ, մի էն շիշը հանիր: - Տղաները լցրած բաժակները միանգամից դատարկեցին ու զգացին, որ հրամանատարը ցույց չի տալիս, բայց ներքուստ ինչ-որ բանից վրդովված ու ալեկոծված էր: Իր սովորության համաձայն հայկական կոնյակը կում-կում ըմպեց:

-Ազգային -ազատագրական պայքարի գաղափարակիրները, նվիրյալները, հեղափոխության առաջամարտիկները կարծես միշտ ողբերգական ճակատագիր են ունենում,- հետո վեր կացավ, իրար վրա դարսած գրքերից հանեց ու Սեւակին մեկնեց «Ինձ բախտ տվեք» Գեւորգ Չաուշի մասին գիրքը:- Նժդեհը խոսքով ու գործով պահեց Զանգեզուրը, Անդրանիկը Տեղ գյուղից հետ դառավ... Զորավարը անուղղելի սխալ է թույլ տվել, մի տեղ կարդացել եմ, որ հետո գղջացել է:

- Եվ Հայաստանում, եւ Ղարաբաղում հարցի լուծման վերաբերյալ երկու կարծիք կար՝ զենքի միջոցով եւ բանակցությունների միջոցով՝ առանց արյունահեղության,- լրացրեց Անդրանիկը,- պատմությունը ինչ որ չափով կարծես թե կրկնվում է...

- Անդրանիկ, այս ժամանակները ինձ 1920 թվին Ղարաբաղում սկսված կյանքի ու մահվան օրհասական պայքարն են հիշեցնում...Ղարաբաղի շուրջ օղապարանը կամաց-կամաց սեղմվում է՝ նույն կերպ, նույն մեթոդներով, նույն ձեռագրով: Ապշում եմ՝ երբեմն դեպքը, իրադարձությունը, ինչած սպառնալիքները, կոչերը՝ նույնությամբ, նույն բառերով, նույն արտահայտություններով կրկնվում են,- ապա գլուխն առավ ձեռքերի մեջ, ինչ որ մտքեր կարծես ուզում էր հեռու վանել, ու ձայնը մեղմացի սառնություն ընդունեց,- սրանց պիտի քշել դեպի տափաստանները, մորեխի նման եկել լցվել են...Իսկ դրա համար պիտի ուժեղանանք:

Ուշ էր արդեն, բայց ջահելները վեր կենալու միտք չունեին: Առնոյի հայացքն ընկավ Շեկ Անդոյի վրա: Անդոն հասկացավ, որ պիտի երգի հրամանատարի սիրած երգը «Գինի լից»:

Աշխարհ սարսափ հայի ահը,
Գետին ընկավ թուրքին գահը,
Պատմեմ ձեզ Թալեաթի մահը:
Գինի լից, ընկեր ջան, գինի լից,
Խմողաց անուշ, անուշ, խմողաց անուշ:
Թալեաթ փաշան փախավ Պերլին,
Թեհլերյանը հասավ ետին,
Զարկավ ճակտին, փռեց գետին:
Գինի լից, ընկեր ջան, գինի լից...

...Արեւն այստեղ ծագում է Ջիբրախաչից, լույսը նախ ընկնում է Կրու ջրի ստվերոտ ու սուր, թքվածնառատ ձորը, ապա հանդարտ տարածվում Թումասարի եւ Սուրանի անտառապատ լանջով, ու ձորը դառնում է արթնանալ անեղծ ու նախնական շնչով:

Ֆիդայիները մինչեւ լույսը բացվելն էին պահակակետերից իջնում, որ ոչ մի աչք զենքերը չնկատի:

Վարսիկ տա՞տ...-տատը գիտեր նրանց ելումուտը, նստել ու ճամփան էր պահում:

- Իմ սրբած թրեր բալեք..., կանաչ-կարմիր դառնաք, ձեր եկած ճամփան կանաչ լինի, Յոռոմսիմի սուրբ ծառը ձեզ շուքավոր լինի, ձլեքնարկեք, զորանաք, որդիք ջան...,-աղոթեց, համբուրեց ճակատները ու հրաժեշտ տուն: Քիչ անց խաշած ձու, մի կտոր պանիր ու իր ձեռքով սարքած տնական կարագ մատուցարանի վրա՝ բերեց: Նորեկներից մեկը վրա տեղի վրա փող դրեց: Տատը կախեց հայացքը, Սաքոն աչքունքով ապային հասկացրեց, որ հետ վերցնի:

Թեյը պատրաստ է, բալեքս:

Տատ, դու ուրիշ էս է, ուրիշ,- ասաց Սարգիսը:

Որդի, էս 5 մատները իրար նմա՞ն են:

Ոչ:

Ուրեմն, մարդիկ էլ պիտի տարբեր լինեն: Էդ ո՞նց կլինի իրար նման: Մարդուց ծնվածը չի իր ծնողին նման լինում,- տնտղող ու գորովալից հայացքը կանգ առավ Առնոյի վրա:

- Հը՞, տատ, ո՞ւմ չեմ նման:

- Բալա ջան, ասեմ չնեղանաս,- խորշոմները հետ գնացին, ու աչքերից խանդաղատանքը թափվեց,- Սահակին, Դալամա Սահակին՝ էսպիսի թո՞ռ...

- Ինչպիսի՞, տատ,- Սաքոն մոտ եկավ, գրկեց տատին, Առնոն արդեն իր գործին էր, մի ականջը գրույցին:

- Ուսյալ, կարդացած, ծանրումեծ, միշտ չափած-ձեւած, խոսքը հատ-հատ, ընտիր: Սահակը գլուխ կտրող է եղել, թուրքի սարսափն է եղել...

- Տատ, պատմիր, բեկը քեզ ո՞նց հարս տարավ,- Սարգիսը սիրում էր տատիկի հոգու հետ խաղալ:

- Ի՞...

Անձնագրային ռեժիմի մի ստուգման ժամանակ զինվորականը կարծել է, թե միամիտ, ծեր կին է, փորձել է խոսք դուրս քաշել.

- Ո՞ւր են տղաները:

- Ես ի՞նչ գիտեմ,- բայց զենք էր տարել, տանը թաքցրել: Օմօնականը բարձրացրել է հրացանը ահաբեկելու համար, տատն էլ ձեռնափայտն է բարձրացրել, վրա քշել.

- Շուն շան որդի, էդ ո՞ւմ վրա ես հրացան քաշում: Իմ տանը, իմ դռանը...- ստուգողները թողել-հեռացել են առանց տունը խուզարկելու: Հետո գիշերը տղաները իջել են պայուսակները վերցրել, մտել անտառ: Քանի՞-քանի գիշեր է տատը անքուն հսկել, որ տղաները շտաբում հանգիստ քնեն:

Ստուգումները կատարվում էին տարբեր ժամերի: Այդ օրը զինվորների երեւալը շատ անսպասելի էր: Արդեն մթնում էր, ու գյուղը հանգիստ իր գործին էր: Շտաբում Նոր Հաճնի ու Թալինի տղաներն էին, որոնց տեղական գրանցումը դեռ չէին ձեւակերպել:

- Իմը Աղբուլաղի (Ասկերանի շրջան) գրանցում է, կասեմ, հորքուրիս տուն եմ եկել,-ասաց տղաներից մեկը ու շտաբից հանգիստ դուրս եկավ, գնաց Գրետայենց տուն:

Մնացած յոթ հոգին ներսում սողնակը գցել, լույսը հանգցրել ու վարագույրի ճեղքից ծիկրակում են: Փրկվելու տարբերակ չկար, եթե մտնեին: Զինամթերքով լի ցինկե արկղերը տղաները չէին հասցրել թաքցնել: Պարկերով մթերք, տուփերով ծխախոտ, զինվորական հագուստ,- ամենը ավելի շատ զորանոցի էր նման:

- Գուցե դո՞ւրս գանք: -Առաջարկը անմիջապես մերժվեց: Փախչել հնարավոր չէր, բացի այդ վտանգավոր էր՝ բա զենքե՞րը... Ստուգողներն էլ իրենց հերթին հասկացել էին, որ ներսում գրոհայիններ են ու զենք կա, մի քիչ մոտենում էին, կարծես հոտոտում ու հետ քաշվում: Տղաները որոշել էին հարձակման ենթարկվելու դեպքում պատասխանել, այլընտրանք չկար:

Զինվորները մոտենում ու հետ էին քաշվում զգալով վտանգը:

Խորենը, որ վարագույրի ճեղքից հետեւում էր դրսի անցուդարձին, ասաց գնացին, ու տղաները ազատ շունչ քաշեցին:

Մի քանի օր անց նույն ժամին նորից եկան ստուգման, բայց այս անգամ ամեն ինչ արդեն կարգին էր: Ամբողջ գյուղն ու շտաբը տակնուվրա արեցին, ոչինչ չգտան, բայց դուրս չէին գալիս, հավանաբար այն խնդիրը, որ դրված է եղել ստուգողների առջեւ չի հաջողվել իրականացնել:

Առստամյան Գայանեն եկավ Վարսիկենց տուն.

-Գայանե՞,- աղջիկը մտավ ու լուռ նստեց թախտի ծայրին.

- Սիրտս մի տեսակ անհանգիստ է, էստեղ եմ քնելու:

Վարսիկ տատը համբուրեց մազերը: Աղջիկն արծագանքեց ժպիտով, բայց դրանից աչքերը դարձան ավելի թախծախառն ու թվաց ուր որ է լաց կլինի: Քաղաքից անծանոթ այս գյուղը եկած ջահել, ինքնամփոփ, լռակյաց աղջկան բոլորը սիրում, հարգում էին:

- Գայանե,- ժաննան խոր նայեց աղջկան: Կնոջ աչքից չէին կարող վրիպել վերջին շաբաթներին աղջկա դեմքի գունատությունը եւ աչքերի տխրությունը:

- Նա ինձ դուր է գալիս,- ժաննան սպասում էր այս խոստովանությանը, քանի որ նկատել էր, որ նոր եկած ջոկատի տղաներից մեկը շատ էր զբաղվում փոստի շուրջը:

- Հետո՞:

- Ուզում ես ինձ հիշեցնել մեր երդո՞ւմը այստեղ գալուց առաջ:

- Ես գիտեմ, որ դու որեւէ հիշեցման կարիք չես զգում, քույրս, անպատի լուրջ քույրս,-ժաննան ծխախոտ հանեց տուփից:

- Նա ինձ շատ է դուր գալիս,-նորից կրկնեց աղջիկը, ու երբ ակնոցները հանեց, ժաննան տեսավ աչքերում լճացած արցունքը ու խոր ներս քաշեց ծուխը:

-Ես նրան արդեն մերժել եմ,- աղջիկը խոսում էր երկար թարթիչները ցած գցած:

-Դու ոչինչ հիշեցնելու կարիք չես զգում, լուրջ, լուրջ աղջիկ: Շարժումը գյուղացիների աչքում կվարկաբեկվի, եթե... Մեր վարքից շատ բան է կախված:

Վարսիկ տատը արդեն սեղանին էր դրել խաշած ու կլպած կարտոֆիլները, կանաչի եւ ինչպես միշտ, լցրել էր բաժակները իր պահած հայկական ընտիր կոնյակով:

- Ձեր ոտքը էս ծորակից անպակաս լինի, սրբերը ձեզ թիկունք,- տատը մեկ կումով դատարկեց իր բաժակը:

-Ժան, նա ինձ դուր էր գալիս,- արդեն անցյալով կրկնեց աղջիկը ու շոկոլադի սալիկի կտորը գցեց կոնյակի բաժակի մեջ:

Ժաննան ոչինչ չասաց, միայն ծխախոտի ծխի հետ փոխնիփոխ կում-կում ըմպում էր թարմացնող հայկական կոնյակը:

Դռան ուժեղ եւ անսպասելի բախոցից կանայք վեր թռան: Ժաննան դուռը բացեց:

- Դրսից ձեզ կանչում են:

- Աղմուկ չպիտի բարձրացնես, դու պիտի մեզ հետ գաս: Այդպես է հրամայված:

- Ո՞ւմ հրամանն է:

- Իրավունք չունենք ասելու, բայց ձեր անվտանգությունը երաշխավորված է: Ստեփանակերտ ենք տանելու, այնտեղ ամեն ինչ կիմանաս:

Ժաննան տուն մտավ, բաճկոնը գցեց ուսերին:

- Ես էլ եմ գալիս,- վեր կացավ Գայանեն,- քեզ մենակ չեմ թողնի:

- Ոչ: Չես գալու, դրա կարիքը չկա: - Ու իրեն հատուկ ինքնավստահությամբ դուրս եկավ:

Կնոջը կալանել էին իբրեւ սադրիչի, ազգամիջյան կրքեր հրահրողի: Առնոն, Անդրանիկը, Նորիկը, Ռուբոն, Ստյոպան ու Խորենը զենքը թաքստոցներից հանեցին, սարերով իջան ու կտրեցին դեպի Մեծ Շեն տանող ճանապարհի երկու կողմերը: Լսվեց ԲՏՐ-ի ձայնը: Մի հարյուր մետրի վրա տղաներին դեռ չհասած, զրահամեքենան կանգնեց: Ժաննան դուրս եկավ ու քայլեց ճանապարհով, դեպի չերեւացող տղաները: Իբր Ժաննայի համոզելով, բայց իրականում վտանգը զգացել ու կնոջը բաց են թողել:

Սուրանի դիրքերում տղաները անտառի աշնանային հմայքների մեջ մի պահ մոլորվել էին, երբ կրակոցներ լսվեցին:

- «Բերդ»: «Բերդ»: Լսո՞ւմ ես:

- «Բերդը» լսում է:

- Կրակոցները, հավանաբար, Թթու ջրի մոտերքից են: Ծուխ էլ է բարձրանում: Կրակի նշաններ կան:

- Կրակոցների ճշգրիտ ուղղությունը որոշեք, հաղորդեք: Լսո՞ւմ ես, Բազե»:

- Լսում եմ: Կրակոցները մեր «բարեկամների» կողմից է...

- Ամեն ինչ ճիշտ է: Այդպես էլ պիտի լիներ:

Թթու հանքային ջուրը Հին Շենից 5 կիլոմետր հեռավորության վրա է գտնվում, ձորի մեջ անտառի խորքում: Օրը ցերեկով հատուկ նպատակով Առնոն Արմենին, Սաքոյին ու Խեչոյին վերցրել-գնացել էին հետախուզության: Հենց աղբյուրի մոտ, ձորում, խարույկ են վառել ստուգելու համար հարեւանների զգոնությունը եւ որոշելու դիրքերի հեռավորությունը: Իրիչանից հրդեհի լեզվակները նկատել ու կրակ են բացել: Ուրեմն, եւ Թթու ջրի ձորը, եւ Ձիբրախաչ տարածքը գտնվում են հարեւանների տեսադաշտում: Երեկոյան կողմ տղաները բարձրանում են դիրքերը, նրանց ուղղությամբ կրակում, ցույց տալու համար, որ իրենք էլ քնած չեն, որ գիտեն հակառակորդի դիրքերի տեղը:

Հավաքվել էին Բերդաձորի ինքնապաշտպանության խորհրդի նիստին:

Առնոն ներկայացրեց ձորակում տիրող ընդհանուր իրավիճակը: Պաշտպանությունն ընթանում է նորմալ: Ձորակում կա մինչեւ վերջ պայքարելու պատրաստակամություն: Շրջակայքում հաշվի են նստում Բերդաձորի հետ: Գյուղերն ապրում եւ շնչում են սովորական կյանքով, այսինքն... կրակոցների տակ.

-Կարեւորը՝ ձորակում ոգի կա, հոգեւոր վերածնունդ կա: Բոլոր դպրոցները վերանորոգված են, Մեծ Շենինը՝ գրեթե նորակառույց: Մեծ Շենում 8 մահճակալանոց հիվանդանոցի շինարարությունը ավարտված է, բացվել է նոր բաժանմունք՝ ծննդատուն:

- Ներքին կահավորանքի հարցերում մենք կօգնենք,- տեղից ասաց այդ օրը Ստեփանակերտից ժամանած Վրույրը: Ժաննան լուռ նստած էր նրա մոտ:

- Գյուղատնտեսական եւ անասնապահական աշխատանքները մեր հսկողությամբ՝ թափով կատարվում են:

Առնոն խոսեց նաեւ այն՝ ցավալի փաստի մասին, որ երբ պարետատունը պահակակետեր դրեց, գործերն ավելի բարդացան: Հին Շենի կոլտնտեսության 120 խոզերը հարեւանները քշեցին, բայց պատաս-

խանն էլ ստացել են, Ստյոպան իր խմբով մտել է Լաչինի տարածք, 30 ձի բերել:

Քաղաքական իրավիճակի մասին խոսեց Անդրանիկ Հարությունյանը.

- Չնայած բոլորիս ջանքերին ու կամքին, օրըստօրե Բերդաձորի պաշտպանությունն ավելի է բարդանում. Ադրբեջանի եւ Կենտրոնի կողմից ճնշումն ուժեղացնելու միտումը զգացվում է: Ընդ որում, դա արվում է կանխամտածված, պլանավորված ձեւով. Ադրբեջանի եւ ԽՍՀՄ զինվորական կառույցների անմիջական մասնակցությամբ, եթե անկեղծ լինենք, ակտիվ մասնակցությամբ: Նրանց նպատակն առաջվանն է՝ ձորակը հայաթափել. ինչպես վարվեցին Ազատ եւ Կամո գյուղերի հետ: Ձորակը կոկորդում մնացած ոսկոր է, դա լավ գիտեն եւ Բաքվում, եւ Մոսկվայում: Անձնագրային ռեժիմի պատրվակի տակ խուզարկությունները, որոնք ավելի ու ավելի հաճախակի ու խիստ բնույթ են կրում, լավ բան չեն խոստանում:

- Եկեք իրատես լինենք,- ելույթ ունեցավ Սաֆարյան Թաթուլը,- վերջին ժամանակներս Հայաստանում կառավարող շրջանների անտարբերությունից թշնամին մեծապես օգտվում եւ ակտիվացել է: Էապես որ գնա... Չպետք է թույլ տանք, որ բնակչության շրջանում արդեն սկսված նվնվոցներն ու հոռետեսական տրամադրությունները ուժեղանան: Չպետք է թույլ տանք, որ սադրիչ լուրեր տարածվեն: Եվ վերջապես, մենք մեզնից չթաքցնենք, որ Հայաստանում կառավարող շրջանները իրավիճակը կարգավորելու համար կարծես թե ուզում են մեր հարեւան հանրապետության հետ բանակցություններ սկսել...

- Ներեցեք, որ ընդհատում եմ,- նախագահողը Անդրանիկն էր,- իմ կարծիքով մեր գործադրած բոլոր ջանքերը ապարդյուն կանցնեն, եթե մոտ ժամանակներում չկարողանանք վերածնունդ հաղորդել ձորակի գյուղերին: Դրսում ինչքա՞ն բերդաձորցիներ կան, -նայեց նախագահությունում նստած Առնոյի կողմը, որ արձանագրում էր նիստը:

- Իմ հաշվարկներով ռազմավարական նշանակություն ունեցող այս ձորակի սահմաններից դուրս, հատկապես Հայաստանում, Հյուսիսային Կովկասում եւ Միջին Ասիայում բնակվում են ավելի քան 10 հազար բերդաձորցիներ: Երեւանի Ազատության հրապարակում պարբերաբար անցկացվող բազմահազարանոց հանրահավաքներին մասնակցում են հարյուրավոր նախկին բերդաձորցիներ, այդ թվում շատ երիտասարդներ:

- Կան: Գիտենք, որ շատ կան, բայց կվերադառնա՞ն,- Ասրյան Արկադիի հարցը ոչ թե Առնոյին էր ուղղված, այլ ավելի շատ բարձրաձայն արտահայտված մտահոգություն էր:

- Պարտավոր են վերադառնալ: Ես հողի ծնունդ եմ, իսկ հողը ծանր վիրավոր է... -

Անդրանիկը ընդհատեց Առնոյին.

- Տեղեկացնեմ, որ Երեւանում ստեղծված է «Բերդաձոր» հայրենակցական միությունը: Նա կմիավորի բերդաձորցիներին, պայմաններ կստեղծի վերադառնալու համար: Համոզված եմ կոնկրետ քայլեր կձեռնարկվեն:

- Ես նամակ կձեւակերպեմ, կդիմեմ մեր հայրենակիցներին, համոզված եմ հայրենասիրության բարձրացած այս ալիքի վրա շատերը կդան, կիմնվեն, հողը կպահեն... Նամակը կուղարկեմ բոլոր քաղաքները, որտեղ բերդաձորցիներ են ապրում:

Հաջորդ օրը շտաբում Առնոն կարդաց դիմում-նամակը.

«Բերդաձորը պաշարման մեջ է: Վերջին երեք ամիսները գտնվում է Սովետական բանակի հսկողության տակ: Բնակչությունը կարծում է, թե նկել են մեր անվտանգությունը ապահովելու, բայց ավա՜ղ... Ձորակից հանել են պարենի վերջին պաշարները: Ժողովրդին ահաբեկում են ապառնալով Մագադան քշել: Բնակչությունը հուսախաբ է եղել: Անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակի տակ խուզարկում են գյուղերը, տներից հանում տաք շորեր, բաճկոններ պատճառաբանելով, թե գրոհայինների համար է: Վերջին երկու շաբաթվա մեջ 6 անգամ ձորակը խուզարկել են ամենաբարբարոս ձեւերով:

Բերդաձորցիներ, դիմում եմ ձեզ, ձեր բանականությանը, ձեր քաղաքացիական պարտքին: Ուշքի եկեք: Բերդաձորը, այսօր, քան երբեւէ, ձեր կարիքն ունի: Հետեւեցեք այն երկու տանյակ տղաներին, որոնք նկան Բերդաձոր, ավիշ ներարկեցին հյուծված մարմնին: Հետեւեցեք նրանց, որոնք կարճ ժամկետում գազիֆիկացրին ձորակը, արտադրական մասնաճյուղեր բացեցին, գյուղին ու դպրոցներին նոր կյանք ու լուսնչ հաղորդեցին, արեցին ու անում են հնարավորն ու անհնարինը:

Եկեք, բերդաձորցիներ:

Բերդաձորը չհուսահատվող մոր կարոտով ձեր ճամփան է պահում. Եկեք, քանի ուշ չէ...Շտապեք, հետո ուշ կլինի: Եկեք, թե չէ հեթանոսական ու քրիստոնեական սրբերի, Պարին Պիժի, Սարունց Պերքի, Համասարի անեծքը կծանրանա ձեր խղճին ու ձեզ վրա կթափվի Օշափեն Ասրի տորքանգեղյան գայրույթը, որից փրկություն չկա...

Հայրենակիցներ, Բերդաձորը սպասում է ձեզ:

Առնո Մկրտչյան

Բերդաձորի միջնակարգ դպրոցի ուսուցիչ,

Բերդաձորի ինքնապաշտպանության խորհրդի անդամ

Նոյեմբերի 25, 1990 թվական»:

- Հոյակապ է, հրաշալի է,- ոգեւորվեց Անդրանիկը,- կգանգեմ, հայաստանյան թերթերը կտպագրեն: Կգան, Առնո, կտեսնես, որ կգան...

Հաջորդ օրը Առնոն Ստեփանակերտում էր, գործերը վերջացնելուց հետո մտավ տուն:

- Հեռախոսը ստիպված Արփիկի ձեռքը տվեցի, որ ձայնը լսես գաս,- տրտնջաց կինը:

- Արփիկի ձայնը լսելով եմ եկել, հա՞: Բա սկզբում քո՞ ձայնը չէ՞ր...

- Իմն էր, բայց նրա ձայնն ես լսել-նկել:

- Կարեւորը, որ եկել եմ, Ալվարդ:

- Լսել եմ, որ քաղաքում էիր ու տուն չես եկել,-սրտում պահած սպասման, կարոտի, մենակության դառը զգացումները կինը տեղի չէր տալիս:

- Հա, քաղաքում էի:

- Որտե՞ղ էիր, ասա:

- Պարետատան շտաբում: Գործ ունեի:

- Գործդ ե՞րբ պիտի պրծնի...

-Ալվարդ, նստիր մոտս,- Առնոն ձեռքը անցկացրեց կնոջ մեջքին,- Ալվարդ, Սաֆոնովի մոտ էի գնացել, որ ուղեկցող տա, որ երթուղային ավտոբուսը կարողանա գյուղ գա: Հաջողվեց:

- Գոնե իմանամ, որ քեզ վտանգ չի սպառնում: Դու այնտեղ քեզ ապահո՞վ ես զգում:

- Ես հավատարիմ ընկերներ ունեմ: Ես ինձ ամուր եմ զգում:- Ամուսինը զգաց կնոջ ներքին տագնապները եւ փորձեց ցրել:- Լսիր, մի բան պատմեմ: Սահակը Գորիս Անդրանիկին նամակ պիտի տաներ: Մահակը ձեռքն է առնում, ընկնում թուրքերի մեջ, աղմուկ բարձրացնում, թե հայերը եկան, եկան... Թուրքերը իրար են խառնվում, էս ձեւով բացումանցնում է փակ ճամփով...

-Հնարում ես...

-Չեմ հնարում, պապս է պատմել...

-Դու պապիդ ես քաշել...

-Նա քաջ մարդ էր, Ալվարդ, թուրքերը անունը լսում փախչում էին: Ես ի՞նչ... ընդամենը գրքեր կարդացող: Բայց դե, մեր ժամանակն էլ է գալու:

- Տեսաժապավեն եմ բերել, Հայաստանից լրագրողներ են եկել նկարահանել, միացնենք նայենք:

Աստղիկը հոր վիզը գրկել բաց չէր թողնում, Անահիտն ու Արփիկն էլ

ինքից հորը գրկել ու դիտում են: Անդրանիկը հայրենասիրական ճառ արտասանում, հետո Առնոն ոգեւորված ելույթ է ունենում, հետո նվերներ են բաժանում:

-Բա երեխաներիդ բաժինը ո՞ւր է:

-Դրանք գյուղում ապրող երեխաներինն են:

-Դու բաժին չունե՞ս:

-Չէ: Նման բաժին չունեմ, Ալվարդ: - Առնոն տոնը մի թեթեւ խստացրեց, ու կինը լռեց:

-Ալվարդ, գիտե՞ս, Սեյրանը Ստեփանակերտից տանկով է հարսնացուին գյուղ բերել: Հարսանքավորները վախեցան, ոչ ոք չեկավ: Իսկ գյուղում տեսնեիր ինչ մեծ քեֆ, ուրախություն, հարսանիք արինք,- Առնոն որ սկսում էր պատմել, հնարավոր չէր լսել, չհրապուրվել, եւ այդ «լենքը» օգտագործում էր նաեւ ընտանեկան վեճերը հարթելու ժամանակ:

Հայ հեղափոխական դաշնակցության Արցախի կոմիտեն իր անդամներին Սարգսյան Աշոտին եւ Պետրոսյան Գեորգիին գործուղել էր Բերդաձոր: Նրանց գալը երկու նպատակ էր հետապնդում. Բերդաձորը որպես աշխարհագրական տարածք Արցախի մի մասն է, բայց այստեղի դաշնակցական ենթակոմիտեն մտնում է Հայաստանի ՀՅԴ կենտրոնական կոմիտեի կառույցի մեջ: Ստեփանակերտում, Արցախի կոմիտեում հարցը քննարկվել է, դա դիտվել է որպես կանոնադրային խախտում, Արցախի ուժերի միասնության ջլատում եւ որոշում է կայացվել ենթակոմիտեի տեղը ճշտել: Երկրորդ նպատակը. Գալստյան ժաննայի ուզեցել հարց դնել Ստեփանակերտ վերադառնալու, քանի որ նա Արցախի դաշնակցական կազմակերպության կոմիտեի ներկայացուցիչն է, որը ըստ դաշնակցության կանոնադրության պիտի գտնվեր Ստեփանակերտում, այլ տարբերակը կոպիտ խախտում է:

Վարսենիկ տատը անշշուկ ու կամաց մտավ, կծոխուրի հյութով լի բուժակներով մատուցարանը դրեց սեղանին ու հուշիկ դուրս եկավ:

-Ընտրելու իրավունքը ժաննայինն է, ինքը պիտի որոշի,- ասաց Առնոն:

Իմ կարիքն այստեղ ավելի շատ կա, ես մնում եմ Բերդաձորում,- ժաննային ճանաչելով, ոչ ոք համոզելու փորձ չարեց:

Իսկ ինչ վերաբերում էր ենթակոմիտեի ենթակայությանը, Առնոն դուռ համաձայնեց.

Տրամաբանականը դա է: Մոտ օրերս Վարանդ Փափազյանը պիտի

գա Բերդաձոր ժողով կանենք, կներկայացնի շրջաբերական, ըստ որի հարցը կլուծվի:

Անդրանիկի կողմնորոշումն այլ էր.

-Ի՞նչ տարբերություն: Բոլորիս նպատակը մեկն է Արցախի ազատագրումը, բայց դե, ՀՅԴ բյուրոյի որոշումը՝ թող լինի, մենք դեմ չենք:

- Դպրոցի ֆիզիկայի լաբորատորիայի տեխնիկական հագեցվածությունը ինչպե՞ս է,- Աշոտը որպես ֆիզիկայի մասնագետ հարց տվեց:

- Էհ, դրանով զբաղվելու ժամանակ չկա: Ուր է թե ամեն ինչ վերջացած լիներ, հանգիստ դաս տայինք,-պատասխանեց դպրոցի ֆիզիկայի ուսուցիչը:

Խորհրդակցությունից հետո բարձրացան դիրքերը նայելու:

- Նայեք էն սարին,- ասաց Առնոն:

- Սովորական սար է,- ասաց Աշոտը:

- Ուշադիր նայեք՝ ի՞նչ եք տեսնում:

Հյուրերը թոթվեցին ուսերը:

- Այնտեղ մեր դիրքերն են, խրամատները:

- Կրակակետերը ուժեղ քողարկված են,-հիացավ Աշոտը:-Սա իսկական երկարաժամկետ պաշտպանության համար է:

Ստան Քումենքարից ներքեւ գտնվող բլինդաժը:

- Սա հո իսկական ռազմական կառույց է,-նկատեց Աշոտը,-ինչպե՞ս ես սարքել:

- Ռազմական գրքերից, կարդացել եմ, գծագրեր կազմել ու սարքել:

Աշոտը ծանոթ էր Առնոյին, բայց կարծես առաջին անգամն էր տեսնում: Բերդաձորի հրամանատարը զարմանալի ջինջ ու զուլալ հայացքներ:

- Բավարարվա՞ծ եք զինամթերքով,-հարցրեց:

- Հիմնականում այո, բայց էլի ենք ձեռք բերելու,- հրամանատարը չասաց, թե որտեղից ու ինչքանով է լրացվելու:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՎԱՅԵԼՈՒՄ Է ԻՐ ՑԱՆԱՑԻ ՊՏՈՒՂԸ

Ներքին հակամարտություններ

Անձնագրային ռեժիմի ստուգումից երկու օր անց գյուղը խուճապահար եղավ. Յոռնեսից բարձրացել էին թումբը եւ ձեռքի գնդացիրով մի բանի անգամ գյուղի վրա կրակ բացել:

- Թուրքերը եկա՞ն,- գյուղը վայնասուն ընկավ: Լցվեցին ավտոբուսը փախչելու: Ժանանա կտրեց ավտոբուսի ճանապարհը:

- Դուրս եկեք, շուտ, էդ ո՞ւր եք փախչում, մտեք տները: Հիմա մեր տղաները նրանց հախից կգան: - Գնդակների տարափից ինքն էլ էր վախ զգում , բայց կանգնել էր պինդ, վճռական, քանի որ գիտեր, որ ժողովուրդը իրեն վստահում ու հավատում էր:

Տղաները դիրքերից կարաբիններով ու որսորդական հրացաններով նարձակումը հետ մղեցին:

Անդրանիկը ընկերների հետ շտաբ մտավ, եւ Մարինեն նրան այդպես բորբոքված չէր տեսել:

-Եսպես որ գնա՝ տանուլ ենք տալու: - Ու իշխանությունների հասցեին հայհոյանքների շարան կապեց:

1989-ի դեկտեմբերի 1-ի որոշումից հետո Հայաստանում կարծես լի մոռացել էին Ղարաբաղի մասին:

- Չեն պատկերացնում, որ եթե Ղարաբաղը կորցնեն ինչ է լինելու, չեն պատկերացնում, որ եթե Բերդաձորը կորցնեն Ստեփանակերտի մերը լացացնելու են:

Ու թուղթ ու գրիչ պահանջեց: Առնոն իրեն հանգիստ էր պահում: Նա իրեն թույլ չէր տալիս Անդրանիկի նման տաքարյուն, շիտակ ու հայհոյանքներով արտահատվել:

Անդրանիկը ժամերով նստած, գրում-ջնջում էր. Մարինեն չէր հասարձակվում խոսեցնել, մի անկյունում լուռ նստել էր: Անդրանիկը վերջացրեց, թղթերը մեկնեց Առնոյին: Վերջինս կարդաց, հավանություն տվեց, թղթերը փոխանցեց Մարինեին, որն այս անգամ տեսնելով Անդրանիկի կատաղությունը, հասկացավ, որ կատակի տեղը չէ, պիտի լրվի.

- Լավ է, շատ լավ է:

Հոդվածը ծրարվեց եւ ուղարկվեց հայաստանյան մամուլին.

«Բերդաձորը մի փոքրիկ կղզի է շրջապատված 82 հազար ազերի թշնամությամբ: 1989-ի հունիսի 19-ին տարածքը հայտարարվել է ամեն տեսակ քաղաքական եւ գաղափարախոսական պայքարից դուրս.

նախ հայրենիք պիտի կառուցենք: Հայաստանից գալիս են մեզ օգնելու ամենատարբեր խմբավորումներից, բայց Բերդաձորում պիտի մոռանան իրենց կուսակցականությունը: Առանց այդ էլ այստեղ դժվարություններ շատ կան տեղի կոմունիստների, նախկին ղեկավարության հետ. երկար տարիներ ապրել են ազերիների հետ, եւ այսօր էլ, այս բոլոր պատմություններից հետո, կարծես թե հաշտության ճանապարհներ են փնտրում, չտեսնելով անդունդը: Մեր առաջին մտահոգությունը մարդկանց գյուղերում պահելն է: Իսկ այս գյուղերն ապրում են միայն Շարժման շնորհիվ: Մարդուն տուն պիտի տաս, աշխատանք, պայմաններ եւ այլն, որ նա այդ քառակուսի մետրի մի թիզը դարձնի հող, հետո այդ հողը դառնա հայրենիք: Միակ ձեւը սա է: Նախ հայրենիք պիտի լինի: Իսկ քաղաքական պայքարը կսպասի: Մի քանի բառով փորձեմ ներկայացնել Արցախի վիճակը: Արցախն այսօր նմանվում է մոռացված, խորթ զավակի, սխալ կլինի ասել, թե վիճակը վատ է, որովհետեւ... վիճակ ուղղակի չկա: Եթե այսպես շարունակվի, օրեցօր կմոտենա վախճանին, չեմ ուզում մռայլ գույներով ներկայացնել, բայց փաստը սա է: Շատ պարզունակ եք պատկերացնում Արցախը, իսկ այստեղ կան ներքին պրոբլեմներ, կան մարդիկ, որոնք փորձում են ազերիների հետ վերականգնել նախկին հարաբերությունները, եւ դա սարսափելի է: Շատ նման կլինի 1908-ի ձեռքսեղմումին, եւ հետո 1915-ի ջարդին: Այս բանը ցավոք շատ քչերն են գիտակցում:

Պատճառը Հայաստանի պասիվությունն է ու անտարբերությունը: Այսօր ռեալ մենք դեռ ունենք արցախցիներին, որ ապրում են այդ հողի վրա եւ պայքարում: Մենք պետք է ամեն ինչ անենք նրանց փրկելու համար: Թույլ չպիտի տանք, որ նրանք պարտվեն բարոյապես: Հոգեբանական պարտությունը ամենասարսափելին է: Երկուսուկես տարի Արցախն արեց այն, ինչ շատերի համար աներեւակայելի է, եւ այսօր նա շատ ավելի է օգնության կարիք զգում, քան այն ժամանակ: Թվում էր, թե 1989-ի դեկտեմբերի 1-ի Հայաստանի խորհրդարանի որոշումից հետո ոչինչ չէր մնում անելու: Կայացվել էր որոշում, կային օրենքներ, իրավունքը ձեռք էր բերվել, մնում էր այն իրագործել, այսինքն նախարարների խորհրդի աշխատանքն էր մնում, բայց առայսօր բացարձակապես ոչինչ չի արվել, եւ չեն էլ մտածում անել: Հայ ժողովրդի մարմնի մի մասը չի աշխատում, եւ դա ամենակարեւոր մասն է: Մեղքը նաեւ մերն է, ու մեծ մասամբ Հայաստանում գոյություն ունեցող ֆորմալ եւ ոչ ֆորմալ բոլոր կազմակերպություններինը, որովհետեւ յուրաքանչյուրը, մանավանդ, նախընտրական արշավի ժամանակ, հատուկ շահարկեց խնդիրը: Հայաստանում բոլորը նույն բանն են ասում, թե պետք է վերադառնալ Արցախին, ակունքներից սկսել մաքրվելու համար: Լավ է, որ ասում են: Բայց ասելն ու անելը տարբեր բաներ են: Մեր օրենսդիր մարմնի, ռեալ իշխանության երկու ամսվա բացակայության ընթացքում Ազերբայջանի կառավարությունը կարողացավ անել այն, ինչ մենք ամիսների ընթացքում անգամ ծրագրել չենք կարողանում: Ազերբայջանի Գերագույն խորհուրդը երկու օրվա ընթացքում 25 որոշում է կայացնում, իսկ մենք մեր նստաշրջանում եթե 1-2 որոշում կարողանում ենք պոկել, համարում ենք, որ մեծ աշխատանք ենք կատարել:

Վաղուց հասկացած պետք է լինենք, որ մենք ոչ 2-րդ, ոչ էլ 3-րդ ուժ ունենք: Մենք միայն մեկ ուժ ունենք՝ մեր սեփականը: Չենք կարողանում հասկանալ, որ հայը ինքը պիտի լուծի իր հարցերը: Մեր ժողովուրդը սարսափում է այդ մտքից: 400 տարի շարունակ հայը մտածել է թե մի երրորդ ուժ պետք է իրեն օգնի, եւ հիմա չի ուզում հրաժարվել այդ մտքից: Նժդեհը սովորեցնում է, որ յուրաքանչյուր ժողովուրդ մենակ մնալուց չպիտի սարսափի, այլ պետք է հավաքվի, համախմբվի, ավելի զորանա իր մենակության շուրջ, որովհետեւ կհաղթի միայն այն ժամանակ, երբ հույսը դնի իր վրա: Եթե երրորդ ուժի առկայությունը կա, իհարկե, կարելի է այն օգտագործել, սակայն աշխարհում այնպես չի լինում, որ անշահախնդիր օգնեն:

Արցախի խնդիրը տեղապտույտի մեջ է: Նույնիսկ հետ ենք նահանջել, որովհետեւ 1988-ին ունեինք մարզխորհուրդ կամ հայիշխանություն, այսօր դա էլ չունենք: Երկու տարվա պայքարը բերեց-հանգեցրեց այն բանին, որ մենք Մոսկվային խնդրում ենք վերականգնել նախկին վիճակը: Արցախի բոլոր գործերում պետք է լինի Հայաստանի միջամտությունը: Կառավարության միջամտությունը, ոչ թե այս կամ այն ֆորմալ կամ ոչ ֆորմալ կազմակերպության: Այսօրվա խորհրդարանի առաջին մտահոգությունը պետք է լինի Արցախի ճանապարհը բացելը, ի նկատի ունեմ Լաչինի ճանապարհը: Օդային գիծը չի կարող տնտեսական ինտեգրացիա ապահովել, դե թող Հայաստանի Գերագույն խորհուրդը որքան ուզում է հայտարարի, թե Արցախը Հայաստանի անբաժանելի մասն է: Կարող է տարօրինակ թվալ, բայց ես պիտի պնդեմ. Հայաստանի կառավարությունը, եթե ուզենա, ճանապարհը կբացի, ինչպես կուզեք հասկացեք, ձեւերը շատ են:

Այսօր քննվում է Հայաստանի անկախության հարցը: Անկախական շարժումը եւ ղարաբաղյան Շարժումը անհամատեղելի են: Որոշ մարդիկ ուզում են ապացուցել, որ եթե ձեռք բերենք անկախություն, զրկենք պետությունը, մեր ուժերով կլուծենք Արցախի հարցը: Թող հասկանան այդ գործիչները: Չեմ հավատում նույնիսկ, թե այս

երկրում նորմալ գործընթացներ են ընթանում: 1920-ին Հայաստանի Հանրապետությունը չկարողացավ գոյատեւել, որովհետեւ նրա դեմ ահռելի ուժեր կային, բոլշեւիզմը: Այսօր մենք աշխարհի հետ չունենք դիվանագիտական, տնտեսական կապեր, չունենք սեփական բանակ եւ շատ ու շատ այլ բաներ, որ անկախության հիմքն են կազմում: Համոզված եմ, որ եթե նույնիսկ անկախանանք էլ, Արցախը հայաթափ է լինելու, այսինքն, ինչ որ ուզում է Ազերբայջանը, մենք ինքներս կանենք:

Իսկ մենք պահանջատեր ենք: Զարմանալի էր նույնիսկ, որ 1988-ին մենք ասում էինք, թե Ղարաբաղը ուզում է ինքնորոշվել: Ոչ: Մենք պահանջատեր ենք: Մեզնից հող են վերցրել, տվել նրանց, հիմա ժամանակն է այդ հողը վերադարձնելու: Եթե մենք լինեինք նորմալ պայմաններում այսքան կազմակերպությունների եւ զինված ջոկատների առկայությունը սարսափելի չէր լինի: Եթե մենք ունենայինք պայքարի արդյունքը՝ Արցախը, հերն էլ անիծած, որքան ուզում են թող գզվռտեն: Նորմալ կառավարություն եւ խորհրդարան ունենալու դեպքում նրանց գոյությունը կդրվի հարցականի տակ: Այժմ ՀՀՇ-ն պնդում է, թե Կոնկուսը չաշխատող օրգան է, ինքը պիտի ազգի վիճակով զբաղվի եւ կարգավորի: Գուցե պետք է դիկտատոր ունենալ: Վերջին հաշվով այսքան կազմակերպությունների ստեղծումը խնդիրը դարձրեց շատ ավելի բարդ:

Յուրաքանչյուր ոք, ով հնարավորություն ունի զենք պահելու կամ ջոկատներ տնօրինելու, շատ լրջորեն թող մտածի, թե ինչ է անում ինքը երեւանում: Ուզում եմ ասել, տղերք, ձեր շտաբը տեղափոխեք սահմանամերձ գոտիներ: Եվ ուզում եմ ասել՝ եկեք թողնենք ամբիցիաները կամ հերոս երեւալու ցանկությունը: Վիճակն իսկապես անընդունելի է: Սա իրոք կտանի քաղաքացիական պատերազմի:

Յուրաքանչյուր ժողովուրդ վայելելու է իր ցանածի պտուղը: Անթույլատրելի է մտածել կամ սպասել, թե ինչ որ մեկը կգա ու մեր փոխարեն գործ կանի:

Իսկ բերդածորցիները թող վերադառնան իրենց գյուղերը: Դա է իսկական հայրենասիրությունը եւ բարոյականությունը: Ուզում եմ Արցախում գոնե 400 հազար հայ տեսնել: Դա իմ ամենամեծ երազանքն է:

Անդրանիկ Հարությունյան
Բերդածորի ռազմական խորհրդի նախագահ»

1990-ի մայիսի վերջին Հայաստանի Գերագույն խորհրդի ընտրություններում Հայոց համազգային շարժման անդամները մեծամասնություն կազմեցին եւ օգոստոսի 4-ին Լեւոն Տեր-Պետրոսյանը ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահ: Իսկ 1990-ի հուլիսի 25-ին Գորբաչովը ստորագրեց հրամանագիր «Չնախատեսված սպառազեն կազմավորումների ստեղծումն արգելելու եւ անօրինականորեն զենք պահելու դեպքում այն առգրավելու մասին», որը հիմնականում ուղղված էր Հայաստանի ու Ղարաբաղի դեմ: Հրամանագրով «ԽՍՀՄ տարածքում ստեղծված սպառազեն կազմավորումները, որոնք նախատեսված չեն ԽՍՀՄ օրենսդրությամբ, անօրինական են եւ ենթակա ցրման: Եթե նշված սպառազեն կազմավորումների գործողությունները սպառնալիք են ներկայացնում բնակչության եւ պետության անվտանգության համար, ապա ԽՍՀՄ ներքին գործերի նախարարը իրավունք ունի օգտագործել ներքին զորքեր, իսկ առանձին գործողություններում թույլատրվում է ԽՍՀՄ պաշտպանության նախարարության ստորաբաժանումների մասնակցությունը»: Նախատեսվում էր միջոցառումներ իրականացնել, որոնք կբացառեին զենքի, զինամթերքի, պայթուցիկ նյութերի, ռազմական տեխնիկայի եւ ռազմական այլ գույքի անօրինական պահպանումը եւ կրումը: Պոլյանիչկոյի եւ Սաֆոնովի վարչախումբը օրենքն օգտագործում էր Ղարաբաղի հարցը վերջնականապես վերացնելու համար: Օղապարանը սեղմվում էր, եւ փրկվելու համար Արցախում դիմադրությունը ուժեղանում էր:

Առնո Մկրտչյանի եւ Անդրանիկ Հարությունյանի տագնապները խորհրդանշեին, եւ նրանք գերմարդկային ճիգեր էին թափում ազգային-ազատագրական պայքարի կրակը բորբոք պահելու համար:

Արցախի շուրջ ստեղծված ռազմաքաղաքական բարդ պայմաններում 1990-ի օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց անկախության մասին հռչակագիրը: Հայաստանն արդեն ղեկավարում էին ոչ կոմունիստները, իսկ Ադրբեջանը դեռ «կոմունիստական-խորհրդային էր», եւ Մոսկվայի որոշումները, որոնք փաստորեն ադրբեջանամետ էին, անմիջապես արձագանքվում էին Ղարաբաղում:

Ամբողջ գիշեր Բերդածորի ինքնապաշտպանության խորհրդի նախագահ Անդրանիկ Հարությունյանը եւ ռազմական շտաբի պետ Առնո Մկրտչյանը քննարկում էին ստեղծված իրավիճակը:

Բերդածոր-Ստեփանակերտ ճանապարհը վաղուց է փակ, իսկ Լաչինի մատույցներում Օմօնը լկտիացել է: Բերդածորի բարձունքներում տղաները սկսեցին կրակի տակ պահել, գնդակոծել Լաչին-Շուշի ճանապարհը: Լաչինի ժողովրդական ճակատի հրամանատարը հեռա-

կապով Առնոյին կանչում է բանակցությունների: Հանդիպման վայրը ընտրվում է ամայացած Փոքր Խերխան գյուղի տեղանքը:

- Ճանապարհը բացեք, թե չէ ծորակը հող ու փոշի ենք դարձնելու,- բանակցությունները սպառնալիքով սկսեց Թաիրը:

- Չի իմացվի... Դուք էլ Բերդաձոր-Ստեփանակերտ ճանապարհը հանգիստ թողեք:

- Դուք որ ձեզ հանգիստ պահեք...

- Նախ դուք ձեզ հանգիստ պահեք,- ընդհատեց Առնոն,- եւ երկրորդ, սա բանակցելու ձեւ չէ, Թաիր: Դու անազնիվ ես: Օրենքը խախտել եկել ես գինված: Եվ երրորդ, ձեր շատով մեզ մի վախեցրու: Ոչխարը շատ է, հովիվը մեկ:

- Ձեր լազերային զենքո՞վ ես, հա, էդպես գոռոգ-գոռոգ խոսում:

- Հա, հենց լազերայինով:

- Տեսել ենք, ինչպես եք ուղղաթիռով Գորիսից ձեր Մեյդան տափում իջեցրել:

- Հա, իջեցրել ենք,- խաղի մեջ մտավ Առնոն:

- Թաիր, դու պարտվելու ես, որովհետեւ անազնիվ ես: Ես առանց զենքի եմ եկել, դու իմ դեմ ատրճանակ ես խաղացնում: Նայիր էն բարձունքներին. իմ տղաները գնդացիրը դրած ապասում են... այ, էդքան կարճամիտ եք... Ես խոսում եմ ինչպես հավասարը հավասարի հետ, դու էլ պիտի նույնը անեիր:

- Ուրեմն, ուզում ես ասել՝ ճանապարհը չեք բացո՞ւմ:

- Պայմանը մնում է ուժի մեջ: Հավասար կողմեր ենք...

Հայաստանից նոր համալրում էր եկել: Առնոն հաշիվը պահում էր, թե ինչքան աշխարհազորային է մտել-դուրս եկել: Գրեց անուն-ազգանունները. Սինասյան Արայիկ, Ամիրյան Հովհաննես, Երվանդյան Վաղո, Մանուչարյան Արամ, Մուրադյան Անդրանիկ, Խուրշուդյան Աշոտ, Ավետիսյան Ավետիք, Հովհաննիսյան Խաչատուր, Վարդանյան Ադամ, Գալստյան Գառնիկ, Շահբազյան Նորիկ, Խաչատրյան Կարապետ, Հակոբյան Հարություն, Գեւորգյան Գարիկ, Կապիկյան Մարտուն, Կարապետյան Կարո, Ամյան Հովհաննես, Սահակյան Վահե, Գրիգորյան Տիգրան, Մխիթարյան Սմբատ, Հովսեփյան Սամվել, Արսենյան Լեւոն... թիվը արդեն անցնում է 2300-ից: Վերջում, 1991-ի «Կոլցո» ռազմագործողությունից առաջ այն պիտի հասներ 3000-ի:

- Սաքո, հաղթանակից հետո բոլորին հավաքելու եմ Մեյդանում մեծ քեֆ եմ սարքելու, «Քոչարի» ենք պարելու...

- Էդքանին ոնց կգտնե՞ս:

- Կգտնեմ, Սաքո, կգտնեմ... Ազատ ժամանակ եմ ունենալու: Երանի էն ժամանակներին, Սաքո, դպրոցում դաս եմ տալու, մեր երեխաներին սովորեցնելու եմ անտառները, լիքը մասուր է, հոն է, հատապտուղ ու մրգեր են, կհավաքենք, կուղարկենք Հայաստան, արտասահման, էդ փողով ...

- Ձենք կգնենք, Առնո:

Առնոն շեղակի նայեց.

- Էն ժամանակ մենք հաղթած ենք լինելու, Սաքո, ինչ զենք... -Ու երկուսն էլ ուրախ ծիծաղեցին:

Սովորականի պես Առնոն նոր եկածներին քարտեզի վրա ցույց է տալիս պահակակետերը, բացատրում անելիքը: Ջոկատը ընդունելու պաշտոնական մասը ավարտվեց: Վարսիկ տատը սարի խոտերով սարքած թեյ բերեց, ուրցի հոտը բռնեց սենյակը: Կծոխուրով մուրաբան էլ դրեց սեղանին ու դուրս եկավ:

- Եթե Հայաստանի անկախությունը պահանջի, մենք պետք է պատրաստ լինենք զոհողության...

Վերջին բառի վրա քաղաքականությունից հեռու Պետրոսյան Հրաչիկը, որ մի քանդած ավտոմատ էր հավաքում, գլուխը բարձրացրեց.

- Ի՞նչ ասացիր, ախպոր տղա, չհասկացա, մի միտքդ պարզիր տեսնենք...

- Ասում եմ, եթե անկախությունը պահանջի, Ղարաբաղը պիտի զոհենք,- կրկնեց Հայաստանից եկած ջոկատի հրամանատարը:

Հրաչիկի քաղաքական «կողմնորոշիչը» Առնոն էր, իր համար բավարարիչ հեղինակություն: Ասում է գյուղը պիտի պաշտպանես, պաշտպանում է: Թշնամին գալիս է՝ քեզ սպանի, դու սպանիր, որ ապրես: «Զոհողություն» բառի վրա Հրաչիկը մեկ Առնոյին է նայում, մեկ եկած թարգմանչին: Առնոն էլ չէր շտապում խառնվել զրույցին, լսում էր, քթի տակ քմծիծաղում, յուղում ավտոմատը: Վերջացրեց, մի կողմ դրեց:

Առանց Ղարաբաղի Հայաստան չկա: Հայաստանի անկախությունը, երիտասարդ, այստեղ, այս ծորակում, այս փոքրիկ գյուղախմբում պիտի պաշտպանվի... - Երբ խոսքը գաղափարական պայքարին էր վերաբերում, կամ Ղարաբաղի խնդրին, Առնոն ոգեւորվում էր, պատմությունից փաստեր բերում, ասվածը հաստատում ու համոզում:

Հրաչիկը հանգստացած շունչ քաշեց, բաժակը վերցրեց ու մի հաղթական, խրոխտ արտահայտություն դեմքին աղմուկով ներս քաշեց տաք թեյը, ու կարծես թե արդեն շրջապատից անջատվել էր, ոչինչ էր լսում, ոչինչ իրեն հետաքրքիր չէր: Եկած «գաղափարախոսը» պատահական մարդ չէր, հավաքվածների մեջ միայն Առնոն գիտեր, թե ինչպես որ ջոկատը, որ խումբը քաղաքական ինչ հոսանքի է հարում, ինչ

կուսակցության անդամ է, ինչ քաղաքական շահեր է պաշտպանում։ Դա հենց այնպես, իմիջայլոց ասված կարծիք չէր, այլ որոշակի քաղաքական շրջանակներում ձեւավորված ու շրջանառվող մտայնություն։ Մտայնություն, որ եթե գերիշխող դարձավ, խիստ վտանգավոր է։ Դարաբաղի ճակատագիրը դարձյալ խաղաքարտի վրա է դրվում,- Առնոն ներքին անհանգստությունը երբեք ցույց չէր տալիս։

Եկածներից մեկին պահեց, ծանոթացրեց Սաքոյի հետ. թիֆլիսահայ էր, Առնոն նրան հանձնարարեց ՀՅԴ-ի 100-ամյակի առթիվ պլակատներ գրել։ Նորիկի, այդպես էր տղայի անունը, քիթումռութը առաջին հայացքից Սաքոյին դուր չեկավ, իսկ երբ նկարիչը պահածոն բացելուց-ուտելուց հետո հացի միջուկով միայն իր գդալն ու ափսեն մաքրեց, Սաքոն չհամբերեց.

- էդ ի՞նչ ես անում։

- Ես իմը մաքրեցի պրծա։

Սաքոն կատաղած նայեց, Առնոն քթի տակ խնդաց։

- Որ գամ, ամանները լվացած լինի,- ասաց ու դուրս եկավ։ Երբ մի քանի ժամից եկավ, ոչ ամաններն էին լվացած, ոչ նկարիչն ու Առնոն կային։ Մի քանի ժամից հետո մտան, Սաքոն վեր թռավ։ Առնոն կանգնեց երկուսի մեջտեղը...

Հաջորդ օրը նկարիչը հետ գնաց, պլակատներն էլ մնացին չգրված։ Առնոն ինչքան էլ փորձում էր թաքցնել, միեւնույն է, Սաքոյի հանդեպ համակրանքն ու ներողամտությունը զգացվում էր։ Ջիգյարով տղա է,- ասում ու փայլում էր։

Առնոն օրը ցերեկով Սաքոյին ու Խեչոյին վերցրեց, գնացին դաշտ։ Հրամանատարի ծեռքին քարտեզի նման ինչ որ բան կար, իր ձեռքով գծած, նայում էր գծագրին ու առաջ էին գնում։ Մի տեղ կանգնեց, ոտքով ցույց տվեց.

- Քանդեք։

Քանդեցին մի քիչ, ու հողը ներս լցվեց, բացվեց ստորգետնյա անցանցը։ Պատերը կարծր քարերից։ Հետո տղաներին տարավ ու ցույց տվեց ամբար-տնակները, որոնց մեջ կոլխոզը ցորեն էր պահում։

- Տեսնո՞ւմ եք էս հսկա գերանները,- ցույց է տալիս,- էս «ամբարները» հնում մեր պապերի համար պարսատիկի դեր են կատարել։

Սաքոն ու Խեչոն զարմացած լսում են։

- Հիմա էլ կարող ենք օգտագործել, եթե հարկ լինի։ Եռնակներ ենք դնելու ու շպրտենք գյուղից գյուղ։

Հետ եկան, եւ հենց մութն ընկավ, որպեսզի ոչ մեկը չտեսնի երեքով բեռնավորված շարժվեցին դաշտ, դեպի անձավը։ Յուրաքանչյուրի շալակին 70-80կգ բեռ կար։ Առնոն առջեւից լապտերով լուսավորում էր ճանապարհը։ Խաչիկը գնդլիկ էր, ծանրության տակ մեկ-մեկ գլորվում էր եւ Սաքոյի ժպիտը մթության մեջ չէր նկատվում։ Ջենքերը մտցրին անձավը, ճյուղերով մուտքը քողարկեցին, ապա հող լցրին։

- Առնո, որտեղի՞ց գիտեիր սրա տեղը,- հարցնողը Սաքոն էր։

- Պապս Դալամա Սահակն է ցույց տվել։

Միքայելը անտառաճանաչ, անգրագետ, խենթ Սահակի որդին, որ գյուղացի տնօրենն էր, թե ինչ է մտածել, հայրը չիմացավ, գուցե մտածել է որ տանը հինգ տղա է մեծանում, որ հրացանը պահելը անիմաստ ու վտանգավոր է, ժողովրդական խոսք է, չէ՞, պատից կախ հրացանը կկրակի. Սահակն էլ արդեն ծեր էր, հրացանը նրա ինչին էր պետք, հրացանը տարավ հանձնեց ոստիկանության Շուշիի ներքին գործերի բաժնին։ Երկու օր Սահակը չերեւաց, վեց տարեկան Առնոն էլ հետը։ Արվեստիկը անհանգստացավ.

- Գնում եմ մեղվանոց... Բան պատահած չլինի՞...

- Ոչ մի տեղ էլ չես գնում։ Գործիդ կաց,- կնոջ խոսքը կոպիտ կտրեց ամուսինը։ Գիտեր, որ հայրը խոցված ու խռոված է, հանդարտվի գոյու է։

Պապը թոռան ձեռքից բռնել ու տնից դուրս է եկել։

Դավաճան... դավաճան որդի... շան որդի...

Վեց տարեկան թոռը ոչինչ չէր հասկանում պապի մռնչյունից, կցկտուր բառերից։ Մեկ-մեկ հետ էր մնում, Սահակը շրջվում էր, բռնում ձեռքից ու համարյա քարշ էր տալիս։

Տարա՛վ... Հրացանս տարա՛վ... Տարա՛վ թուրքի՛ն տվեց... Դավաճան, դավաճան...

Թոռան աչքերը լցվել էին, պապին այդ վիճակում չէր տեսել, պինդ բռնել է ձեռքը, որ հետ չմնա, եւ մինչեւ հաջորդ առավոտ պապը թոռան հետ բառ չխոսեց, թոռն էլ հարցեր չտվեց։ Երեկոյան կողմ, երբ Սահակը ցախհատով սկսեց կտրտել ժայռի մոտ բուսած ծառաթփերն ու մացառները, փոքրիկը սկսեց հավաքել ու կապուկ անել։ Պապի մռնչյունները կամաց-կամաց հանդարտվեցին, արդեն աշխատում էր լուռ։ Երբ մացառները կտրտեց, մի անցք բացվեց։ Չոր խոտերից խուրձեր պատրաստեց, մի քանի անգամ ներս մտավ ու դուրս եկավ։ Մի քանի խուրձ էլ բերեց ճյուղերից տարավ։ Հետո երեխայի ձեռքից բռնեց ու ներս տարավ։ Փոքրիկի այքերը կամաց-կամաց վարժվեցին ու մուժի մեջ տեսավ փայտե փուլուսներից, ճյուղերից ու խոտերից սարքած անկողինը։ Պապի տաք-տաք մարմնի ջերմությունը գրկի մեջ կուլուլված թոռանը նինջ բերավ, իսկ երբ աչքերը բացեց, քարանձավի մուտքը փակած ճյուղերի

արանքից ներս թափանցած լույսի թույլ շողերի տակ տեսավ չոր անկողնում նստած պապի ուրվագիծը, որ նրան հեքիաթի հսկան թվաց... Վիշապաքարի աժդահան...

Երկու օր անց Բերդաձորի գյուղերը շրջապատվում են: Արգելվում են բոլոր շարժերը: «Կարմիր բերետավորները» սանրում են տեղանքը: Ամեն տան վրա 5-6 ավտոմատավոր զինվոր է կանգնում: Խուզարկումը կատարվում է շներով, որոնք դնչկալներով են: Տղաները գենքը գյուղից հանել էին: Առնոն փաստաթղթերի կապոցը հասցրել էր տալ Գրետային: Կինը փաթաթել էր ցելոֆանե տոպրակի մեջ, թաղել գոմաղբի թմբի տակ, կուտ շաղ տվել: Հավերը թափվել են ցորենի հատիկների վրա, սկսել քուջուջ անել, զինվորները կողքով անցել են չեն նկատել:

Ամուսինը Գառնիկը մի ռուս սպայի թեյի է հրավիրում, բայց սեղանին թթի օղի է ու տապակած հավ:

- Ի՞նչ եք ուզում ձորակից,- խոսք է բացում Գառնիկը:

- Լազերային կայանքն ենք փնտրում:

Ամուսինները դիտմամբ բազմանշանակ իրար են նայում.

- Հա՞...

- Ասում են հրանոթ էլ ունեք:

- Դե որ ասում են, ուրեմն կա:

Սպան չէր կարողանում լուրջն ու կատակը իրարից ջոկել:

Արմիկը գյուղամիջի նստարանին նստած՝ աչքը իրենց տան ճամփին է. հայրը մի ինքնաշեն ատրճանակ ունի, տեսնես հասցրե՞լ է թաքցնել: Խուզարկողները դուրս եկան, հետևից մայրը կանգնեց ատրճանների վրա՝ ձեռքերը կողքերին կանթած: ուրեմն ոչինչ չեն գտել: Երբ ամեն ինչ վերջանալուց հետո տուն գնաց, մայրը ծիծաղելով սառնարանի մսի մեջ խոթած ատրճանակը հանեց:

Մտան եփրեմենց տուն: Մեկը ձեռքը մեկնեց պահարանին, ու կնոջ ներքնաշորեր թափվեցին:

- Ամոթ է, մեծ ամոթ է, որ եկել կանանց ներքնաշորերն ենք ստուգում: Ալլահը մեզ չի ների, եփրեմ դայի,- օմօնականը հարեւան գյուղից էր եւ իրար ճանաչում էին:

Եթե ձեռքը մի քիչ էլ խոր ներս տաներ դուրս կքաշեր ԲԻՀ-ի կնիքը փաստաթղթերը, դրոշը, որ ժանանա հասցրել էր բերել - թաքցնել: Իսկ հեռակապը, երկու ավտոմատ ու նռնակներ Ռոզան թաքցրել էր տանիքի տակ, ծղոտ լցրել վրան, իսկ տղայի Լեւոնի փամփշտակալը կապել էր փորին: Երկու ռուս զինվոր բարձրացել-քրքրում են ծղոտը, եւս մի

լիչ ... ու կհասնեին գենքին: Ռոզայի սիրտը ծլոնգ-ծլոնգ եղավ: Այդ պահին մի զինվոր մոտեցավ.

- Տատի, ավտոմատ ունե՞ք:

- Չտո Լտո տակոյե,- ռուսերենով պատասխանեց:

- Նա՝ որ տը-տը-տը է անում,- զինվորը ցույց է տալիս կրակելու ձեւը:

- Ունենք: Ինչի՞ չունենք:

- Որտե՞ղ է, ցույց տուր:

- Վոտ գդես, վոտ գդես,- կինը անհանգիստ, որ հիմա ուր որ է կհասնեն զենքին, մի աչքը տանիքին, մի աչքը հարեւանի դռանը, ամոթը կորցրած ձեռքով ցույց է տալիս փորը, որին կապած է փամփշտակալը, հետո ոտքերի արանքը:

Զինվորը ձեռքը տանում է ճակատին մատով նշան անում իր կինը խելապակաս է, կանչում-իջեցնում է ընկերներին ու դուրս են գալիս տանից: Ժաննան, որ փողոցով դես ու դեն էր գնում, ու հետեւում, թե ինչ է լինելու, հանգիստ շունչ քաշեց:

Օմօնականները զինվորների հետ մտնում են հարեւանի բակը: Ռոզան գրանցում չունեցող հայաստանցի երեք տղաների Սամվելին, Սերգոյին ու Արամին տարել էր, տեղաշորերի մեջ պառկեցրել, մահճակալը տեղը տեղին հավաքել, ծածկոցները գցել, տնեցիներին դուրս սպել, դռան կողպեքը գցել:

Ո՞ւմ տունն է,- հարցրեց զինվորը:

- Հարեւանի:

Տան տերը ո՞ւր է:

Հարեւան գյուղ թաղման են գնացել:

Հետո ի՞նչ, տանը չեն, մտեք-ստուգեք,- պահանջեց մեկը: Ռոզան համոզվեց, որ սա ազերի է, ճանկեց օձիքը եւ ասաց մաքուր ադրբեջաներենով.

- Քյոփեղլի, ի՞նչ գործ ունես կողպած դռան հետ: Որ մի բան կորչի գրպանդ ես պատասխան տա՞ս,- ասաց ու հրեց:

Ազերին եւ զինվորները կնոջ հիրսից զարմացած թե վախեցած, մի քիչ էլ խանգարված կարծելով հետ քաշվեցին: Եվ գյուղը, եւ գյուղի շրջակայքը որոշակի շրջանագծով ստուգում են, բայց անտառի մեջ չեն խորանում, ինչ որ վախ են զգում:

Երկու օրվա ստուգման արդյունքը մի քանի որսորդական հրացան էր, մի քանի դանակ, մսագործի մի քանի թուր:

1990 թվականը իր վերջին շաբաթներն էր գլորում: Լրանում էր տարին, ինչ Պոլյանիչկոն ու Սաֆոնովը մարզկոմի շենքում նստած դարաբաղյան հարցն են «լուծում», որ չի լուծվում:

Այդ տարում ծերբակալությունները մեծ թիվ կազմեցին: 1915-ի թուրքական ձեռագրով փորձում են գլխատել Շարժումը, հոտը թողնել առանց հովվի, եւ սկսեցին մտավորականներից, առաջիններից մեկը ծերբակալվեց եւ Ռոստովի բանտ տարվեց «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրի տեղակալ, հետագայում ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը: Ստեփանակերտում ցերեկ եւ գիշեր շրջում էին տանկերը ժողովրդին ահաբեկելու նպատակով:

Շարժումն ընդհատակ էր անցել: Զենք էին սարքում, զենք էին առնում, պատրաստվում էին: Ծայրամասերում պատժիչ քաղաքականություն վարելու գործը դժվարանում էր. բնական պաշտպանական միջոցներ էին սարերը, ձորերը, անտառները, որտեղ պայքարի ոգին ոչ միայն չէր շիջանում, այլեւ բորբոքվում էր: Արցախի տարածքում ծայր է առնում պայքարի պարտիզանական ձեւը:

Բերդաձորը դարձել էր Արցախի թեժ կետերից մեկը, ապրում է երկակի կյանքով խաղաղ տնտեսական շինարարություն եւ ինքնապաշտպանություն: Անձնագրային ռեժիմի ստուգումներն ավելի էին խստացել:

Հեռակապով հայտնում են, որ գալիս են ստուգման, որ նրանց հետ են Շուշիի ազերի ղեկավարները, եւ որ պիտի արգելվեր նրանց գյուղ մտնելը:

Առնոն, Անդրանիկը, Ժաննան հրահանգներ տվեցին, թե ինչ պիտի արվեր ու Հայաստանից եկած ֆիդայիների հետ ձորն ի վար իջան ու մտան անտառները:

Կանայք բաձրացան խութը, Մեծ հայրենականի հուշարձանից մի քանի մետրի վրա, գյուղ մտնող միակ ճանապարհը հեռադրա-էլեկտրասյուներով ու գերաններով փակեցին, քարերի կույտերով էլ պատնեշը ամրացրին:

Շարասյունը եկավ, բայց տեսնելով պատնեշը, հեռու կանգնեց: Ռոզան առաջ գնաց ճիպոտը ձեռքին, իբր հորթն է քշում: Եվ առաջ է գնում, եւ աչքի պոչով գննում «հյուրերին»:

- Սալամ, բաջի, էդ ո՞ւր, - կանչեց մեկը մեքենայի միջից:

- Քո՞ռ ես, չե՞ս տեսնում հորթը քշում եմ,- Ռոզան դիտմամբ կոպտեցրեց ու ձեւացրեց, թե չի ճանաչում ՈՒԱԶ-ի մեջ նստած Շուշիի ոստիկանության ներքին գործերի պետին Մամեդովին: - Բա դու՝ ինչի՞ ես եկել:

- Եկել եմ ձեր դրությունը իմանամ,- խաղաղ տոնով, իբր զրույց է սկսում միլիցիոնը:

Գող, ավազակ քյոփողլի, էն որ երեք օր առաջ մեր 10 կովը գողացել են, մենք էլ իմաց ենք արել, ո՞ւր էիր, ինչի՞ չեկար, հը՞, էդ որ եկել ես գողերին գտե՞լ ես, մեր կովերը բերե՞լ ես,- մաքուր աղրբեջաներեն բառ-բառի վրա ձայնը բարձրացնելով, հերստվեց, ձեռքը մեկնեց մեքենայի մեջ նստած միլիցիոնին, ուսադիրը քաշեց-պոկեց:

Գնա, հեռացիր, երեւում է ղեկավար ես: Մեզ քեզ նման ղեկավար պետք չի: Գնա:

Մայրիկ, Շուշիի միլիցիոնն է, կարգին խոսիր,- իր արեւին իբր կարգի հրավիրեց վարորդը, չհասկանալով, որ կինը իր համար էլ «բաժին» ունի պահած:

- Հարամ լինի էն կաթը, որ դու կերել ես, տականք, թերմացք,- կինն ամբողջ հարազատ բարբառի ու մի քանի հայհոյանք տվեց ծծած կաթի համար:

Վարորդը շփոթվեց.

Ինձ որտեղի՞ց գիտես:

- Գիտեմ, բա չգիտե՞մ, հենց գիտես թե դու որ կաթիդ աղբյուրը ուզում ես ու էդ աղբյուրին թքում ես, մենք էլ անգիտա՞կ ենք: - Ձեռքերը կանթեց կողքին .- Սաթիկի տղան ես...

Եփրեմը վերեւից կամա՛ց-կամա՛ց մոտենում էր, ՈՒԱԶ-ը առաջ ոռմեցվեց, հասավ նրան, կանգնեց.

Այ քիշի, ես կինը ո՞վ է...

- Որբեւայրի մնացած, մարդը շուտվա՛ մահացած՝ կատաղած, հասարակ կին է, գործ չունեք հետը...

Ռոզան բարակ, նիհար, չորացած, իր ծեր տարիքին անհամապատասխան ավյունով, մարմինը ճապկե ճիպոտի պես օրորելով ձեռքի ճիպոտը թափահարելով հետ գնաց դեպի ժողովուրդը, որ դանդաղ, տատանվելով իջնում էր դեպի շարասյունը:

Շափաղաթ, պառկիր, շուտ, իբր քեզ սպանել են,- ասաց շատ ցածր այնպես, որ միայն տղամարդը լսի:

Շափաղաթը, որ 100կգ քաշ կունենար, լխկլխկալով ընկավ գետնին: Ոռզան ծկլթաց ու ծնկներին զարկեց.

Ժողովուրդ, հասե՞ք, Շափաղաթին սպանել են, հասե՞ք...

Կանայք հասկացան Ռոզայի միտքը եւ մի այնպիսի վայնասուն բարձրացրին, որ դժվար կջոկեին կեղծն ու ճշմարիտը: Շարասյան միջից մի մարդ դաշտային սանիտարական պայուսակը ձեռքին մոտեցավ. Ռոզան անմիջապես կողմնորոշվեց, սկսեց քարեր շպրտել.

Քյոփողլի, դուք եք սպանել, գալիս ես ի՞նչ անես...

Մարդը վախեցած հետ քաշվեց ու մտավ մեքենան:

Ռոզան նկատեց Շափաղաթի ժպիտը:

- Թաղված, հողեմ գլուխդ, բերանդ հավաքած պառկիր,- ասաց ու շարունակեց հարայհրոցը:

- Ասա, թող հետ դառնան,- հրամայեց Սամեդովը վարորդին:

Շարասյունը շրջվեց դեպի Շուշի:

Շարասյան մեջ միայն ազերիներ էին, ու հենց միայն թեկուզ խաղաղ ձևով Բերդաձոր մտնելն ու դուրս գալը մինչև Մոսկվա բոլոր մակարդակներով պիտի զեկուցվեր, պիտի դիտվեր որպես Ադրբեջանի իշխանության ընդունում: Ստեփանակերտում բոյկոտել, բայց ուշիուշով հետևում էին կազմկոմիտեի գործունեությանը եւ հնարավորության սահմաններում ձեռնարկում էին հակամիջոցներ:

Մինչդեռ Պոլյանիչկոյի կազմկոմիտեն շտապել էր դեպքերից առաջ ընկնել եւ գաղտնի զեկույցներ էր ուղարկել Բաքու, թե իբր դարաբաղցիները ստիպված ընդունել են Բաքվի իշխանությունը, թե հայերը սկսել են հանագործակցել, թե «քաղաքական ազդեցությունը վերականգնված է, եթե ոչ ամբողջ Լեռնային Ղարաբաղում, ապա առնվազն դրա տարածքի նշանակալի հատվածում»: Իսկ Պոլյանիչկոյի օգնական Սեյրան Միրզոեւը իր զեկույցում այդ օրերին գրում է, թե «Լեռնային Ղարաբաղի բնակչությունը հստակորեն ճանաչեց կազմկոմիտեի լիազորությունները»:

1990 թվականը վերջին շաբաթներն էր գլորում, իսկ Ստեփանակերտում, մարզկոմի շենքում տեղավորված կազմկոմիտեին չէր հաջողվել իրականացնել նպատակը, որին կոչված էր: Մի ամբողջ տարի, թե ժողովուրդը, թե տնտեսական ղեկավարները բոյկոտել էին ինքնակոչ իշխանությանը, ոտք չէին դնում տարածքը, որը մեկ տարի առաջ շրջափակվել էր փշալարերով ու հսկվում էր ԽՍՀՄ եւ Ադրբեջանի ՆԳՆ ստորաբաժանումների զինվորների խիտ շղթայով: Շենքից ներս մտնողը հայտարարվում էր «ժողովրդի թշնամի», «դավաճան»: ԽՍՀՄ պետական անվտանգության կոմիտեն, ԽՍՀՄ ՆԳՆ զորամասերը, ԽՍՀՄ զինված ուժերը, այսինքն խորհրդային ամբողջ պատժիչ ապարատը, բոլշեւիզմի փորձված միջոցներով փորձում են պառակտել Արցախյան Շարժման միասնությունը: ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության, բանակի ստորաբաժանումները, որ սարդոստայնի նման փռված էին Արցախի ողջ տարածքում, տեղեկատվության հուսալի աղբյուր էին Կենտրոնի ու Բաքվի համար: ՊԱԿը ամեն տեղ ուներ իր գործակալները, որոնք դիտում էին տեղաշարժերը, մտնում ժողովրդի մեջ, զենք ու

զինամթերքի մասին տեղեկություններ կորզում: Հետո գտնում են մեկին կամ խայծ են գցում, ասել տալիս, կամ քավության նոխազ են սարքում՝ խոշտանգելով թուրքական բանտի միջնադարյան եղանակներով, ու այս ձեւով ստեղծվում է մատնիչի, դավաճանի կերպարը: Այնինչ, խորհրդային կուսակցական բյուրոկրատական ապարատը փասարեն տեղյակ էր լինում այս ամենին:

Շարժումը պետք էր պառակտել, ջլատել...

Բեհի հերթական նիստից հետո Անդրանիկը, Առնոն, Սահակյան եղբայրը եւ Գալստյան ժաննան մնացին շտաբում: Առնոն փոթորկված էր.

Ի՞նչ գիտեին, որ Իգոր Մուրադյանը Բերդաձորից Ստեփանակերտ գնացող ավտոբուսի մեջ է:

Ըստ երեւույթին չեն հասցրել հաղորդել արտաքին տվյալները, բայց բերեց Անդրանիկը:

Դարգ է, մատնություն կա, եզրակացրեց Վրույրը:

Հարկավոր է գտնել վերացնել, շատ է խանգարում, ժաննան նման դեպքերում շատ խիստ ու ծայրահեղ միջոցների կողմնակից է:

Բայց դրանք ընդամենը կասկածներ են լինելու, ասաց Առնոն:

Իսկ եթե հաստատվի՞...

Եթե նույնիսկ հաստատվի, ժաննա, ես չեմ կարող իմ հայրենակցի դեմ ձեռք բարձրացնել...

Քաղաքական, առավել եւս ռազմական գործչին վայել չէ քո այդ էմոցիոնալությունը, համոզելու փորձեր է անում կինը, իսկ եթե ընդհանուր գո՞ծն է վնասվում:

Ոչ հերոսների, ոչ էլ դավաճանների քանակը չի պայմանավորում գոյության ընթացքը, ժողովրդի ճակատագիրը...

Իսկ ինչո՞վ է պայմանավորված...

Ուժերի իրական փոխհարաբերություններով... Հաղթում, հարատևում, զարգանում են նրանք, ովքեր անդադար պայքարի համար նպատակ մեջ ուժ ու ավյուն են գտնում: Բնությունն այս հարցում անհոգությունի չի ներում: Եթե թուլացար, ինքնահոսի թողեցիր ճակատագիրդ, վերջ հակադրված մրցակիցդ շահում է...

Ես համոզված եմ, ոչ միայն գանգում են, այլեւ անձնապես կապ են պահում, ազերիների հետ, հարկավոր է դատ ու դատաստան տեսնել, ասաց Սաքոն, որ ներս էր մտել ու լուռ ականջ էր դնում գրույցին:

Այդ հարցում, Յարամակյան Սարգիս, չի կարելի զգացմունքների տրվել, Սաքոյին դիմեց, բայց ասվածը բոլորին էր վերաբերում:

- Դե գնա՛ մեռիր...Տեսնեմ՝ գիրք կարդալով... -Տաքացած շպրտեց Ժաննան, իրար չէին կարողացել համոզել:

- Այսքանը ռազմաքաղաքական, Առնոն ժպտաց իր զինաթափող անսահման բարությամբ, այժմ անցնենք տնտեսական դաշտին...

Երեկոյան Մկրտչյան եղբայրները Առնոն, Արմոն, Արտաշը, Արթուրը շտաբից իջան ընդամենը մի քանի տասնյակ մետր հեռավորության վրա գտնվող հայրական տունը:

-Շան որդիներ...- Իր դժգոհությունն ու ուրախությունը այս ձևով արտահայտեց հայրը:

Խորթ մայրը արագ - արագ սեղանի պատրաստություն էր տեսնում:

- Գուցե դո՞ւրս գաս ծորակից, Միքայելը գիտեր, որ իգուր խոսակցություն է, բայց այնուամենայնիվ ներքին անհանգստությունը չթաքցրեց: Առնոն ձեռքը թափ տվեց:

- Առնո, գոնե էդ քաղաքական խաղերից զգույշ մնա, քո կուսակցությունը...- Առնոն թույլ չտվեց, որ Արմոն միտքը մինչև վերջ հասցնի, ընդհատեց.

- Իմ կուսակցությունը ժողովրդի ազատությունն է...

- Ժողովուրդ... ժողովուրդ,- քամահրանքով վրա բերեց Արմոն, էդ ժողովուրդը չէ՞ր, որ էն օրը երեսիդ շպրտեցին, թե իրենց համար ինչ ես անում... Դու մի կարգին պատասխան էլ չտվեցիր:

Առնոն եղբոր վրդովմունքի վրա ժպտաց, ուրեմն նա էլ իրեն չի հասկացել: Առնոն նրանց պատասխանել էր. «Ուրեմն դուք կույր եք, որ չեք տեսնում, թե ինչ եմ անում»:

- Մարգարեն իր երկրում պատիվ չունի: Ես պատվի չեմ սպասում, Արմո:

- Ղեկավարը դու ես, քո հանդեպ վերաբերմունքը ուրիշ է լինելու, եթե ... - կուսակցական ղեկավարի հեռատեսությամբ զգուշացրեց հայրը:

- Հենց էդ եթե չպիտի լինի...

Էլլադան տաքտաք թանապուրը դրեց սեղանին, եւ սարի ուրցի հոտը բռնեց սենյակը:

- Ծննդյան տոները մոտենում են, ինչ ծրագրեր ունեք, Առնո,- եւ ուսուցիչները, եւ գյուղացիները տեղյակ էին, որ Բիխը ծրագիր է մշակել ծորակի բոլոր գյուղերում Ամանորը շուքով, ժողովրդովի նշելու, բայց կնոջ նպատակը տհաճ խոսակցությունը շրջելն էր: Տղամարդիկ հասկացան ու տրվեցին ընտանեկան տաք ճաշի քաղցր զգացողությանը:

Ծովենհարթը Հին Շենի բոլոր թաղերի դիտակետում է: Տափարակի մի կողմում խնձորի մեծ այգին է, որ ընդամենը երեք տարի կոլխոզի

հասնագահ եղած տարիներին Միքայել Մկրտչյանը հիմնադրել է, Վերին հուրթից խողովակներով ջուր է բերել, ջրամբար սարքել, շենք կառուցել, որտեղ տեղավորվել են մշակույթի տունը, գրադարանը, բուժկետը, գյուղապետարանը: Շենքից վերեւ, որտեղից սկսվում է անտառը, մի քանի մետր ցածր որդու՝ Առնոյի սարքած պաշտպանական կառույցը բլինդաժն է: Տափարակում ակումբի առաջ գտնվող հսկա հացենի ծառը զարդարված է ու գիշերվա մթության մեջ ու շրջակա սարերի ուրվագծերում հեքիաթային տպավորություն է թողնում:

Ակումբի դահլիճում առանձին-առանձին դասավորված են սեղանները առատ հայկական խոհանոցի ամենատարբեր ուտեստներով ու ոգեպակ գինիով: Դարոցում երաժշտության ուսուցիչ Սելքումյան Արթուրը ձեռքով նշան է անում, եւ մանկական երգչախումբը երգում է Հայաստանի հիմնը.

Մեր հայրենիք թշվառ, անտեր,
Միշտ թշնամուց ոտնակոխ...

- Մաեստրո:

Արթուրը հասկացավ հրամանատարի պահանջը եւ չափ տվեց. Ելնում է հաղթական քայլերգը հզոր, հուժկու:

Մենք պետք է կռվենք եւ ոչ լաց լինենք,
Ազգին կորուստը զենքով ետ խլենք,
Այսքան դար լացինք, ո՞վ է լսողը,
Մեզ ի՞նչ շահ բերեց արցունքի ծովը:
Մոլի եւ երկչոտ թշնամին թող լա,
Երբ հայ քաջի դեմ կռվի դուրս կուգա,
Մենք վախեցող չենք մահից, տանջանքից,
Եվ ոչ ալ թուրքի դաժան գնդակից:

Երգն անծանոթ էր այս սարերում ապրողներին: Թուրքական արեւելյան ծորուն քաղցրմեղցր երաժշտությանը վարժված ունկերը ընդունում էին անսովոր երաժշտությունը: Բառերը ըմբռնում էին, իսկ երաժշտությունը միայն խտղտացնում էր նրանց թմրած արյունը... Ֆիդայինները ոգեւորված էին, երեխաների աչքերը հուզավառ էին: Մաեստրոն կրկնեց սովորեցրել էր «Արյունոտ դրոշ վեհ դաշնակցության», «Անդրանիկին», «Մեր հայրենիք», «Խանասորի արշավանքը», «Հրայր Դժոխքի կրակը» եւ այլ ազգայինհայրենասիրական եւ հեղափոխական երգեր:

Անեծք այն հորն, որ չի մղում որդուն,
Որ ազգի սիրույն նա թափե արյուն,
Ամոթ այն հային եւ բյուր նախատինք,
Որ ազգի սիրույն չի գործում բարիք:

- Ապրե՛ս, Մաեստրո, այդպես: Շատ լավ է, Առնոն բարձր բռնեց բաժակը խմբավարի աչքերի առաջ: Վերջինս վերցրեց իր բաժակը ու կենաց զարկեցին: Արթուրը հուզվեց, քանի որ նրան ծանոթ էր հրամանատարի ժլատությունը գովեստի մեջ:

Գիշերը կիսվել է, գինին առատ է, ուրախությունը շատ է... Նվագում են, պարում են:

Արթուրը մոտեցավ սեղանին, որի շուրջ նստած էր ռուս մայորը, որին որպես համակիր հրավիրել էին: Բաժակբաժակի խփեցին: Արթուրի դեմքը ինքնըստինքյան ժպտուն է, նույնիսկ լուրջ պահերին:

- Դու ժպտում ես, բայց երբ մենք հեռանանք, դու բարձրանալու ես սարերը...

- Այսինքն... ինչ ես ուզում ասել, Արթուրը իբր չի հասկանում մայորի ակնարկը:

- Դու այն չես, ինչ քեզ ներկայացնում ես...

- Այսինքն...

- Գրոհայինի տեսք ունես...

- Սխալվում ես: Ես արվեստի, երաժշտության մարդ եմ: Երեխաներին երգել եմ սովորեցնում:

- Միայն այդքա՞նը...

- Միայն ու միայն: Մի՞թե ես մարդասպանի նման եմ:

- Ներեցեք: Խուսանավեց մայորը:

- Իսկ դու ա՞յն ես ինչ ներկայանում ես:

Մայորը չընդբռնեց հարցը:

- Դու մեզ բարեկա՞մ ես, միտքը պարզեցրեց Մաեստրոն:

- Իհարկե, բարեկամ եմ:

- Եթե այլ հանգամանքներում ես ու դու հանդիպենք, դու կկրակե՞ս ինձ վրա:

- Կկրակեմ: Մայորը պատասխանեց երկար մտածելուց հետո:

- Ուրեմն, դու իմ թշնամին ես:

- Մենք ձգտում ենք խաղաղություն հաստատել...

- Բայց դու զինվոր ես, հրամայեն՝ խաղաղությունը մոռացած, կրակելու ես...

Ժաննան տեսնելով, որ Մաեստրոն երկար մնաց այն սեղանի մոտ, մոտեցավ, թեւանցուկ արեց ու մի կողմ տարավ:

- Սխալ է, նրան բերել նստեցնելը սխալ է...

- Դե լավ, Արթուր, ամեն ինչ մի բարդացրու:

- Մենք ճշմարտության համար հալածված ենք, մենք պիտի կռվենք... - Մաեստրոն խմած չէր, պարզապես խմիչքից թեթեւ ոգեւորվել էր: - Ինչո՞ւ է այն մայորը նստած այստեղ...

Ժաննան նրան քաշեց սեղանի մոտ: Արթուրի խմիչքից պայծառացած ուղեղը չէր հանգստանում.

- Իսկապես, ի՞նչ գործ ունի այստեղ: Եթե նրան թեւ ու թիկունք ես պարգևում, որ խմեցնես, քո կողմը քաշես, մի քանի համազարկ տա քո կողմից, դա սխալ է, դա շեղում է ճշմարիտ ճանապարհից:

Ժաննան հայացքով փորձում է սաստել նրան:

- Նա եկել է դագաղակով մեր գլխին տալու, եկել է տեղեկություններ հավաքելու, իսկ մենք նրան հավատում ենք, նրա հետ խնջույքի ենք նստում: Թշնամու հետ ինչ խնջույք, ինչ բան...

Խմիչքի սեղանի շուրջ սատանան ֆոֆոում է...

- Մենք մեղք ենք գործում,- շարունակում է Արթուրը.- Ադամը պտուղը կերավ, Եվան պտուղը կերավ, եւ մեղքը աշխարհ եկավ, շատացավ: Կայենը սպանեց Աբելին: Եղբայրասպանություն է... Մենք պիտի նստենք բանակցությունների, բայց ոչ խմիչքի սեղանի շուրջ...

Առնոն նկատել էր, որ Մաեստրոն մի տեսակ է դարձել ու մոտեցավ: Ժաննան վեր կացավ, որպեսզի շարունակի վարել երեկոն:

- Ինչոր կա՝ արդեն եղել է, ինչ-որ պիտի լինի՝ արդեն արված է... - Վերծանելու տեղը չէր, Առնոն խփեց պարզած բաժակը: - Ես տեսնում եմ հոգեւոր լույսը...

- Այո, հոգեւոր լույսով պետք է առաջնորդվենք, Մաեստրո, իր գիտակցի միտքը շարունակեց հրամանատարը,- այսօր ուրախության օր է, վերանորոգվելու օր, ուրախանանք, վերանորոգվենք, Մաեստրո:

Մաեստրոն մի բաժակ էլ դատարկեց ու գլուխը ձեռքերի մեջ առավ. «Ինչ լուսավոր մարդ է, չորս կողմը բամբասանք, մանրուքոտ խոսակցություններ, իրար ծախել, մի լվացքի մեքենայի համար հասնել մինչեւ մարդագործկում, բողոքել, թե Բերդաձոր հասած օգնությունը անարդար է բաշխվում, պառակտում, տարանջատում, նյութապաշտություն,- ինքը այս ամենից վեր, ինքը այս ամենից ազատ: Ինչու չէ, տեսնում է ամեն ինչ, չնկատելուն է տալիս: Այդքան խիստ ու բծախնդիր է գիտնականի ու զենքի հանդեպ, բայց սիրով ու հանդուրժող, ներողամիտ հանագյուղացիների հանդեպ, կարող է գլուխը կախել ու լսել տարեց մարդու հանդիմանությունը: Ինչ լուսավոր կերպար է», վերջին նախադասությունն ինքն էլ չնկատեց, որ բարձրաձայնել է, վերցրեց գինով բաժակը, բայց Սաքոն մտերմիկ բռնեց ձեռքը ու բաժակը կամաց տարավ սեղանին.

- Շատ ես տխրել, Արթուր, պետք չի...

- Աշխարհի վերջն է գալիս, Սաքո, նշանները կան...

1991 թվականի հունվարի 6-ին Սուրբ ծննդի առթիվ շտաբում հավաքվել, նշում են: Մարիենն չամիչով փլավ էր սարքել: Վառարանում կրակը մարում էր, Պավլիկը փայտ բերեց, ժանյան կքանստեց, խանձողներն ունելիով իրար քաշեց, վառարանի տակ դրած հին խունացած ամսագրից մի թերթ պոկեց, ճխլտեց, որ վառի, մեկ էլ «պահ» արեց ու ձեռքերով հարթեց թերթը.

- Տղերք, էս հո մեր Պավլիկն է: Նայեք, մի ամբողջ էջ նրա բանաստեղծություններն են: Մի էդ սուսիկ - փուսիկին տեսեք է՞...

Չխոսկան, ինքնամփոփ Պավլիկը ժպտում է, իսկ «Գարուն» հանդեսից պատռած թերթը ձեռքից-ձեռք է անցնում: Առնոն կարդաց ու կպցրեց պատին:

Ծննդյան տոներն անցել են, նույն շրջափակումը, նույն կրակոցները, նույն անհանգիստ վիճակը: Ավտոբուսային կապն էլ էր ընդհատված: Առնոն փորձում է կապվել Գորիսի հետ, չի ստացվում: Սաքոյին, Խեչոյին, Նորհաճենեցի Գագոյին վերցրեց, շտաբին ծառայող մեքենայով, որ վարում էր եղբայրը Արթուրը, իջան գյուղից 3-4 կմ ներքև, Մեյդան կոչվող տեղամասը, Վարդոտ տափ: Այստեղից, որ բաց տարածություն է, նույնիսկ խնձորեսկն է երևում, փորձեցին կապվել Գորիսի հրամանատարի հետ:

Ազերիները նկատել ու մոտեցել էին, որպեսզի շրջապատեն ու գերի վերցնեն: Տղաները սկսում են կրակելով նահանջել, բայց չեն կարողանում մոտենալ մեքենային, որը մնացել էր կրակի տակ: Արթուրը գնդակների տարափի տակ սողալով մի կերպ մոտենում եւ ՈւԱԶ-ը հանում է կրակի գծից: Տղաները կրակելով ու հետ-հետ գնալով անցնում են մի թմբի հետեւ: Անտառի միջից ազերիի գնդացիրը սկսեց աշխատել: Գագոն ուշադրություն չդարձնելով կանգնեց եւ ուղիղ կրակակետի վրա ավտոմատից կրակահերթ տվեց: Գնդացիրը լռեց: Առնոն Արթուրի ձեռքից ավտոմատը խլեց ու հրամայեց, որ ձորի միջով բոլորի հետ քաշվեն: Ոչ ոք հետ քայլ չարեց: Առնոն գոռաց.

- Ես կպահեմ, հետ գնացեք:

Սաքոն կողմնորոշվեց, կանգնեց Առնոյի կողքին, որ մյուսները հետ քաշվեն: Կուզեկուզ, սողալով խումբը հետ է քաշվում: Գյուղից կրակոցները լսել էին եւ օգնության եկել Արտաշը, Վալերին, Արմիկը:

- Արի ծխելը թարգենք,- շտաբում ասաց Առնոն:

Սաքոն զարմացած նայեց ընկերոջը.

- Ինչի՞: Մեզ էդ հաճույքից էլ զրկե՞նք:

- Կռվելիս զգացի, որ շնչառությունս մի տեսակ է:

Պայմանավորվեցին, բայց չծխելը տեւեց մի շաբաթ: Մի տասը օր էլ իրարից թաքուն ծխեցին ու խոստովանեցին:

Առնոն, թե որտեղից մի լայնեզր գլխարկ հանեց ու դրեց Սաքոյի գլխին: Սաքոն խաժ աչքերով շեղ արտիստիկ նայեց հրամանատարին: Գլխարկն այնքան էր սազում, որ Առնոյի աչքերը փայլեցին.

-Սաքո, նկատե՞լ ես, որ աղջիկները կողքովդ անտարբեր չեն անցնում: Ամուսնացած չլինեիր, Բերդաձորում մի լավ հարսանիք կանեինք:

Սաքոն ընկերոջ կատակին դերասանական մի դիմախաղով ու կեցվածքով պատասխանեց:

-Սաքո, գուցե մի շաբաթով գնաս տուն, ընտանիքիդ տեսության:

-Միտքդ էն գլխից ասեիր, ի՞նչ ես մի ժամ սարուձոր ընկել:

Առնոն հասկացավ, որ պնդելը իզուր է, 30 տարեկան, երեք փոքրիկ երեխաների հայրը այս անգամ էլ չի գնալու ընտանիքին տեսության:

Ջոկատի հիմնական կորիզի տղաներին, որ մշտապես Բերդաձորում են, Առնոն դժվարությամբ էր արձակուրդ ուղարկում: Այդ օրերին էր, որ Երեւանից Նորիկի մայրը անհանգստացած զանգել էր.

-Քույրդ ամուսնանում է, արի:

-Բա հիմա դրա՞ ժամանակն է,- կոշտ պատասխանել է տղան ու քրոջ հարսանիքին չի ներկայացել:

Շուշիի շրջխորհուրդը գրություն է ուղարկում Բերդաձոր, որոշումով, որ Բերդաձորի չորս գյուղերը միավորել են մեկ տնտեսության մեջ: Լուսե տեղեկացնում են, իբր ապահովում են հայ ու ադրբեջանցի բնակիչների անվտանգությունը ձորակում: Առնոն ու Անդրանիկը նամակը ետլանին դրած փորձում են կարդալ ու հասկանալ, երբ մտավ Արմոն:

-Ժամանակին եկար, թարգմանիր, ոչ մի բառ բաց չթողնես:

Շուշին վերջնագիր էր ներկայացրել: Որոշումը չընդունելու դեպքում պահանջում են թողնել ձորակը եւ խոստանում են ապահովել փոխադրամիջոցներով...

Առնոն գրապահարանից հանեց օրագիրը: Ինչքան ժամանակ է, չի հասցրել ոչինչ գրառել, «Բերդաձորի համար ահավոր, դժվար ժամանակներ են սկսվել... Ազգային-ազատագրական շարժման ալիքը կարծես թե վայրէջք է ապրում: Հարցին արմատական մոտեցում է պահանջվում, այլապես... Նախադրյալներ են ստեղծվում Գետաշենի ենթաշրջանի գյուղերի բռնի հայաթափման համար: Բերդաձորը գտնվում է ԽՍՀՄ եւ Ադրբեջանի ներքին գործերի նախարարության, ԽՍՀՄ լեռնակի եւ ՊԱԿ-ի զորամիավորումների հսկողության տակ, իսկ բնակ-

չությանը թվում է, թե նրանք եկել են պաշարման մեջ գտնվող բերդաքորցիների անվտանգությունը ապահովելու»: Երկրորդ մարդու շնչառությունը զգաց, շրջվեց ու Արմոյի սառած հայացքից զգաց, որ ուսի վրայով կարդացել է գրածը:

1991-ի հունվարը ցրտաշունչ էր: Անասունների կերը վերջացել էր, Մեծ Շենի նախագահ Սաֆարյան էդիկը կանչեց Գրիգորյան Սերոբին ու Նասիբյան Ալյոշային եւ ուղարկեց ծղոտ բերելու: «ԳԱԶ-53» բեռնատարներով երկու վարորդները պարետության զինվորական ուղեկցությամբ հասնում են Շոշ գյուղը, խոտը բարձած մտնում Ստեփանակերտ, բայց այստեղ պարետությունից ուղեկցող չեն տալիս:

-Գնանք, Ալյոշ,- առաջարկեց Սերոբը 45 տարեկան պինդ մի տղամարդ:

Ալյոշան չեմուչում արեց.

-Դեռ օր կա, կհասցնենք, սպասենք, գուցե կտան:

-Ես պատասխանատու եմ, գնանք,- ասաց Սերոբը ու իր մեքենան առաջ քաշեց,- հետեւիցս արի, չվախենաս:

Բեռնատարները հաղթահարում են Շուշի բարձրացող ոլորանները, շարունակում ճանապարհը զարմացած, որ քաղաքամուտքի մոտ կանգնած Օմօնը եւ զինվորականները չկանգնեցրին: Հենց որ այստեղից անվտանգ անցան, հանգիստ շունչ քաշեցին: Մինչեւ Լիսագորի ճանապարհահատվածը մնացել էր 4-5 կմ: Ալյոշան նկատեց, որ Սերոբի մեքենայից ծղոտ է թափվում, սեղմեց ազդանշանի գլխիկը: Սերոբը կանգնեց, գլուխը հանեց եւ ասաց.

-Անցնենք մեր կողմերը, էնտեղ խրծերը կամրացնենք:

Ալյոշան գնում էր 50 մետր հեռավորության վրա, որպեսզի կիպը, որ ընկնի, մեքենան չվնասվի: 100 մ էլ գնային, Լիսագորից կանցնեին Անցան ոլորանը ու հասկացան, թե ինչու Շուշիի անցակետից կարողացել են հանգիստ անցնել, ուրեմն, հաղորդել են հաջորդ կետին Տրակտորը կանգնեցրել էին մեջտեղը, ճանապարհը կտրել, ամբոխն էլ հրացաններով, քարերով զինված սպասում էր: Մեքենաները շրջել-փախչելը անհնարին էր: Նախագահն ասել էր ինչքան հնարավոր է կբեռնեք, անասունները սոված են, իրենք էլ վեց շարքով, 160 խուրձ դարսել էին: Ալյոշայի մեքենան ամբոխին դեռ չէր հասել, ճանապարհն էլ լայն էր, մեքենան շրջեց ու հետ փախավ: Քշում էր, ուզում էր թեքվել Քարինտակ գյուղը, բայց Լիսագորից հաղորդել էին, որ մեքենաներից մեկը փախել է, եւ Շուշիից մի ՈՒԱԶ ընդառաջ եկել ու փակել էր Քարինտակի խճուղին: Ավտոմատներով կանգնել էին մայրուղու երկու եզրերին: Ալյոշան դանդաղեցրեց ընթացքը, իբր կանգնում է ու հասնելով նրանց՝ ոտնակը սեղմում, արագություն է վերցնում: Առջեւում ոլորան էր, նախքան կհասցներ թեքվել, ավտոմատների կրակահերթից անվադողերը ծակծկվում են, մեքենան շրջվում է: Մի ուժեղ ծեռք վզակոթից քաշեց ու հանեց: Շրջապատել, ծիծաղում ու ծաղրում են.

-Յազըխ էրմանի, հարա՞ գաչըրսան... Դաշալտը՞, Ստեփանակե՞րտ...

Հագի նոր բաճկոնը հանեցին, գրպանի հարյուր ռուբլին վերցրին: Շուշիի ոստիկանության բաժանմունքում ձեւակերպեցին՝ 30 օրվա կալանք, առանց բացատրելու թե ինչի համար, ու հայ վարորդը հայտնվեց թիվ 7 կալանախցում, չոր տախտակամածի վրա: Հենց աչքը ուզում էր փակել, մկները սողում էին մեջքով: Յոթ օր հաց չկերավ, հացը մանրմանր փշրում էր, որ մկները բավարարվեն՝ իրեն չմոտենան: 30-րդ օրը ռուս մի մայոր մտավ ու ասաց.

-Ժամկետդ երկու ամիս էլ են երկարացրել,- եւ տանում են հարցաքննության:

-Ինչի՞ համար եք բռնել, գյուղացի մարդ եմ, վարորդ:

-Հայ ես, պիտի մեռնես,- ասաց ազերի քննիչը:

-Գյուղում տուն ունե՞ս:

-Ունեմ:

-Թող, գնա Հայաստան:

-Հորսմորս գերեզմանները թողնեմ գնա՞մ, մի ամիս լռել էր, բայց այնքան էին ծեծել, որ արդեն լեզու էր բուսել:

-Միեւնույն է, մնաք էլ, ձեզ կոտորելու ենք: Ընկերոջդ գրպանում նռնակ է եղել, քննիչը ստում էր, Ալյոշան հասկացավ, որ գործ են սարքում:

-Քեզ մոտ մարդ է նստած եղել, փախել է:

-Ես մենակ եմ եղել:

-Բա ինչու ես փախել:

-Հարայիրոց կար, թափվել են առջեւից գնացող մեքենայի վրա՝ փախել եմ:

-Մեքենայիդ մեջ զենք է եղել...

Ձեռքերին շղթա դրեցին, հանեցին բակ: Ազերի քրեականները բակում ջարդում են. կողոսկրերը կոտրվեցին, քթի ոսկորը ջարդվեց, արյունը տաքացրեց ծոցը: Երկու տասնյակ հայերի եւս խցերից հանեցին ու ջարդուխուրդ արեցին: Նրանց մեջ Քաջավանի տղաներն էին, որոնք խցում իրեն սրտապնդիչ խոսքեր են ասել: Բոլորին տարան օդանավակայան: Ուղղաթիռի մոտ նորից ջարդեցին:

Բայիլի բանտում գցեցին մի խցի մեջ, ուր ազերի կալանավորը առաջին օրը հացը, շաքարը կիսեց, երկրորդ օրը բանտի ղեկավարության առաջ հարց բարձրացրեց, որ իրեն պատիվ չի բերում հայի հետ նստելը, եւ պահանջը հարգվեց: Նորից Քաջավանի տղաների հետ է: Դագանակով Քաջավանի տղաներից մեկին այնպես խփեցին, որ ուշագնաց եղավ: Ում այդ օրը շատ էին ծեծում, ընկերները հացի կտորը գիջում էին:

Նասիբյան Ալյոշայի դատը եղավ Բաքվում. զենք պահելու, ավազակություն անելու համար հայ «գրոհայինին» դատապարտում են 10 տարվա ազատազրկման: Մեկ տարի 5 ամիս նստեց ու դուրս եկավ ֆիզիկապես հաշմված:

... Իսկ Սերոբին տանջել ու խոշտանգել էին: Ոտքերը, ձեռքերը կոտրատված էին, ականջները կտրած, ատամները փշրած, մարմինը դանակահար, գլխին հրացանի 12 գնդակ արձակած: Սերոբի գազանաբարո սպանությունը ծորակում ահ ու սարսափ էր առաջացրել: Բնակիչները նույնիսկ գյուղիցգյուղ վախենում էին գնալ: Ազերիները հենց այդ նպատակն էին հետապնդում:

1991 թվականի հունվարի 6-ն էր. Բերդաձորը ընդառաջ էր գնում իր ճակատագրին:

Շեկ Անդոն գիշերը մնացել էր շտաբում, շորերով պառկել էր Առնոյի մահճակալին (հրամանատարը գործով Ստեփանակերտ էր գնացել), չկարողացավ կարգին քնել, ու դեռ արեւը կարգին չբարձրացած, դուրս եկավ, շտաբի առաջ ընկուզենու վրա դրած ձայնարկիչը միացրեց: Հարությունյան Անդրանիկի մտահղացումն էր. այնքան հնչեցնել, մինչեւ որ բնակիչներին հայկական երգ ու երաժշտություն սիրել տան:

Իբրեւ արծիվ սավառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք, երկիր տենչավառ,
Քաջ անունդ պիտի հիշվի դարեդար,
Հսկա լերինք քեզ ապավեն, Անդրանիկ:

Մինչ երգը տարածվում էր համատարած լռության մեջ Մուրադյան Անդրանիկը ներս ու դուրս էր անում, ու սիրած երգի մեղեդին անգամ նրան չէր հանգստացնում: Երգի վերջին տողերն էլ հնչեցին ու մարեցին.

Հայաստանի սոխակները քեզ համար,
Թող դայլայլեն գիշերցերեկ անդադար...

Շեկ Անդոն կարծես թե հնչոր բանի էր սպասում: Արդեն երկրորդ երգն էր պտտվում.

Մեծ մարդասպանը սաստիկ զայրացավ,
Հայեր ջնջելու հրաման տվավ...

Ինչի որ սպասում էր, շատ չուշացավ. հինգ - վեց հոգի հաղթահարում են քարքարոտ ճանապարհը, եւ առջեւից քայլում է գյուղի ամենամեծ դեմագոգը: Շեկ Անդոն աստիճանների վրա կանգնած, հայացքը պտտեցնում էր շրջակա սարերով, անփույթ, անտարբեր ծեւանում, բայց նյարդայնությունից ոտքերն արդեն աջ ու ձախ ճոճվում էին:

-Շատ է բարձր, ձայնը իջեցրու:

-Իսկ ինչո՞ւ:

-Երեխաների հանգիստը խանգարվում է, քնահարամ են լինում:

-Թե՞ ձեր հանգիստն է խանգարվում, կծու հեգնեց:- Եթե երեխաների քունն է խանգարվում, բա ինչո՞ւ մայրերը չեն եկել, Անդոն մի աստիճան իջավ:

-Դդ ոնց եղավ, որ բոլորիդ թոռների քունը միանգամից խանգարվեց, միասին էլ բողոք եք եկել, ծաղրալից տոնի մեջ կռվի երանգներ են ոռդոսկում:

-Բա ձեզ «դաս տվողը», ձեր մեծավորը ո՞ւր է, հը, դավագրգռում է ասում:

Եկածներն իբր ականջկը չեն հասկանում:

-Չէ, պատճառը խոխեքը չեն, Անդոն Թալինի ջոկատի մյուս տղաներից ավելի երկար էր մնացել ծորակում եւ բարբառային բառեր էր օգտագործում կամ ծաղրելու, կամ ծիծաղեցնելու համար: Շատ էր կապվել ծորակին: Դարաբաղը, որ նախկինում նրա համար ընդհանուր հասկացություն էր, այժմ ամփոփված է Բերդաձորի գյուղախմբի եւ անվան հետ: Տղան վերջին ամիսներին դարձել էր դյուրագրգիռ, զգում էր վերահաս վտանգը, տեսնում էր այն պառակտումը, որ առաջացրել է քաղաքական փոփոխված իրադրությունը:

-Պատճառը խոխեքը չեն, չէ՞, ձեր ականջները մուղամի են տվոր:

-Մենք միայն ասում ենք՝ ձայնը իջեցրու:

-Պատճառը:

-Քանի անգամ պիտի ասենք, արդեն ասել ենք, էլի, հազար անգամ պիտի կրկնե՞նք:

-Ճիշտը չեք ասել: Ստում եք: Ուզո՞ւմ եք, ես ասեմ, վախենում եք էն մարի հետեւում ազերին լսի: Լավ իմացեք, բարեկամությունը վերջացած է: Էս հողի վրա միշտ էս երգն է հնչելու, ուզեք, թե չուզեք: Մեր հայ խոխեքը պիտի տվորեն վառոդի հոտին, ավտոմատի ձայնին, ֆիդա-

յական երգերին: Անդրանիկ զորավարի ոտնահետքերը դեռ մնում են
ես կածաններում...

-Զաբուդից հետ է դառել, հնչեց վեհերոտ մի ձայն:

-Ո՞վ էր, ով էր խոսողը, էդ խելոքը ո՞վ էր, ապառնալից առաջ եկավ: -
ես էս գյուղը առնետներից ու կարմիր բոլշեւիկներից կմաքրեմ... - Ան-
դոն արդեն կորցրել էր ինքնատիրապետումը:

-Ես ձեզ կգնդակահարեմ, ասաց ու զգաց, որ սայթաքում է:

-Մինչեւ դու մեզ գնդակահարես, մենք քեզ կհանձնենք...

-Ո՞ւմ... Ո՞ւմ կհանձնես, ասա, դե ասա, Անդոն գոռում ու ատրճանա-
կը թափահարում է ծերունու քթի տակ: - Կարծում եք էս ամբողջը կա-
տակ է, հա՞, կվերջանա, քիրվաները կգան, ձեր բարեկամությունը կշա-
ռունակվի, հա՞... - Տղան ինքը նրանց մտքերը շարադրում, շարադրա-
ծի հետ բանավիճում էր: Մոռացեք, դա լինելու բան չէ:

-Է՞, ի՞նչ ես է՞ գոռգոռում, մենք ասում ենք ձայնը իջեցրու: - Ծերու-
նիներից մեկը առաջ եկավ ու կուրծքը ցցեց:

-Հա՞, Անդոն իրեն հավաքեց, մանավանդ հիշեց, որ Առնոն խիստ
բարկանալու է կատարվածի համար եւ անցավ մեղմ տոների.

-Գալիս են ձեզ սպանեն, դուք խաբար չեք:

-Մենք արյուն չենք ուզում:

-Ձեր ուզելով չի է՞, արյունն արդեն բերել ձեր տան շեմին են քսում,
չեք հասկանում:

-Հասկացողը մենակ դու ես, հոխորտաց ծերունիներից մեկը:

Անդոն վրա քշեց, խումբը հետեւեց գնաց:

-Երգը դուրներդ չի գալիս, հա՞... Մոսի քեռի, ասում ես Կալաղարա-
սին ավելի սիրուն անուն է, քան Բերդաձո՞ը...

-Ինչ ես է՞ կպել, աչքս բացել եմ մեծերից էդ անունն եմ լսել:

-Քո մեծերից չգիտեմ ինչ ես լսել, բայց քո նախապապերը էս հողը
Բերդաձոր են կոչել, օտարը եկել՝ օտար անուն է կպցրել:

-Ինչ ուզում է թող կոչվի, մենակ թե կռիվ չլինի, խուսանավեց
ծերունին:

-Գնացեք ու ականջներիդ օղ արեք, էս երգերը էս ձորակում հնչելու
են, էն էլ բարձր... Գիշերվա մղձավանջը բարձրացել ու ճնշում էր հո-
գուն: Զայրույթը դեռ երկար քլթքլթում էր: Կռիվ սարքելուց անգամ
տրամադրությունը չբացվեց: Առնոն գա, կհարցնի, մի քանի օրով կգնա
Ստեփանակերտ: Մի ամիս առաջ թանգարանում ծանոթացել է մի աղջ-
կա հետ, անգլերենի դասեր է տալիս դպրոցում, ղարաբաղցի է, վերջին
մտքի վրա, որ տարբերակեց, ծիծաղը եկավ, հայուհի է, էլի, ինչ տար-
բերություն: Անպայման պիտի հանդիպի նրան:

Ձյունը հալվել, ու դիմացի սարալանջին հողը տեղտեղ բացվել էր:
Բանի օր է դիրքերից կրակոցներ չեն լսվում, եւ այս հարաբերական
անդորրի մեջ ինչ որ չարագուշակ բան կար:

Օրն ավարտվել էր, Ալվարդը աշակերտների տետրերը ստուգել ու
մի կողմ էր դրել, բայց քունը չէր տանում: Մտածեց մտքերը թղթին
հանձնի, գուցե սիրտը թեթեւանա: Հանեց օրագիրը, որ մի ընդհանուր
աշակերտական տետր էր ու իր մանրիկ ձեռագրով գրեց.

«Ինչեր ասես, որ չեն կատարվել այս 7 ամիսներին, սարսափելի է
սպանում են անմեղ մարդկանց, սպանում են ոչ թե կռվի դաշտում, այլ
հանդում, ճանապարհներին: Եղիշին երանի են տալիս, որ նա գոնե ար-
ժանացավ հարազատ մի բուռ հողի: Ինչ է սպասվում մեզ: Արդյոք գել
ու գազանի, անգղ ու ագռավի բաժին չենք դառնա: Եղիշից հետո Տաս
Ներսեսի հրդեհը, Չոբանյան Նանաշի վառվելը իր տան մեջ կենդանի-
կենդանի... Սրան հետեւեց էլ ավելի դաժան՝ Սամվելի ու Վաղինակի
սպանությունը:

Այսօր 1991 թվականի փետրվարի 23-ն է, ես կասեի տխրահռչակ
Սումգայիթ բանակի օրն է: Հուսահատությունը պատել է մեզ: Խորհրդային
զինվորները մեզ են ստուգում, մեզ են սպառնում, մեզ են կալանում,
մեզ են մեղադրում:

Հունվարի 8-ին Սերոբին գազանաբար սպանեցին: Ալյոշայի տեղը
գիտենք, անհայտ է: Զինվորները լպիրշացել են, ստուգումներից հետո
մի շաբաթ չենք կարողանում տները կարգի բերել: Օ՜, ինչպիսի զզ-
վանք եմ զգում նրանց հանդեպ: Եվ սա է խորհրդային զինվորը: Ստե-
փանակերտում դրությունը ավելի վատ է: Շուկան ու խանութները դա-
տարկ են, գներն էլ՝ ահավոր: Երկաթե ջղեր է հարկավոր դիմանալու
համար: 1988-ին ինչ հավատ կար: Երեք տարի է անցել: Զինվորների
վրա հույս դնելը հիմարություն է: Նրանք էլ ավելի են սրում իրավիճա-
կը: Երազում ենք գոնե մի օր հանգիստ քնել- վերկենալ: Վաղվա օրը
անորոշ է: Տեր Աստված, փրկիր մեզ այս վիճակից:

Ինչ իմանաս գուցե մի լույս բացվի»:

Հեկ Անդոն շտաբից հեռախոսով պահակակետերին տեղեկացրեց,
որ գալիս են խուզարկության: Փաստաթղթերը եւ ավտոմատը տվեց
Վարսիկ տատիին ու հետ եկավ, շտաբում նստեց: Ֆերմայից Թալինի
գյուղատի տղաներից երկուսին՝ Սարիբեկին ու Հրանտին հայաստանյան
գրանցման համար կալանել էին: Ձյունը նոր էր հալվել, աշնանացանը

10 սմ բարձրացել էր, հետքեր չկային, բայց ստուգողները գնացին ուղիղ թաքստոցի վրա ու հանեցին զենքերը:

Անդոն մտավ Շամոյենց տուն, շորերը փոխեց, հագավ մի հին շալվար ու մի հին հովվի բաճկոն, տեղտեղ պատռված, ու երկուսով կանգնեցին խանութի առաջ:

- Անձնագիրս ստուգեն՝ հաստատ վերցնելու են, Շամո, ես ինձ գժի տեղ եմ դնելու:

- Չի անցնի:

- Ուրիշ ելք չունեմ:

Ավագ սպան երկու զինվորի հետ մոտեցավ: Անդոն մի աչքը փակեց, մյուսը՝ երկնքին հառեց, ու անճոռնի անճոռնի ծամոն է ծամում:

- Խանութը ե՞րբ են բացում, հարցրեց զինվորը ու ավտոմատի կոթով խփեց Անդոյի վզին: Սա ծամածռվեց ու խաղը շարունակեց:

-Չես տեսնո՞ւմ, որ խելապակաս է, ինչ ես կպել, ասաց սպան:

Զինվորը թքեց Անդոյի վրա.

-Բոլորիդ պիտի քշել...

Անդոն նորից ծամածռություն արեց: Ստուգողները հեռացան: Հրանտին ու Սարիբեկին ձեռքները ծոծրակներին դրած գերու կարգավիճակով, տարան գյուղից վերեւ ՈՒԱԶի մեջ խոթեցին: Կանայք վայնասունով մոտեցան, բայց ոչինչ չօգնեց:

Նույն օրը անձնագրային ռեժիմի ստուգում անցկացրին նաեւ Մեծ Շենում: Մութն ընկել էր, եւ Հարությունյան Մայորը գնում էր ֆերմա, որ տղային՝ Վարդանին փոխարինի: Ճանապարհի վրա, մինչեւ ֆերմա հասնելը զինվորները լուսարձակները ուղղում են նրա վրա ու հրամայում, որ կանգնի:

- Նստիր գետնին:

- Մի հասակիս նայիր, մեծ մարդ եմ, ո՞նց նստեմ, ու Մայորը նայեց սառույց կտրած ձյանը:

- Չենդ կտրիր, հայրիկ, թե չէ՝ կգնդակահարեմ:

- Էլ ինչ հայրիկ, որ ձենս պիտի կտրեմ:

Ավտոմատը պահում են ճակատին, եւ մարդը նստում է գետնին: Երկու ժամից հետո ֆերմայից Վարդանին էլ են բերում եւ բանտարկում ակումբում:

Մի շաբաթ անց Մոսկվայից Ստեփանակերտում աշխատող քննչական խմբից եկան նախագահի գրասենյակը, կանչեցին Առնոյին:

- Մկրտչյան, դու բացահայտված մարդ ես: Վերջ տուր քո գործունեությանը: Ընտանիքիդ համար վատ վերջաբան է լինելու:

Առնոն լուռ լսում է:

- Դու ֆիզիկայի ուսուցիչ ես ձեւանում, բայց պատմություն ես սովորեցնում:

- Չեմ ձեւանում, ֆիզիկայի ուսուցիչ եմ: Եվ իմ ազգի պատմությունն էլ եմ պատմում:

- Քո գործունեությունը հայտնի է դեռ ուսանողական շրջանից: Նույնը շարունակում ես, տեռորիստական գործունեությամբ ես զբաղվում:

- Սխալվում եք, մենք միայն մեր հողն ենք պաշտպանում:

- Գնա Հայաստան, կյանքդ փրկիր, Ղարաբաղի տարածքից դուրս կգ. Քո ամեն քայլը հայտնի է... Քննիչի ձայնի մեջ համակրանք կար:

- Սա իմ ծննդավայրն է: Չորակից դուրս չեմ գալու, եթե նույնիսկ մեռնեմ մնամ:

- Լավ մտածիր: Խորհուրդ եմ տալիս եղած զենքերը հանձնեք ու գնաք.

- Դուք արդեն հոգնակիի անցաք...

- Այո, ասածս ամբողջ բնակչությանն է վերաբերում: Կազմակերպված, առանց զոհի դուրս գալը գուցե նախընտրեի՞ք...

- Մենք այս հողը չենք թողնի...

- Սատանա... Գնդապետը զարմանքը չզսպեց: Մինչ նոր հանդիպում:

- Հույս ունեմ, որ այս ձորակում հանդիպումներ դեռ շատ կունենանք, Առնոյի խոսքը երկիմաստ էր:

Երեկոյան շտաբում Առնոն Անդոյին պատմեց առանձնազրույցը:

- Սրանք խաբար չեն, թե մենք ինչպես ենք պատրաստվում:

- Իսկ գուցե հենց խաբար են, դրա համար... էս հողից ուր պիտի գնամ: Մենակ էլ մնամ կկռվեմ մինչեւ վերջ:

- Մենք էլ քեզ հետ, Առնո:

Հրամանատարը սրտի ծակոց զգաց ու ձեռքը տարավ դեպի կուրծքը: Անդոն վալիդոլ տվեց, դրեց լեզվի տակ:

- Առնո, արի շախմատ խաղանք, Անդոն խաղալ բացարձակ չգիտեր, սարսափելես ուզում էր ցրել ընկերոջ վատ տրամադրությունը: Առնոն թագերը շարեց, ինչոր քայլեր արեց.

- Անդո,- ձեռքով խփեց տախտակին, քարերը շաղ եկան, ես սրանց հետքով եմ գնալու:

Առնո, կարո՞ղ է փոքի համար են թաքստոցների տեղը հայտնել:

Չգիտեմ:

Գուցե անձնական թշնամությո՞ւն է:

Չգիտեմ: Թաքստոցը ծախողը ազգն էլ կծախի: Բայց երանի նրան, ով կտեսնի ազգի ապագան...

Կեսգիշերն անց էր, հրամանատար ու զինվոր պատեպատ են խփվում:

Առնո, բեր մազերդ սարքեմ:

Առնոն չէր սիրում հայելու մեջ նայել, հարդարվել:

- Նայիր, մազերիդ մեջ սպիտակը ինչքան է շատացել, ու հայելին բռնեց դեմը:

- Անդո, մենք բոլորս պիտի երջանիկ լինենք, որ պահ է ստեղծվել ազգին ծառայելու,- ասա մի պահ լռելուց հետո խնդրեց.

- Երգիր, Անդո:

Աշխարհ սարսափ հայի ահը,
Գետին ընկավ թուրքին գահը...
Գինի լից, ընկեր ջան, գինի լից...

- Անդո, Թեհլերյանը 20 տարեկան ուսանող էր, որ...

Երկուսն էլ շորերով թիկն տված հագիվ քնել էին, լուսադեմին հեռախոսը զնգաց: Երկուսն էլ վեր թռան:

- Սաբահն խեյիր, Առնո, Շուշիի կուսշրջկոմի քարտուղարն էր:

- Թող լույսը բարի լինի, ադրբեջաներեն պատասխանեց Առնոն: Հետո երկուսն էլ անցան ռուսերենի:

- Թողեք դուրս եկեք:

- Գնալու տեղ չունենք: Մենք մեր տանն ենք:

- Էդ գործը վատ է վերջանալու... Գալու ենք...

- Եկեք...

- Տես, չփոշմանես, ազերին դրեց հեռախոսը:

Վերջին իրադարձություններից Առնոյի նյարդերը պրկվել էին, սրտի ծակոցները դարձել էին հաճախակի, ու կարծես միանգամից ծերացել էր մի 10 տարով:

Երկուսով դուրս եկան, կանգնեցին աստիճանների վրա: Լեռնային սառը օդը խփեց դեմքներին ու քնատության հետքերը տարավ...

Անդրանիկը Արմոյին կանչեց շտաբ.

- Մեքենադ պատրաստիր, գնում ենք: Գործ կա:

Ստեփանը, Սաքոն, Խեչոն էլ են նստում մեքենան: Տղաների կցկտուր խոսակցությունից Արմոն հասկացավ, որ Մեծ Շենում տղաների մեջ խռովություն է ընկել, Անդրանիկը այդ նպատակով է գնում: Արմոն ասում-խոսում-կատակում էր, միևնույն է, տղաների ունքամեջը չէր բացվում: Արմոն չմասնակցեց ժողովին, որից հետո Սաքոն, Խեչոն, Ստեփանը, Շիրակը նստեցին մեքենան. գնում են Եղցահող, որպեսզի

Հայաստանից եկած ջոկատի տղաների անձնագրերում տեղական գրանցման կնիքը դնել տան: Ամեն ժամ ստուգումներ են սպասվում:

Արդեն մթնել էր, ու փափուկ-փափուկ ձյուն էր տեղում: Ճանապարհին ամեն ինչ հանգիստ էր, շարժում չկար:

Գյուղխորհրդի գրասենյակում Արմոն անձնագրերը դրեց սեղանին.

- Պիտի գրանցես:

- Բա որ գան ստուգե՞ն,- զգուշացավ գյուղական խորհրդի նախագահ Արտյուշան:

- Կստուգեն թե չեն ստուգի, գրանցումը պիտի կատարվի,- տոնը խստացրեց Արմոն:

- Երկու ամիս առաջ էլ եմ գրանցել, ո՞ւր են... - Արտյուշան ակնարկում է տղաների հետ դառնալը:

- Բայց քո ի՞նչ գործն է, թե նրանք կմնան, թե չեն մնա, դա քո իրավասությունից դուրս է, քո պարտքը,- Արմոն շեշտեց վերջին բառը,- նրանց մնալը օրինական դարձնելն է:

Այդ պահին Սաքոն մտել էր, ու ձեռքը դեպի ատրճանակը տարավ:

- Բա որ գան ասեն, էս տղաները ո՞ւր են, ի՞նչ եմ պատասխանելու,- գյուղխորհրդի նախագահը շարունակում էր դիմադրել:

- Ստորագրության համար մենք ենք պատասխան տալու,- մեջ ընկավ գյուղխորհրդի քարտուղար Սերոժը:

- Դու քո չստորագրելու համար ես պատասխան տալու:- Սաքոյի ձայնը սպառնալից երանգներ էր ընդունել:

- Դու քո կաշին ես փրկում, իսկ տղաները եկել են հայրենիքը պաշտպանելու,-փորձում է համոզել Արմոն:

- Բա որ գա՞ն...

- Որտեղի՞ց պիտի գան:

- Շուշիից:

Սաքոն կարմրեց, սփրթնեց, նորից ձեռքը դեպի ատրճանակը տարավ.

- Դու Շուշին դեռ չե՞ս մոռացել, հարիֆ, ես քեզ մոռացնել կտամ...

Արմոն քաշեց Սաքոյի թևից. պետք չէր կռիվ սարքել:

- Շուշին մոռացիր, նրանց իշխանությունը վերջացած է:

- Ես նրանցից չեմ վախենում,-աքլոր կտրեց Սերոժը,- ռուսներից եմ վախենում:

Արտյուշը ավելի ճկուն էր, հասկացել էր, որ միևնույն է պիտի ստորագրեն ու ասում է.

- Սերոժ, մեր տղաներն են, ասածները պիտի անենք:

Գրանցումը կատարված էր, մեքենան հենց Եղցահողի բարձունքից

սկսեց իջնել, Լաչին-Նուշի ճանապարհի վրա շարժում եւ մեքենայի լույս նկատվեց: Տղաները կարծում են, թե ուշացել են, շտաբում անհանգստացած Արմիկին ուղարկել են հետեւներից: Մի քիչ էլ առաջ գնացին: Արմոն անհանգստացավ.

- Եթե ճանապարհը կտրեն, ի՞նչ ենք անելու, Սաքո:

- Կռվի կբռնվենք, ուրիշ ելք չկա: Բենզինդ կհերիքի՞ մինչեւ Ստեփանակերտ:

- Կհերիքի:

Եղցահողի խճուղին վերջանալու վրա, հենց այն է, պիտի դուրս գային ընդհանուր ճանապարհը, մի նապաստակ թփերի հետեւից վազեց, ուղիղ մեքենայի լույսերի մեջ ընկավ ու հավասարակշռությունը կորցրած վեր-վեր թռավ: Արմոն մեքենան քշեց նապաստակի վրա, բայց ... շլդիկը փախավ:

- Թու, վատ նախանշան է, էս նապաստակը շառ էր,- ասաց Արմոն:

Մեքենան մտավ մայրուղի: Երկու-երեք կիլոմետրից հետո կամուրջն է, որտեղից պիտի թեքվեին Մեծ Շեն, հետո Հին Շեն:

Հազիվ էին 100 մետր առաջ գնացել, ավտոմատավոր զինվորը ձեռքը բարձրացնում է: Արմոն սեղմեց ոտնակը, դանդաղեցրեց ընթացքը իբր կանգնեցնում է: Զինվորը կարծելով թե կանգնում է, ձեռքով է անում, այսինքն՝ գնա: Սա դարանի սկիզբն էր: Մի քանի մետր առաջանալով, մեքենայի լուսարձակների լույսի տակ ճանապարհի աջուձախ կողմերին պսպղացին զինվորների սաղավարտները:

- Արմո, թակարդ է, չկանգնեցնես, քշիր,- գոռաց Սաքոն:

Արմոն սեղմեց ոտնակը, արագությունը բարձրացրեց: Միացնում է առջեւի քարշակը, որ մեքենան չկանգնի: Երկու կողմից մեքենան առնվեց գնդակների տարափի տակ: Արմոն երկրորդ արագությունը վերցրեց, որ ճանապարհի ձյունը հաղթահարի: Սաքոն վայ արեց ու հայհոյեց: Ավտոմատի երեք գնդակ շամփրեց ոտքը, փշրեց ազդրը, մի գնդակ էլ կպավ ուսին: Սաքոն կռացավ դուռը բացելու ու ավտոմատը պատրաստ պահեց կռվի բռնվելու, բայց կողքին նստած Ստեփանը գրկեց մեջքը.

- Անհնաստ է, Սաքո, թակարդի մեջ ենք:

Հաջորդ կրակահերթը եւ... Ստյոպան Սաքոյի մեջքին հենված ճգվեց ու ...թուլացավ.

- Տղերք, ես գնացի...

Հաջորդ գնդակը կպավ Արմոյի անրակին: Ձեռքը փայտի նման կախվեց: Փորձեց բարձրացնել՝ չստացվեց: Ղեկն արդեն վարում էր մի ձեռքով: Արմոն զգաց, որ Ստյոպան մահացած է, ու քշում է խելագարի նման: Մնում է վերջին ոլորանը, որ զինվորների տեսադաշտից դուրս գան: Մեքենան գնդակածեծ, դողերը պայթած, ընթանում է անվասկավառակների վրա: Մեքենայի ծածկաթափքը այրված, պատառոտված, կախված, թափված է մեքենայի մեջ:

Վերջին ոլորանը...

Արմոյի գոտկատեղը տաքացավ, գնդակը կպել էր մեջքին:

- Ես ձեր...- երկու գնդակ էլ Խեչոյին կպավ:

Մեքենան մայրուղուց թեքվեց դեպի կամուրջը: Ճանապարհը սառցակալած է, չի կարողանում հաղթահարել, Արմոն մի ձեռքով հազիվ է մեքենան պահում, որ չգլորվի ձորը: Զինվորները նկատել են, որ մեքենան երկար չի գնա: Հետապնդում են:

Իսկ ձյունը թափվում է ու թափվում: Մեքենան ծուռումուռ մեկ ճամփի գլխին, մեկ եզրին է հայտնվում:

- Սաքո, նրանց ձեռքն ենք ընկնելու, քշում եմ ուղիղ ձորը,- գոռաց Արմոն:

- Չանես: Նման բան չանես: Քշիր ճանապարհով,- գոռաց Սաքոն:

Մեքենան արդեն ընթանում է գլորվելով ավտոդողերի երկաթե ճաղերի վրայով: Ճանապարհի թեքության վրա մեքենան տեղապտույտ տրեց: Մի մետր էլ առաջ գնաց ու կանգնեց: Արմոն բացեց դուռը, իրեն գցեց ձյան վրա, ներսը վառվում էր, ու մի քաղցր նիզ եկավ վրան: Խեչոն թափահարեց ուսը.

- Արմո, վեր կաց, գալիս են...

Խեչոն ձյունով շփում է Արմոյի դեմքը.

- Արմո, գալիս են...Արմո...

Մարմինը վառվում է: Ընկերների ձայները կարծես լսում է հեռվից, ինչ որ քաղցր երազի մեջ... Մի բուռ ձյուն վերցրեց ու լցրեց բերանը, նրան թափ տվեց, ուշքի եկավ, նստեց ղեկին: Մեքենան ընթացքի չի մտնում.

Վերջացած է, առաջ գնալու հնար չկա...

Արմոն ու Շիրակը գրկում-իջեցնում են Սաքոյին:

- Ձենքերը թաքցրեք, ուր որ է կհասնեն,- ասաց Սաքոն:- Կռվի բռնվելը բացառվում է, պիտի ձեւանանք խաղաղ բնակիչներ:

Ձենքերը արագ-արագ շպրտում են ձորը: Արմոն մի ավտոմատ տվեց Շիրակին, միակը, ում գնդակ չի կպել.

- Մերը վերջացած է, փախիր: Մի կերպ փրկվիր...

- Ես ձեզ ո՞նց թողնեմ: Չեմ գնում...

Շուտ,- պահանջեց Արմոն,- գնա գյուղ, հայտնիր, որ մի բան ձեռնարկեն:

Շիրակը ավտոմատը վերցրեց ու վազեց: ԲՏՐ-ներից լուսարձակները գցել են կամրջի վրա: Նա սողեսող մոտեցավ ու 2-3 մետր բարձրությունից թռավ կամրջի տակ, կանգնեց ջրի մեջ: Հետեւից չեն կրակում, ուրեմն՝ չեն նկատել: Մինչեւ Մեծ Շեն 3-4 կիլոմետր է, բայց եթե դուրս գար՝ կնկատվեր: Հունվարի 17-ն էր, ձյուն, ձմեռ, ոտքերը սառը ջրի մեջ մինչեւ հագուստի վերջին թելը թրջված, կանգնում է Շիրակը:

Մեծ Շենի պահակակետից Նորիկը նկատել էր շուրջկալը, զանգել էր շտաբ՝ Առնոյին: Մեծ Շեն եւ Հին Շեն գյուղերում իրարանցում էր սկսվել: Կրակոցների վրա մարդիկ՝ դուրս են թափվել, փորձում են իջնել դեպքի վայրը: 60-70 զինվոր շղթա կապած՝ բարձրախոսով հայտարարում են՝

- Ով մոտենա՝ կրակելու ենք:

- Ես բժիշկ եմ, պիտի օգնություն ցույց տամ,- Սաքոն լսեց Մեծ Շենի հիվանդանոցի գլխավոր բժիշկ Սեյրանի ձայնը:

- Կրկնում ենք՝ մոտեցողին կխփենք:

Ձորը լցվեց գյուղացիների հարայ-հրոցով, կանանց լացուկոծով:

Լուսադեմին վերեւից իջնում են «էլեկտրիկները», էլեկտրական սյուների երկարությամբ քարշ տալով բարձրլարման գիծը: ...Շիրակը խառնվում է խմբին, բարձրանում գյուղ, հետո թոքերի բորբոքումով պիտի պառկեր հիվանդանոցում, 40 օր պիտի բուժվեր:

Խեչոյի ու Արմոյի մոտ ներքին արյունահոսություն է, խեղդվում են, թվում է՝ ուռչում են, վառվում են, ճանկռոտում են ձյունը, բուռ-բուռ տանում բերանները՝ կուլ տալիս:

Զինվորները մոտենում են, մեքենաները մի քիչ հեռու կանգնեցնում, լապտերներով լուսավորում ՈւԱՁ-ը: Տղաները պայմանավորվեցին իբր կարծել են, թե ազերիներ են հետապնդում, դրա համար են փախել:

Զինվորները կանգնել՝ չեն համարձակվում մոտենալ:

- Է՜յ, դուք, ռուսնե՞ր եք,- կանչեց Արմոն:

- Ռուսներ ենք,- պատասխանեցին:

- Էլ ի՞նչ եք կանգնել, մոտ եկեք, օգնեք,- կանչեց Արմոն:

- Իսկ ձեզ մոտ զենք կա՞,-հարցրին:

- Ի՞նչ զենք, խաղաղ բնակիչներ ենք: Եղցահողից Հին Շեն ենք գնում,- ձայնեց Արմոն: - Մոտեցեք, ի սեր Աստծո, օգնեք...

Զինվորները մոտենում են՝ դանդաղ քայլերով, զգույշ, շղթա կազմած, ավտոմատներն առաջ պարզած:

Ստուգում են ՈւԱՁ-ը: Ոչ մի զենք չկա: Ուրեմն, խաղաղ բնակիչներ են: Տղաները մեքենայից հանել էին Ստեփանին ու պառկեցրել ձյան վրա:

- Ո՞վ է ասել, որ սրանք բանդիտներ են,-մայորը գոռաց ու անհասցե հայհոյեց:

Մայորը գոռգոռում է, իսկ սպան ու զինվորները լուռ կանգնել էին. մի քահել կապուտաչ զինվոր մոտեցավ, նայեց Ստեփանին ու լաց եղավ: Տղաները այդ պահին կարողացել էին մի քիչ մոտենալ դեպքի վայրին:

- Արմո, Սաքո, ի՞նչ անենք,- կանչեց Սեյրանը:

- Չգիտեմ, վիրավոր ենք...

- Մի գոռա, առանց այն էլ արյուն շատ ես կորցրել, միեւնույն է, չենք թողնելու՝ մոտենան,- Արմոյին սաստեց սպան:

Զինվորների միջից մեկը մոտեցավ, որ առաջին օգնությունը ցույց տա:

- Ինձ չմոտենա՛ս,- գոռաց Սաքոն եւ թույլ չտվեց, որ ազերի բուժակը թե բժիշկը, իրեն սրսկի: Բժիշկ կոչվածը ձեռքը թափ տվեց.

- Հիմար, միեւնույն է, մեռնելու ես:- Ապա Արմոյին ու Խեչոյին հենց շորերի վրայից մորֆի սրսկեց: Սաքոն հետո թափքի մեջ անընդհատ կանչում էր Արմոյին ու Խաչիկին, որ տղաները արթուն մնան:

Առնոն ու Անդրանիկը արդեն զանգել էին Ստեփանակերտ, մարզգործկոմ, որ դեպք է պատահել: Ստեփանակերտից պահանջել են վիրավորներին բերել մարզային հիվանդանոց:

- Գյուղում բժիշկ կա, մեզ տարեք գյուղ,- խնդրեց Արմոն:

- Չենք կարող,-ուշ էր, գիշեր էր, եւ զինվորները վախենում էին գյուղ մտնել:

Սպաները կռվում են իրար հետ, հայհոյում, մեղադրում են իրար.

- Ո՞ւմ էր պետք կրակել...

- Ախր սրանք խաղաղ բնակիչներ են..

- Եթե հաստատ չգիտեինք, ինչո՞ւ կրակեցինք:

- Լեյտենանտ, մեզ տարեք Ստեփանակերտ, հիվանդանոց,- վիճողներին ասաց Արմոն:

- Հենց այնտեղ էլ տանում ենք:

Մեքենան թեքվեց դեպի Շուշի:

- Լեյտենանտ, դուք էլ քրիստոնյա եք, մի տարեք:

- Հանգիստ մնացեք, ճանապարհը թեքել ենք, որ օմօնը մեքենան յատուգի, կարծեն թե Շուշիից ենք դուրս եկել՝ Ստեփանակերտ ենք գնում,- սպան երդվեց: Արմոն կասկածում է, բայց ինչ աներ, խոր ոնքում է ու լռում:

Մեքենան բարձրանում է Շուշիի ճանապարհով, շրջվում ու իջնում դեպի Ստեփանակերտ: Հենց երեւացին Ստեփանակերտի լույսերը, Սաքոյի լարվածությունը թուլացավ եւ ուշագնաց եղավ: Ուշքի եկավ հիվանդանոցի բակում հավաքված կանանց լացուկոծից.

- Վա՜խ, բալա ջան, մորդ աչքերը քոռանան...

Վիրավորները վիրահատական նեղանների վրա են: Շուշիից դիտմամբ անջատում են էլեկտրական լույսերը: Միացնում են հիվանդանոցի էլեկտրական շարժիչ կայանը:

- Անձնագրերը գրպանումս է, հանիր,- Սաքոն հասցրեց շշնջալ Սահակյան Վրույրի ականջին:

Կարինեն կռվում է զինվորների հետ, որոնց ներկայացել է որպես Սաքոյի կին, որպեսզի թույլ տան մտնի հիվանդասենյակ: Ամբողջ Ստեփանակերտը ոտքի է կանգնել, կանայք ուտելիք են բերում:

Մարզային հիվանդանոցում 3-4 օրից հետո միայն Արմոն բացում է աչքերը, մոտը նստած է քույրը՝ Բելան, սենյակում զինվորներ են: Սաքոն կոտրվածքների, ինքն ու Խեչոն վերակենդանացման բաժանմունքում են, Մտնում է Միքայելը հիվանդի կնոջ՝ Իրինայի հետ:

- Թույլատրվում է խոսել միայն ռուսերեն,- հրամայում է սպան:

15 օրից հետո տեղափոխում են պալատ՝ պահելով խիստ վերահսկողության տակ:

Մեկ ամսից հետո կազմակերպվում է երեքի փախուստը: Բելան դռան առաջ զրուցում է զինվորի հետ՝ շեղելով նրա ուշադրությունը: Իրինան բացում է պատուհանը: Կոշկակար Սերժիկը ելարանը հենում է երրորդ հարկի պատուհանին, Արմոն ու Խեչոն իջնում են: Սաքոյին պատգարակով, վիրակապերով կապած ու փաթաթած, երկրորդ հարկից իջեցնում են: Քարին տակ գյուղի ջոկատի հրամանատար Վաղարշակը տղաներին փախցնում է Ավետարանոց:

Մի մարագի մեջ ծղոտով քողարկած, տղաներին պահում են, երկու օր հետո վիրավորներին տանում են անտառ, որպեսզի ուղարկեն Երևան: Պայմանավորվածության համաձայն խոտը վառում են, սպիտակ ծուխը ոլոր-մոլոր ծառերի արանքից բարձրանում է, ուղղաթիռը ծխի վրա գալիս՝ կանգնում է, բայց գետնին չի իջնում. օդաչու Ռաֆիկը շտապեցնում է, ամեն ինչ շատ արագ պիտի կատարվեր: Սաքոյին պատգարակով տղաները թռցրին վերեւ: Անդրանիկն էլ էր գնում, եւ նրա վերջին հայացքը մնաց ճանապարհող բերդածորցիների աչքերում:

Երեւանի հիվանդանոցներից մեկում բուժվում են: Մի գնդակը Արմոյի ողնաշարին այնքան մոտիկ էր կպել, որ հնարավոր չէր հանել, մի գնդակն էլ մեջքից անցել, խառնել էր աղիքները եւ հետագայում ստիպված պիտի լիներ 3-4 տարին մեկ ծանր վիրահատություններ տանել:

Այդ օրերին էր, որ Առնոն զանգեց Սաքոյին.

- Բերդածորը սպասում է ձեզ...

Սա մարտական ընկերների վերջին խոսակցությունն էր...

Հետո շատ հետո Սաքոն պիտի գար հրամանատարի աճյունի հուղարկավորմանը, հետո գնար Վարսենիկ տատին տեսության: 90-ամյա տատը, որ ոչ մեկին չէր ճանաչում, աչքերը բացեց.

- Վարսենիկ տատ, ես եմ, Սաքոն...

- Քե մատաղ, էս Սաքոյիս ձենն է, Առնո՜, Սաքո՜, Խեչո՜, ձեզ մատաղ...- Սաքոյի ձեռքը պինդ սեղմեց ու հանգավ:

1991թ. հունվարի վերջին օրերն են: Ձյունը հալվել է, հողը բացվել, դարաբաղյան ձմեռվա այն օրերն են, որ գարնանային տաքությամբ են շնչում, որ հոնի ծառերը արեւից խաբված ծաղկում են, դեղին նարցիսները՝ բացվում:

- Գնա բահ, քլունգ, տոպրակներ վերցրու, շուտ արի:

Վլադիկի զարմացած հայացքին Առնոն ավելացրեց.

- Հարցեր չտաս:

Գյուղից դուրս են գալիս, կանգնում Աբլաղ կոչվող տեղամասում: Թեթեւ թեքության ճանապարհի տակ Առնոն որոնել ու գտել էր մեծ քարայրը, որի մասին իրեն փոքր ժամանակ պատմել է պապը՝ Սահակը: Նույնիսկ տարեց մարդիկ չգիտեին ստորգետնյա քարայրի տեղը դաշտի մեջ: Քարայրի մուտքը փլված, փակված էր: Տղաները փորեցին, բացեցին: Այն 7-8 մետր երկարությամբ, 3,5-4 մետր լայնությամբ անձավ էր: Առնոն լապտերով մտավ ու մի քանի րոպեից դուրս եկավ.

- Հոյակապ է, հիանալի է: Ջինամթերքը 50 տարի էլ մնա, չի ժանգոտի: Լավ թաքստոց է, ոչ մեկի մտքով չի անցնի, թե էստեղ ինչ-որ բան կա:

Ռուսլանը, Վլադիկը, Ենոքը օգնում են, որ քանդած հողը լցնեն տոպրակների մեջ, տանեն թափեն ձորը, որպեսզի կասկածի տեղիք չլինի:

Գիշերը բեռնատարը երկու ուղերթ է կատարում: Ճանապարհի վրա երկու հոգի հսկում են, որ մարդ-մուրդ, մեքենա չանցնի: Տեղավորում են, հետո պարկերով խաշամը հավաքում, բերում-լցնում, մի քանի մոշի թոլ պոկում, մուտքի մոտ տնկում, քողարկում: Տեղավորելուց հետո Առնոն ականորսիչով ստուգում է.

- Ամեն ինչ լավ է: Համարյա 3 մետր խորությամբ է, չի հայտնաբերվի,- հետո դիմեց Վլադիկին եւ Արմենին,- վաղը ոչխարը հանդ տանելու հերթը ձերն է, հասկացաք, չէ՞, ինչ պիտի անեք: Հաջորդ օրը տղաները ոչխարը քշում են դաշտ, արտի մեջ արածացնում, որ հետքերը մաքրեն:

Աբլաղից բացի մի զինապահեստ էլ կար Շիգեցեք տեղամասում 3-րդ եւ 4-րդ թաքստոցները իրար մոտիկ էին, գտնվում էին Բաղունց խութում, անտառի մեջ: Հենց լսում էին՝ անձնագրային ռեժիմի ստուգում է, կես ժամվա ընթացքում զենքը պիտի թաքցրած լինեին թաքստոցներում:

1991-ի փետրվարի 3-ն էր: Զանգեցին, որ անձնագրային ռեժիմի ստուգում է: Հայաստանցի տղաները Ասրյան Ալյոշայի ուղեկցությամբ թաքնվեցին անտառում, Ծլլան աղբյուրի մոտ:

Ներքին զորքերի շարասյունը՝ 4 «Ուրալ» մեքենաներով, ԲՏՐ-ով, ՈւԱԶ-ներով, եկավ կանգնեց բնակավայրի ծայրին: Գյուղ չմտան: Այդ օրը ոչ մի անձնագրային ռեժիմ չստուգեցին: Գնացին ուղիղ դեպի Արլաղ՝ առաջին թաքստոցը: Դատարկելուց հետո նռնակ են գցում, բայց քարայրը չի փլվում: Հետո թեքվեցին դեպի երկրորդը: Երրորդ եւ չորրորդ թաքստոցները եւս դատարկվեցին: Զինամթերքի ամբողջ պաշարը, այդ թվում՝ 10 հազար փամփուշտ, նաեւ արկղերով պայթուցիկ նյութեր, «Ալազանի» հրթիռները, զինվորական հանդերձանքը տարան: Տղաների մոտ մնացին որսորդական հրացաններ, ձեռքների ավտոմատները եւ մեկ ձեռքի գնդացիր: Հանվեց 4 բեռնատար զինամթերք:

Շտաբում Առնոն սրտի նոպա ունեցավ: Նստած էր գունատ, այլայլված, ձայնը խզվել էր, ջղայնությունից շուրթերն էր կրծում:

- Գտնել մատնիչին,- ասաց Սաքոն:

- Դատաստան տեսնել...

- Վերացնել...

Հաջորդ օրը Առնոն Վլադիկի հետ գնաց թաքստոցները: Աբլաղի մոտ ծառի ճյուղեր էին հատած՝ նշան արածի նման: Հատած մի ճյուղ էլ դրված էր թաքստոցի մուտքի վրա: Երկրորդ թաքստոցից 10 մետր հեռավորության վրա դարձյալ ծառերի ճյուղեր էին հատած, մի մեծ ճյուղ դարձյալ դրած թաքստոցի վրա: Երրորդ եւ չորրորդ թաքստոցները նույն ձեւով նշան արված էին:

Մատնության հետքերը պարզ երեւում էին:

- Բա ո՞նց պիտի անենք,- լռությունը խախտեց Վլադիկը:

- Կվերականգնեմ: Հայաստանի կառավարությունը կօգնի: Կապեր ունեմ Հայոց համազգային շարժման գործիչների հետ: Կօգնեն: Զենքի ուրիշ աղբյուրներ էլ կան...

- Առնո, քանի՞ կազմակերպության ես անդամակցում:

- 14,- հաշվում է,- չնայած երբեմն դրա համար ինձնից վիրավորվում են, բայց հասկանում են՝ մեջտեղում Արցախի հարցն է: Ազգիս շահը պահանջի՝ բոլորի հետ էլ կհամագործակցեմ,- գունատ դեմքին ժպիտ երեւաց:

Երկու ամսվա ընթացքում Առնոն վերականգնեց զինապաշարը, որն արդեն պահում էին շտաբում, իսկ ստուգման ժամանակ շատ արագ մեքենաներով տանում էին գյուղից դուրս:

Ոչ սովորականը դարձել էր սովորական, եւ գյուղն ապրում էր իր կյանքով՝ քեֆ, ծնունդ, կնունք, հարսանիք: Հին Շենում մանկապարտեզի բացման հանդիսավոր արարողությունն է: Վարիչը՝ Մարինեն հուզված բացման խոսք է ասում, երախտագիտություն հայտնում ԲԻԽ-ի խորհրդին, տնտեսության նախագահին:

- Այս օրը կմնա գյուղի հիշողության մեջ,- ասաց Առնոն իր ելույթում: 20-25 երեխա կհաճախեն այս նորաբաց նախակրթական օջախը, որը նաեւ աշխատատեղ է: Երիտասարդ ընտանիքները կմնան, կամրանան գյուղում...

Վերջում՝ մեծ քեֆ, տոնախմբություն: Այդ օրը Առնոն շատ պարեց:

Երեկոյան Հովսեփյան Վալերին մտավ շտաբ, նստեց մահճակալին, բայց հրամանատարից հեռու: Առնոն տանել չէր կարողանում խմած մարդկանց:

- Չե՞ս ամաչում, մեծ մարդ ես: Բա որ էս պահին հարձակվե՞ն...

- Է՜, թող հարձակվեն, ավելի լավ,- աքլորացավ Վալերին:

Այդ պահին Գորիսից զանգում են.

- Ինչ կա-չկա,- հարցնում է Առնոն:

- Սահմանում դրությունը լուրջ է...

- Չնեղվեք, պետք լինի միջանցքը կկտրենք՝ օգնության կգանք,-Առնոն իհարկե կատակում էր, եւ գծի երկու կողմում քահ-քահ ծիծաղ բարձրացավ:

- Միշտ էդպես էլ մնացեք,-Գորիսում արխայնանում են, որ Բերդաձորում տղաների ոգին բարձր է:

- Առնո, էլի գրում ես,- Վալերին մոտ քաշվեց,- Առնո, վերջը ինչ է լինելու...

- Քիչ առաջ աքլոր էիր կտրել, խմածությունդ անցա՞վ...

Սեւակն ու Էդոն ծիծաղում են:

- Չէ, Առնո, լուրջ եմ հարցնում:

- Ինչ է, վախենո՞ւմ ես: Ինչ լինելու է՝ ինձ է լինելու, քեզ՝ ի՞նչ...

- Առնո, գուցե դուրս գաս ծորակից:

- Կարո՞ղ ես ցույց տալ մեկին, որ փոխարինի ինձ:

- Չկա:

- Ուրեմն ես պիտի մնամ: Մինչեւ վերջ ծորակը պիտի պաշտպանեմ: Ինձ հետ ինչ որ պատահի՝ էստեղ պիտի պատահի:

- Բայց քեզ նմանները նաեւ Ղարաբաղին են պետք, իմ կարծիքով դու պետք է խնայես քեզ:

- Եթե ես դուրս գամ, խուճապ կընկնի: Իմ դուրս գալը դավաճանության նման բան կլինի:

1991-ի մարտ ամիսն էր: Երեք գյուղերի ղեկավարներին՝ Սարգսյան Գրիշային, Սաֆարյան Էդիկը, Հովակիմյան Հենրիխին, ինքնապաշտպանության խորհրդից՝ Առնոյին ու Թաքուլին կանչում են Ստեփանակերտ, մարզգործկոմ Սեմյոն Բաբայանի մոտ: Այնտեղ մեծ խոսքուկոխով եղավ, որի մասին ներկաները դուրս գալուց հետո ոչ մի խոսք չասացին: Այսպես, որոշվեց տնտեսությունները միավորել, ծորակում մտցնել նախագահական միասնական կառավարում Գրիշա Սարգսյանի ղեկավարությամբ:

Ապրիլի առաջին օրերն են, եղանակը տաքացել է, տղաները նկատել են, որ զինվորական կազմը ստուգումներից հետո ծորակից չէր հեռանում: Մնում են լանջերին, ծորերում, աշխատում են աննկատելի մնալ ու հետեւել տարածքում կատարվող շարժին: Անձնագրային ռեժիմի ստուգումները դառնում են ավելի հաճախ, օր է պատահել նույն գյուղը երկու անգամ են մտել: Ստուգման ժամանակ զրահատախնիկայի եւ մեքենաների վրա քաղաքացիական հագուստով ազերիներ են լինում, որոնք տեղանքին ու մարդկանց ծանոթ են եւ ուղեկցի դեր են կատարում:

Մարտի կեսերից ԲԻԽ-ի հրամանատարությունը խորհրդի անդամների պահանջով ստանձնել էր Առնո Մկրտչյանը: Իրավիճակը եւ վտանգավոր, եւ անորոշ էր, ու չէին կարողանում ազատ հավաքվել խորհրդակցության կամ նիստի: Հայաստանից որոշ խմբեր դեռ մնում էին, տների վրա բաժանված՝ ըստ ազգանունների համապատասխանության, իբր ազգականներ են, հյուր են եկել: Եկածների մեջ մի եզդի կար, Մնոյան ազգանունով, բոլորին բաժանեցին, ինքը՝ մնաց.

- Հետ դառնա՞մ,- կատակեց նա:

Տղաներն էլ լուրջուկատակով նրան անասնապահական ֆերմա ուղարկեցին:

Քանի որ ամբողջ ծորակը գտնվում էր խիստ հսկողության տակ, պահակակետերում կանգնելը եւ հերթափոխվելը կատարվում էր գիշերը: Գյուղից-գյուղ սննդամթերքը տեղափոխում էին տրակտորով, որպեսզի կասկածի տեղիք չտան: ԲԻԽ-ի անդամները հասկանում էին դրության լրջությունը, ներքուստ լարված ու անհանգիստ էին, բայց ցույց չէին տալիս:

Նոր էր մութը վրա հասել, Սաֆարյան Թաքուլն ու Շաքարյան Գագոն Հին Շենից գալիս են Մեծ Շեն: Նախքան գյուղ հասնելը վերջին ոլորանում ճամփեզրի ծառերի միջից կրակի տակ է առնվում ՈւԱԶ-ը: Մեքենան կանգնում է: Չորից դուրս են գալիս 10-15 զինվոր, հրաման են տալիս ձեռքները վեր բարձրացնել եւ մեքենան ստուգում են: Ոչ մի զենք չկար: Երկուսին բերում են ակումբ: Այդ օրը մի առանձին կատաղությամբ են «անձնագրային ռեժիմը» ստուգում: Փայտը վերցրել ու խառնել են պանրի բիդոնները: 200 լիտրանոց թթու դրած բանջարեղենով լի տակառը շրջել են, իբր զենք են փնտրում:

Մեծ Շենի Խառատ տեղամասում նույն պահին ստուգում են ֆերման, երեք հոգու՝ խաղաղ բնակիչներ, անասնապահներ ենթարկում են ծաղրի, պառկեցնել են տալիս գոմաղբաջրի մեջ, ապա բերում ակումբ: Բարեբախտաբար, պահակակետերում կանգնածները հասցրել էին զենքը թաքցնել խոտի դեզերի մեջ: Ֆերմայում էլ թաքստոց կար, եւ ոչ մեկի մտքով չէր անցնում, որ գոմաղբը հավաքող ու դուրս մղող ագրեգատի վերեւում, պատի մեջ, քարերը հանված խոռոչում ցելոֆանով փաթաթած զենքեր կան տեղավորած: Նույնիսկ կռացած՝ ուշադիր զննելու դեպքում ոչինչ նշմարել հնարավոր չէր: Գյուղը բռնագաղթելուց մեկ տարի հետո տղաները մտել են ֆերմա, հանել թաքցրած զենքերը: Գյուղի բնակիչներից 20 հոգու, որոնք Հայաստանից էին եկել, բայց այժմ տեղական գրանցում ունեն, լցնում են ակումբը:

- Հնարավոր չէ, որ զենք չլինի: Մինչեւ չհանձնեք, տեղը չասեք, բաց չենք թողնելու,-ասաց սպան:

Ակումբում կալանվածներից 12 հոգու լցրին «Ուրալ» զինվորական մեքենայի մեջ: Կանայք գոռում-գոչյունով առաջ եկան.

- Անաստվածներ, ո՞ւր եք տանում, ինչի՞ համար...

Սպան կանանց հրամայեց հեռու կանգնել.

- Միեւնույն է, ոչինչ չի օգնի, տանելու ենք:

Բանաստեղծ, ռուսաց լեզվի ուսուցիչ Մովսես Յախշունցը ըմբոստացավ.

- Ամոթ ձեզ, սովետական զինվորներ: Խաղաղ բնակչության նկատմամբ հաշվեհարդար եք տեսնում: Ի՞նչ իրավունքով եք ժողովրդին ահուսարսափի մեջ պահում:

- Հեռու քաշվիր, ծերուկ,- զինվորը ինքնաձիգը պահեց Յախշունցի

հենց քթի տակ: Բայց վերջինս զգաց, որ իր համարձակությունը եւ ռուսաց լեզվին գերազանց տիրապետելը ազդեցություն ունեցավ ռուս սպայի վրա. մի մասին ազատ արձակեց, իսկ կանանց փորձում էր համոզել, որ մնացածներին կտանեն, կհարցաքննեն եւ ազատ կարձակեն:

Տղամարդիկ մոտեցան մեքենային, որ սպային հանձնեն տղաներին, չտանել: Զինվորները արցունքաբեր գազ փչեցին: Տարեց մի երկու հոգի վատ զգացին, բուլացան ու նստեցին գետնին: Այդ տեսնելով կանայք պառկեցին ճանապարհի մեջ, կտրելով մեքենայի ճանապարհը: Ռուս սպան, որ այդ բայլին չէր սպասում, ու չգիտեր ինչ անել, մոտեցավ տղամարդկանց.

- Երդվում եմ սպայի պատվով, վաղը երեկոյան բոլոր կալանվածները կլինեն այստեղ: Հեռացրեք կանանց:

Տղամարդիկ հավատացին ու համոզեցին կանանց: Ռուս սպան իր խոսքի տերը եղավ. 24 ժամ հետո բոլորն ազատ էին արձակվել:

1991 թվականի մարտի 14-ին ԽՍՀՄ նախագահ Գորբաչովը դիմում է Ադրբեջանի ժողովրդին եւ Լեռնային Ղարաբաղի բնակիչներին, որ ահա արդեն չորրորդ տարին է, ինչ խաղաղ չէ Լեռնային Ղարաբաղի հողը, որ հնչում են կրակոցներ, զոհվում են մարդիկ, աճում է օտարացումը: «Ես հասկանում եմ, որ հեշտ չէ կանգնեցնել վիրավորանքների ցասումի եւ փոխադարձ վրեժխնդրության շղթայական ռեակցիան: Այստեղ կարեւոր է ելնել իրողություններից. ԼՂԻՄ-ը Ադրբեջանի անխզելի մասն է: Այնտեղ գործում է Ադրբեջանի հանրապետության սահմանադրությունը: Միասին ապրում եւ աշխատում են հայեր եւ ադրբեջանցիներ: Այդպես է կարգավորել պատմությունը: Եվ դրանից հեռու չես գնա: Իսկ դա նշանակում է, որ պետք է ինչքան հնարավոր է արագորեն կյանքը վերադարձնել նորմալ հունի: Եվ սկսել ժողովրդավարական ընտրությունների անցկացումից, իշխանության օրինական մարմինների կազմավորումից.

Թող ձեր աչքերը չմթագնեն նախկին եւ ներկա վիրավորանքներն ու անարդարությունները: Սկսեցեք խաղաղ երկխոսություն, ձգտեցեք հասկանալ մեկմեկու, գտնել փակուղուց դուրս գալու ելքը:

Անչափ հուսով եմ, որ իմ խոսքերը արձագանք կգտնեն ձեր սրտերում: Ձեզ ցանկանում եմ խաղաղություն եւ երջանկություն»:

Շտաբում թերթը ձեռքից ձեռք է անցնում:

- Չորս օր առաջ Թուրքիայի նախագահ Օզալը այցելել է Մոսկվա,- արտահայտվեց Առնոն,- սրանից կռվի հոտ է փչում:

- Տեսեք-տեսեք իբր խաղաղություն ու երջանկություն է ցանկանում ինձ,- քմծիծաղեց Վիլենը:

- Երեք տարի պայքարեցինք, վերջը մեզ հասկացնում են, որ Ադրբեջանի անխզելի մասն ենք,- արձագանքեց Գառնիկը:

- Էս հարցը ուժն է լուծելու: Ով ուժեղ եղավ Ղարաբաղը նրանն է լինելու,- ասաց Առնոն:

- Տեսնես Հայաստանում, Ստեփանակերտում ինչ կա, մեր իշխանավորները ի՞նչ են մտածում սրա վերաբերյալ,- Հարությունյան Գագիկն է:

- Եթե Գորբաչովի տեղ հայ էլ նստած լինի, միեւնույն է, սա քաղաքական ճանապարհով լուծելի հարց չէ: Էս հարցը հայ զինվորը պիտի լուծի... Եվ եթե մինչեւ գետը չհասնենք, հարցի լուծումը թերի է մնալու: Սահմանը պիտի լինի Քուռ-Արաքսը, ինչպես որ եղել է նախկինում:

- Առնո, դե լավ էլի, ի՞նչ ես երազանքներով տարվել: Շուշին ու Լաչինը թոկը վիզներս գցել խեղդում են, դու մտքով հասել ես Գանձակ,- Գառնիկը իր կարծելով հրամանատարին օդից իջեցնում է գետնին:

- Գորբաչովի նման դու էլ ես «իրողություններից» ելնելով խոսում...

- Ենթադրենք, խոշորամասշտաբ հարձակում ծավալեն, ի՞նչ ես անելու...

- Լաչինից մեծ ուժերով չեն գա, Գորիսից կխանգարեն, հետո էլ քանի անգամ կրկնեմ շատը հաշիվ չի: Մենք մեր հողն ենք պաշտպանում: Մեր հողը մեզ ուժ կտա: Ազերին լավ գիտի, որ ինքը եկվոր է, որ սա իր հողը չէ: Տասի դեմ մեր մեկն էլ հերիք է, միայն թե միասնական լինենք. պառակտում չլինի...

- Պառակտումը է՞լ ոնց է լինում, կա էլի,- վրդովված ասաց շեկ Անդոն,- ձին կապել ենք այնտեղից, ասում ենք՝ տեր Աստված դու շառը հեռու տանես...

- Ով ուզում է թող գա: Պատասխանը ստանալու է,- խոսեց ամբողջ ժամանակ լուռ, իր գենքով զբաղված Հրաչիկը:

Գորբաչովի դիմումից երեք օր հետո մարտի 17-ին Շուշիի պարետը իր զորախմբի հետ մտնում է եղցահող: Ստուգում են անձնագրային ռեժիմը, բայց շատ հանգիստ: Գյուղում ծնված, բայց Ստեփանակերտի պլանցում ունեցող մի քանի հոգու անձնագիր վերցնում են: Հետո պարետը գյուղական խորհրդի նախագահ Զաքարյան Արտյուշային հրամայում է ամբողջ բնակչությանը հավաքել պահեստի առաջ կարեւոր հանձնարարություն պիտի կատարվի:

Արտյուշան կարդում է դիմում-նամակը, գրված պարետության կողմից ռուսերեն լեզվով: Բովանդակությունը հետեւյալն էր. Բերդաձորի ենթաշրջանում, որը մտնում է Շուշիի շրջանի վարչական տարածքի մեջ, գոյություն ունեն անօրեն զինված կազմավորումներ, որոնք ապակայունացնում են իրավիճակը, անհանգստություն պատճառելով թե հայ, թե ադրբեջանցի խաղաղ բնակչությանը: Կատարվել են սպանություններ, հաճախակի են դարձել ավազակային հարձակումները: Պարետությունը շրջանի ղեկավարության հետ դնում է ԲԻՀ-ի լիկվիդացման, ֆիդայիներին ձորակից վռնդելու, տեղական գրանցում չունեցողների հեռանալու հարցը: Ենթաշրջանը պետք է հրաժարվի Հայաստանի օժանդակությունից, ընդունի Շուշիից առաջարկվող օգնությունը, այլապես ...

Հայտնվում է, որ Շուշիի շրջանի ղեկավարությունը արտակարգ դրության շրջանի պարետության հետ միասին ի վիճակի չեն ապահովելու ենթաշրջանի բնակչության անվտանգությունը: Պահանջները չընդունելու դեպքում Հին Շեն, Մեծ Շեն, Եղցահող, Տասը Վերստ գյուղերի բնակչությանը առաջարկվում է տեղափոխվել այլ բնակավայրեր:

Նամակը կարդալուց հետո մի պահ լռություն տիրեց:

- Պարոն գնդապետ, դուք՝ չէ, բայց մենք կարող ենք մեր անվտանգությունը ապահովել,- Հրաչիկի տոնը ինքնավստահ էր, ինչ որ տեղ նույնիսկ ձայնի մեջ հպարտության ու գոռոզության շեշտեր կային: Մենք այստեղ ենք ծնվել, մեր նախնիների գերեզմաններն այստեղ են, գյուղից դուրս չենք գալու:

- Բոլո՞ր են այստեղ նրա կարծիքին,- դիմեց պարետը, եւ հարցը մնաց անպատասխան: Քար լռություն տիրեց:

- Լա՜վ... Դուք գիտեք, բայց մենք ձորակում պահակակետ չենք պահելու,- սպառնաց պարետը:

Հեռախոսային կապով սովորաբար Եղցահողից Հին Շեն Առնոյին հաղորդվում էր՝ ինչ կատարվում էր: Հին Շենից սովորական աչքով էլ դիտում էին Եղցահողում կատարվող ամեն մի շարժ: Տեսնելով, որ անձնագրային ռեժիմի ստուգումը ձգձգվում է, Հին Շենում սկսում են կրակել ու հարձակման պատրանք են ստեղծում: Արտյուշը վազում է, հեռախոսով կապվում, հետ գալիս, տեղեկացնում, իբր թե ազերիները հարձակվել են Հին Շենի վրա: Պարետը շտապով անձնագրերը հանձնում է, եւ երբ տեղ են հասնում, տեսնում են ամեն ինչ խաղաղված:

Ձորակի բոլոր գյուղերին, նույն կերպ, նույն բեմագրով վերջնագիր են ներկայացնում: Ձորակը դա ընդունեց շատ հանգիստ, նույնիսկ զարմանալի հանգիստ: Հրամանատարները իրենց գյուղերում բացատրեցին , որ դա հերթական ահաբեկչական ակցիա է, եւ գյուղը շարունակեց ապրել իր սովորական դարձած հանգիստ ու անհանգիստ կյանքով՝ հեռու մեծ քաղաքականությունից...

Հին Շենի Մեյդան տեղամասին մերձ, Խաչգյադուկի մոտակայքում Սալահը, որ մինչեւ Շարժումը Հին Շենի վարորդն է եղել, նախիրն արածացնում էր: Բրիգադավար Իսան ու վարորդ Բենիկը մոտենում են: Իրար ոչ միայն ծանոթ էին, այլեւ այս երկուսը ազերիներից գողացած ձին տարել նրանց հանդում բաց էին թողել: Սալահը որպես երախտագիտության նշան նրանց տեղեկացրեց , որ Լաչինում մեծ ժողով է եղել, շրջակա գյուղերից հավաքել ու ասել էին, որ ձորակը հայաթափվելու է: Իսան ու Բենիկը լուրը բերեցին գյուղ:

- Վախեցնում են,- բնակիչներին հանգստացրին ֆիդայիները:

Ոչ ոք չէր հավատում, բայց Գետաշենի հայաթափման ստվերը կախվել էր ձորակի վրա:

Իսկ 1991 թվականի մարտի 17-ին խորհրդային ղեկավարությունն անցկացրեց համամիութենական հանրաքվե: Ադրբեջանը կողմ քվեարկեց Խորհրդային Միության պահպանմանը նոր Միութենական Համաձայնագրի շրջանակներում: Հայաստանը բոյկոտեց հանրաքվեն՝ հայտարարելով, որ սեպտեմբերին անց է կացնելու անկախության հանրաքվե: Ադրբեջանի «հավատարմությունը» գնահատվեց: «Անօրինական զինված կազմավորումների զինաթափման», «անձնագրային ռեժիմի ստուգման» պատրվակի տակ Ադրբեջանը Կենտրոնի օժանդակությամբ ձեռնամուխ եղավ Ղարաբաղի հայաթափման գործընթացին:

Սեւ, չարագուշակ ամպեր են կուտակվել Արցախի վրա: Ստեփանակերտի կոշկի ֆաբրիկայի դահլիճում 1991-ի մարտի 17-ին պատգամավորներից բացի խորհրդակցությանը մասնակցում էին նաեւ Արցախյան շարժման ակտիվիստներ, նշանավոր մտավորականներ, ֆորմալ եւ ոչ ֆորմալ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: ԼՂԻՄ մարզխորհրդի 20-րդ գումարման նստաշրջանի հերթական նիստի օրակարգում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցն էր դրված:

Դահլիճի դռանը հսկում են մի հայ եւ մի ռուս մայոր: Պարետատան մի մեքենա, ԶԻԼ-131 մակնիշի, բարձր կողերով, թափքածածկով, որի բացվածքից երեւում են սաղավարտներով, զրահաբաճկոններով, դաշանակներով զինված զինվորները, մոտեցավ ֆաբրիկային, մեկը հարցրեց.

- Չե՞ք ասի, որտեղ է ժողովը:

Հայ պահակը մեքենային ապակողմնորոշում է, ապա մտնում ներս, ժողովականներին հայտարարում, թե պարետատնից եկել են, հիմա հետ կդառնան: Նույն պահին նախագահողը շտապեցնում է.

- Գալու են՝ ժողովը ցրեն, քանի ժամ է՝ հավաքված ենք, եկեք վիճաբանությունները թողնենք եւ անցնենք քվեարկության:

Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի դասախոս Համլետ Գրիգորյանը տեղից վեր թռավ, վրդովված հասավ ամբիոնին.

- Սա դավաճանություն է...

Որպես համաձայնության նշան դահլիճի այս ու այն կողմից հնչեցին աղմկոտ ծայներ: Այդ պահին ՋԻԼ մեքենան եկավ, կանգնեց մուտքի մոտ եւ հսկող ռուս մայորը ասաց.

- Կարող եք մտնել:

Դահլիճում նստածները՝ պատգամավորներ, գյուղերից, շրջաններից եկած լիազոր ներկայացուցիչներ, կարծելով թե եկել են ձերբակալելու, հետեւի դռնից դուրս են գալիս, եւ երբ զինվորները մտան՝ դահլիճում մարդ չկար:

Նիստը շարունակվում է կաթի գործարանի տնօրենի աշխատասենյակում:

Նախագահողը խոսքը տալիս է Արկադի Մանուչարյանին, որի ելույթը կոշկի ֆաբրիկայում կիսատ էր մնացել:

- Հարգելի ընկերներ, բարեկամներ, Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը ստիպում է մեզ կայացնել ռեալ որոշումներ՝ հաշվի առնելով մեր ազգային շահերը: Ուստի, ես առաջարկում եմ Արցախում անցկացնել հանրաքվե, ստեղծելու ինքնավար հանրապետություն Ադրբեջանի կազմում: Ի՞նչ կտա դա մեզ: Առաջին տարբերակ. ենթադրենք Ադրբեջանը համաձայնում է: Այդ դեպքում անցկացնում ենք ընտրություններ, ձեւավորում ենք տեղական ինքնակառավարման մարմինները, այսինքն, ինքնավար հանրապետության Գերագույն խորհուրդը եւ Նախարարների խորհուրդը: Այդ քայլը իրականացնելով՝ մենք կդառնանք Ադրբեջանի ֆեդերացիայի սուբյեկտ, այսինքն դրանով իսկ ԽՍՀՄ ֆեդերացիայի օրենքները կտարածվեն նաեւ ստեղծված հանրապետության վրա, որը հետո մեզ թույլ կտա հռչակելու Լեռնային Ղարաբաղի անկախ հանրապետություն կամ վերամիավորում Հայաստանին:

Քար լռության մեջ Մանուչարյանը շարադրում է երկրորդ տարբերակը, երբ Ադրբեջանը իր համաձայնությունը չի տալիս:

- Այդ դեպքում մեր ձեռքին կունենանք քաղաքական խաղաքարտ,

այսինքն մենք արձագանքեցինք ԽՍՀՄ նախագահ Գորբաչովի մարտի 14-ի դիմումին, իսկ Ադրբեջանը՝ ոչ:

- Ռոբերտ Սեդրակի, դուք ի՞նչ եք մտածում այդ հարցի կապակցությամբ,- դիմեց Սեմյոն Բաբայանը:

- Ստեղծված քաղաքական իրադրության մեջ ազգի փրկության ուղին դա է, Լեռնային Ղարաբաղի ինքնավարության կարգավիճակը պետք է բարձրացնել:

- Ազգի շահը դա է պահանջում: Տարածքը հայ պահելու միակ միջոցը դա է՝ հատկապես ստեղծված քաղաքական իրավիճակում,- ասաց Սերժ Սարգսյանը:

- Ընկերներ, ստացվում է, որ մենք ընդմիշտ հրաժարվենք Միացումի՞ց:

- Ռազմիկ, ընդմիշտ բառը ինչո՞ւ մեջտեղ քաշեցիր: Մենք, կարծեմ, շատ հստակ արտահայտվեցինք:

- Ես զբաղվում են ռազմական գործով, մենք պատրաստվում ենք զինված պայքարի,- շարունակեց Ռազմիկ Պետրոսյանը:

- Իսկ մենք կողմնակից ենք հարցի քաղաքական ճանապարհով լուծմանը: Այս պահի իրադրությունը այս ռազմավարությունն է պահանջում,- ելույթ ունեցողը ԼՂ արհմիության նախագահն էր,- զինված պայքարը կասկածելի է, թե ուր կտանի: Ես ունեմ ցույցերի ու հանրահավաքների կազմակերպման օրինակելի պլան, առաջարկում եմ քննարկել, եւ ժողովրդի մեջ, շրջաններում բացատրական աշխատանք տանել:

- Ընկեր Դավթյան, դա ձե՞ր կարծիքն է, թե՞ արհմիութենական կազմակերպության,- տեղից գոչեց Աշոտ Սարգսյանը:

- Իհարկե, իմ կարծիքն է:

- Խնդրում եմ ելույթ ունեցողները նշեն՝ անձնակա՞ն, կուսակցությա՞ն, թե՞ կազմակերպության կարծիքն են արտահայտում,- ասաց նախագահողը:

- Կոնկրետ, Մարտունու շրջանում լինելով կոմունիստական կազմակերպության ղեկավարը, ես եւ տեղակալս գտնում ենք, որ կարելի է համապատասխան բացատրական աշխատանք տանել եւ ժողովրդին համոզել, որ փրկության միակ ճանապարհը դա է...

- Ես համամիտ եմ ընկեր Օլեգ Եսայանի հետ,- ասաց տեղակալը:

Համլետ Գրիգորյանը վեր թռավ, մոտեցավ ամբիոնին, հուզված է, չի կարողանում կապակցված ու հանգիստ շարադրել մտքերը.

- Դուք բոլորդ դավաճանում եք Արցախի շահերին: Չէ որ 1989-ի դեկտեմբերի 1-ի Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանի որոշումը կա Միացումի մասին... Ինչպես կարելի է մեր պայքարին դավաճանել...

- Սա քաղաքականություն է, որը դուք, ընկեր Գրիգորյան, ինչպես միշտ, չեք հասկանում,- սառը, կշռադատված, խոսքերը հատ-հատ հնչեցնելով ասաց Ռոբերտ Քոչարյանը,- ի՞նչ դավաճանության մասին կարող է խոսք լինել:

- Եթե անգամ չեմ հասկանում, չեմ էլ դավաճանում,- Համլետի տաքարյուն, բռնկվող բնավորությանը բոլորը ծանոթ էին, Աշոտը ձեռքից քաշեց, նստեցրեց, ապա ինքը տեղում կանգնեց ու հստակ արտահայտվեց.

- Ես կիսում եմ ընկեր Համլետ Գրիգորյանի մտավախությունը կայանալիք որոշման առթիվ, միայն դավաճանություն բառի փոխարեն ես կօգտագործեի՝ մոլորություն բառը:

- Դուք ո՞վ եք, երիտասարդ, ի՞նչ կազմակերպություն եք ներկայացնում,- հարցնողը արհմիության նախագահն էր:

- Աշոտ Սարգսյան: Ներկայացնում եմ ոչ ֆորմալ կազմակերպություն,- չուզեց դաշնակցության անունը տալ, թաքցրեց նաեւ, որ կազմակերպության պատասխանատուն է,- ես իմ կազմակերպության կողմից լիազորված չեմ,- սա արդեն անկեղծ էր,- կարտահայտեմ իմ անձնական կարծիքը: Ես կտրականապես դեմ եմ Մանուչարյանի առաջարկին, իր երկու տարբերակներով հանդերձ, քանի որ դա տանում է դեպի...- մտածեց-մտածեց՝ հարմար բառ չգտավ իրողությունը որակելու: - Ենթադրենք, Ադրբեջանը համաձայնում է, որ ... հետ դառնանք բռնած ճանապարհից,- հայացքը սահեցրեց ներկաների դեմքերով,- այո-այո, հետ դառնանք,- շեշտեց,- իր կազմը: Տեղական մարմինների ընտրությունները կազմակերպելու համար ենթադրենք Ադրբեջանը երեք հազար օմօնական է ուղարկում Ստեփանակերտ, որ հետեւեն ընտրությունների անցկացման կարգին՝ մեր ոստիկանության աշխատակիցների հետ: Հազար օմօնական էլ ուղարկում է Բերդաձոր 3 հազարը՝ Մարտակերտի շրջան, մի նույնքան էլ Մարտունի, Հադրութ եւ Ասկերան: Եկեք տեսնենք ինչ է ստացվում. առանց մի կրակոցի Ադրբեջանը գրավեց Ղարաբաղը: Ձեր ընտրած ճանապարհը սխալ է, եւ Ղարաբաղի համար կարող է ճակատագրական լինել:

- Դա իրոք որ զուտ քո կարծիքն է,- Ռոբերտ Քոչարյանը խոսեց նուրբ շեշտադրումներով:- Ի դեպ, քո ընկերները այդպես չեն մտածում: Երեւեւում է, վերջին ժամանակներս դու նրանց հետ չես շփվել: Նրանց կարծիքին անտեղյակ ես:

- Ես առաջարկում եմ, ովքեր Մանուչարյանի առաջարկին կողմնակից են, ամբողջ պատասխանատվությունը վերցնեն իրենց վրա,- ոտքի ելավ Ռազմիկ Պետրոսյանը:

- Հասկացա, այս երեք տարվա մեջ ով է պատասխան տվել, որ մենք պատասխան տանք,- ասաց Օլեգ Եսայանը:

- Ամեն ինչ պարզ է, ես էլ ասելիք չունեմ,- Ռազմիկը, որ դեռ կանգնած էր թափով նստեց:

- Լրիվությամբ, լրիվությամբ շրջապատված եմ դավաճաններով,- Գրիգորյան Համլետը ընդոստ վեր կացավ դեպի դուռը:

- Ես առաջարկ ունեմ,- տպարանի տնօրեն Յուրի Ներսիսյանը, որ արձանագրում էր նիստը, խոսք խնդրեց,- հետո ինչ, թե մի քանի հոգի դեմ են, ժողովը թող որոշում ընդունի:

- Իսկ ո՞վ է ասում թե սա ժողով է: Ժողով չի,- Ռազմիկը զարմացած ձեռքերը տարածեց,- պարզապես հավաքվել ենք մտքերի փոխանակության:

Ցրվում են առանց որոշում ընդունելու:

Ստեփանակերտի քաղաքային գործկոմի նախագահ Մաքսիմ Միրզոյանի աշխատասենյակում հնչեց հեռախոսի ձայնը.

- Անհրաժեշտ է հանդիպել:- Ստարիկովն էր, ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի հրամանատար Շատալինի տեղակալը: Գեներալ-մայորը մեկ տարուց ավելի գտնվում էր Ստեփանակերտում, համակրելի անձնավորություն էր, եւ Միրզոյանը այդ հանդիպման առաջարկի մեջ ոչ մի առանձնահատուկ, կասկածելի բան չտեսավ, քանի որ իրենք եղել են մշտական կապի մեջ: Ղարաբաղում գործող լեգիտիմ իշխանությունը կոմկուսի Ստեփանակերտի քաղաքային կոմիտեն եւ խորհուրդների քաղաքային գործադիր կոմիտեն էին: Իշխանության կուսակցական եւ գործադիր մարզային եւ շրջանային մարմինները լուծարված էին:

- Ժամադրավայրը, հանդիպման ժամը կհաղորդի Լեոնարդ Պետրոսյանը:

Մեկ ժամ անց զանգեց Պետրոսյանը, որ այն ժամանակ ագրոարդի պետն էր.

- Երեկոյան, ժամը 10.00-ին, «Օջախ» խորհրդածանոցի տաղավարում, մի բաժակ թեյի շուրջ...

Նշանակված ժամին Միրզոյանը քաղաքից դուրս, անմարդաշատ, աչքից հեռու տաղավարում էր: Ապրիլի 21-ն էր: Բնականաբար, առաջինը խոսեց գեներալը, առանց նախաբանի, առանց զգացմունքների առանձին արտահայտության.

- Ադրբեջանի անվտանգության խորհուրդը, ըստ իմ ստացած տեղեկությունների, մշակել է ռազմական գործողության ծրագիր, ներկայացրել է Գորբաչովին, որը, ինչքան ինձ հայտնի է, երաշխավորել է: Իրա-

կանացնելու դեպքում ղարաբաղցիներին սպասվում են ծանր հետևանքներ: Պատճառը եւ առիթը դուք էլ եք հասկանում Հայաստանը հրաժարվել է մասնակցել մարտի 17-ի Միութենական հանրաքվեին:

Մաքսիմ Միրզոյանը գերազանց տիրապետում է քաղաքական դաշտի իրողություններին: Գիտեր, որ Հայաստանը չի մասնակցել, իսկ Լեռնային Ղարաբաղի ակտիվը եւ ժողովուրդը պահի դրությամբ ելքը, փրկությունը գտնելով դրա մեջ, ցանկություն են հայտնել մասնակցելու հանրաքվեին, բայց մերժվել են արտակարգ դրության ռեժիմի պատրվակով:

-Ես իմ պարտքն եմ համարում ձեզ տեղեկացնել...

Միրզոյանը այդ պահին եւ հետո էլ չկարողացավ կողմնորոշվել՝ գեներալը հանձնարարությո՞ւն է կատարում, թե՞ մարդկային խղճից թելադրված է գործում, մտածեց ու միայն մեկ նախադասությամբ պատասխանեց.

- Ես պետք է գնամ Երեւան, Լեւոն Տեր-Պետրոսյանի մոտ:

Ստարիկովը ուղղաթիռ է տրամադրում:

Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահի առանձնասենյակում զրույցը շատ կարճ տեւեց:

- Ես կկապվեմ Գորբաչովի հետ, անհրաժեշտության դեպքում կգնամ Մոսկվա, միայն թե կանխվի այն, ինչի մասին տեղեկացրիք:

Նույն ժամին, նույն ուղղաթիռով քաղգործկոմի նախագահը հետ եկավ:

Հաջորդ օրը, առավոտյան ժամը 10.00-ին Միրզոյանը, կուսակցության քաղկոմի քարտուղար Հրանտ Մելքումյանը՝ Լեռնային Ղարաբաղի ՊԱԿ-ի նախագահ Կոնցեվենկոյի առաջարկությամբ նրա աշխատասենյակում են: Այստեղ էր նախատեսված հանդիպումը կազմկոմիտեի ղեկավար Վիկտոր Պոլյանիչկոյի հետ:

- Մաքսիմ Միխայլովիչ, ես ձեզ շատ եմ հարգում, եւ հենց այդ պատճառով բազմաթիվ անգամ հեռացրել եմ դամոկլյան սուրը, որ կախված է եղել ձեր գլխին, Ղարաբաղի վրա:

Միրզոյանը ամենաբարդ ու խճճված իրադրության մեջ միշտ կարողանում էր պահպանել սառնասրտություն, չենթարկվել հույզերի, բայց այս անգամ շտապեց ընդհատել Պոլյանիչկոյին, ու չթաքցրեց անձնական հակակրանքը.

- Շնորհակալություն, չեմ կասկածում ձեր անկեղծությանը,-Պոլյանիչկոն կուլ տվեց դիմացինի ծաղրը եւ չփոխեց դեմքի նույն իբր հարգալից ու սիրալիր արտահայտությունը:- Ես ինչքան տեղյակ եմ, դուք պատրաստվում եք մի գործողության, որի հետեւանքը ողբերգական

կլինի ինչպես Ղարաբաղի, այնպես էլ հայության համար:

- Դուք իզուր եք այդպես մտածում: Մեր բոլոր գործողությունները ուղղված են տարածաշրջանում իրադրության նորմալացմանը, խաղաղության վերահաստատմանը եւ կյանքը ժողովուրդների բարեկամության ոգով շարունակելու օգտին: Ադրբեջանում եւ Ղարաբաղում պետք է գործեն Ադրբեջանի սահմանադրությունը եւ նրա օրենքները, եւ ամեն մի գործողություն ուղղված օրինականության դեմ եւ իրականության ապակայունացմանը՝ կպատժվի օրենքի ամբողջ խստությամբ...

- Հենց առաջինը դուք եք խախտել սահմանադրությունը. Լեռնային Ղարաբաղում չեն գործում իշխանության խորհրդային մարմինները: Մինչեւ դրանք չվերականգնվեն, ինչ խոսք կարող է լինել կայունացման մասին:- Ասաց Միրզոյանը, վատ թաքցրած հակակրանքով: Ղարաբաղում գիտեին Պոլյանիչկոյի կենսագրությունը, որ նա մասնակցել է Աֆղանստանի պատերազմին, հայտնի է եղել դաժանությամբ, անցել է անմեղ զինվորների ու խաղաղ բնակիչների արյան միջով:

- Մենք աշխատում ենք այդ ուղղությամբ: Իհարկե, լուծարված իշխանությունները պետք է վերականգնվեն, բայց դեռ շուտ է, ոչ մենք, ոչ դուք պատրաստ չենք դրան:

Քաղկոմի քարտուղար Հրանտ Մելքումյանը մեղադրանք ներկայացրեց կազմկոմիտեի ղեկավարին խոսելով օմօնի կողմից Արցախում կատարվող բռնությունների մասին, որին տեղյակ է, եւ որը կատարվում է կազմկոմիտեի թույլտվությամբ:

- Վիկտոր Պետրովիչ, ես ավելորդ չեմ համարում անդրադառնալ մեր զրույցին, եւ նախազգուշացնել ձեզ հրաժարվել այդ զառանցագին մղձավանջային գաղափարից: Հակառակ դեպքում ձեզ սպասվում է կամ սովետական, կամ հայկական դատ,-Միրզոյանը եւ զգաց, որ անցնում է թույլատրելիության սահմանը, եւ շատ հանգիստ, առանց մազաչափ իսկ շփոթվելու, բառերը հատ-հատ շեշտելով շարադրեց իր մտքերը:

- Մենք այլեւս իրար ասելու ոչինչ չունենք: Դուք ազատ եք,- Պոլյանիչկոն զգաց, որ իր խաղերն ավելորդ են, ցույց տվեց, որ խոսակցությունն ավարտված է:

- Այնուամենայնիվ, ես խորհուրդ կտայի մտածել այդ ուղղությամբ,- ատելությամբ շպրտեց, երբ հրավիրվածները դռան մեջ էին:

Նույն օրը, ապրիլի 26-ին Մոսկվայից Ստեփանակերտ ժամանեց նախկին մարզկոմի քարտուղարը, ում նախաձեռնությամբ ստեղծվեց «Արցախի մտավորականության ասոցիացիան», որն առաջարկեց լու-

ծարված եւ չգործող մարզկոմում կատարել կադրային փոփոխություններ, որից հետո քաղաքականության մեջ պիտի մշակվեր նոր գիծ...

Սեւ, չարագուշակ ամպեր են կուտակվել Ղարաբաղի վրա: Երկիրը գտնվում էր օրհասական վիճակի մեջ: Բոլոր քաղաքական ուժերը համախմբելու եւ համատեղ որոշումներ, ծրագրեր կայացնելու նպատակով Ստեփանակերտում ստեղծվում է կոորդինացիոն խորհուրդ, որպեսզի Արցախի տարածքում կատարվող իրադարձությունները վերահսկվեն եւ ուղղորդվեն: Խորհրդի կազմի մեջ ընդգրկվում են Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը, Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսյանը, Մաքսիմ Միրզոյանը, Ժաննա Գալստյանը, Վալերի Բալայանը, Արկադի Կարապետյանը: Սա գաղտնի գործող քաղաքական մարմին էր, որի որոշումները, կարելի է ասել, ընդունելի եւ պարտադիր էին Լեռնային Ղարաբաղում գործող իշխանության, բոլոր ֆորմալ եւ ոչ ֆորմալ կազմակերպությունների համար:

Ազերիները Գետաշենից ու Մարտունաշենից բնակիչներին, իրենց կամքին հակառակ, բերել-լցրել են Ստեփանակերտ, որպեսզի բնակչության շրջանում ահ ու սարսափ տարածվի: Եվ ինչ-որ չափով նրանք իրենց նպատակին հասել են: Ահասարսուռ լուրեր են հասնում Բերդաձոր: Հին Շենը տագնապի մեջ է: Մայիսի 2-ին վերջին ավտոբուսով ուսանողական ջոկատի տղաներին հանում են ձորակից, Թալինի եւ Արտաշատի ջոկատներն էլ ուղղաթիռով հետ ուղարկվեցին, քանի որ մնալը խիստ վտանգավոր էր:

Առնոն գնացել էր Գորիս: Մելքումյան Արթուրի հետ գորիսեցի Վարդանի ՈւԱՋ-ով զենքերը հասցրել էին թռիչքաիրապարակ:

- Բերդաձորը անտեր-անտիրական ենք թողել, ոնց ուզում է լինի, թեկուզ ոտքով, ես էսօր պիտի էնտեղ լինեմ:

Մարինեն, որ գնացել էր մանկապարտեզի համար գույք բերելու, նկատեց Առնոյի անհանգստությունը.

- Դու ոնց որ քեզ նման չես,- շշնջաց աղջիկը:

Առնոն նայեց ու հայացքի մեջ նկատվեց վատ թաքցրած մի խոր թախիծ:

- Աղջիկներիս կարոտել եմ...

- Էդ երբվանի՞ց ես սենտիմենտալ դառել,- փորձեց ցրել Մարինեն:

- Եթե հանկարծ ...-Առնոն իսկապես որ մի տեսակ էր:

- Ճանապարհի վրա ենք, Առնո, - Մարինեն թույլ չտվեց, որ խոսքը

վերջացնի, զգում էր, որ բացառիկ վիճակի մեջ է, ու տխուր բան է ասելու:

- Ոնց ուզում է լինի, այսօր Բերդաձորում պիտի լինենք: Զենքերը պետք է տեղ հասցնենք...

- Գետաշենը հանձնվեց, Առնո:

- Բերդաձորը չի հանձնվի:

Մարինեն զգաց, որ հրամանատարը նորից գտել է ինքն իրեն: Առնոն մտավ օդանավակայանի պետի մոտ:

- Տեսնում ես թռիչքի եղանակ չէ: Ձորակը մշուշի ու մառախուղի մեջ է: Դա նույնիսկ սովորական աչքով է տեսանելի...

- Իրադրությունը պահանջում է...-Ստիպեց Առնոն, եւ պետը տեղի տվեց:

Թռչում են Լաչինի վրայով: Առնոն ու Թաթուլը ուղղաթիռի լուսանցույցից ավտոմատները ուղղել են ներքեւ: Հին Շենի «օդանավակայանում» իջնելը վտանգավոր էր: Մեծ Շենի տարածքում, որն ավելի ապահով էր, ուղղաթիռը մոտեցավ գետնին, բայց վայրէջք չկատարեց: Արկղերը արագ-արագ շպրտում են գետնին, եւ ուղղաթիռը օդ է բարձրանում: Մեքենաները, որ եկել-սպասում էին, մոտեցան: Ամեն ինչ բարեհաջող ավարտվեց:

Շտաբից իջնելիս հավաքված մի խմբի կարծես թե Առնոյին էր սպասում:

- Հայաստանի ջոկատները գնացին...

- Կզանգեմ, նոր տղաներ կգան,- Առնոն ամբողջությամբ տեսնում էր ու զգում , թե մարդկանց հոգում ինչ է կատարվում, եւ փորձում էր կասեցնել կասկածների, վախի ու սարսափի սկսված հորդումը: Նա նույն օրվա վերջում իսկապես զանգեց Ստեփանակերտ, որ ժողովրդի հետ խառը , թեկուզ երեքական, չորսական, խումբ ուղարկեն, տեղեկացրեց, որ մարդիկ խուճապահար են: Բայց խուճապի զգացումը ամեն տեղ էր:

- Հիվանդանոցի գլխավոր բժիշկը չկա, գնացել է:

- Նրա գրանցումը հայաստանյան է, մնալը վտանգավոր էր:

- Առնո, կանանց ու երեխաներին հանիր, մենք մնանք,-ամբոխի միջից հնչեց տղամարդու մի ձայն:

- Եթե չկարողանամ պաշտպանել, կհանեմ: Բայց ես խոստանում եմ, ես կապահովեմ ձորակի անվտանգությունը: Մենք ի վիճակի ենք պաշտպանվելու...

- Քեզ ի՞նչ կա, կինդ ու երեխաներդ քաղաքում են,- ամբոխի միջից կոպիտ շպրտեց մեկը:

Հրամանատարը մի պահ միայն խեղճացավ:

- Թողեք, գնացեք: Ձեզ զոռով պահող չկա: Ուրիշ հայեր կգան՝ կապրեն,- եւ առաջին ու վերջին անգամ ինքն իրենից դուրս եկավ: -Էս հողի վրա ձեր նմանների ապրելը մեղք է... Ինձ վախկոտ ժողովուրդ պետք չէ...Ով ուզում է, թող գնա...

Ամբոխը սկսվեց:

- Էս հողի վրա հայը պիտի ապրի...

Կեսօրից հետո Առնոն բարձրացավ դիրքերը: Բարձունքից հեռադիտակով նկատեց դեպի Գորիս գնացող զինվորական շարասյուները, այն էլ տեխնիկայով ուժեղ զինված: Կապվեց Գորիսի հետ.

- Զորքերի տեղաշարժ կա դեպի ձեզ, գուցե ուշադրությունը մեզ վրա հրավիրենք:

- Գործ չունեք: Դուք ձեր դիրքերը պինդ պահեք:

Երկու օրից հետո մայիսի 6-ին կատարվեցին Ոսկեպարի, Շուռնուխի հայտնի դեպքերը: Հետո Առնոն իմացել ու տղաներին պատմել է, որ գործողությունը կրել է «Ամպրոպ» անվանումը, եւ որ շարասյունը հետ դառնալիս Լաչինում կանայք ծաղիկներ են շաղ տվել «հաղթական» վերադարձող զինվորական զորամասերի առաջ:

Մտավ Գրիշա Սարգսյանի աշխատասենյակը: Նախագահական կառավարում մտցնելուց հետո պաշտպանության հարցերով պարտավոր էր պայմանավորվել նախագահի հետ:

- Հարձակվելու եմ Յըղոնեսի վրա: Նրանց արածին պատասխան պիտի՞տանք,- ասաց ու դուրս եկավ:

Սարգսյանը զանգեց Միքայելին, որն անմիջապես եկավ: Հայտնեց տղայի մտադրությունը:

- Մի էդ գժին կանչիր,- ասաց հայրը:

Որդին եկավ, կանգնեց գլխահակ:

- Դաշնակ շան որդի, դու՝ փորձիր, ես ինքս նույն ժամին կգանգեմ Շուշի, պարետին,- հայրն ասաց պատկառազդու եւ հաստատակամ տոնով:

Որդին լուռ դուրս եկավ: Հայրը կանխեց որդու «խելահեղ» արարքը:

Գիշերվա ժամը մեկին Առնոն տուն մտավ՝ հուզված, խռովված, նյարդային:

-Առնո, քաղցա՞ծ ես,- Էլլադան արդեն վեր էր կացել ու սեղանին հաց էր դնում:

Մինչեւ ուղնուծուծը կոմունիստ հայրը շորերը հագավ, նստեց դաշնակ որդու դեմ դիմաց: Նստեց ծանր-ծանր: Չգիտեր ոնց սկսեր զրույցը տղայի հետ, որին տարբերում էր բոլոր որդիներից, եւ որին առանց

ցույց տալու սիրում էր մի առանձին սիրով: Որդին դանդաղ ծամում էր հացը:

- Հետ քաշվիր, կո՞ւյր ես, չե՞ս տեսնում ինչ է կատարվում...

- Պատերազմը կվճռի ելքը...

- Այդ ասելու համա՞ր ես եկել... Խորհրդային Միությունո՞ւմ...Դա հնարավոր չէ... Էլլադան ինքն էլ, որ պատմության ուսուցչուհի է, չի ընկալում Առնոյի մտքերը, բայց համակրում է տղային, գնահատում նրա օժտվածությունը, տաղանդը, զարմանում նրա բազմակողմանի զարգացածության, խոր գիտելիքների վրա, ու հոր ու որդու զուսպ, թռուցիկ գաղափարական վեճի ժամանակ միշտ փորձում էր շեղել զրույցի հունը, որպեսզի հարազատների միջեւ հակասությունը չսրվի:

Երկու-երեք ժամ հազիվ պառկած՝ զգույշ ոտնաձայների վրա Էլլադան զգաց, որ Առնոն դուրս եկավ:

Առավոտյան Միքայելը գնաց Ստեփանակերտ մոմաթերթ գնելու ու չկարողացավ հետ դառնալ:

Հոր եւ որդու վերջին հանդիպումն էր սա:

Մի քանի օր անց մայիսի 8-ին Պետրոսյան Հրաչիկի հանձնարարությամբ Վիլենը Ռոմայի հետ գնում են ստուգելու պահակակետերը: Գիշերվա ժամը 4.00: Թիվ 1 պահակակետում արթուն հսկում էին եւ մոտեցող ոտնաձայներին անմիջապես արձագանքեցին: Հաջորդ պահակակետում, գերեզմանոցի թմբի վրա, տղաները հոգնած քնով էին անցել: Չեն արթնացնում, իրենք են հսկում, մինչեւ տղաները մի թեթեւ բուններն առնեն: Գյուղ բարձրացող ճանապարհի վրա Վիլենը զինվորական սապոգների թխթխկոց է լսում: Մեկ էլ այն տեսան՝ ներքեւից, մայրուղու կողմից զինվորները կուզեկուզ, սողալով, ավտոմատներից կրակելով բարձրանում են: Գյուղի վերջին տնից մինչեւ գերեզմանաթմբի բլինդաժը հեռախոսալարը ձգած - միացրած են լինում: Վիլենը հեռախոսով խրամատից կապվում է Հրաչիկի հետ:

- Շուրջկալ է: Ձենքերը արագ թաքցրեք:- Դիրքից-դիրք իրար հետ կապվում, կայծակնային արագությամբ լուրը տարածում, զենքերը թաքցնում են:

Լուսադեմին գյուղը շրջապատված էր: Իբր մտան, «գրավեցին», շրջակա թմբերի ու բարձունքների վրա կանգնեցին, որ դուրս եկող ու մտնող չլինի: Անձնագրային ռեժիմի ստուգում է:

Վիլենը հազիվ էր մտել տուն, ավտոմատի փամփուշտները ապակիները փշրելով վզգացին տան մեջ: Նա հետ ցատկեց, եւ հենց նույն վայրկյանին 20-25 խորհրդային զինվորներ լցվում են տուն: Ամեն ինչ

տակնուվրա են անում, ջարդում են պահարանները, թափում են շորերը: Կինը Ռուզանը, որ հղի էր, մյուս սենյակում ամբողջ մարմնով դողում է: Շեղաչք-նեղաչք մի զինվոր, հավանաբար միջինասիական, նկատելով կնոջ դողոցքը, ներս մտած ռուս սպային զեկուցում է.

- Ամեն ինչ ստուգված է:

Սպան հեգնանքով նայեց զինվորին, ու ինքն անձամբ սկսեց խուզարկել: Մանկասայլակի շորերը թափված են սենյակում: Մոր գրկից մեկ տարեկան Նանեն ձեռքը մեկնեց դեպի սպայի ավտոմատը:

- Նու չտո, զնակոմայա վե՞շչ...

Վիլենը արհամարհալից հայացք ձգեց սպային: Ներքնահարկից մի զինվոր բարձրացավ ձեռքին նռնակ.

- Ահա, գտել ենք:

- Արձանագրեք,-հրամայեց սպան:

- Դուք դրեցիք, գործ եք սարքում:

- Համոզվա՞ծ ես ասում:

- Համոզված եմ, - Վիլենը գիտեր, որ զենքերը պինդ են թաքցրած:

- Առաջ ընկիր,- սպան Վիլենին տանում է կոլտնտեսության գրասենյակ, որտեղ նստած է ռուս գնդապետը:

- Դո՞ւ ես Սիմոնյանը:

- Ես եմ,- Վիլենը հասկացավ, որ իր անունը պարետության եւ օմօնի ցուցակներում կա:

- Դո՞ւ ես ցանկացել գյուղխորհրդի նախագահ դառնալ, որ կարողանաս գրոհայիններին լավ օգնե՞լ...

- Ես մանկավարժ եմ, ի՞նչ գործ ունեմ նման բաների հետ:

- Կին, երեխա ունե՞ս:

- Ունեմ: Կինս ուսուցչուհի է, երկու աղջիկ ունեմ:

- Իսկ ինչո՞ւ աղջիկներ:

Վիլենը չհասկացավ, թե հարցաքննողի մտքերի ընթացքն ինչու խճողվեց ու անհեթեթ հարց տվեց:

- Ընկեր գնդապետ, օրումեջ շուրջկալներ եք անում, մեզ վախեցնում, սարսափի մեջ պահում, մեզնից տղա՞ կծնվի...

- Սրամիտն ես հա՛,- փափկեց գնդապետը ,- այս անգամ լավ արծար, մյուս անգամ ներում չի լինելու:

- Ճիշտ այդպես, ընկեր գնդապետ,- ասաց փրկվածը:

Տղամարդկանց տներից քշել-հավաքել են ակումբի առաջ: Խորհրդային զինվորների հետ օմօնն էլ էր մտել գյուղ:

- Վատ էի՞ք ապրում...Հիմա լա՞վ է, որ...-օմօնականը ավտոմատը պահել տղամարդկանց վրա եւ խաղաղասիրական ճառ է ասում:

- Ի՞նչ տարբերություն, հայ թե թուրք, միասին ապրեք, էլի, ոնց որ ապրում էիք,- սա էլ ռուս սպայի կարծիքն էր:

-Ի՞նչ վատ բան է, մենք ուզում ենք առանձին ապրել,- Հրաչիկը չէր կարող լռել:

Օմօնականը մոտեցավ ու սապոգով հարվածեց ոտքին: Հրաչիկը տեղից չշարժվեց, ակնդետ, ուղիղ նայում էր ազերիի աչքերին: Վերջինս չդիմացավ, հայացքը թեքեց:

Ալվարդը կուժը վերցրած, իբր ջրի է գնում: Ավտոմատի կրակահերթը շամփրեց օդը.

- Չշարժվել: Հետ գնա:

- Չե՞ս ամաչում, իբր քրիստոնյա ես: Մենք մուսուլմաններով շրջապատված, մի կողմից նրանք, մի կողմից էլ դուք եք վախեցնում...

- Եթե շարունակես, կտանենք Շուշի,- խորհրդային սպայական կազմը եւս տեղյակ էր Շուշիի բանտում հայերի հանդեպ կատարվող գազանությունների մասին եւ քաղաքի անունով սպառնում էր:

- Այ, այդ մեկը հավատում եմ,- շարունակեց Ալվարդը,- անզեն տղամարդկանց մոտ հերոս եք կտրել:

- Լեզուդ շատ ես չարչարում, կին,- այնուամենայնիվ, Ալվարդը կարողացավ առաջ անցնել:

Աղբյուրը Պետրոսյան Վաչիկենց տան մոտ էր: Մի քանի հոգի Վաչիկին քացով խփում էին:

-Դա ինչ տղամարդկություն է, անզեն մարդու վրա էդ քանի հոգո՞վ եք հարձակվել,- ձայնը բարձրացրեց կինը: Ռուս սպան մոտեցավ, ձեռքը մեկնեց, որ Ալվարդին հեռացնի:

-Ձեռքերդ քեզ քաշիր,-հպարտ ու զուսպ ձայնը բարձրացրեց կինը, ու սպան ենթարկվեց:

- Դու քրիստոնյա՞ ես:

- Այո:

- Կին, երեխաներ ունե՞ս:

- Ոչ, չունեմ:

Ալվարդի 5 տարեկան աղջիկը վախից հիստերիկ լացի մեջ էր ընկել ու կպել մոր ոտքերին:

- Եթե ինձնից լիներ, տանկի փողը կուղղեի եւ տները մեկ-մեկ կպայթեցնեի...

- Բայց մենք ի՞նչ ենք արել:

- Միջին Ասիայում ռուս զինվոր են սպանել:

- Մենք ի՞նչ մեղք ունենք:

- Վաղն էլ դուք եք սպանելու:

Երեխան մոր ու անծանոթի վեճից ձայնը ավելի բարձրացրեց, որի վրա ներքեւից մի ռուս մայոր բարձրացավ.

Երբ ստուգումը վերջացել էր, ջոկատի հրամանատարը քշտեց շալվարի փողքը. 20սմ երկարությամբ միսը պոկվել ոսկորը բացվել էր, արյունը լցվել կոշիկի մեջ:

- Հանգիստ թող կնոջը, ի՞նչ ես կպել:

Այդ օրը զենք չգտան:

Մինչեւ 1991 թվականը խորհրդային ուժային կառույցների ստորաբաժանումները ինչ որ ձեւով պահում էին հավասարակշռությունը, մեկ հայերի, մեկ ազերիների կողմն էին, մեկ դեպի Լաչին էին կրակում, մեկ Լաչինից Բերդաձոր: Քաղաքական իրադրությունը փոխվել էր, բերդաձորցիները աշխարհից ու քաղաքականությունից անտեղյակ:

Այդինյան Կարենը բարձրացավ պահակակետ, ուր հերթապահում էին 5 գինվոր ավագ սպայի հետ: Դեսից-դենից զրուցելուց հետո հրավիրում է մի կտոր հաց ուտելու: Սպան սկզբում չեմուչում է անում, բայց հետո համաձայնում է: Կարի արտադրամասում սեղանը մեջտեղ են քաշում, թթի օղու շիշը դնում մեջտեղը, ժենգյալով հացն էլ շուրջը: Հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամության առաջին կենացի վրա Կարենը վեր է կենում պահարանից հանում նախօրոք պատրաստած նվերը՝ յուրաքանչյուրին մի-մի բլուզ: Գնալով կենացները քաղցրանում են: Ավագ սպան Սերյոգան պատմում է, որ ինքը որբանոցում է մեծացել, ու մի քանի կենացից հետո թթի օղին արդեն թեյի բաժակով է խմում: Հրաչիկն ու Նորիկը սեղանի շուրջ տրամադրություն են ստեղծում, իրենց էլ խմելու հարցում նրանցից հետ չմնալով:

- Գնանք որսի,- առաջարկեց ավագ սպան:

Տղաները նման առաջարկի էին սպասում:. Լցվում են ԲՏՐ-ի մեջ: Արդեն մթնել էր Բարձրանում են դեպի Խրմանլար գյուղը: Ճանապարհին մի ՈՒԱԶ երեւաց: Սերյոգայի հրամանով մի արկ արձակվեց, մեքենան փախավ: ԲՏՐ-ը շարժվում է դեպի Լաչին: Կարենը ներքուստ անհանգստացավ, մտածեց, որ իրենց տանում է հանձնելու, նայեց Հրաչիկին:

- Հանգիստ նստիր,-հայերեն ասաց Հրաչիկը, որի մոտ ինչպես միշտ վախ, անհանգստություն բացարձակ չկար: Մտնում են Լաչին, հասնում քաղաքի հենց մեջտեղը: Կարենը կարծում է վերջ: Բերել է հանձնելու, բայց երբ ԲՏՐ-ը հետ է շրջվում , հանգիստ շունչ է քաշում: Հետճանապարհին գինվորական պահակակետում արգելափակոցը գցված էր, ուրեմն, ուզում են ստուգեն: Սերյոգան քշեց ուղիղ արգելափակոցի վրա, խփեց-անցավ: Գիշերվա ժամը 5-ին հասան գյուղ, մտան արտադ-

ամաս: Հարբածությունը դեռ չէր անցել ու նորից նստում են կերուխումի:

- Ձեզ այստեղից քշելու են,- անկեղծացավ Սերյոգան:

Հրաչիկը քմծիծաղ տվեց, լսած լուրերին չէին հավատում:

- Եթե գալու լինենք, տեղեկացնելու եմ,-շարունակեց ռուսը:

Հաջորդ օրը գինվորական խումբը պահակակետը թողնելու հրաման ստացավ: Տղաները հետո ցավով պիտի իմանային, որ ավագ սպայի վրա գործ են սարքել ու կալանել այդ օրվա հակաադրբեջանական գործողությունների համար:

Հին Շենի շտաբում ԲԻՄ-ի բացառիկ խորհրդակցությանն էին հավաքվել բոլոր գյուղերից ներկայացուցիչներ: Կանչել էին միջին հասակի այն տղամարդկանց, ովքեր ակտիվ մասնակցում էին պաշտպանությանը, եւ ում վստահում էին: Աշոտն էր, Աշոտի տղա Արմիկը, Սանվելը, Մկրտչյան Արտաշեսը, Գառնիկը, Հովսեփյան Վլադիկը, Թաիրյան Վլադիկը, Վալերին, Սեւակը, Մեծ Շենից Թաքուլը, Սլավիկը, Էդիկը, Գագիկը, Եղցահողից Հրաչիկը, Վիլենը, Կարոն, Կարենը... Մտնում-դուրս են գալիս, ծխում են, մեկուսի, խումբ-խումբ զրուցում են մինչեւ ժամը յոթանասը, որ ժողովը սկսեին: ԲԻՄ-ի խորհրդակցություններն ու նիստերը միշտ գիշերվա կեսից հետո էին լինում, երբ ծորակում շարժումը դադարում էր ու դաշնակից գիշերվա լռության ու մթության մեջ կարող էին հանգիստ ու ապահով խորհրդակցել: 1991-ի հունվարից հետո նման ծավալով չէին հավաքվել: Խորհրդակցել են շատ փոքր խմբերով, միայն հրամանատարներով ու օգնականներով, եւ պարտադիր հսկողություն էր սահմանվում:

Ժամը 10-ն անց էր, Առնոն դեռ չկար: Սովորականի պես բարձրացել էր պահակակետերը ստուգելու: Գետաշենից հետո հրամանատարը վերանայել էր պահակակետերի տեղադրությունը: Որոշ տեղերում դրանք հեռացրել էր 1,5-2 կիլոմետր: Ընդ որում ընտրել էր ամենաանառիկ եւ դժվար խոցելի բարձունքները, որ դիմադրելը հեշտ լինի: Գետաշենի ռազմերը կախվել էր ծորակի վրա, բայց բնակչությունը այն չէր տեսնում, ոլորանների ոգին էլ բարձր էր: Խորհրդակցության հավաքվածները զգում էին պահի, ժամանակի, գալիք իրադարձությունների լրջությունը, ու սովորական կատակի ու ծիծաղի զրույցները վերածվել էին հանդիսավոր լռության ու շշնջոցի:

Երբ հրամանատարը մտավ, ժամը 12-ն անց էր:

- Այսպես, Գետաշենն ու Մարտունաշենը չկա,- սկսեց Առնոն: - Չկա, սովիետեւ խուճապի են մատնվել: Գետաշենի բեմագիրը փորձելու են

կրկնել այստեղ, մենք պիտի պատրաստ լինենք, մենք պիտի կռվենք: Մահ կամ ազատություն: Ով համարձակվի ձեռք բարձրացնել Բերդաձորի վրա, ով համարձակվի ոտք դնել եւ խլել մեր ազատությունը, ցույց կտանք, թե մենք ով ենք: Սա մեր վերջին կռիվն է: Եթե չկռվենք, ազգը կպարտվի: Ղարաբաղի ճակատագիրը որոշվում է այստեղ՝ Բերդաձորում: Կամ պիտի խայտառակաբար թողնենք, դուրս գանք, կամ պիտի զենքը ձեռքներիս պաշտպանենք մեր հողը:

Ոչ ոք չի խոսում: Ոչ ոք չի ընդհատում: Ոչ ոք հարց չի տալիս, չնայած հարցականները շատ-շատ են:

- Ադրբեջանի եւ Խորհրդային կենտրոնի մտադրությունը պարզ է: Պիտի գան: Պիտի փորձեն Հայաստանի սահմանը հեռացնել, Ադրբեջանի սահմանը հասցնել Ստեփանակերտի մատույցներին: Մենք միայն պաշտպանվում ենք: Հայտնվելու ենք լիակատար շրջափակման մեջ՝ ցամաքից եւ օդից, օգտագործելու են տեխնիկայի ցանկացած միջոց: Կապը դրսի հետ կտրվելու է: Մենք պիտի պատրաստ լինենք ամեն ինչի: Օմօնը չպետք է մտնի այս տարածքը:

- Իսկ եթե հանկարծ չդիմանա՞նք, Առնո,-լռությունը խախտեց Առստամյան Գառնիկը:

- Այդ մասին էլ եմ մտածել: Ծայրահեղ դեպքում 40 հոգով Հունանավի եւ Յողնեսի արանքով մարտի կբռնվենք, միջանցք կբացենք, 6-7 կիլոմետրը հեշտ է հաղթահարելը, կազմակերպված ձեւով բնակչությանը կէվակուացնենք Հայաստանի սահմանը: Այս ծանր պարտականությունը եւ ճեղքել՝ եւ տեղափոխել, դրված կլինի 40 հոգու վրա:

- Իսկ եթե ժողովրդին ուղղաթիռով հանե՞նք,- ընդհատեց Սիմոնյան Վիլենը,-որ եւ զոհ չտանք, եւ կռվելը հեշտ լինի:

- Դա էլ է տարբերակ: Բոլոր դեպքերում տարբերակները ինչքան շատ լինեն՝ այնքան լավ:

- Օդից հարձակման դեպքում ի՞նչ պիտի անենք,- լսվեց մի ձայն:

- Հին Շենում կհավաքվեն ակումբում եւ դպրոցում, պատերը հաստ են, Մեծ Շենի դպրոցում՝ գետնահարկ կա, Եղցահողի եկեղեցում՝ պատերն էլ կպաշտպանեն...

- Բայց մենք ինչքան ենք ի վիճակի դիմադրելու,- հարցրեց Աշոտը:

- Մենք թվով քիչ ենք, բայց աշխարհագրական դիրքի շատ մեծ առավելություններ ունենք: Մենք պիտի ապավինենք մեր ուժերին, բայց հարկ եղած դեպքում ... Գորիսից օգնություն է գալու:

- Առնո, ենթադրենք՝ միջանցքը բացված է, մենք գյո՞ւղը պիտի պահենք, թե ժողովրդի հետ ճանապարհ բացելով դուրս ենք գալու,- դիմեց Թահիրյան Վլադիկը:

- Չեմ կարծում, թե բանը դրան հասնի: Բայց ծայրահեղ դեպքի համար ես նախատեսել եմ: Դուք գիտեք, որ պաշտպանության համար ընդգրկված են 18-60 տարեկանները, որոնք արդեն տիրապետում են զենքին: Խորհրդային բանակի դեմ կռվելը դժվար է, դա ես հասկանում եմ, բայց դուք էլ լավ իմացեք, որ մենք կօգտագործենք մեր դիրքային առավելությունները: Շորեն տակը օմօնի համար մսաղաց ենք սարքելու: Հավաքվածներից կա՞ մեկը, ով դեմ է կռվելուն,- Առնոն լռեց ու հայացքը շրջեց մեկ առ մեկ: Բոլորի դեմքին հրամանատարը վճռականություն տեսավ,- ով ազգի զավակ է, պիտի պայքարի մինչեւ վերջ: Իսկ հիմա անցնենք կոնկրետ պաշտպանության հարցերին,- մոտեցավ պատից կախված քարտեզին, որը Առնոն վերջին շաբաթում էր գծագրել ու տարբերվում էր նախորդ քարտեզներից: Սեւ ու սպիտակով էր, ու ավելի շատ գծագիր էր՝ սլաքներով ու պարզ ու հստակ սեւ կետերով:

- Բերդաձորի ամբողջ ուժերը բաժանված կլինեն 4 վաշտի: Ուշադիր նայեք այստեղ: Բերդաձորի վրա երեք ճանապարհ կա, առաջին, Հունանավով՝ Լաչինի կողմից, երկրորդ, Իրիչանով՝ Շուշիի կողմից, երրորդ, Շորեն Գլուխ: Հիմնական ճանապարհը Տասը Վերստի կողմից է:

Մի քանի վայրկյան դադար տվեց:

- Սահակյան Արմիկ, դու քո 12 տղաներով պիտի պահես Հունանավի ուղղությունը: Արտաշ, դու Մանվելի հետ 12-13 հոգով կպահես Իրիչանի դիրքերը: Շորեն Գլուխը, Հին Շեն մտնող հիմնական ճանապարհը կպահեմ ես: Դու, Հովհաննիսյան Սաքո, ինձ հետ կլինես: Սա ամենավտանգավոր տեղն է:

- Առնո, բա ե՞ս:

- Քեզ որտեղ ուղարկեմ, Վլադիկ, դու՛ ասա:

- Ամենադժվար տեղը: Որ թաքնվելու ու փախչելու տեղ չլինի,- իբր կատակի տվեց, բայց լուրջ ասաց Հովսեփյան Վլադիկը:

- Ուրեմն, քո տեղը կլինի Շորեն Գլխում, իմ հրամանատարության տակ:

- Ամենաուժեղ հարձակումը լինելու է այստեղից: Տեխնիկան այստեղով է փորձելու մտնի:

- Պիտի կռվենք մինչեւ վերջ,- ոգեւորված տեղում կանգնեց Նիհարավուն, բարակակազմ Վլադիկը:

- Գագո,- Առնոն դիմեց Մեծ Շենի հրամանատարին,- Կարմիր քարը որպես պաշտպանական կետ պիտի ուժեղացնենք, քանի որ բարձունքը իշխում է շրջակայքի վրա: Էդտեղից պիտի կասեցվի Լիսագորի կողմից սպասվող ներխուժումը: Էդ մասին մենք հետո, հենց տեղում կզրուցենք:

- Մեր հիմնական խնդիրն է՝ չհանձնվել, չենթարկվել, չպարտվել: Գնդացրի վրա ես կաշխատեմ: Ականանետի վրա կաշխատես դու, Սեւակը: Եթե տեսնենք Շորենգլխում թուլանում ենք, կկապվենք Իրիչանի հետ: Արտաշ, դու մի քանի հոգու հետ օգնության կգաս: Ուժեղ կռիվ է սպասվում, տղերք: Մեր փրկությունը կռվելու մեջ է:

- Արտաշ, դու վախենո՞ւմ ես կռվելուց:

Եղբոր դիմելուց Արտաշեսը հանկարծակիի եկավ ու չորս կողմը նայեց, այսինքն թե ինչու իրեն դիմեց:

- Ե՞ս... - Չայնի մեջ վիրավորվածություն կար,- ե՞ս... վախենա՞մ... կկռվենք, կխփենք, կխփվենք էլ, կռիվ է... Որտեղ՝ դու, էնտեղ էլ՝ ես: Ոնց որ դու, էնպես էլ՝ ես,- ամբողջ երկու տարվա ընթացքում Արտաշը իրար վրա, թե շտաբում, թե եղբոր մոտ, այդքան մտքեր ու խոսքեր իրար վրա ասած չկար: Առնոն լավ գիտեր, ճանաչում էր լռակյաց ու ինքնամփոփ եղբորը, եւ պատահական չէր, որ առաջինը նրան դիմեց:

- Սեւակ, Արմիկ, Մանվել, դուք մեռնելուց վախենո՞ւմ եք:

- Գերության տարվելուց մեզ ավելի վատ մահ է սպասվում: Պիտի կռվենք: Որտեղ՝ դու, էնտեղ էլ ես,- ասաց Սեւակը:

- Վլադիկ, քեզ չեմ հարցնում, դու կանգնելու ես էնպիսի տեղ, որ փախչելու տեղ չունենաս:

- Ես իմ դիպուկ կրակոցներով մեկ օրում քո գնդացրի չափ կաշխատեմ: Հրամանատարի դեմքին ժպիտ երեւաց, երեւի հիշեց իր «կայծակ» խումբը»:

- Վաղվանից անցնում ենք խրամատների ու բլինդաժների նախապատրաստմանը: Ճանապարհները պիտի ականապատվեն՝ երկու գծով: Նահանջի դեպքում առաջին գիծը պայթեցնելու ենք:

- Իսկ վիրավորների հա՞ղցը...

- Բլինդաժներում հատուկ տեղեր ունենք, բլինդաժից էլ նահանջի ճանապարհ կա գյուղի վրա:

-Բայց մեր մարդկային ուժը քիչ է, Առնո:

-Վլադիկ, բայց քանի՞ անգամ եմ բացատրել, որ մարդկային ուժը շատ ու քիչ լինելը հաշիվ չի: Լավ, դա մի կողմ թողնենք, գենքի մի տեսակ կա դուք ծանոթ չեք, ես կբացատրեմ, սա կոչվում է աֆդանական տարբերակ...

-Որտեղի՞ց գիտես,-մեջ ընկավ Վլադիկը:

-Անտեղի հարցեր մի տվեք,- այնուամենայնիվ պատասխանեց,- ամսագրերից գիտեմ:

-Այսպես, ուրեմն, սա չուգունից սարքած պրիզմայաձեւ անոթ է, որի մեջ ամոնալ ենք լցնում: Պայթեցնելու դեպքում կաղապարը՝ չուգունը

մնում է անվնաս, օգտագործում ենք երկրորդ, երրորդ անգամ: Այսպիսի 13 կաղապար ունենք:

-13-ը շատ թիվ է, ասա՝ 12:

-Լավ, Վիլեն, ունենք այսպիսի 12 կաղապար: Յուրաքանչյուրի մեջ տեղավորվում է 3 կիլոգրամից մինչեւ 15 կիլոգրամ ամոնալ: Ունենք այնքան, որ պաշտպանությանը հերիքելու է: Փորձարկել ենք, դուք ձեր աչքով տեսել եք արդյունավետությունը:

-Մենք չենք տեսել, Առնո,-ասաց եղցահողցի Կարոն:

-Պատկերացրեք էսպես: 10 տոնանոց մեքենան կշպրտի, ցայուցրիվ կանի:

-Բավարարված ենք:

-Այդ դեպքում անցնենք առաջ: Մեր հրանոթը տեսել եք հեռարձակում է 5-6 կիլոմետր: 20-ից ավելի «Ալազանի» հրթիռներ ունենք: Կայանքը Գորիսում է, ուղղաթիռում չտեղավորվեց, կմտածենք, ինչ որ մեկով բերել կտանք:

Խորհրդակցությունից առաջ պայմանավորվածություն կար, որ կես ժամը մեկ պահակակետերից Առնոյի հետ հեռակապով կապվեին, որպեսզի ձորակում յուրաքանչյուր շարժ անմիջապես հաղորդվեր:

-«Բերդ», «Բերդ»,- Առնոն վերցրեց ընկալուչը,- լսո՞ւմ ես, «Բերդ», «Առաջինն» է: Տղաները հասկացան, որ Քումենքարից են զանգում:

-Տասը Վերատի կողմից դեպի Լաչին ՈՒԱԶ է շարժվում:

Առնոն կապվում է եղցահողի հետ.

-Զգույշ, ճանապարհի վրա անծանոթ մեքենա կա:

-«Բերդ», «Բերդ», «Առաջինն» է, մեքենան թեքվեց դեպի եղցահող:

-Լսեք ուշադիր: «Բերդ»-ն է: Կանգնեցրեք մեքենան:

-«Բերդ», չի ենթարկվում: Կրակում են:

-«Բերդ»-ն է, դուք էլ կրակեք, բայց աշխատեք պատանդ վերցնել:

10 րոպե հետո եղցահողից հաղորդում են, թե կրակ բացելուց մեքենան շրջվել ու փախել է:

-Եթե Անդրանիկը Գորիսից մտներ Բերդաձոր, Զաբուղից հետ չդառնար, մինչեւ Գանձակ հայկական հողերը մերը կլինեին,- ասաց ու հայացքը կանգ առավ պատին կախած Նժդեհի, Անդրանիկի, Դրոյի նկարներին,- այս անգամ ազգովի ենք կանգնել: Արյան գնով էլ լինի, պիտի նվաճենք մեր ազատությունը: Լավ, անցնենք մեր հիմնական խնդիրներին: Շարունակում ենք: Գագիկ, դու արի քարտեզին մոտ կանգնիր: Սեծ Շենի տարածքում թշնամուն պիտի կանգնեցնենք հուշարձանի տակ: Քաջքեն քարում, 20 մետր տարածքով ճանապարհը պիտի ականապատվի: Վերեւի քերծը կփլվի ու կփակի ճանապարհը,- Առնոն ու-

սումնասիրել էր ճանապարհները, ընտրել այնպիսի հատվածներ, որ եւ նեղվածք լիներ, եւ կողքերից ավտոմատներով կարողանան աշխատել եւ հակառակորդին ծուղակ գցել:

Խորհրդակցությունը , որ 40 րոպեի չափով ընդհատվել էր, շարունակվեց եւս կես ժամ:

- Տղերք, վաղը...այսինքն այսօր, -նայեց լուսամուտից, որտեղ մութը դարձել էր կաթնագույն, արդեն լուսանում էր,- երկու-երեք ժամ գնում եք հանգստանում, իսկ էն վեց հոգին կգաք շտաբ. Առնոն հատուկ խումբ էր ստեղծել, որն իր գլխավորությամբ շտաբում պահեստային զենքերը քանդում, մաքրում, յուղում էր, ստուգում պիտանիությունը:

Ցրվելուց երեք ժամ հետո հրամանատարը իր ընտրած 15 տղաների հետ բարձրանում են Շորեն թումբը: Երկու-երեք հոգի հեռադիտակով գնում են Լաչինի եւ Շուշիի ճանապարհները, մնացածները հողային գործ են կատարում, իրենց հետ վերցրել էին բահ, քլունգ եւ լինգ: 40 սմ լայնությամբ եւ 60սմ խորությամբ խրամատ են փորում, որ բավականին երկար, մոտավորապես 60 մ ձգվում է թմբից, իջնում լանջով, հատում ճանապարհը, իջնում ճանապարհի տակ: Կեսօրն անց հողային աշխատանքները ավարտված են:

-Տղերք, ձեզ հետ ես ամենավտանգավոր գործերի կգնամ, դուք դա լավ գիտեք: Եթե որեւէ մեկը գյուղում որեւէ շշուկ բաց թողեց, բերնից խոսք թռցրեց, պատժվելու է ամենախիստ ձեւով, էլ չեմ ասում, որ բոլորս կորած ենք,- ապա խմբին ազատ է արձակում, իր մոտ պահելով Սաքոյին:

-Սաքո, սա գլխավոր դարպասն է: Պայթեցնելու դեպքում Շորենգլուխը փլվում -ծածկում է գլխավոր ճանապարհը, իսկ դա մաքրելու համար շաբաթներ են պահանջվելու...

Երկուսով կատարեցին վերջին աշխատանքները, կաբելը ձգեցին ու քողարկեցին: Հրամանի դեպքում Սաքոն Առնոյի նախապես ցույց տված կածաններով պիտի մոտենար ու վառեր պատրույգը:

-Նժդեհը Սյունիքը պահեց, մենք Բերդաձորը կպաշտպանենք: Ով կգա մեզ վրա իր մահը կգտնի էս ձորում...

Երբ գործն արված-վերջացրած էր, Սահակյան Արմիկի հետ տրակտորով ականապատման բոլոր հետքերը մաքրում են:

Առնոն մի խմբի հետ հաջորդ գիշերը գնացին աշխատելու Մեծ Շենի ճանապարհի վրա: Լարը լանջով 30 մետր քաշեցին բարձրացրին քարի վրա ու նշան արեցին որպեսզի հետո մարտկոցները տեղադրվեն: Այս ամբողջը տեւեց 4-5 ժամ: Լուսադեմին ականապատումն արված էր: Թե ում վրա էր դրված պայթեցնելու գործը, խիստ գաղտնի էր պահվում, միայն Առնոն գիտեր:

Գետաշենի եւ Մարտունաշենի բռնատեղահանման լուրը Եղցահողի հարաբերական խաղաղությունը խախտել էր: Բնակչությանը կատարվածի մասին ամբողջությամբ չէին տեղեկացնում, բայց միեւնույն է, լուրերը տեղ էին հասնում, եւ տագնապը սողոսկել ու նստել էր ձրակում: Անհանգստություն կար, բայց խուճապի ոչ մի նշույլ: Բնակչությունը մտածում էր, թե նույնը Արցախում չի իրագործվի, քանի որ Արցախն ինքնավար կազմավորում է: Պարետատունը արդեն հսկողությունը վերացրել էր, զինվորները դուրս էին եկել, եւ մի չարագուշակ, անհասկանալի. անըմբռնելի հանգստություն էր տիրում ձորակում:

Առնոն Եղցահողում է: Շտաբից Հրաչիկի հետ բարձրացան Բլառանց տափը, հետո կանչեցին տղաներին Կարոյին, Վիլենին, Նորիկին, Ռոմային: Առնոյի հետ եկել էր նաեւ թալինցի Սաքոն: Հաղթանդամ, 40-ին մոտ մի տղամարդ, որին նայելիս մարդու զարզանդ էր գալիս: Վախ, տագնապ, երկմտանք ասված բաները նրանից շատ-շատ հեռու էին:

-Տղերք, վերջապես ժամանակը եկել է, ցույց տանք, թե մենք ով ենք: Պատրա՞ստ եք Նժդեհ դառնալու... - Ձորակի հրամանատարի առաջին խոսքն էր:

Յուրաքանչյուրն իր ձեւով արտահայտեց նվիրվածությունը պաշտպանության գործին. տղաները պատրաստ էին անվերապահորեն առանց երկմտանքի գնալու զոհողության, կռվելու ու ... ապրելու, եւ հրամանատարի գոհունակությունը, լույսի ներքին ճառագումը արտահայտվեց դեմքին:

Հարթավայրը, որի վրա կանգնած էին, իշխում էր շրջակայքին.

-Սա կենտրոնական հենակետն է, պլացդարմը,- ասաց Առնոն,-մյուս հենակետը կլինի Փոքր Խերխանում, գյուղ մտնող ճանապարհի վրա, հասկանալի է, եզրին: Օժանդակ հենակետեր կծառայեն բոլոր պահակակետերը: Առնոն գիտեր, թե Գետաշենը ինչպես են շրջապատել ու վերցրել, եւ նմանատիպ սպասվող հարձակումը ետ մղելու համար ձորակում նախապատրաստական աշխատանքներ էր տանում:

-Գյուղ մտնող միակ մեքենայի ճանապարհը պետք է ականապատվի:

Օրը ցերեկով, նույն օրը 10մ երկարությամբ նեղ խրամատ է փորվում, որի մեջ Առնոն ու Հրաչիկը գիշերը տեղադրում են պայթուցիկ

նյութերը: Առնոն բացատրում է ծրագիրը. շարասյունը հենց գալիս է, առաջին երկու մեքենան բաց են թողնում, որպեսզի պատանդ վերցնեն, հետո պայթեցնում ու փակում են ճանապարհը:

Եթե մինչ այդ զենքերը պահում ու թաքցնում էին անհատապես, ապա այժմ պահեստավորվում են թաքստոցներում, որպեսզի հնարավոր լինի կազմակերպել արագ ու միասնական պաշտպանությունը:

Ձորակի հրամանատարի վերջին անգամ եղցահող մտնելն ու դուրս գալն էր:

Արտաքուստ հանգիստ, ներքուստ՝ լարված ու սպասողական վիճակ էր:

Բերդաձորը մնաց ինքն իր հետ...

-Որ զանգեցի, ինչո՞ւ չեկար: Ես ասացի, որ երեխայի կաթի փոշին վերջացել է:

-Բա որ ասացի՝ տղա բեր, ինչո՞ւ չբերեցիր,- Առնոն զգում էր իր մեղավորությունը կնոջ առաջ ու կատակի տվեց:

-Արամազդը մնաց... հաջորդին,-կինը քնքշացավ, կատակին կատակով պատասխանեց:

-Ոչինչ, գյուղում տղա է ծնվել այդ անունը դրել ենք:

-Սպասեցի, սպասեցի, որ գաս՝ անունը դնես, չեկար...

-Դու առանց ինձ շատ սիրուն անուն ես դրել՝ Անուշ...- Առնոն ամեն կերպ փորձում էր սիրաշահել կնոջը, ցրել հոգու վիրավորվածությունը, բայց չէր ստացվում:

-Ինչո՞ւ չեկար, ծննդատանը այնքան էի ամաչում... Բոլորի ամուսիններ գալիս էին...

-Բոլորովին հնարավոր չէր, ճանապարհները փակ էին: -Անուշը ծնվել էր հունվարի 7-ին, իսկ հայրը կարողացել էր գալ ամիսներ անց մարտի 23-ին:

-Առանց այն էլ չարացած եմ, դու էլ մի կողմից մի գայրացրու:

-Ի՞նչ է եղել, ի՞նչ կա... -մեղմացավ կինը:

-Այս ձևով շարունակել հնարավոր չէ, շատ են խանգարում, այն էլ բացահայտ:

-Ովքե՞ր:

-Կարևոր չէ,- ձեռքը թափ տվեց,- հենց վաղը կմտնեմ մարգիսորոհուրդ, հարցը կդնեմ կամ ես, կամ՝ նա:

-Գուցե դո՞ւ ես մեղավոր,-նուրբ տոնով, այնպես, որ հանկարծ ամուսինը չվիրավորվի, հարցրեց կինը:

-Ախր, նրանք ընդհանուր գործն են խանգարում: Խնդիրը անձի մեջ չէ... իբր լարում ենք իրադրությունը, ավելորդ կրքեր ենք բորբոքում...

-Իսկ գուցե նրանք ճիշտ են, Առնո, գուցե հանգիստ ապրելը գերադասեի՞ր... -Կնոջ ձայնը փաղաքշության վերջին երանգները ընդունեց:

-Իսկ դու գիտե՞ս մեզ ինչ է սպասվում...Պատերազմ... - Ասաց ու տեսնելով կնոջ վախից գունատված դեմքը, ավելացրեց,- կատակ եմ ասում: Դու գիտես, չէ՞, որ ծայրահեղ եմ, որ սիրում եմ չափազանցել: Ոչինչ, կհարթվի: Հաջորդ անգամ գալուց հանգիստ կլինեմ:

-Առնո... - Կնոջ հոգին ալեկոծված ու խիստ անհանգիստ է: - Առնո... Գնում ես...

-Գնում եմ, այս անգամ երկար սպասեցնել չեմ տա, շուտ կգամ:

Կինը ուզեց ինչ-որ բան ասել, բայց խոր շունչ քաշեց, ու բառերն ու մտքերը կուլ տվեց հիշելով, որ ամուսինը մի քանի անգամ զգուշացրել է, որ ճանապարհ գնալու վրա՝ շատ չխոսի, չտխրի, վատ բաներ մտքով չանցկացնի:

Առնոն մոտեցավ, շոյեց ու մազերը համբուրեց... Արփիկը հոր գիրկն ընկավ: Ալվարդն աչքերում լճացող, ուր որ է թափվելու պատրաստ արցունքները խոր կուլ տվեց, փորձեց ժպտալ, բայց ծռմռված ու լացակումած ինչ-որ բան ստացվեց... Ամուսիններից ոչ ոքի մտքով չէր անցնում, որ սա իրենց վերջին հանդիպումն էր: Իսկ ով գիտի՝ իրեն ինչ է սպասվում, այն էլ նման բարդ, խճճված, խճողված, քաղաքական խիստ հակասական իրադրության մեջ: Իրենք միայն փոքրիկ ու աննշան պտուտակներն են մեծ երկրի քաղաքականության մեջ: Քաղաքական հայտնի խոշոր դեմքերը չեն նույնիսկ կարողանում գուշակել, կանոնավորել, փոխել դեպքերի ընթացքը, էլ ուր մնաց, թե աշխարհի քարտեզի վրա նույնիսկ կետով չնշմարվող Արցախի, նրա կուսական ու մաքուր մնացած ձորակի բռնապետության ու ազերիական արյունարբու լծի դեմ անհավասար կռվի մեջ մտած մեծ Ստավորականը, ազատության պայքարի ֆանատը գուշակեր դեպքերի ընթացքը... Իսկ ինչ նշանակություն ունի, եթե նույնիսկ գուշակեր:

Այն, ինչ որ պիտի լինի՝ արդեն կար...

ՄԵԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՔՐ ՁՈՀԵՐԸ
Ռազմագործողություն «Կոլցո»

Առնոն մտավ տուն, սափրվեց, իր վրա զգալով էլլադայի հարցական հայացքը, ասաց.

-Չեն ճանաչի, չէ՞,- առանց միրուքի անճանաչելի էր դարձել,- կանչել են ժենգյալով հաց ուտելու: Մեծ Շեն եմ գնում:

Կերպարանափոխվելը եւ հյուրասիրության գնալը կարծես թե անհարիր էին, բայց բնավորությունը իմանալով խորթ մայրը հարցեր չտվեց: Մայիսի 14-ի առավոտն էր, իսկ 15-ի լույս գիշերը, ծեգը- ծեգին անհանգիստ բախոցից դուռը բացեց:

-Շրջապատված ենք, թաքցրու սրանք,- Արտաշի ձեռքին երկու դիպլոմատ կար:

-Արտաշ, մնա այստեղ, մի գնա,- կնոջ սիրտը վախ էր սողոսկել:

-Գնամ տեսնեմ, գյուղում ինչ է կատարվում,- ասաց ու դուրս գնաց:

Կինը ոտ ու ձեռ ընկավ, հիշեց, որ ննջասենյակում պահարանի տակ թաքստոց կա: Տախտակը մեխած չէր, բարձրացրեց, պայուսակները շպրտեց ներս, մուրճ ու մեխ գտավ, մեխեց, ու ինքն էլ դուրս վազեց: Մութն արդեն հետ էր քաշվել, եւ սարսռուն լույսը իջել էր գյուղի վրա: Կինը տեսավ, թե ինչպես Արտաշի ու Մանվելի դեմքներին արցունքաբեր գազ փչեցին, ձեռքները մեջքներին ոլորեցին ու տարան: Վախից հետ փախավ տուն, փոքրիկի մոտ: Հազիվ էր շեմից ներս մտել, 10-15 հոգի ներս խուժեցին.

-Տանտերը ո՞վ է,- հարցրին ադրբեջաներեն:

-Ես եմ,- ուզում էր թաքցնել, որ Մկրտչյանների տունն է, մինչդեռ մտնողները հենց իմանալով էին մտել:

-Իսկ տան տղամա՞րդը...

-Ստեփանակերտ է գնացել:

Այլազգի կապիտանն աթոռը մոտ քաշեց, տիրաբար նստեց, հարցաքննում էր ռուսերեն ու բարյացակամ.

-Ամուսինդ քանի՞ տղա ունի,- կինն այստեղ հասկացավ, որ իմանալով են մտել ու ամեն ինչ գիտեն:

-Շատ ունի: Բայց գյուղում չեն:

-Կապիտան, սա Առնոյի տունն է,- մեջ ընկավ ազերիներից մեկը:

-Դու գործիդ գնա,- իբր կոպիտ խոսքը կտրեց կապիտանը:

Պահարանը շուռ տվեցին, խուզարկում են շորերն ու սպիտակեղենը:

-Սրա տերը ու՞ր է,- ցույց են տալիս Արտաշի ծմեռային կոշիկները:

-Քաղաք է գնացել:

Ազերին կոշիկը վերցրեց: Ջոկջկում ու վերցնում են ում ինչ արժեքավոր է թվում: Առնոյի սենյակը տակնուվրա են անում:

-Ընկեր կապիտան, զենքի մասեր են,- ցույց է տալիս էլեկտրական լարերի ու կոճերի մի կապ: Վերցնում են ռադիոընդունիչը եւ հեռադիտակը:

Կապիտանը զննում է պատշգամբի առաստաղը, որի վրա փոքրիկ դոնակ է ամրացված.

-Բարձրացիր, կարող է տանիքում զենք լինի,- հրամայում է:

Ազերին վախենում է բարձրանալ.

-Բայեվիկ վա՞ր:

-Յոխ,- էլլադան պատմության ուսուցիչ էր, բայց Շուշիում ապրելով մաքուր տիրապետում էր ադրբեջաներենին ու Հին Շենի դպրոցում դասավանդում էր այդ առարկան:

-Իսկ զե՞նք:

-Չկա:

Սեղանը մոտ են քաշում, երկու հոգի բարձրանում, վախվխելով հրում -բացում են դռնակը: Ոչինչ չկար, ոչ զենք, ոչ գրոհային:

Երկրորդ խումբն է մտնում տուն: Ազերին ավտոմատը պահում է կնոջ վրա.

-Քեզ Լաչին ենք տանում:

-Ինչու՞:

-Այդպես է կարգադրված: Շուտ, երեխային վերցրու, փող-մող, ոսկի, վերցրու, հետ չես դառնալու:

Կնոջ սիրտը սարսափ մտավ, գրկեց երկու տարեկան Լուսինեին ու կուչ եկավ.

-Եթե սպանեք՝ միասին կսպանեք,- կինը դողում էր:

-Ալլահը վկա, չենք սպանելու, բայց տանում ենք Լաչին:

Կինը երեխային գրկած դուրս է գալիս:

-Ոչ մեկի հետ ոչ մի խոսք, ոչ մի բառ, չփորձես ձենդ գլուխդ գցել,- սպառնաց ազերին:

-Էլլադա, ու՞ր են տանում,- հարցրեց հարեւան Սամվելը:

-Լաչին:

-Քեզ ի՞նչ ասացինք, եթե մեկ էլ բերանդ բացել ես...

Թեք, գրեթե ուղղահայաց 4-5 մետրանոց ճանապարհահատվածի վրա տանկը խրվել էր ցեխի մեջ, անձնակազմը դուրս էր եկել: Էլլադան ռուսերեն խոսակցություն լսելով սրտապնդվեց. եթե մահ է, գոնե մի երկու խոսք կասի...

-Ռուս մարդիկ, քրիստոնյաներ, էս ի՞նչ է կատարվում, ինչու՞ են ինձ Լաչին տանում... Ձեր աչքի առաջ... Ես ի՞նչ եմ արել...-Խոսում է մաքուր ռուսերենով:

-Ու՞մ երեխան է,- կասկածով նայեց ռուսը:

-Իմ երեխան է:

Ռուսը հեռակապով կապվեց մեկի հետ, որ գյուղի բարձունքում է, եւ հավանաբար ղեկավարն է:

-Կնոջը գրկի երեխայի հետ պատանդ են տանում,- զեկուցեց:

-Ոչ մի դեպքում,- էլլադան լսեց ձայնը,- բաց թողեք կնոջը,- հրամայեց գլխավորը:

Կինը հետ դառավ տուն: Հենց մտավ, երրորդ խումբը եկավ, որի մեջ մի ռուս գնդապետ, մի ազերի գնդապետ, մի ռուս զինվոր եւ դպրոցի տնօրեն Նապոլեոնը:

-Եկել են ստուգելու՝ տանը զենք կա, թե չէ, գրոհային կա, թե չէ,- իրր նրանց գալու նպատակը բացահայտեց մարդը:

-Երկու խումբ արդեն ստուգել է, չե՞ք տեսնում,- կինը գոռաց ու ցույց տվեց թափթփված տունը:- Չկա՛, չկա... Մեծ հայրենականին հայերը չե՞ն կռվել, հաղթանակ չե՞ն բերել,- կինը վախի սահմանը հպդթահարել էր,- հայ ժողովուրդը ինչքան զոհ է տվել, դա հերիք չէ՞, որ մենք մեր հողում ապրենք: Ուրեմն, մենք էն ժամանակ էինք պետք, հա՞, երբ սովետական երկիրը վտանգի մեջ էր, երբ դիվիզիաներ էինք ստեղծում, քանի՞ մարշալ ենք տվել,- կինը արագ-արագ վրա է տալիս, որ հասցնի բան հասկացնել,- երկիրը ազատել ենք, հիմա մենք, որ պաշտպանության կարիք ունենք, մեզ մենակ եք թողել, մեզ թիկունք չեք կանգնում...

Կինը գնդապետի աչքերում կարեկցանքի արտահայտություն տեսավ: Երեւի ազերի գնդապետից է վախենում խոսել,- անցավ կնոջ մտքով:

-Գիտենք, որ գյուղում զենք կա, դու տեսել ես:

-Չեմ տեսել: Էս՝ դուք, էս՝ գյուղը, ստուգեք,- գոռաց կինը գնդապետի երեսին:

-Ամուսինդ որտե՞ղ է:

-Ստեփանակերտում:

-Ի՞նչ գործով:

-Մոմաթերթ գնելու:

Այդ պահին փողոցից մի կնոջ հիստերիկ ծվծվոց լսվեց: Օմօնականը Ռոզայի մատից փորձում է ոսկե մատանին հանել, դուրս չէր գալիս:

-Դանակը բեր՝ մատը կտրենք,- ասաց ընկերոջը:

Ռոզան ձեռքից դուրս պրծավ փախավ փողոց: Ազերին հասավ հետեւից, հարվածեց, գետնին փռված կնոջ մեջքին նստեց ու քաշքշում էր:

-Թաղեմ քեզ, ժորա, սպանում են, հասիր,- գոռում-գոչում, աղաղակում էր կինը: Ամուսինը հասցրել էր բարձրանալ տանիքը, թաքնվել ծղոտի մեջ, վախից սկսվել ու քարացել էր:

Սերգիին ավտոմատով տվեցին, եղած ատամներն էլ թափեցին, բերանն էլ ծռված տանում են դեպի ավտոբուսը: Մանվելը տեսավ, թե ինչպես է ազերին սվինը խրել Արմիկի մազերի մեջ ու քաշքշում է: Մի խումբ մտավ Եփրեմենց տուն:

-Ես իմ հոր՝ Թավաքչուլի վրեժն արդեն առել եմ,- Ռոզան վախից կուչ եկավ:- Քումեն քարի մոտ, էն երկու հոգին, նոյեմբերին...- Օմօնականը հիշեցրեց Սամվելի ու Վաղինակի սպանությունը: - Այ, էս մարդու միջոցով,- ու ցույց է տալիս զինվորների մեջ կանգնած լատիշին: Դեմքը ծանոթ էր, Ռոզան հիշեց, թե ինչպես էր ֆիդայիների հետ եկել, մի քանի օր մնացել, հյուրընկալվել, իբր համակիր էր: Հետո պարզվել է, որ ազերիների հետ կապ է ունեցել եւ տեղեկություններ է հաղորդել:

Օմօնը մտնելու նախորդ օրը՝ Գուրգենը որդուն ասել էր.

-Գառնիկ, դուրս եկ գյուղից:

- Ստեփանակերտից ասել են խուճապի չմատնվեք, անձնագրային ռեժիմի ստուգում է,- Գառնիկի ստացած տեղեկությունը դա էր: Իսկ երբ լուսադեմին հայրը կրկնեց՝ փախիր անտառ, Գառնիկը մի տեսակ անբնական կանգնած էր.

-Ես՝ փախա, բա իմ ընտանի՞քը:

Գառնիկը նռնակները, փամփուշտները լցրել էր ռետինե անվադոդի մեջ ու դրել թոնրատանը: «Օվչարկա» շունը ուղիղ գնաց, նստեց անվադոդի վրա, հենց մեջտեղը: Նույն պահին այգում մեղվափեթակները բացել ու զենք էին փնտրում: Մեղուների պարսը հարձակվեց եւ նրանց, եւ շան վրա: Շունն ու զինվորները թողեցին փախան:

Հենց տան մեջ ձեռնաշղթաները հագցրին: Երեխաներից փոքրը լացով կպավ հոր ոտքերին: Ազերին պոկեց ու խփեց պատին: Երեխան ուշագնաց ընկավ: Մայրը ծղրտաց.

-Փորդ ծխով կլցնեմ, ոսկիների տեղն ասա,- եւ ավտոմատը պահեց կնոջ վրա, որի ոսկեղենը գտնվում էր խալաթի մեծ գրպաններում:

Պահարանից քաշեցին հին ձեւի մի հեռախոս, եւ ազերին ձեռքը մեկնեց Գրետայի կոկորդին.

-Գրոհային ես, ասա զենքի տեղը:

Կեսուրը գոռաց ու կանգնեց մեջտեղը.

-Տղայիս տարաք, հիմա էլ՝ հարսի՞ս...

Այդ պահին Գրետան երեխային գրկեց ու դուրս վազեց: Գառնիկի հետ տարել էին նաեւ Մեծ հայրենականի հաշմանդամ հորը:

Էդիկը, Սասունը, Իսան, Արկադին գիշերվա պահակությունը վերջացրել ու իջել էին տուն: Ոչ մի տագնապ, ոչ մի շարժում դեռ չկար:

-Տղա, վեր կաց, ազերիները մտան գյուղ:

Էդիկը դուրս եկավ բակ, տեսավ գյուղի փողոցները լիքը սեւ համազգեստով օմօնականներ, հուշարձանի բարձունքում՝ զինվորականներ, զրահամեքենաներ:Գյուղի հակառակ ծայրին, ակումբի մոտ, նույնպես զինվորներ են եւ ԲՄՊ: Այսինքն, շրջապատված են: Ցատկում է հարեւանի բակը: Ռոզան նրան քաշում է գետնահարկը, որտեղ պատի մեջ բուխարիկն էր:

-Մտիր, շուտ, բալա ջան: Դուրս չգաս, մինչեւ ձեն չտամ,- ասում ու մեծ ամբարը տնքտնքալով մի կերպ քաշում է դեմը: Երեկոյան միայն, երբ կարծես ամեն ինչ հանդարտվել էր, Ռոզան իջել էր ներքնահարկ, քաշել ամբարը:

Հենց լույսը բացվեց, ինչպես միշտ ծեգը -ծեգին Շամոն դուրս եկավ պատշգամբ: Գյուղի բարձունքները գրավված են, փողոցներում էլ զինվորներին թիվ- համարք չկար: Ազերին ավտոմատը պահում է Շմավոնի եւ Սուրենի վրա: Ավտոտնակից հանում են մեքենան: Ընթացքի չի ընկնում: Շամոյին ու Սուրենին ծեծում են՝ ստիպելով, որ մեքենան հրեն: Տան մեջ ջարդ ու թալան է: Դուռ, պատուհան ջարդված են: Շորերի մեջ թաքցրած ոսկեղենը վերցրին: Օմօնականը տղաներին տանում է դեպի ավտոբուսը: Այստեղ էլ, ինչպես եւ ամեն տուն մտնելով, ասացին.

-Երկու օր ձեզ ժամանակ: Տեղափոխելու ենք:

-Բաց թող, ու՞ր ես տանում,- գոռաց ռուս սպան օմօնականի վրա, տեսնելով ոտքը հետեւից քարշ տվող Շամոյին: Սա համարձակություն ստացած կանգնեց ռուս սպայի կողքին.

-Ասա, թող տա իմ անձնագիրը,- անձնագիրը վերցրեց ու հետ դառավ տուն:

Տանը մայրը սուգ ու շիվան է կապել. 14 տարեկան որդուն՝ Սաշիկին կալանել ու տարել էին: Հովսեփյան Վլադիկը հասցրել էր փախչել ծորը, թաքնվել անտառում: Արկադին բարձրացել էր տանիքը:

Ռուս գնդապետը շքախմբի հետ կանգնեց Ծովեն Հարթի բլինդաժի մոտ, մտավդուրս եկավ:

-Սա սովորական փորվածք չէ: Սարքված է մասնագիտական բոլոր

կանոնների համաձայն: Ռազմական մասնագետի ձեռքի գործ է: Ո՞վ է սարքել, հարցրեց գնդապետը պատանդին: Արտասահմանից մասնագե՞տ եք բերել:

-Ոչ:

Վերին խութի բլինդաժը մտան, դուրս եկան: Պայթյուն լսվեց, բայց խուլ: Նռնակներով փորձում էին բլինդաժը պայթեցնել, չէր հաջողվում: Հետո փորձեցին ականներով, հետո՝ պայթուցիկ նյութերով: Ամեն պայթյունի հետ գյուղի մեջ ազերիները փռվում էին գետնին՝ կարծելով, թե հայ գրոհայիններն են հարձակվել:

Պայթյունը կրկնվեց երկրորդ, երրորդ անգամ: Բլինդաժները պայթեցրին: Շքախմբից մի ազերի կապիտան նայեց գյուղին.

-Մի՞թե սա է Կալադարասին: Այսքան քիչ ու այսքան թույլ... Իմանայինք, վաղուց կգրավեինք:

Ռուս գնդապետը հեգնական ու թարս նայեց...

Ջիբրախաչ սարի տափը սեւացած էր. հարեւան ադրբեջանական գյուղերից ու Լաչինից խաժամուժը եկել ու սպասում էր, որ մտնի թալանի:

Ամբողջ ռազմագործողության ժամանակ՝ 2,3 ուղղաթիռներ օդում շատ ցածր պտտվում էին: Առավոտյան դրանք իջել էին մոտիկ անտառում, որտեղից էլ կանաչ բերետավորները մտել էին գյուղ:

Կեսօրից բավական անցել էր, սա էլ չորրորդ խումբն է, որ մտավ Մկրտչյանների տուն: Ավտոտնակի դուռը կոտրեցին: Խնձորի, ընկույզի արկղերը եւ թափում, եւ ուտում էին: Բարձրացան, ավտոտնակի տանիքն էլ խուզարկեցին: Այս անգամ ստուգում էին հանգիստ, առանց վախի: Էլլադան լսեց մեկի ասածը.

-Առնոն արդեն բռնված է:

Մայիսի 15-ն էր, ժամը 17.00:

Երբ վերեւում բարձունքի վրա տղամարդկանց լցրին մեքենան, եւ ավտոբուսը շարժվեց, կանանց ու երեխաների վայնասունով գյուղը լցվեց: Մութը իջավ՝ ավելի խտացնելով վախն ու սարսափը: Փախած մի քանի տղամարդիկ մեկմեկ դուրս եկան թաքստոցներից:

-Հողեմ դրանց գլուխը, սեւանան դրանց երեսները, հո սոված չե՞նք մնալու, ասաց Արաքսյան, ինքն էլ իր ձեռքով հավերը մորթեց, մաքրեց, եփեց եւ դրեց սեղանին: Տղամարդկանց դեմքներին նայելով, տարած անչափահաս տղայի համար լացը գալիս էր, էս ո՞նց եղավ, էս ի՞նչ եղավ, իսկ բարձրաձայն ասաց.

-Լույսը բացվի, բարին հետը: Հիմա հաց ենք ուտում:

Շամոն հատակի տախտակը բարձրացրեց, որտեղ խմիչքներն էին պահում, հայկական «Անի» կոնյակ հանեց ու դրեց սեղանին: Արաքսյան բաժակը վերցրեց, խփեց տղամարդկանց բաժակներին.

-Խմենք, մի լույս կբացվի, բոլորը անբառ ու լուռ խմեցին: Հետո հավաքվեցին էդիկենց տանը, որ գյուղի ծայրին էր: Էդիկն ասաց, որ գնդացիրը թոնրի հետեւում թաքստոցում է: Մեկ մետր խորությամբ փոսի մեջ, կես մետր տրամագծով ասբեստե խողովակի մեջ միշտ թաքցնում էին, մի տաշած փայտ էլ այնպես էին դնում, որ մի բան լինելու դեպքում ձեռքդ գցեիր, ու արագ դուրս քաշեիր: Գնդացիրը մնում է թաղված: 13 հոգի, այդ թվում էդիկը, Շամոն, Վլադիկը, Արկադին եւ մյուսները Քիրսով անցնում են Քարին Տակ, ավտոմատները թողնում այդտեղ, ապա գնում Ստեփանակերտ:

16-ի առավոտյան երկու բեռնատար ծածկաթափքով, զինվորների ուղեկցությամբ մտան Հին Շեն, հայտարարեցին, որ ցանկացողները կարող են տեղափոխվել: Մեկը վախենում է, մյուսը մտածում է, բա որ Լաչին տանեն, երրորդը չի ուզում տունտեղ, ապրուստ թողնել ու դեպի անհայտություն գնալ:

Երրորդ օրը գյուղը լցվեց օմօնականներով: Արդեն հասկացել են, որ անտառներում գրոհային ու պարտիզան չկան, գյուղում էլ տղամարդ չկա, դիմադրություն չկա: Ջորակը ոչխարի հոտ է հոշոտված, ծեծված, ջարդված, անտերանտիրական, դես ու դեն է քշվում: Անասուններն էլ կարծես զգում էին կատարվածը, նրանց բառաչյունը արձագանքվում, դնգդնգում է ձորերում: Էլլադան հիշեց Արտաշի տված պայուսակը, մտավ տուն, ներսից կողպեց, տախտակը բարձրացրեց: Պայուսակի մեջ դաշնակցության դրոշն էր, ծրագիրը, կանոնադրությունը, հայաստանցի տղաների անձնագրեր: Նորից դրեց տեղը, փակեց, տախտակը մեխեց:

Երրորդ օրը, կեսօրին, մի շարասյուն մտավ գյուղ ՈւԱԶներով, բեռնատարներով: Շուշիի շրջգործկոմի նախագահ Գյոզալովը, շրջանային դատախազը, շրջկոմի կուսակցական պատասխանատու մի քանի աշխատողներ բոլորին հավաքում են ակումբ, իսկ բոլորը կանայք են ու մի քանի ծեր տղամարդ: Գյոզալովը հայտարարեց, որ երեք ընտանիքի մի մեքենա է տրամադրվում Հայաստանի սահմանը տեղափոխվելու համար:

-Գոնե Ստեփանակերտ տարեք, հնչեց տարեց տղամարդու մի ձայն:

-Շուտով Ստեփանակերտն էլ է տեղահանվելու, ավելի լավ է միանգամից գնաք Հայաստան:

-Մենք իրավունք չունե՞նք մեր հողում ապրելու, համարձակվեց էլլադան:

-Իրավունքը մերն է՝ չենք թողնում: Մերն ու ձերը չստացվեց:

-Յոլդաշ Գյոզալով, չի լինի՞ մեզ տանեք Աղդամի շրջանի որեւէ գյուղում իջեցնեք...

-Մենք ձեզնից փախչում ենք, դուք ուզում եք մոտենա՞լ: Դա լինելու բան չէ: Այնպես ենք հեռացնելու, որ ձեր երեսները չտեսնենք:

Մեկմեկ ստորագրել են տալիս, որ տեղափոխվում են կամավոր, որ Ադրբեջանի ղեկավարությունից փոխադրամիջոց են խնդրում, որպեսզի իրենց ընտանիքը անվտանգ ու ապահով հասնի Հայաստան: Այս ամենից հետո նոր միայն թույլատրում են ակումբից դուրս գալ: Ակումբից դուրս եկողների բերանին անեծքներ են Գյոզալովին ուղղված:

Դրսում մի կին շշնջաց էլլադայի ականջին.

-Առնոն էն ՈւԱԶի մեջ է...

Կինը վազեց դեպի հուշարձանի թումբը, մոտեցավ մեքենային.

-Առնո, էս ինչ է կատարվում, հարցրեց: Տեսավ շղթայակապ ձեռքերը եւ հայացքը, որ անբացատրելի էր: Շուշիի պրոպագանդայի բաժնի վարիչ Նովրուզը հրեցիեռացրեց կնոջը: ՈւԱԶը այնքան կանգնեց, ինչքան մարդկանց լցրին բեռնատարները: Թուրքին ծանոթ են ցավ պատճառելու բոլոր միջոցները...

Էլլադան իջավ տուն, պայուսակի մեջ դրեց երեխաների շորերն ու տնից դուս եկավ:

Նույն բեմագրով Գյոզալովը եւ շրջանի պատասխանատուները եղան ենթաշրջանի 4 գյուղերում:

... Շուշիում ազգայինկրոնական ատելությունը սահմաններ չէր ճանաչում: Խառն ամուսնության ընտանիքներ կային՝ երկու կրակի արանքում, մայրը հայուհի, հայրը՝ ազերի: Նույն Գյոզալովը բռնատեղահանումից շատ չանցած կանչում է մի խառնածնի.

-Գնա հայ մորդ սպանիր կամ քշիր տնից: Վերջին անգամն եմ զգուշացնում, հետո ուշ է լինելու:

-Ցույց տուր ցուցակը, որի մեջ մորս անունն է, ասում է տղան:

Գյոզալովը մոտենում է չհրկիզվող պահարանին հանելու համար ազերիների հետ ամուսնացած հայ կանանց ցուցակը: Տղան գրասեղանի վրայից վերցնում է Գյոզալովի ատրճանակը, կրակում: Պահարանի առաջ անշնչացած ընկնում է ազգայնամոլը: Իսկ տղան փախչում է

Ռուսաստան, ժամանակ անց զանգում մորը, պայմանավորվում, որ հանդիպեն Ռուսաստանում: Հեռախոսագիծը լսվում էր, տեղն իմանում ու ծերբակալում են:

14 օրից հետո հինգ հոգով Վիտալին, Էդիկը, Գագիկը, Շիրակը, Մարտունը գալիս են Բերդաձոր Հաչաքարում թաքցրած զենքերը վերցնելու: 24 ժամ մնացել են այստեղ, դիտել են գյուղում կատարվող անց ու դարձը: Ազերիներն արդեն զբաղեցրել էին տները: Թաքստոցում միայն մի ավտոմատ գտան: Բարձունքից տղաները տեսան, որ մի ՈՒԱԶ մտավ Մեծ Շեն, եկավ Վարար ջուր կոչվող աղբյուրի մոտ, ճանապարհի վրա կանգնեց:

Երկար ժամանակ մեքենան ոլորանից դուրս չեկավ: Մեկ տարի անց, երբ Պետրոսյան Էդիկը բանտից դուրս եկավ, պատմեց, որ ՈՒԱԶի մեջ ինքն ու Առնոն էին: Աղբյուրի մոտ նստել էին հաց ուտելու: Առնոյի մտքով անցել է ցատկել ձորը, եւ չէին կարողանա բռնել, բայց թե ինչու փախչելու եւ փրկվելու երկրորդ հնարավորությունն էլ բաց թողեց, եղբայրը Արմոն ամբողջ կյանքում պիտի տվայտեր, փորձեր իր համար պարզել, թե ինչ է մտածել եղբայրը, որ առիթը բաց է թողել. արդյո՞ք ընկերոջը չէր ուզում մենակ թողնել, թե՞ մտածում էր, որ իր փախուստը թանկ կնստեր նրանց վրա, ովքեր գտնվում էին բանտում... Իսկ Հաչաքար հետախուզության եկած տղաները ամբողջ կյանքում իրենք իրենց չպիտի ներեին, չէ՞որ կարող էին հարձակվել եւ իրենց հրամանատարին ազատել:

Ճակատագրի խաղն ու քմայքները անհասանելի են սովորական մահկանացուների մտքին եւ հեռու են բացատրություններից: Հարցականներն ու առեղծվածները դեռ երկար պիտի կախված մնային Վիշապաքարի պռնկից...

... Մեծ Շենում կանայք ժենգյալով հաց են հյուրասիրում տղամարդկանց: Բոլորը ցրվում են, ԲԻԽ-ի անդամ ներկա գտնվողները ծխում են, հատուկենտ խոսքեր են փոխանակում:

Քարինտակի պաշտպանության ջոկատի հրամանատար Վաղինակը զանգեց կապավոր Գայանեին, որ «հյուրեր» են ունենալու, որ արդեն շարժվում են Բերդաձորի ուղղությամբ, նաեւ հասկացրեց, որ օմօնն էլ է հետները:

-Ինձնից բացի ոչ ոք չմոտենա հեռախոսին,- հրամայեց Առնոն կապավորին:

ԲԻԽ-ի անդամներից մեկը մտնում, կապավորին հրավիրում է դուրս ու խոսում Երեւանի հետ: Առնոն գոռգոռում ու հայհոյում է: Արվիդը մտավ փոստ, Հայաստանի հետ հեռակապի սարքավորումը վերցրեց ու տարավ թաքցնելու: Առնոն Երեւանի ու Ստեփանակերտի ակտիվիստների հետ հեռախոսազրույցների նշագրերը, անդորրագրերը, հեռախոսահամարների ցուցակը վերցրեց, մտավ փոստի մոտ կիսակառույց մի տուն, կապոցը խոթեց ձեղնահարկի տախտակների արանքը, մտավ փոստ.

-Առաջադրանք թիվ 1,- թալինցի Սաքոն, որ Հին Շենի շտաբում վերցրել էր ընկալուչը հասկացավ, որ պետք է պատրաստ լինեն կռվի,- սպասում եք իմ զանգին: Որոշ ժամանակ անց, Առնոն նորից է զանգում.

-Անձնագրային ռեժիմի ստուգում է, զենքերը թաքցրեք,- Արտաշին հանձնարարեց շտաբում եղած փաստաթղթերը թաքցնել:

Արմիկը, Արտաշը, Մանվելը շտաբի հեռակապը, զինվորական սարքավորումները, զինամթերքը հանում, գյուղից 1 կիլոմետրի վրա գտնվող ֆերմայի աղբակույտի տակ, ինչպես միշտ ցինկե արկղերի մեջ թաղում են:

Կեսգիշերն անց է, բայց Մեծ Շենի բոլոր տներում լույսը վառ է, ոչ ոք չի պառկում քնելու:

-Ձեր ուղղությամբ շարժվող շարասյունը, 40 ռազմական տեխնիկայով, կանգ է առել Լիսագորի մոտ: Մի շարասյուն էլ Լաչինից է դուրս եկել,- Գայանեն հաղորդագրությունը փոխանցում է Առնոյին:

Անուշավանը տնից դուրս եկավ, փողոցի ծայրում նկատեց Հարությունյան Գագիկին, որը նույնպես դուրս էր եկել ծխելու: Դեմ հանդիման եկան ու կանգնեցին գյուղամիջի ակացիա վիթխարի ծառի տակ: Անուշավանի ունքամիջից դառնությունը կաթում էր: Ձեռքը տարավ աջ կողմին.

-Լյարդիս ցավը բռնեց, երեւի գինուց է, իզուր էլ խմեցի...

-Բայց դու համարյա չես խմել,- Գագոն հասկացավ, որ ցավը մռայլ տրամադրությունից է:

-Գագո, սիրտս վատ բան է գուշակում:

-Ոչինչ, կանցնի, վաղը բժշկի կգնաս,- Գագոն հասկացել էր նրան, բայց խոսքը կտուրը գցեց:

-Չէ, դա չեմ ասում: Կյանքս կարճ է լինելու...

-Էհ, գինուց ես անտրամադիր,-Գագոն փորձում էր ընկերոջ մռայլ մտքերը ցրել:

-Ի՞նչ է լինելու, Գագո, բա մեր երեխանե՞րը...- Միտքը կիսատ թողեց:

-Լավ կլինի, Նուշիկ:

-Հայի հետին խելքը... Ի՞նչ միամիտ ենք...- Վերջին շաբաթը Անուշավանը մի տեսակ նյարդային, անհանգիստ, նույնիսկ կռվազան էր դարձել, ու դա վերագրում էին ընտանիքում սպասվող երրորդ երեխային. հաշվված օրեր էին մնացել մինչեւ կնոջ ծննդաբերությունը: Մի քանի անգամ մտել շտաբ ու Առնոյից պահանջել էր, որ իրադրության մեջ որոշակիություն մտցվի, որ կանանց ու երեխաներին ձորակից հանեն: Առնոն կապվել էր ղեկավարվող կենտրոնի հետ, որտեղից նման քայլը չեն խրախուսել: Փոստի մոտ կանգնած Նուշիկը, Սլավիկը, Գագոն, էլի տղամարդիկ կային, լսել են Առնոյի խոսակցությունը Ստեփանակերտի հետ, իսկ Թաթուլը ներսում էր:

-Էստեղ վախկոտ ու դավաճան չկա, բայց ... տեղեկացնում եմ, որ դրությունը վտանգավոր է, մենք մնում ենք, բայց ծերերին, կանանց ու երեխաներին հանեք, մենք կռվելու ենք...

-Ո՞ւմ դեմ եք կռվելու, խորհրդային զորքերի՞,- գծի մյուս կողմից հավանաբար այս հարցը տվեցին, քանի որ տղաները լսեցին միայն Առնոյի պատասխանը.

-Այո, եթե հարկ լինի՝ նաեւ խորհրդային զորքի դեմ...

Հրամանատարը պնդեց պահանջը եւ Ստեփանակերտից խոստացան պարետության հետ խոսել եւ ավտոբուս ուղարկել, բայց ... ինչպես ասում են՝ շաբաթն ավելի շուտ եկավ, քան ուրբաթը:

Առնոն կապվում է Երեւանի հետ: Պատասխանում են՝ Լեւոն Տեր Պետրոսյանը արտասահմանում է, Վանո Սիրադեղյանը՝ Նոյեմբերյանի թեժ կետում, Շիրխանյանն էլ պատասխանել է, թե հարցը հենց վաղը կքննարկվի...

Գիշերվա մեջ երկրագունդը կատարում էր իր պտույտը... Մարդը չի հասկանում, որ արդեն ոչինչ փոխել, փոթորկի առաջն առնել այլեւս հնարավոր չէ... Տղամարդիկ տնից-տուն են մտնում , մի տեղ թեյ են խմում, մի տեղ սրտապնդող խոսք են ասում... Ակացիայի ծյուղերի արանքից լուսնի անտեղյակ շողերն ընկել էին ներքեւ:

-Նուշիկ, հոգնած ես, գնա հանգստացիր:

-Մտնեմ տուն, տեսնեմ տնեցիները ինչ են անում, հետ գամ:

-Մնա տանը, մենք շրջում ենք...

Լույսը բացվելուն եւ Անուշավանի ապրելուն ընդամենը 2-3 ժամ էր մնացել: Գագոն Նուշիկին ճանապարհեց ու մտավ նախագահի տուն, որտեղ հավաքվել էին տղաները: Առնոն դուրս եկավ ծխելու, Գագիկը, որ զգում էր նրա ներքին ալեկոծ վիճակը, հետեւից.

-Առնո, ինչ որ բան քեզ տանջում է, չես ասում...

-Հադրութի սահմանամերձ գյուղերը ազերիները տեղահանել են...

-Ե՞րբ,-Գագոն կարկամեց:

-Երկու օր առաջ...

-Բա մե՞նք...

-Տեղեկություն ունեմ, որ խոստացել են Բերդաձորին ձեռք չտալ...

-Ո՞վ է խոստացել...

-Պոլյանիչկոն ու Սաֆոնովը...

-Ո՞վ է քեզ տեղեկացրել...

Երկուսն էլ լռեցին:

Առնոն տղամարդկանց հետ գնաց դեպի դպրոցի բարձունքը: Կանայք էլ զգալով տղամարդկանց անհանգստությունը, գնում-գալիս էին: Բարձունքից երեւում էր Լաչին-Շուշի ճանապարհը, եւ ամբողջ շարժը՝ ոնց որ ափիդ մեջ: Նույնիսկ առանց հեռադիտակի, սովորական աչքով հնարավոր էր հաշվել զինտեխնիկան, որոշել տեսակը: Այստեղից Առնոն լուսարձակների թարթումներով միշտ խոսում էր Տեղ գյուղի հետ, ասենք թե՝ ամեն ինչ լավ է, կամ վտանգավոր է, ուղղաթիռը եկել է կամ զենքը ստացել ենք եւ այլն: Առնոն ազդանշանները գաղտնի էր պահում նույնիսկ ամենամտերիմ զինակիցներից: Բարձունքից ամբողջ ձորակի տարածքը վերահսկվում էր:

... Բերդաձորը զենքը թաքցրած սպասում էր... Մութնուլույսը սկսում են զատվել իրարից, եւ տղաները բարձունքից հաշվում են Լաչինի կողմից շարժվող զինտեխնիկան: Մինչեւ 30-ը հաշվեցին ու տեսան, որ մի շարասյուն տաղավարի մոտ դանդաղեցրեց ընթացքը ու թեքվեց դեպի Եղցահող:

-Ցրվենք տները... Հավաքված նրանց սպասելը վտանգավոր է,- ասաց Առնոն:

Գագիկը մտավ գոմ, կովերը կթեց, դույլերը ձեռքին շեմի առաջ ոուս սպան հրամայեց.

-Դույլերը դիր, ձեռքերդ վեր:

-Հանիր զենքը:

-Զենք չկա, կարող եք ստուգել...

Սովորական պարանով ձեռքերը կապեցին ու տարան գյուղամեջ: Օմօնականները ներս լցվեցին, ջարդում են, փշրում են, իբր զենք են որոնում: Մեկը մոտեցավ կնոջը՝ Կարինեին.

-Մայրի՛կ...-գոռաց հարսը, կայծակնային արագությամբ բացեց փեղկերը, ցատկեց պատուհանից: Ծառից կախված գերանդին կտրեց կնոջ երակը, եւ արյունը շատրվանեց:

-Ի՞նչ ենք արել քեզ, ի՞նչ թշնամություն ունես մեզ հետ, իբր քրիստոնյա ես...

-Ձեզ այդպես է պետք,-մաքուր ռուսերենով ասաց զինվորը: Լենան նայեց աչքերին եւ հասկացավ, որ թմրանյութ է օգտագործել:

Լյուդան փախավ տան մի անկյունը: 5-6 տարեկան Արտաշը վազեց, կպավ մոր ծնկներին:

-Տեսեք, հա, մայրիկիս ձեռք չտաք,- ծղրտաց Արտաշը:

Ազերին հետ-հետ գնաց.

-Ապագա բաեվիկ է, հարկավոր է սպանել,-ու քաշեց ավտոմատի ձգանը:

-Պետք չէ,-ռուսը բռնեց ձեռքը: Օմօնականը ձեռքը գցեց Մայոր Հարությունյանի գրպանը, հանեց «Ժիգուլի» մեքենայի վարորդական իրավունքի գրքույկը:

-Քյոփօղլի,-սապոգով այնպես հարվածեց ծեր մարդու քիթուբերանին, որ արյուն ժայթքեց,- բաց ավտոտնակի դուռը:

- Ինքդ նստիր ու հանիր մեքենան,- կարծում են, թե կարող է ակամապատված լինել:

Մայորը հանում է մեքենան: Իջեցնում են ու ծեծում.

- Գրիր ու ստորագրիր,-թելադրում է ազերին: Մայորը գրում է. «Մեքենաս ծախել եմ Ս.Մամեդովին, 2000 մանեթով»:

- Իսկ այժմ տարեք ռադ արեք,-հրամայում է:

Տանում են դեպի այգին, որ հրամանը ի կատար ածեն: Մայորն ինչքան ուժ ունի գոռգոռում, օգնություն է կանչում: Շուշիի ոստիկանության պետի վարորդը, որ ճանաչում էր մարդուն, մոտենում ու միջամտում է: Ծեծելով տանում են գյուղամեջ, որտեղ կանգնած են ավտոբուսները: Դռան մոտ ազերին ավտոմատը բարձրացնում է, որ կոթով խփի գլխին, մի ռուս սպա, թե.

- Եթե էդ ծեր մարդու վրա մեկ էլ ձեռք ես բարձրացրել, կկրակեմ:

Ազերին հայհոյելով հետ եկավ, կկանգնեց դռանը.

-Շուտ, դուրս եկեք, բանալիները տվեք ինձ:

-Ձես ամաչո՞ւմ: Ինձ հետ տո՞ւն ես սարքել, որ բանալին ուզում ես:

-Ձենդ, ղանջղդ, փորդ կլցնեմ,- եւ ավտոմատը պահեց կնոջ վրա:

Լենան դուռը կողպեց, բանալիների փունջը շպրտեց բանջարանոցը: Ուժեղ հարվածից կինը կորցրեց իրեն:

Առնոն ու Շաքարյան Գագոն, դպրոցն անցել, թմբի պռնկին էին, որից անդին խոր ձորն էր, ազատությունն էր, երբ կանացի հուսահատ մի ճիչ շամփրեց օդը:

Հրամանատարը մեխվեց տեղում:

-Շուտ արա,-գոռաց Գագոն:

Առնոն չկամ մի քայլ գցեց: Մի քանի տնից կրակի բոցերը երկինք լարձրացան: Նորից կանացի հուսահատ մի ճիչ եւ վայնասուն լսվեց: Առնոն շրջվեց ու ճակատագրական քայլն արեց... դեպի Խաչելություն:

Մեծ Շենի դպրոցը վառվում է: Կրակի լեզվակները երկինք են բարձրացել: Երկու ուղղաթիռ ինչքան հնարավոր է իջնում են, առջեւամասը լեցնում ու քամի անելով կրակը բորբոքում են:

ԽՍՀՄ ներքին գործերի զինվորներից 5-6 հոգի եւ նույնքան էլ օմօնական մտան Գրիգորյանների տուն:

-Մի գյավուր էլ պիտի ծնվի,-ազերին ձեռքը մեկնեց դեպի ջահել կին: Անուշավանը հայհոյեց, կատաղած ծառս եղավ ու ձեռքը մեկնեց դեպի ազերիի կոկորդը:

Ազերիները վրա թափվեցին, ձեռքերը ոլորեցին ու իջեցրին ներքնահարկ: Սվետան քույրը, վազեց հետեւից, բայց գազանաբարո ձեռքեր նրան գցեցին գետնին: Տան մյուս երկու տղամարդկանց կապկպեցին ու սկսեցին երկաթե շղթաներով ծեծել: Ներքնահարկից կրակահերթ լսվեց: Հղի կինը հասկացավ, չոքեց գետնին ու ձեռքերով երեսը ծածկեց: Անուշավանի երկու տղաներին, 9 եւ 10 տարեկան, կանգնեցրին պատի մոտ:

-Մի սրանց նայեք, բաեվիկի աչքեր ունեն: Մեծանան, վրեժ կլուծեն,- ազերին բարձրացրեց ավտոմատը:

Սվետան թոհուբոհի մեջ հասցրել էր փախչել ու հարայ տալ.

-Սպանեցի՞ն... հասե՞ք... հասե՞ք... օգնեցե՞ք,- չոքել ու խնդրում էր մի ռուս մայորի:

Սա մտավ, երեխաներին ու մորը հանեց դուրս:

16 տարեկանից բարձր բոլոր տղամարդկանց, 60-70 հոգու կապկպած, իրար վրա դարսած լցրել էին ավտոբուսների մեջ: Մեքենաները շարժվեցին դեպի Լաչին:

Ցերեկով ազերիները մի քանի ոչխար մորթեցին, խորովածի հոտը միախառնվել էր հրդեհված տների մխացող գերանների կծվահոտին. գիշատիչների խրախճանքը...

Մութը շուտով վրա կհասնի: Գյուղում մնացել են կանայք ու երեխաներ: Գայանեն մոտեցավ մի ռուս սպայի.

-Գյուղում կանայք ու երեխաներ են, խնդրում եմ, մնացեք...

- Կմնանք, միայն թե իմանանք, որ ձեր պարտիզանները չեն հարձակվի,-սպան կարծում է, թե գրոհայինները քաշվել են անտառները եւ կարող են գիշերը հարձակվել: Գայանեն ինքնիրեն քմծիծաղ տվեց:

-Համաձայն եմ, իմաց կանենք, որ չկրակեն, միայն թե մնաք:

Չնայած աղջկա հավաստիացումներին զինվորները վախեցան

գյուղի մեջ մնալ: 2-3 ժամ էլ գյուղի շրջակայքում մնացին, նստեցին մի-քենաներն ու գնացին:

Փոստի բաժանմունքից հեռախոսային գիծ էր քաշված Շահենենց տուն: Գայանեն մտավ ու զանգեց Գորիսի եւ Ստեփանակերտի պարե-տատները, կատարվածի մասին հաղորդեց:

-Կպարզենք,-եղավ սառն ու անտարբեր պատասխանը:

Զանգեց Ստեփանակերտ.

-Գյուղում միայն կանայք են, ազերիները գիշերը կարող են հար-ձակվել:

-Ջոկատ է դուրս եկել, գալիս են,- պատասխանեց Սահակյան Վրույրը:

Մութն ու սարսափը իջան գյուղի վրա: Անուշավան Գրիգորյանի դի-ակը դրված էր երկրորդ հարկում, կրծքին երեք գնդակների արյունոտ հետքերը: Քույրը աղեկտուր հեծեծում էր, կինը ցավից քարացել, արցունքը աչքերում սառել, ձայն չէր դուրս գալիս:

... Դարասկզբին Անուշավանի պապը Առուշը ազգակիցների հետ վար էին անում Տանձուն տափում: Դարակապի կողմից քոչվոր ցեղից գալիս ու շրջապատում են: Առուշը նրանց հրամաններին ու սպառնա-լիքներին ուշադրություն չի դարձնում.

-Ակոսը պրծնեմ, գամ,- ասաց:

Ակոսի վերջում դրված էր խուրջինը, խուրջինի մեջ հրացանը: Առուշը հենց ձեռքը մեկնեց խուրջինին, թաթարը հասկացավ, որ զենք կա, կրակեց: Տաք սեւահողը կարմրեց: Գյուլեն ձորի մոտ պատանդնե-րից մեկն էլ փորձում է փախչել, կրակում են սպանում: Մյուսներին Դա-րակապով անց են կացնում...

...ճակատագրի առեղծվածները անքննելի են:

Գայանեն մի քանի կին էլ հետը վերցրեց, 2-3կմ գյուղից դուրս եկան դիմավորելու, բայց ոչ մի ջոկատ չերեւաց: երկու ժամ սպասեցին ու հետ եկան: Նորից զանգեց Ստեփանակերտ:

-Կգան: Երեւի ճանապարհը կորցրել են: Ուր որ է կհասնեն:

Գայանեն կարողացավ կապվել մարգիսորհրդի գործկոմի նախա-գահ Սեմյոն Բաբայանի հետ եւ մանրամասն զեկուցել:

Լույսը բացվեց, օմօնականները ավտոբուսներով մտան գյուղ: Մի ուղղաթիռ պտտվեց օդում, կանանց դեմքերը լուսավորվեցին: Ազերի-ները թույլ են տալիս, որ ուղղաթիռին մոտենան Անուշավանի հղի կի-նը, քույրը իրենց երեխաների հետ:

Գայանեն գնում է Հին Շեն, կանանց հավաքում մանկապարտեզում, սնուցավորում, հուսադրում, սրտապնդում, ու նորից հետ է դառնում: Եր-րորդ օրն էր արդեն: Մի ուղղաթիռ էլ է իջնում, ձորակի ջահել կանանց ու ծծկեր երեխաներին էվակուացնում Ստեփանակերտ, Գայանեն էլ հետները:

Նույն օրը 1991-ի մայիսի 15-ին, նույն ժամերին եղցահողն էլ սպա-սում էր իր ճակատագրին: Կեսգիշերին Գերեզմանուտի պահակակե-տից զանգում են Մեծ Շեն.

-Լաչինից մի մեծ շարասյուն է շարժվում դեպի Շուշի...

-Տեղեկություն ունենք Գորիսից, Շուռնուխ գյուղից (ադրբեջանաբ-նակ գյուղ Գորիսի շրջանում) գնում են Շուշի:

Մեկ ժամ անց տղաները նկատում են, որ Յոթլորանում (Եղդիգաթ) շարասյուն է շարժվում դեպի Տասը Վերստ: Չի ջոկվում նո՞ւյն, թե ուրիշ շարասյուն է:

-Գայանե, հիմա էլ Շուշիից է շարասյուն շարժվում դեպի Բերդաձոր:

-10 րոպեից կզանգենք, - Հրաչիկն պատասխանեց կապավորը:

Կարոն ու Կարենը պահակակետից իջան, ավտոմատները տեղավո-րեցին աղբանոցի խորքում տեղադրված ասբեստե խողովակների մեջ, ոտքը լցրին վրան. մկնդեղ շաղ տվեցին, որպեսզի շները չկարողանան տեղը գտնել ու մտան տները:

Եղցահողում գենքերը թաքցրած սպասում են: Մութը լույսից արդեն ցոլվում էր:

Հրաչիկն ու Վիլենը ամբողջ գիշեր պահակակետերը շրջելուց հետո մտան տները:

-Վիլեն, ի՞նչ անենք,- Հրաչիկի հեռախոսազանգն է:

-Չգիտեմ: Գուցե դու փախչես անտա՞ռ...

-Իսկ դո՞ւ:

-Չգիտեմ... Չեմ իմանում...

-Արդեն ուշ է... Արդեն մոտիկ են...-Հրաչիկի վերջին խոսքերն էին, որ Վիլենը լսեց:

Ներս խուժեցին.

-Անձնագիրդ:

Տվեց:

-Բաեվի՞կ ես:

-Ոչ: Դպրոցի տնօրենն եմ:

Ռուս սպան անձնագիրը զննեց ու դուրս եկավ: 5-6 օմօնական ներս

մտան, քացով տվեցին, գլորեցին գետնին: Վիլենը ձեռքերով փորձում էր ծածկել գլուխը, բայց ... փրկվելու համար սողաց մահճակալի տակ: Սպան ներս մտավ:

-Օգնեք, սպանում են,- մահճակալի տակից փրկություն աղերսեց դպրոցի տնօրենը:

-Չես մեռնելու,- անտարբեր շպրտեց ռուսը: Քաշեցին դուրս, ձեռքերը ոլորեցին ու տարան: Ազերին քրոջ Արգինեի վզից պոկեց ոսկե շղթան ու խաչը, մազերից քաշքշելով գցեց գետնին: Մեկ ուրիշը դանակը ձեռքին մոտեցավ Վիլենի մորը՝ ականջը կտրելու:

-Ամա՜ն, մի մոտեցեք, ես կհանեմ... Ես կտամ...- ծեր կինը փութով հանեց ոսկե ականջօղերն ու ձեռքերի մատանիները:

Հոր ձեռքերը կապած տարան դեպի ավտոբուսը:

-Ո՞ւր է ձեր «ժիգուլին»,- հարցրեց ազերի մայրը:

-Եղբայրս տարել է:

Ձեռքերը ոլորում ու ծեծելով տանում են դեպի ավտոբուսը: Քացով այնպես են տալիս, որ գլորվում է դողերի մոտ: Այդ պահին նա տեսավ, թե ինչպես բերում էին Հրաչիկին, դեմքը արյունաշաղախ, պարանով ձեռքերը մարմնին կապկպած, մի ծայրն էլ վզով ոլորած: Հրեցին ավտոբուսի մեջ, կոխեցին նստարանի տակ:

Մի օմօնական մոտեցավ, ավտոմատի կոթով հարվածեց.

-Բաեվի՞կ ես:

-Ոչ: Դասատու եմ:

-Ավելի վատ: Անդրանիկի մասին պատմություններ ես սովորեցնում:

-Ոչ: Ֆիզիկա եմ սովորեցնում,- բայց զուր էր արդարացման փորձեր անում:

Գյուղում յուրաքանչյուր տուն, ընտանիք յուրովի կրում էր իր բաժին չարչարանքը, ստորացումը, նվաստացումը, իսկ սա միայն սկիզբն էր այն մարտիրոսության, որին պիտի ենթարկվեին այս ծորակի տղամարդիկ Շուշիի ու Բաքվի բանտերի տարտարոսներում: Մեղավոր թե անմեղ՝ ով էր քննողը: Տարիների կտտանքներին զոհ պիտի գնային նրանք, ովքեր ազատության լույսն էին կրում իրենց հոգում եւ ջահակիր էին: Եւ այդ լույսից տաքանում էին մարդիկ հասկանալով ու չհասկանալով, ակնածելով ու մեղադրանքներ շպրտելով: Ու մինչ բանտ տարվածները ոսկորներից հյուլեաչափ ավիշ էին հանում դիմանալու (միսումկան դագանակներից արդեն հյուծվել , ցավ չէին զգում), բանտապետերը՝ վերեւներից հանձնարարությամբ, հսկիչները՝ վերջիններիս հրահանգներով, գիտեին՝ ով չպիտի դուրս գար Տարտարոսից, ում ոսկորները՝ չանսալով հարազատների թախանձանքին ու Կարմիր խաչի մարդասիրական խնդրանքներին, պիտի մնային Բայիլի պատերի տակ՝ վրեժ ու հատուցում պահանջելով: Չէ՞որ ոսկորները չեն փտում ու իրենց մեջ գուցե պահում են տիրոջ ազատության ձգտումները: Իսկ բանտ տարվածներն անմեղ տղամարդիկ էին, որոնք կրեցին տանջանքներ ու տառապանքներ, եւ բանտի հսկիչներին ուղղված անմեղ հարցին, թե ինչի՞ համար, անաստվածներ, պիտի լսեին պատասխանը՝ հայ ես, դրա համար: Եւ սրանք՝ անմեղներն ու ջահակիրները քավության նոխազներ էին, ազգի փոքրաթիվ մարդկանց մեղքը իրենց վրա վերցնողները, այն մարդկանց, որ կարող էին ցանկացած ճառաբեմ բարձրանալ, ցանկացած կաղապար լցվել, ցանկացած գետի հուն մտնել ու չոր դուրս գալ, քամելեոնի պես գույնուգաղափարներ փոխել, ադվեսագայլերի պես աղիողորմ լաց լինել ու գիշերի մեջ հավուծավ թռցնել... Ծանրամուրճերի հարվածներից տնքացող ու էլեկտրական հոսանքից ցնցվող մարմիններով, սրանք՝ գաղափարակիրներն ու անմեղները պիտի մեղքը քավեին իրենց այն յուրային-ազգակիցների, որոնք կարողանում են ժամանակից ու տարածությունից ճարպագնդեր պոկել, իրենց արյունակիցների քայքայվող մարմիններով առեւտուր անել:

Իսկ մինչ այդ առեւտուրը ... դեռ 1991-ի մայիսի 15-ն էր, ազերիները Բերդաձոր մտել ու տղամարդկանց՝ 14-16 տարեկանից մինչեւ ծեր, լցնում էին ավտոբուսները, իսկ սա Գողգոթայի ճանապարհի սկիզբն էր միայն...

Երբ 10 օմօնական քացով բացեցին դուռը, Կարենը հասկացավ, որ իրենք չարաչար խաբվել են, մտածեց պատուհանից ցատկել՝ այգին, որտեղից էլ ձորն է սկսվում, ազատությունը, բայց...տանը՝ ծնողներն Իրն ու եղբոր երեխաները:

-Անուն-ազգանուն:

-Այդինյան Կարեն:

-Իմ ցուցակում չկա,- ստուգեց ազերին:

-Իսկ իմ ցուցակում կա,- Կարենը չքոկեց ճիշտը որն էր:

Ձեռքերը ոլորում, խփելով տանում են ավտոբուսի մոտ: Ճանապարհին տեսավ, թե ինչպես էին Հրաչիկենց տունը հատուկ շրջապատել, նույնիսկ հապաղում էին մտնել, կարծելով թե դիմադրություն կլինի: Հրաչիկը տեսնելով, որ շրջապատված է, ձեռքը տարել էր ավտոմատին, կինը բռնել է ձեռքը.

-Աղաչում եմ, մի արա, արյունահեղություն կլինի...

Ամեն մետրի վրա զինվորներ, զրահատեխնիկա, «Ջիլ-131» մակնիշի մի 10 ավտոմեքենա, զինվորներով լիքը: Գյուղը 1,5 կմ շրջանագծով շրջապատված է: Օմօնականները մտնում էին տները, զինվորները դրսում կանգնած՝ դիտում էին, երբեմն էլ ոգելից խմիչքի շշեր էին հանում, խմում, որ տրամադրությունները բարձր լինի:

Ավտոբուսի մեջ Կարենը շշնջաց.

-Ինչո՞ւ չփախար...

-Բա տնեցիներ՞ը... Չասես, որ բարեկամներ ենք,- աներոջ տղային ասաց Հրաչիկը:

Գրիգորյան Յուրան ճանաչեց եղցահողի ֆերմայի հովվին Քյուրբայինին օմօնականի համազգեստի մեջ: Մատներն ընկել էին զտիչ մեքենայի տակ, ինքը բուժկետի վարիչն էր, երկու ամիս չարչարվել է, բուժել, որ չանդամահատեն: Իզուր էր Յուրան հայացքով հասկացնել տալիս իր ծանոթությունը, ազերին այնպես խփեց տղային Նորիկին, որ բերանից արյուն եկավ:

Հեղուշը լուսադեմին, երբ թոնիրը ցախ էր տանում, տեսնելով շրջապատված գյուղը, մտել է տուն, քնաթաթախ որդուն Վիտալիկին անկողնուց քաշել-հանել, տարել գոմը, մտցրել հին թոնրի հորը, տախտակները վրան շարել, խոտ լցրել, կովերը, այծերն ու ոչխարներն էլ բաց թողել գոմի մեջ, խստիվ հանձնարարել.

-Մինչեւ ինքս իմ ձեռքով քեզ չհանեմ, դուրս չգաս,-գոմի դուռը փակել է, նստել հաց թխելու:

Հեղուշը իբր աշխարհից անտեղյակ, թոնրի շուրթին նստած, մտքերի մեջ մոլորված հաց է թխում:

Օմօնականը մտավ, կինը հացի խմորը շրխկացրեց թոնրի կարմրած պատին: Ազերին կատաղած տեփը ձեռքից վերցրեց շպրտեց.

-Ո՞ւմ համար ես հաց թխում, դանջը:

-Ինձ համար,- վախից գոռաց կինը:

-Բաեվիկների համար ես հա՞ հաց թխում:

Կինը իբր չի հասկանում, թե ում մասին է խոսքը: Տունը խուզարկում են, ջարդում-թափում: Ազերին երկար նայեց պատին կախած սեւ շրջանակով եղիշի լուսանկարին.

-Ո՞վ է:

-Մարդս է, ո՞վ պիտի լինի,- ջղային պատասխանեց Հեղուշը:

-Ինչի՞ց է մահացել:

-Ցավը չիմացանք,- բնականաբար կինը վախից թաքցրեց իսկությունը:

-Ինձ հարցրու ասեմ,- ազերին ձեռքը տարավ դեպի քունքը եւ ատրճանակի ձեւով պահեց:

Հեղուշը հասկացավ, որ տուն մտնողը նա է մարդասպանը: Ու չիմանալով, ճանաչելո՞վ է մտել, թե՞ պատահականություն էր: Բայց կինը լսել էր, որ սպանողը Լաչինում պատմել է, որ ինքը հայ շատ է սպանել, բայց «էն տավարածին չպիտի սպանեի, հանգիստ, միամիտ մարդ էր, էր հավատում, որ կկրակեմ»: Ասել է, թե իբր, այդ մարդու պատկերը իրեն երազներում միշտ հետապնդել է, ու ինքը զղջում է, որ նրան սպանել է:

-Փասափուսեդ հավաքիր: Գնալու եք:

-Ոչ մի տեղ էլ իմ տնից չեմ գնա,- ասաց Հեղուշը համարձակություն առած:

Մի քանի տուն այստեղից վերեւ օմօնականը թուրը հանած Հմայակի երկար ու փառահեղ բեղերը քաշքշելով կտրտում է: Սվինի ծայրով բրբրում են տեղաշորերը: Բացեցին բազմոցը, զենք էին փնտրում, մի պարան գտան, հանեցին եւ ուսանող տղային Սամվելին, որ Գորիսից տուն էր եկել, կապկպեցին: Պատուհանի ապակիները փշուր-փշուր եղած թափվեցին: Ազերին ապտակեց 14-ամյա գեղեցկուհի Լաուրային.

-Գրոհայինների տեղը գիտես, ասա:

Մոր Վարդիի մազերից քաշքշում են:

-Ձենքի տեղն ասա,- նորից են ապտակներ հասցնում աղջկան:

Գոռոցի վրա մայրն անձայն փռվեց գետնին, իսկ երբ ուշքի եկավ, ամուսնուն ու տղային տարել էին, ինքը ավերակված տան մեջ ձեռքերի կրծքին խաչած նստել էր...

-Կարծես թե օմօնն էլ է զինվորների հետ,- ասաց Ռոման պատուհանից նայելով Արշավիրի տան մոտ կանգնած ավտոբուսներին, ապա պատից կախած Անդրանիկի նկարը պոկեց: Կինը քմծիծաղով է նայում ամուսնու անհանգստությանը, մինչեւ տեսավ, թե ինչպես են Վոլոդյային ծեծելով ոտաբոբիկ քշում: Պատուհանից տեսավ, թե ինչպես տարան կեսարային Զալալին, տեգորը էդոյին ձեռքները հետեւներին ոլորած: Ակնթարթներ չանցած ոտքի ուժեղ հարված դռանը ու լցվեցին տունը: Հարվածներ ու քացի տալով Ռոմային հրամայեցին վերցնել անձնագիրը տնից դուրս գալ: Տունը տակնուվրա են անում, երեխաները կպել են մոր փեշից:

-Մի քանի ժամից հետո պետք է թողնեք գյուղը, թե չէ բոլորիդ գնդակահարելու ենք: - Օմօնականը ձեռքը մեկնեց գրկից խլելու փոքրիկ Սիկին, բայց մայրն իր փրկությունը, իր «ապահովությունը» երեխայի

մեջ տեսնելով կառչեց նրան ու բաց չէր թողնում: Մեկը նկատելով ոսկե մատանիները հանեց դանակը:

-Ես ինքս ,- ծղրտաց կինը, եւ, երեխային գրկից բաց չթողնելով, հանեց մատանիները, ոսկե ականջօղերը: Ազերին ձեռքը գցեց ու շորը պատռելով պարանոցից պոկեց ոսկե շղթան... Ամեն կերպ փորձում էին փոքրիկին գրկից պոկել, Ալվարդն էլ ամբողջ ուժերը լարելով էմիկին ավելի էր սեղմում կրծքին, խնդրում խնայել...

Հարեւան տներից մեկում կանանց ու աղջիկների ճիչերը երկինք էին պատռում:

-Էս կողմ ռուս զինվորներ են գալիս,-ասաց ազերին, եւ կինը պատառոտված շորերով երեխաների հետ դուրս պրծավ: Տնից տուն էր վազում, բայց վախենում էր որեւէ տուն մտնել. այդ պահին փողոցը կնոջ համար ավելի ապահով էր: Մի տնից, որտեղ երեք աղջիկներ էին, ծղրտոցը բռնել էր գյուղը, մայրը չոքած աղաչանք-պաղատանք էր անում, որ աղջիկներին ձեռք չտան: Աղեկտուր ձայների վրա դրսից մի ազերի մտավ, գոռաց ու քաշքշոցները դադարեցրին.

-Սրանց, ես գեղեցկուհիներին կտանենք Բաքու, հետները կամուսնանանք:

Այդ պահին Ալվարդը մոտեցավ մի շեկ սպայի.

-Դու ռո՞ւս ես:

-Այո:

-Այնտեղ, այն տան մեջ 5 ժամ է մուսուլմանները դուրս չեն գալիս...

Սպան գնաց ցույց տված տան կողմը, հայհոյելով, քացով խփելով հանեց օմօնականներին: Կանայք սպայի «մարդասիրությունից» սրտապնդված, լացուկոծ բարձրացրին ու գնացին դեպի ավտոբուսները, որոնց մեջ լցրել էին տղամարդկանց:

Գյուղում մնացին կանայք, երեխաները, երեք ծերունիներ: Հեղուշը երեկոյան մտել էր գոմ, տախտակները հեռացրել ու որդուն հանել: Երբ մութը վրա հասավ, գյուղում ոչ զինվոր կար, ոչ օմօնական: Ըստ երեւույթին մտածում էին, թե իրենց վայրագությունների համար պատասխան են ստանալու:

Ծեծված, ջարդված, վայրագությունների ու զազանությունների հետքերն իրենց վրա, կանայք սարսափահար քշվում են տնից-տուն, հետո հավաքվում մի տան մեջ: Հաջորդ օրը նրանք պիտի իմանային, որ Տասը Վերստ գյուղում օմօնականների գազանությունները քստմնելի բնույթ կրեցին, այնքան, որ զինվորների ու նրանց մեջ վեճ է առաջացել: 16 տարեկան աղջկան ծնողների աչքի առաջ գազանաբար բռնաբարել էին:

Օրը բացվեց, եւ լռությունից համարձակություն առած Ալվարդը մտավ տուն: Տանն ամեն ինչ տակնուվրա արված, պահարանները շրջած, թափած, ոտք դնելու տեղ չկար: Ավելը ձեռքն առավ, սկսեց հավաքել ապակու ջարդվածքները:

-Գալիս են... Գալիս են... կանանց տանելու,- լսվեց մի ձայն:

Ալվարդը պատուհանից տեսավ գյուղ մտնող ԲՏՐ-ը եւ ավտոբուսը: Կանայք տներից դուրս թռան, ով որ կողմի վրա կարող էր, փախան: Ալվարդը փոքրիկին գրկած, ջահել հարսի երազիկի հետ փախան բանջարանոց: Երազիկը պառկեց առվի մեջ, խոտը լցրեց իր վրա, ծածկեց: Ալվարդը ուշադրության չառնելով եղինջի սուր ծակոցները, մտավ վարդի թփի տակ, նստեց եղինջների մեջ, թփից երկու ճյուղ կռացրեց, որ ծածկվեն, երեխայի ականջին էլ հա շշնջում էր. ցավդ տանեմ, մատաղ լինեմ, որ ձայն չհանի: Երեխան քնեց: Տեսնես մյուս երեխաներն ինչ եղան, ուր փախան, ում հետ,- մտածեց կինը: Եղանակը փոխվեց: Սարի վրա մառախուղի թանձր շերտ նկատեց: «Տեր Աստված, գոնե գա մեզ ծածկի»,- աղոթեց կինը: Ուժեղ անձրեւ սկսվեց: Մարմինը թրջված եւ ընդդարմացած էր, բայց չէր շարժվում, որ հանկարծ երեխան չարթնանա: Երանի քնեի մշտական քնով,- անցավ կնոջ մտքով, քներ, որ ոչինչ չզգար, ոչ այս դրությունը, ոչ փախած երեխաների մտահոգությունը, ոչ գերության տարած ամուսնու ցավը:

Բակում սապոգների թխկթխկոց լսվեց, ու սրտի զարկերն ուժեղացան: Քայլերի ձայնը մոտենում է:

-Բոստանում ոնց որ կին կա թաքնված: -Երազիկը թմբլիկ էր, չէր կարողացել իրեն լավ քողարկել, ազերին նկատել էր խալաթի սպիտակ ծայրը: Ալվարդը հարսի հետ նախօրոք պայմանավորվել էր, ով որ հայտնաբերվի, դուրս գա: Երազիկը հասկացավ, որ ճիշտը դուրս գալն է: Ձեռքի շարֆը չալմայի պես փաթաթեց գլխին ու սիրթնած առաջ գնաց.

-Գաղան ալըմ, մանի դայ միյին...(Դարդդ տանեմ, ինձ ձեռք չտաք)- ազերիների մեջ էր ապրել, ադրբեջաներենով մաքուր արտահայտվում էր:

-Բաջի, ձեռ քաշի, քեզ ոչինչ չենք անելու: - Ալվարդը հասկացավ, որ սրանք թալանի եկած մարդիկ են: Շրխկոցով տան ապրանքը լցնում են մեքենայի մեջ:

-Գեներալը բարձրանում է,- հեռակապով իրար հաղորդեցին օմօնականները, եւ Ալվարդը լսեց փախչող մեքենաների հռնդոցը:

Էմման, որ դուրս էր եկել հարսին փնտրելու, կասկածելով, թե կարող է բանջարանոցում լինել, իբր երգում է, ձայնը ձգելով ասում է.

-Սրանք ոնց որ մարդասպաններ չեն... եթե ուզում ես դուրս արի...

Ալվարդը երեխան գրկած բանջարանոցից դուրս եկավ: Երեխաները Մասիսն ու Արարատը, մեկը 8, մյուսը 7 տարեկան, փախչող կանանց զանգվածի հետ հասցրել էին գյուղից դուրս գալ: Ալվարդը նայեց ցեխոտ, թրջված երեխաներին, ու սիրտը ճմլվեց: Փախչելու ժամանակ դպրոցական մի աղջնակի ժանյայի ձեռքը հոդախախտվել էր:

«Կոլցո» ռազմագործողության երկրորդ օրն էլ ավարտվեց, իսկ երրորդ օրը շրջկոմի քարտուղար Գյոզալովը եւ նրա թիմը գյուղացիներին հավաքեցին գրասենյակում, ստորագրել տալու, որ հոժարակամ տեղափոխվում են: Ալվարդը գրասենյակի դռան մոտ հարեւանցիորեն բարեւելով ռուս գնդապետին, երեսին շպրտեց.

-Ինչպես միշտ, այս անգամ էլ 3 ժամով ուշացաք, հա՞...

-Իսկ ի՞նչ է պատահել,- գնդապետը հասկացել էր ակնարկը,- մեզ ասել են, թե կամավոր ուզում եք գյուղից դուրս գալ: Այդպես չէ՞...

Կինը արհամարհանքով նայեց ու դուրս եկավ:

Ալվարդը գրասենյակից տուն եկավ, սկսեց շորերից կապոց անել:

-Քույրիկ, ամեն ինչ վերջացած է, զենքի տեղը ցույց տուր,- գրական հայերենով դիմեց ազերին:

-Ինչ ես կարծում, զենք ունենայի, դու էլ դռանս կանգնե՞ս...

-Ի՞նչ կանեիր:

-Դու շատ լավ գիտես, թե ինչ կանեի,- կնոջ համարձակության առաջ ազերին տեղի տվեց: Երբ տնից դուրս եկավ, մոտեցավ.

-Բանալին տուր, դուռը կողպեմ:

-Ես դուռը կողպեք չի տեսել:

-Գալու են կոտրեն, ափսոս է:

-Ձեզ համար էլ մտածեմ, հա՞...

Ազերին մի կտոր տախտակ վերցրեց, դուռը մեխեց: Կնոջ սիրտը կսկծաց:

-Լավ կարտոֆիլ եք աճեցրել, վայելելու ենք...

Իսկապես, այդ տարին բացառիկ բերքառատ էր ոչ միայն կարտոֆիլի բերքով, մրգատու ծառերը ճկվել էին ապասվող բերքի տակ, ու ժողովրդի մեջ խոսք կա, թե նման տարիներին բացառիկ երեւույթներ են տեղի ունենում:

Ալվարդը հետ չնայեց...

Հաջորդ օրը ծորակի երեք գյուղերի ականապատված տարածքներում սակրավորների խումբ էր աշխատում:

-Ոչ մի շարասյուն, ինչ տեխնիկայով էլ զինված լիներ, չէր կարող անցնել: Ոչ մի մարդ էլ չէր փրկվի, եթե... ասել է խումբը ղեկավարող ռուս փոխգնդապետը:

ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերը, պաշտպանության բանակի զորամասերը Բերդաձորը հանձնեցին ... ազերիներին: Չորրորդ օրը, մայիսի 18-ին թալանչիները մտան դատարկված ենթաշրջանի չորս գյուղերը: Իսկ բռնագաղթողների շարասյան մի թեւը հասել էր Հայաստանի սահմանը, մի թեւը դեռ ծորակի տարածքում էր: Լաչինում կանգնեցնում լին, բեռնատարներից իրենց դուր եկած ապրանքը դուրս քաշում: Ծաղրում, քարեր էին շպրտում: Լաչինի փողոցներում կանայք կանաչկարմիր շրջազգեստները ֆռֆռացնելով երգում ու պարում են:

Շարասյունը անցավ Զաբուղը: Հայաստանի սահմանում են: Ցորենի արտերի մեջ առջեւից գնացող բեռնատարը կանգնեց, թափքը բարձրացրեց, մարդկանց ու իրերը թափեց գետնին.

-Միասում քըշկըռսիզ, գեդին միասում էլիյին... (Միացում էիք կանչել, դե գնացեք միացեք):

-Հող էիք ուզում, բերել ենք ձեր հողը...

Դաշտի մեջ թափում ու փախչում են:

-Բա ասում էիք, որ հարձակվեն, մինչեւ 15 որպեն հասնելու ենք... Ո՞ւր էիք, երեք օր ձեզ էինք սպասում,- պայթեց Ալվարդը: Մոտեցած անծանոթ հայրենակիցը հասկանալով կնոջ հոգեվիճակը, կախեց գլուխը եւ հորդորելով ընտանիքին հրավիրեց իր մեքենան: Այդ պահին Զալալը, որ եղցահողի գլխավոր անասնաբույժն էր, ինչ որ մեկին հաշիվ էր տալիս.

-Սա կոլխոզի գլխաքանակից է, սա մասնավոր է...-Կովը փախավ Զալալը հետեւից: Ալվարդը նայեց կեսրայրին, ու պատկերը նրան այնքան զավեշտական թվաց, որ չէր իմանում խնդա, թե լա:

Մանկավարժ, 1936թ. ծնված Վարդի Գրիգորյանը կատարվածի անմիջական տպավորության տակ թղթին է հանձնում իր մտորումները:

«Գրում եմ, որ մարդիկ կարդան ու իմանան, թե ինչ է կատարվել... Գրում եմ, ինչ կատարվել է ինձ հետ, ինչ տեսել եմ: Գրում ու մտածում եմ, արդյոք բառերը ի վիճակի են արտահայտելու այն ողբերգությունը ինչ մենք ապրեցինք: Արդյոք բառերով հնարավոր է նկարագրել կատարված գազանությունները... Անհնարին է... Անհնարին է տալ թուրքի նկարագիրը: Գրում եմ, որ սիրտս գուցե մի քիչ թեթեւանա:

Ժամանակի ընթացքում վերքերը բուժվում ու ինչ- որ չափով մոռացության են տրվում: Բայց մեզ հասցրած վերքը, ստորացումներն ու

տանջանքները այնքան խորն են, ծանր ու տառապալից, որ ինձ թվում է ժամանակը անզոր կլինի ոչ միայն բուժելու, այլ գոնե թեթևացնելու: 1991-ի մայիսի 15-ին ինձ, իմ ընտանիքին, ամբողջ գյուղին հասցրած նվաստացումները, խոշտանգումները այնքան սարսափելի ու ստորացուցիչ էին, որ ոչ մի բոլորովին ինձ, իմ հոգեկանին հանգիստ չեն տալիս: Այն ահավոր որդի պես կրծում է նյարդերս եւ մշտական թախծի տեղիք տալիս: Քուն թե արթուն, գիշեր թե ցերեկ, խոսելու թե լուռ պահերին այդ օրվա ահավոր տեսարանները չեն հեռանում իմ ուղեղից: Այդ օրը, վաղ առավոտյան, հանկարծ լսեցինք զինվորական մեքենաների հռնդոց: Մեզ թվաց, թե տեղի կունենա սովորական դարձած հերթական խուզարկություն զենքի առգրավման եւ անձնագրային ռեժիմի ստուգման նպատակով: Բայց ...հանկարծ ներս թափվեց ադրբեջանական խաժամուժը եւ սկսեց իր աննկարագրելի անկարգություններն ու վայրագությունները: Տղաս, որ մայիսի սկզբին մի կերպ կարողացել էր Գորիսից ուղղաթիռով հասնել գյուղ մեզ հետ տեսակցելու (երկար ժամանակ չէինք հանդիպել ճանապարհազրկության պատճառով, եւ այդ նույն պատճառով չէր կարողացել հետ դառնալ ուսումնական պարապմունքներին ժամանակին մասնակցելու համար), աղջիկս, ես եւ ամուսինս աղմուկի վրա քնաթաթախ վեր թռանք: Սկսվեց մի ահավոր տեսարան: Տղայիս ու ամուսնուս կապկպեցին եւ ավտոմատների կոթերով ծեծելով տարան: Ինձ ու 14 տարեկան աղջկաս չէին թողնում տնից դուրս գալ, ծեծում էին, ծաղրուծանակի ենթարկում, հարցուփորձ անում որտեղ են ֆիդայինները, ով է կերակրել նրանց, ով է սպանել Սալաթինին, որտեղ է զենքը: Մի կերպ փորձում եմ նրանց հասկացնել, որ մեր ընտանիքում զենք օգտագործող չկա, բայց գազազած գազանին ոնց հասկացնես: Տանը ոչ մի իր իր տեղում չթողեցին, ամբողջը ջարդուփշուր արեցին, թե սպասքապահարան, թե զգեստապահարան, բազմոց, ամանեղեն, պատշգամբի եւ տան ապակիները, ամեն-ամենը: Այն, ինչ որ հնարավոր չէր ջարդել, դանակը գցում տեղաշորերը, հագուստեղենը պատառոտում էին, ոտնատակ տալիս, կոխկրտում, մուրաբաները, մրգի հյութերը թափում վրան, իսկ իրենց դուր եկած իրերը ջոկջկում, դնում ուսապարկերի մեջ:

Այդպես նրանք գրպանները խոթեցին մեր տան եղած հոգեպահուստ փողը, ոսկյա զարդերս, իսկ մատանիներս, որ 30 տարվա ընթացքում կարծես բուսել էին մատներիս, երբ չկարողացան հանել, փորձեցին դանակով կտրել... Հետո, երբ ուշքի եկա, զգվանքով նկատեցի, որ ամբողջ մատներս թքով ողողված են, կապտած ու ճանկռոտված, իսկ մատանիները չկան: Ամեն, ամեն գազանությունների դիմեցին, միայն թե հայկական Ղարաբաղը հայաթափեն: Նրանց հարվածների սուր սլաքները մի քանի անգամ խոցեցին մեր ընտանիքը: Առաջին հարվածը դա 1988թ. սեպտեմբերի 19-ին էր, երբ հրդեհեցին Շուշիում գտնվող մեր տունը (փողոց Ֆրունզե, տուն 1), ամուսնուս հայրական տունը, ուր առայսօր գրանցված ենք ընտանիքով (յոթ հոգի ենք): Մյուս հարվածն ստացանք իմ ծննդավայրում Բերդաձորի ենթաշրջանի Եղցահող գյուղում, ուր ապրում էինք իմ հայրական տանը (ծնողներս մի քանի տարի առաջ էին մահացել): Շուշին դառնությամբ թողեցինք... Բայց, օ՜հ, ամենաողբերգականը Բերդաձորը թողնելն է, որովհետեւ, կարծես, արմատով պոկվեցինք հայրենի օջախից, հողից, տուն ու տեղից, ջինջ արեւից, պաղ ջրերից, մով սարերից, կանաչապատ լեռներից, իմ մանկության ու ջահելության զմրուխտյա օրրանից: Եվ մի՞թե մշտապես պետք է թախծենք Ղարաբաղի համար ու կարոտով մեռնե՞նք: Սարսափելի է այդպես պատկերացնել: Ճիշտ է մայր Հայաստանում ենք, բայց այլ է իմ Ղարաբաղը, նրա օդն ու ջուրը, հողն ու երկինքը, լեռան ու դաշտի բույրը, հացի ու մրգի համը, թռչունների դայլայլը: Այնտեղ են պապերիս ոսկորները ճերմակ կիր դարձել: Ծնողներիս ու պապերիս մարմինը ղարաբաղյան հողի մասնիկն է կազմում: Ահա դրա համար է քաղցր Ղարաբաղը:

Նյութական կորուստները չեն, որ այնքան վիշտ են պատճառում ինձ: Ամենավշտալին, ամենադառնագինը այն բարոյական, հոգեկան նվաստացումներն են, որ կրեցինք ընտանիքով, գյուղովի ադրբեջանցի խուժաններից օմօնականներից:

Մայիսի 18-ի ողբերգական օրը գյուղ էին եկել անհամար օմօնականներ եւ Շուշիի, Լաչինի շրջանների ղեկավարները, որոնց մեջ էր նաեւ պատգամավորների Շուշիի շրջանային խորհրդի նախագահ Գյոգալովը: Նա մի քանի անգամ զինվորականների միջոցով, անձամբ, գրավոր եւ բանավոր առաջարկել է բերդաձորցիներիս թողնել գյուղը եւ հեռանալ, հակառակ դեպքում մեր կյանքի համար պատասխանատու չէ: Այժմ էլ շտապեցնում է, սպառնում. «Արագ շարժվեք, թե չէ գիշերը մտնելու եւ բնաջնջելու են ողջ բնակչությանը»:

Գյուղը լրիվ զրկել էին երիտասարդությունից ու տղամարդկանցից: Ո՞վ կարող էր դիմադրել կանա՞յք, թե՞ երեխաները: Մայիսի 15-ին տղամարդկանց կալանավորել ու տարել էին դեպի Լաչին, այդտեղից էլ Շուշի: Մինչ այդ օգնության մեծ հույսեր էինք փայփայում Հայաստանից, հատկապես Գորիսից, որտեղ ասում էին, թե բերդաձորցիներիս օգնելու ինչ-որ շտաբ գոյություն ունի: Այդտեղից մշտապես մեզ հուսադրում էին, որ վտանգի դեպքում մինչեւ 15 րոպեն մեզ օգնության

կհասնեն, չերկնչենք, չթողնենք գյուղը, ամուր կանգնենք, իրենք մեզ հետ են: Այդպիսի հուսադրական խոսքեր մշտապես լսում էինք թե՛ Հայաստանի հեռուստահաղորդումներով, թե՛ Ստեփանակերտից: Մինչ այդ էլ գյուղը մշտապես չորս կողմից գնդակոծում էին, սպանում մարդկանց, քշում անասունները, հրդեհում խոտի դեզերը, ֆերմաները, ծեծում, պատանդ տանում հովիվներին եւ այլն: Սարսափելի վիճակ էր, հնարավոր չէր գյուղից մի քիչ հեռանալ, գնալ դաշտ, անտառ, բանջարանոց: Բայց դարձյալ չէինք հուսահատվում: ԲԻՀ-ի անդամները հպարտությամբ հայտարարում էին, որ ոչ մի թշնամի մեզ չի կարող ծնկի բերել, կտրել մեր հողից, որ իրենք ամեն ինչով պատրաստ են հակահարված տալու: Ի՞նչ ստացվեց իրականում: Հակառակորդը ավելի պատրաստ գտնվեց, քան մենք: Բայց պետք էր այդ էլ նկատի առնվեր, պետք էր անհաջողության մասին էլ մտածվեր, դրան էլ նախապատրաստվել. ի՞նչ անել անհաջողության մատնվելու դեպքում: Քաղաքագետները, ռազմագետները, շարժման լիդերները նաեւ անհաջողությունը պիտի աչքի առաջ ունենային: Ժողովրդին թողեցին բախտի քմահաճույքին: Երիտասարդների մի չնչին մասը ոնց կարող էր փախուստի դիմեցին, իսկ մնացածներին՝ ծերբակալեցին: Գյուղում մնացին ծերերը, կանայք, երեխաները... օմօնականների կողմից հոշոտվելիս:

Իսկ ինչի՞ համար էին այնքան զենքը կուտակել: Ադրբեջանական հեռուստատեսությունը լկտիաբար հայտարարում է, թե Հայաստանից ԼՂԻՄ բերված զենքի 70 տոկոսը տեղավորվել է Բերդաձորում: Եթե իրավ է, ապա ինչո՞ւ մի կրակոց չլսվեց: Ինչի՞ էր հարկավոր այստեղ-այնտեղ թաղել ու չօգտագործել: Ապարդյուն ծախսեր... Ինչ որ է, մենք նկատի չենք առել հակառակորդի ուժը:

Իսկ Գյոզալովը շտապեցնում է: Դա այն Գյոզալովն է, որ 1990թ. հունվարին Բաքվում տեղի ունեցած դեպքերի ժամանակ զոհվածների հիշատակին Շուշիում կանգնեցված հուշարձանի բացմանը բռունցքը ճոճելով ցինիկ կերպով հայտարարեց. «Մենք եկել ենք ոչ միայն մեր հարգանքի տուրքը մատուցելու զոհվածների հիշատակին, այլեւ երդվելու, որ հանգիստ չենք մնա մինչեւ վերջին հայը դուրս չվռնդենք Ղարաբաղից»: Երդվում ենք՝ գոռացել է խաժամուժը բռունցքները օդում թափահարելով: Գյոզալովը իրականացնում է իր երդումը: Ա՜խ, ո՞ւր է թե այսօր հայտնվեր մի Թեհլերյան այդ նոր Թալեաթի դեմ..

Չարագուշակ դեմքերով օմօնականները, քաղաքացիական ու միլիցիայի հագուստներով, ատրճանակներով ու ավտոմատներով զինված, շրջում էին գյուղում, անցնում տնից տուն, շտապեցնում, որ մեքենա

վարձենք իրերը բեռնելու ու գյուղից դուրս գալու, թե չէ գիշերը բոլորիս մահ է սպասվում: Խորհրդային բանակը այդ օրը եղցահողը հանձնեց ազերիներին: Սրանք գյուղացիների ունեցվածքից ընտրում էին իրենց հարկավոր իրերը (հեռուստացույցներ, սառնարաններ եւ այլն) իրար պահ տալիս կիսելու նպատակով:

Մենք գյուղացիներս, կասկածների մեջ էինք, կապի վերջին միջոցը հեռախոսը եւս կտրել էին, աշխարհից լրիվ կտրված էինք: Ի՞նչ էր սպասվում մեզ. «Կտանեն, բոլորիս կկանգնեցնեն Հագարա գետի ափին, կկոտորեն ու կթափեն գետը»,- այսպես էին ասում կանայք տալով, մոռացած տարիների ընթացքում դառը քրտինքով թել-թել կուտակած իրենց ապրուստը: Նրանց աչքի առաջ տվյալ պահին իրենց մանկանց ու իրենց կյանքն էր երեւում, էլ ուրիշ ոչինչ, մանավանդ որ գյուղի չորս կողմից կրակում էին, երեւի սարսափեցնելու համար:

Ոչ մի տեղից օգնության ոչ մի հույս արդեն չէր մնացել: Մեր մեջ մնում էր ապրելու հավատը: Մայիսի 16-ի գիշերը մեր գյուղի եղցահողի կանայք եւ երեխաները գնացել էինք հարեւան Մեծ Շեն կոչվող գյուղը, իբրեւ պաշտպանվելու համար, որովհետեւ կարծում էինք, թե այնտեղ խորհրդային բանակի պահակակետ կար: Այդ օրը զինվորները լքեցին իրենց պահակակետը ու հեռացան անհայտ ուղղությամբ: Ողջ գիշեր ազերիները թալանում էին գյուղը: Հրդեհվեց դպրոցի շենքը: Կոլտնտեսության եւ առանձին անհատների անասունները քշում էին. Ձիերի խրխինջը, կովերի բառաչը լցվել էին գյուղը: Կրակոցները չէին դադարում:

Երբեք չեմ մոռանա Գայանե անունով մի աղջկա, որն ամբողջ գիշեր գանգում էր պաշտոնատար անձանց, օգնություն խնդրում. «Ջորի Հայկովիչ, ընկեր Բաբայան, տովարիշչ Ժուկով, գյուղի չորս կողմից կրակում են, տղամարդ չկա. դպրոցը վառվում է, կանայք եւ երեխաները լաց են լինում, խնդրում ենք օգնություն հասցրեք եւ այլն»: Բայց պատասխանում են դիմադրեցեք, թե ովքեր իրենք էլ չգիտեն:

Ահա հենց այդ գիշեր մեր մեջ մեռավ այնքան փայփայած հույսը. մենք անօգնական ենք, մինչեւ հիմա ինչ եղել է սուտ է եղել, խաբեություն, մենք խաբված ենք: Տուն ու օջախ թողած մի քանի ծեռք տեսաշոր ենք բարձում մեքենաները...

... Աստվածածին վերին կաթան,
Քեզ ամանաթ մեր տուրք վաթան,
Ուր որ գնանք մեր վաթանից,
Մեզ դարձրու գերությունից...

Մեզ ասացին՝ որտեղ կամենաք, այնտեղ ենք տանելու: Բոլորս, բա-

ցի մեկ ընտանիքի, ցանկացանք Ստեփանակերտ: Բայց ահա մեքենաները թեքվեցին դեպի Լաչին: Ասված գիտե, թե յուրաքանչյուրի մտքով ինչեր անցան... Ճանապարհի երկու կողմերով խուժաններ են, որ ծաղրում են, երգում, պարում, արհամարհական շարժումներ անում, բռունցքներ ցույց տալիս եւ այլն:

Մեզ դուրս բերեցին Ադրբեջանի տարածքից ու թափեցին Գորիսի շրջանի Տեղ գյուղի տարածքում ասելով հիմա գնացեք ու միացեք:

Որոշ ժամանակ անց Գորիսի կողմից մարդիկ են հավաքվում. պաշտոնատար անձինք, տարբեր թերթերի ու հանդեսների աշխատակիցներ, շարքային մարդիկ, ջուր, ուտելիք են հասցնում մեզ, երեխաներին ու ծերերին գյուղ են տանում: Սկսում են հարցուփորձ անել կատարվածի մասին, նկարահանումներ են կատարում: Ոմանք կարեկցում են, խղճահարվում, ցավակցում մեզ, ոմանք էլ կշտամբում գյուղը լքելու համար:

Թեեւ օրը պայծառ էր. արեւը փայլում էր երկնքում, բայց իմ սիրտը մութ գիշեր էր, հարյուր տեղից խոցոտված, ճզմված, տրորված: Երեքօրյա նվաստացումները, ծեծը, ծանր ապրումները, անքնությունը, քաղցը մի տեսակ բթացրել, անզգայացրել էին ինձ եւ շատերին: Թվում էր, թե ահա այստեղ հայ-ադրբեջանական սահմանի վրա ամեն ինչ վերջացավ, կյանքը սպառվեց, հավերժ խավարեց արեւը:

Օրը մթնում էր: Կամաց-կամաց դաշտը սկսեց դատարկվել: Ովքեր ծանոթ, բարեկամ ունեին Հայաստանում, իրենց բարեկամներին տանում էին: Իսկ մեր ընտանիքը բացարձակապես ոչ մի ծանոթ ու բարեկամ չուներ այս կողմերում: Ուրեմն մենք կմնանք ու այդ գիշեր սահմանագլխին վերջնականապես խուժանի բաժին կդառնանք... Այդ պահին իմ դարդ ու ցավը աղջնակս էր, իմ Լաուրան:

Բայց ահա մթության մեջ մնկը հարցնում է. «Սամվելի պապա՞ն ես, Սամվելի մամա՞ն ես»: Հույսի մի շող ծուլորեն կարծես նորից սկսեց ճառագել իմ խորտակված հոգում: Դա տղայիս ուսանողական ընկերն էր, շահումյանցի Կամոն:

-Դե, բերեք իրերը, բարձենք մեքենան,-ասում է Կամոն:

-Քեզ մատաղ, Կամո, մենք ոչ բարեկամ, ոչ էլ ծանոթ ունենք, դու էլ՝ հանրակացարանում, ո՞ւր պիտի տանես,- ասում եմ:

-Մեր տուն, մայրիկ,- ասացին կողքին կանգնած երկու երիտասարդները: Հետո իմացա, որ նրանք Տեղ գյուղացի Թոխունց Գրիգորի տղաներն են Հրանտը եւ Սամվելը: Իրերը մեքենան բարձեցին: Ի՞նչ իրեր, Լաչինում էլ ավելի էին թեթեւացրել թափելով բարձածի 70 տոկոսը: Տղաները մեզ տարան գյուղի ծայրում գտնվող մի երկհարկանի

տուն: Քաշվելով, երկչոտությամբ ներս մտանք: Գրիգոր քեռին, ութսունն անց, ալեխառն մազերով, կապույտ աչքերով, շեկ, բարի դեմքով մի մարդ էր, եւ կինը Սաթենիկ մորաքույրը, կերակուր էր պատրաստում սպասելով, որ տղաները հյուրեր կբերեն: Մենք չենք կարողանում մեզ զսպել: Արցունքները հեղվում էին մեզնից անկախ: Իրենք էլ Գրիգոր քեռին եւ Սաթենիկ մորաքույրը մեզնից առավել էին հուզվել: Գրիգոր քեռին ուզում է սփոփել, մխիթարության խոսքեր ասել, բայց արցունքները խեղդում են: Հետո մի կերպ մեզ հավաքեցինք: Գրիգոր քեռին ու Սաթել մորաքույրը ամեն կերպ ուզում են մեզ սիրտ տալ. «Հեչ պարդ մի արեք, բան չկա, ճնճղուկը մի թփի ապավինում է, բույն շինում, բա մենք հայ չե՞նք, մի թփի չափ էլ չկա՞նք, որ մեզ ապավինենք»,- ասում է Սաթենիկը: «Ես եղբայր չունեմ, իմ եղբայրները Սեդրակը եւ Նիկոլայը, զոհվել են Հայրենական պատերազմում, դու իմ եղբայրն ես, կինդ իմ քույրը, երեխաներդ իմ երեխաները, տունս-տեղս, ապրուստս ձերն է, բոլորովին աչքներդ փոք չգցեք: Բարով տղադ էլ կալանքից ազատվի, մի լավ քեֆ են սարքելու»,- ասում է Գրիգոր քեռին ամուսնուս:

Թոխունց ընտանիքը բազմազավակ է: Գրիգոր քեռին եւ Սաթենիկ մորաքույրը ունեն ինը զավակներ, բոլորն էլ ամուսնացած, երեխաներ, աշխատում են տարբեր բնագավառներում, ապրում են տարբեր վայրերում Գորիս, Սիսիան, Ստավրոպոլ եւ այլուր: Գորիսում ապրողները երեկոյան զանգել եւ իմացել էին, որ մի ընտանիք ապաստանել է իրենց հայրական օջախում: Առավոտյան, առաջին ավտոբուսով կգան եկան մեզ տեսության: Հանդիպումը սրտառուչ էր: Բոլորն էլ անկեղծորեն ուզում են թեթեւացնել մեր վիշտը, մոռացնել տալ մեզ հետ պատահածը:

«Քույրս, լաց մի լինի, ես քո վրեժն առնելու եմ»,-ասում է Թոխունց Գրիգորի տղա Գառնիկը աղջկաս Լաուրային: «Հինգ ազերի կրոնենք, Սամվելի հետ կփոխանակենք»,- հուսադրում է Հրանտը:

Բացվեց ճոխ սեղան: Սաթիկ մորաքույրը սեղանի վրա էր դրել հոգեպահուստ-ուտեստները: Թվում էր, թե Թոխունց ընտանիքը գտել է տարիներ առաջ անհայտ կորած հարազատներին, եւ ուրախությունից գլուխներ ինչպես վարվել. մեկ խնդում էին, մեկ արտասվում: Բոլորը պտտվում էին մեր շուրջը, ամեն ինչ արվում էր մեզ ուրախացնելու, մեր վիշտերը ամոքելու համար: Մի հարեւան էլ ասաց «ձեր հետեւից ո՞վ է կրտմիր խնձոր ուղարկել», բայց դա բացառություն էր:

Մայիս, 1991 թվական»:

Եղցահողի դպրոցի քիմիայի եւ կենսաբանության ուսուցչուհի Ալվարդ Պետրոսյանը լրացնում է օրագիրը.

«Ես նույնիսկ զարմանում եմ, այսքան կատարվածից հետո ինչպես է ձեռքս բարձրանում գրիչ բռնելու: Մինչեւ կյանքիս վերջը չեմ մոռանա Տեղ գյուղի մարդկանց հյուրընկալությունը: Այժմ Աբովյան քաղաքում ենք: Ասացին, որ Մոսկվայից հանձնաժողով է եկել: Գնացինք: Կիմ Բալայանը, Բաբկեն Արարքցյանը, Իգոր Մուրադյանը փորձում էին հասնել, որ պետք է հետ գնալ: Քիչ է մնում գժվենք հիշելով մեր տարած տառապանքները, իսկ սրանք առաջարկում են հետ գնալ: Երբ ես հարցրի, թե 4 օր մենք սպասում էինք, ինչու չեկաք, գայիք, մենք էլ դուրս չէինք գա, ասացին՝ ուշացանք: Ասացի՝ չեմ հասկանում, դուք էլ հո խորհրդային ղեկավարությո՞ւնը չեք, որ ուշացաք:

Ռոման բանտում է: 4-5 ամիս է անցել : Ժողովուրդը մի խոսք ունի. «Քթիցդ ծուխ բարձրանա»: Հիմա եմ հասկանում, թե ինչ է նշանակում... Ուղեղս ինձ չի ենթարկվում.. փախչում եմ դաշտը միրգ հավաքելու: Կյանքը կորցրել է իր հմայքը, հացի պատառը կոկորդս է մնում...Բա չորս երեխաներիս պահելու ծանր բե՞ռը... Թաքցնում եմ ներքին ալեկոծումներս, բայց աչքերս մատնում են, ծիծաղս կեղծ է հնչում, լացս աղոթք ու մրմունջ է ...Իսկ երբ վրա է հասնում գիշերը, թվում է, թե լուսաբաց չի լինելու: Մտքերս շարան-շարան, անկապ, տանջալից, սարսափելի, փոխարինում են մեկը մյուսին...»:

Բերդաձորի ենթաշրջանի Հին Շենը, Մեծ Շենը, Եղցահողը, Տասը Վերստը հայաթափված են, եւ գյուղերում մայիսի 18-ից տերուտնօրինություն են անում ազերիները:

Այսպես, ապրիլի 30-ին սկսված «Կոլցո» ռազմագործողության ժամանակ բռնատեղահանվել են ԳետաշենՄարտունաշենից 3500 մարդ, Երքեջ-ՄանաշիդԲուզլուխ գյուղերից 1152, Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանից 1000, Հադրութի շրջանից 1605 մարդ: Ստեփանակերտից կալանվել են 1000-ից ավելի բնակիչներ: Հադրութի շրջանի Արփագետիկ գյուղում ռազմագործողության ժամանակ ազերիները սպանել են 80 տարեկան չորս ծերունիների, որոնք չեն ցանկացել լքել գյուղը:

Այս դեպքերից մի քանի օր անց, մայիսի 22-ին Մոսկվայում Ադրբեջանի կառավարության ներկայացուցչությունում, մամուլի ասուլիսում Ադրկոմկուսի ԿԿ անդամ Դաշտամիրովը հայտարարել է, թե «մոտ ժամանակներս հարկ կլինի Լեռնային Ղարաբաղից արտաքսել 32 հազար մարդու»: Նույն ասուլիսում Ադրբեջանի գլխավոր դատախազ Իսմեթ

Պահբովը խորհրդային բանակին շնորհակալություն է հայտնել աջակցության համար՝ ավելացնելով, թե «հարկ է, որ բանակը ավելի գործուն եւ հարձակողական լինի»:

1991-ի ապրիլի 30-ին Գետաշենում պատանդ վերցված ԽՍՀՄ ներքին զորքերի դիվիզիայի հրամանատար գնդապետ Մաշկովի մոտ հայտնաբերվել է «Կոլցո» ռազմագործողության ծածկագիրը, որի լուսանկարային պատկերը վերատպվում է զանգվածային լրատվության միջոցներում.

Պաշտոնատար անձանց ազդականները

Գործողության ղեկավարը՝	Յախտա
Գնդապետ Մաշկով՝	Զալիվ
Գնդապետ Միշին՝	Կուրգան
5477 զինվորական մասի հրամանատար՝	Օբրով
3-րդ գնդի հրամանատար՝	Օբրով - 1
4-րդ գնդի հրամանատար Աբդուլով	Օբրով - 2
5478 զ/մ հրամանատար	Վիրաժ - 1
2-րդ գնդի հրամանատար Ոյաբով՝	Վիրաժ - 2
Հատուկ նշանակության ջոկատի հրամանատարներ՝	
Ֆինալ, Դոզոր	
Խորհրդային բանակի ստորաբաժանումների հրամանատար՝	Կոստյոր
Ուղղաթիռային ստորաբաժանում՝	Կրոնա
Գրոհի ազդանշանը՝	119
Նահանջի ազդանշանը	120
Բանակի համար	120
Օմոնի համար	16
Խնդրում եմ ուղարկել ԲՏՐ՝	115
Կան վիրավորներ՝	110
Կան սպանվածներ՝	111

Իսկ մայիսի 15-ին ավտոբուսները, որոնց մեջ ենթաշրջանի չորս գյուղերից հավաքած տղամարդիկ էին, շարժվում են դեպի Լաչին: Ջայնարկիչների բարձր երաժշտության տակ փողոցներում, սարի լանջին կպած տների բուսականությունից զուրկ, չոր բակերում պարում, ցնծության ճիչեր են արձակում կանայք: Ճանապարհին ստեպ-ստեպ մեքենաները կանգ են առնում, եւ արնածարավ հրոսակախմբերը դատաստան են տեսնում: Ծեծ: Անարգանք:

-Ալլահը կպատժի մեզ, մի կանգառում հնչեց տարեց մեկի ձայնը, որ անմիջապես խլացավ ամբոխի վայրենի աղաղակներից:

Մի ՈւԱԶ մոտեցավ ավտոբուսին.

- Ձեզ հրամայված էր տեղահանումը մարդավայել կատարել, իսկ դուք... Ձենքերը հանձնեք, շուտ, հրամայեց ռուս սպան, իսկ մեքենայի ներսում չհասկացան ինչ էր սա, «խաղի» շարունակություն, թե՞...

Մութն իջավ, եւ քաղաքը չի քնում: Քաղաք են բերվել «գրոհային-ներ», որոնք իրենց «հողային» պահանջներով 3 տարի շարունակ խանգարել են իրենց հանգիստը: Ոստիկանության, այսպես կոչված, «զտման» կետ է բերվել 154 տղամարդ 14-16-ից մինչեւ 80 տարեկան: Բացվում է դուռը.

- Մարդավարի ապրելը չհասկացաք: Սրան եք արժանի, արցունքաբեր գազ են բաց թողնում: - Մեր տղամարդիկ արդեն ձեր կանանց մոտ են: - Հռհռում են:

Ներս են լցվում ազերիները:

- Բանտի հացն էլ է ափսոս ձեզ...

- Հո՞ղ էիր ուզում, դե կեր, մի քանիսը ոլորել են ենոքի ձեռքերը, մեկը բուռբուռ հողը լցնում ու ստիպում է կուլ տալ:

- Երախտամոռներ, մեր հացը կերել եք ... Մի աժդահա զարկեց Գառնիկին: Քթից արյուն ժայթքեց.

- Պատմիր ինչպես եք Սալաթինին սպանել, ածելին քաշում են դեմքներով... Բոլորն արյունաթաթախ են: Խցում ոչ նստելու, ոչ կանգնելու հնարավորություն չկար: Լցված են իրար վրա: Պատուհան ծառայող անցքի փեղկը բացվում է միզում են... Օդը հեղձուցիչ է, տոթից խեղդվում են: Արտաշնչած օդից առաստաղից ջրի կաթիլներ են թափվում: Մեկի գրպանում փող կար, տվեցին մի բաժակ ջուր առան: Հերթով թրջում են բերանները:

Առնոյին տարան ու թեւերից բռնած քարշ տալով արնաշաղախ հետ բերին: Գլուխն ուռած էր: Բաժակի տակ պահած մի կաթիլ ջրով էդիկը թրջեց շուրթերը:

- Խաբվեցի... Ոնց խաբվեցի...

- Ո՞վ... Ի՞նչ...

- Դա մի կողմ թողնենք: Հիմա ուշադիր լսեք: Ինձ երեւի կառանձնացնեն: Դուք ոչինչ չգիտեք: Ձեր իմացածով ուղղաթիռները օգնություն, սննդամթերք են բերել: Զենքերը ինձնից ստացել եք, գնացել պահակություն եք արել, բերել ինձ եք հանձնել: Եթե չդիմանաք անուններ տաք, տվեք նրանց անունները, ովքեր ազատության մեջ են: Մեռնելուց չվախենաք, չնվաստանաք, հաց ու ջուր չուզեք...

Հարությունյան Գագիկին տարան հարցաքննության:

- Ինչպե՞ս եք սպանել Սալաթինին: Պատմիր:

- Ինչքան գիտեմ, վատ կնոջ համբավ ուներ, ռուս սպաների հետ մնում էր գալիս ծերոնք միշտ սպառնացել են, հետապնդել ու սպանել, այն, ինչ որ պատմեց Գագիկը, լսել էր Բաքվից հեռարձակված մի հեռուստահաղորդման ժամանակ: Նույն վարկածը լսել է նաեւ գյուղի պահակակետում կանգնած մի ռուս մայորից:

- Մտածիր, հետո խոսիր, թե չէ, հրամայեց քննիչը:

- Մտածելու բան չկա, ծերոնց ձեռքի գործն է:

-Դու գիտես... - Քննիչը սեղմեց զանգի կոճակը, ինքը դուրս եկավ, մի քանի հոգի ներս լցվեցին: Ծեծ, խոշտանգում: Երբ աչքերը բացեց, քննիչը նորից նույն հարցը տվեց:

Երկրորդ օրը դուռը բացվեց, ներս մտավ Թայիրը Լիսագորի օմոնականների ավազակապետը, դագանակը ձեռքին: Լիսագորի ճանապարհի մոտ, տաղավարում, ինչքան էր բերդածորցիների հետ նստել, խորոված կերել: Ազերին ոչխար էր մորթում, միասին էին ուտում, հայը մնողը կտրում էր, մի շրջանակ քիրվային բաժին էր հանում:

- Թուրք երեխաներին լցրել եք մի տակառի մեջ, Մասիսի գագաթից գլորել, ասաց Թայիրը, ու հարվածները տեղում են:

- Թայիր, ինչ Մասիս... Ինչ տակառ, համարձակվեց ծերերից մեկը:

- Հիմա չէ, 1915-ին է եղել...

Սարգսյան Գրիշային հանեցին բակ:

- Բա էն լա՞վ էր, որ հղի կնոջը սպանել եք...

Կալանավորը փորձում էր բացատրել, որ իրենք նման գազանությանն ընդունակ չեն: Գետնին ընկած հեւում էր, երբ Կանաչ Թալայից մի բնակիչ, մի քիչ տարիքով ազերի, մոտեցավ ու խղճահարությունից օմոնականին ասաց ճշմարտությունը, որ Կանաչ Թալայի ճանապարհահատվածի վրա հայկական բնակավայրերից հեռու, օմոնականների խումբը կարծելով, թե հայի մեքենա է անցնում, կրակ են բացել, որի հետեւանքով սպանվել է հղի կինը:

- Տարեք գցեք խուցը, սպանելու մտքով էին հանել, բայց ձեռք թաշեցին:

Երկրորդ գիշերը կալանավորները «զտման» կետին մոտիկ գտնվող Ալիվանդանոցից շախսեյվախսեյի ձայներ են լսում ու սարսափում: Հաստ չանցած, դուռը բացեցին, մերկացնել տվին, հանեցին միջանցք: Դագանակների տակ դես ու դեն են քշվում, գլորվում, չոքում, բարձրանում, ծեծողների դաժանությունը սահման չի ճանաչում:

Հաջորդ օրը կալանավորները մի հսկիչից իմանում են, որ Զաբու-

ղում թալանը կիսելու ժամանակ խորհրդային զինվորականների եւ օմօնի միջեւ վեճ է ծագել, ծեծկռտուք է եղել, մի օմօնական էլ հիվանդանոցում, որ ծանր վիճակում էր եղել, մահացել է: Սաֆարյան Էդիկին բերեցին, ձեռքը ուսից կախված: Ծերերից մեկը մոտեցավ, շոշափեց ու հանկարծակի ձգեց: Հոդախախտ ձեռքը տեղն ընկավ:

Երրորդ օրն է: Մի խցում 40-50 հոգի են: Մարմինները խոշտանգված, ծխախոտով վառած, դանակով ու երկաթե ձողերով ծակծկված են: Մի մասը կիսամեռ են: Ծեծի, խոշտանգման հարկադրանքի տակ շատերը չեն դիմանում, առանց կարդալու ինչոր թղթեր են ստորագրում: Այսպես ստեղծվում են քրեական գործերի կեղծ հիմքերը:

Մեկին հրեցին ներս: Արնաշաղախ, ոտքի վրա չէր կարողանում մնալ: Փլվեց ու գլուխը խփեց պատին:

- Չդիմացա: Թղթեր են ստորագրել տվել:

- Դու հասկանո՞ւմ ես ինչ ես արել:

- Չդիմացա, Առնո, առաջինը հենց իմ անունն է գրված:

Առնոն գլուխն առավ ձեռքերի մեջ:

- Ինձ թղթեր ցույց տվեցին, թե Բենիկը ստորագրել է...

- Գոնե ինքդ քեզ խղճայիր, Առնոն այլեւս ասելիք չուներ:

Մեկ ժամ հետո քարշ տալով խուց շպրտեցին Պետրոսյան Հրաչիկին.

- Ստորագրած թղթերդ աչքս կոխեցին, ու ձեռքերը մեկնեց դեպի Արմանի կոկորդը:

-Հանգիստ մնացեք, հենց դրա համար են էս ամբողջը սարքում: Ոչ մեկիդ ձեռքը մյուսի վրա չի բարձրանալու, ոչ մեկը չէր կարող Առնոյին հակառակվել:

Ըստ ոչ հավաստի տեղեկությունների պատանի մի տղայի այնքան են ծեծում, որ սա բանսարկում է իբր Սալաթինին եւ երկու զինվորականներին Առնոյի խումբն է սպանել:

Լաչինի զտման կետում 16 հոգանոց մի «ավազակախումբ» են սարքում, ստեղծում Սալաթին Ասկերովայի սպանության քրեական գործը:

Երեք օրից հետո կալանված բերդածորցիների մի մասին ավտոբուսով հասցնում են Բերդածոր, որտեղ միայն կանայք ու երեխաներ են: Տեսնելով խոշտանգված այրերին, խուճապը, ահն ու սարսափն ավելի է ուժեղանում:

«Զտումը» կատարված էր: 60 հոգու տանում են Շուշիի բանտ:

Անդրեյ Սախարովի հիշատակի միջազգային առաջին համաժողովի խումբը այցելում է Շուշիի բանտ: Մի խցում նստած էին երեք ծերունի

ներ, երեքն էլ Մեծ Հայրենականի մասնակիցներ Առստամյան Գուրգենը, Պետրոսյան Մայորը, Ավետիսյան Վաղարշակը: Երկուսը հաշմանդամության կարգ ունեին: Պատվիրակները զարմացած նայել են ծերերին եւ ուղեկցող բանտապետի տեղակալին հեգնանքով հարցրել են.

- Սրանք էլ գրոհայիններ՞ ն են...

Հաջորդ օրը Գուրգենին կանչում են քննիչի մոտ, թե ազատ ես:

- Չեմ գնում: Իմ երկու տղաներին էստեղ թողած ո՞ւր գնամ...

Այս դեպքերից մեկ ամիս անց մայիսի 18-ին Ռուսաստանի Գերագույն խորհրդի մարդու իրավունքների կոմիտեի Հայաստանի եւ Ադրբեջանի մի շարք շրջաններում զինված հակամարտության առնչությամբ խորհրդարանական լսումների ժամանակ Ռուսաստանի Գերագույն խորհրդի մարդու իրավունքների կոմիտեի նախագահ Սերգեյ Կովալյովը հարց է տալիս.

- Ըստ ձեր տվյալների, ինչքա՞ն հայ գրոհայիններ են կալանվել «կոլցո» ռազմագործողության ժամանակ, եւ ի՞նչ քանակություն են կազմում ընդհանուր կալանվածների թվում քաղաքացիները, որոնք ռազմագործողության ընթացքում ստիպված են եղել թողնել իրենց մշտական բնակության վայրերը: Չէ՞ որ չի բացառվում, որ կան մարդիկ որոնք վարում են ոչ ճիշտ կենսակերպ, որոնց դեմ պե՞տք է արդյոք կիրառել քրեաիրավական սանկցիաներ:

Ա.Վ. Վիկտորով, ԽՍՀՄ դատախազության ներկայացուցիչ.- «գրոհային», սա իրավաբանական հասկացություն չէ: Դուք հարցը տարօրինակ ձեւով եք դնում: Անձնագրային ռեժիմի ստուգում կատարվել է, եւ մարդկանց երբեմն ստուգել են այսպես կոչված «զտման» կետերում...

Պատգամավոր Սիրոտկինը տեղից զարմացած գոչեց.

- Ի՞նչ... Զտման կետե՞ր... Ի՞նչ իրավական հիմքի վրա են ստեղծվել... Միկրոհամակենտրոնացման ճամբար, թե՞...

- Դա վայր է, որտեղ տարել եւ ստուգել են անձը, պատասխանեց դատախազության ներկայացուցիչը, այնտեղ արգելափակոցներ, վշալարեր չկան... Այնտեղ երկրի նախագահին Գորբաչովի հրամանագրում ձերբակալության համար այսպիսի հիմք կա, օրինակ հասարակական կարգի կամ արտակարգ դրության խախտում: Կարելի է հաստատել կամ չհամաձայնել, բայց այսպիսի ձեւակերպում կա: Կան նաեւ պրովոկացիոն լուրերի տարածում, ազգամիջյան կրքերի բորբոքում: Սա այսպիսի օրինական հիմքեր կան բոլոր գործերում:

Իրադարձությունների թարմ տպավորության տակ 1991-ի մայիսի 31-ին Հադրութ շրջկենտրոնի թանգարանի տնօրեն, 1992-ին ԼՂ Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանը «Ի՞նչ է տեղի ունեցել Հադրութում» բրոշյուրում «Կոլցո» ռազմագործողության կապակցությամբ գրում է. «Սպասելի՞ էին արդյոք այն իրադարձությունները, որոնք տեղի ունեցան շրջանում, եւ հնարավո՞ր էր դրանք կանխել, թե ոչ: Առաջ անցնելով միանգամից պատասխանեմ, որ ընդհանուր քաղաքական առումով եւ տեսականորեն սպասվում էին այդ իրադարձությունները, եւ այն կարելի էր կանխել միայն բարձր քաղաքական մակարդակով... Պիտի ասել, որ համընդհանուր խուճապի եւ շփոթվածության պայմաններում հնարավոր չէր ավելին անել բռնագաղթը կանխելու համար: Սակայն բոլորն այսօր միանշանակ այն կարծիքին են, որ վճռական լինելու դեպքում հնարավոր էր գոնե գյուղերի բռնագաղթը, թալանը կանխել, եւ որոշ տեղերում դա հաջողվեց: Եթե Ստեփանակերտում չանսալով Հադրութից գնացող ահազանգերին՝ մայիսի 13-ին կատարվածը համարեցին ընդամենը անձնագրային ռեժիմի ստուգում եւ հանգստացրին շրջանի ղեկավարությանը, իսկ 14-ին, 15-ին էլ փաստորեն էական ոչինչ չձեռնարկվեց, չնայած ակնհայտ էին արդեն դեպորտացիայի ուղղությամբ կատարվող գործողությունները, ապա Հադրութում 15-16-ին արդեն հոգեբանորեն շատշատերը հաշտվել էին դեպորտացիայի մտքի հետ:

Համընդհանուր խուճապը, անորոշությունը, գյուղերից ստույգ տեղեկությունների բացակայությունը եւ վտանգը, որ դիմադրության փորձը կարող է հանգեցնել արյունահեղության, այնպես, ինչպես պատահեց Գետաշենում, կաշկանդել էր թե՛ ղեկավարությանը, թե՛ ակտիվիստներին: Միայն հետո պարզ դարձավ, որ փաստորեն 16-17-ին զորքն ու օմոնը հետ էին քաշվել, եւ գյուղերում սկսվել էր թալանը, որը կարելի էր կանխել վճռական ու կազմակերպված լինելու դեպքում: Իսկ 16-ին դեռեւս իշխում էր այն տեսակետը, որ բռնագաղթն անխուսափելի է եւ անհրաժեշտ է միայն ժամանակ շահել նորմալ գաղթելու համար: Գուցե այսօր ցավալի է եւ ամոթալի այս մասին գրելը, բայց դա փաստ է, որ տեղի է ունեցել:

...Կատարվածի համար բոլորս հավասարապես պատասխանատու ենք, եւ կարծում եմ, որ մենք պետք է ոչ թե հաշիվներ մաքրենք եւ միմյանց մեղադրանքներ ներկայացնենք, այլ կատարվածից դասեր առնենք եւ նոր սխալներ թույլ չտանք»...

Իսկ Ստեփանակերտում բռնագաղթածների, կալանքի վերցրած տղամարդկանց հարազատները առավոտից մինչեւ երեկո կանգնած են կենտրոնական հրապարակում, կազմկոմիտեի՝ Պոլյանիչկոյի ու Սաֆոնովի հայացքների դիմաց, սպասում են տեղեկության. ինչո՞ւ են տարել, որտե՞ղ են տարել: Տան տղամարդը կորցրած, տնից տեղից, հավատից զրկված, հոշոտված, թեւաթափ երամի նման, հրապարակում խումբ-խումբ այս ու այն կողմ են քշվում: Կանանց խումբը հանկարծ վայնասունով ճեղքեց զինվորների շղթան եւ հայտնվեց մարզկոմի շենքի մուտքի մոտ: Ավտոմատների սպառնալից փողերը կանգնեցրին խմբին: Այդ պահին տանկը մտավ հրապարակ ու բարձրախոսից սպառնալիքներ են հնչում.

-Դուք խախտում եք արտակարգ դրության ռեժիմի կանոնները, եթե չցրվեք... Տեսնո՞ւմ եք, ձեզ ինչ ողբերգության առաջ կանգնեցրին ձեր լիդերները: Քշեցեք նրանց եւ՝ այս հողի վրա կապրեք խաղաղ, երջանիկ...

Կոչը ոչ մի ազդեցություն չի գործում:

-Ինչո՞ւ եք եկել այստեղ, դիմեցեք ձեր լիդերներին, նրանք կլուծեն ձեր հարցը: Դուք ծանծրացրել ու համբերությունից հանել եք մեզ...

Միքայելը աղջկա՝ Բելայի հետ հրապարակի մի անկյունում կանգնած, ժամերով սպասում էին՝ գուցե Առնոյից ու Արտաշից մի լուր լսեն: Միքայելը մոտեցավ մի խմբի:

-Դաշնակ տղայիդ արածն է... Դե թող գա՝ պատասխան տա,- համագյուղացու հանդիմանությանը հետեւեց հայհոյանքը, որ մարդը կուլ տվեց, եւ կուչ եկած, գլուխը կախ հեռացավ: Բելան առանց հարցնելու հասկացավ կատարվածը, սեղմեց շրթունքները, ինքը մոտեցավ մի ուրիշ խմբի: Հենց հասավ նրանց, լռեցին ու շրջեցին հայացքները: Հայր ու աղջիկ մինչեւ մութն ընկնելը սպասեցին ու տուն գնացին, հաջորդ օրը նորից հրապարակ գալու մտադրությամբ: Անորոշությունից այդ հաղթանդամ, հպարտ մարդը փոքրացել, մի բուռ էր դարձել:

Մինչդեռ տանկը՝ սպառնալից շրջում էր հրապարակում, մարդիկ՝ կանայք ու ծերեր սարսափահար այս ու այն կողմ են քշվում, իսկ բարձրախոսը շարունակում էր սպառնալիքներ տեղալ.

-Հարգելի քաղաքացիներ, մի խմբվեք: Եթե չցրվեք...

1991-ի մայիս-հունիսին Արցախում երկու հոսանք, երկու մտայնություն կար. առաջինը, որ բացահայտ էր, գլխավորում էր Հենրիխ Պողոսյանը. համաձայնել ամեն ինչի, միայն թե մարդը չհայաթափվի, չբռ-

նատեղահանվի: Երկրորդ հոսանքի, դարձյալ բացահայտ, կողմնակիցները, Շարժման ակտիվիստների մեծամասնությունն էր կազմում. ընդունել ցանկացած մարտահրավեր հանուն Ազատության:

Մայիսի 16-ին Լեռնային Ղարաբաղի մարզգործկոմի նախագահ ընտրվեց Լեոնարդ Պետրոսյանը, տեղակալ Օլեգ Եսայանը: Նույն օրը ԼՂԻՄ աշխատավորության լիազոր ներկայացուցիչների ժողովը հայտարարություն տվեց, որի մեջ ասվում էր, որ «մարզում տեղի են ունենում ողբերգական իրադարձություններ, որոնք ուղեկցվում են բռնությամբ, թալանով, ավազակային հարձակումներով, սպանություններով, ամբողջ բնակավայրերի դպրոցների, հիվանդանոցների հրկիզումով, անօրեն ձերբակալություններով, մարդկային արժանապատվության ստորացումով եւ իրենց օջախներից խաղաղ բնակչության արտաքսումով: Անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով պատժիչ գործողությունները անց են կացվում բացառապես հայ բնակչության նկատմամբ Ադրբեջանի ՆԳՆ օմոնի ուժերով, ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի ստորաբաժանումների աջակցությամբ: Շարունակվող բռնությունը, ահաբեկչությունը, թալանը, սպանությունները եւ Լեռնային Ղարաբաղի հայության բռնատեղահանումը ստիպեցին ժողովրդական պատգամավորներին՝ ԼՂԻՄ մարզային խորհրդի գործկոմին՝ միջազգային կազմակերպությունների եւ արտասահմանյան պետությունների կառավարությունների առաջ հարց հարուցել ինքնավար մարզի ամբողջ հայ բնակչությանը քաղաքական ապաստան տալու մասին:

Դրա հետ մեկտեղ հետագա արյունահեղությունից խուսափելու նպատակով ժողովը հայտարարում է.

-ԼՂԻՄ-ը հավատարիմ է մնում սահմանադրական կարգուկանոնին եւ իր հետագա լիարյուն գոյությունը տեսնում է նորացված միութենական ֆեդերացիայի կազմում:

-Դիմում է ԽՍՀՄ իշխանության բարձրագույն մարմիններին անհապաղ միջամտել եւ ապահովել հայ բնակչության կյանքի, արժանապատվության եւ տարրական իրավունքների պաշտպանությունը:

-Արտակարգ դրության ռեժիմի իրականացումը անհրաժեշտ է ապահովել բացառիկորեն ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի կողմից:

16 մայիսի, 1991թ., ք.Ստեփանակերտ»

Քաղաքական ապաստան խնդրելը մտցվեց որպես շանտաժի ձեւ:

Նորընտիր եւ չճանաչված մարզխորհրդի նախագահ Լեոնարդ Պետրոսյանի միջոցով Պոլյանիչկոն առաջարկում է հանդիպում իր աշխատասենյակում: Ներկայանում են Ստեփանակերտի քաղգործկոմի

նախագահ Մաքսիմ Միրզոյանը եւ ԼՂԻՄ գլխավոր դատախազի Պլավսկու տեղակալ Ռոբերտ Հայրապետյանը:

-Դուք հասկանո՞ւմ եք, որ Ադրբեջանի ժողովրդի համբերությունը հատել է,- սպառնալիքով զրույցը սկսեց կազմկոմիտեի ղեկավարը, -չնայած, մենք ձեռնարկում ենք բոլոր միջոցները, որպեսզի ապահովենք Շուշիի եւ Հադրութի շրջանների հայ բնակչության ֆիզիկական անվտանգությունը: Այդ նպատակով ստիպված ենք նրանց ժամանակավոր տեղափոխել այլ բնակավայրեր: Այն էլ ասեմ, որ միշտ չէ հաջողվում հստակ կարգավորել ամբողջ իրադրությունը: Որոշ տեղերում կատարվել են բռնության դեպքեր եւ ընդգրկվել են համապատասխան ուժեր երեւան հանելու հակաօրինական գործողությունները խաղաղ բնակչության հանդեպ: Եթե ազնվորեն խոստովանենք, այդ գործում անհրաժեշտ է ձեր՝ ակտիվիստների օժանդակությունը Լեռնային Ղարաբաղում օրինականությունը եւ խաղաղությունը վերականգնելու համար:

-Իսկ ինչո՞ւ եք տեղափոխում Հայաստան,- խայթելով հարց տվեց Մաքսիմ Միրզոյանը:

-Այնտեղ ապահով է: Մենք Հայաստանի ղեկավարության հետ պայմանավորվածություն ենք ձեռք բերել ժամանակավոր տեղափոխված մարդկանց համար ստեղծվեն նորմալ սոցիալ-կենցաղային պայմաններ: Հենց որ իրադրությունը նորմալանա, նրանք կվերադառնան:

-Տեղափոխվա՞ծ...-Միրզոյանը հեգնանքով կրկնեց ասված բառը, եւ դա ստիպեց Պոլյանիչկոյին ցույց տալ իր իսկական դեմքը:

-Չէ՞որ ես ձեզ նախազգուշացրել եմ : Եվ ոչ միայն ես... Հայտարարել ենք, որ ձեր գործողությունները կբերեն անկանխատեսելի հետեւանքներ...

-Ընկեր Պոլյանիչկո, ձեր գործողությունները ժամանակավոր բնույթ չեն կրում: Դա Ադրբեջանի մեծ քաղաքականությունն է, որպեսզի վերջնականապես ազատվեն ղարաբաղցիներից: Մենք ձեզ այլեւս ասելիք չունենք,- գործկոմի նախագահը վճռական վեր կացավ:

-Սպասեք: Իսկ ի՞նչ կասի Հայրապետյանը:

-Վիկտոր Պետրովիչ, իրականում մենք տարբեր աղբյուրներից տեղեկություն ենք ստացել, որ կան բռնության, սպանության դեպքեր, եւ գտնում ենք, որ դուք պետք է ամեն միջոց ձեռնարկեք, որպեսզի նման գործողությունները անհապաղ կասեցվեն, իսկ դուք...

-Մենք աշխատում ենք այդ ուղղությամբ,- խուսանավեց Պոլյանիչկոն,- մեղավորները կպատժվեն: Բայց դուք էլ չպետք է ձեռքներդ ծալած նստեք: Պետք է համապատասխան աշխատանք տանեք բնակչության հետ:

Մաքսիմ Միրզոյանը հասկանում է, թե Պոլյանիչկոն ինչ է ակնարկում, խոսակցությունը ինչ ուղղությամբ է փորձում տանել:

-Դուք համապատասխան աշխատանք արդեն տարել եք, եւ ձեր ներկայացուցիչները տեղերում դիմում են վերցնում բնակչությունից, որ նրանք բնակավայրերը լքում են կամավոր, եւ իբր նրանք խնդրում են ապահովել տեղափոխումը: Այդպես է եղել Ազատ եւ Կամո գյուղերում, Գետաշենում եւ Մարտունաշենում: Դա, կրկնում եմ, մեծ քաղաքականություն է, Վիկտոր Պետրովիչ... Շնորհակալություն: Ցտեսություն: -Միրզոյանը չէր կարող բացահայտ չհակադրվել...

Մոսկվայում Ռուսաստանի Գերագույն խորհրդի մարդու իրավունքների կոմիտեն ՌՍՖՍՀ ԳԽ նստաշրջանի հանձնարարությամբ մայիսի 18-ին եւ հունիսի 25-ին անց է կացնում խորհրդարանական լսումներ Հայաստանի եւ Ադրբեջանի մի շարք շրջաններում զինված հակամարտության առնչությամբ:

Սերգեյ Ադամովիչ Կովալյով, մարդու իրավունքների կոմիտեի նախագահ.- Հարգելի հյուրեր, կոմիտեի անդամներ, մասնակիցներ, հասկանալի է, որ մեզ ամենից առաջ հետաքրքրում է հակամարտության շրջանում մարդու իրավունքի պաշտպանության հարցը: Խնդրում ենք բացառել հուզական գնահատականները: Անթույլատրելի է շշուկների, տեղեկատվության չստուգված աղբյուրների վրա հիմնվելը: Մենք նաեւ դատարան չենք, այլ ուսումնասիրում ենք հակամարտությանն առնչվող հանգամանքները կապված առաջին. հարկադիր բռնատեղահանման եւ քաղաքացիներին պատանդ վերցնելու հետ: Երկրորդ. թե արդյոք եղել են հանցագործությունների նշաններ պարունակող գործողություններ: Արդյոք կիրառվել են խոշտանգումներ: Եվ երրորդ. ԽՍՀՄ զինված ուժերի եւ ԽՍՀՄ ներքին զորքերի դերը Ադրբեջանի զինված կազմավորումների հետ եւ այդ հակամարտության մեջ:

Ֆելիքս Մամիկոնյան, Հայաստանի նախարարների խորհրդի մշտական ներկայացուցիչ Մոսկվայում.- Այո, Գետաշենում եղել են զինված հայեր: Բայց ես կարող եմ բացատրել, թե զինված հայերը ինչ առնչություն ունեն դրա հետ: Ես կրկնում եմ, այն, ինչ կատարվեց Սումգայիթում, Բաքվում եւ այլ վայրերում, որտեղ հայերը ենթարկվեցին բռնության եւ ոչ մի պաշտպանություն չգտան իշխանությունների կողմից, դրանից հետո շատ հայկական գյուղերի բնակիչներ սկսեցին զինվել: Մինչ այդ նման բաներ չեն եղել: Քանի որ նրանց կյանքին վտանգ է սպառնում, նրանք զինվել են, որը որսորդական հրացանով, որը փորձել է ավտոմատ գտնել: Այո, նման դեպքեր եղել են: Մենք սա անվանում ենք ինքնապաշտպանություն: Նման երեւույթներ ընթանում են շատ երկրներում, երբ կանոնավոր զորքերը կամ ինչ որ մարմիններ ուզում են դուրս մղել մարդկանց այն վայրից, ուր ապրում են: Քանի որ շատ է պատահել, որ հայերը հնազանդ սպասել են մինչեւ կգան, բոլորին կսպանեն, կկոտորեն, իսկ հետո մամուլը մի քանի կարեկցանքի ու խղճահարության բառեր կգրի այդ առթիվ, որը ոչ մի բանի չի հանգեցնի: Բնական է, որ հայկական կողմը ինքը պետք է հոգ տանի իր պաշտպանության մասին:

Ս.Ա.Կովալյով.- Շնորհակալություն: Մենք մեր համաձայնությունը կամ անհամաձայնությունը չենք հայտնում ասված տեսակետի առթիվ: Ես միայն ուզում եմ ասել, որ այն արդեն արտահայտվել է:

Դահլիճից.- Մեկ հարց, կցանկանայինք պարզել, հենց նոր, ձեր պատասխանի մեջ ասացիք, որ ինքնապաշտպանության համար մեկը ձեռք է բերել որսորդական հրացան, մեկ ուրիշը փորձել է ավտոմատ ձեռք բերել: Դուք ի՞նչ եք ենթադրում վերջին արտահայտության տակ եւ ինչպե՞ս է իրականացվում այդ ինքնապաշտպանությունը: Տարբերակները:

Մամիկոնյան.- Ես նման փաստեր չունեմ: Բայց քանի որ այդ գյուղերը անցած տարվա աշնանից գտնվել են պաշարման մեջ եւ չեն ստացել մթերքներ, դեղորայք, անջատված է եղել էլեկտրականությունը, հայկական կողմը փորձել է նրանց հասցնել մթերք, դեղորայք...

Շուստով, պատգամավոր.- Դուք սպրդեցի՞ք, թե մտածված ասացիք, որ ուղղաթիռներով ուղարկում եք մթերք, դեղորայք, զենք:

Մամիկոնյան.- Ոչ: Ես ասացի՝ մթերք, դեղորայք, բայց, գիտե՞ք, երբ շատ է խոսվում զենքի մասին, ձեզ մոտ, ձեր գլխում մնում է միայն «զենք» բառը:

Զաուր Ռուստամ-զադե, Մոսկվայում Ադրբեջանի մշտական ներկայացուցչի տեղակալ. -Տարիներով մենք սպասել ենք զինաթափման մասին Գորբաչովի հրամանագրին, եւ վերջապես այն հրապարակվեց, բայց, ցավոք, բացարձակապես չիրագործվեց: Բնական է, եթե հակամարտության իրադրության մեջ զրոհայինների զինաթափում է կատարվում, բնականաբար, դա չի կարող տեղի ունենալ քաղաքավարի ձեւով. ասենք թե՝ բարի եղեք հանձնել ձեր նռնակը կամ գնդացիրը:

Կլիգման, Ռուսաստանի Գերագույն խորհրդի մարդու իրավունքների կոմիտեի հատուկ լիազոր, իրավաբան.- Խնդրեմ, առանց հեգնանքի:

Ձայն դահլիճից.

Սա խորհրդարանական լսում է եւ ոչ թե հանրահավաք...

Զաուր Ռուստամ-զադե.- Հայ լիդերների կողմից այժմ հայտարարություն կա, որ պատրաստ են նստել սեղանի շուրջ բանակցությունների, բայց այդ ուղղությամբ կոնկրետ ոչինչ չի կատարվում: Հայաստանը, առանց Ադրբեջանի, որոշում է կայացրել, որ Լեռնային Ղարաբաղը իր անբաժանելի մասն է: Դա հակասահմանադրական է: Այնուամենայնիվ հարկավոր է որոշումը բեկանվի, եւ հետո միայն կարելի է խոսել այն մասին, թե ինչպես կարգավորել իրադրությունը:

Ս.Կովալյով.- Շնորհակալություն: Բայց ձեր թվարկած անարդարությունները արդարացո՞ւմն են այն մեթոդների, որ կիրառվում են: Եթե որեւէ մեկը սպանվում է, դա մեր բոլորի եւ յուրաքանչյուրի դժբախտությունն է, անկախ ազգային պատկանելությունից, պետք է պաշտպանվի: Ես ստիպված եմ հիշեցնել, որ մարդու իրավունքը այս կամ այն երկրի ներքին խնդիրը չէ: Գոյություն ունեն միջազգային նորմեր, իմիջայլոց համընդհանուր ճանաչում գտած: Դուք այս տեսակետին համաձա՞յն եք, թե ոչ:

-Ես համաձայն եմ, որ մարդու իրավունքը...-եւ Ռուստամ-զադեն ինչ որ անհասկանալի բառեր է ծամծմում: -Ամենից առաջ ես չեմ հաշվում, որ կատարվածը բռնատեղահանում է: Դա նշանակում է մարդկանց բռնի քշել իրենց տարածքներից: Ինչպես մենք տեղեկություն ենք ստացել, այդ գյուղերի բնակիչները իրենք են ցանկություն հայտնել դուրս գալ այնտեղից, քանի որ տեռորի են ենթարկվել մի կողմից հայ գրոհայիններից, մյուս կողմից 4 տարի է չեն կարողանում հանգիստ ապրել:

Ա.Վ. Կլիգման, Ռուսաստանի Գերագույն խորհրդի մարդու իրավունքների կոմիտեի հատուկ լիազոր. -Ասացեք, խնդրեմ, ո՞ւմ կողմից է անցկացվել անձնագրային ռեժիմի ստուգումը մայիսի 12-ից սկսած:

Ալեքսեյ Վլադիմիրովիչ Պոլոզով, ԼՂԻՄ եւ նրան հարակից շրջանների արտակարգ դրության զինվորական պարետության ռազմաքաղաքական բաժնի պետ, գնդապետ. - ԽՍՀՄ ներքին զորամասերի կողմից Ադրբեջանի իրավապահ մարմինների զորաբաժանումների օժանդակությամբ:

Կլիգման. -Պարետատունը ունի՞ տեղեկություն այն մասին, որ կատարվել է բռնություն, ունեցվածքի խլում, սպանություն:

Պոլոզով. - Պատասխանում եմ: Անձնագրային ռեժիմի ստուգման ժամանակաընթացքում ջարդեր, բռնություններ չեն եղել: Դրանք եղել են ստուգումից հետո...

Կլիգման.- Բայց եղե՞լ են:

Պոլոզով.- Ես հիմա կասեմ: Մեզ մոտ կան միայն հեռագրեր տարբեր մակարդակների, սկսած երկրի պրեզիդենտից վերջացրած մեր շրջանի պարետատնից պահանջով՝ վերլուծել պարզել եւ տալ իրավաբանական գնահատական: Բոլոր փաստերը, որ մեզ հայտնի են դարձել այդ հեռագրերից, մենք ուղարկել ենք, համապատասխանաբար ընկեր Պլավսկուն, եւ եթե մենք գտել ենք՝ պետք է՝ հանրապետության դատախազություն, որի օպերատիվ քննչական խումբը զբաղվում է այդ գործերով:

Կլիգման.- Ձեզ մոտ ընդհանրապես ոչ մի տեղեկություն չկա՞:

Պոլոզով.-Քննություն կատարելը չի մտնում ներքին զորքերի իրավասության մեջ:

Կլիգման.-Մեզ հետաքրքրում է քաղաքացիական բնակչության ճակատագիրը: Մենք այժմ որոշակի գիտենք, որ մեծ քանակությամբ մարդիկ, քաղաքացիական բնակչություն, ոչ թե գրոհայիններ, որ ռումբեր կամ այլ բաներ են պատրաստում, մեկնել են այն տարածքներից, որտեղ նրանք մշտապես ապրում են: Ո՞վ պետք է ապահովեր նրանց անվտանգությունը. միլիցիա՞ն, դատախազությո՞ւնը, ՊԱ՞Կ-ը, զինվորնե՞րը: Ո՞վ պետք է պատասխան տա: Ո՞վ պետք է վերահսկի իրադրությունը:

Պոլոզով.-Այս տարիներին, անկասկած, փաստաթղթերի համաձայն, տարածքում հասարակական կարգի, օրինականության համար պատասխան է տալիս պարետությունը: Մասնավորապես, ի նկատի ունեմ քաղաքացիների մեկնումը: Չայքենդի իրադարձություններից հետո ԼՂԻՄ-ի խորհրդային մարմինները մեզնից օգնություն են խնդրել եւ Ստեփանակերտ ենք հասցրել 1400 կին եւ երեխա: Եղել է նաեւ այսպիսի դեպք Շուշիի շրջանում, երբ մեզ դիմել են մարզի ղեկավարները ուղղաթիռ տրամադրելու այնտեղից հղի կնոջ դուրս բերման համար, մենք ապահովել ենք նրանց անվտանգությունը: Ինչ վերաբերում է շաթասյանը, Հադրութի շրջանում ուղեկցել է Ադրբեջանի միլիցիան, Շուշիի շրջանում խորհրդային բանակը:

Ն.Մ. Արժաննիկով, մարդու իրավունքների կոմիտեի նախագահի տեղակալ.-Պատասխանը ինձ չի բավարարում, որովհետեւ հասարակական կարգի պահպանում հասկացության տակ ես պատկերացնում եմ անվտանգության ապահովում: Մինչդեռ նրանք ապահովում են կարգուկանոնը, որպեսզի նրանց դուրս բերեն: Բայց հարկավոր է, որ այնտեղ, որտեղ մարդիկ ապրում են, ի նկատի ունեմ քաղաքացիական բնակչությանը, նրանց ոչ ոք չնեղացնի:

Կովալյով.-Դուք ասացիք, որ ներքին զորքերի զորամասերը բռնատեղահանմանը չեն մասնակցել, իսկ արգելք հանդիսացե՞լ են:

Պոլոզով.-Անդրադառնանք օրենքին:

Կովալյով (ակնոցների տակից կապույտ աչքերը ձգտում են ցույց չտալ ոչ համակրանք, ոչ հակակրանք արտահայտված դիրքորոշումների նկատմամբ).- Օրինավո՞ր է, որ մարդկանց ապրելու վայրից քշում են:

Պոլոզով.-Հայտարարում եմ պրեզիդենտի, Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը արտակարգ դրության մասին, երկրորդ կետը, որտեղ ասված է ժամանակավորապես արտաբնակեցնել քաղաքացիներին...Դրա համար այդ խնդիրը լուծելիս, որի մասին դուք հիմա խոսում եք, Ադրբեջանի կառավարությունը եւ ԼՂԻՄ-ում գործող կառավարման մարմինները (կազմկոմիտեն), հենվել են օրենքի վրա: Տեղում կառավարման մարմինների մասնավորապես Ադրբեջանի ղեկավարության, գործունեության մեջ խառնվելու, միջամտելու իրավունք մենք չունենք: Օրենքի համաձայն:

Կովալյով.- Շնորհակալություն: Պարզ է: Հաջորդ հարցը. կարո՞ղ է պատահել, որ պարետությունը չիմանա տարածքում անցկացվող գործողության մասին: Ո՞ւմ որոշումն էր, դուք երբ եք այդ մասին իմացել:

Պոլոզով.- Մենք բնակչության տեղահանման հարցերով չենք զբաղվում: Եթե դուք ուզում եք իմանալ իմ, որպես մարդու, անձնական կարծիքը, ինձ համար անընդունելի են բոլոր ձեւերն ու միջոցները, որով լուծում են հիմնահարցը Լեռնային Ղարաբաղում: Դա իմ մարդկային դիրքորոշումն է: Ես հարցի խաղաղ լուծման կողմնակից եմ: Հարցի երրորդ մասը ով է համաձայնեցրել պարետության հետ այդ հարցերը, նորից եմ կրկնում, համաձայնեցնել պետք չէ: Դրանք որոշված են օրենքով, եւ Ադրբեջանը ղեկավարվում է օրենքով: Ուրիշ հարց է, նրանք ինչպես են դա իրականացնում: Կա դատախազություն, կան այլ մարմիններ, որոնք կարող են պարզություն մտցնել:

Կովալյով.- Առանց համապատասխան որոշման, նույնիսկ օրենքը հիմք ընդունելով, բնակիչների տեղափոխում հնարավոր չէ իրականացնել: Պատկերացրեք, ձեզ հայտնի է, որ ինչ-որ մեկը մարդկանց ավտոբուս է նստեցնում եւ տանում: Դուք որտեղի՞ց գիտեք, օրենքի վրա հիմնվելո՞վ են տանում, թե՞ տանում են անտառում գնդակահարելու կամ լճում խեղդելու: Չէ՞որ դուք պարտավոր եք հսկել կարգը: Պարտավոր եք հետաքրքրվել, թե ինչ է կատարվում: Հարցնում եմ ում որոշումն է: Ձեր մարդկային դիրքորոշումը գրավիչ է, բայց ինձ բոլորովին անհասկանալի է Ձեր պաշտոնական դիրքորոշումը:

Պոլոզով.-Պարետությանը չեն տեղեկացրել, որ այդ բնակավայրերից ժողովուրդը տեղահանվելու է:

Հարց դահլիճից.- Դուք գտնվում եք հակամարտության հենց կենտրոնում: Ի՞նչ եք կարծում, ինչքան կշարունակվի եւ ինչ է հարկավոր անել կրակը շուտափույթ դադարեցնելու համար:

Պոլոզով.- Երկու կողմերն էլ բանակցությունների համար այսօր հասունացել են, հատկապես այն բանից հետո, ինչ կատարվել է մայիս ամսին: Դրա համար Լեռնային Ղարաբաղի շրջաններում ստեղծվել են համաձայնողական հանձնաժողովներ: Այդ տարածքը իսկապես Ադրբեջանինն է եւ ոչ թե Հայաստանինը:

Կովալյով.-Խնդրեմ, եկեք քաղաքական կանխագուշակություններ չարքենք:

Ն.Մ. Արժաննիկով.- Մեր ցուցակում գրանցված են 4 լրագրող, որոնք իրադարձությունների անմիջական ականատեսն են եղել, Եմելյանենկո Վլադիմիր, Պոպկով Վիկտոր, Շտետին Յարոմիր, Մազալովա Դանա: Վիկտոր Պոպկով, խնդրում եմ բարձրանալ ճառաբեմ եւ ձեզ 5 րոպե ժամանակ:

Պոպկով.-Ես այդ տարածքում որպես «Գլասնոստ» շաբաթաթերթի հատուկ թղթակից եղել եմ մայիսի 8-ից մինչեւ հունիսի սկիզբը: ... Այստեղ շատ հուզական պատմեցին այն մասին, թե ինչպես են մասնակցել մարդկանց Գետաշենից հանելու, եւ որ իրենք ամաչում են եւ այլ նման բաներ: Այնտեղ, Գետաշենի հիվանդանոցում պատճենել եմ բժշկական փաստաթղթեր, ես դրանք կներկայացնեմ: Ունեմ ձայնագրությունը վիրավոր մի մարդու, որ Հայաստանից եկել էր իր գյուղը պաշտպանելու: Նիշտ է, նրանք զինված են եղել ավտոմատով, որսորդական հրացանով, բայց, ինչպես ինքն է ասում, նրանց նպատակը եղել է վերահսկել իրադրությունը, պաշտպանել բնակչությանը... Իսկ ինչ վերաբերում է Ղադրութի եւ Շուշիի շրջաններից փախստականներին, կասեմ հետեւյալը, եւ սա շատ կարեւոր պահ է. ես Բերդաձորի փախստականների հետ զրուցել եմ ադրբեջանականից հայկական տարածք հանձնելու ժամանակ: Օմօնականները ավտոմատներով կանգնած էին մեր կողքին եւ զրույցի ժամանակ մոտեցել էին մեզ: Նրանք բացեիբաց, անկեղծորեն պատմում էին իրենց գլխով անցածը, եւ ես նրանց համար անհանգստանում էի, վախենում էի, որ նրանց համար զրույցը վատ վերջ չունենալու, ավտոմատների փողի տակ ... Դա շատ տպավորիչ էր...

Յուրի Սամոդուրով, Սախարովի հիշատակին նվիրված համաժողովի կազմկոմիտեի գործադիր տնօրեն.- Մեր խմբի հաշվետվությունը, առաջարկները հրապարակվել են մամուլում, բայց ես կասեմ այն մասին, ինչ չի հրապարակվել. Բաքվում մենք չորսժամյա զրույց ունեցանք պրեզիդենտ Մութալիբովի հետ, որին մասնակցում էր Դաշտամիրովը. Հանդիպման ժամանակ պարզ դարձավ, որ այդ ղեկավարները

արդարացնում են հայերի բռնատեղահանումը Լեռնային Ղարաբաղից: Դա քաղաքական լուծում է, եւ նրանք ասացին, որ դա անում են նպատակով. ստիպել Հայաստանի ղեկավարությանը փոխելու Գերագույն խորհրդի որոշումը, որի համաձայն Հայաստանը իր կազմի մեջ պիտի միավորի ԼՂԻՄ-ը: Երկրորդ նպատակը. տարածքը մաքրել բազանեռից, որ օգտագործում են հայ գրոհայինները: Կարեւոր է նաեւ, որ ոչ Դաշտամիրովը, ոչ Ադրբեջանի ՆԳՆ ծառայության ղեկավարները չեն ժխտել բռնության, խոշտանգման, թալանի փաստերը: Մի քանի անգամ Դաշտամիրովը եւ Մութալիբովը իրենց խոսքում գործածել են արտահայտությունը. որ քաղաքականությունը ճերմակ ձեռնոցներով չի իրագործվում: Փաստորեն, եւ Մութալիբովը, եւ Դաշտամիրովը չեն ժխտում այդ գործողությունների անցկացումը առաջիկայում:

Մոսկվայում «Խաղաղություն, առաջընթաց, մարդու իրավունք» նշանաբանով անցկացվող Սախարովի հիշատակին նվիրված միջազգային առաջին համաժողովի փորձագետների մի խումբ, որ 1991-ի մայիսի 25-29-ը այցելել է հակամարտության տարածաշրջան, Ռուսաստանի մարդու իրավունքների կոմիտեին ներկայացրել այցելության արդյունքները, եզրակացությունները եւ առաջարկները:

Ստեփանակերտի քաղգործկոմի նախագահի աշխատասենյակում Լեռնային Ղարաբաղի Կոորդինացիոն խորհուրդը քննարկում է ստեղծված իրավիճակը: Ներկա են նաեւ Շնավոն Պետրոսյանը, Գեորգի Պետրոսյանը, Լեւոն Մելիք-Շահնազարյանը, Կարեն Բաբուրյանը: Որոշում են պատվիրակություն ուղարկել Մոսկվա, Երկրի ղեկավարներին ներկայացնելու ստեղծված ռեալ իրավիճակը եւ դնելու Ղարաբաղի հետագա ճակատագրի հարցը: Լեռնարդ Պետրոսյանի հետ խորհրդակցելով Մաքսիմ Միրզոյանը գեներալ Ստարիկովին խնդրում է, որ վերջինս ապահովի պատվիրակության Ղարաբաղից դուրս գալը, քանի որ շրջափակումը լիակատար էր, դրսի աշխարհի հետ ոչ մի կապ չկար, օմօնը գրավել էր օդանավակայանը, Սարուշենի եւ Կարմիր գյուղերի միջեւ հարթավայրում գինվորական ուղղաթիռը սպասում է, եւ պատվիրակությունը մայիսի 23-ին երեւանից թռչում է Մոսկվա:

Մոկվայում առաջին հանդիպումը Հենրիխ Պողոսյանի հետ էր, որը Լեռնային Ղարաբաղից ԽՍՀՄ պատգամավոր էր, եւ կազմում են ծրագիր, թե ինչպես պիտի հանդիպեն երկրի բարձրագույն իշխանության՝ թե քաղաքական, թե ուժային կառույցների ղեկավարների հետ:

Երկրի նախագահը խոստանում է հանդիպել, բայց տարբեր պատճառաբանություններով հետաձգվում է: Գրեթե մեկ ամիս հետո հունիսի 29-ին Գորբաչովի փոխարեն ընդունում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Լուկյանովը:

Շնավոն Պետրոսյանը, որպես խմբում ամենատարեցը, առաջինը խոսեց եւ ներկայացրեց իրավիճակը: Լուկյանովը իբր ուշադիր լսում եւ գրառումներ էր անում: Նրա հայացքը սահում էր ներկաների դեմքերի վրայով դատարկ ու անորոշ:

-Հիմնախնդիրը բարդ է, բայց մենք տեղյակ ենք...

Պետրոսյանը տաքացած խոսում է Սումգայիթի, Բաքվի հայկական ցարդերի մասին:

-Դուք քրիստոնեական կղզի եք, եւ մենք թույլ չենք տա, որ ձեզ ցավ պատճառեն... - Լուկյանովի բառերը արտաբերվում են սառը, անզգացմունք, անարտահայտիչ, դեմքը՝ եգիպտական մումիա, ոչ մի մկան չի շարժվում:

Կարեն Բաբուրյանը պահը որսաց եւ փորձեց զրույցը իրավական հուն փոխադրել.

-Ես դիմում եմ ձեզ որպես Սովետների երկրի ամենաբարձր պաշտոնյային, պետական մարդուն: Լեռնային Ղարաբաղում մարզխորհուրդը վերացված է՝ որքանո՞վ է սահմանադրական,-Բաբուրյանը կարդում է, թե նեղը գցեց:

-Ժողովրդավարության գործընթացը երկրում ծանր է ընթանում, շատերն են դիմադրում, բայց հավատացեք պերեստրոյկային...

Այդ պահին մի քիչ հեռու դրված սեղանին հեռախոսը զնգաց: Լուկյանովը վերցրեց ընկալուչը.

-Լսում եմ, Միխայիլ Սերգեեւիչ: Այո: Այո: Ինձ մոտ են...

Պատվիրակության անդամները բազմանշանակ իրար նայեցին:

-Ես քո... մերն էլ, նրա մերն էլ... -Մաքսիմը դարաբաղյան բարբառով նսլիոյանքներ մռլտաց:

-Սուս, այ տղա, ձենդ,-տագնապած սաստեց Պետրոսյանը: Իսկ Միրզոյանն արդեն խակ տանձ կծածի տեսք ընդունած՝ նստել էր անկախ ու անտարբեր:

-Մեզ համար հատուկ կարեւորություն է ներկայացնում Լեռնային Ղարաբաղը, այդ քրիստոնյա կղզին- Լուկյանովը տեղը նստելով՝ զրույցի սկզբում ասած միտքը կրկնեց:

Բաբուրյանը մտքում արագ վերլուծեց. տես է՞, աղվեսը «մուսուլմանական» բառը չօգտագործեց, խուսափեց...

-Մենք ձեզ հասկանում ենք, բայց ... -Լուկյանովը մի պահ դադար

տվեց: - Մենք ձեզ զգուշացրել ենք հետեւանքների մասին: Որ եթե չընդունեք Ադրբեջանի պայմանները, օրերից մի օր Ղարաբաղից դուրս կգա վերջին հայը:

Միրզոյան.-Ադրբեջանը այդ հնարավորությունը չունի, ի վիճակի չէ Ղարաբաղի հարցը լուծել: Տեղահանելու գործողությունը կատարվում է ԽՍՀՄ ներքին զորամասերի, խորհրդային բանակի միջոցով:

-Մեր նպատակը տարածաշրջանում խաղաղության հաստատումն է: Լուկյանովը փորձում է ժխտել ներքին զորամասերի եւ բանակի մասնակցությունը:

Միրզոյան.-Ներքին զորամասերը եւ բանակը ապահովում են պայմաններ, որպեսզի Ադրբեջանի օմօնը գործի սանձարձակ..

Պատվիրակությունը զգաց, հասկացավ, որ իզուր ջուր ծեծել է եւ խնդրեցին հանդիպում Գորբաչովի հետ: Լուկյանովը խոստացավ միջնորդել, որ Երկրի նախագահը ընդունի, եւ վերջին խոսքը եղավ այս.

-Այնուամենայնիվ, Ղարաբաղը պետք է լեզու գտնի Ադրբեջանի հետ:

Նույն օրը պատվիրակության 6 անդամները Յանաեւի մոտ են:

-Հադրութի շրջանի 14, Շուշիի շրջանի 4 գյուղեր հայաթափվել են, եւ այդ ռազմագործողության ժամանակ տեղի են ունեցել բռնություններ, խոշտանգումներ, հափշտակություններ... Առաքել գյուղը գերեզմանոցի հետ միասին հողին է հավասարեցվել...Պայթեցրել են Սուրբ Մարիամ եկեղեցին: Մարդկանց լցրել են պատրաստ կանգնած մեքենաները, առանց ունեցվածքի տարել թափել Հայաստանի սահմանում,- պատվիրակությունը փորձում է Երկրի բարձրագույն ղեկավարությանը հասցնել, որ «Կոլցո» ռազմագործողությունը ծրագրված ու մշակված քաղաքականություն է:

Յանաեւը խիստ տարբերվում էր Սովետների նախագահից: Արտաքինից ուտող-խմող մարդու տպավորություն էր թողնում:

Յանաեւ, ԽՍՀՄ նախագահի տեղակալ .- Մենք ունենք որոշ տեղեկություններ, մշակել ենք միջոցառումներ, որով կկարգավորվի իրավիճակը: Դուք իզուր եք կարծում, մենք բավականին մտահոգված ենք ու կարծում ենք, որ մեր ձեռնարկումները արդյունք կտան: Պետությունը նոր է մտել ժողովրդավարության ուղին, իրավիճակը պահանջում է պետական միջամտություն, իրադրության նորմալացում:

Պատվիրակության անդամները այստեղ ասված ընդհանուր դատողություններից չկարողացան որոշակի եզրահանգումներ անել բացի նրանից, որ փոխնախագահը անվճռական, թույլ եւ անողնաշար մարդ է: Նույն օրը ՊԱԿ-ի նախագահ Կրյուչկովի աշխատասենյակում են:

Կրյուչկով.- Դե ի՞նչ, իմ հարազատներ, դուք իրավիճակը տանում եք դեպի հիմնախնդրի անլուծելիություն: -Զրույցի սկզբում Կրյուչկովը ընտրում էր մեղմ արտահայտություններ: «Իսկական չեկիստ է», - անցավ Բաբուրյանի մտքով: - Մենք ուշադիր հետեւում ենք գործողությունների զարգացման ընթացքին եւ գտնում ենք, որ երկու կողմերդ էլ թույլ եք տվել բավականաչափ հիմարություններ: -ՊԱԿ-ի ղեկավարի առաջին խոսքը բավականին անկեղծ էր:

Հենրիխ Պողոսյան.- Մենք ունենք տեղեկություն, որ ուժային կառույցներում կան ղեկավարներ, որոնք նախօրոք կաշառվել են Ադրբեջանի ղեկավարության կողմից, եւ դա կազմակերպվում է Հեյդար Ալիեւի միջոցով:

Կրյուչկով.- Ձեր տեղեկությունները անհիմն են...

Մաքսիմ Միրզոյան.- Ներեցեք, ընկեր Կրյուչկով, բաց արեք-նայեք «Օկտյաբր» հանդեսը: Եթե Գեորգաձեի տանը հայտնաբերել են 4 դույլ ադամանդներ, դրանք հո Տուլայի մարզի՞ց չեն հայտնվել անյտեղ, այլ Ադրբեջանից կամ Միջին Ասիայից... Դա ձեզ ավելի է հայտնի, քան որեւէ մեկին, եւ դուք նույնպես քաջ տեղեկացված եք, եւ փաստորեն չթաքցրիք, թե այսօր ինչ է կատարվում Ղարաբաղում: Այդ ամենը առանց Մոսկվայի ղեկավարության հնարավոր չէ, որ կատարվի:

Կրյուչկով.- Իհարկե, կան ուժեր, որոնք ակտիվորեն խանգարում են վերակառուցման գործընթացին: Մենք մեկ անգամ չէ, որ զեկուցել ենք Երկրի բարձրագույն իշխանությանը, եւ տառացիորեն օրերս Գորբաչովի հետ նախատեսված է միջոցներ ձեռնարկել կայունացնելու իրադրությունը Լեռնային Ղարաբաղում եւ հետեւապես բոլոր հանցագործ տարրերին, թե մեկ, թե մյուս կողմից կմեկուսացվեն:

Կարեն Բաբուրյան.- Այսինքն, ուժային կառույցները կշարունակեն իրենց բռնած գիծը՞...Մենք ճի՞շտ հասկացանք ձեզ...

Կրյուչկովը չի պատասխանում հարցին եւ շարունակում է իր միտքը.

-Կարծում եմ, դուք իմաստնություն եւ ողջախոհություն կցուցաբերեք, ձեզնից շատ բան է կախված, որպեսզի իրադրությունն արմատական փոփոխություն կրի՝ դեպի կայունացում, դեպի նորմալացում:

Այստեղ եւս հանդիպումն ավարտված էր, եւ պատվիրակության անդամներն այլեւս կասկած չունեին, որ ամեն ինչ կատարվում է Երկրի բարձրագույն իշխանության տեղյակությամբ ու հովանավորությամբ:

Հուլիսի 12-ին պատվիրակության անդամներից Մաքսիմ Միրզոյանը, Կարեն Բաբուրյանը, Լեւոն Մելիք-Շահնազարյանը, այդ օրերին Մոսկվայում գտնվող շահումյանցի Շահեն Մեղրյանը, ԽՍՀՄ պաշտ-

պանության նախարար Դմիտրի Տիմոֆեեւիչ Յազովի աշխատասենյակում են:

Մաքսիմ Միրզոյան.- Դմիտրի Տիմոֆեեւիչ, ինչպե՞ս հասկանալ իրադրությունը, երբ սովետական ինքնաթիռները ռմբակոծում են սովետական գյուղերը: Ինչպե՞ս հասկանալ, երբ սովետական հրետանին հրետակոծում է սովետական գյուղերը: Ինչպե՞ս հասկանալ, որ սովետական տանկերը գրոհում են սովետական գյուղերի վրա, երբ սովետական զինվորները եւ սպաները ոչնչացնում եւ քշում են սովետական մարդկանց իրենց գյուղերից: Եվ այդ բոլոր գյուղերը հայկական են:

-Ի՞նչ եք ասում: Դա հնարավոր չէ: Դա ոչ հավաստի, ոչ ստույգ տեղեկություն է: - Յազովը առաջին պահ կարծես թե հանկարծակի է գալիս Միրզոյանի հռետորական ու զգացմունքային ելույթից:

Միրզոյան.- Ձեր աշխատասենյակում հեռախոսները շատ են, հնարավորություն կա եւ եթե թույլ կտաք, մենք անմիջականորեն կկապվենք իրադարձությունների վայրի հետ, եւ դուք կստանաք հավաստի տեղեկություններ հենց առաջին ձեռքից:

Յազովը համաձայնվում է: Մաքսիմ Միրզոյանը զանգում է Երեւան, որտեղից ռադիոկապ կար Շահումյանի հետ, եւ որտեղ այդ օրերին գտնվում էր ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, Սովետական Միության հերոս, գնդապետ Սմիռնովը, որի հետ եւ խոսում է.

Միրզոյան.- Ընկեր Սմիռնով, դուք հիմա խոսելու եք պաշտպանության նախարար, Սովետական Միության մարշալ Դմիտրի Տիմոֆեեւիչ Յազովի հետ:

Լսվում է Սմիռնովի ձայնը.

-Ողջույն, ընկեր մարշալ Սովետական Միության:

-Զեկուցեք իրադրությունը:

Սմիռնովը զեկուցում է այն, ինչ արդեն ասված էր:

Յազովը դնում է ընկալուչը, վերցնում ուրիշ ընկալուչ եւ հրամայական տոնով ասում հետեւյալը.

-Ընկեր գեներալ, դադարեցնել - կանգնեցնել հայերի բռնատեղահանումը... մինչեւ Միխայիլ Սերգեեւիչի Լոնդոնից վերադառնալը...

Ենթադրությունները ավելորդ էին... Ուրեմն, Գորբաչովի հրամանն էր:

Հաստատվեց, որ այս ամբողջը կատարվում էր Երկրի բարձրագույն իշխանության մակարդակով եւ հրամանով: Ամեն ինչ պարզ էր:

Յազով.- Իսկ դուք ի՞նչ կարող եք առաջարկել:

Յուրաքանչյուրը ներկայացնում է իր տեսակետը, որը ընդհանրացված հանգում է հետեւյալին. եթե, իրոք, Մոսկվան խաղաղություն է

ուզում հաստատել, ապա Ղարաբաղից պիտի հանվեն ԽՍՀՄ ներքին զորամասերը, Ադրբեջանի օմօնը, Խոջալլուում իջեցնել ռազմաօդային-դեսանտային դիվիզիա, հսկողության տակ առնել իրադրությունը: Հետո հաշվի առնելով Ղարաբաղի աշխարհագրական-քաղաքական դիրքը, այդ դիվիզիան պետք է մշտապես տեղակայվի տարածքում, եւ այն կարեւոր դեր կխաղա Սովետական Միության հարավային սահմանների անվտանգության ապահովման գործում:

-Լավ առաջարկ է: Մենք դրա շուրջ կմտածենք: Արդեն իմ հրամանը կա, կարող եք հանգիստ լինել, իսկ Միխայիլ Սերգեեւիչի վերադարձի հետ, ես կարծում եմ, վերջակետ կդրվի այն ամենին, ինչ կատարվում է եւ Ղարաբաղի հողում խաղաղություն կհաստատվի...

Հանդիպումն ավարտված էր:

Քանի որ մայիսի 18-ի եւ հունիսի 25-ի խորհրդարանական ունկնդրումներին Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները շրջափակման եւ ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրավիճակի պատճառով չէին կարողացել ներկայանալ, Մաքսիմ Միրզոյանին եւ Լեւոն Մելիք-Շահնազարյանին Մոսկվայում Ռուսաստանի Դաշնության Գերագույն խորհրդի շենքում, մարդու իրավունքների հանձնաժողովում, հուլիսի 2-ին ընդունում է Սերգեյ Ադամովիչ Կովալյովը: Կիսաշրջանաձեւ սեղանի շուրջ նստած են նախագահը, գլխավոր քննողը՝ մարդու իրավունքների կոմիտեի հատուկ լիազոր, իրավաբան Ա.Կլիգմանը, Ռուսաստանի Դաշնության Գերագույն խորհրդի մարդու իրավունքների կոմիտեի սեկտորի առաջատար մասնագետ Օլեգ Պետրովիչ Օռլովը:

Առաջինը խոսեց Կովալյովը: Համակրելի արտաքինով, դեմքով մի բիչ չորուկ, մարդ է: Խոսում է հստակ, հարցադրումները՝ որոշակի, խոսքն առանց արտաքին հույզերի է:

-Ունկնդրումներ են տեղի ունեցել մարդու իրավունքների կոմիտեում, որոնց ժամանակ ուսումնասիրվեցին Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանում եղած հակամարտությանն առնչվող հանգամանքները: Հարցման են ենթարկվել ականատեսներ, պաշտոնատար անձինք: Բոլոր ներկաները ծանոթացել են այդ երկու ունկնդրումների սղագրությանը: Խնդրում եմ ներկայանալ՝ որոշ հարցերի պատասխանելու համար: Խնդրեմ...

-Մաքսիմ Միրզոյան, Ստեփանակերտի քաղաքային գործադիր կոմիտեի նախագահ:

-Լեւոն Մելիք-Շահնազարյան, Լեռնային Ղարաբաղի մարզգործկոմի վերաբնակների հետ տարվող աշխատանքի բաժնի վարիչ:

Կովալով.-Հարգելի Մաքսիմ Միքայելի եւ Լեւոն Հրանտի, ես ձեզ մի քանի հարց կտամ, հետո կարող եք առաջարկել, թե ինչն եք անհրաժեշտ համարում ներկայացնել ՈՒԽՍՀ Գերագույն խորհրդի մարդու իրավունքների կոմիտեին: Մաքսիմ Միքայելի, ասացեք խնդրեմ, ի՞նչ է հայտնի ձեզ իրենց մշտական բնակության վայրերից քաղաքացիների հարկադիր տեղահանման փաստերի առթիվ: Մասնավորապես մեզ հետաքրքրում է տեղահանումը ինչպես Լեռնային Ղարաբաղի տարածքից, այնպես էլ հակամարտության շրջանին հարող տարածքներից, այդ թվում եւ այն տարածքներից, որոնք գտնվում են Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի սահմաններից դուրս պաշտոնապես Ադրբեջանի տարածքում:

Մաքսիմ Միրզոյան.-Հադրութի շրջանից, Բերդաձորի ենթաշրջանի գյուղերից, Գետաշենի ենթաշրջանից, որն ընդգրկում է 4 գյուղ՝ Գետաշեն, Մարտունաշեն, Ազատ Կամո, եւ հինգերորդը՝ Ղուշչի Արմավիր, բռնատեղահանումը պլանավորված է եղել դեռեւս 1988 թվականին, եւ ես որպես պարետության շտաբների եւ այն ժամանակվա Գերագույն խորհրդի, հետո արդեն ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի նիստերի մշտական մասնակից, նկատել եմ այն հետեւողականությունը, որ շրջկենտրոններից առավել հեռու գտնվող այդ գյուղերը մշտապես բոլորից քիչ են ընդունակ եղել իրենց պաշտպանելու, այսինքն, ունենալով փոքրաթիվ բնակիչներ, եւ անմիջապես մոտիկ գտնվելով ադրբեջանական գյուղերին, անընդհատ ստուգումների են ենթարկվում հատուկ դրության շրջանի պարետության կողմից: Կրկնում եմ, բացառապես ստուգվել են այդ գյուղերը, եւ այդ ստուգումները միշտ արտացոլվել են արտակարգ դրության շրջանի հրամանատարության ամփոփագրերում:

Կլիգման- Մաքսիմ Միքայելի, ուզում եմ պարզել միտքս. մարդու իրավունքների կոմիտեն հայտնի պատճառով հարկադրաբար սահմանափակված է հակամարտության սրման պահից հետո ընկած ժամանակաշրջանում կատարված իրադարձությունների ուսումնասիրությամբ: Նկատի են առնվում ապրիլը, մայիսը, հունիսը եւ հիմա արդեն 1991-ի հուլիսն է: ուստի, եթե կարելի է, խնդրեմ, ավելի շատ պատմեք այդ դեպքերի մասին եւ շատ եմ խնդրում նաեւ հնարավորին չափ նշել կոնկրետ ամսաթվեր, վայրեր, եւ կոնկրետ այն մարդկանց, որոնք մասնակից են այս կամ այն իրադարձությանը:

Միրզոյան.- Մեր ունեցած տվյալներով 1991-ի ապրիլի 19-ին ԽՍՀՄ

ՆԳՆ ղեկավարությունը ցուցում է տվել Գետաշենի ենթաշրջանից ներքին զորքերը վերատեղաբաշխելու մասին: Դրանից հետո սկսվել է անձնագրային ռեժիմի ստուգում: Մեզ բազմիցս նախազգուշացրել են, մենք էլ նախազգուշացրել ենք Հայաստանի ղեկավարությանը, խորհրդարանին, որ նախապատրաստվում է այդ ենթաշրջանից հայերի լրիվ տեղահանություն, եւ որպես հետեւանք ներքին գործերի նախարարությունը եւ արտակարգ դրության շրջանի պարետությունը ոչ մի միջոց չեն ձեռնարկել եւ արդեն մայիսի 3-4-ին ԼՂԻՄ տարածքում հայտնվեցին առաջին փախստականները: Այդ փախստականները տեղափոխվել են ներքին զորքերի 5 ուղղաթիռներով՝ առաջին օրը, իսկ հաջորդ օրերին 4-ին, 5-ին, 6-ին Ստեփանակերտ քաղաք են հասցվել ավելի քան 1400 գետաշենցիներ եւ մարտունաշենցիներ: Այդ ձեռնարկումներին հաջորդեցին 1991 թվականի մայիսի 13-ի բռնատեղահանումը Հադրութի շրջանից: Այն ընդգրկեց շրջանի հարավային հատվածը: Այդ հատվածի մեջ էին մտնում Պետրոսաշենը, Սպիտակաշենը, Արփագետիկը, Դոլանլարը, Խծաբերդը, Բինյաթլուն, Առաքելը, Ջիլանը, Քարագլուխը, Ծամձորը: Ահա այս գյուղերից բառացիորեն երկու գիշերվա ընթացքում Ադրբեջանի եւ ներքին զորքերի փոխադրամիջոցներով Հայաստանի սահմանը բռնատեղահանվեցին շուրջ 1400-1500 մարդ:

Կլիգման.-Ասացեք, խնդրեմ, ձեր թվարկած գյուղերում այդ ձեռնարկումից հետո առհասարակ ապրողներ մնացի՞ն, կամ ուրիշ որեւէ մեկը: Ի՞նչ են հայտնել մեկնած մարդիկ: Արդյո՞ք իրենք որեւէ դիմում են ստորագրել, որով խնդրեին իրենց հանել այդտեղից, թե՞ նման բան չի եղել:

Միրզոյան.-Այդ գյուղերում, բացառությամբ Խծաբերդի եւ Հին Թաղլարի, ոչ ոք չի մնացել: Ճիշտ է, մայիսի 21-ին արդեն ըստ պարետության հետ ձեռք բերած պայմանավորվածության, փաստորեն, բոլոր գյուղերը վերադարձան 20-80 բնակիչներ, սակայն դրանից հետո կրկին այդտեղ մտած օմօնի ստորաբաժանումները, Ադրբեջանի ՆԳՆ ղեկավարության եւ Ջեբրայիլի միլիցիայի հետ միասին ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի տակ ստիպեցին նրանց հեռանալ այդ գյուղերից: Հարցվածների 99 տոկոսը , քանի որ մեծամասնությունը գտնվում էր Հադրութ շրջկենտրոնի տարածքում, եւ ոչ թե Լաչին-Գորիսի սահմանում, կրկնում եմ հարցվածների մեծամասնությունը, եւ դա հաստատում են ներքին զորքերի բազմաթիվ սպաներ, ստորագրություններ են տվել այն մասին, որ խնդրում են իրենց այդ գյուղերից դուրս բերել կամավոր: Նրանք ստիպված են եղել ստորագրել:

Կլիգման.- Այն միտքն է հայտնվել, թե այդ մարդկանց տեղափոխումը եղել է կամավոր, հատկապես այն իմաստով, որ նրանք այնքան էլ

վտանգավոր գոտում, վտանգավոր հանգամանքներում չեն եղել, որ պատրաստ լինեին իրենց կյանքը, իրենց երեխաների կյանքը փրկելու համար հեռանալ այդ տարածքից: Այդ իրադարձություններին այս կամ այն չափով մասնակից բոլորն ասում են այն մասին, որ գործողություններից շատերի պատճառը հենց այն հանգամանքներն են եղել, որ այդ տարածքներում գտնվել են մարդիկ, որոնք զենք են ունեցել, բայց ... իրավունք չեն ունեցել օգտագործելու, այն պաշտոնական իրավունքը, թույլտվությունը, որ տալիս են ներքին գործերի մարմինները, պաշտպանության նախարարության եւ պետանվտանգության կոմիտեի համակարգերը: Ի՞նչ կարող եք ասել այս առթիվ: Ես ուզում եմ ասել, որ իմ հարցերը թող չվիրավորեն ձեզ, ջանացեք առավելագույն օբյեկտիվություն դրսեւորել այն հարցերում, որոնք մենք ուսումնասիրում ենք:

Լեւոն Մելիք - Շահնազարյան. -Տրամաբանական հարց է, եւ ես չեմ ժխտի այդ գյուղերում զինված բնակիչ-մարդկանց հնարավոր ներկայությունը: Ես նկատի ունեմ հայկական կողմը: Բայց միեւնույն ժամանակ կկամենայի ասել, որ եթե իրավիճակը շարունակվի եւ զարգանա նույն ուղղությամբ, այդ դեպքում զենք կվերցնեմ նաեւ ես, եւ սեփական կնոջս էլ ...

Կովալով.- Սեփակա՞ն...

Մելիք-Շահնազարյան.- Դե, այսինքն, կնոջս էլ կխնդրեմ զենք առնել ձեռքը, որովհետեւ բոլոր դեպքերում հարկավոր է ֆիզիկական սպանությունից, ֆիզիկական բռնությունից փրկել գոնե քո ընտանիքը, եւ քո մերձավորներին:

Կլիգման.-Ինչքանով հասկացա, ձեր այդ դիրքորոշման պատճառը այն է, որ նրանք, ովքեր պարտավոր են պաշտպանելու նորմալ կյանքը, բոլոր դեպքերում ձեր տեսակետից չեն կատարում այդ ամենը: Ես այսպես հասկացա:

Մելիք - Շահնազարյան.-Դեռ ավելին: Նրանք, ովքեր մեզ մոտ են եկել պաշտպանելու, երկու թշնամի կողմերին տարանջատելու, նրանք բացեիբաց բռնել են այդ կողմերից մեկի կողմը, եւ նրանց հետ միասին ըստ էության վերածվելով Ադրբեջանի Հանրապետության բանակի, ոչնչով չեն տարբերվում ոչ իրենց գործողություններով, ոչ էլ դաժանության աստիճանով:

Կլիգման.-Դուք մի քիչ շեղվեցիք հարցից: Ձեզ երեւի լավ հայտնի է, կամ պետք է աշխատանքի բերումով լավ հայտնի լինի այն, ինչ վերաբերում է իրենց մշտական բնակության վայրերից քաղաքացիների հարկադիր բռնատեղահանման հնարավորությանը: Խնդրեմ, նշեցեք

փաստեր, հանգամանքներ: Այդ հարցերը արդեն շոշափվել են, այնպես որ, հասկանալի է, թե ինչի մասին եմ հարցնում:

Մելիք - Շահնազարյան.-Այո, հասկանալի է: Ես հաստատում եմ, որ բոլոր թվարկված հայկական գյուղերը տեղահանվել են բռնությամբ, գուցե եւ իսկապես շատ մեծ թվով ստորագրություններ են հավաքվել, թե կամավոր են լքում այս գյուղը, բայց փաստորեն բոլոր դիմումները արդեն գրված են եղել, այսինքն, մարդկանց միայն ստորագրել են տվել: Սա առաջին: Երկրորդ, իրենց գյուղից կամավոր հեռացող մարդիկ իրենց հետ տանում են ունեցվածքը, բայց ես գիտեմ, աշխատանքի բերումով շատ հանդիպումներ եմ ունեցել փախստականների հետ, այդ բոլոր գյուղերում, բացառությամբ մի քանի ընտանիքների, ամբողջ ունեցվածքը թալանվել է մոտակա ադրբեջանական գյուղերի կողմից: Մարդիկ իրենց տները այս ձեւով չեն թողնում, այստեղ կյանքի տրամաբանությունն ինքն է հուշում, եթե նույնիսկ մարդը փրկում է կյանքը, ապա ձգտում է այնուամենայնիվ, եղածը կամ ինչ-որ լինի գոնե ամենաարժեքավորը մի կապոց անել, հետը տանել: Սակայն, ստորագրություններ, իհարկե, եղել են, բայց դրանք բոլորն էլ ավտոմատի փողի տակ մարդկանց ստիպել են ստորագրել:

Կլիգման.-Ես ճի՞շտ եմ հասկանում ձեզ, որ կարծում եմ, թե կամավոր կոչվող այդ դիմումները ժխտում են կամավորության փաստերը, որ մարդիկ հեռացել են, հետները չվերցնելով անգամ այն իրերի նվազագույնը, որ կարող էին վերցնել, փրկելով իրենց, իրենց երեխաների կյանքը: Եվ դուք հենց դա՞ եք համարում կամավորության բացակայություն: Եվ , ի դեպ, ձեզ արդյո՞ք որեւէ բա՞ն է հայտնի, թե ով կոնկրետ ի՞նչ գույք է վերցրել, ուր է տարել, եւ չգիտեք արդյոք քրեական գործեր հարուցվա՞ծ են այդ գյուղերում մնացած գույքի խլման փաստերի առթիվ:

Մելիք - Շահնազարյան.-Ինձ ոչ միայն հայտնի է, այլեւ ես տեսել եմ, թե քաղաքացիական մարդկանցով մեքենաները ինչպես էին մտնում Մարտունաշեն գյուղը եւ տեսել եմ, թե դրանք ինչպես էին բեռնվում հայերի տնային գույքով: Ինչքան ինձ հայտնի է, կողոպուտի եւ ոչ մի փաստի առթիվ քրեական գործ չի հարուցվել ոչ մի շրջանում, ոչ Խանլարի, ոչ Հադրութի, ոչ էլ Շուշիի շրջանում: Ինչպես նաեւ մեծ թվով բնակիչներ, փախստականներ, ինձ պատմել են եւ անձնական հանդիպումների ժամանակ, եւ ժողովներում այն մասին, թե ինչ են թողել իրենք, ինչքան են թողել եւ, ի դեպ ասած, Գետաշենի բնակիչները նույնպես տեսել են, վկա են եղել, թե ինչպես են իրենց գյուղերը մեքենաներ մտնում թալանված բարիքը տեղափոխելու համար:

Կլիգման.- Լեւոն Հրանտի, այդ նույն հարցի շարունակությունը. Ավտոմեքենաների համարները, դեկը վարողները, հայտնի՞ են արդյոք ձեզ, այդ մասին արդյո՞ք պաշտոնական տեղեկություններ կան: Որպես իրավաբան, ես դրանով հետաքրքրվում եմ, որովհետեւ ուրիշի ունեցվածքի հափշտակման փաստերի մասին խոսելու համար անհրաժեշտ են նվազագույն ելակետային տվյալներ: Արդյոք որեւէ մեկը ահա այդպիսի նվազագույն ելակետային տվյալներ ունի:

Մելիք-Շահնազարյան.-Դժբախտաբար, մեքենաների համարներ տալ չեմ կարող, որովհետեւ մենք գտնվել ենք կյանքի անվտանգության երաշխիք ապահովող պատկառելի հեռավորության վրա, որը տեսնելու հնարավորություն չի տվել, սակայն անկախ լրագրողների, եւ նույնիսկ զինծառայողների հրապարակումներում, մամուլի մեջ, նրանք պատմում են այդ հայկական գյուղերում կատարված դիակապտության, կողոպուտի փաստերի մասին: Հավանաբար, դա իմ ասածի ճշմարտացիության անուղղակի ապացույցն է:

Կլիգման.- Իմ տված առաջին հարցի առթիվ, ասացեք խնդրեմ, ձեզ մոտ կա՞ն արդյոք իրենց մշտական բնակության վայրերից մեկնած անձանց ցուցակներ: Կարող եք անհրաժեշտության դեպքում ներկայացնել նրանց ճշգրիտ թիվը:

Մելիք -Շահնազարյան.- Այո, կարող եմ:

Կովալյով.-Ես, խնդրեմ, հարցը ուղղում եմ եւ Միրզոյանին, եւ Մելիք-Շահնազարյանին: Ասացեք, խնդրեմ, հարկադիր տեղահանմանը վերաբերող առաջին հարցի առթիվ ուզո՞ւմ եք ինչ-որ բան ավելացնել, լրացնել, ճշգրտել: Խնդրեմ:

Միրզոյան.-Ես կարող եմ ավելացնել հետեւյալը, որ այդ օրերին բազմիցս դիմել եմ հատուկ շրջանի պարետության ղեկավարությանը այն մասին, թե ինչ է կատարվում Հադրութի շրջանում, Գետաշենի ենթաշրջանում: Պարետությունը հրաժարվել է որեւէ քայլ ձեռնարկել, վկայակոչելով, որ ԽՍՀՄ ՆԳՆ ղեկավարությունը տվյալ ժամանակաշրջանում իրենց հեռացրել է իրենց իսկ պարտականություններից: Ես կարող եմ նույնիսկ անուններ նշել՝ Վալենտին Միխայլովիչ Ժուկով, գնդապետ: Ես կարող եմ վկա բերել նաեւ գնդապետ Ալեքսեյ Վլադիմիրովիչ Պոլոզովին, որոնք իսկապես ինձ ասել են, որ իրենք հեռացված են, որ իրենց զորքերը այդ ծեռնարկումներին չեն մասնակցում:

Կլիգման.- Մաքսիմ Միքայելի, ասացեք խնդրեմ, ձեր դիմումը միայն բանավո՞ր բնույթ է կրել, կարո՞ղ եք վկաներ բերել. քաղգործկոմը պաշտոնապես դիմե՞լ է, այդ դիմումներին պաշտոնական պատասխաններ ստացվե՞լ են, թե ոչ:

Մելիք-Շահնազարյան.-Փաստորեն մեր եւ պարետության միջեւ ստանդարտացված նամակագրություն բացառված է: Սույն կարգը հաստատվել է դեռեւս պարետ Սաֆոնովի կողմից, մեր բոլոր դիմումները հղվել են ԽՍՀՄ դատախազության, ԽՍՀՄ նախագահի եւ համապատասխան մարմինների հասցեով: Բացի այդ, այդ օրերին ես երկու անգամ հանդիպել եմ չկայացած կազմկոմիտեի նախագահ Պոլյանիչկոյի հետ:

Կովալյով.- Ես կուզենայի այդ հարցի առթիվ ճշգրտում անել. այնտեղ պարզապես ոչ մի կազմկոմիտե չպետք է լինի, դա չի համապատասխանում սահմանադրությանը:

Միրզոյան.- Միտքս շարունակեմ.Պոլյանիչկոն ամեն կերպ ժխտում էր նման փաստերի առկայությունը, բայց արտակարգ դրության շրջանի պարետի ներկայությամբ նա ստիպված եղավ խոստովանել: Իսկ մեր երկխոսությունները դադարել են Ադրբեջանի ղեկավարության եւ պարետության կողմից էլ ավելի խստացված քաղաքականության հետեւանքով:

Կլիգման.- Մաքսիմ Միքայելի, ասացեք խնդրեմ, ո՞ւմ հրամանը, ո՞ւմ ցուցումն է վկայակոչել պարետ Ժուկովը, երբ ասել է, թե իրենք հեռացված են միջամտելուց: Ո՞ւմ հրամանն է նա վկայակոչել:

Միրզոյան.-Նա վկայակոչել է ներքին զորքերի հրամանատարության հրամանը: Նա կոնկրետ անուններ չի տվել, բայց ասել է, որ սույն ցուցումը իրենք ստացել են ԽՍՀՄ ներքին զորքերի հրամանատարության ղեկավարությունից: Ի դեպ, մենք հավաստի տեղեկություն ունենք, որ այսօրվա վրա Շահումյանի շրջանում պատրաստվում է նույնպիսի գործողություն: Իսկ պարետին փորձում են փոխել, եւ ներքին զորքերը ղեկավարելու է խորհրդային բանակի մի հրամանատար, Կիրովաբադի դիվիզիայից, իմիջայլոց, այն նույն դիվիզիայից, որը կռվել է հայերի դեմ նաեւ Գետաշենում:

Մելիք-Շահնազարյան.- Ես նույնպես հանդիպել եմ պարետ Ժուկովի հետ, նրա մոտ ընդունելության եմ գնացել Լեռնային Ղարաբաղի մարզգործկոմի նախագահի տեղակալ Օլեգ Եսայանի հետ: Ես նրան նամակ եմ տարել Շուշիի շրջանի երեք գյուղերի Մեծ Շենի, Հին Շենի եւ Եղցահողի փախստականներից, եւ խնդրել՝ ապահովել այդ մարդկանց վերադարձը մշտական բնակության վայրերը: Դա եղել է նրանց այնտեղից արտաքսելուց մի քանի օր անց: Այդ առթիվ գնդապետ Ժուկովը պատասխանել է, որ այնտեղ հիմա խորհրդային բանակն է գտնվում: Այնտեղ արդեն ներքին զորքեր չկան, որ այդ գյուղերն արդեն բնակեցվում են ադրբեջանցիներով, որ դրանք արդեն բնակեցվել են

50-60 տոկոսով, որ հայերին այնտեղ վերադարձնելու համար հարկավոր է բռնատեղահանել ադրբեջանցիներին, եւ որ ինքը չի կարող գնալ դրան: Նա հրաժարվեց ընդունել մեր գրավոր դիմումը:

Կլիգման:- Ասացեք, խնդրեմ, ձեզ հայտնի՞ է, թե հայերի թողած գյուղերը կոնկրետ ո՞ւմ կողմից են բնակեցվել. այն ադրբեջանցիների՞, ովքեր հեռացել են Հայաստանից, կամ մսխեթցի թուրքերի՞, ձեզ որեւէ բան հայտնի՞ է այն մասին, թե նրանց կոնկրետ ո՞վ է բնակեցրել գյուղերում եւ իսկապե՞ս դրանք բնակեցված են:

Լեւոն Մելիք-Շահնազարյան:- Գյուղերն իսկապես բնակեցված են, մի քանի գյուղ Հադրութի շրջանում եւ Շուշիի շրջանի բոլոր բռնատեղահանված հայկական գյուղերը: Սակայն թե այդ գյուղերում կոնկրետ ովքեր են բնակեցվել մսխեթցի թուրքերը, թե՞ Հայաստանից հեռացած ադրբեջանցիները, ես չեմ կարող ասել: Չնայած մեզ մոտ, ԼՂԻՄ մի քանի բնակավայրերում մսխեթցի թուրքեր բնակեցրել են:

Կլիգման. - Ես մի հարց ունեմ, եւ Միրզոյանին, եւ Մելիք-Շահնազարյանին: Ասացեք խնդրեմ, ինչ ձեւով է պահպանվում կամ չի պահպանվում պաշտոնական կապը քաղգործկոմի, մարզգործկոմի, եւ այն տարածքներում, որոնց մասին խոսվում է, գործող խորհրդային բանակի, ներքին զորքերի պաշտոնական ներկայացուցիչների միջեւ: Արդյո՞ք պաշտոնական նամակագրություն տարվում է, հնարավո՞ր է արդյոք հեռագրերի, հեռախոսագրերի, հեռատիպային կապի փոխանակումը: Բացատրեմ, թե ինչու եմ տալիս այս հարցը. մարդու իրավունքի կոմիտեին հետաքրքրում է, եւ մենք կարեւոր ենք համարում իշխանության պաշտոնական ներկայացուցիչների պաշտոնական արձագանքը տեղական իշխանությունների պաշտոնական դիմումին: Կարելի՞ է արդյոք, որեւէ ձեւով նորմալ կապ պահպանել այն առումով, որի մասին ասացի պաշտոնական նամակագրություն կամ հետաքրքրող հարցի շուրջ փաստաթղթերի որեւէ պաշտոնական փոխանակում:

Միրզոյան.-Մեզ մոտ կա բավականին մեծ փոստ, որի պատասխանը փաստորեն չենք ստացել: Այդ փոստը, նամակագրությունը կապված է Ստեփանակերտ քաղաքի կենսապահովման օբյեկտների պահպանության հետ: Քանի որ մենք պարետության կողմից ոչ մի գործնական օգնություն չենք ստացել, ստացել ենք միայն մերժումներ այդ օբյեկտները պահպանելուց, մենք դադարեցրել ենք նամակագրություն վարել նրանց հետ, դիմել ենք միութենական մարմիններին, տվյալ դեպքում ԽՍՀՄ ՆԳ նախարարությանը, եւ առայսօր ոչ մի պատասխան չենք ստացել: Փաստորեն, խախտվում է արտակարգ դրության մասին օրենքը, որտեղ հստակ եւ միանշանակ ասվում է, որ արտակարգ դրության

շրջանի պարետությունը պետք է իր գործողությունները համակարգի իշխանության տեղական մարմինների հետ: Այդ կապը մեր միջեւ չկա, եւ պատճառները պարզելու փորձերն էլ հաջողության չեն հասել:

Մելիք - Շահնազարյան.- Մենք միայն ակտիվ կապ ենք պահում հայկական շրջանային գործադիր կոմիտեների հետ:

Կլիգման.- Անցնենք երրորդ հարցին:

Մելիք-Շահնազարյան.- Հադրութի շրջանում եւ Գետաշենի ենթաշրջանում կատարված հայտնի իրադարձությունից հետո սկսվեց զանգվածային պատանդներ վերցնելը: Այսինքն, այս կամ այն կատարված հանցագործության մեջ մեղադրանքի պատրվակով, չնայած այդ հանցագործությունների համար մեղադրանքներ չէին ներկայացվում, մարդկանց տասնյակներով, հարյուրներով պատանդ էին վերցնում, պահում պետական հիմնարկներում ուղղիչ ճամբարներում, որպես կանոն պատանդներին բռնում էին ոչ թե արտակարգ դրության շրջանի պարետության ուժերով (բոլոր դեպքերում նրանք հրաժարվում էին, վկայակոչում այն, թե իրենց հայտնի չէ), սակայն մեքենաները, որոնցով գալիս էին պատանդներ վերցնողները, զենքը, որ նրանք կրում էին, համազգեստը, որ հագած էին եւ ամբողջ զրահատեխնիկան, այն փաստորեն պատկանում էր կամ ներքին զորքերին, կամ էլ խորհրդային բանակին: Նշված ժամանակաշրջանում Ստեփանակերտ քաղաքում պատանդ են վերցվել, ձերբակալվել ավելի քան 50 մարդ, նրանց մեծամասնությունը այսօրվա տվյալներով բաց են թողնված, սակայն շատ փաստերի առթիվ հարուցվել են քրեական գործեր, թե դրանք ինչքանով են օրինական հարուցված, ցույց կտա դատարանը, սակայն գործարտությունը պարզելու համար մենք կարծում ենք, որ հետաքննությունը պետք է կատարվի միայն ԽՍՀՄ դատախազության կողմից:

Օլեգ Պետրովիչ Օռլով.- Պատանդ ասելով, պետք է հասկանալ այն մարդկանց, որոնց ձերբակալում են, բռնում, ինչ-որ ձեւով սահմանափակում որպես նրանց ազատ արձակման պատասխան ինչ-ինչ պահանջների կատարման պայմանով, ուստի, խնդրեմ, ասացեք, եղե՞լ են արդյոք այնպիսի դեպքեր, երբ ինչ-որ մեկին ձերբակալել են, եւ պահանջել նրանց ազատ արձակման համար ինչ-որ բան կատարել:

Միրզոյան.- Վերջին դեպքերի ընթացքում այդպիսի փաստեր չեն եղել: Ես կարծում եմ, Ստեփանակերտ քաղաքում վերջին ժամանակներս բոլոր ձերբակալվածները քաղաքական պատանդներ են եղել այն առումով, որ նրանք հատուկ «մշակման» են ենթարկվել այսպես կոչված «զտման» ճամբարներում, եւ ժամանակավոր պահման մեկու-

սարաններում եւ պայմանն էլ եղել է հետեւյալը. հետագայում նրանք բոլորն էլ հրաժարվում են այս կամ այն քաղաքական պահանջին մասնակցելուց:

Օլով.-Խնդրեմ, կարո՞ղ եք մեզ ներկայացնել այն մարդկանց ցուցակները, որոնք ձերբակալվել են կամ բռնվել վերջին շրջանում:

Միրզոյան.- Լրիվությամբ:

Կլիգման.- Եվ դուք, նաեւ, հիշատակեցիք այն մասին, թե ձերբակալություններ կատարած անձինք օգտվել են Խորհրդային բանակի կամ ներքին զորքերի զենքից, տեխնիկայից: Իսկ ովքե՞ր են եղել այդ անձինք, ինչպիսի՞ կազմավորումներում են նրանք գործել, ինչպիսի՞ն է եղել նրանց համազգեստը: Ինչքան որ հասկացա, Լեւոն Մելիք-Շահնազարյանն է ուզում պատասխանել այս հարցին:

Մելիք-Շահնազարյան.- Պատանդներ բռնելիս կամ ինչպես հետո է պարզվում, որ դրանք ձեւափոխվում են վարչական կալանքների, խախտվում են միանգամից վարչա-դատավարական օրենսգրքի մի քանի հոդվածներ, բայց ես կկամենայի խոսել ահա թե ինչի մասին: Մարդիկ չեն կարող ասել, թե իրենց ով է ձերբակալել, ով է առեւանգել, քանի որ նրանցից ոչ մեկը չի ներկայանում, չնայած նրանք զինվորական համազգեստով մարդիկ են, քաղաքացիական անձանց հետ միասին: Ճիշտ է, մի քանի անգամ եղել է, որ նրանք ներկայացել են, բայց դրանք եղել են հնարովի ազգանուններ եւ կոչումներ:

Կլիգման.- Ես ոգում եմ ճշտել. եթե ձեզ հայտնի են նրանք, ովքեր գալիս են եւ կալանում, նրանք ներկայացնո՞ւմ են ծառայողական վկայականներ:

Մելիք-Շահնազարյան.- Ես հավաստի գիտեմ մի քանի դեպք, երբ մարդիկ հանդգնել են ծառայողական վկայագիր պահանջել, բայց դրանք չեն ներկայացվել:

Կլիգման.- Շարունակենք պատանդների, կալանքների հետ կապված հարցերը: Հարցս երեւի կուղղեմ Միրզոյանին: Ասացեք խնդրեմ, դուք հիշատակեցիք, թե կալանվածներին պահել են ուղղիչ աշխատանքային գաղութներում: Ճշգրտեք, խնդրեմ, որտե՞ղ, ե՞րբ, օրը, անունները, եթե դրանք ձեզ հայտնի են: Կոնկրետ, որտեղ են պահել այդ մարդկանց: Որովհետեւ ունկնդրման ժամանակ հիշատակվեց այսպես կոչված «ֆիլտրման» կետերի մասին, եւ մենք իսկապես լսել ենք, որ մարդկանց պահել են այդ «ֆիլտրման» կետերում եւ ժամանակավոր կալանքի մեկուսարաններում: Չի հիշատակվել այն մասին, թե որեւէ մեկը ընկել է ուղղիչ աշխատանքային գաղութ: Խնդրեմ, նշեցեք

կոնկրետ մարդկանց, կոնկրետ վայրեր, ուր ընկել են Ստեփանակերտից տարված այդ մարդիկ:

Միրզոյան.- Ես կարող եմ նշել այն հիմնարկները, որտեղ պահվել են 1991 թվականի մայիսին տեղի ունեցած ձեռնարկումների առնչությամբ բռնված մարդիկ: Դրանք են Շուշիի թիվ 38 բանտը, Շահբուլաղի 3818 գաղութը, Բաքու քաղաքի Ազիզբեկովի շրջանում գտնվող Շուվելյանի բանտը: Ես կարող եմ անուններ նշել, փաստեր ներկայացնել. Շահբուլաղի բանտում սպանվել է Յուրի Ղուլյանը, Շուշիի բանտում անհայտ հանգամանքներում սպանվել է Հրաչիկ Շահբազյանը: Շուվելյանի բանտում պահվել են Համլետ Գրիգորյանը եւ Ռաֆայել Գաբրիելյանը:

Կլիգման.- Ես հասկանում եմ, որ դուք չեք կարող հիշել այնտեղ գտնված բոլոր մարդկանց անունները: Ասացեք, խնդրեմ, արդյոք հայտնի է ձեզ, որ նրանք ովքեր հետո վերադարձել են Ստեփանակերտ, ունեցել են փաստաթղթեր, որոնք վկայեին իրենց դատական, վարչական պատասխանատվության ենթարկելու մասին, թե ինչպիսի սանկցիաների են նրանք ենթարկվել: Տուգանվե՞լ են, արդյո՞ք փաստաթղթեր են ձեւակերպվել հայտնի ժամկետով վարչական կալանքի մասին, արդյո՞ք նրանք այդպիսի փաստաթղթեր ունեցել են, արդյո՞ք բաղաքացիներին տրվել են նման փաստաթղթեր, որոնց մասին ասացի:

Միրզոյան.- Ոչ ոքի նման փաստաթղթեր չեն հանձնվել:

Կլիգման.- Ընկերները, որոնց մենք հարցում ենք անում, ընդհանուր առմամբ չեն խոսում պատանդների մասին այն իմաստով, որ մարդիկ կալանվում են որեւէ պարտականություն կատարելու պահանջով: Այժմ կճշտի Լեւոն Մելիք-Շահնազարյանը:

Մելիք-Շահնազարյան.- Ես կուզեի խոսել մի պատանդի մասին, որին բռնել են հենց վերջին ժամանակներս, երեւի երկու շաբաթ առաջ, ոչ ավելի: Պատանդ է վերցվել պարետության վարորդ, շարքային Կոկորան: Նա չքացել է մեքենայի հետ միասին: Վերջին անգամ նրան տեսել են Ստեփանակերտ քաղաքում, եւ, բնականաբար, մեծ կասկածներ են եղել, թե դա հայերն են արել: Այնուհետեւ, ինձ ճշգրիտ հայտնի է, որ չորս օր անց (ես ցավոք չեմ կարող նշել այն աղբյուրը, որտեղից դա ինձ հայտնի է, որովհետեւ այլ դեպքերում , այդ աղբյուրից ոչինչ չեն հայտնի), չորս օր անց , երբ անհետացել էր Կոկորան, պարետությունն զանգահարեց մի անծանոթ, պահանջելով, որ ազատ արձակեն Շուշիի բանտում գտնվող 10 հայերի. «Բաց թողեք նրանց, եւ մենք բաց կթողնենք Կոկորային»: Պարետ Ժուկովը համաձայնեց, բայց դրանով կապն

ընդհատվեց: Անհայտ անձինք այլեւս չզանգահարեցին: Եվ ես մեծ կասկածներ ունեմ, որ դա հայերը չեն արել: Հակառակ դեպքում ինչ հմաստ ուներ չնշել նրանց անունները, ում հետ ուզում էին փոխանակել Կոկորային, ում պետք է բաց թողնեին, որպեսզի Կոկորան էլ ազատ արձակվեր: Այսինքն, դա փորձ էր...

Կլիգման.- Շնորհակալություն: Մենք ուսումնասիրում ենք պատանդների հարցը: Ես Միրզոյանին եւ Մելիք Շահնազարյանին առաջարկում եմ որեւէ բան ավելացնել, եթե նրանք այդ հարցի առթիվ ինչ-որ բան ունեն: Ըստ որում, Միրզոյանը հիշատակեց այն մասին, թե պատանդներ են բռնել տասնյակներով, հարյուրներով եւ այլն: Ի՞նչը նկատի ունեիք, երբ ասում էիք դա: Խնդրեմ, ինչ-որ բան ավելացրեք այդ հարցի առթիվ եւ ճշտեցեք վերջնականապես:

Միրզոյան.- Ես նորից հաստատում եմ, որ այսպես կոչված վարչական կալանքի պատրվակով, փաստորեն մարդկանց հավաքել են որպես պատանդներ եւ նրանցից յուրաքանչյուրին պահանջ է ներկայացվել հրաժարվել հետագա որեւէ քաղաքական պահանջից:

Կլիգման.-Հասկանալի է: Կարո՞ղ են ուրիշ տեսակետներ լինել այս հարցի առթիվ, ինչ որ ասաց Մաքսիմ Միրզոյանը: Ահա այդ դիրքորոշումը թե մարդկանց կալանքները պայմանավորված են եղել քաղաքական գործունեությանը նրանց մասնակցությամբ: Միայն ճշգրիտ լինելու համար ես կուզենայի ճշտել, Մաքսիմ Միքայելի, ասացեք խնդրեմ, որեւէ մեկին պաշտոնապես կամ կիսապաշտոնապես, հրապարակայնորեն թե ոչ հրապարակայնորեն, ես հասկանում եմ, որ երբ մարդուն կալանում են, դրանով իսկ նրա վրա հայտնի չափով ազդեցություն են գործում, պահանջե՞լ են, որ նա հրաժարվի քաղաքական գործունեությունից, որեւէ կազմակերպության գործունեությանը մասնակցելուց, նման պահանջ որեւէ մեկին ուղղակիորեն առաջադրվե՞լ է, ձեզ որեւէ բան հայտնի՞ է այդ մասին:

Միրզոյան.-Նման պահանջ փաստորեն ներկայացվել է բոլորին: Բոլորին ստիպել են զղջալ Ղարաբաղյան հիմնախնդրի լուծմանը իրենց մասնակցության համար: Բոլոր կալանվածները, որոնց ցուցակը մենք կհանձնենք ձեզ, ենթարկվել են նման բռնության:

Կլիգման.- Արդյո՞ք ճիշտ եմ հասկանում ձեզ, թե խոսքը վերաբերում է հայոց ազգային շարժման ակտիվիստներին կամ նրանց, ովքեր որեւէ մասնակցություն են ունեցել ինչ որ քաղաքական ակցիաների, հանրահավաքների, ցույցերի, դիմումների: Արդյո՞ք այդպես է:

Մաքսիմ Միրզոյան.- Այո, այդպես է:

Մելիք-Շահնազարյան.- Մայիսի կեսերից սկսած մարզում կալանվել, ձերբակալվել կամ առեւանգվել, պատանդ են վերցվել, եթե հաշվի չառնենք անանուն կալանվածներն ավելի քան 400 մարդ, եւ ահա այստեղ կուզենայի մի այսպիսի բաժանում կատարել...

Կովալյով.- Մի վայրկյանով ընդհատեմ ձեզ: Ձեր հիշատակած 400 հոգուց հիմա քանի՞սն են ազատ արձակված եւ քանի՞սն են շարունակում մնալ բռնված: Գոնե կողմնորոշիչ թվեր:

Մելիք- Շահնազարյան.- Կողմնորոշվելու համար ասենք, որ 213-ը, գուցե քիչ ավելի, ազատ են արձակված: Այդ կալանքները կատարվել են ընտրովի: Այն գյուղերում, որոնք ենթակա են բռնատեղահանման, կալանել են գլխովին բոլոր տղամարդկանց, 18 տարեկան եւ բարձր, եղել է նաեւ 18-ից ցածր: Այն գյուղերը, որոնք ենթակա չէին բռնատեղահանման կալանել են միայն նրանց, ովքեր ձեռքի տակ են ընկել, առաջին իսկ պատահած տղամարդուն:

Կովալյով.- Լեւոն Հրանտի, դա շատ պատասխանատու հայտարարություն է: Ասացեք, խնդրեմ, դուք ճշգրիտ գիտե՞ք, խնդրում եմ, նշել այն կոնկրետ գյուղերը, որտեղ կալանել են բոլոր տղամարդկանց:

Մելիք-Շահնազարյան. -Խնդրեմ: Ես հասկանում եմ իմ ասածի պատասխանատվությունը եւ կարող եմ կրկնել սղագրության համար: Բռնատեղահանման ենթակա գյուղերում կալանել են գլխովին բոլոր տղամարդկանց՝ Եղցահող, Հին Շեն, Մեծ Շեն, Տասը Վերստ, դրանք Հուշիի շրջանի գյուղերն են: Ջիլան, Սպիտակաշեն, Բանազուր Հադրութի շրջանում են: Իսկ մինչ այդ , դրանից մոտ մեկ տարի առաջ մենք ունեցել ենք վերածնվող Քաջավան գյուղը, որտեղ նույնպես կալանվել են բոլոր տղամարդիկ, բացառությամբ երկուսի: Նրանցից մեկը սպանվել է, մյուսը՝ ծանր վիրավորվել:

Կլիգման.-Ներողություն եմ խնդրում, նորից ընդհատում եմ. ասացեք, խնդրեմ, Լեւոն Հրանտի, դրանք ոչ մեծ գյուղե՞ր են, այնտեղ մոտավորապես քանի՞ ընտանիք է ապրում, որպեսզի 400 կալանվածներ փաստորեն կազմեին ամբողջ արական բնակչությունը:

Մելիք Շահնազարյան.- Երեք գյուղերի՝ Եղցահողի, Մեծ Շենի, Հին Շենի ընդհանուր բնակչության թիվը կազմում է 650 մարդ: 120 տղամարդու կալանել են: Եթե հաշվի առնենք, որ այնտեղ գործում էին երկու մանկապարտեզ, երեք դպրոց, ապա կրկնում եմ, որ կալանվել են գլխովին բոլոր տղամարդիկ, 300-ից 120 հոգի: Ցուցակները մենք ձեզ կներկայացնենք: Դեռ ավելին, այդ կալանքների ժամանակ խախտվում է տարածքային սկզբունքը: Նրանք բոլորը կալանվում են եւ 30 օր բան-

տարկվում ոչ այդ շրջանի ՆԳ շրջանային բաժինների պետերի որոշմամբ, այլ Լաչինի կամ Աղդամի, կամ ադրբեջանական հարակից շրջանների կողմից:

Կլիգման.-Ճի՞շտ հասկացա ձեզ, այսինքն, կալանքները կատարվել են առանց փաստաթղթեր կազմելու եւ միայն, երբ մարդկանց փոխադրել են մեկուսարաններ, ֆիլտրման կետեր, միայն այնտեղ են փաստաթղթեր կազմվել կալանքի վերաբերյալ:

Մելիք-Շահնազարյան.- Այո: Դուք ինձ ճիշտ եք հասկացել: Կալանված բազմաթիվ ստեփանակերտցիների հետ որոնց հետո բաց են թողել, զրույցների ժամանակ նրանք ասել են, որ իրենց թուղթ են ստորագրել տվել այն մասին, թե իրենց կալանում են 30 օրով: Սակայն Ստեփանակերտի ՆԳ քաղբաժնի պետը, բնականաբար, այդպիսի որոշում չի կայացրել, բացի այդ, վարչական պատասխանատվության ենթարկելու ոչ մի փաստի առթիվ վկաների չեն հարցաքննել: Ես կուզենայի ասել նաեւ մի բան: Ստեփանակերտում կա տիպային քննչական մեկուսարան, իսկ այդ մեկուսարանը լիովին անտեսվում է եւ քաղաքում կամ մարզում բոլոր կալանվածները կամ տեղափոխվում են Շուշիի բանտը, կամ Ինքնավար մարզի սահմաններից դուրս գտնվող ադրբեջանական բանտերը, գաղութները կամ քննչական մեկուսարանները: Ես կուզենայի ասել նաեւ խախտումների մասին: Մարդկանց կալանելու փաստը չի իրագեկվում տարածքային դատախազներին: Կալանքները հաճախ ուղեկցվել են Ստեփանակերտում խուզարկություններով, շրջաններում, գյուղերում՝ ջարդերով:

Կլիգման.-Ես ներողություն եմ խնդրում, բարի եղեք անմիջապես ճշտել, թե դուք ինչն եք ջարդեր անվանում:

Մելիք- Շահնազարյան. -Ջարդերը այն են, երբ ջարդում են կահույքը, ամանեղենը, խլում արժեքավոր ամեն բան: Ես վատ չեմ տիրապետում ռուսաց լեզվին եւ իմ կարծիքով բառը ճիշտ եմ օգտագործում: Ստեփանակերտում նույնպես արժեքավոր իրեր են խլել առանց այդ մասին արձանագրություն կազմելու, ինչը որ արվում է որպես տվորական կողոպուտ: Ըստ որում, կատարված գործողությունները, որ մարդիկ, վարչական կալանքի են ենթարկվում 30 օրով, բնականաբար նրանք չպետք է խուզարկումների ենթարկվեին, կամ խլվեին ինչ-որ արժեքավոր իրեր:

Կլիգման.-Ես ձեզ նորից ընդհատում եմ, Լեւոն Հրանտի, բարի եղեք, ասացեք խնդրեմ, ձեզ որեւէ բան հայտնի՞ է այն մասին, թե այդ մարդկանց ինչպիսի՞ վարչական խախտումների մեջ են մեղադրել, ի՞նչ են խախտել նրանք, ի՞նչն են սխալ արել: Նրանք, պետք է ենթադրել, ինչ-

բանով որ ձեզ հայտնի է, ունեցել են անձնագրեր, այսինքն, գտնվել են իրենց բնակության վայրերում, ինչո՞ւմ են մեղադրել նրանց:

Մելիք-Շահնազարյան.- Փաստորեն, նրանց բոլորին մեղադրել են «զորային պահակախմբին կամ ներքին ծառայությունների զինվորներին դիմադրություն ցույց տալու» մեջ:

Կլիգման.-Ձեզ որեւէ բան հայտնի՞ է նման դիմադրություն ցույց տալու փաստերի մասին: Ի՞նչ ձեւով է ցույց տրվել այդ դիմադրությունը եւ ձեր նշած գյուղերում համատարած բոլոր տղամարդիկ ինչ որ դիմադրություն ցույց տվե՞լ են: Ձեզ ի՞նչ է հայտնի այդ առթիվ:

Մելիք-Շահնազարյան.- Ես կարող եմ միանշանակ ասել, եւ դա հաստատված է զինվորական պարետության փաստաթղթերով, որ այն գյուղերում, որոնք ես նշեցի ...

Կովալով.- Ներեցեք, ես դիմում եմ Մաքսիմ Միրզոյանին եւ Լեւոն Մելիք-Շահնազարյանին: Արդյո՞ք ուզում եք որեւէ բան ավելացնել քաղաքացիներին որպես պատանդ վերցնելու հարցի առթիվ, թե՞ անցնենք հաջորդ հարցին:

Կլիգման.-Անցնենք հաջորդ հարցին: Քննարկվող դեպքերի ժամանակ արդյո՞ք կատարվել են հանցանշաններ պարունակող գործողություններ, սպանություններ: Պատճառվե՞լ են մարմնական վնասվածքներ, տարբեր տեսակի բռնություններ, բռնաբարություններ, կողոպուտներ, ջարդ, գողություն, դրամաշորթություն: Այն, որ ողբերգական իրադարձությունները կատարվում են այնտեղ եւ այն ժամանակ, որի մասին խոսում ենք, դա հասկանալի է, բայց այս կամ այն գործողության՝ որպես հանցավոր գործողության գնահատման հնարավորությունը հայտնի չափով պատկանում է նախ հետաքննությանը, հետո միայն դատարանին, որը միայն դատավճռում կարող է մատնանշել, թե արդյո՞ք հանցագործություն է տեղի ունեցել, թե ոչ: Այնուամենայնիվ, ձեզ խնդրում եմ հնարավորին չափ նշել այն, ինչը ձեր տեսակետից հանդիսանում է կոնկրետ հանցագործություն, եթե, իհարկե, դրանք եղել են՝ տեղը, ժամանակը, անունը, տուժածը: Կոնկրետ ի՞նչ անձինք են կատարել այս կամ այն գործողությունը, որոնք ձեր տեսակետից կարելի է բնութագրել որպես հանցագործություն: Ես անմիջապես բացատրեմ. ունկնդրումներին ներկա են եղել ԽՍՀՄ դատախազության, Ադրբեջանի մշտական ներկայացուցչության ներկայացուցիչները, որոնք խոստացել են կոմիտեին մատակարարել այդ կարգի դրսեւորումներին վերաբերող բոլոր տեղեկությունները: Համապատասխանաբար ձեր նշած փաստերը գրանցվելու են, եւ մենք մեր ունեցած հնարավորություններով պնդելու ենք, որ դրանք ստուգվեն օրենքով սահ-

մանված պատշաճ կարգով: Դրանք տեղի՞ են ունեցել, թե ոչ: Ո՞վ է մեղավոր, ի՞նչ պատիժ են կրել այս կամ այն իրավախախտման մեջ մեղավորները:

Միրզոյան.-Ես կասեմ, որ դա աշխատանքի չափազանց մեծ ծավալ է, եւ հարկ կլինի երկար պատմել: Շուշիի շրջանի չորս գյուղերում, Հադրութի 14 գյուղերում դիակապուտները փաստորեն հափշտակել են ամբողջ տնային գույքը, անասունները, սա հոդված 66: Գետաշենում, Մարտունաշենում խլել են ունեցվածքը, մեքենաները, վերջին փողերը...

Կլիգման.-Ներեցեք, Մաքսիմ Միքայելի, որ ձեզ ընդհատում եմ. այս աշխատանքում, որ փորձում ենք տանել, հայտնի բարդություն է ներկայացնում ահա թե ինչը: Շատերն են խոսում բազմաթիվ ընդհանուր հանգամանքների մասին: Մեզ համար հասկանալի է, որ այն, ինչ տեղի է ունենում այնտեղ, շատ ահավոր եւ ծանր բաներ են: Բայց կկամենայինք հնարավորին չափ կոնկրետություն: Հասկանո՞ւմ եք: Բանն այն է, որ երբ նման նկատառումներ են հայտնվում, շատ դժվար է լինում ստուգել: Որպես իրավաբան ինձ համար պարզ է, որ եթե սպանություն է կատարվել, ապա պետք է քրեական գործ հարուցել: Պետք է հետաքննություն անցկացվի, եւ արդյունքը պետք է լինի այն, ինչի մասին ասացի: Ուստի, խնդրում եմ, եթե այդպիսի հնարավորություն կա, փաստաթղթեր ներկայացրեք կոնկրետ փաստերի առթիվ: Մեկ անգամ եւս՝ ներողություն:

Միրզոյան.- Կոնկրետ փաստերի առթիվ ես կարող եմ ներկայացնել բառացիորեն վերջին օրերից առաջ թալանված պետական ունեցվածքի հետ կապված փաստաթղթեր: Իսկ անձնական ունեցվածքի առումով այսօր դա անհնար է ստուգել, որովհետեւ գործողությունն անց է կացվել առանց վկաների եւ վերականգնել, թե ով է տարել, ինչքան, ինչ, կարելի է միայն բռնատեղահանված հայերի հարցման միջոցով, այն էլ մեծ ծավալի աշխատանք կատարելով...

Կլիգման.- Հուսով ենք ձեզանից ստանալ բոլոր փաստաթղթերը: Ինչպես հասկացա, պետական ունեցվածքի, կողոպուտի կոնկրետ փաստաթղթերը կստանանք, այն ունեցվածքի, որ այս կամ այն կերպ անհետացել է դիտարկվող իրադարձությունների հետեւանքով: Ինձ այնքան էլ հասկանալի չէ ստացվելիք դիմումների վերաբերյալ ձեւակերպումը: Ստեփանակերտի քաղգործկոմը իշխանության ամենամոտ մարմնի՝ Ստեփանակերտի դատախազությանը առայսօր ոչ մի դիմում չի ներկայացրել այն մասին, թե գույքը խլվել է: Եվ ինչո՞ւ Ստեփանակերտի քաղգործկոմը կամ մարզգործկոմը քաղաքացիներին չեն առաջարկել, չէ՞որ դա ընդհանուրի կողմից ընդունված պրակտիկա է, դիմումներ տալ կորած, խլված կամ թալանված գույքի առնչությամբ:

Մելիք-Շահնազարյան.- Ես սկզբից ասեմ. կոնկրետ, անցած ժամանակաշրջանում կատարված սպանությունների մասին: Մենք Մարտունաշենում եւ Գետաշենում 18 զոհ ենք ունեցել: Ցուցակները ձեզ մոտ կան, ուստի ազգանունները ես չեմ նշի, նրանց մեջ կան կացնահարված մարդիկ կամ գանգամաշկազերծ մարդիկ: Մայիսի 15-ին սպանվել են Հադրութի շրջանի Արփագետիկ գյուղի 4 ծեր բնակիչներ: Նորից մայիսի 15-ին հատուկ գործողությունների անցկացման ընթացքում, այսինքն, դա հենց Շուշիի շրջանի Եղցահող, Հին Շեն եւ Մեծ Շեն գյուղերում համատարած ձերբակալությունների ընթացքում սպանվել է քաղաքացի Անուշավան Գրիգորյանը: Սպանվել է վկաների երեխաների եւ հղի կնոջ ներկայությամբ, որը փորձել է պաշտպանել ամուսնուն, եւ որի որովայնը ցանկացել են դանակով պատռել որպեսզի պարզեն, թե երեխան ինչ սեռի է: Մայրսի 23-ին նույն Արփագետիկ գյուղի մոտ սպանվել է ենթասպա Իվան Անատոլեւիչ Ստարոժիցկին, որը փորձել է ընկերների հետ գյուղը պաշտպանել օմօնականներից, եւ ինքն էլ սպանվել է անյտեղ: Ահա սրանք են այն սպանությունները, որոնց մասին հիմա կարող եմ ասել:

Կլիգման.- Լեւոն Հրանտի, մեկ անգամ եւս ասացեք սպանությունների ճշգրիտ օրը եւ ինչ հայտնի է ձեզ : Արդյո՞ք այդ մարդկանց սպանությունների փաստերի առթիվ քրեական գործեր հարուցվե՞լ են, եւ սպանված մարդկանց մեջ արդյո՞ք չեն եղել այնպիսիները, որ զենք են ունեցել եւ փորձել են ինչ որ դիմադրություն ցույց տալ զորքերին, օմօնին:

Մելիք- Շահնազարյան.-Արփագետիկ գյուղում, որտեղ չորս ծերունիներ են սպանվել, ամենաերիտասարդը՝ Կարապետյան Իննան, 62 տարեկան է եղել: Անուշավան Գրիգորյանը ավելի երիտասարդ է, 40 տարեկան: Նրան սպանել են տանը, եւ ինչքան ինձ հայտնի է, այդ տանը զենք չի գտնվել: Ենթասպա Ստարոժիցկու սպանության առթիվ ես կարճ խոսեցի: Ինչքան ինձ հայտնի է, Գետաշենի եւ Մարտունաշենի սպանություններից բացի մնացած բոլոր դեպքերի առթիվ քրեական գործեր են հարուցվել:

Կովալյով.- Շնորհակալություն, որ ժամանակ եք կորցրել, որ ներկայացել եք: Դուք մեզ օգնեցիք:

Երբ երկուսը դուրս եկան Գերագույն խորհրդի շենքից, բարձր տրամադրություն ունեին: Նրանք հասկացան, որ իրենց տված ցուցմունքներ կարեւորություն ունեն, եւ ինչ որ տեղ կարեւոր արձագանք կունենան:

Հուլիսի 19-ին պատվիրակությունը «Ռոսիա» ռեստորանում նստած է ու նշվում է Մաքսիմ Միրզոյանի ծննդյան օրը: Բայց այդ օրը ավելի շատ հիշարժան էր նրանով, որ Գորբաչովը վերադարձավ Մոսկվա: Տեղեկությունը լսեցին հեռուստատեսությամբ, հենց ռեստորանում նստած:

...Հուլիսի 20-ից, վերադարձի հաջորդ օրը վերսկսվեցին գյուղերի ռմբակոծումը եւ հայերի բռնատեղահանումը Էրքեջ, Բուզլուխ, Մանաշիդ գյուղերից...Իսկ պատվիրակությունը դեռ երկրի նախագահի հետ հանդիպման հույս էր փայփայում:

Հուլիսի 29-ին պատվիրակությանը ընդունում է ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Պուգոն: Հանդիպմանը ներկա էր ՆԳՆ զորքերի հրամանատար Շատալինը:

Շմավոն Պետրոսյանը ներկայացնում է իրավիճակը եւ իր խոսքը ավարտում հռետորական հարցադրումներով.

- Ես չեմ հասկանում, ինչո՞ւ է այս ամենը կատարվում, ինչո՞ւ են դատարկվում հայկական գյուղերը, ինչո՞ւ են մարդիկ բռնատեղահանվում-քշվում իրենց հարազատ վայրերից:

Պուգո.- Կա ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Սերգեեւիչ Գորբաչովի հրամանը Լեռնային Ղարաբաղի տարածքը ազատել անօրեն զինված խմբավորումներից, ավազակներից, գրոհայիններից...

Շմավոն Պետրոսյան.- Գրոհայիններից...ես դա հասկացա, բայց ես խոսում եմ խաղաղ բնակչության մասին, որոնց բռնի տեղահանում են...

Պուգո.- Լեռնային Ղարաբաղում չկան խաղաղ բնակիչներ, այնտեղ միայն գրոհայիններ են:

Շմավոն Պետրոսյան (զարմացած, աչքերը զարմանքից լայն բացած).- ընկեր Պուգո, ես եւս գրոհայի՞ն եմ, ես... ես... գրոհայինի՞ նման եմ...

Պուգոն նորից է կրկնում.

-Ղարաբաղում չկան խաղաղ բնակիչներ, այնտեղ բոլորը գրոհայիններ են:

Շմավոն Պետրոսյանը չի իմանում ինչ պատասխանի եւ խորհրդային-կուսակցական պատասխանատու պաշտոններ վարած, դաստիարակությամբ եւ վարքով խիստ կոմունիստ, կոմունիզմ կառուցողի կոդեքս յուրացրած մարդու կարկամած վիճակից, անեծքի պես հուսահատ դուրս է թռչում խոսքը.

- Ընկեր Պուգո, դուք չե՞ք վախենում Աստծո դատաստանից...- Սա

պատեպատ խփվող մարդու հուսահատ ճիչ էր, որ փակել տվեց խոսակցությունը:

-...Ես ձեզ այլեւս ասելիք չունեմ: Վերջ: - Պուգոն, երկրի ներքին գործերի նախարարը, անսահման իշխանություն ունեցող մարդը, որի հրամանով ռմբակոծվում են հայկական գյուղերը, այդ վայրկյանին իրեն անզո՞ր զգաց արդարություն որոնող այս մարդկանց դիմաց, թե՞...

-Ավազակ, ավազակի մեկը,- երբ դուրս եկան շենքից, քթի տակ մրմնջում էր աշխատանքի վետերանը եւ երկար ինքն իր մտքերի հետ էր: Պատվիրակության անդամները չկարողացան ջոկել Պուգոն իսկապե՞ս համոզված էր, թե Ղարաբաղում խաղաղ բնակիչ չկա, թե դա հարցից խուսափելու լավագույն ձեւն էր...

Իսկ Գորբաչովի խոստացված հանդիպումը չկար ու չկար: Օգոստոսի 14-ին պատվիրակությանը հետեւյալ կազմով՝ Մաքսիմ Միրզոյան, Հենրիխ Պողոսյան, Կարեն Բաբուրյան, Շահումյանի քաղկոմի նախկին բարտուղար Վլադիմիր Աղաջանյան, նորից ընդունում է Յանաեւը:

Պողոսյանի եւ Յանաեւի կարճ զրույցից հետո, որ Ղարաբաղում իրադրության մեջ ոչինչ չի փոխվել, Միրզոյանը դիմում է Յանաեւին.

- Ընկեր Յանաեւ, Գենադի Իվանովիչ, եկեք մի կողմ թողնենք աստիճանակարգությունը եւ խոսենք ինչպես տղամարդը տղամարդու հետ: Դուք կարո՞ղ եք կոնկրետ ասել, սովետական ղեկավարությունը ինչ մտադրություն ունի Լեռնային Ղարաբաղի հայերի հանդեպ: Միայն մեծ խնդրանք, եղեք ծայրաստիճան անկեղծ:

ԽՍՀՄ նախագահի տեղակալ Յանաեւը կանգնեց.

- Տղերք, սպասեք, ես 5 րոպեից կվերադառնամ:

Այս ընթացքում թեյ եւ քաղցրավենիք են հյուրասիրում: Քիչ անց վերադառնում է Յանաեւը:

-Օգոստոսի 20-ին նախատեսվում է միութենական համաձայնագրի ստորագրումը, 21-ին ես լուրջ խոսակցություն ունեմ Գորբաչովի հետ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ: Ինձ թվում է՝ հնարավոր կլինի գտնել ընդհանուր լուծում: Ես խիստ պահանջ եմ դնելու հիմնախնդիրը լուծել: -Սա արդեն իրենց տեսած նախկին մարդը չէր. ինքնավստահ էր, վճռական, նաեւ ջերմ, հումորով: -Լուծման եղանակը գտնված է, միայն հարկավոր է ավելի վճռական լինել: Մեր զրույցը չտարածեք: Համբերեք եւս մի քանի օր, եւ...բոլորը գոհ կմնան: -Վերջին արտահայտությունը բազմիմաստ էր, որը չէր կարող հասնել ղարաբաղցիների մտքին, եւ ասվեց բազմանշանակ: -Միխայիլ Սերգեեւիչը արձակուրդում է, հանգստանում է, 19-ին է Մոսկվա վերադառնալու: Օգոստոսի

22-ին, առավոտյան ժամը 10-ին ձեզ համար անցագրեր դուրս կգրվեն, եւ դուք Սպասկու դարպասներով կգաք ինձ մոտ, եւ այն ժամանակ ես ձեզ ... - զգացվեց, որ միտքը կիսատ թողեց եւ նոր մտքի անցավ,- այն ժամանակ ծայրագույն անկեղծությամբ եւ բացեիբաց կպատասխանեմ ձեր հարցերին:

Պատվիրակության անդամները այստեղից դուրս եկան ուրախ տրամադրությամբ ու ոգեւորված. Դարաբաղի առաջին «դիվանագետների» մտքով չէր էլ կարող անցնել, որ Կրեմլում պետական հեղաշրջում էր նախապատրաստվել:

Օգոստոսի 22-ին Յանաեւը նստած էր բանտախցում, իսկ խուզարկության ժամանակ նրա աշխատասենյակում գտել էին 2500 զույգ ձեռնաշղթաներ... հնարավոր է, նրանցից մի քանիսը նախատեսված էին Արցախից պատվիրակության անդամների համար... Իսկ երեք օր առաջ, օգոստոսի 19-ին Պուգոյին եւ նրա կնոջը գտել են սպանված սեփական բնակարանում, եւ դարաբաղցի Շմավոն Պետրոսյանը հիշել է իր խոսքը, որ հնչել է անեծքի պես:

ԿՅԱՆՔՍ ԿՏԱՄ ՔԵԶ, ԴԱՐԱԲԱԳ

«Վտանգավորներին» առանձնացնում ու պահում են մեկուսախցերում: Արտաշը 10 հոգու հետ Շուշիի բանտի թիվ 10 խցում է: Վեց օր անընդհատ հանել-ծեծելուց հետո տանում են հարցաքննության:

- Մկրտչյան Արտաշես: Առնոյի եղբա՞յրն ես:
- Այո:
- Ուրեմն, գրոհային ես:
- Ես Ստեփանակերտի բնակիչ եմ: Ամիսը մեկ գալիս էի մերոնց տեսնելու:
- Եղբայրդ ինչո՞վ էր զբաղվում:
- Հայաստանից օգնություն էին բերում՝ բաժանում էր:

Քննիչը նայեց սեղանի մոտ նստած երկու ածդահա ազերիներին, եւ ... մի քանի րոպեից հետո կալանավորը քավալվում էր գետնին: Ձուր շփեցին գլխին ու նստեցրին:

-Օգնություն էր, հա՞, բաժանում,- քննիչը թղթերը բռնեց կալանավորի աչքերի դեմ եւ Արտաշը ճանաչեց. շտաբի գաղտնի փաստաթղթերն էին, որ խուզարկությունից առաջ սովորաբար թաքցնում էին շտաբին մոտ գտնվող պապի՝ Սահակի լքված տան տանիքում: Ուրեմն, շտաբի թաքստոցը հայտնաբերվել է:

-Տեղյակ չեմ: Առաջին անգամ եմ տեսնում:
- Ավտոմատդ որտե՞ղ ես թաքցրել, տեղն ասա:
- Զենքն ինչի՞ս էր: Չունեմ:
- Էդ ո՞նց է, բոլորին զենք է տվել, քեզ՝ չէ՞:
- Իմ մասին հոգ է տարել՝ չի տվել:
- Սա դեռ կարողանում է լեզուն շարժել,-քննիչը հավաքեց թղթերը, իսկ ծեծողները գործի անցան:

Արտաշը հասկացավ, որ արխիվի հետ ազերիների ձեռքն էր անցել նաեւ գյուղի պաշտպանների եւ համարակալված զենքերի ցուցակը:

- Եղբորդ, որ մեքենայով տարել ես եղցահող, ճանապարհին ի՞նչ խոսակցություն է եղել:
- Չեմ տարել: Չեմ տեսել: Չեմ լսել:

Ներս են բերում Առնոյին, որը տեսնելով եղբոր վիճակը, ասում է.

- Դրա մեջ ի՞նչ կա, Արտաշ, ասա, պրծիր...
- Չեմ տարել: Ոչ մի ժողովում չեմ եղել:

10 րոպե անց կալանավորն ուշագնաց փռված էր գետնին, եւ տնքոց էլ չէր լսվում: (...Մեկ տարի մեկ ամիս հետո, երբ Արտաշն ազատվեց գերությունից, իջավ ծորը, որտեղ տնից 200մ հեռավորության վրա իրենց

բանջարանոցում, աղբյուրի մոտ, մոշի թփի տակ ցելոֆանե տոպրակի մեջ թաքցրել էր ավտոմատը, հանեց ու զինվորագրվեց հայրենիքի պաշտպանությանը):

Դուռը բացվեց, եւ մի մարմին թրմփաց գետնին: Տղաներն իմացան, որ Ստեփանակերտից շատ մարդ են բերել: Խցում լռություն տիրեց, մի՞թե վերջ Ղարաբաղին մտածում էին տղաները: Արտաշին նորից տարան հարցաքննության:

- Սարգիսին, Խաչատուրին, Անդրանիկ Հարությունյանին ճանաչո՞ւմ ես,- Բաքվից քննչական նոր խմբեր էին եկել, եւ հարցաքննողը հատուկ գործերի գծով քննիչ Փիրմամեդովն էր:

- Ճանաչում եմ: Գյուղում տեսել եմ,- տղան հասկացավ, որ հրաժարվելն իմաստ չուներ:

- Նրանց հասցեներն ասա:

- Չգիտեմ: Նրանց հետ մտերմություն չեմ ունեցել:

- 1990-ի հունվարին որտե՞ղ ես եղել, երբ Իրիչանի ոչխարները քշել են:

- Ստեփանակերտում:

- Իսկ Կանաչ Թալան վառելու ժամանա՞կ...

- Ստեփանակերտում:

- Լաչին-Շուշի ավտոբուսները ովքե՞ր են քարկոծել: Գուցե դրան է՞լ ես անտեղյակ:

- Ես միայն հյուր էի գնում մեր տուն՝ հարազատներիս տեսնելու:

Արտաշին զարմացրին այդ օրվա հարցաքննության մեղմ տոնը, գնդապետի բարեսիրտ վերաբերմունքը, որի պատճառը հաջորդ օրը պիտի իմանար:

Ավանեսյան Ալյոշային կռացրին, որ հարվածները շեշտակի իջնեն մեջքին, իրենք բարձրացան սեղանի վրա եւ խփում են դագանակներով: Երկու ժամ անց տարան քննիչի մոտ.

- Գրոհայի՞ն ես: Կարաբին ունե՞ս:

- Ոչ: Խոզապահ եմ:

- Իսկ եթե ձերոնցից կանգնեն եւ ասեն՝ ունես:

- Որ չունեմ, ո՞նց կասեն:

Քննիչը դարակից հանեց անուն-ազգանունների մի երկար ցուցակ եւ հրեց կալանավորի կողմը:

- Կարդա: Բարձր:

- Ավանեսյան Ալյոշա: Կարաբին՝ Նոր Հաճնից:

- Համառությանդ համար՝ հիմա կստանաս:- Երկու ժամից հետո նորից կանգնած է քննիչի առաջ:

- Ձենք էիր պահում:

- Դե, գողությունը շատացել էր...

- Գրիր,- քննիչը թելադրում է,- Մկրտչյան Առնոն կարաբինը տվել է, որ ազերի սպանեմ... Սպասիր, անբնական է ստացվում:- Գրիր՝ զենք եմ վերցրել ազերիներից պաշտպանվելու համար,- ինքն իրեն շտկեց քննիչը:

- Իսկ հիմա՝ կարաբինի տեղը:

ՈւԱԶ-ը շարժվեց դեպի Հին Շեն: Կալանավորից բացի մեքենայում 6 հոգի են: Ծեծում են՝ հենց ընթացքի մեջ:

- Հերիք է, հալից ընկավ: Լուսանկարելու համար թողեք տեսքը մի քիչ տեղը մնա,- միջամտեց երիտասարդ քննիչը:

Անտառի ծայրում, ֆերմայի մոտ, քարը շրջեց:

Չըխկ: Չըխկ,- լուսանկարում են:

Նորից տանում են հարցաքննության:

- Ձենքի պահեստի տեղը:

-Չգիտեմ,- կալանավորը չէր ստում:

-Ճանաչո՞ւմ ես Առստամյան Գառնիկին:

-Ճանաչում եմ:

-Խոստովանել է, որ Եղցահողի տակ ազերի անասնապահին միասին եք սպանել:

-Հնարավոր չէ, նման բան չի եղել:

-Դատական փորձաքննությունը պարզել է, որ քո կարաբինի փամփուշտն է:

-Հնարավոր չէ:

-Հիմա կխոստովանես,-քննիչը վեր կացավ,-մինչեւ հիմա ստացածդ մանկական խաղ է եղել:

Կանգնեցրեց պատի դեմ: Փայտե մի ձող առավ եւ սկսեց խփել գլխին: Հարվածները կամաց-կամաց գնալով ուժեղանում եւ արագանում են: Կալանավորն արդեն ցավ չէր զգում: Նրան թվաց, թե գլուխը սկսեց ուռչել: Գիտակցությունը մթագնեց:

- Հերիք է, կմեռնի, մեր գահլեն են տանելու,- մշուշապատ նրան հասավ բժշկի ձայնը:

- Ես ոչ ոքից չեմ վախենում, սա պիտի խոստովանի,-քննիչն էր:

- Անմեղ եմ: Կյանքում մարդ սպանած չկամ,-ուռած լեզուն մի կերպ շարժելով կնկնաց Ալյոշան:

- Իսկ եթե ազատ արձակենք, կարո՞ղ ես օգնել մեզ:

- Ինչպե՞ս,- նվաղած հարցրեց կալանավորը:
- Եթե մարդ սպանեն, հայտնես:
- Ես իմ քաղաքացիական պարտքը կկատարեմ:
- Ադրբեջանի՝ քաղաքացու պարտքը,-շեշտեց քննիչը:
Կալանավորի գիտակցությունը նորից մթագնեց:
Հաջորդ օրը՝ նորից քննչական մեկուսարան:
- Ճանաչո՞ւմ ես Խաչատրյան Մելսիկին:
- Համագյուղացիներ ենք:
- Որտե՞ղ էր աշխատում:
- Պանրի արտադրամասում:
- Զարմանալի է: Եթե գրոհային չէ, ինչո՞ւ է հրաժարվում սրան ճանաչելուց,- քննիչը դիմեց կողքի նստածին:
- Կարդա,- մի թուղթ մեկնեց Ալյոշային:
Տառերը հայերեն են, բայց հնարավոր չէր կապակցել:
Քննիչները հռհռում են:
Մելսիկին խուց բերեցին՝ այլանդակված, կիսամեռ: Ալյոշան մոտ քաշվեց:
- Համառելդ ի՞նչ իմաստ ուներ:
- Կարծում էի՝ չպիտի ասեմ,- ու կսկծաց: Կալանավորին կախել են առաստաղից, ոտքերը իրարից հեռու. մի ժամ գանահարել ու խոշտանգել են: Այս վիճակում էլ ստիպել են գրել, որ ճանաչում է:
Մեկը բացեց ակնատը: Ոստիկանության աշխատակիցն էր: Ծխախոտ մեկնեց:
- Ո՞վ ես:
- Մսխեթցի թուրք: Հիմա թեյ եւ հաց կբերեմ,-քիչ հետո վերադարձավ:
- Հասցեդ ասա, Շաքիր, լավությանդ տակից դուրս կգանք,- ասաց Ալյոշան:
- Ստված տեսնում է եւ դատում: Ես այստեղ օտար եմ՝ ոնց որ դուք:
- Չեմ դիմանում,- խցում գոռում ու թավալվում է Ալյոշան:
Գագիկը գրկեց նստեցրեց.
- Քեզ ի՞նչ է եղել: Մի քանի ամիս կնստես, բաց կթողնեն: Բա որ իմ տե՞ղը լինեիր:
- Ուզում եմ հիշել տղաներիս դեմքը, չեմ կարողանում: Հո չե՞մ խելագարվում, Գագիկ:
- Պինդ կաց, քեզ հավաքիր, որ դիմանաս: Ես չեմ վախենում, գիտեմ որ գնդակահարություն են տալու, դատն է ծանր նստելու հոգուս, ծառրելու են, ստորացնելու են,: Մտածում եմ՝ ինձ ոնց պիտի պահեմ,- Գա-

գիկը վեր կացավ, իր բաժին հացն ու շաքարը հանեց եւ ստիպեց ընկերոջն ուտել: Ալյոշան ուտում էր, իսկ Գագիկը դեռ իր մտքերի հետ էր:

Շուշիի բանտում գտնվելու 25-րդ օրն էր: Եղբայրներն իրար չէին տեսնում: Միայն ծեծի ձայներն էին լսվում. Արտաշին խցում ծեծում էին, Առնոյին դիտմամբ միջանցքով տանում կամ հակառակը: Առնոյին ներս բերեցին քննչական սենյակ: Երկուսի վրա էլ հալ չկար՝ ոսկոր ու կաշի:
- Մոտեցեք, իրար ձեռք սեղմեք, ինչքան ժամանակ է իրար չեք տեսել,-ասաց գնդապետ Ֆիրմամեդովը:
- Ո՞նց ես,- ձեւական հարցրեց Արտաշը՝ շատ լավ հասկանալով հարցի անհեթեթությունը:
- Ինչպես տեսնում ես,-մի բան ասած լինելու համար պատասխանեց Առնոն:
- Կարող եք իրար հետ զրուցել:
Եղբայրների լռությունը խախտեց քննիչը.
- Արտաշին ազատում ենք, ասա, թե իրեն ինչպես պիտի պահի:
- Որ գնաս, Անդրանիկի, Սարգիսի եւ Խաչատուրի հասցեները կհայտնես,- ասաց Առնոն: Իսկ Ֆիրմամեդովը Բաքվի իր ծառայողական հեռախոսահամարը գրում ու մեկնում է Արտաշին: Արտաշը նայում է եղբորը ու հասկանում, թե ինչ պիտի ասի:
- Կիմանամ՝ կզանգեմ:
Գնդապետը կանչեց քննիչ Բաղիրովին, որը 20 րոպե ռուսերենով ինչ-որ բան էր՝ գրում, հետո մի սպիտակ թուղթ է դնում Արտաշի առաջ,- ստորագրիր եւ ազատ ես:
- Կարդամ, հետո,- ասաց Արտաշը:
- Եղբորդ հետ պիտի որ պայմանավորված լինեք:
- Հա, պիտի գնամ հասցեներ ուղարկեմ:
- Հենց դա է գրած, ստորագրիր:
- Կարդամ, հետո,-պնդեց կալանավորը:
Բաղիրովը թղթերը թափով հավաքեց դրեց թղթապանակի մեջ.
- Մենք քեզ լավություն էինք ուզում անել՝ չուզեցիր: Ստածեցինք եղբայրներից գոնե մեկին բաց թողնել: Վերջին անգամ եմ ասում՝ լավ մտածիր, ստորագրո՞ւմ ես, թե չէ:
Արտաշը լուռ էր:
- Ստիպված ես եղբորդ հետ Բաքու գնալ:
Կալանավորներից մեկին, հասկանալի է, դիտմամբ, «Բակինսկի բանչի» թերթի հուլիսի 20-ի համարը տալիս են, որ խցում կարդան: Տպագրված էին Նաբի Խազրու «Սալաթտին» պոեմից հատվածներ եւ

մի լուսանկար եղցահող գյուղի համայնապատկերով ու մակագրությամբ. «Սարերի լանջերում փռված այս գյուղը Սալաթտնքենդն է: Մեր ցավի, մեր հպարտություն Ասկերովայի անունը այս տներում է, այս փողոցներում, հենց Ղարաբաղի օդի մեջ...»:

Գառնիկին տարան հարցաքննության:

- Մեղադրվում ես սպանության մեջ:

- Դուք ապացույցներ չունեք:

- Ավազակությունը եւ ազգամիջյան թշնամանք բորբոքելն էլ հիմք են, որ ժամկետդ երկարացնենք, բանտում փտես:

Երկու ամիսն անցել էր, եւ Գառնիկը հասկացավ, որ ազատության դռները փակ են իր առաջ: ԲԻՏ-ի արխիվը, ամբողջ փաստաթղթերը, Առնոյի ձեռքով գծած ԲԻՏ-ի սխեման, խորհրդի բոլոր անդամների անունները, դաշնակցության ծրագիրն ու կանոնադրությունը, ուղղաթիռների չվերթների համար անցագրի ձեւը, լուսանկարներ Առնոն ֆիդայիների հետ, Հայաստանից եւ Ստեփանակերտից Բերդաձոր եկած ջոկատների եւ տղաների անուն-ազգանունները մեկ առ մեկ,- այս բոլորը որպես ապացույց բերվում ու քննության ժամանակ դրվում էր սեղանին:

Հուլիսի վերջին օրերն են: Բաքու գնացող «Սեւ ագռավ»-ի մեջ 17 բերդաձորցիներն են եւ քաջավանցիները Նորայրը, Ալիկը, Լեւոնը... Առնոն բարձրացավ աչքը հպեց դռան ճեղքին:

- Մագե կամրջի մոտ ենք, տղերք,- ասաց կարոտով, կարծես կանխազգում էր, որ հետդարձի ճանապարհ չի ունենալու:

Տղաներին տանում են Շուվելյանի բանտը:

Առնոյին շպրտեցին խուց: Ընկավ ծնկների վրա, գլուխը հակվեցած: Յուրան ու Էմիլը քաշեցին մի անկյուն, որ դիտանցքից հեռու լինի, հանեցին բզկտված շորերը եւ զգույշ մերսում են: Այսքան ժամանակ նրան նման հոգեկան վիճակում չէին տեսել:

- Չկա...Բերդաձորը չկա... Մեր տանը, իմ գրասեղանի վրա քուրդ կինը ինձ թեյ տվեց: Քննիչը թույլ չէր տալիս: Նա ասաց՝ իմ շեմից ներս մտնողին պիտի հյուրասիրեմ: Յուրա, դու հասկանո՞ւմ ես... ասաց՝ իմ շեմից:

- Դու քեզ նման չես, Առնո, ուշքի եկ, ի՞նչ ես քեզ կորցրել:

- Ամեն ինչ կորած է...

- Առնո, մի քանի ամիս առաջ մտքովդ կանցնե՞ր, որ անառիկ Բերդաձորը կհանձնվի:

- Ի՞նչ ես ասում, եթե իմանայինք...

- Դե, ուրեմն, ի՞նչ գիտես թե մի քանի ամիս հետո ինչ է լինելու,- հուսադրեց Յուրան:

- Ես ինձ չեմ ներում: Ոնց խաբվեցինք... Ազերին չէր կարող ոտք դնել: Կռվեինք, ես խայտառակությունը չէր լինի:

- Առնո, կտեսնես, Բերդաձորը նորից մերն է լինելու:

- Թող ես չլինեմ, միայն թե Բերդաձորը...

- Փախչելու հնարավորություն կար,- Առնոն կամաց-կամաց թոթափում էր սրտի ծանրությունը:- Իրենք նստեցին հաց կերան ճանապարհի վրա: Աղբյուրից էն կողմ ծորն էր, անտառը, բայց որ պատկերացրի մերոնց վիճակը բանտում ինձ հետ պահեցի:

Հանկարծ աչքն ընկավ հնամաշ, լոշտակ կոշիկներին ու ծիծաղը եկավ: Կամրջի վրա արձանագրում էին մեղադրյալի ցուցմունքները: Արտասահմանյան կոշիկները հանեցին, հագցրին մի ազերի հովվի:

- Բայց սրանք ավելի հետաքրքիր են,- նայեց ու ծիծաղը բռնեց: Հետո անցած գնացած ծիծաղաշարժ դեպք հիշեց ու պատմեց, թե ինչպես ֆիզիկայի ժամին ջրին մանգանակալիական բյուրեղի չնչին քանակություն է խառնել, երեխաներին հավատացրել, որ լուծույթը հրաշագործ հատկություն ունի, որ խմողը արտակարգ ունակություն է ձեռք բերում: Երեխաները խմել-ներշնչվել են, եւ արդյունքը քառորդի վերջում բացառիկ էր: Ամբողջ գիշեր հանգիստ չգտավ:

Լույսը բացվելուն պես եկան Գրիգորյան Արթուրի հետեւից: Բերեցին մի քանի ժամից հետո: Գլուխը զարկում էր պատերին, մարմինը գետնով տալիս, թավալվում:

- Տղայիս դեմ կեղծ վկայություն տվեցի: Նա էդ օրը տանն է եղել, չի մասնակցել Կանաչ Թալայի հրկիզումներին: Էլեկտրական հոսանքը միացրին, չդիմացա ստորագրեցի:- Ասում ու ոռնում էր, ու ձայնը գայլի ոռնոցի էր նման: Տղաները սսկվել-մնացել էին, չէին կարողանում հանգստացնել հորը:

Քիչ անց ներս շպրտեցին Մանվելին, որ ուշագնաց էր: Ոտքերից կախել էին, ծեծել այնքան, մինչեւ որ ինչ-որ թղթեր ստորագրի:

Բակում աշխատում են: Գերանի ծայրերից բռնել էին Խորենն ու Ստեփանակերտցի Սլավիկը:

- Որտեղացի՞ ես:

- Էջմիածնից, արմատներով Ղարսեցի:

- Որտեղի՞ց են վերցրել:
- 1990-ին էր, հոկտեմբերին, Բերդաձոր-Ստեփանակերտ ավտոբուսը շրջապատեցին, վերցրին:
- Քանի՞ տարեկան ես:
- Որքա՞ն կտաս:
- 40-45:
- 24 տարեկան եմ,- Խորենի դեմքին դառը քմծիծաղ հայտնվեց:
- Վերցնելու պահին շորերիս մեջ եզրակարում թաքցրած մի նշտար ունեի, ավելի լավ չէ՞ր լինի... քան ես...
Ձեռքերը եւ ոտքերը տարածել են խաչի նման, ամրացրել պատին, իրենց ձեռնքերին շոր փաթաթել, որ չցավի եւ երկաթե շղթայով ծեծել են:
Սլավիկը նկատեց երակները ուղղահայաց հատող երկարավուն ձգված սպիները:
- Երբ ամբոխը ներս լցվեց, հասկացա ինձ ինչ է սպասվում, ակնթարթային նշտարը քաշեցի, եւ ... ձեռքս ամբոխի դեմ պահեցի: Արյունը շատրվանեց: Նշտարը պահեցի կոկորդիս, գոռացի, եթե մի քայլ էլ անեք...նրանց արյուն էր պետք, տեսան ու կանգնեցին: Մեռնելն ավելի լավ է, քան ես...
Հսկիչը մոտեցավ ու դագանակը բարձրացրեց: Տղաները լռեցին:

Ադրբեջանի գլխավոր դատախազի առջեւ դրված էր քրեական գործը:
- Անուն, ազգանուն, հայրանուն:
- Դանիելյան Նորայր Էդուարդի:
- Ծննդյան թվական:
- 1967:
- Մասնագիտությունդ:
- Մանկավարժ: Մաթեմատիկայի բաժին:
- Սա մանկավարժական ինստիտո՞ւտ է, թե՞ ռազմական ուսումնարան...- Գլխավոր դատախազը ձեռքը զայրացած զարկեց սեղանին:
Մինչ այդ հարցաքննության էին մտել Միերը, Արթուրը, Ալիկը, մանկավարժականի մյուս կադրերը, եւ դատախազի համբերության բաժակը լցվել էր: Հետո Նորիկը խցում պատմում էր, քահ-քահ ծիծաղում, ծիծաղից ցնցվում. «Սրամիտ է տղերք, ես ու իմ Աստված, սրամիտ է»:
Նորայր Դանիելյանը կալանվել էր նաեւ 1989 թվականին: Գահիրովն հիշեցրեց: Տղան հիշեց.
Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը փակվել էր

Պայթուցիկ նյութերով չորս շշեր Նորայրը թաքցրել էր զուգարանում եւ գնացել Մարտակերտ: Վարուժանը, Իսահակը, Աշոտը պատահական հայտնվեցին սենյակում: Լույսը վառած զրուցում էին: Փողոցում պարեկները նկատում ու բարձրանում են:
- Ձեռքներդ վեր: Դեպի պատը:
Խուզարկություն: Տղաներին կալանում եւ տանում են Խոջալլուի «ֆիլտրման» կետ: Երեկոյան Նորիկը գալիս է Ստեփանակերտ, իմանալով կատարվածի մասին, գնում ներկայանում է Մոսկվայից եկած հատուկ քննչական խմբի աշխատողին:
- Շշերը ես եմ թաքցրել:
Քննիչի աչքերը զարմանքից լայնանում են:
- Նման շշեր օգտագործվել են Կրկժանում ազերիների տները հրկիզելու ժամանակ:
- Այո: Բայց Սումգայիթից հետո: Ես եմ պատրաստել, որ թույլ չտանք Սումգայիթը այստեղ էլ կրկնվի: Աղջիկները վախենում են, նրանց պաշտպանելու համար է, եթե...
- Եթե ի՞նչ...
- Եթե հարձակվեն:
- Ցույցերին մասնակցո՞ւմ էիր:
- Ոչ: Չեմ մասնակցել,- Ստեց տղան, չուզենալով անկեղծության չափն անցնել: Նա զգում էր քննիչի համակրանքը:
- Չպարծենաս, թե ինձ խաբեցիր: Իմ տղան էլ ուսանող է: Դու մեծ մարդ ես դառնալու, գիտնական կամ...Գուցե եւ հանցագործ էլ դառնաս,-քննիչը խոսում էր կես կատակ, կես լուրջ:
Նորայրը 10 օրվա կալանքից հետո ազատ արձակվեց:
Գահիրովի խիստ ձայնը.
- Մեր հացը ուտում եք, մեր ջուրը խմում, մեր դեմ պայքարում:
Նորիկ.- Ես այնտեղ եմ ծնվել:
Գահիրով. - Մենք Ղարաբաղի գյուղերը վերացնում ենք, դու նոր գյո՞ւղ ես սարքում:
Նորիկ.- Խաղաղ ապրելու համար:
Գահիրով.- Գյուղի անվան տակ ավազակախումբ ես պահել: Բա զենքե՞րը, գլխավոր ավազակ:
Նորիկ. - Ձենք ենք պահել, որ կարողանանք հանգիստ դաս տալ:
Մեղադրանքը. ոստիկանության աշխատողներին դիմադրություն ցույց տալու, անօրեն զենք պահելու, ավազակության, բանտիտիզմի, ազգամիջյան կրքերի բորբոքման համար... 10 տարվա ազատազրկում:

Բանտի հսկիչները արտակարգ խանդավառության մեջ են:

- Մերոնք նոր գյուղեր են վերցրել: Օրերի հարց է մնացել, Ղարաբաղի վերջը եկել է,-ասաց հսկիչը եւ փակեց ակնատը:

«Սոբեսեդնիկ» պարբերականից պատռված մի կտոր էր ընկել կալանավորների ձեռքը, որտեղ գրված էր «Կոլցո» ռազմագործողության մասին:

- Տղերք, կգժվեմ, եթե իմ Մարտակերտը վերցնեն:- Տարուց ավելի տղաները բանտում էին: Նորիկը բռնեց գլուխը:- Տեսնես ինչ է կատարվում դրսում: Մի՞թե պայքարի բոլոր միջոցները սպառվել են: Բայց չէ՞որ մեր անտառները, մեր աշխարհագրական դիրքը հնարավորություն է տալիս երկար պայքարելու:

Հանկարծ դրսից հառաչանքների եւ մուրճի հարվածների խուլ ձայներ լսվեցին: Նորիկը ընդոստ վեր թռավ:

- Տղերք, նոր էտապ են բերել:

Խցի դուռը բացվեց, եւ խոշտանգված մի մարմին շպրտեցին ներս: Բերդաձորցի Պետրոսյան Հրաչիկն էր, որին Նորիկը շատ լավ գիտեր, ճանաչում էր, երբ ուսանողական խմբով գնացել էին օգնելու ինքնապաշտպանությանը, Անվախ Հրաչը... Տղաները ուշքի բերեցին, եւ մի քանի ժամից հետո սկսեց պատմել իրենց գլխով անցածը: Որ ազերիների ձեռքին են Հադրութի շրջանի 14 գյուղերը, որ ռազմագործողությունը սկսվել է Գետաշենից եւ Մարտունաշենից: Որ Ղարաբաղի ամբողջ տարածքում զանգվածային ծերբակալություններ են կատարվում: Հրաչիկն ասաց, որ խորհրդային զորքերի դեմ անզոր գտնվեցին:

- Հասկանո՞ւմ եք, տղերք, Ղարաբաղը չլինի՝ ես կգժվեմ:- Նորիկը պատեպատ էր խփվում: Գիշերը վրա հասավ, եւ գրգռված նյարդերին քունը հանգստություն չբերեց.

Հայրը չոքեց դեմը: Ձեռքերի վրա պահած ուներ սեւ, կաշվե կազմով գիրք: Տղան կոպերը զոռով բացելով կարդաց տառերը՝ «Աստվածաշունչ»:

- Վերցրո՞ւ...վերցրո՞ւ...- Հոր ձայնը դարձավ պաղատագին:

- Կվառեն, ափսոս է, ախր:

- Վերցրու, տղաս: Այստեղ էլ են վառում:

Տղան ձեռքը մեկնեց: Մի ուրվական կանգնեց հոր ու իր միջեւ: Մի աչքը կույր, մութ խոռոչ, մյուսը մեծ, կլոր, եզան աչքի նման: Ուրվականը հանեց ձեռնոցը եւ շպրտեց: Տղան օդի մեջ բռնեց ձեռնոցը ու շպրտեց ուրվականի երեսին:

- Հագիր ձեռնոցներդ: Տեսնում եմ՝ եղունգներիդ տակ արյուն կա:

Ուրվականը սատայանորեն խնդաց:

- Դու ո՞վ ես, բարեկա՞մ, թե թշնամի,- հարցրեց Նորիկը:

- Բարեկամ, սիրելիս, բարեկամ:- Ու ձեռքը դրեց պարզած «Աստվածաշնչի» վրա: -Մենք հետո՝ կհանդիպենք: Ո՞ւշ կհանդիպենք...

- Դու ո՞վ ես,- ձեռքը մեկնեց ուրվականի երեսից քաշելու դիմակը, բայց եղունգները խրվեցին տախտակամածի վայտի մեջ: Քրտինքի սառը կաթիլները պատել էին Նորայր Դանիելյանի ճակատը:

Նույն տեսիլքը պիտի այցելեր նրան 1992 թվականին, երբ հրամանատար էր, երբ Չլդրանի բարձունքում գլխից ու մեջքից վիրավոր պառկել էր:

Տղաներին հերթով հանում էին ու ստիպում չոքեչոք քայլել:

Նորիկը քայլում է իր սովորական օրորուն քայլվածքով: Հսկա մուրճը իջնում է մեջքին: Հարվածից գլորվում է ու ռետինե գնդակի պես վեր ցատկում:

- Չոքիր, ասում եմ,-հսկիչը կատաղած նորից է հարվածում:

Նորիկի քայլվածքը դառնում է ավելի ծիգ:

- Հետդարձ:- Մուրճը նորից իջնում է մեջքին: Նորիկը հաշվում է քայլերը ու հասնում խցին:

Հերթով տանում են՝ Արարատին, Ալիկին, Կարենին, Արմենին... Ոչ ոք չոքած չի քայլում: Խցի մեջ լսվում են տնքոցներ ու հառաչանքներ:

Նորայրը ձեռքերով սեղմում է գլուխը.

- Կդիմանա՞ն տղաները...Գուցե ենթարկվե՞ն...

- Ի՞նչ գիտես՝ չեն դիմանա, թող ամեն մարդ իր տեղը պատասխան տա,- վրդովված ասաց Լեւոնը, բայց մտքում ինքնիրեն մտածում էր կդիմանա՞ արդյոք:

Հիշեցին. ուսանողական երիտասարդական միության դռնփակ նիստը:

- Եթե կա մեկը, որ զգում է՝ չի դիմանալու, թող իր մեջ կամք գտնի ու հեռանա: Պատերազմը մեզ համար արդեն սկսված է եւ առջեւում մեծ փորձություններ են սպասվում,-ելույթն ավարտեց Նորայրը: Նա կասկածում էր Արմենի փխրուն խառնվածքի վրա, բայց Արմենը եւ հոգով, եւ ֆիզիկապես շատ պինդ դուրս եկավ:

Հերթը Վիկտորինն էր: Քայլում է անհողդողդ, դեմքին իրեն հատուկ մի տեսակ սառը, բթավուն արտահայտությամբ:

- Չոքիր, գյավուր:- Հսկիչի հարվածից Վիկտորի ձեռքը կոտրված կախվում է: Խցի մեջ տնքոցներ են լսվում, իսկ Նորիկի դեմքին՝ իրեն

հատուկ հմայիչ ու հաղթական արտահայտությունն է: Ծոծրակային մասում ուժեղ ցավ է զգում: Արտիառնոց, գլխապտույտ, ականջներում վշշոց, եւ աչքերը փակում է.

Ուրվականը նորից մոտենում է: Ապակեփայլ աչքերով, նույն սեւ թավշե ձեռնոցներով: Նորայրը հեռվում նկատում է հոր՝ Էդուարդի խած աչքերը: Հոր մոտ կանգնած է մայրը՝ նազելի մի կին, բարի, հրեշտակի կերպարանքով. «Զգույշ, որդիս, զգույշ»,- ու մոր կերպարանքը կոտորակվում, փշրվում է: Որտեղի՞ց հայտնվեց եղբայրը՝ Նելսոնը ու ձեռքերը մեկնեց Նորայրին:

- Առ քո ուզածը, եղբայրս, բլուզ եւ գուլպաներ:
- Բայց ինչո՞ւ երկուսն էլ սեւ,- հարցրեց:
- Դո՞ւ չէիր խնդրել:
Ուրվականը մատը տնկեց.
- Դո՛ւ...Դո՛ւ...Դո՛ւ...Դու դիվային հմայք եւ ուժ ունես:
- Դու առաջինը չես, որ նկատել ես:
- Բայց ես վերջինը կլինեմ, որ կտեսնեմ քեզ այնտեղ գնալուց առաջ:
- Որտե՞ղ:
- Երկնքի արքայություն:
- Բայց ես արդեն ճամփա եմ ընկել:
- Ոչ: Սա այն ճանապարհը չէ: Այստեղից դուրս ես գալու:
- Համոզվա՞ծ ես:
- Համոզված եմ: Դու դիվային կամք ունես: Ես կհետեւեմ քեզ: Ես կկոտրեմ քո կամքը: Քո ուժը: Քո հմայքը:
- Բայց դու թուրք չես:
- Գուշակեցիր, հա՛, հա՛, հա՛... Վերջին վայրկյանդ իմ ձեռքին է...

Տղաներին տանում են արյուն վերցնելու:
Նորայր. - Առաջին կարգի:
Արթուր.- Առաջին կարգի:
Արարատ.-Առաջին կարգի:
Արմեն.- Առաջին...
Լեւոն.- Առաջին...
- Սրանց նայեք: Հատուկ արյուն ունեն: - Հեգնեց ազերի բժիշկը:

Նորայրին տանում են հարցաքննության: Գերմանական «Շպիգել» պարբերականի թղթակիցը.

- Ղարաբաղի հարցի լուծումը ինչպե՞ս ես պատկերացնում, ո՞ւմ կազմի մեջ:
- Եթե ինձնից կախված լիներ՝ աշխարհի սահմանները կջնջեի ու խաղաղություն կհաստատեի՝ գառը գայլի հետ, օձը՝ թռչունի հետ, ամենուր եւ ամենքը՝ խաղաղ, համերաշխ...- Պատասխանեց, հասկանալի է, խուսանավելով, բայց ինքնավստահ, գրագետ ռուսերենով, ինքն էլ զգալով, որ կաշառում է մտքի ու հոգու ներքին մեծ ուժով:
- Հետաքրքիր միտք է,- ասաց գերմանացին ու գրի առավ: Հետո պահանջեց ուտելիք բերել:
- Խնդրեմ: Օգտվեք:- Սկուտեղի վրա՝ նուռ, նարինջ ու խնձոր:
Կալանավորը, որ քաղցած էր արժանապատվորեն հրաժարվեց: Թղթակիցը «Մարլբորո»-ի տուփը դրեց կալանավորի առջեւ: Նորայրը վերցրեց ու գրպանը դրեց: Երեկոյան հսկիչի միջոցով փոխանակեց 10 տուփ «Աստրա»-ի հետ:

Ալիկը սիրում էր վիճել: Արարատը խայծը կուլ է տալիս:
- Շրջապատդ մեծացել է, հա՞,- խայթում է Ալիկը:
- Վերջ, այլեւս չխոսես ինձ հետ:
- Տղաներ, ժողովուրդն այնտեղ ի՞նչ բանի է, դուք այստեղ՝ ինչ:- Նորայրը բոլորի համար հեղինակություն էր, եւ հենց վիճողները միանգամից լռեցան, նա խոսակցությունը շրջեց քաղաքականության կողմ:

Նյարդայնացած քայլում է խցում: Ուրեմն, մտածմունքների մեջ է, տղաները սպասում են, թե ինչ պիտի ասի:
- Տղաներ, ձեւը գտա: Պիտի լողանանք:- Երկրորդ ամիսն է բաղնիք չէին տարել:
Թիթեղյա ամանները դրեցին մարտկոցների վրա, ջուրը գոլացավ, ու տղաները գիշերը թաքուն «լողացան»:
- Սա հո իսկական առողջարան է, տղերք,-մանկականորեն հրճվում է Նորիկը:

Հանել են աշխատացնելու: Ջուգարանի քանդած, կեղտոտ ու գարշահոտ աղյուսները պիտի տեղափոխեն:
Նորայրը մի կողմ քաշվեց: Դագանակը շաչեց մեջքին:
- Պիտի տանես:
- Չեմ տանի:

- Պիտի տանես,- մուրճի տափակ ու լայն բերանը իջավ Նորայրի դեմքին ու քթից արյուն ժայթքեց:

Երկու հսկիչ եւս մոտեցան... եւ կալանավորը թավալվեց գետնին: Մի քանի վայրկյան անց բարձրացավ, սրբեց արյունը, շիտակ ու համարձակ նայեց ավագ հսկիչին՝ չեմ տանի:

- Պիտի տանես: Պիտի տանես:- Հեւում է ազերին, զայրույթից դիմագծերը ծռմռվել են, եւ քրտինքի կաթիլները հոսում են ճակատից:

Կալանավորի մարմինը ջղաձիգ գալարվում է գետնին:

Հսկիչը նստեց տախտակների կույտին ու փնչացնում է.

- Կմեռցնեմ կամ քարերը պիտի տանի:

Առաջածորցի ծերունին չոքեց ազերիի առաջ.

- Խնայիր, նաչալնիկ, չի հասկանում ինչ է անում: Ջահել է:

- Հասկանում է, էն էլ ո՞նց է հասկանում: Չի հասկանում՝ հասկացնել կտամ: Պիտի կատարի ասածս:

- Ես քարերը կտանեմ, բոլորը, գիշերն էլ կաշխատեմ...

Ազերին վեր կացավ՝ մի ծանր փայտ ձեռքին: Միշտ չոքեչոք, ճակատը գետնին կպցնելով կտրեց դեմը.

- Խնայիր, նաչալնիկ, ասածդ կանի, ես պատգարակ կսարքեմ, քարերը կշարեմ՝ ես ու ինքը միասին կբռնենք-կտանենք, քո ասածը կլինի,- ծերունին հնարը գտավ ու զգաց, որ նա այլ ելք չունենալով՝ տեղի է տալիս:

- Քո կամքը կլինի, շեֆ, քո ուզածը, քո ասածը, այ կտեսնես,- չոքած տեղից բարձրանում, ուրախացած արագ-արագ վրա է տալիս ծերունին:

Ազերի քրեականները գիտեին, որ Նորայրը «գրոհայինների» խմբի ղեկավարն է, եւ վերեւից դավագրգռում են աշխատող խմբին:

- Էյ, ի՞նչ եք անում:

- Ինչպես տեսնում եք:- Հպարտ ու արժանապատվորեն պատասխանում է Նորայրը:

Այդ պատասխանի համար հսկիչը «մշակման» է ենթարկում, իսկ առավոտյան կալանավորը իմանալով, թե դրան ինչ է հետեւելու, ատամների արանքից շպրտում է.

- Գիշերը քո վրա գեշ երազ եմ տեսել:

- Ջմերուկ լիներ ուտեինք:- Ալիկի հանգած աչքերի մեջ շող փայլեց:

- Նուռ լինե՞ր:- Երազկոտ ու կարոտով տնքաց Նորիկը:

- Տղերք, խո-րո-ված լիներ,- նվաղեց Վաչիկը:



Հայրենի գյուղում

Աղջիկների հետ

Սահակ պապը թոռան՝ Առնոյի հետ

Մայրը՝ Արփենիկը



Միքայելն ու Արփենիկը փոքրիկ Առնոյի հետ

Զինվորական ծառայության տարիներ





Սաների հետ

Արմո Մկրտչյան

Արթուր Մկրտչյան (շտաբի վարորդ)



Արտաշը զինակցի՝ Զորիկի հետ



Ուսանողության տարիներ

Թիկունքում՝ Վիշապաքարը

Ձախից Անդրանիկ Հարությունյան

Հին Շեն, աշխատասենյակը

Սաների հետ փորձակում են հրթիռը

ԲԻԽ-ի զինանշանը



Անդրանիկ Հարությունյանը
Վարսենիկ տատի հետ

Թթու ջրի մոտ ձախից՝ Արկադի Ասրյան, Անդրանիկ Հարությունյան,
Առնո Մկրտչյան, Յուրի Բարխուդարյան

Վազգեն Սարգսյանը Բերդաձորում

Փորձարկում են ինքնաշեն թնդանոթը. ձախից՝ Առնո, Արմիկ, Շնավոն, Վլադիկ

Ծննդյան տոներ

Ձախից՝ Դավիթ Իշխանյան, Նորայր Դանիելյան



Հրաչիկ Պետրոսյան



Բանտից գրած վերջին նամակը

Հին Շեն, շտաբի առաջ. Տրնդեզ

Սաքոն, Խեչոն շտաբում



Բերդաձորը դրսի աշխարհի հետ կապող կամուրջը, որը ականապատել էին

Նորիկ Մկրտչյան

Ուղղաթիռը օգնություն է բերել



Բոլորը մի պահ լռում են: Ամեն մեկը իր մտքերի հաճույքների հետ էր, ու սպասում էին բանտային ճաշին:

Երկու տարի անց, երբ Նորայր Դանիելյանը Մարտակերտի պաշտպանական շրջանի հրամանատարն էր, Սարգսյան Ալիկը՝ հրամանատարի տեղակալ, Լեւոն Գասպարյանը ԼՂՀ ավտոմոբիլային գումարտակի հրամանատար, Վաչագան Քոչարյանը կենտրոնական պաշտպանական շրջանի առաջին գումարտակի ավագ, Արարատը՝ զինվոր, Ալիկը վիրավոր պառկած էր զինվորական հոսպիտալում, ներս է մտնում հրամանատարը՝ ձեռքին ծմերուկ, նուռ ու մրգեր, որ այն պատերազմական ժամանակներում չէին ճարվում:

- Կարծում ես՝ մոռացե՞լ եմ,- հիշեցրեց Նորիկը եւ մարտական ընկերները խնդացին:

Սպասում էին բանտային ճաշին, իսկ տղաների մտքով որտեղի՞ց անցներ, որ երկու տարի անց պիտի հայտնվեին դերերը փոխված վիճակում:

...Հրամանատար Նորայր Դանիելյանը բոլորին ուղարկեց հանգստանալու: Շարունակական մարտերից զինվորները հոգնել էին, սպասվող մարտերը ավելի կատաղի ու թեժ էին լինելու: Թող շունչ քաշեն, իսկ ինքը կարողանում էր դիմանալ: Կարող էր գիշերներ չքնել, բավարարվել գլուխը սեղանի վրա աչք կպցնելով:

Նորայրը փակվեց հրամանատարական սենյակում եւ մարտական քարտեզը փռեց սեղանին: Այնքան էր տարված, որ չլսեց դռան ճռռոցը: Կիսաբաց դռնից խոշոր սեխանման մի գլուխ ներս խցկվեց, ու պատանեկան խեղճ աչքերը հառվեցին հրամանատարին:

- Հը՞, Զաուր, բա՞ն է պատահել:

Պատանին բացասաբար շարժեց գլուխը:

- Նստիր:- Բարեհաճ ասաց փոխգնդապետը:

Տղան քաշվեց վառարանին մոտիկ, կատվի նման կուչ եկավ ու վիզը ծռած, հայացքը շողոքորթ հառեց իր հովանավորյալին:

-Որեւէ մեկը նեղացրե՞լ է քեզ:- Նորից հարցրեց հրամանատարը, առանց հայացքը քարտեզից կտրելու:

- Ոչ: ոչ:

- Հը՞, ոնց որ քունդ չի տանում: Հարազատների՞դ ես հիշել: Շուտով փոխանակություն կլինի, կգնաս տուն:

Պատանու աչքերը ջրակալվեցին:

- Հրամանատար, մերոնք՝ քեզ, իսկ դու՝ ինձ... Ուրիշ բաներ էլ են պատմել Բաքվի բանտից, ճի՞շտ է, հրամանատար:

- Ճիշտ է, Զաուր,- ժպտաց հրամանատարը:

- Մերոնք քեզ տանջել են, իսկ դու...

Զորամասում զինվորները եւ սպաները գիտեին հրամանատարի ասպետական վերաբերմունքը գերիների նկատմամբ:

Իսկ մինչ այս դեպքերը դեռ շատ ժամանակ կար, տղաները սպասում էին բանտային ճաշին, եւ ադրբեջանական բանտում հազար անգամ մեռնող ու մահից փրկվող Նորայր Դանիելյանը ի՞նչ իմանար, որ 1993 թվականի հոկտեմբերի 18-ին Խնձրիստանի ճանապարհի վրա, գիշերը մահվանը դեմհանդիման պիտի գնար, եւ 26 տարեկան հրամանատարը պիտի ճանաչեր Ուրվականին, որ յուրային էր:

Բոլորին հանեցին աշխատեցնելու, եւ խցում մնացին երկու եղբայրները: Արտաշը մոտ քաշվեց.

- Ինչո՞ւ չփախար, Առնո, ախր կարող էիր:

- Կարող էի... դպրոցի մոտով ձորն անցնեի ու... Բայց ժողովուրդը կասեր՝ փախել է, մեզ անտեր-անտիրական թողել:

- Ժողովո՞ւրդը...- հեգնական ծգեց Արտաշը,- Լաչինում մեկ-մեկ ստորագրություն տվեցին ու դուրս եկան:

- Իմ խիղճը հանգիստ է: Նրանք ստիպված էին:

- Նրանք ազատության մեջ են, միայն դու...- Արտաշը ներքին տվայտանքներն էր արտահայտում, եւ եղբայրը դա շատ լավ էր հասկանում:- Դու դրսում լինեիր՝ բոլորիս կօգնեիր:

- Ես այստեղ պիտի լինեի... եթե ես դրսում լինեի, ինչ- որ մեկն այստեղ, թեկուզ մեկ հոգի, խիղճս հանգիստ չէր լինի:

- Ո՞ւր են դաշնակ ընկերներդ: Ես տեսել եմ, թե ինչ ակնածանքով էին ձեռքդ սեղմում: Գոնե գրած մի տող ուղարկեն, հույս տան...Արանից նեղ տեղ էլ չկա,- Արտաշի ձայնի մեջ հանդիմանություն չկար, չէր էլ կարող լինել:

- Առնո, բայց ինչո՞ւ օգնության չեկան: Դու միշտ ասում էիր՝ մի կրակոց լինի, օգնության են հասնելու: Հայտնի մարդկանց անուններ էիր տալիս: Ո՞ւր էին, ինչո՞ւ չեկան:

- Իմ խիղճը մաքուր է: Իմ սիրտը բոլորի հանդեպ պարզ է:

- Առնո,- Արտաշի ձայնը շշնջոցի վերածվեց,- Բերդաձորը ինչո՞ւ ընկավ: Հրաման տայիր՝ նրանց ձորը կլցնեինք: Մենք քո հրամանին էինք սպասում: Բայց առանց մի կրակոցի...

- Իրավունք չունեի, ինքնագլուխ գործել չէի կարող: Զանգել էի Գորիս ու Ստեփանակերտ, եթե թույլտվություն լիներ...

- Դու տուն-ընտանիք մոռացած, միայն թե զենք հասցնեիր, միայն

թե... Իսկ գյուղում ուրիշ կերպ էին վերաբերվում: Լավ արած, վատ արած՝ նրանց համար միեւնույն էր...

- Նրանք ինձ հետո, շատ ուշ են հասկանալու, դե լավ, Արտաշ, անցածն անցած է, ուրիշ բաներից խոսենք: Աղջիկներիս մի կարգին չտեսա,- Առնոն խոսքը շրջեց:- Անուշիս միայն մեկ անգամ եմ տեսել: Անահիտս, Աստղիկս, Արփիկս տեսնես որտեղ են, ինչ են անում...

- Շտաբի պահեստը լիքը, ընտանիքդ դժվարության մեջ էր,- Առնոն հասկանում էր Արտաշին. եղբայրը ավելի շատ իր ներքին մտածումներն էր բարձրաձայնում ու թեմայից չէր կարողանում կտրվել:

- Ես ուրիշ կերպ չէի կարող: Ժողովուրդը ի՞նչ կասեր...

- Էլի ժողովուրդը...Հիշո՞ւմ ես, հայրիկն ասում էր՝ հետ դառ...

- Սա էր իմ ճանապարհը, Արտաշ, միայն ափսոսում եմ, որ առանց մի կրակոցի Բերդաձորը հանձնեցինք: Սա ինձ վառում-փոթրթում է, հանգիստ չի տալիս: Առանց դիմադրության, առանց կռվի... Ո՞նց խաբվեցի:

Թիվ 2 բանտախցի դուռը բացվելուն պես ոստիկանների դագանակները փնտրում են Առնոյին: Դանիելյան Յուրան աշխատում էր առաջ ընկնել ու հարվածները ընդունել իր վրա, բայց քաշում-շպրտում են մի կողմ:

Դրսում հսկիչը ռետինե մահակը դրեց ձեռքը.

- Խփիր նրան, եւ դա կլինի այսօրվա քո բաժինը:

Սաֆարյան էդուարդը նայեց ընկերոջը ու հայացքով հասկացրեց, որ խփի, որ ինքը կտանի այդ հարվածները, միայն թե նա գոնե այդ օրը ազատվի կտտանքներից, բայց Առնոն շպրտեց մահակը: Հետո մերկացրին ու ծեծելով տարան հարցաքննության: Ժամը 5-ին մոտ քարշ տալով կիսամեռ վիճակում բերեցին: Մի ծեր հսկիչ երեկոյան կողմ գլուխը ակնատից ներս խոթեց.

- Ո՞նց եք:

Ոչ ոք չպատասխանեց: Առնոն ուշագնաց ընկած էր: Մի ժամից հետո հսկիչը ներս մտավ մի բաժակ թեյ ձեռքին, բարձրացրեց գլուխը, գդալ-գդալ խմեցրեց: Առնոն բացեց աչքերը:

- Ճանաչո՞ւմ ես ինձ:

Կալանավորը բացասաբար շարժեց գլուխը:

- Հորդ ճանաչում եմ, ծեր տանը հաց եմ կերել:

Կալանավորը պատասխանի փոխարեն փակեց հոգնած աչքերը: Ազերին բաժակի մեջ մնացած թեյն էլ կում-կում խմեցրեց.

- Բալա՛:

Առնոն նորից բացեց աչքերը:

- Մեղք ես, բալա՛, ինչ ուզում են՝ էն ասա, հոգիդ ազատիր պրծիր, գիտեմ, դու մարդ սպանող չես, դու մուալիմ ես, եղբայրդ՝ Արմոն, ուրիշ մարդ է, նա դուլդուրություն կանի, դու՝ չէ:

Կալանավորն անտարբեր փակեց աչքերը:

- Սրա մասին՝ ոչ մեկին ոչ մի խոսք,- ազերին ցույց տվեց բաժակն ու դուրս գնաց:

- Նա ինձ ամեն ինչ կխոստովանի, բերեք ինձ մոտ:- Հաջորդ օրը պետի դիմաց կանգնեց բանտում հայտնի կրկնահանցագործը: Աբբասովը հույնին չմերժեց: Առնոյին պատգարակի վրա տարան հույնի մոտ:

- Դու պիտի՝ ապրես, պիտի դիմանաս,- հույնի առաջին բառերն էին, երբ մի քանի օրվա խնամքից հետո Առնոն կիսանստել, մշուշոտ հայացքով նայում էր նրան:

- Մինչեւ վերջին վայրկյանը պիտի դիմանաս:

- Վերջին վայրկյա՞նը...- հեգնեց կալանավորը:

- Դու գիտես, որ քո գործը ծանր է:

- Վերջին վայրկյա՞նը... շուտ է լինելու: Մի քիչ կամք եւ ...

- Հոգուդ մեղք մի վերցրու,-հասկացավ հույնը:

- Մեռնելն ավելի լավ է:

- Չփորձես:

- Էլ ուժ չունեմ:

- Ամեն ինչ Աստծո ձեռքին է:

- Չեմ դիմանում:

- Դու զրուցո՞ւմ ես Աստծո հետ:

- Իմ Աստվածը... մնաց այնտեղ, լեռներում...

- Ժամանակը փոխվում է: Մեկ էլ՝ տեսար... Պետք չէ հուսահատվել:

- Դու ինձ մեղադրո՞ւմ ես:

- Չեմ մեղադրում, բայց կարգին չեմ էլ հասկանում ձեզ: Սրանք ուրիշ բան են խոսում, քո պատմածը ուրիշ է:

- Իմ պատմածն ի՞նչ... մի փշրանք է հայոց պատմությունից: Բայց իմ մասին ես քեզ ասացի այն, ինչ եղել է:

- Ես գիտեմ միայն մի բան եւ պարտադրում եմ, որ դիմանաս, Առնո:

- Ոչինչ չեմ հիշում, ոչինչ չի մնացել իմ մեջ:

- Հիշիր, ու կթեթեւանաս: Հոգիդ էլ այդ վերջին վայրկյանի մեղքից կթոթափվի: Լավ, հերիք է խոսենք: Պիտի էս կարագը ուտես:

- Կուշտ եմ, թող...

- Չէ, պիտի ուտես:

- Թող, արդեն քայլում եմ:

- Մի փոքր հույս գոնե չունե՞ս: Քեզ՝մի շերտ լույս է պետք՝ բռնես ապրես,- հուսադրում է հույնը:

- Կապրեմ: Քանի՞ օր է՝ միասին ենք:

- Յոթերորդ օրն է, կիրակի, ուղիղ մեկ շաբաթ է: Եթե թողնեն մի շաբաթ էլ մնաս...

- Կթողնե՞ն որ...- ծուռ ժպտաց,- այս մի շաբաթվա համար,- Առնոն ծանծաղեց խոսքը, չգիտեր՝ ինչ բառերով հայտներ իր երախտագիտությունը:

- Ուժ հավաքիր, Առնո, մեկ էլ տեսար՝ տարան,- երկուսով լուռ ուտում են. հույնը թախծաափսոսախառն գորովանքով հայի հետ կիսում է Մեծ Գողի իր բաժինը: Առնոյին տարան հարցաքննության, հետ բերին, դեռ չէր հասցրել տեղավորվել խցում, նորից տարան:

- Ամեդ, վիզդ ոլորելու եմ, գլուխդ կդնեմ ոտքերիս տակ, Ամեդ,- հույնը քացով խփում է խցի դռանը:- Կկոտորեմ բոլորիդ... Առնո՞... Առնո՞...- Ոռնում է Գողը: -Դիմացիր, Առնո: Ես դրանց ...

Տնքոցները մարում են, ու խցում դատարկ պարկի պես փլվում է կալանավորը:

- Որտե՞ղ ենք մնացել, Յուրա:

- Էստեղ եմ,-Յուրան կարծեց, թե կալանավորը զառանցում է ու մոտ քաշվեց:

- Չէ, որտե՞ղ ենք մնացել, հիշեցրու ինձ,- Յուրան հասկացավ, որ նա շարունակում է թերատ պատմությունը:

- Դրա ժամանակը չէ, հետո...

- Չէ, հիշեցրու, Յուրա:

Հիշեցրեց: Առնոն շարունակեց.

- Նա ասաց՝ ես, Էդմոն Դանտեսս, 14 տարի տանջվել եմ Իֆ ամրոցի զնդանում, 14 տարի արցունք եմ թափել, կրկնել եմ վրեժի երդումս, եւ ահա այն ի կատար եմ ածում: Մերսեդեսը ծունկ չոքեց Մոնտե Քրիստոյի առաջ...

Յուրայի ուսերը մեծ-մեծ ցնցվեցին:

- Դու լսո՞ւմ ես ինձ,- Առնոն ընդհատեց խոսքը,- հետաքրքիր տեղ ենք հասել: ...Կոմսը բարձրացրեց կնոջը. «Մենամարտը տեղի կունենա, տիկին, բայց ձեր զավակի փոխարեն կթափվի իմ արյունը...»: Էդ ինչ է, դու լա՞ց ես լինում:

Յուրան ձայն չհանեց ու փորձեց արցունքները ներս քաշել, որ թափվում էին ընկերոջ համար:

- Չէ, չեղավ, բա դա սազո՞ւմ է քեզ:

Յուրան արդեն ցնցվում էր կոշտ, տղամարդկային լացից ու իրեն այլևս չէր տիրապետում:

Առնոյին տարան, եւ հարցաքննությունը տեւեց շատ կարճ:

- Մենք նայել ենք ձեր դիրքերը: Դուք կարող էիք կռվել: Ինչո՞ւ չեք դիմադրել,-հարցնողը ռուս գնդապետն էր: Առնոն ժպտաց քթի տակ. փորձում են, թե՞...

- Սա հարցաքննությո՞ւն է:

- Ոչ, զուտ մասնագիտական հետաքրքրություն,- պատասխանեց մյուսը:

- Հրաման չի եղել,- փոխադարձ անկեղծությամբ ասաց Առնոն:- Բավարարվա՞ծ եք:

- Այո, ամեն ինչ պարզ է,- գնդապետը բազմանշանակ ու հարգալից նայեց կալանավորին:

- Տղերք, սոված եմ:

Ոչ ոք չարձագանքեց:

- Տղերք, ծեծին դիմանում եմ, էս անտեր քաղցին չեմ դիմանում,- Յուրան հաշվում է ժամանակը,-10 ամիս է արդեն, 10 ամիս՝ սոված...

- Լսիր, բան եմ ասում: Լատվիան, որ անկախացավ...

- Առնո, քաղցը ինձ ոնց որ հաղթում է:

- Ուշքդ ինձ վրա պահիր՝ տես ինչ եմ պատմում: Լատվիայի անկախության առթիվ շնորհավորական հեռագիր ձեւակերպեցինք, տակն էլ գրեցինք՝ Բերդածորի անկախ հանրապետություն, ու ստորագրեցինք՝ ԲԻԽ-ի կողմից: Հետո գտանք, որ դա այնքան էլ ճիշտ չի լինի, դա էլ ստորագրեցինք՝ Լեռնային Ղարաբաղի անկախ հանրապետություն: Պատասխան նամակները ստացանք, ու ցնծում էինք, որ մենք ու լատիշները իրար հասկացել ենք: Յուրա, ես միշտ երազել եմ Հայոց անկախ հանրապետություն...

Յուրան նայում ու չի հասկանում՝ Առնոն կատակում, թե լուրջ է խոսում:

- Չե՞ս հավատում: Դա հնարավոր է: Բացատրեմ...

- Որ հնարավոր է, թագավորություն ստեղծիր, դու թագավոր կլինես, ես էլ...

-Այ, որ Արեւմտյան Հայաստանը ազատագրենք, ես քեզ սպարապետ կնշանակեմ:

-Չեմ ուզում, պահեստապետ կդնես, նստեմ՝ ուտեմ, ուտեմ՝ կշտանամ...

- Դու կարդալ սիրո՞ւմ ես, Յուրա:

- Սիրում էի:

- Հեքիաթներ, պատմություններ...սիրո՞ւմ ես:

- Սիրում էի,-նորից կոշտ ու անտարբեր կրկնեց Յուրան:

- Դե որ սիրում ես, լսիր:

- Առնո, ոսկորներս չեն դիմանում, ոնց որ ծակծկված մաղ...

- Լսիր: Վիշապի քար ենք ասում: Ես լուսանկարել եմ: Դա կլինի մեր անկախության զինանշանը: Եռագույնը եւ անառիկ հպարտ ժայռը: Սազում է, գիտե՞ս: Այնտեղ, Վիշապաքար ոչ ոք բարձրացած չկա: Աշակերտներիս մի օր վերցրի, գնացինք: Մի քանի ժամ պտտվեցինք, չէինք կարողանում մատչելի տեղ ճարել:Մի տեղ երկու ուղղաբերձ քարաժայռ դեմ-դիմաց ու արանքը փոքրիկ ձոր-մոշուտ էր, կածան սարքեցինք ու առաջ գնալով գտանք քարե աստիճանները, բարձրացանք, բարձրացանք, մեկ էլ վերեւում ժայռե տափարակ, հազիվ՝ 5-6 մարդ կտեղավորվի, վերեւից քարե կամար ու դիմացը բաց հորիզոն, մի չքնաղ պատկեր՝ ներքեւում լեռներ, անտառներ... եվ սա Վիշապի տունն էր...

- Հո չե՞ս քնել:

- Ի՞նչ ես ասում,-տնքոցով կողքի ընկավ Յուրան:

- Իրանից Շուշի եկող առեւտրական ճանապարհը ծունկ էր տալիս ու հեռվից շրջանցում Վիշապաքարը: Մեկ այլ ավանդություն էլ պատմում է, թե Վիշապը կուլ էր տալիս շեղված անցորդներին: Ասում են՝ Վիշապը մի օր զայրացած շպրտել է գավազանը ու դիմացի սարի վրա տափարակ է գոյացել: Մենք բարձունքից տեսանք տափարակը: Մեզ հետ վերցրել էինք շիշ, որի մեջ մակագրություն էինք արել, թաղեցինք այնտեղ:

- Ի՞նչ եք գրել,- քաղցը մոռացած հարցրեց Յուրան:

- Գաղտնիք է, չեմ ասի: Երբ ինձ հյուր կգաս, կտանեմ այնտեղ ու կիանենք շիշը:

- Առնո, քանի տարեկան ես:

- Հիմա՞: Հիմա՞՝ հազար:

- Չէ, լուրջ եմ ասում:

- 38: Դա ինձ համար սահման կլինի, բայց ես չեմ վախենում, միայն ափսոսում եմ, որ Հայոց անկախությունը չեմ տեսնելու:

- Դու անհնարին բաներ ես երազում, մոռացած, թե ինչ երկրում ես ապրում:

- Իբր դու՝ հիշում ես, թե ինչ բանտում ես գտնվում,- կատակի տվեց, մեկ էլ լրջացավ:-Ես գուցե՝ չէ, դուք տեսնելու եք Ղարաբաղի անկախությունը, Հայաստանի անկախությունը:

- Որտեղի՞ց այդ մտքերը քեզ:

- Գորիսից: Ուսանողական ցույցին ես տանում էի եռագույն դրոշը... Բայց սա երեւի վերջը կլինի...- Խոսքն արդեն կցկտուր էր, իսկ խցում շատերն արդեն քնել էին:

- Առնո:

- Հը:

- Առնո:

- Լավ, մոտ նստիր: Քունդ չի տանում, գրուցելդ բռնել է:

- Առնո, ո՞ւմ վրա ես կասկածում, զենքի պահեստը ո՞վ մատնեց:

- Չգիտեմ, այդ հարցը ինձ տանջում է, խուզարկությամբ, առանց մատնության հնարավոր չէր այն հայտնաբերել:- Երկար լռեցին:- Լսիր, Յուրա, այստեղ էլ նույն կյանքն է, ինչ որ այնտեղ դրսում: Այստեղ էլ կարող ես ապրել ատոր, անպատիվ կամ գաղափարներով, արժանապատիվ: Դե, իմ հանդեպ միշտ ծայրահեղ են եղել:

- Որովհետեւ դու ուրիշ ես:

- Ծայրահեղ եմ: Ինձ կամ սիրում են կամ ատում: Անտարբեր կամ միջին վերաբերմունք չի լինում:

- Լսիր, որ այստեղից դուրս գաս, կգնաս մեր տուն:

- Դու էլ ես դուրս գալու:

- Դու ինձ մի ընդհատիր, դու լսիր ինչ ասում եմ: Կգնաս մեր տուն, կտեսնես խնձորի այգին: Ուրիշ բան է, հրաշք: Հայրս մեզ ստիպել է հող կրել: Բերում էինք հեռու տեղից, անտառից: Հողը թափում էինք քարերի վրա տափարակ սարքում ծառեր տնկում: Բա ջրե՞լը... Ոնց որ հողն ենք բերել, նույն ձեւով էլ ջուրը: Հիմա հաճույքով հիշում եմ, բայց այն ժամանակ քրտինքը ծորում էր, ոտքերս ծանր դույլի տակ ճկվում էին, հաշվում էի մետրերը, հասնում մինչեւ մտքով նշան արած մացառը՝ հանգստանում, հասնում էի սահմանակետը հեռացնում մինչեւ այն բլուրը, մինչեւ այն քարը...Ինձ փորձում էի ինչքան կդիմանամ, եթե դույլը չդնեմ, չհանգստանամ: Հետո քրտնաթաթախ պառկում էի դաշտում, այդ բույրը, խոտի բույրը...

- Ինչ լավ է, որ դու իմ կողքին ես, Առնո:

- Դու էլ՝ իմ, Յուրա: Հա...պատմեմ լսիր: Խոտ ասացի՝ հիշեցի: Արտերից խոտ էի հարել, բարձել էշին: Բրիգադավարը կանգնեց գլխավերեւս:

- Ասաց կոլխոզինն է՝ պիտի հանձնես,- բայց հասկացավ, որ չեմ տանելու, ոչ մի գնով, ինչ էլ անի: Թե որտեղից՝ հայրս հայտնվեց:

- Սա խոտհարքի մեջ չի մտնում, լանջից եմ հարել:- Արդարանում եմ հորս առաջ:

- Պիտի տանես,- ասաց հայրս, ու նրա խոսքին հնազանդվեցի:

- Այդ մարդն ինձ ատում էր, Յուրա:

- Հիմա՞ էլ:

- Հիմա՝ չգիտեմ:- Առնոն ծածկոց-լաթի ծայրը քաշեց ընկերոջ վրա:- Մի բան էլ պատմեմ: Արտերին պահակ էի կանգնել եւ միաժամանակ պարապում էի, ընդունելության քննություն պիտի տայի: Մի ձի կար՝ կատաղի, չհեծած, չսանձած: Քեզ կտամ՝ հանդերը կպահես, եթե սանձես՝ ասաց բրիգադիրը: Կարող էի ջարդվել, բայց ես մտածում էի միայն՝ սանձելու մասին: Հեծած սարուձորով թռչում եմ ոնց եմ թռչում...Քեզ լինի՝ ասաց: Ձին սովորեց ինձ: Ես գիրք էի կարդում ձին հսկում էր արտերը: Հենց այծ, ոչխար, կով էր մտնում, հեռու էր քշում: Դա հենց տեսավ, եկավ ու տարավ ձին: Խելոք կենդանի էր:

- Ի՞նչ եք քչփչում, բարձր ասեք՝ մենք էլ լսենք:- Տնքաց Էմիլը:

- Էդքան էներգիա որտեղի՞ց,- ասաց ու շարունակեց մի քիչ բարձր:- Չախկալի միսն ի՞նչ համ ունի, գիտե՞ս, Էմիլ:

- Որտեղի՞ց իմանամ: Եթե ինչ-որ տեղ կարդացել էլ եմ, հիմա չեմ հիշում, մտքիցս թռել է:

- Կերած չկա՞ս:

- Չէ:

- Միս ես ուզում՝ մի կարգին բան ասա. չախկալ հա չախկալ,- խեթեց Գագիկը:

- Եղբորս Արմոյի հետ որսի էինք գնացել: Ինչ-որ կենդանի մաշկեց, կրակ վառեց, խորովեց: Ասաց՝ նապաստակի միս է, կեր: Կերա, պրծա, ասաց՝ Առնո, չախկալի միս ես կերել: Համերը իրար շատ մոտ են, հիշում եմ, մենակ չախկալինը մի քիչ ծանր ու թթվաշ էր:

- Հիմա չախկալները կիպ մոտեցել են մեր գյուղին ու ոռնում, կաղկանձում են,- անուրջների մեջ ընկավ Էմիլը:

- Յուրա,- Գառնիկը մոտ քաշվեց:- Երբ մի շաբաթ առաջ ինձ տարան «մշակելու», ականջատակիս հարվածից ուշագնաց փռվեցի գետնին, մեկը ինձ բարձրացրեց.

- Հայ չե՞ս: Քեզ պինդ պահիր,- ասաց,- բարձրահասակ էր, ուժեղ, շատ ուժեղ ձեռքեր ուներ: Ես դա զգացի, երբ վզակոթիցս ճանկել ու ոտքի է կանգնեցրել: Արտահայտիչ, սուր նայվածք ուներ: Հասկացա, որ հայ է, բայց առաջին անգամն էի տեսնում: Ո՞վ է:

- Պատժախցի մշտական կալանավորը՝ Նապոլեոնը:

Գառնիկը հարցական նայեց:

- Դա նրա մականունն է, իսկականը՝ Արկադի Հայրիյան: Մարտակերտի շրջանից է: Նրան շատ քչերն են տեսել: Հատուկ վտանգավոր հան-

ցագործի պիտակ ունի եւ մեկուսացած են պահում: Հսկիչներից մեկը պատմել է, որ իրենք ծեծելուց հոգնել են, բայց նա չի խեղճանում: Նա ուրիշ տեսակ մարդ է...

- Հիմա ո՞ր ամիսն է,- հարցրեց Արվիդը:

- Մարտ:

- Մի տարին լրանում է:

- Մի կտոր՝ թեկուզ չախկալի միս լիներ՝ ծամեինք:- Յուրան մտքերով դեռ Առնոյի պատմածների հետ էր, եւ դա ասաց սովածի այնպիսի անձկությամբ, որ յուրաքանչյուրի ուշադրությունը դարձավ դատարկ ստամոքսներին:

Խցում լռություն իջավ... մինչեւ առավոտ:

Այդ օրը, 1992-ի Խոջալլուից հետո էր, տղաներին կիսամերկ հանեցին բակ: Առնոն, Գառնիկը, Գագիկը, Նորայրը...Օրն առանձնանում էր իր դաժանությամբ: Հրաչիկին ստիպեցին կեղտոտ աղյուսներից պատ շարել, հրաժարվեց, իմանալով, թե ինչ դատաստան են տեսնելու: Ազերի ճարտարապետը, որ համակրում էր Նորայրին, հայացքը շրջած, կանգնած էր մի կողմ: Հաջորդ օրը մոտեցավ Նորայրին ծխախոտ մեկնեց: Նորայրը դիտմամբ հրաժարվեց՝ խոսք քաշելու համար:

- Խոջալլուում ձերոնք մորթել են կանանց ու երեխաներին: Դուք դաժանությամբ գերազանցեցիք մեզ:

Նորայրը խցում պատմեց Առնոյին, եւ երկուսով վերլուծելով լսածը, փորձում էին հասկանալ, թե դրսում ինչ է կատարվում:

Դանիելյան Յուրան մոտեցավ, ու լաթը, որ սահել էր, քաշեց ընկերոջ վրա.

- Ինչո՞ւ չես քնում:

Առնոն ծուռ ժպտաց:

- Մի տանջիր քեզ,-կարծես կարդալով ընկերոջ մտքերը, խորհուրդ տվեց,- ինչ եղել է, անցած է, մի տանջիր քեզ, որ դիմանաս:

- Գուցե զանգվածային կոտորածի՞ց են խուսափել, որ ասացին, թե անձնագրային ռեժիմի ստուգում է: Գետաշենն արդեն կատարվել էր, եւ նախադեպը աչքի առաջ ունեին: Կամ գուցե մտածել են, որ Բերդաձորը կխնայեն, քանի որ Լեռնային Ղարաբաղի ինքնավարության մեջ է, իսկ Գետաշենն ու Մարտունաշենը՝ բռնակցված էին Ադրբեջանին: Պատմությունը կարծես թե կրկնվեց: Նույն ձեռագիրը,- երբ Առնոն խոսում էր, Յուրան չէր ընդհատում, հարցեր չէր տալիս: -1920-ի գարնանը, Շուշիում թուրքերը քաղաքի աչքի ընկած քաղաքացիներից 400 հոգու ձերբակալում, բանտ են նետում, իսկ բանտը գտնվում էր թուրքական թաղամասում: Կալանվածներից մեկը՝ Իվան բեկ- Իշխանյանը պահանջում է իմանալ, թե ինչու են ձերբակալել մարդկանց, որոնք անմեղ ու խաղաղ բնակիչներ են, եւ պահանջում է իրեն տանել Խոսրով բեկ -Սուլթանովի՝ Ադրբեջանի նշանակված նահանգապետի մոտ: Իվան բեկին տեղնուտեղը սպանում են, բանտարկյալներին՝ նույնպես: Իսկ եթե կատարվեր մեր պահանջը, ձորակից հանված լիներին ծերերը, կանայք ու երեխաները, գյուղում մնայինք միայն զենքի ընդունակ տղամարդիկ, կկռվեինք ու արժանապատիվ կմեռնեինք, ոչ թե ... Բանակն անցավ նրանց կողմը, Յուրա:

- Դիմացդ թշնամի է, ով ուզում է լինի, պիտի խփես՝ սպանես: Քո քաղաքականությունը գլուխս չի մտնում:

- Յուրա, լսիր, 1920-ին մուսավաթական Ադրբեջանը ընդունեց Սովետի իշխանությունը, եւ միասին հոշոտեցին՝ անկախությունը պահող Հայաստանին: 1920-ի մայիսի 1-ին խորհրդայնացած Ադրբեջանը Հայաստանի կառավարությունից պահանջեց զորքերը հանել Զանգեզուր-Ղարաբաղից: Հետո «կարմիրների» հետ Նախիջեւանը մտան, ու Դրոն հետ քաշվեց: Ես անկախություն եմ երազել, ինչ գնով ուզում է լինի, իսկ գուցե Հայաստանը հիմա շտապե՞ց... Իսկ Ադրբեջանը, որ հոգով, սրտով Թուրքիայի հետ է, չէր շտապում անկախանալ:

Յուրան ուշադիր լսում էր, բայց Առնոյի քաղաքական վերջին շարադրանքից մտքերը խճճվեցին.

- Անցածն անցած է, Առնո:

- 1920-ականներին Կովկասում գտնվող անգլիացի ներկայացուցիչներից մեկն ասել է, թե հայը իբրեւ անհատ տաղանդավոր է, հանճարեղ, որպես հավաքականություն՝ շատ թույլ: Վրացին՝ ճիշտ հակառակն է՝ աննշան թույլ, բայց իբրեւ հավաքականություն ուժեղ եւ գործնական: Ազերին ավելի քան էդպիսին է...

Երկուսն էլ լռեցին, մեկի մտքերը դեգերում էին Հադրութի Թաղեր գյուղում, մյուսինը՝ Բերդաձորում, ու գիշերվա մի քանի ժամը հանգստություն բերեց նրանց խոշտանգված մարմիններին:

Խցում մեծ մասը բերդաձորցիներն են, Առնոն, Գագոն, Գառնիկը, Հրաչիկը, Արվիդը, Արտաշը, Մանվելը, Ենոքը, հայր ու որդի Զաքարյանները, եղբայրներ Ռոման եւ Էլդարը, Պավլիկը:

- Սոված եմ է՞, հաց տուր,- չէր դիմանում համագյուղացիներից մեկը:

Առնոն գլուխը հակեց ծնկներին:

- Քեզ հետ եմ, հաց տուր, ես ամենի մեղավորը դո՛ւ ես:

Դանիելյան Յուրայի աչքերից կայծեր թռան, այն է բռունցքը պիտի իջներ, Նորայրը հետեւից գրկեց ու հեռացրեց.

- Դրա ժամանակը չի...

- Ես քո...- Յուրան միայն հայհոյեց:

Առնոն հայացքն իսկ չբարձրացրեց:

- Տղերք, հիմա Յուրայի հայհոյանքի վրա մի բան պատմեմ,- խցում ամեն ինչ կարծես խաղաղվեց:

- Պապա՝ Դալամա Սահակը ուշունց տվող մարդ է եղել, այնքան, որ ոչ ոք ուշադրություն չէր դարձնում: Խորհրդային կարգերը հաստատվելուց հետո գյուղացիներից մեկը գյուղխորհրդի նախագահին, որ կին էր, բողոքում է, վերջինս կանչում է գրասենյակ՝ կարգի հրավիրելու:

- Սահակ քեռի, գիտե՞ս, չէ, ինչի եմ կանչել:

- Գիտեմ, աղջիկ ջան,- հարգանքով պատասխանում է:

- Հիմա ժամանակներն ուրիշ են, չի կարելի:

- Ասել չտա՞ չեն լսի, բայց որ ասում ես, աչքիս վրա, քո խաթեր...

Դուրս գալու ժամանակ գլուխը խփվում է դռան վերեւի փայտածողին:

- Ես սրա...- յոթ հարկանի հայհոյանքները շարում է Սահակը:

- Սահակ քեռի, բա չպայմանավորվեցի՞նք...

- Բա չասացի՝ ասել չտա՞ չեն լսի,- նորից նախշեց Սահակը:

Խցում ծիծաղ բարձրացավ:

Առնոյին պահում են խիստ ռեժիմով, իսկ մնացածներին հանում են աշխատեցնելու, շենք են սարքում: Դա մի փոքրիկ մխիթարություն էր, դադար՝ ծեծի ու խոշտանգումների միջեւ: Գառնիկը հյուսնություն է անում, Ռոման ծեփում է, Մանվելին ամեն օր տանում են խոհանոցում աշխատելու: Զահել, սիրուն տղան, 20-21 տարեկան, տեսնում է, թե խոհարարը որտեղ է թաքցրել պահածոները, որ հետո տուն տանի: Մանվելը աչք է գողանում, մի քանի հատ լցնում շալվարի փողերը, բերում ընկերներին: Կեսօրին թաքուն բացել եւ ուտում են, մեկ էլ ավագ սպան կանգնեց գլխավերեւներում.

- Որտեղի՞ց:

- Գողը գողից գողացավ, Աստված տեսավ զարմացավ,- մաքուր ադրբեջաներենով ու կատակով ասաց Գառնիկը:

- Հալալ լինի, կերեք,- ասաց Գազամփարը եւ հաջորդ օրը մի տուփ ծխախոտ բերեց ու տղաների խնդրածը մի թերթ, որ կարդան:

- Գազամփար, միջնորդ գտիր, ինձ ազատեն, մերոնք փող կտան,- խնդրեց Գառնիկը:

Ազերին գնաց բանտապետի տեղակալի մոտ ու բերեց պատասխանը, որ հնարավոր չէ:

Մանվելը մի օր էլ ահագին չիր, չամիչ ու չիրեղեն բերեց: Կերան, խցում մնացածների բաժինն էլ թաքցրին տարան: Երբեմն հացի կտորներ ու շաքարավազ էլ էր կարողանում թռցնել:

Խցում հացի էին նստել, մեկ էլ ծեծի ու գոռոցների ձայները ընկան միջանցք:

- Նոր մարդ են բերել,- տղաները հացի կտորը ցած դրեցին:

Սպասեցին, մինչեւ նորեկներին խուց շարտեցին: «Սեղան» բացեցին, հյուրասիրեցին, իբր իրենք կուշտ են.

- Ես դուք ինչքա՞ն եք կերել, որ մեր բաժինը էսքան պահել եք,- կատակով ասաց մեկը ու խցում ծիծաղ բարձրացավ:

Առավոտյան բոլորին տկլորացնում են, շարք կանգնեցնում:

- Վերջում կանգնենք, որ հոգնած լինեն, քիչ ծեծ ուտենք,- շշնջաց Գառնիկը Մանվելի ականջին:

Ավագ սերժանտը ուշադիր նայեց վերջին երկուսի աչքերին.

- Սրանց ձեռք չտաք, երեւում է, որ սրանք մարդասպաններ չեն:

- Հա, ես ընդունակ չեմ մարդ սպանելու,- խեղճ-խեղճ ասաց Գառնիկը:

Երբ որ խմբին հանում էին գանահարության, Գազամփարը երկուսին մի կողմ էր քաշում.

- Սրանք իմ բաժինն են, ձեռք չտաք,- հետո մի անգամ Գառնիկի ականջին շշնջաց.

- Գյումրիում եմ ծառայել, լավ հայ ընկերներ ունեի:

Ստեփանակերտցի Սերոբին հանեցին, ծեծեցին ու կիսամեռ խուց շպրտեցին:

- Լսիր, տես քեզ ինչ եմ ասում,- բարոյախոսեց Սաֆարյանը հսկիչին,- կյանքը աստիճան-աստիճան է, մեկ ներքեւում ես հայտնվում, մեկ վերեւում: Մեկ էլ տեսար, էդ դագանակը նրա ձեռքին հատնվեց, էդպես չի կարելի:

Երկու տարի անց, երբ Սերոբը Ստեփանակերտում քննչական մեկուսարանի պետն էր, երբ ազերի գերիներին զբոսանքի էին հանում, միայն զզվանքով շրջում էր դեմքը:

- Մեկ օրով բաց թողնեին, գնայի տուն, գայի,- կարոտով ասաց Արգինալը:

- Ինչի՞ համար,- հարցրեց էդիկը:

- Գնայի ոչխարները խուզեի, գայի,- խուլ տնքաց կալանավորը:

Ապրիլի 25-ի օրը բացվեց: Տղաները իրենց բաժին շաքարավազը

լցնում են մի ալումինե կոթավոր բաժակի մեջ, թեյաջուրը լցնում, խառնում ու տալիս Առնոյին: Ավանդույթ էր ստեղծվել, այս ձեւով նշվում էին ծննդյան օրերը: Առնոն ժպտաց: Թամադան, որ Նորայրն էր կարգված, բաժակը ձեռքին ոգեշունչ ճառ է ասում:

Հայկական ընդունված կարգով հոբելյարը պատասխան խոսք է ասում, ու յուրաքանչյուրը անեկդոտ է պատմում: Առնոն պատմում է սիրած անեկդոտը զոքանչի մասին. անները գալիս է փեսայի տուն շախմատ խաղալու: Փեսան պատուհանից երկու ձեռքն է կոբրայի ձեւով պահում, այսինքն՝ երկու կանայք տանն են, արգելելու են:

Խցի մի անկյունում Առնոն քթի տակ ինչ-որ երգ է դնդնացնում ու ձեռքի կտորով գետնին ինչ-որ բառեր է գրում: Ռոման մոտ քաշվեց: Առնոն հորինում է, նա կրկնում է.

Հենց որ բացվեց արշալույսը,
Մարեց գյուղիս վերջին լույսը,
Ներխուժեցին օմօն, զինվոր,
Հեղեղի պես հրեշավոր:
Ո՞ւր եք, ո՞ւր եք մեր անվեհեր,
Բերդածորի քաջ արծիվներ...

Հետո միասին ցածր երգում են, մինչեւ Ռոման անգիր սովորում է եւ բառերը, եւ երաժշտությունը: Բանտից դուրս գալուց հետո Ռոմայի միջոցով երգը տարածվում է ու հնչում քեֆ-ուրախության, հարսանիքների ժամանակ՝ ուս ուսի պարելիս՝ որպես հիշողություն:

1991-ի դեկտեմբերից վերսկսվել էր գործի քննությունը սանկտպետերբուրգյան դատապաշտպանների մասնակցությամբ: Կալանավորներին տանում են բանտապետի մոտ.

- Լավ իմացեք, դատապաշտպանների մոտ ցուցմունքները փոխելու դեպքում ձեզ մահ է սպասվում:

Չխոշտանգվելու համար տղաները խոստանում են չփոխել:

- Իսկ դու պիտի փոխես քո ցուցմունքը:

- Աչքիս վրա, շեֆ,- հաճկատար ասաց Գառնիկը:

- Բերդածորցիներ, հարցաքննության:- Հսկիչը կանգնեց շեմին:

Կալանավորները զգաստացան: Հերթով տանում են: Սանկտպետերբուրգցի դատապաշտպանները, որոնց «ոսկե հնգյակ» անունն են տվել, ծանոթանում են գործին:

- Բռնացել են մեր կամքի վրա՝ ստորագրել ենք:- Առնոյին հետ բերեցին:

- Ծեծել են, ստիպել են, ստորագրել ենք:-Իրենց ասածներից հրաժարվեցին Հրաչիկը, Գագիկը, Արթուրը եւ հերթով խուց բերվեցին:

Մեկ ժամ հետո եկան մերկացրին ու հանեցին միջանցք:

- Առնո, լավ լսիր,-ոռնում էր Սուստաջափ հսկիչը,-եթե անգամ օրենքը քեզ ազատի էլ, ի՛մ ձեռքից չես պրծնի, ծեծելով սպանելու եմ: Որ ասեն՝ ազատ ես՝ չհավատաս, հետեւիցդ կրակելու եմ՝ սպանեմ:

Ավագ քննիչ Ֆիրմամեդովի տեղակալ Դարաֆեեւը Գառնիկին ստիպում է ցուցմունք տալ, որ ինքն է եղցահողի տակ անասնապահին սպանել:

- Դու քրիստոնյա՞ ես, Դարաֆեեւ:

- Այո:

- Աստված պատժելու է քեզ: Ընտանիքիդ, երեխաներիդ վրա կրակ ու ծծումբ է թափվելու: Ես ճշմարտությունն եմ գրել, վերեւ Աստված, ներքեւ դու:

-Լավ, Աստված քեզ հետ,-անեծքներից վախեցած ասաց Դարաֆեեւը,- գրիր ինչ ուզում ես:

Կալանավորը նույնը գրեց ու ստորագրեց: Երբ Ֆիրմամեդովը մտավ, Դարաֆեեւը զեկուցեց, որ կալանավորը ցուցմունքը չի փոխել:

- Ուրեմն, լավ չեն մշակել: Տարեք, ոնց որ պետք է «մշակեք»,-հանձնարարեց մասնաշենքի ավագին, որ մտել էր կալանավորին տանելու: 5-6 հոգի պետերբուրգցի դատապաշտպանների աչքից հեռու մշակում են Գառնիկին: Ծանրամուրճի հարվածներից կողոսկրերը ջարդվեցին, եւ կալանավորը արնաշաղախ ընկավ գետնին:

- Կգրեմ, կգրեմ ոնց ուզում եք:

Տարան խուց, նորից թղթերը դրեցին դեմը, որ ստորագրի, բայց չի ստորագրում.

- Ես չեմ սպանել:

- Նորից խոշտանգում են եւ բերում խուց:

- Լսիր, Գառնիկ, միեւնույն է մասնակից ես, թե մասնակից չես սպանությանը, չես տեսնո՞ւմ, որ նշանակություն չունի: Համառելդ ի՞նչ իմաստ ունի: Մենք էլ սպանություն չենք կատարել, բայց ստորագրել ենք, բա ի՞նչ անենք, սպանում են,- ասաց Գագիկը:

- Ճիշտ ես ասում, կողոսկրերս ջարդելը մնաց, վաղը կստորագրեմ:

Հաջորդ օրը նորից չի ստորագրում:

- Գառնիկ, մեզ խաչելու են, Քրիստոսի պես...-Գագիկն ու Գառնիկը 33 տարեկան էին:

1992 թվականի մարտ ամիսն է: Հսկիչը 10 բերդածորցիներին տարավ դուրս: Բալայան էմիլը հասկացավ, որ նրանց այլեւս չի տեսնելու, գրկախառնվելով հրաժեշտ տվեց տղաներին.

- Հույսներդ մի կորցրեք: Մեկ էլ տեսաք՝ մի դուռ բացվեց:

- Ինձ համար շատ վաղուց մի գնդակ նախատեսված է,- ասաց Առնոն:

Պահում են տարբեր խցերում, ամենախիստ ռեժիմով: Հարությունյան Գագիկին կանչում են դատապաշտպանի մոտ:

- Քննությունը վերջացած է,- մեղադրական եզրակացությունը դնում են կալանավորի առաջ, կարդում է:

- Մի ծխախոտ տվեք, խնդրում եմ:

- Չկա:

- Եվ դուք իմ դատապաշտպա՞նն եք...

- Չէ, քեզ նման հիմարները ավտոմատ վերցնեն, մարդ սպանեն, ես էլ քեզ ծխախոտ տամ:

- Դու քրիստոյա չե՞ս,- կալանավորը փորձում է խղճի կոչել, բայց իզուր:

- Ես հրաժարվում եմ քեզնից: Հայտնիր Տյուլաեւին:

Դատապաշտպանների խմբի դեկավար Տյուլաեւը ներս մտավ:

- Հրաժարվում եմ: Սրանից ոչ մի աջակցություն, ոչ բարոյական, ոչ նյութական չեմ տեսել: Ուսադիրների պատիվ էլ չունի, թե որ դուրս գամ էստեղից...- նրա վիճակի համար ծիծաղելի էր, բայց խոսքը սպառնալիքով ավարտեց Գագոն:

- Հանգիստ, հանգիստ, դրա ժամանակը չէ,- ասաց Տյուլաեւը:

- Ձեր նմանների երեսից Ադրբեջանում չենք կարողանում բացճակատ քայլել...

- Չես կարողանում, չգայիր, քեզ ո՞վ է խնդրել, որ գաս... - խոսքակռվի տուտը բաց չէր թողնում:

- Բա ընտանիքս դո՞ւ պիտի պահես, փող պիտի, չէ՞ աշխատեմ,- անկեղծացավ պաշտպանը:

- Մենք ընտանիք, երեխա չունենք էլի...

Մյուս կալանավորները գոհ էին իրենց պաշտպաններից:

Ադրբեջանական ԽՍՀ գլխավոր դատախազին կից հատուկ կարեւորագույն գործերով քննիչ, առաջին դասի իրավաբան Խ.Ֆիրմամեդովը թիվ ....քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը դրեց Առնոյի առջեւ: Կալանավորը կարդաց, եւ ուշադրությունը գրավեց այն փաստը, որ որոշման մեջ բացակայում են վավերապայմանները, չի նշված ամիս-ամսաթիվը, չկա քննիչի ստորագրությունը, պաշտպանով չի ապահովված: Փաստորեն, մեղադրանքը նման «թխված» փաստերով դրվել է դատավճռի հիմքում եւ որոշվելու է իր ճակատագիրը՝ մահապատիժ:

- Ստորագրիր:

Կարդաց. «Ադրբեջանական ԽՍՀ ԼՂԻՄ եւ նրա շուրջ հայտնի իրադարձությունների կապակցությամբ Հայաստանի Հանրապետության տարածքային նկրտումներով ու պահանջներով Ադրբեջանի դեմ հրահրված, այդ տարածաշրջանում կտրուկ սրվել էին ազգամիջյան հարաբերությունները: Այդ հողի վրա ԼՂԻՄ-ում ազգությամբ հայ ազգայնականորեն տրամադրված անձինք Հայաստանի Հանրապետության եւ «Հայ Դատ», «Ամարաս» եւ այլ ծայրահեղական կազմակերպությունների հովանավորությամբ կազմավորել են բազմաթիվ զինված ավազակային խմբեր, որոնք ահաբեկում էին ադրբեջանական բնակչությանը, կատարում էին հանդուգն հանցավոր գործողություններ, հրետակոծում էին բնակավայրերը, պատանդներ էին վերցնում, փորձում էին բռնի կերպով տեղահանել ադրբեջանցիներին իրենց մշտական բնակավայրերից, հրահրում եւ սերմանում էին ազգամիջյան թշնամանք ադրբեջանցի եւ հայ ժողովուրդների միջեւ, ինչպես նաեւ կատարում էին այլ ծանր հանցագործություններ : Նման մի ավազակախումբ կազմակերպվել էր 1988 թվականին Ադրբեջանի ԼՂԻՄ Շուշիի շրջանի Մեծ Կալադարասի (Մեծ Շեն), Կիրով (Հին Շեն), Եղցահող եւ Տասը Վերստ գյուղերում, քաղաքացիներ Առնո Միքայելի Մկրտչյանի, Գագիկ Մայորի Հարությունյանի, Հրաչիկ Արմենակի Պետրոսյանի եւ մյուսների կողմից, որոնց կազմում եւ նրանց հետ միասին մասնակցել են Արվիդ Աշոտի Մանգասարյանը, Արտաշես Միքայելի Մկրտչյանը, Գառնիկ Գուրգենի Առստամյանը, Արտաշես Միքայելի Ջաքարյանը, Արթուր Արտաշեսի Ջաքարյանը, Ենոք Ռուբենի Հովսեփյանը, Մանվել Շափաղաթի Մարգսյանը, ինչպես նաեւ քննությունից թաքնված Վարուժան Ալեքսեյի Նասիբյանը, Սեյրան Սուրենի Դավթյանը, Վիլեն Առնոլդի Սիմոնյանը, Սլավիկ Բագրատի Գրիգորյանը, Ջորիկ Շուրիկի Ղուլյանը, Խաչատուր Սարգսի Հովհաննիսյանը, Հարութ Գեորգիի Հարությունյանը, Շիրակ Շահենի Ջոբանյանը եւ այլ չհաստատված անձինք:

Վերոնշյալ հանցագործությունները իրականացնելու համար ավազակախմբի անդամները զինվել էին «Կալաշնիկով» ավտոմատով, կարաբիններով, գնդացիրներով, ականանետերով, պայթուցիկ նյութերով եւ այլ զինամթերքներով, որ ուղղաթիռներով եւ այլ ճանապարհներով

պարբերաբար բերվում են Հայաստանից: Հանդիսանալով խմբի կազմակերպիչներից եւ ակտիվ մասնակիցներից մեկը Ա.Մ. Մկրտչյանը գլխավորում էր գրոհայինների շտաբը Կիրով գյուղում, Հայաստանից եւ Ստեփանակերտից եկող գրոհայիններին ընդունում եւ տեղաբաշխում էր, ստանում եւ թաքստոցներում պահում էր մեծ քանակությամբ տարբեր տեսակի հրազեն եւ զինամթերք, որը հետագայում բաժանում էր հանցավոր խմբի անդամներին: Հրահրելով եւ սերմանելով ազգամիջյան թշնամանք եւ ջարդ, ադրբեջանցի եւ հայ ժողովուրդների միջեւ Առնո Մկրտչյանը Մեծ Կալադարասի, Կիրով, Եղցահող, Տասը Վերստ գյուղերի բնակիչներին կոչ էր անում անհաշտ պայքար մղել ադրբեջանցիների դեմ հայտարարելով, որ նրանք հայ ժողովրդի թշնամիներն են, եւ որ դրա համար նրանց պետք է ոչնչացնել: Տարել է ակտիվ հակաադրբեջանական ագիտացիա եւ պրոպագանդա: Ա. Մկրտչյանը, Գ.Հարությունյանի, Հ.Պետրոսյանի եւ ավազակախմբի մյուս պարագլուխների հետ համատեղ մշակել, պլանավորել են մի շարք ծանր հանցագործությունների կատարում, եւ նա անձամբ ակտիվ մասնակցել է դրանց կատարմանը:

Այսպես, 1991թվականի հունվարի 8-ի լույս 9-ի գիշերը Ա.Մկրտչյանը, նրա եղբայր Արտաշես Մկրտչյանը, Գ.Հարությունյանը, Ա.Մանգասարյանը, Հ.Պետրոսյանը, Վ.Սիմոնյանը, Վ.Նասիբյանը ավազակախմբի մյուս անդամների հետ համատեղ հավաքվել են Մեծ Կալադարասի գյուղում, որտեղ ազգամիջյան թշնամանք եւ ջարդ կազմակերպելու, ինչպես նաեւ ազգությամբ ադրբեջանցի քաղաքացիների սպանություն խուլիգանական դրդումներով, կատարելու նպատակով որոշել են կատարել զինված հարձակում Լաչին-Շուշի ավտոճանապարհով ընթացող տրանսպորտային միջոցների վրա: Իրենց միջեւ դերաբաշխում կատարելով, թե հարձակման ժամանակ ինչպես պետք է գործեն, ավազակախմբի անդամները անցել են իրենց հանցավոր մտադրության իրականացմանը: Ընդ որում, մի քանիսը զինված «Կալաշնիկով» ավտոմատով եւ զինամթերքով դիրքեր են գրավել Մեծ Կալադարասի գյուղի դպրոցի մոտ բարձունքում, որտեղից լավ երեւում է Լաչին-Շուշի ավտոճանապարհը: Առնո Մկրտչյանի գլխավորությամբ զինված «Կալաշնիկով» ավտոմատով եւ 60 փամփուշտով Հ.Պետրոսյանը, Գ.Հարությունյանը Ա.Մանգասարյանը եւ ավազակախմբի չհաստատված այլ անդամներ նույնպես զինված «Կալաշնիկով» ավտոմատով եւ կարաբինով, Եղցահող գյուղից իջել են դեպի կամուրջը, դարանակալել են Լաչին-Շուշի ճանապարհահատվածի մոտ:

1991 թվականի հունվարի 9-ին մոտավորապես ժա՝ 8-ին Լաչին

քաղաքի կողմից նշված կամրջին է մոտեցել «ՈւԱԶ-469», 30-14 ՆԲ պետհամարանիշի ավտոմեքենան, որը վարում էր զինծառայող-վարորդ Ի.Ի.Գոեկը: Մեքենայում էին գտնվում խորհրդային բանակի զինծառայողներ, փոխգնդապետ Օ.Մ. Լարիոնովը, մայոր Ի.Յու. Իվանովը եւ «Մոլոդյոժ Ազերբայջանա» թերթի թղթակից Ս.Ա. Ասկերովան, որոնք մեկնում էին Շուշի: Այդ ժամանակ Վ.Ա. Սիմոնյանը չհաստատված երկու գրոհայինների հետ դուրս է թռել կամրջի վրա, եւ փակելով ավտոմեքենայի ճանապարհը, ավտոմատներից կրակ են բացել մեքենայի վրա: Նրանց հետեւից ավտոմեքենայի մեջ գտնվող քաղաքացիներին սպանելու նպատակով բանդայի մյուս անդամները այդ թվում նաեւ Ա.Մկրտչյանը սկսել են կրակել ավտոմատներից: Փոխհրաձգության արդյունքում սպանվել են Լարիոնովը, Իվանովը, Գոեկը, Ասկերովան: Իր այդ գործողություններով Ա.Մկրտչյանը կատարել է բանդիտիզմ, խուլիգանական դրդումներով 4 անձանց սպանություն, հրահրել է ազգամիջյան թշնամանք ադրբեջանցի, ռուս եւ հայ ժողովուրդների միջեւ: Ա.Մկրտչյանը առանց համապատասխան թույլտվության կրել է զենք, հրազեն եւ զինամթերք: Այդ նույն ժամանակ Ա.Մ. Մկրտչյանը եւ ավազակախմբի մյուս անդամները ազգությամբ ադրբեջանցի քաղաքացիներ սպանելու եւ ազգամիջյան թշնամանք հրահրելու եւ ջարդ կազմակերպելու նպատակով կրակել են երկրորդ Գազ -53 մակնիշի ԱԳՕ, 83-08 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա, որում գտնվում էին վարորդ Ս.Սեւդիմալիեւը եւ Մ.Բ. Հախվերդիեւը: Ընդ որում Ս.Սեւդիմալիեւը վիրավորվել է ոտքից եւ նրան պատճառվել է նվազ ծանր մարմնական վնասվածք: Սակայն Ա.Մ. Մկրտչյանին եւ Գ.Մ.Հարությունյանին եւ հանցավոր խմբի մյուս անդամներին չի հաջողվել այդ անձանց սպանությունը հասցնել մինչեւ վերջ, քանի որ չնայած Ս.Սեւդիմալիեւը վիրավորված էր, նրան հաջողվել է իր ավտոմեքենայով դուրս գալ այդտեղից եւ թաքնվել:

Այդ գործողություններով Ա.Մ. Մկրտչյանը կատարել է բանդիտիզմ, խուլիգանական դրդումներով 2 անձանց սպանության փորձ:

Ելնելով վերոշարադրյալից, ղեկավարվելով Ադրբեջանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 150 եւ 151 հոդվածներով որոշեցի. Ա.Մ.Մկրտչյանին ներգրավել սույն քրեական գործով, որպես մեղադրյալ նրան առաջադրելով մեղադրանք Ադրբեջանի քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասով, 70-րդ հոդվածով, 94-րդ հոդվածի 4-րդ կետով, 15, 94-րդ հոդվածի 4-րդ կետով, 220-րդ հոդվածի 1- ին մասով:

Խ.Տ. Ֆիրմամեդով»:

Մարտի 27-ն էր, եւ «Սեւ ագռավ»-ի մեջ բերդածորցիներին տանում են դատավարության: Միջանցքում կանայք են խռնված: Հարվածում են, ով ինչով կարող էր, ով այդ նպատակով ինչ իր հետ վերցրել էր: Ձայները լսելով՝ դատավորը դուրս եկավ միջանցք.

- Լավ չեք դաս տալիս: Խփեք...Այդպես ... Ավելի ուժեղ... Մեջքին, երիկամներին...

Դատապաշտպաններից մեկը հասկանալով, թե միջանցքում ինչ է կատարվում, դուրս եկավ, փորձեց դադարեցնել, բայց ինքն էլ հարվածներ ստանալով, հետ՝ դահլիճ փախավ, եւ հաջորդ օրը դատավարությանը ներկայացավ աչքի տակ կապտուկով:

- Ես քաղաքակիրթ ոչ մի պետությունում նման բան չեմ տեսել, հանեք ձեռնաշղթաները,- դատարանի դահլիճում պահանջեց Տյուլաեւը:

- Բայց քաղաքակիրթ մարդկանց նկատմամբ՝ ոչ թե սրանց նման գազանների,-Տյուլաեւի խոսքը կտրեց դատախազ Մամեդովը: -Ձեզ նմաններն էլ եկել եւ սրանց պաշտպան են կանգնում: հետաքրքիր է, ի՞նչ է մտածում Ռուսաստանը:

- Խնդրեմ, առանց հռետորական հարցերի,-դատախազին ընդհատեց Տյուլաեւը:

- Խոջալլուում հայերը մի ամբողջ քաղաք են կոտորել: Խոստանում եմ՝ արյունոտ դատ է լինելու: Ուզո՞ւմ եք, հայերեն վարեմ դատը,- հեգնանքի ու ծաղրի անցավ դատավոր Ռոմելա Ալլահվերդիեւան: Վերջինս Շուշի քաղաքի դատավորն էր, հայերի հետ շատ սերտ հարաբերությունների մեջ, Թթու ջրի մոտ թե հայ, թե ազերի միշտ տանում պատիվ էին տալիս:

Դահլիճ մտավ մի կին, որին ներկայացրին իբրեւ Սալաթինի խորթ մայրը, ոտքից գլուխ ծերմակ հագած, ծաղկեփունջը ցուցադրաբար ձեռքին բռնած:

- Առստամյան Գառնիկ: Մեղադրվում է սպանության, ավազակության, ազգամիջյան թշնամանք հրահրելու մեջ...

- Մահապատիժ: Մահապատիժ եմ պահանջում իմ ամուսնուն սպանողին,- դահլիճից գոչեց կինը, եւ Գառնիկը տեսավ նրան՝ անասնապահի կնոջը, որ հաշմանդամ է, ձեռքի թաթը չկար ու կտրվածքի տեղում մսի կտորներ էին ցցված: Թշնամանքի փոխարեն կալանավորը խղճահարություն զգաց: Իր խիղճը մաքուր է այս կնոջ հանդեպ: Ոչ միայն չի սպանել, այլեւ ինքը հոգու խորքում մեղադրել է անմեղ մարդուն սպանողներին: Այդ պահին տաքսու մեջ այն ժամանակ եղած երկու ուղեւորին որպես վկա բերեցին դահլիճ:

- Ճանաչո՞ւմ ես:

- Չեմ ճանաչում,-պատասխանեց ուղեւորը դատախազի հարցին:

- Սրանցից ո՞ւմ ես ճանաչում:

Վարորդը ցույց տվեց Հրաչիկին, բայց իրականում վերջինս հետո էր հայտնվել դեպքի վայրում:

- Անուն, ազգանուն, հայրանուն:

- Մկրտչյան Առնո Միքայելի:

- Ծննդյան թվական:

- 1953:

- Մասնագիտություն:

- Մանկավարժ: Ֆիզիկայի ուսուցիչ:

- Մահ բոլորին,- հնչեց դահլիճից:

- Մորթոտել: Ոչ մեկը կենդանի չպիտի մնա:

- Սրա դատաստանը հանձնեք մեզ...

Դահլիճից հնչում են սպառնալիքով լի ձայներ: Դատավորը կարգի հրավիրելու փորձ չի անում: Կանայք մոտենում, ճաղերի արանքով ձեռքները մեկնում ու ճանկռտում են մեղադրյալների երեսները:

- Դու քեզ մեղավո՞ր ես ճանաչում,- շարունակում է դատավորը:

- Մասամբ: Ես մարդ չեմ սպանել:

- Մա՛հ: Մա՛հ: Մարդասպանը հրաժարվում է... Սպանենք...- Մոտենում են ցանցավանդակին, գրպաններից քարեր են հանում ու շպրտում:

- Վկա Շիրալիեւ:

ՈւԱԶԻ հետեւից, որի մեջ Ասկերովան էր, պատահական մեքենա էր գալիս, որի մեջ երկու ուղեւոր կային, նրանցից մեկն էր:

- Ես սրանցից ոչ մեկին չեմ ճանաչում: Չեմ տեսել, մութ էր: Ճիշտ է, կրակոցներ եղել են, բայց էդ կրակողները եթե սպանելու մտադրություն ունենային, մեզնից ոչ մեկը կենդանի չէր մնա,- ասաց ու նստեց:

- Դավաճա՛ն:

- Դավաճա՛ն:

- Դու թուրք չես:- Դահլիճի գոռոցների տակ Շիրալիեւը գլուխը կախ փախավ դահլիճից: Ցանցավանդակի հետեւում տղաները ազերիի ցուցմունքի վրա ավելի քան զարմացած էին:

Դատին չէր ներկայացել Լաչինի պարետության սպանված ռուս զինվորականի կինը Լարիոնովան, բայց Ռոստովից գրություն էր ուղարկել հետեւյալ բովանդակությամբ.

«Ես չեմ մեղադրում ոչ հայերին, ոչ ադրբեջանցիներին: Մեղավորը պատերազմն է: Քանի անգամ եմ ասել, զգուշացրել, թե ինչ գործ ունի Անդրկովկասում: Չէ որ նրանք տաքարյուն ժողովուրդ են: Քանի անգամ եմ խնդրել, որ հետ գա, որ իրեն վտանգ է սպառնում... Ես ոչ մեկին չեմ մեղադրում»:

Դատախազը կարդում է Առնոյի օրագրային գրառումները, որոնք ԲԻՄ-ի արխիվի հետ բռնագրավել էին: Կարդում է Հունաստանի հայ համայնքից ստացած նամակը, որի մեջ ասվում է.«Քաջարի բերդաձորցիներին: Դուք, որ երկու տարի շրջափակման մեջ հերոսաբար դիմադրել եք... եւ այլն, եւ այլն»: Եզրակացությունն այն էր, իբր կապ է ունեցել արտասահմանի հետ, լրտեսությամբ է զբաղվել: Դատախազը եւ կարդում, եւ արանքներում բանավոր շեշտում է խոջալլուն, դավագրգռում դահլիճին:

Ադրբեջանի Հանրապետության քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն ավելի նվազ խիստ պատիժը ավելի խիստ պատժով կլանելու ճանապարհով Առնո Միքայելի Մկրտչյանին վերջնական բացառիկ չափի մահապատիժ նրան պատկանող անձնական գույքի բռնագրավմամբ: Հրաչիկ Արմենակի Պետրոսյանին մեղավոր ճանաչել Ադրբեջանի Հանրապետության քրեական օրենսգրքի 70-րդ, 67-րդ հոդվածի 3-րդ մասով, 94-րդ հոդվածի 2,4 եւ 8 կետերով, 15, 94-րդ, 2,4 կետերով եւ սահմանել պատիժ Ադրբեջանի Հանրապետության քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով պատժի բացառիկ չափ՝ մահապատիժ, նրան պատկանող անձնական գույքի բռնագրավմամբ:

Դատավորը կարդում է քրեական գործով դատավճիռը: «Ադրբեջանի Հանրապետության քրեական օրենսգրքի 67 հոդվածի 3-րդ կետով, 70 հոդվածով, 94 հոդվածի 4-րդ կետով, 15, 94 հոդվածների 4-րդ կետով, 220 հոդվածի առաջին կետով Մկրտչյան Առնոն դատապարտվում է մահապատժի:

Դատավորը կարդում է.«67-րդ հոդվածի 3-րդ կետով, 70 հոդվածով, 17,94 հոդվածների 4-րդ կետով, 17,15,94 հոդվածների 4-րդ կետով Արտաշես Մկրտչյանը դատապարտվում է ազատազրկման 15 տարի ժամկետով:

- Հովսեփյան Ենոք: Եթե խոսեիր ոչ թե ռուսերեն, այլ ադրբեջաներեն», որին դու լավ տիրապետում ես, ավելի քիչ կտայի,-ասաց դատավորը եւ կարդաց՝ 10 տարի ազատազրկում:

11 հոգուց 5-ին մահապատիժ, 4-ին 15 տարի, մեկին՝ 10, մյուսին՝ 5 տարի ազատազրկում:

Նա, որ իբրեւ Սալաթինի խորթ մայրն էր, վեր է կենում ծաղկեփունջը նվիրում դատավորին, համբուրում ճակատը:

Դատավարությունը, որ տեւել էր մի ամբողջ ամիս, ավարտվեց:

Դատապարտյալներին իջեցնում են գերագույն դատարանի ներքնահարկը: Մեկ տասնյակի չափ հսկիչներ ներս են լցվում: Դագանակները շաչում են: Ձեռնաշղթաները խուլ տնքում են: Հեռուստալրագրողը մոտենում է Առնոյին: 1992-ի հարցազրույցը պարբերաբար հեռարձակվում է Ադրբեջանի հեռուստատեսությամբ. «Հայկական ահաբեկչությունը Ադրբեջանի տարածքում դարձել է մռայլ պատկեր, ժուռնալիստի մասնագիտությունը մահացու վտանգավոր է Ղարաբաղում, որտեղ որոշվում է նոր հողերի միավորում Մեծ Հայաստան ստեղծելու ճանապարհին: Եվ դա հայ ահաբեկիչների՝ պետական ոչ ձեռնտու գործիչների սպանության վերջին դեպքը չէ: Ահաբեկիչները շարունակում են իրենց նախորդների ավանդույթները՝ ստանալով իրենց ներկայիս տերերից հանձնարարություններ, առաջադրանքներ՝ ֆիզիկապես ոչնչացնելով կոնկրետ անձանց, որոնք խանգարում են Լեռնային Ղարաբաղի անեքսիայի պլանի իրականացմանը: Որպես օրինակ կարող է ծառայել Դոնի Ռոստովում գնդապետ Բոլդինի սպանությունը, Ստեփանակերտ-Շուշի ճանապարհին գնդապետ Գրիգորեւի սպանությունը, իսկ գեներալ-գնդապետ Շատալինը հայ ահաբեկիչների կողմից դատապարտվել է մահապատժի 1990 թվականին արված հետեւյալ արտահայտության համար. «Մեր հանրությունը, վախենում է՝ չի պատկերացնում իրադրության ողջ բարդությունը: Ես տեսել եմ աֆղանական պատերազմը եւ պետք է ասեմ, որ նրա նախնական փուլում ընդդիմությունը կարող էր միայն երազել նման սպառազինության մասին, որ ունեն հայկական գրոհայինները: Օգտագործվում են հրետանի, զրահատեխնիկա, ուղղաթիռներ: Հայ գրոհայինների ղեկավարության մոտ կանգնած են նախկին զինծառայողները, նորակոչիկներին վարժեցնում են հատուկ հրահանգիչներ: Հիշեցնենք, որ սա ասվել է դեռեւս 1990 թվականին:

Հայկական կողմից մահապատժի է դատապարտվել Վիկտոր Պոլյանիչկոն Լեռնային Ղարաբաղի հանրապետական կազմկոմիտեի ղեկավարը: Եվ ամենից հավանական է, որ հայ ահաբեկիչները իրականացրին իրենց դատավճիռը Հյուսիսային Կովկասում կրակելով նրա մեքենայի վրա: Իսկ մինչ այդ ԼՂԻՄ-ում Պոլյանիչկոյի դեմ կատարվել է մի քանի մահափորձ. ականանետից կրակել են մարզկոմի շենքի պա-

տուհանին, որտեղ գտնվում էր հայերին ոչ ծեռնտու Պոլյանիչկոյի աշխատասենյակը: Այն ժամանակ նա ծանր վիրավորվել էր: 1991-ի ամռանը Շուշիից ոչ հեռու լեռնային ճանապարհի վրա բեռնատար ավտոմեքենան խփել էր Պոլյանիչկոյի ավտոմեքենային, բայց նա մեքենայում չէր: Սպանվել է վարորդը: Ադրբեջանի դեմ սանձազերծած ահաբեկչությունը միանշանակ համարվում է Հայաստանի պաշտոնական շրջանակների քաղաքականությունը: Դրա հետեւանքը պատերազմն է, որը արդեն 6-րդ տարին է, շարունակվում է մեր հողում: Ահագնացող հայկական ծայրահեղականությունը շրջում է մեր տարածքում, հիշեցնում է մեզ շտապ միջոցների անհրաժեշտությունը, որպեսզի ժողովուրդներին ազատեն 20-րդ դարի իսկական ժանտախտից: Մարդկության պարտքն է սկսել միավորված պայքար հայ ահաբեկիչների դեմ, որոնք սպառնում են խաղաղությանը եւ անկայունությանը ոչ միայն մեր տարածաշրջանում: Հայկական առասպելը հիմնված ցեղասպանության ծայրահեղական կոնցեպցիայի վրա, ծառայում է, որպեսզի թեժացնեն անողջախոհ ատելությունը, որը հանցավոր հայերին վեր է ածում մարդասպանների... Հայկական ահաբեկչության արյունալի հետքը դեռեւս, ավաղ, շարունակվում է...»:

Ծեծելով դատապարտվածներին լցնում են «Սեւ ագռավի» մեջ ու տանում Բայիլ:

Բոլորը մի խցում են: Ներս է մտնում բանտապետի տեղակալը՝ ցուցակը ձեռքին ու սկսում կարդալ անունները: «Տեսակավորում» է կատարվում: Արտաշը հասկացավ, որ մահապարտներին առանձնացնում են, որ եղբորը այլեւս չի տեսնելու: Իրար մոտենալու հնար չկար: Ծեծ ու նախճիր էր:

Արտաշը որսաց Առնոյի հայացքը, տեսավ եղբոր արցունքակալած աչքերը:

Առնոն նայեց ու տեսավ Արտաշի արցունքները:

Դա տեւեց ակնթարթ: Երկուսի աչքերում, որոնք երկաթե կամք ունեին, անդրադարձավ վերջին պահը միակ արցունքը...

Բայիլի բանտի հինգերորդ մասնաշենքի թիվ 126 խուց:

- Էս դռնից մտնողը՝ էս դռնից չի դուրս գալիս,- մահապարտներին ընդունելով ասաց ավագ հսկիչը,- դուրս եք գալու՝ առաջին հարկի դռնից՝ էն էլ ուրիշ ձեւով,- հսկիչը ձեռքի շարժումով ցույց է տալիս հորիզոնական դիրքը:

Խցի չափերն են 2-2,5 մետր: Զբոսանքը բացառված էր, բայց ամենահավորը գետնահարկից , ուր իրականացվում էր պատժի գերագույն չափը, երբեմն-երբեմն լսվող կրակոցների ձայներն էին եւ գարշելի հոտը, որ բարձրանում էր վերեւ:

Թիվ 126-ը մահապարտների խուցն էր, որտեղ բերեցին բերդաձորցի հինգ մահապարտներին: Հետո բերեցին հոռաթաղցի Արկադի Հայրիյանին՝ Նապոլեոնին, բերեցին դաշբուլաղցի Յուրի Ջհանգիրյանին, որին ազերիները ծաղրանքով «Մարշալ» մականունն էին կպցրել: Արկադին պատմեց իր կյանքի պատմությունը, թե ինչպես են կալանքի վերցրել, պատմեց, որ շրջապատման մեջ վերցնելու պահին, նկատել է Մարտակերտի շրջանային պաշտոնյա անձի չարախինդ ժպիտը, որ կանգնած է եղել ռուս բարձրաստիճան զինվորականների մեջ: Հազը բռնեց, ձեռքը տարավ բերանին ու ջանքեր էր գործադրում, որ հազը խեղդի: Կալանավորի թոքերը արդեն շարքից դուրս էին գալիս:

- Բոլորս նույն վիճակում ենք, քեզ ազատ զգա, մի նեղիր քեզ,- ասաց Գագոն, որի թոքերը եւս հիվանդ էին:

Չախկ-չրախկ, բանալին պտտվում է անցքի մեջ: Մահապարտների երեսները մազակալել էին, եկել էին թրաշելու: Մազերը խուզելով գլխներին խաչ են նկարում, ծաղրուծանակի ենթարկում: Կեսը թրաշած հանում են միջանցք ծեծելու: Գառնիկին առանձնացրին, հանեցին բակ ու սկսեցին ծեծել: Ավագ հսկիչը մոտեցավ.

- Էդ ի՞նչ եք անում: Դա չի: Սխալվել եք:

Գառնիկին ներս են բերում, Ջհանգիրյանին են հանում դուրս:

... Երբ խցում աչքերը բացեց, Յուրան տղաներին պատմեց, որ իր հետ փոխանակելու համար 28 խոջալուեցու ցուցակ են ներկայացրել, պարզվել է, որ նրանք սպանված են, չկան...

Բանտի աշխատակիցները գիտեին ո՞ր կալանավորին՝ ինչքան ծեծել, ո՞ր մասին խփել, ինչ աստիճանի հասցնել:Միշտ հարվածում էին Առնոյի երիկամներին ու լյարդին: Ջհանգիրյանը չէր կարողանում շարժվել, բայց խոսում էր: Հրաչիկը հոգ էր տանում, հսկիչից ջուր խնդրեց, շորերը լվացավ, փոխեց:

- Տղերք, ոնց որ լյարդս է պայթել, ինձ փրկություն չկա,- Հրաչիկը հույս տվեց, բայց գիտեր, որ վիճակը ծանր է: Երրորդ օրը Ջհանգիրյանը հանգավ Հրաչիկի ձեռքերի վրա...

- Առստամյան, դու անընդունակ աշակերտ ես, «2» ես ստանում,- Առնոն ֆիզիկա առարկայից հետաքրքիր ու հանրամատչելի թեմաներ ընտրում, պարապում էր, որպեսզի եւ ժամանակն անցնի, եւ մահվան ստվերը հալածվի: Մի տարի առաջ 6-րդ դասարանի դասընթացից

սկսել էր, Բայիլում հասել էին 10-րդին: Գրականությունից անցնում էր աստղագիտությանը, աստղագիտությունից՝ աշխարհագրությանը, եւ այսպես...

- Առնո, դե մի էն ուտանավորն ասա, որ 5-րդ դասարանում գրել էիր:

- Կյանքս կտամ քեզ, Ղարաբաղ,
Եթե լինի մի նեղ առիթ...

- Ես էլ քեզ եմ «2» նշանականում, Մկրտչյան: Եթե չգրեիր՝ կյանքս կտամ, էսօր էստեղ չէինք լինի...

- Սրանից էլ «նեղ առի՞թ», ես էլ եմ «2» նշանակում,- կատակեց Գագոն:

- Մկրտչյան, մնում ես նույն դասարանում,- Հրաչիկը եւս «անբավարար» նշանակեց:

- Ծուլություն մի արեք, սովորեք, դուրս գալուց պատրաստ կադրեր եք լինելու:

Այդ պահին առաջին հարկից կրակոցներ լսվեցիին:

- Էլի կրակոց,- ճնշված ձայնով ասաց Գառնիկը,- տեսնես ում ծրագը հանգավ:

Մասնաշենքի առաջին հարկում մի կյանք ընդհատվեց...

- Դե, հիմա լսեք, խաղիկներ եմ ասում,- Առնոն փորձում է տղաների ճնշված մտքերը շեղել:

Խնձոր օնիմ, կծածա,
Չուրսուայլուլուր նախշածա,
Ախպերս օգից՝ տըվե վեչ,
Ըսեցե յարիս ղարկածն ա:

- Դրանք որտեղի՞ց գիտես:

- Մեծահասակներից եմ լսել, գրի առել, ժողովրդական է.

Տաշտը դատարկ, մաղը՝ կախ,
Փորը սոված, թուրը՝ կախ,
Ծարավել եմ՝ ջուր չկա,
Վախենում եմ ղարիբ մեռնեմ
Կշտիս մեր ու քուր չկա:

- Սա հավանաբար հորինվել է 1918-ին, գաղթի ժամանակ, մայրս արտասանել է, ես հիշել եմ:

Առնոն ձեռքը տարավ աջ կողմին ու ցավից տնքաց:

- Հակաբիոտիկներ են պետք,- խնդրեցին տղաները, երբ ակնատը բացվեց:

- Թանկ է, տղերք, չեմ կարող:

- Իսկ եթե ոսկի տա՞նք:

- Կփորձեմ: Միայն եթե իմանան, ինձ կկորցնեն,- ասաց հսկիչը, որ բարեհաճ էր տղաների նկատմամբ: Պատմել է, որ ամեն անգամ, երբ գնում է տուն, մայրը խնդրում է, որ հայերին չծեծի: Որդին ասել է՝ բայց նրանք մարդ են սպանել, մայրը պատմել է, որ երբ ընտանիքի հայրը մահացել էր, Բաքվի հայ հարեւանները օգնել են, որ իր որբերը մեծանան:

- Գիտե՞ք ով է բանտի բժիշկը,- հարցրեց հսկիչը,- Սալաթինի եղբայրն է...

- Գառնիկ, ատամնաշապիկներդ պիտի հանես,- Գագիկը հսկիչից ածելի խնդրեց, ու սկսեցին սղոցել ոսկե ատամնաշապիկները:

- Եթե էս դժոխքից պրծնենք, քո ատամները հագցնելը՝ իմ պարտքը:

- Տեսնենք,- կատակով պատասխանեց Գառնիկը:

Առնոյի աջ կողմում ցավերը գնալով ուժեղանում էին: Հսկիչը հաբեր բերեց, բայց ոչ մի փոփոխություն:

- Գուլիեւ, դրսում մի բժշկի հետ խորհրդակցիր, ուժեղ ներգործության դեղ բեր,- խնդրեց Գագոն,- ասա ոնց որ լյարդն է հիվանդ:

Հսկիչը նոր դեղեր բերեց, ընդունելուց հետո Առնոն թեթեւակի աշխուժացավ, ընդհատված դասերը նորից սկսվեցին:

Այդ օրը Առնոյի տրամադրությունը մի քիչ տեղն էր, շրջվեց դեպի պատը ու հեշտ քնով անցավ: Գագոն լաթերից մեկը, շատ կամաց, որ չարթնացնի, կրկնակի ծածկեց ցավող աջ կողմը:

Խցում գիշեր իջավ:

...Մայրը բոված ցորենը բուռ-բուռ լցնում ու պտտեցնում էր երկանքը: Կոտրատված ցորենը թափվում էր խսիրի վրա, Առնոն չոքած, բռով վերցնում, ատամների տակ ցորենը փշրում եւ դաշտի չորացած խոտի քաղցր բույրն էր առնում: Հայացքն ընկավ Ծովեն տատիին ու երեք խնձորենի տեսավ: Բայց այնտեղ խնձորենիների մեծ այգի կար, հոր տնկած ծառերը, դրանք շատ էին, ո՞ւր են: Մայրը՝ Արփենիկը ցածրաձայն երգում է, ինքը գլուխը թաքցնում է գլխաշորի տակ հավաքած շիկավուն ու գանգուր մազերի մեջ: Մազերից բոված ցորենի նույն բույրն է առնում: Մայրը ձեռքը տարավ, տղայի գլուխը շոյեց. «էդ ե՞րբ ճերմակեցիր, որդիս»: Ձեռքը քունքերին տարավ, որ մոր ձեռքը բռնի, բայց... կպավ սառը պատին ու բացեց աչքերը.

- Ծառը կյանք է, տղերք, երեք հոգի ազատվելու են,- ասաց Առնոն:

- Բա մի տեսնեիր ովքեր են,- կատակեցին ընկերները:

- Ազատվողներ լինելու են, տղերք:

1993-ի ամառն էր արդեն: Միջանցքում լսվում է Գագամփարի ձայնը: Գառնիկը ցնցվում է: Բանալին պտտվում է անցքի մեջ:

- Դո՞ւ... Այստե՞ղ... - Ուրախությունից դողում է Գառնիկը:

- Ռեժիմի պետն եմ: Պաշտոն տվին,- ասաց հպարտ-հպարտ,- հաշվապահ, ինչ պետք լինի կասես, ապա շրջվեց դեպի ավագ հսկիչը:

- Սրանց մեջ անմեղներ էլ կան: Սա իմ բաժինն է, սրան ձեռք չտաք:

Խուցը զուրկ էր բնական լույսից: Միջանցքից ակնատի ճեղքից մի աղոտ շերտ էր թափանցում, եւ ներս մտնողը մինչեւ աչքերը մթության մեջ վարժվելը չէր կարող ջոկել դիմագծերը:

Առնոն քանդված պատից մի կտոր ծեփ վերցրեց ու գետնի վրա սկսեց գծել.

-Նայեք, սա նախկին Բերդաձորի գավառի սահմաններն են: Լաչինի տարածքում հազարից ավելի հայկական գյուղեր են եղել, Լենկ Թեմուրը արշավելով, վառելով եկել է, վերջին գյուղի անունը դրել Մինքենդ, այսինքն հազարերորդ:

- Որտեղի՞ց գիտես,- զարմացավ Արկադին:

- Մեկ-մեկ շրջել եմ գյուղերը, հայկական գերեզմանաքարերը իրենց մակագրություններով նկարել եմ, Մատենադարում պահպանված հին գրքեր կան, ուսումնասիրել եմ, գրառումներ եմ արել, գյուղերի անունները մեկ-մեկ գրել ու հաշվել եմ:

- Առնո, տես,- Գագոն քորեց բազուկը, եւ մաշկը շերտ-շերտ պլոկվեց,- հաշվել եմ 8-րդ ամիսն է, ջուր չենք լցրել մեզ վրա:

Ամռանը բաղնիք էին տանում, եռացող ջուր բաց թողնում, ծմռանը սառույց կտրած ջուր ու տղաները չէին կարողանում լողանալ: Տղաները խմելու ջուրը հավաքեցին ալյումինե փոքրիկ թասիկի մեջ, շորը թրջեցին հերթով քսեցին մարմիններին, մաքրվեցին:

- Գագո, լսիր, 20 տարի առաջ Սանկտ Պետերբուրգից եկած արշավախումբը Վարար ջրի ձորում հազվագյուտ մետաղի հարուստ երակներ է հայտնաբերել, եթե դրանք օգտագործվեն, Բերդաձորը իր նախկին փառքին կհասնի:

- Տնաշեն, ես Գրետայի ու երեխաների պատկերները մոռացել եմ, դու ձորի մետաղների՞ց ես խոսում: Երազ էլ չեմ տեսնում, գլուխս ոնց որ մի տեսակ...

Սեպտեմբերի սկզբից Առնոյի վիճակը ծանրանում է: Խոսելը հոգնեցնում էր, ու այլեւս ոչինչ չէր պատմում:

Գառնիկը ճաշը մոտեցրեց, ձեռքով հրեց: Կաթ-կաթ ջուր տվեցին:

- Բժիշկ է պետք,- Գագոն ծեծեց ակնատը:

- Չեմ ասե՞լ, մինչեւ մեռնող չլինի, մեզ չանհանգստացնեք,- եղավ պատասխանը,- մեր հոգյումեթի ինչն ասեմ... ես ինչի չեն տանում ներքեւի հարկ, հարցը միանգամից լուծում... ես ինչի են պահում-կերակրում,- հսկիչը ճաշի թասը շրխկացրեց ակնատի գոգին:

- Գառնիկ, սիրտս ծանր է:

- Էլի՞ երազ ես տեսել:

Մեծ Շենի սուրբը Պարին Պիժը երազներում հետապնդում էր Գագոյին: Դատավարության նախորդ օրը երազում երեւացել է ձիու վրա, սպիտակ հագուստներով, սպիտակ փառահեղ մորուքով, այն տեսքով, ինչպես ինքն էր պատկերացնում, ասել ի՞նչ ես քիթդ կախել... ես գալու եմ, շրջել է ձիու գլուխը, անհետացել: Վեր էր կացել, պատմել տղաներին:

- Երեսս ոտքիդ տակը, Պարին Պիժ,- տատի աղոթքի խոսքերը հիշեց ու շշնջաց Գագոն: - Գառնիկ, սիրտս ծանր է, վատ բան է կատարվելու,- ու ականջին պատմեց գիշերվա երազը:

...Եկեղեցուց վերեւ թմբի վրա շարվել էին ձորակի յոթ սրբերը, բոլորն էլ երկար, սպիտակ սքեմներով ձախ կողմում եղցահողի Սուրբ Սարգիսը եւ Սարուսպերքը, հետո Հին Շենի եւ Մեծ Շենի սրբերը Համձասարի (Համազասպ սար) սուրբը, Գերեզմանուտի, Զորավոր ծառի, Ալիմալիի սրբերը, մեջտեղում Պարինպիժը: Երկու սրբեր Առնոյի թեւերն ընկած իջեցնում են ներքեւ Հռիփսիմեի սրբավայրը:

- Առնո, ի՞նչ է եղել:

Առնոն հայացքը կախ չի պատասխանում:

- Ո՞ւր եք տանում,- Գագոն դիմում է սրբերին:

Չեն պատասխանում: Գագոն հայհոյում է, հետ է նայում: Ոչ ոք չկա, ոչ սուրբ, ոչ Առնո... ես ո՞ւր մտան, Հռիփսիմեի եկեղեցի՞ն,- վերջին մտքի վրա Գագոն արթնացել է.

- Առնո, ցավող տեղ ունե՞ս:

- Ոչ,- հազիվ շշնջաց:

- Առնո, բացիր աչքերդ,- Գառնիկը ձեռքը դրեց ճակատին:

Ոչ մի ձայն, ոչ մի տնքոց: Հանգիստ պառկել էր:

Երեկոյան կողմ բացեց աչքերը.

- Տղերք, օգնեք նստեմ:

Տղաները թեւերը մտան, կիսանստեց: Աչքերը պայծառացած արտակարգ փայլ ունեին: Տղաներին ուրախություն պատեց, կարծեցին՝ լավանալու սկիզբն է:

- Գառնիկ, ուշադիր լսիր, մեր տան հետեւում խոտանոցն է, դռան մոտից մեկ մետր դեպի ջրավազանը, չոր ցյուղերի երկու խուրձ կա դրած, դրանց տակը փորում ես...

- Առնո, միասին ենք գնալու,- հուզվեց Գառնիկը:

- Քեզ ասում եմ՝ լսիր: Փորում ես, մեկ մետրից հասնելու ես մետաղյա տուփի, մեջը փաստաթղթեր են, կտանես Գորիս, կհանձնես Սիդային, ուսանողական ընկերուհուս, մեր ընդհատակյա կազմակերպության միակ կին անդամն էր...

Երկու օր անընդհատ զրուցելու պահանջ էր զգում.

- Անուշին մի անգամ եմ տեսել... Տեսնես ով՝ ինչ ուղղությամբ է գնալու...

- Բայց ինձ անհասկանալի մնաց ընկերներիս վերաբերմունքը...

- Ո՞ւմ, Առնո՛...

- Վազգեն Սարգսյանի, մյուսների... Դե, մենք մեր իմացածով պիտի շարժվեինք... Ափսո՞ս...

Տղաները հասկացան, թե ինչ է ակնարկում:

- Հոգնել եմ, թողեք պառկեմ...

- Առնո՛...

- Առնո՛...

Դեմքին լուսավոր, խաղաղ ժպիտ կար... Մայրը՝ Արփենիկը, շեկ գանգուրները գլխաշորի տակից ուսերին թափված, ուրվագիծը լույսի շողերով թաթախված՝ ձեռքը մեկնեց որդուն...

Խցում ծանր լռություն տիրեց:

- Գագո, ո՞ր ամիսն է...

- Սեպտեմբեր, 25-ը: 1993 թվական...

- Ո՞վ է թույլ տվել բարձի երեսը պատռել, ծնոտը փաթաթել...

- Մեր սովորության համաձայն...

- Հիմա մե՛ր սովորության համաձայն կստանաք...

Մահապարտները հարվածներից ցավ չեն զգում: Ոչ մի ձայն, ոչ մի տնքոց... Մի կերպ իրար կպած կողոսկրերը նորից ջարդվում են:

Ն մոտոհրաձգային վաշտը Կուբաթլուի ազատագրման ժամանակ գերի է վերցնում բարձրաստիճան զինվորական դատախազին Իսկենդեր անունով: Գործողությանը մասնակցել է նաեւ Արտաշ Մկրտչյանը: Տող գյուղի մոտ, սահմանագծում, հրամանատարությունից միջնորդում են, որ Արմո Մկրտչյանը եւ Սարգիս Յարամակյանը մասնակցեն բանակցություններին:

Կյավաք բարձունքը դեռ ազերիների ձեռքին էր: Տարածքում նախորդ օրվա ռազմագործողության հետքերը՝ կիսայրված, խփված տանկ, դիակներ, իսկ սահմանագծում ... առ եւ տուր է: Ազերին ընդունեց դիակը: Հայը հաշվում է փողը.

- Էլի պակաս ես տվել:

- Հա, գարդաշ, ոչինչ, մյուս անգամ... - Շողուն ժպիտը դեմքին իբր համոզում է ազերին:

- Էն նախորդից էլ դեռ 250 մանեթ պարտք էիր մնացել:

- Հա, գարդաշ, հա, մյուս անգամ...

Սպան հաջորդ դիակը մոտեցրեց ու քաշեց ընկերոջ փեշից.

- Արագացրու, դրա ժամանակը չի:

Հրանոթային համազարկերը արդեն սկսվել էին, որ նոր ռազմագործողության սկիզբն էին ազդարարում:

Բանակցությունները վարում էր «Ֆանտոմաս» մականունով ազերին: Արմոն կանգնեց դեմդիմաց.

- Ինչքա՞ն է պետք, ասա:

- Գործը Ադրբեջանի նախագահի հսկողության տակ է: Միայն նա կարող է ներում շնորհել,- ցավակցական տոնով հաղորդեց Ֆանտոմասը:

Երկու կողմից էլ բանակցողներին հսկում էին զինված պահակազորները: Հեղձուցիչ շոգ էր: Ազերիների պահակազորում մեկն առանձնանում էր ածդահա, ճաղատ, սարսափազդու տեսքով, ձեռքի գնդացիրը ուսից կախ: Տողեցի մի զինվոր՝ Սուրիկը ձեռքի ավտոմատը մի կողմ դրեց ու անսպասելի մոտեցավ ճաղատին, բռնեց զենքի կոթից.

- Գցի՛ր, գյուլաշ բռնենք,- ասաց մաքուր ադրբեջաներենով: -Դո՛ւ հաղթես, ուրեմն Ղարաբաղը վերցնելու եք, ես հաղթեմ՝ ուրեմն, Ադրբեջանդ չի լինելու:

Երկու կողմից զարմացած նայում են հային, որ համառորեն ու պինդ բռնել էր ավտոմատից: Մինչ ազերին շփոթված դես ու դեն էր նայում, հայը կրկնեց պահանջը.

- Տղամարդավարի... արի կոխ բռնենք:

- Գժվե՞լ ես, ի՞նչ է,- հայ սպան քաշեց Սուրիկի մեջքից,- ժամանա՞կ ես գտել:

-Գորխմա, զարափաթ էլիյիր, ազերի սպան հանգստացրեց հսկա-

յին, որ քրտինքը տվել ճակատին, մեկ իր հրամանատարին, մեկ զենքից ձեռքը չհեռացնող հային էր նայում:

Մի քանի օր անց Արմոն Մարտունու շրջանի Մարգիլուի սահմանագծում մուշկապատցի Աբոյի հետ նորից բանակցությունների մեջ է մտնում նույն Ֆանտոմասի հետ:

- Համաձայն ենք, միայն զինվորական դատախազը եւ ազերի վիրաբույժը, այն էլ պայմանով, որ նրանց լեզվից գրություն բերեք:

Հաջորդ օրը նույն տեղամասում Արմոն ոստիկանության մարգային վարչության պետի միջնորդությամբ վերցրած գրությունը մեկնեց Ֆանտոմասին:

- Փոխանակությունը տեղի կունենա սեպտեմբերի 16-ին,- ձեռագիրը զննելուց հետո ասաց ազերին:

Արմոն մտքում հաշվեց օրերը՝ մեկ շաբաթ դեռ կար: Մի քանի օր անց ոստիկանության ՈւԱԶ-ը կանգնեց Մկրտչյանների տան առաջ, Հին Շենում:

Ոստիկանության մարգային վարչությունում հարցաքննություն է:

- ՊԱԿ-ի մեկուսարանից դո՛ւ ես փախցրել դատախազին,- ներկայացրին մեղադրանքը:

- ՊԱԿ-ի գետնահարկի՞ց,- հակադարձեց Արմոն:

- Իսկ մենք ուզում էինք եղբորդ բանտից հանել:

- Եվ դուք ձեր հորինած հեքիաթին հավատո՞ւմ եք,- դառը եւ կծու ասաց Արմոն: - Դատախազը շատ թանկ արժեցող ապրանք է... Եղբորս արյունը կերաք... - Հուսահատ շպրտեց ու շրխկացրեց դուռը:

Մի քանի օր անց սեպտեմբերի 23-ին միջազգային Կարմիր խաչի կազմակերպությունը հարազատներին հայտնեց Առնո Մկրտչյանի մահվան լուրը:

Հոկտեմբերի 15-ին դիակը հանձնում են: Արմոն բացում է դագաղը: Ոչ մի շոր չկար հագին: Ամբողջ մարմինը՝ ոնց որ շերտ-շերտ կապույտ զոլեր քաշած: Ոտքի բութ մատը կտրած: Ձեռքի մատները կոտրատած, բոլոր եղունգները հանած: Ազդրերի վրա՝ խոր վերքերի հետքեր, կողոսկրները ծակծկված՝ մազերը լրիվ ճերմակած:

...Գերեզմանաթմբից քիչ հեռու դրված էր ինքնաշեն թնդանոթը: Եղբայրները՝ Արմոն ու Արտաշը, հրեցին ու դրեցին թարմ շիրմաթմբի վրա: Արմոն գլուխը հենեց սառը մետաղին ու արցունքներին ազատություն տվեց: Արտաշեսի աչքերը չոր էին ու անփայլ: Նրա սիրտը եղբոր կրած բանտային տանջանքների հիշողությունից ծվատվում էր, ու շուրթերից

ոռնոց դուրս թռավ, ոչ շատ բարձր: Ինչ որ բառեր էր ասում, բայց դա մարդկային հոդաբաշխ խոսք չէր, այլ հոգու ցավի կցկտուր արտահայտություն.

- Առնո՜... Եղբայրս... Առնո՜...- Բառերը հազիվ էին ջոկվում, ու մարտիրոսվածի մարմինը, որ հանգչում էր հողի տակ, ցնցվում էր եղբոր - զինակցի՝ բանտային ընկերոջ ոռնոցից...

Միքայել Մկրտչյանը չոքեց շիրմաթմբին.

-Հայրասպա՜ն...- հոր շուրթերից դուրս թռած բառը, եթե լսեցին էլ, չընկալվեց: Հոր մորմոքը ընկավ հողին, հող, որ կլանում, ներծծում է իր մեջ լաց, մորմոք ու կսկիծ ու հանգստություն բերում հոգիներին:

Արմոյի համար այս պահից սկսվեց մի տառապանք, որ նրան պիտի տաներ հեռուները՝ Ռուսաստան, փող վաստակելու, որ կարողանար այս կերպ ավելի մոտենալ իր երկրին, Բերդածորին, իր գյուղին՝ Հին Շենին, պատերազմի հարվածներից թեւատված Մկրտչյան-գերդաստանի ծուխերին, որ արյան պարտադրանքով, բայց առանց ընբռնելու ու առանց ցուցադրության կապված պիտի մնային հողին, որ երկիրը հողվոր ունենա, հողը հերկող ունենա, որ եղբոր Առնոյի չորս աղջիկները մեծանային ու կրթություն ստանային, ընտանիք կազմեին ու երեխաներ ունենային, իրենց Մկրտչյանների աշխատասեր ու թանձրամաքուր մերանով ազնվացնելով այլ ազգանուններ: Որպեսզի Մկրտչյան - տոհմիկ գերդաստանում ծնվեին մանչուկներ, որ մեծանալով տեր կանգնեին անառիկ Վիշապաքարին ու բարձրիկ սարերի ու մութ ու խոնավ ծմակների բարձունքների կարկառներին, որ բարբառով կաշկառներ են կոչվում, Արմոն պիտի հեռանար, որ հայրը՝ Միքայելը անբառ կրելով որդիների՝ Առնոյի ու Արտաշեսի կորստի ցավն ու տառապանքը, անձնական կյանքում ինչ որ տեղ չհասկացված մնալով դուստրերից, դասարան մտներ իր Հին Շեն գյուղում նույնիսկ 77 տարեկան հասակում, հատեր 80-ի սահմանը վերջին հայացքը թողնելով Սուրանի լանջին որդու սարքած բլինդաժին ու այս աշխարհից հեռանար ծա՛նր ու պատկառանքո՛վ: Արմոն հեռանալով պիտի մոտենար իր երկրին, որպեսզի ինչուներից ծվատվող միտքն ու հոգին կարողանային հաղորդակցվել եղբոր՝ Առնոյի անցած ճանապարհին ու խաղաղվեին տեսնելով Առնոյի ենջասենյակում վազվզող Առնելայի՝ ութ եղբայրներից փոքրի՝ Նորիկի փոքրիկ աղջնակի՝ պապից ու էլ ավելի շուտ հող դարձած Մկրտչյաններից ժառանգած աչքերը, լայն ճակատն ու թափանցող, խելացի ու կտրող հայացքը:

Բելան հոգեհացից տուն եկավ, պահոցից հանեց եղբոր՝ զինվորական ծառայությունից գրած նամակը, որ անգիր գիտեր, բայց այժմ

կարծես առաջին անգամ բառ առ բառ կարդաց ցավի ու արցունքի միջից. «Բարեւ, հարազատներս: Մայիսյան ջերմ ողջույններս Պրիմորյան Սմոլյանկայից: Սիրելի քույրիկ, ստացա գրածդ նամակը, ի՞նչ ասեմ, ապրիլ ամսին տնից նամակ չէի ստացել, եւ նորությունները իմանում էի քո նամակներից: Քույր ջան, դե ծառայությունս հանգիստ բնույթ ունի: Տանկ ենք քանդում-հավաքում: Սպասում ենք նոր մասերի: Մեխանիկը ժամանակավոր տուն է գնացել, գործը ինձ վրա է մնացել: Դե, ես որպես տանկի հրամանատար միշտ պիտի պատրաստ լինեմ փոխարինելու անձնակազմից ցանկացածին: Այնպես որ, զորացրվելուց հետո կարող եմ տրակտոր նորոգել, այսպես ասած, մեխանիզատոր էլ դարձա (կատակ): Հարցնում ես տարեդարձիս մասին: Ընկերներով լավ անցկացրինք: Արդեն քառորդ ... դար-եկան եմ. այդ օրը խորհելու շատ ժամանակ ունեցա: Ծանրութեթեւ արի անցյալս, արած ու չարած գործերս, նաեւ անմեղ «հանցանքներս», որ ծանր հետք է թողել իմ ինքնաձեւ, բառը հնարեցի, քույրիկս, հոգում: Հանգեցի այն մտքին, որ դրանք իզուր կորցրած տարիներ էին, իմ տարիքում մարդիկ հասած են լինում որոշակի հաջողությունների, դասավորված կյանքով ու որոշակի նպատակներով..

Որոնումներս ապարդյուն եղան, գրածներս՝ անհասանելի, կամ էլ՝ «հանցավոր»: Նման եմ անգեն որսկանի, որի «որսը» միայն վաստակած հոգնությունն է: Ինձ մնում է երկու բան. կամ էլի նույն «թափով» շարունակել, կամ էլ ամեն ինչ՝ անցյալ կոչվածը ջնջել-ավերել ու սկսել մաքուր էջից, նոր, գուցե սովորական ձեւով:

Թող բարին լինի՝ արեւ էլ կլինի... Սիրելի քույրիկ, վերեւի զեղումներից՝ եզրահանգումների չգաս... տողեր են, որ ծնվել են ու մեռել 25-ամյա ալիքի վրա: Մամայի ուղարկած ծանրոցը ստացա: Ամեն ինչ լավ տեղ էր հասել, ոչինչ չէր խաթարվել: Ուղարկածդ փողը ստացա, ինչ ասեմ, եթե չուղարկեիր էլ՝ լավ, որ ուղարկել ես, էլի լավ, այնպես որ կարիքը չունեի, բայց չէր էլ խանգարում: Շնորհակալություն, եթե կարելի է այդպես ասել:

Քույր ջան, ես զարմանում եմ Արմոյից, մեկ էլ քո գրած էն «մեկ հա, մեկ չէ, ասող» աղջկանից: Ի՞նչն է նրան երկընտրանքի մեջ գցել: Արմոյից լավի՞ն է գտնելու: Դպրոցում լինեի՝ աշակերտուհուս ականջից կքաշեի (կատակ):

Քո եղբայր՝ Առնո:

Մայիսի 10, 1978թ.»:

Բաքվի բանտի մահապարտների խցում Հրաչիկի դրությունը օր-օրի վատթարանում է:

- Մի ծխախոտ լիներ...

- Հացից խոսիր, ջրից խոսիր, - ասաց Գագոն:

- Սա վերջն է...

- Հրաչ, մոռացե՞լ ես, դու անվախ Հրաչն ես, պիտի դիմանաս...

- Մրսում եմ, տղերք...

- Ես քեզ կտաքացնեմ...

- Չէ, Գագո, ի՞նչ ես ասում, կվարակվես,- Հրաչիկն ու տղաները չգիտեին, որ Գագիկն էլ է թոքախտով հիվանդ:

- Լավ, ես դեմքս կշրջեմ,- ու շրջվեց դեպի պատը:

- Ինչ լավ տաքացա, Գագո, ես էս ջերմությունը չեմ մոռանա,- ու մի դառը ժպիտ երեւաց դեմքին :

- Համբերիր, Հրաչ, արդեն կեսօր է: Տաք ճաշ են տալու,- Գագոն նստած, գրկած պահում էր Հրաչիկին, ու զրուցում, հույս տալիս:

Ակնատը թխկացրին:

- Հրաչ, տաք ճաշը բերեցին, Հրաչ, հիմա հաց կուտես...

Հրաչիկը գլուխը հենած Գագոյի ուսին, ձայն չի հանում:

Գառնիկը թասը դրեց սեղանին ու մոտեցավ: Գագոն դեռ չհասկանալով կատարվածը գրկած պահում էր տաք մարմինը...

- Վերջ... Գագո...

- Ո՞նց թե... Ո՞նց թե...

Գառնիկը պառկեցրեց մահապարտին:

- Հրաչիկն էլ խաղաղ հեռացավ,- ասաց Գառնիկը՝ ի նկատի ունենալով, որ երեք մահապարտները վերջին ժամերին ցավ չէին զգում ու հեռանում էին խաղաղ ու հանգիստ:

- Բա ձեզ ի՞նչ ենք ասել,- գոռաց հսկիչը տեսնելով պատռված լաթը եւ կատարված ազգային սովորույթը:- Այդպե՞ս, հերթով, իրար հետեւից գնալու, դժոխքի բաժին եք դառնալու:

- Գագո, ամիսամսաթիվն ասա:

- 1994-ի հունվարի 5-ն է...

Խցում մնացին միայն բերդաձորցի երեք մահապարտները՝ Գագիկը, Գառնիկը, Արվիդը:

Այդ օրերին հարազատները Մոսկվա ուղարկած բողոքներին ի պատասխան ստացան մահվան բժշկական թիվ 38 վկայագիրը.

«Պետրոսյան Հրաչիկ Արմենի

Ծննդյան թվական՝ 1954, ծննդավայրը՝ Շուշիի շրջան, եղցահող

Մահվան վայրը՝ Բաքու, քննչական մեկուսարան

Մահը վրա է հասել հիվանդության հետեւանքով: Մահվան պատճառը հաստատված է դատաբժշկական փորձագետի կողմից:

Ես՝ բժիշկ Է.Ի. Ալեկպերովս, փորձագետ, դիահերձումի քննության հիման վրա հավաստում եմ, որ մահվան անմիջական պատճառը պայմանավորված է եղել թոքախտով՝ ձախ թոքի վերին մասի թարախակալումով:

1994թ. հունվարի 6»

Դրված է կնիքը, բժշկի ստորագրությունը:

Հարազատների պահանջը՝ ստանալու ածյունը՝ մինչեւ հիմա անպատասխան է:

- Գառնիկ, ես էլ չեմ կարող, ամիս-ամսաթիվը դու հիշիր,- ասաց, փորձեց վեր կենալ, բայց չկարողացավ ու նորից պառկեց:

Գառնիկը կեսօրվա ճաշը, հացի կտորը մոտեցրեց:

- Ախպեր ջան, խնդրում եմ, ինձ մենակ մի թող, ախպեր ջան,- չոքեց թախտի առաջ,- Գագո, ես չեմ դիմանա, ինձ մենակ մի թող... - ու կալանավորի հեհեկոցը բռնեց խուցը:

Հիվանդը պառկած ոչ ուտում, ոչ խմում, միայն տնքոցներ էր արձակում: Գառնիկը ձեռքը դրեց ոտքերին. սառը-սառը: Սառնությունը վերջույթներից բարձրանում էր դեպի վեր, մարմնի մյուս մասերը: Գառնիկը զգում էր, որ գալիս է վերջը, որ մահը գրկել է ընկերոջ ոտքերը, ու ինքը սարսափում է մահվան մոտիկությունից ու ընկերոջը կորցնելուց: Ինչքան ուժ ունի շփում էր ոտքերը, թրջում արցունքներով, աղաչում-պաղատում... Գառնիկը Արվիդի օգնությամբ հիվանդի տեղը փոխեց, որ դիտանցքից չնկատվի, որ չգան տանեն: Ոչ մի շարժում, ոչ մի տնքոց, զարկերակը չէր շոշափվում, Գառնիկը օրը մի քանի անգամ ականջը դնում էր կրծքին՝ ստուգելու սրտի զարկերը, ու չէր հասկանում, դրանք չկա՞ն, թե ինքը չի լսում, բայց մարմնի մեջ տաքություն դեռ կար: Միայն թե հսկիչները գլխի չընկնեն:

Յոթերորդ օրը հիվանդը ձեռքը տանում մոտը դրած աթոռից մի կտոր հաց է վերցնում, տանում բերանը ու սկսում կամաց-կամաց ծամել:

- Էս ո՞նց եղավ, ախպեր ջան, էս ո՞նց եղավ... Դու հաց ես ուտում,- ուրախությունից Գառնիկը չոքել տախտակամածի առաջ ու լաց է լինում:

- Բաց աչքերդ, ախպեր,- ասում ու շփում է ոտքերը:

- Բա ո՞ւր է Նա...

- Ո՞վ, Գագո:

- Սուրբը... Պարին Պիժը... Նա էստեղ էր, ասաց՝ ձեռքդ մեկնիր, հացը վերցրու...

- Հա, Գագո, հա, Պարին Պիժը...

Հացը կերավ ու քնեց: Տնքոց չէր լսվում: Գառնիկը մի պահ վախեցավ, զարկերակը բռնեց: Սիրտը թույլ, բայց բաբախում էր:

... Լողում է Հագարա գետն ի վեր՝ ձեռքին մի ճյուղ պինդ բռնած: Ձեռքը գցում է քարերին, լպրծուն է, չի բռնվում, ճանկռտում է, ոտքերի տակ հող է փնտրում առաջ գնալու, բայց գետի ալիքները հետ են շպրտում: Մեկ էլ գետեզրի ծառի հետեւից Պարին Պիժը ճերմակ շորերով գավազանը ձեռքին երեւաց ու պահվեց:

- Ո՞ւր ես, Պարին Պիժ, չես երեւում...- Հիվանդն աչքերը բացեց ու մի տեսակ էր:

- Հը՞, Սուրբը էլի երեւացե՞լ է,- Գառնիկը մոտ քաշվեց:

Գագիկը դեռ երազի տպավորության տակ ձայն չհանեց:

- Գագո, հիշո՞ւմ ես, նրան հայհոյել ես, կարող է՝ վիրավորված է, մոտ չի գալիս...

- Չէ, արդեն ներել է,- տնքաց հիվանդը ու սրտի մեջ թեթեւություն կար:

- Գառնիկ, ամիս ամսաթիվն ասա:

- Մարտը կիսվել է, 1995 թվականն է:

Խցի դուռը բացվեց, Կարմիր Խաչի ներկայացուցիչները ներս մտան: Բժիշկը ստուգեց կալանավորների թոքերը:

- Դուք հակաբիոտիկներ սրսկում ստացե՞լ եք,- թարգմանչուհիները Լիլին (Բրազիլիա) եւ Ասուսեյնան (Լեհաստան) թարգմանում են:

- Այո: Սրսկել են:

- Շրջվեք,- բժիշկը, որ ֆրանսիացի էր, անվանյալ՝ Պատրիկ, զննեց մարմինների սրսկված մասերը.

- Ինչո՞ւ եք ստում,- Պատրիկը սկսեց գոռգոռալ Գագիկի վրա,- ձեզ միայն նովոկային են սրսկել:

- Դե, մենք ինչ գիտենք՝ ինչ են սրսկում: Կանգնեցրել են պատի դեմ, ձեռքներս գլխներիս ու ... ասեղը քաշել: 93 կիլոգրամ քաշ եմ ունեցել,

հիմա տեսեք ինչ եմ դառել,- կալանավորներին կշռել ու լրացնում էին թղթերը: Գագոն 46 կիլոգրամ էր:

- Սա մահ է... Սա ստույգ մահ է... -Չէր հանգստանում Պատրիկը: - Ես կբողոքեմ, ես կհայտնեմ ուր որ պետք է...

- Ո՞ր տարիքից ես սկսել ծխել:

- 25 տարեկանից,- ասաց Գագոն:

- 15 տարեկանից,- չթաքցրեց Գառնիկը:

Բժիշկը նորից գոռգոռաց:

- Ի՞նչ պատահեց ես մարդուն, կարգին խոսում էր,- Գագոյի հարցը թարգմանելու փոխարեն աղջիկները ծիծաղեցին ու պարզաբանեցին, որ հիվանդությունը շատ է խորացել:

- Ես բժիշկ նշանակել կտամ:

Չորս օրից հետո մեկը սպիտակ խալաթով մտավ, կալանավորները չիմացան բուժքույր էր, թե բժշկուհի, բայց ազգությամբ հավանաբար սլավոնուհի էր եւ շատ ազդեցիկ: Նրա ներկայությամբ հսկիչները, բանտի աշխատակիցները զգաստանում էին: Նրա ոչ խոսքը, ոչ ձայնն իսկ կալանավորները չլսեցին: Մտնում՝ մատով ցույց էր տալիս, որ շրջվեն: Տղաները ցավից զգում էին, որ հակաբիոտիկ են սրսկում:

Հինգ օրից հետո Պատրիկը ներս մտավ, ստուգեց թղթերը.

- Այ, սա ուրիշ բան է... - Արտահայտեց իր գոհունակությունը:

Տղաները ծխախոտ խնդրեցին:

- Չի կարելի,- կոշտ ու կոպիտ պատասխանեց, բայց մի-մի հատիկ տվեց ու տուփը գրպանը դրեց:

- Է՛ս ինչ ժլատության տիպար է,- կատակով ռուսերեն ասաց Գագիկը:

Թարգմանչուհիները ինչ-որ բան թարգմանեցին, եւ տղաները բժշկի խիստ դեմքին ժպիտ տեսան:

Կարմիր խաչի ներկայացուցիչներին ուղեկցում էր բանտապետի տեղակալը:

- Հարկավոր է սրանց տեղափոխել, խոնավ է,- աղջիկները թարգմանեցին:

- Ձեր բժշկին ասացեք, որ սրանք մահապարտներ են, սրանց համար հատուկ խցեր են նախատեսվում, փոխելու իրավունք չկա,- նյարդային ասաց տեղակալը:

- Ասացեք նրան, որ ես բժիշկ եմ, իմ պահանջները օրինական են, եւ միջազգային չափանիշներին համապատասխան, եւ ես կրկնում եմ...

Բժշկի ձայնը խիստ էր, ազերին լռեց: Երեք ամիս հետո Գագիկին, Գառնիկին եւ Արվիդին, ողջ մնացած երեք մահապարտներին տեղափոխեցին անչափահասների եւ կանանց համար նախատեսած մասնաշենքը, ուր պայմանները համեմատաբար նորմալ էին, խցերը ինչ որ չափով ընդարձակ էին, առաստաղը բարձր, բնական լույսը թափանցում էր վերեւից: Պատրիկը կարողացել էր իր պահանջը կատարել տալ:

Իսկ մեկ տարի անց Գագոն ու Գառնիկը Բերդածորի 7 սրբավայրերում 7 ոչխար մատաղ արեցին, ոտաբոբիկ բարձրացան Պարին Պիժ, մոմ վառեցին եւ աղոթեցին նաեւ ֆրանսիացի բժշկի Պատրիկի համար: Իսկ տարիներ անց, Երեւանում հայտնի մասնագետ պիտի հայտնաբերեր ամբողջ ուժերը, որ բանտային պայմաններում մի բժիշկ կարողացել է այդպես հիմնովին բուժել մահապարտի թոքերը:

Երազի երեք ծառը...

Երեք մահապարտները ազատ են արձակված:

Հետեւում մնացին ծորակի կամուրջը, Մեծ Շենի Մեծ Հայրենականի հուշարձանը եւ կացարանը, որ որպես Բիխ-ի շտաբ էր ծառայում Ոչորրուն ճանապարհով բարձրանում են:

Գառնիկն ու Գագիկը տեսան դեպի իրենց շարժվող ամբոխը, որ դեռ հեռու էր: Նրանք չէին զգում ամբոխի շունչը, հոգիներում ամայություն էր, ոչ ուրախություն կար, ոչ թախիծ: Գառնիկը մեքենան կանգնեցնել տվեց, իջավ ու չոքեց: Կռացավ ու համբուրեց հողը: Ոսկորները ոնց որ երկաթից լինեն, ինչ դժվարությամբ ճկվեցին: Զգաց հողի ջերմությունը, հասկացավ, թե ինչի համար էին իրենց տառապանքները, ինչի համար են ամեն օր խաչ հանվել: Տաք մի հոսանք արյան կարծրացած անոթներով հոսեց, բարձրացավ դեպի սիրտը: Ամբոխի շարժումը, ուրախության ճիչերը հեռու էին մահապարտների հոգուց: Նրանք դեռ այն աշխարհում էին, ուր 5 տարի ամեն օր մահանում էին ու ողջ են մնացել: Երբ Երեւանից մեքենա նստեցին գյուղ ճանապարհվելու, Գառնիկը հարցրել է, թե որ ամիսն է, որ օրը: Ինքը գիտեր, հաշիվը ինքը պահում էր, բայց ուզում էր, որ մեկ ուրիշը բարձրաձայն ասեր, ու ինքը ականջներով լսեր, հասկանար ու հավատար, որ ...

1996-ի մայիսի 17-ն էր: Հինգ տարիների գերությունից վերադառնում են նույն օրը, գերության տարվելու օրը: Մայիսի 17-ը գյուղը լքելու եւ գյուղի ազատագրության օրն էր: Մտքերն իրար խառնվեցին. հիմա իրենք ո՞ր աշխարհից են, ա՞յն, որ մնաց լեռներում Հարությունյան Անդրանիկի, Ստեփանի, Սաքոյի ու Խեչոյի, ֆիդայի տղաների հետ, որ կան ու չկան, թե՞ այն, որ մնաց բանտի փակ պատերի ներսում: Իսկ ազատությունը, որի մեջ ոտք են դնում, անորոշ ու տարտամ, անծանոթ ու անհասկանալի, իրենց համար անգաղափար հեռանկարներ է ուր-

վագծում, մի՞թե այդքան դժվար է վերադարձը... Իրենք ո՞ր կյանքին են ընդառաջ գնում:

Իսկ դեպի մահապարտները եկող ամբոխը, որի մեջ իրենց կանայք ու երեխաներն են, կարծես օտար են, սիրտները նույնիսկ մոտալուտ հանդիպումից անհանգիստ չի խփում, իսկ բանտում, մտովի ինչքա՞ն են պատկերացրել ու սպասել այս հանդիպմանը...

Ամբոխը նրանց առավ իր մեջ, եւ երկուսն առաջ անցան: Ամբոխը սսկվեց, երբ հասկացավ, որ «մահապարտները» քայլում են դեպի գերեզմանատուն: Լանջնիվեր տարածությունը շատ չէր, ընդամենը մի հինգ տասնյակ մետր, բայց բոլորին երկար թվաց, քանի որ մի քանի ակնթարթներում ստիպված եղան հիշելու մի ամբողջ հավիտենություն՝ 1988-ից մինչեւ 1996.

Ամբոխը հասկացավ, որ չպիտի խանգարի... զինակիցների հանդիպմանը: Երկու «մահապարտները» ներս մտան, ու նրանց մշուշված աչքերը այդ պահին չէին կարող կարդալ սեւ մարմարին փորագրված խոսքերը, որ Արմոն էր գրել՝ քանի-քանի անքուն ու տառապալից գիշերներից հետո.

ԱՌՆՈ ՄԻՔԱՅԵԼԻ ՄԿՐՏՉՅԱՆ
1953-1993

Մարմինս է լքել ձեզ, բայց հոգիս ձեզ հետ է

Հրամանատարը... Բերդածորի ինքնապաշտպանության խորհրդի նախագահը... Մահապարտության երկաթե կամքի տեր ընկերը... Շամոն, Նվերը, Զորիկը ջոկվեցին ամբոխից ու իրենք էլ մի քանի քայլ հետ չոքեցին շիրմաքարի առաջ, լսեցին կալանավորների շուրթերից պոկված կցկտուր բառերը՝ քո Բերդածորը կա: Հրամանատարի կողքին հանգչում էր 28 տարեկան Արտաշեսը, որ բանտից դուրս գալուց հետո եղբոր տված ավտոմատով կռվելով հասել է մինչեւ Արաքսի ափ եւ խաղաղ ժամանակներում մահացել անհեթեթ ավտովթարից: Նրան այդպիսի ճակատագիր էր կանխորոշված՝ ապրել, գործել ու հեռանալ լուռ, անշշուկ...

Ամբոխը հանդարտված իջավ լանջն ի վար՝ գինի խմելու. Բերդածորի ազատագրման տարելիցն էր, եւ առաջին բաժակը լուռ, կանգնած, առանց իրար խփելու, պիտի հեղվեր Նրանց՝ նահատակների հոգու կենդանության համար, եւ պիտի մաղթեին, որ լույս ծլլա Նրանց գերեզմաններին:

Ամբոխը իջնում էր, իսկ Հրամանատարը մնաց այնտեղ՝ բարձունքում:

«ԿՈԼՑՈ» ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ

Վլադիմիր ԶԱԽԱՐՈՎ
Ռուսաստանի ԱԳՆ ՄՄՀՊԻ(Հ) Կովկասյան հետազոտությունների կենտրոնի փոխտնօրեն

Դժվար է այդ մասին խոսել, ու առավել եւս ականատեսների համար դժվար է վերհիշել1991թ. ապրիլ-մայիս ամիսների դեպքերը: Քսանյոթ օր՝ Գետաշենի, Շահումյանի, Շուշիի, Հադրութի եւ Ղարաբաղի մյուս շրջանների բնակիչների կյանքից: Մղձավանջային ոչ լրիվ ամիս: Բայց դա՝ օրացույցի թերթիկներով հաշվելու դեպքում, իսկ կյանքում նրանց համար, ովքեր դարձել են վկաներ, ում նկատմամբ կատարվել են անօրինությունները, դա ԱՄԲՈՂՋ ՔՍԱՆ ԵՎ ՅՈԹ ՕՐ էր: Սակայն դրանք վերջինը չէին: «Կոլցո» կոչվող ռազմագործողությունը, որն սկսվեց վերոնշյալ շրջանների գյուղերից, անցկացվեց մի քանի փուլերով՝ ընդհուպ մինչեւ 1991թ. օգոստոսի կեսերը:

Տարիներ են անցել, բայց այդ սարսափն ու վիշտը երբեք չեն ջնջվի Ղարաբաղի բնակչության ու նրանց հիշողությունից, ովքեր ապրել են այդ մղձավանջային օրերը, օրեր, որոնք անտեղյակ մարդկանց այսօր քիչ բան են ասում եւ որոնք ունեն «Կոլցո» ռազմագործողություն» անվանումը: Գետաշեն եւ Մարտունաշեն գյուղերի բնակիչները, որոնք ծախու, անսիրտ ու անհոգի մարդկանց որոշումների առաջին պատանդն էին դարձել, երբեք չէին կարող ենթադրել, թե իրենց ինչ է սպասվում: Եվ որքան էլ մեծ է մոռանալու ցանկությունը, այդուհանդերձ, ստիպված ենք տալ նրանց անունները, ովքեր իրագործեցին այդ ամենը, չնայած նրանք արժանի են Հերոստրատի «փառքին»:

Դեռ 1990-1991թթ. ԱդրԽՍՀ ՆԳՆ օմօնը, որի շարքերում հաշվվում էր ավելի քան 10 հազար մարդ, ուղղաթիռներով ու զրահամեքենաներով զինված, չնայած անհաջող, բայց փորձ արեց զավթել Լեռնային Ղարաբաղի մի շարք առանձին հայկական գյուղեր:

Ադրբեջանական ԽՍՀ-ում 1980-ականների վերջերից շարունակ հակահայկական քարոզչություն էր տարվում: 1991թ. փետրվարին,

հանդես գալով Բաքվում, Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Վ. Պոլյանիչկոն հայտարարեց. «1991 թվականը կհայտարարվի Ղարաբաղի տարի: Այդ տարին Ադրբեջանի համար վերջին դժվար տարին կլինի: Ղարաբաղի հողը մերն է, եւ այն մենք պետք է նվաճենք մեր երեխաների համար»: Այդ քաղաքականության գագաթնակետը եղավ «Կոլցո» ռազմագործողությունը:

Ուզում եմ մեջբերում անել դե Վաալի «Սեւ այգի» գրքից: Հեղինակը հանդիպել է այն ժամանակ Ադրբեջանում, Հայաստանում եւ Ղարաբաղում գտնվող արտասահմանցիների հետ: Նա գրում է, որ Պոլյանիչկոն եղել է խորհրդային հայրենասիրության եւ կոշտ ուժի մարմնացումը: Ամերիկյան իրավապաշտպան պատվիրակության անդամ Սքոթ Խորտոնը, ով 1991թ. հուլիսին եղել է Ղարաբաղում, այն տպավորությունն էր ստացել, որ Պոլյանիչկոն Ադրբեջանի հանդեպ առանձնակի ոչ մի տրամադրվածություն չուներ, այլ պարզապես հավատում էր, որ տարածաշրջանում խժդժություններ հրահրելով, ամրապնդում է խորհրդային իշխանությունը: Բաքվից Ստեփանակերտ կարճատեւ թռիչքի ընթացքում Խորտոնը զրուցել է Պոլյանիչկոյի հետ վերջինիս անցյալի մասին.

«Նա սկսեց ինձ պատմել Աֆղանստանի պատերազմի մասին եւ այն մասին, թե ինքն ինչ կարեւոր դեր է խաղացել այդ պատերազմում: Եղել է գիտնական-արեւելագետ, հասկանում էր աֆղանցիների ազգային հոգեբանությունը եւ պատասխանատու էր խորհրդային ռազմավարության ձեւավորման ու իրականացման համար, ռազմավարություն, որը կոչված էր օգուտ քաղել դրանից կամ դրա նման որեւէ այլ բաներից: Ես հարցրի. «Ի՞նչ է դա նշանակում»: Նա պատասխանեց, որ իրենք, օրինակ, տարբեր էթնիկական խմբերի տեղահանել են մի վայրից մյուսը: Նրանք վերցրել են մի խմբի եւ բնակեցրել նրան թշնամի մեկ այլ խմբի բնակավայրի ամենախիտ մասում այնպես, որպեսզի նրանք հայտնվեն շրջապատման մեջ: Դա արվում էր դիտավորյալ տարաձայնություններ ու լարվածություն առաջացնելու նպատակով եւ նման այլ բաներ: Այդ ժամանակ ես հարցրի. «Դա շատ հետաքրքիր բան է, քանի որ խիստ նման է «Կոլցո» գործողությանը, այն բանին, թե այնտեղ ինչպես էին իրականացվում տարբեր էթնիկական խմբերի վերաբնակեցումը»: Սակայն նա այլեւս չցանկացավ խոսել այդ մասին»:

Այդ հիշողություններից կարելի է եզրահանգում անել, որ, նախեւառաջ, հենց Պոլյանիչկոյին է պատկանում «Կոլցո» գործողության գաղափարը: Այո, արդեն որերորդ անգամ համոզվում եմ, որ ԽՄԿԿ-ն միշտ աճեցրել է ստահակ կադրեր, որոնք պատրաստ էին ամեն ինչի իրենց իսկ ծնած հասարակարգը պահպանելու համար: Ես ապրել, սովորել ու աշխատել եմ խորհրդային իշխանության տարիներին եւ ոչինչ չեմ մոռացել. ոչ մանկավարժական ինստիտուտից հեռացնելը, ոչ խուզարկությունները: Մինչեւ օրս հիշում եմ այն հալածանքը, որին տասնյակ տարիներ ենթարկվեցի մեծ ու փոքր «տրամաչափի» կուսակցական գործիչների կողմից ինձ համար մոծավանջային այն տարիներին սոցիալիզմի գաղափարների հետ համաձայն չլինելուս համար: Սակայն իմ եւ ինձ նմանների անձնական ապրումներն ու ծախորդությունները ոչինչ են այն ամենի համեմատ, ինչը Ղարաբաղի գրեթե յուրաքանչյուր բնակիչ ապրեց այդ տարիներին:

1991թ. սկսվեց ԽՍՀՄ փլուզման գործընթացը, ինչը հաջողությամբ իրականացրեց Մ. Գորբաչովը, եւ կովկասյան հանրապետությունների ներքին քաղաքականության նրբություններից քիչ գլուխ հանող այդ անձի համար միեւնույն էր, թե այնտեղ ինչ է կատարվում: Նա այսօր լսում էր մի խորհրդականին, վաղը մյուսին, բայց ընդունում միանգամայն այլ որոշում: Ադրբեջանի կուսակցական եւ խորհրդային ղեկավարության **քաղաքական** արկածախնդրությունն ու ազգայնամոլությունը, որը **սկիզբ էին առ**ել 80-ականների կեսերին, գերլարվածության հասցրե**ց եւ գործի դրեց** հակահայկական քաղաքականության թաքնված զս**պանակները:**

Ողբե**րգական դեպք**երին նախորդած մեկուկես տարվա ընթացքում Լեռնային **Ղարաբաղի** Ինքնավար Մարզում (ԼՂԻՄ) արտակարգ իրավիճակի ռեժիմի անվան տակ վերացվեցին իշխանության տեղական մարմինները, եւ կառավարումը հանձնվեց «ԼՂԻՄ-ի գծով ԱդրԽՍՀ կազմկոմիտեի» ձեռքը Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Վիկտոր Պոլյանիչկոյի գլխավորությամբ: Հենվելով ԱդրԽՍՀ ղեկավարության ենթակայության տակ գտնվող արտակարգ դրության շրջանի (ԼՂԻՄ եւ ԱդրԽՍՀ հարակից շրջաններ) ռազմական պարետության ներքին զորքերի վրա կազմկոմիտեն դարձավ պաշտոնական Բաքվի կամակատարը Լեռնային Ղարաբաղի հայկական մեծամասնության դեմ լայնածավալ ահաբեկչության կազմակերպման գործում:

Ապրիլի 16-ին Բաքվում հանրապետության ՊԱԿ-ի, ՆԳՆ-ի եւ դատա-

խագության ղեկավարների մասնակցությամբ խորհրդակցությունում Մութալիբովն առաջարկեց անհնազանդության դեպքում բռնատեղահանել հայաբնակ Շահումյանի շրջանի, Գետաշեն եւ Մարտունաշեն գյուղերի բնակչությանը:

Երբ որոշումը կենտրոնից հասավ Ղարաբաղ, ԼՂԻՄ հատուկ շրջանի պարետությանը կցված ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի անձնակազմի ղեկավարությունը փորձեց բողոքել: 1991թ. ապրիլի 18-ին անձնակազմի ընդհանուր ժողովում ընդունեց հայտարարություն Մ. Գորբաչովի, Լ.Տեր-Պետրոսյանի, Ա. Մութալիբովի, Վ. Կրյուչկովի եւ Բ. Պուգոյի անունով պահանջելով քաղաքական լուծում տալ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին: Սակայն ո՛չ Գորբաչովը, ո՛չ Կրյուչկովը, ո՛չ Պուգոն, ոչ էլ առավել եւս Մութալիբովը զինվորականներին չպատասխանեցին: Այո, առաջին հերթին հենց այս մարդիկ են մեղավոր «Կոլցո» ռազմագործողության համար, որի արդյունքում հեղվեց անմեղ մարդկանց, երեխաների արյունը:

Այդ ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովի եւ Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահ Ա. Մութալիբովի սանկցիայով անցկացվեցին Ղարաբաղի հայ բնակչության համատարած էթնիկական զտումները:

Ապրիլի 19-ին ԼՂԻՄ հատուկ շրջանի պարետությանը կցված ԽՍՀՄ ներքին զորքերի ղեկավարությունը հրաման ստացավ անհապաղ դուրս բերել ստորաբաժանումները, որոնք պաշտպանում էին Գետաշեն եւ Մարտունաշեն գյուղերը: Այդ գյուղերի բնակչությունը հայտնվեց, բառի բուն իմաստով, թշնամական շրջափակման մեջ: Այդ գործողության ընթացքում գործի դրվեցին Գյանջայում տեղակայված 4-րդ բանակը եւ նրա 23-րդ դիվիզիան համալրված տանկերով եւ հրետանիով: Այն համալրում էին ադրբեջանական օմօնի ստորաբաժանումները եւ հարեւան գյուղերի աշխարհազորային խմբավորումները, որոնք ակսեցին տեղական հայ բնակչության կողոպուտն ու ահաբեկչությունը: Թե ինչ տեղի ունեցավ այդ ու մյուս 24 գյուղերում, պահպանվել է հայ ժողովրդի հիշողության մեջ եւ ականատեսների հիշողությունների այն ժլատ տողերում, որոնք տարիներ անց հաջողվել է ի մի բերել:

Միայն դրանից հետո Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը ապրիլի 22-ին նամակ հղեց Մ. Գորբաչովին եւ երկրի մյուս գերագույն ղեկավարներին: Նամակում

գրված էր, որ Գետաշենում, Մարտունաշենում սկսված լայնածավալ գործողությունները վկայում են արմատական հայ բնակչության բռնատեղահանման մտադրության մասին:

Ի դեպ, ապրիլի 21-ին օմօնի ջոկատները հարձակվել էին այդ երկու գյուղերի վրա, սակայն անհաջողության մատնվել, որից հետո գլխավոր դերը վերջնականապես հատկացվեց ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի եւ բանակի ստորաբաժանումներին: Այդ անվան տակ Ադրբեջանի ՆԳՆ -ի եւ օմօնի ստորաբաժանումները «ստուգվող» գյուղերում իրագործեցին սպանություններ, կողոպուտ, գյուղացիներին քշեցին իրենց տներից զրկելով ողջ ունեցվածքից: Հետո գյուղերը թողնվում էին ադրբեջանական դիակապուտների ձեռքում, որոնք վերջնականապես թալանում էին մնացած գույքը եւ բաժանում իրար միջեւ:

Կարելի է վերհիշել, թե 1991թ. ամռանը Ֆրանսիայի նախագահ Ֆ.Միտերանի ԽՍՀՄ կատարած այցի ընթացքում համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ խորհրդային ղեկավարն ինչպես գետաշենյան դեպքերի վերաբերյալ հարցին ի պատասխան հայտարարեց նույն ձեւով «գյուղից գյուղ» անցնելու իր մտադրության մասին:

«Կոլցո» ռազմագործողության անցկացման մասին Գորբաչովի եւ Մութալիբովի անմիջական որոշմանը մասնակցել են ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Բ. Պուգոն, ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահ Վ. Կրյուչկովը, ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ. Յազովը: Հենց նրանք էին իրենց ենթականերին հրամայել այդ գործողության անցկացման եւ Ադրբեջանի ՆԳՆ գործողություններին աջակցելու մասին: ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի հրամանատար, գեներալ-գնդապետ Յու. Շատալինն անձամբ էր վերահսկում «Կոլցո» գործողության ընթացքը: ԽՍՀՄ ներքին գործերի նախարարի տեղակալ Բ. Գրոմովը, որն սպառնում էր Ղարաբաղը շրջափակել «բեռլինյան պատով», ըստ որոշ տեղեկությունների, նույնպես անմիջականորեն մասնակցել է գործողության մշակմանը:

Այո, կատարվել էր անուղղելին: Եթե մինչ այդ նրանք խորհրդային զինվորին նայում էին որպես փրկարարի, ապա այժմ այդ նույն զինվորը հանդես էր գալիս պատժիչ մեղսակիցների դերում: Այո, զինվորը պարտավոր է կատարել հրամանը լուռ, առանց քննարկելու, որքան էլ որ այդ հրամանը արյունալի եւ անօրինական լինի: Իսկ ի՞նչ էին անում նրանց հրամանատարները, որոնք անմարդկային հրամաններ էին

տալիս եւ որոնք վճռականություն չունեցան զանգել վերադաս ղեկավարությանը եւ գոնե հարցնել ու բացատրել, թե Ղարաբաղի բնակավայրերում իրականում ինչ է կատարվում: Ասել, որ այստեղ չկան խորհրդային իշխանության թշնամիներ, այստեղ չկան միջազգային ահաբեկիչներ: Չէ՞ որ խոսք էր գնում ոչ թե մտացածին ինչ-որ պարտիզանների մասին, որոնք հարձակվել են քո երկրի վրա. խոսք էր գնում քեզ հետ ընդհանուր տան մեջ՝ խորհրդային Միությունում ապրող մարդկանց մասին:

Իրավապաշտպանների գնահատմամբ՝ ռազմագործողության առաջին փուլի ընթացքում 5 հազար հայ բռնատեղահանվեց եւ 20-30-ը սպանվեցին: Եվ դա դեռ Արցախից հայ բնակչության բռնատեղահանման սկիզբն էր:

«Կոլցո» ռազմագործողությունը նշանավորեց ղարաբաղյան հակամարտության բացահայտ, ռազմական փուլի սկիզբը: Անկասկած, այն ինքնին դարձավ «խորհրդային շրջանի առաջին ու վերջին քաղաքացիական պատերազմը», որին խորհրդային բանակի զորամասերը մասնակցեցին խորհրդային տարածքում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ժամանակը փոխել է իր ընթացքը 3
Արմատի հիշողությունն անբեկանելի է 30
Կարկառներ 69
Անձնագրային ռեժիմի ստուգումներ 133
Հայրենիքն այն է, որ ամեն ինչ պիտի
տաս, նույնիսկ՝ կյանքդ 188
Յուրաքանչյուր ժողովուրդ վայելում է իր ցանածի պտուղը 201
Մեծ քաղաքականության փոքր զոհերը 268
Կյանքս կտամ քեզ, Ղարաբաղ 339
«Կոլցո» ռազմագործողությունը եւ
նրա կազմակերպիչները 393

ՆՎԱՐԴ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ԿԱՐԿԱՌՆԵՐ

Բերդաձոր. 1988-1991

Վավերագրական վեպ

Խմբագիր՝ Մ. Հաջյան
Սրբագրիչ՝ Ա. Մաթևոսյան
Համակարգչային շարվածքը՝ Ա. Չիլինգարյանի
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84/16,
ծավալը՝ 26 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ. Հակոբյան 25
Ստեփանակերտ-2010